



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

**ՎԿԱՅԱՐԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ԳԻՐՔ Դ.**

**Պատրաստեց՝
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԻՍԿԱՀԱՏԵԱՆ**

**ՊԵՂՐՈՒԹ
2012**

*«Բայց հիմա ան որ քսակ ունի, թող իրեն հետ
առնէ, նոյնպէս ալ պարկը, եւ ան որ թուր չունի,
թող իր հանդերձը ծախէ ու իրեն թուր մը
ծախու առնէ»:*

Յիսուս

Աւետարան ըստ Ղուկասու, 22:36



ՍԱՆՏՔՐԻՍՏՈՍԻՆԻ ՏԱՆԻ ԿԱՂՎՈՑ
ՎԵՐՄԵՆԻԷ ՀԱՅՈՑ

Վերսու, 20 Յունիս 1911

Դիւան թիւ 133/11

Յարգելի Տիար Յարութիւն Իսկահադեան,

Մտորակալութեան ստացամբ՝ ձեր «Վկայարան Հայկական Յեղափոխութեան» իրագրեալ Բ. Գրքէն, որ իրապէս ազգամուկ եւ հայոց

է: Ան արգասիքն է բժախնայի, երկարատեւ եւ մասնագիտական պրպտումներու: Անոր միջոցաւ ընթերցողը հնարաւորութիւնը կ'ունենայ գէշ ընդհանուր պատկերացումը ունենայ 1916-ի սղտերգական իրագրութիւններուն:

Սիրելի Պարսն Իսկահադեան, վստահ եմք որ Հայոց Յեղափոխութեան պատմական նշանաւորութիւնը վերահաստատող վկայագրութիւնները ա իտաստագրութիւնները ամփոփող ձեր այս աշխատասիրութիւնը իբրեւ ուղեցոյց պիտի ծառայէ ճեղատպութիւնը ուսումնասիրութեան: Հայրական օրհնութեամբ՝

+ Լեւոն Պեղոսեան

Դերսու Պարսն ԺԲ.
Յարպիկոս Պարիարք Տանն Կիլիկիայ
Յարպիկէ Հայոց

Շարուածք եւ էջադրում՝ Վահագն Քէչիչեան

Սոյն գիրքը պատրաստողը իր յատուկ շնորհակալութիւնը կը
յայտնէ տպագրութեան մեկենասներուն՝

Տէր եւ Տիկ. Արմէն եւ Միմի Յարութիւնեաններուն:

Շնորհակալութիւն նաեւ Տէր եւ Տիկին Էլեկտրական ճարտարագէտ
Վարդան եւ Մակի Գուզուճեաններուն:

hiskahadian@yahoo.com

Հեռ.՝ (+961) 1 566 896, (+961) 3 283 313
No. 129, Ajemian bldg., Khalil Badawi str., Beirut, Lebanon

ՀԱՅՈՑ ԳՈՂԳՈԹԱՅԻ ԵՒ ՏԱՌԱՊԱՆՔԻ «ՎԿԱՅԱՐԱՆ»

Հայոց Ցեղասպանութեան նուիրուած իւրաքանչիւր նոր հրատարակութիւն, ըլլայ ան ուսումնասիրութիւն, վաւերագիրներու հրատարակում, յուշագրութիւն, թէ գրական երկ, անկասկած քար մը կ'աւելցնէ հայոց պահանջատիրութեան արդարութեան պատին: Այս պարագային ի մտի ունինք այն լայնածիր աշխատանքը, որ կը տարուի հայ իրականութեան գոյգ թեւերուն վրայ՝ ի Սփիւռս եւ ի Հայրենիք: Ուշադիր հետեւող մը ամէն օր կրնայ յայտնաբերել այս ծիրէն ներս կատարուած կարեւոր հրատարակութիւններ, պահ մը նոյնիսկ կը տարուի խորհելու, թէ իսկապէս լայնքով ու խորքով կը հերկուի այս դաշտը: Սակայն, պարզ բաղդատական մը այս հոսանքին հակադրուող ահուելի զանգուածին, ի յայտ կը բերէ անհաւասար պայքար մը: Գաղտնիք չէ, որ այսօր տեղեկատուական աշխարհը, առաւել եւս գիտական-ակադեմական շրջանակները ողողուած են Հայոց Ցեղասպանութիւնը հերքող ու դրժող բազմալեզու ու բազմատեսակ գիրքերով ու հրատարակութիւններով: Այդ ահուելի զանգուածին դիմաց մենք՝ մեր փոքր ոյժերով, բայց անհատնում եռանդով անհաւասար պայքար կը մղենք՝ յանուն արդարութեան, յանուն ճշմարտութեան:

Այս առումով իսկապէս գնահատելի եւ կարեւոր իրագործում մը պէտք է նկատել Յարութիւն Իսկահատեանի պատրաստած «Վկայարան Հայկական Ցեղասպանութեան» մատենագիտական աշխատութիւնը, որուն չորրորդ գիրքը կու գայ իր փառաւոր տեղը գրաւելու նախորդ երեք հա-

տորներուն կողքին:

Յարութիւն Իսկահատեան տարիներէ ի վեր ինքնանուիրումով մը փարած է Եղեռնին նուիրուած գիրքերը հաւաքելու, մէկտեղելու աշխատանքին, որ կը վկայէ, թէ իր նուիրումը սոսկ նախասիրութիւն մը չէ եղած՝ այլ լուրջ հետապնդում մը, որուն փաստացի ապացոյցն են ահա շարունակական քառեակ հատորները:

Տեղին է նշել, որ Իսկահատեանի պրպտումի, հաւաքումի երկար եւ համբերատար աշխատանքին արգասիքը հանդիսացող երեք հատորները (Պէյրութ, Ա. գիրք՝ 2010 (367 էջ), Բ. գիրք՝ 2011 (350 էջ), Գ. գիրք՝ 2011 (395 էջ)) օրին ողջունելի ընդունելութիւն էին գտած Սփիւռքի եւ Հայրենիքի մտաւորական շրջանակներէ ներս:

Եւ ահա՛ կը թերթեմ արդէն իսկ հրատարակութեան պատրաստ Դ. հատորին համակարգչային էջերը: Բնաւ չպատրաստուելով ամբողջը մէկ շունչով կարգալ, չեմ կրնար սակայն փակել զայն արտացոլող էջերը: Անմեկնելի, անբացատրելի զգացում մը համակած է զիս, որ կը ստիպէ երիցս, արդէն քանիբորդ անգամ սարսուալ պատմութեան մէջ իր նմանը չունեցող աղէտին ահագնութեան, ահաւորութեան դիմաց: Այնքան մեծ էր վիհը, այնքան անսպառ՝ հոն խորասուզուող կսկիծը, ցաւը, որ այդ սեւ օրերէն ի վեր ու մինչեւ օրս՝ գրուեցան ու տակաւին կը շարունակուին գրուիլ մեծ ու փոքր բազմաթիւ գիրքեր: Անոնց մեծ մասին մէջ ոչ թէ ի լրոյ ստացուած տեղեկութիւններ են, այլ անձամբ ապրուած՝ Եղեռնի ու մահուան ճիրաններէն փրկուած, հրաշքով ողջ մնացածներու իրապատում դրուագներ: Եւ որքան իրական եւ հարազատ են անոնք, այնքան անոնց նկատմամբ հաւատք ու միտք կը դեղեւի:

Առաջին ճշմարտութիւնը որ յայտնի կ'ըլլայ Իսկահատեանի այս հաւաքումէն այն է, որ հակառակ տիրող մտայնութեան՝

Յեղասպանութիւնը վերապրող սերունդը չէ լուած: Եղեռնի վաղորդայնէն ցայսօր՝ դար մը ահա՛, չէ՛ լուած Չարդի ու տարագրութեան արհաւիրքը ապրած, Օշականի բառով «Մնացորդաց»ին ձայնը: Անոնք ապրեցան որպէսզի ի լուր աշխարհի բարձրաձայնէն իրականութիւնը, անոնք ապրեցան որպէսզի տասնեակ հազարաւոր նահատակներու շուրթերով պատմեն՝ ձորերու, կիրճերու ու անապատներու մէջ կատարուած ոճիրին մասին, անոնք ապրեցան որպէսզի անմեղ գոհերուն պատգամը փոխանցեն յաջորդ սերունդներուն: Եւ զարմանալի, այդ փոխանցումը այնքան յստակ, այնքան ներգոր է այս հաւաքումին մէջ: Այստեղ քով-քովի կը տողանցեն Եղեռնի առաջին սերունդը ներկայացնող՝ ականատես վերապրողներն ու արդէն երրորդ, չորրորդ սերունդը՝ Եղեռնի յիշողութիւնն ու հոգեցնցումը ժառանգող անոնց զաւակները, թոռներն ու ծոռները:

Այսպէս է որ Եղեռնը վերապրող առաջին սերունդը կերտեց իւրայատուկ գրականութիւն, ակօսելով թերեւս ալ իր նմանը չունեցող գրական նոր շառաւիղ մը, որ սահմանուեցաւ «Աղէտի գրականութիւն» անունով: Գրական այս անդամտանը զարգացաւ երկու ուղղութիւններով՝ Եղեռնը արտաբերող գեղարուեստական մշակումներով եւ ականատես վերապրողներու վկայութիւններով՝ յուշապատումներու ձեւով: Ի տարբերութիւն առաջինին, այս երկրորդը կու գար այսպէս կոչուած ժողովրդային խաւերէ, երբ հեղինակը ինք գրող մը չէ եւ հանդէս կու գայ իբրեւ հեղինակ: Եզակի չեն այն պարագաները, երբ հեղինակը բառացիօրէն պատմած է եւ ուրիշ մը գրի առած է անոր յիշողութիւնները: Յուշագրութիւններու այս ժանրը, որ մշակոյթ մըն է անկասկած, գեղարուեստի ընկալումներէն դուրս՝ անոր թելադրական իմաստին մէջ պէտք է որոնել, քանզի հեղինակներուն մեծ մասին, մանաւանդ՝ Եղեռնը վե-

րապրող առաջին սերունդին հիմնական մտահոգութիւնն է եղած ճշմարտութիւնը փոխանցել յաջորդ սերունդներուն:

Թերթելով ամբողջ ժողովուրդի մը ցաւի ու տառապանքի խտացումը հանդիսացող այս էջերը, անխուսափելի կը դառնայ հարցումը, կը հաւատայի՞ն արդեօք, կը գիտակցէի՞ն իրենց գործին կարեւորութեան: Պատասխանը միանշանակ այո՛ է, ապա թէ ոչ՝ ինչո՞ւ նորէն անցնիլ մղձաւանջի հովիտներէն, ինչո՞ւ նորէն ծանր փորձութիւններու ենթարկուիլ, վերապրումովը խռովել խլացած ցաւը: Ոչ մէկ հրահանգ, ոչ մէկ պարտադրանք, որ կը մղէ այդ ցաւատանջ վերապրումին, որ իրենցն էր, այն մարդերուն, որ չես գիտեր ինչ նախախնամութեամբ կամ ինչ դիպուածով ողջ մնացեր էին: Վստահաբար քիչեր կըրցան յաղթահարել մարդկային, հոգեբանական արգելքները եւ վերապրողի մը բարոյական պարտականութեան թելադրանքով՝ տառապանքը թողութիւն յանձնելու վճռակամութիւնը ունեցան, գիտակցելով թէ հաշիւ ունին, թէ գործ մը ունին կատարելիք, եւ մէյ մէկ ՎԿԱՅԱՐԱՆ դարձան հազարաւորներու հանգոյն: Անոնցմէ շատեր արդէն հեռացած են այս կեանքէն, բայց վստահաբար, իրենց յոգնած ու դադրած հոգիին մէկ անկիւնը փայփայելով վերապրողի իրենց պարտքը կատարած ըլլալու երանութիւնը: Երանի՛ այդ հոգիներուն:

Վերադառնանք սակայն սոյն տողերուն գրուելուն առիթ հանդիսացող գիրքին, մեր ուշադրութիւնը սեւեռելով անոր բովանդակութեան եւ իմաստին:

Կը կարդանք հատորը բովանդակող սեղմ եւ ամփոփ տեղեկութիւնները ու կը թուի հոն խտացած ըլլալ Յեղասպանութեան ամբողջ արհաւիրքը՝ բազմաձայն, բազմաճիւղ, բազմաբիւր... Ամէն էջի հետ, ներկայացուող ամէն գիրքի հետ կը յառնէ արիւնի, սուրի ու մահուան սարսափազդու իրականութիւնը:

Կը զգուշանամ օրինակներ բերելէ, մօտենալէ ներկայացուող գիրքերուն կամ մեկնաբանելէ: Ո՞ր մէկուն մասին խօսիս, ո՞ր մէկը առանձնացնես, իւրաքանչիւրը վաւերագիր մը ինքնին՝ Մեծ Եղեռնի մասին:

Յիրաւի, լայն եւ ընդգրկուն է Հայկական Յեղասպանութեան նուիրուած գրական անդաստանը. հազարաւոր գիրքեր լոյս տեսած են աշխարհի չորս կողմը՝ զանազան լեզուներով: Այդ ամբողջը ոչ միայն Ֆիզիքապէս հնարաւոր չէ կարդալ, այլեւ նուազագոյն ծանօթութիւն ունենալ անոնց մասին, նկատի ունենալով բազում պատուարներ՝ տեղի, ժամանակի, լեզուական եւ այլն: Հետեւաբար, Իսկահատեանի կազմած մատենագիտական այս հատորները կրնան բացառիկ դեր կատարել տարբեր առումներով:

Մատենագիտական այս պրպտումի եւ համագրումի աշխատանքը փորձ մըն է ի մի բերելու եւ հանրագիտարանային ձեւով ներկայացնելու Եղեռնի նուիրուած գրականութիւնը: Այս հաւաքումը իրաւամբ կարելի է որակել իբրեւ հայոց Գողգոթայի եւ տառապանքի «Վկայարան», եւ այս իմաստով առաւել քան խօսուն է գիրքին խորագիրը:

Թէեւ դժուար է այս աշխատութեան ճշգրիտ սահմանում մը տալ՝ գրական ուղեցոյց, տեղեկատու կամ մատենագիտութիւն, որ այս պարագային այնքան ալ էական չէ, կարեւորն այն է, որ այսօր ունինք հայոց եղեռնապատումի գրականութիւնը պարագրկող աշխատասիրութիւն մը, որուն օգտակարութիւնը գործնականօրէն պարզ պիտի դառնայ յետագային կատարուելիք ուսումնասիրութիւններու եւ աշխատանքներու ընթացքին:

Սխալած չենք ըլլար եթէ ըսենք, թէ Իսկահատեանի պատրաստած հատորներուն բուն իմաստն ունշանակութիւնը կը կայանայ այս հանգանակին մէջ:

Ցարդ լոյս տեսած են Հայկական Հարցին, Հայոց

Յեղասպանութեան նուիրուած գիրքերու եւ ուսումնասիրութիւններումէկէ աւելի մատենագիտական ցանկեր, հրատարակութիւններ: Այս հատորը նախորդներէն բոլորովին տարբեր մօտեցումով մը կը ներկայանայ, նախ՝ նիւթի ընդգրկման, ապա մատուցման եղանակով: Այստեղ ընդգրկուած են գրական երկեր՝ առաւելաբար յուշագրութիւններ. մատենագիտական մանրամասն ծանօթութիւններէն զատ, տրուած են հատորին բովանդակութիւնը ներկայացնող սեղմ եւ ամփոփ տեղեկութիւններ: Այս կը նշանակէ, թէ ընթերցողը կամ ուսումնասիրողը միաժամանակ կրնայ մատենագիտական տեղեկութիւններ քաղել զինք հետաքրքրող նիւթին կամ գիրքին վերաբերեալ, եւ որ աւելի կարեւոր է՝ ծանօթանալ գիրքին բովանդակութեան:

Անշուշտ, հոս տողանցող գիրքերէն շատեր, համեստորէն կը պահուրտին աւելի ծանօթ եւ անուն հանած գիրքերուն ետին, սակայն ոչ մէկ կասկած, որ իւրաքանչիւր հրատարակութիւն առանձինն պատմական եւ ճանաչողական արժէք կը ներկայացնէ:

Կարեւոր է, որ հատորին մէջ տեղ գտած գիրքերուն ներկայացումը կամ մատուցումը կատարուած է առանց կազմողին կողմէ միջամտութիւններու ու մեկնաբանումներու, այս պարագային որդեգրուած է ճիշդ ձեւը՝ հիմնական գիծերու մէջ տալ ամփոփումը ներկայացուող գիրքին, որ կը բխի անոր բովանդակութիւնը հարազատօրէն մատուցելու անհրաժեշտութենէն:

Այս ուրուագիծէն եւ մեթոտէն որեւէ ձեւով չզիջող Իսկահատեան հաւաքած եւ ժամանակագրական կարգով շարադասած է Եղեռնին առնչուող հայերէն եւ օտար լեզուներով տարբեր երկիրներու մէջ հրատարակուած գրականութեան պատկառելի ամբողջութիւն մը, ընդգրկելով 1890-ականներուն սուլթան Ապտիւլ Համիտ Բ-ի հայասպան

ու հայաջինջ ջարդերէն մինչեւ 1915 թուականը կրող Յեղասպանութեան եւ անոր յաջորդող ժամանակաշրջանը:

Իսկահատեանի կազմած այս հատորները ունին պատմագործառական արժէք, մանաւանդ երբ նկատի ունենանք, որ ընդգրկուած հատորներուն մեծ մասը տասնամեակներու վաղեմութիւն ունի, ուստի եւ անգտանելի է: Նաեւ հարկ է ընդգծել այն հանգամանքը, որ Սփիւռքի զանազան գաղթօճախներու մէջ հրատարակուած այս գիրքերը մեծ տարածում չեն ունեցած եւ այդ պատճառով կրնան դուրս մնալ ուսումնասիրողի տեսադաշտէն կամ անյայտութեան մէջ մոռցուիլ: Ուստի մատենագիտական այս հատորները կրնան բանալիի դեր կատարել ամենատարբեր ուսումնասիրութիւններու համար, յատկապէս՝ ցեղասպանութեան, եւ ընդհանրապէս հայագիտական հարցերով հետաքրքրուողներուն համար:

Այս առումով աւելի քան շահեկան են հատորին վերջաւորութեան տրուած՝ գիրքին մէջ յիշատակուող յատուկ անուններու՝ անձնանուններու եւ տեղանուններու՝ հեղինակին կազմած ցանկերը:

Փնահատելի եւ օգտակար հրատարակութիւն մը իրաւամբ՝ յանձնարարելի ո՛չ միայն ընթերցումի, այլեւ գործառական իմաստով:

Բովանդակալից, շահեկան մատենաշար մը միանգամայն՝ իր պարունակութեամբ, ներկայացուած աւելի քան 200 գիրքերու համարժէք նկարագրութեամբ ու մատուցմամբ:

Պսակ մը արդարեւ՝ ժողովուած Նահատակաց յիշատակին նուիրուած բիւրաւոր ծաղիկներէն:

Կարելի է կուսակէ միայն, թէ որքան մեծ է տակաւին պատմուածներու եւ իրականութեան անջրպետը, որուն աղօտ արտացոլումը ըլլան գուցէ այստեղ ժողովուած բոլոր գիրքերը: Վկայ՝ աշխարհի տարբեր հորիզոններու վրայ ամէն լեզուով լոյսի եկող նորանոր հատորներն ու

հրատարակութիւնները:

Ու պիտի շարունակուի հանապազօրեայ այդ աշխատանքը՝ անդուլ պայքարը, քանի դեռ աշխարհը եւ, առաջին հերթին, Յեղասպանութիւնը իրականացնողներու սերունդները չեն դատապարտած եւ ի լուր աշխարհի չեն յայտարարած ճշմարտութիւնը, քանի դեռ հայոց արդար պահանջը իր հատուցումը չէ գտած:

Հետեւաբար, այս ուղղութեամբ տարուող բոլոր ճիգերը, նախեւառաջ կ'արժեւորուին իբրեւ արդարութեան ճանապարհին ցանուած հունտեր: Այս դաշտին մէջ նետուած արգասաբեր սերմնահատիկ մը ըլլալու խոստումը կու տայ Յարութիւն Իսկահատեանի սոյն աշխատանքը:

Վարդի Քէշիշեան
բանասէր, խմբագիր – Հալէպ-Երեւան

ՄԱՄՈՒԼԻ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ

**«Վկայարան Հայկական Յեղասպանութեան»
մատենաչարի Գ. գիրքի մասին**

(Հատուածներ)

Էտուարտ Ա. Գրիգորեան, «Վկայարան Հայկական Յեղասպանութեան», «Զարթօնք», Պէյրուս, 21 Յունուար 2012

«Վկայարան Հայկական Յեղասպանութեան» - Այսպիսի զուսպ եւ չափազանց համեստ վերնագիր ունի Յարութիւն Իսկահատեանին եռագրութիւնը: Եռահատորը ամբողջութեամբ նուիրուած է անցեալ դարու սկիզբներուն սանձագերծուած սոսկալի ոճրագործութեան մը, որ իրականացուեցաւ նախ Օսմանեան Կայսրութեան, ապա նաեւ հանրապետութիւն յորջորջուող, բայց իրականութեան մէջ տակաւին ասիական միջնադարեան խաւարի մէջ խարխափող Թուրքիոյ կողմէ: Քաղաքակիրթ աշխարհի բառարաններուն մէջ մարդկութեան դէմ կատարուած այդ հրէշային ոճիրը միայն մէկ յստակ ձեւակերպում ունի՝ Հայոց Յեղասպանութիւն:

Քիչ մը երկար այս նախաբանը գրուեցաւ թերեւս անոնց համար, որոնք կը սիրեն գրուցել ու միտքեր բարձրաձայնել Հայ Ոգիի թուլացման, անոր հպարտ ինքնութեան խաթարման կամ ուծացման վտանգներու մասին: Կը խօսին, գրոյցի աւարտին ալ խորունկ հոգոց մը քաշելով կ'աւելցնեն, թէ մենք փոքր ժողովուրդ ենք ու դժուար թէ կարենանք բան մը փոխել: Մինչդեռ մենք արդէն իսկ փոխած ենք եւ քիչ բան չենք փոխած մեղքերու տակ կորացած այս աշխարհին մէջ: Եթէ ոչ հիմա, ապա պատմականօրէն շատ կարճ ժամանակ մը ետք քաղաքակիրթ աշխարհը պիտի հասկնայ ու գնահատէ ասիկա, ինչպէս որ հասկցան ու ըստ արժանւոյն գնահատեցին աշխարհաքաղաքական վերլուծման ամենալուրջ կեդրոնները, երբ արցախեան ազատագրական շարժումը խորհրդային հսկայ կայսրութեան գերեզմանափոր անուանեցին:

Պիտի գա՛յ, կու գայ նաեւ այդ ժամը, եւ մեզի համար բաղձալի այդ պահը մօտեցնելու ծովածաւալ աշխատանքներուն մէջ իր համեստ բաժինը ունի նաեւ Յարութիւն Իսկահատեանին այս աշխատութիւնը: Առ այժմ եռահատոր (առ այժմ, քանի որ չորրորդ, գուցէ նաեւ հինգերորդ հատորները կը պատրաստուին) այս վկայարանին մասին արդէ՛ն իսկ բաւական շատ գրուած է: Գրած են Սփիւռքի եւ Հայրենիքի այնպիսի ճանչցուած մտաւորականներ, որպիսիք են Պէպօ Սիմոնեանն ու Թորոս Թորանեանը, Ժիրայր Քոչարեանը, Վանիկ Սանթրեանն ու Սամուէլ Մուրատեանը, Յակոբ Մանուկեանն ու Վարդի Քէչիչեանը, Երուանդ Պապայեանն ու Գէորգ Եազրճեանը: Դժուար է բոլորին անունները թուարկել եւ անկեղծօրէն կարիք ալ չկայ, որովհետեւ ասիկա ժամանակին (խրոնոս) գործն է:

«Վկայարան Հայկական Յեղասպանութեան» - Այս խորագիրը կը կրէ մեր ձեռքին տակ գտնուող եռագրութիւնը, ու եթէ հեղինակին պատմագիրի կամ փաստահաւաքի համեստութիւնը չըլլար, այն կրնար նաեւ «Հայոց Յեղասպանութեան մասին վաւերագրութիւններու յուշամատեան-հանրագիտարան» կամ «Շառաչուն ապտակ՝ ցեղասպանի անլուայ դէմքին» անուանուիլ: Առաջին ակնարկէն կը թուի, թէ հատորներուն մէջ բացակայ է հեղինակին՝ Յարութիւն Իսկահատեանին խօսքը, բայց միայն ակնթարթ մը ետք կ'անդրադառնանք, որ աշխատութեան հարիւրաւոր էջերուն մէջ ամէնուր է անոր վերաբերմունքն ու խօսքը: Հաւաքուած աղբիւրներու, որոնք իննիսունէն աւելի են, նիւթերու եւ ողբերգական դէպքերու զարգացման ընթացքը, այն յաջորդականութիւնն ու տրամաբանական հետեւողականութիւնը, որ գերակայ են եռահատորին մէջ՝ Յարութիւն Իսկահատեանին վերաբերմունքն ու ամփոփ խօսքը կը հանդիսանան:

Յարութիւն իսկահատեանը ընթերցողներէն շատ շատերու փոխարէն մտովի անցած է դժոխային այդ ճամբան եւ մեր սեղաններուն դրուած առ այժմ եռահատոր աշխատութիւնը իր անցած ճամբուն արգասիքն է: Այս պարագային, ջերմութիւնն ու արեան կանչը կը խանգարեն, որ շնորհակալութիւն յայտնենք իրեն, որովհետեւ ասիկա այն նիւթն է, որուն անդրադարձած հեղինակներէն շնորհակալ ըլլալը անպատշաճ կամ ակելորդ կը թուի:

Պարզապէս արժանին մատուցենք Յարութիւն իսկահատեանին ու նաեւ անոնց, որոնց անգնահատելի աջակցութեամբ է, որ լոյս եկած են շատ ու շատ հայաշունչ գիրքեր, այդ շարքին նաեւ այս յուշագրութիւնները՝ մեկենասներ Կարպիս Լ. Նազարեանին եւ Միմի ու Արմէն Յարութիւնեաններուն:

Գէորգ Եազըճեան, «Պէյրութում Շարունակում է «Վկայարան Հայկական Յեղասպանութեան» Մատենաշարի Հրատարակութիւնը», «Ազգ», Երեւան, 8 Նոյեմբեր 2011 եւ «Զարթօնք», Պէյրութ, 21 Յունուար 2012

Հոկտեմբերի վերջին Պէյրութում լոյս է տեսել «Վկայարան Հայկական Յեղասպանութեան» մատենաշարի հերթական՝ երրորդ գիրքը: Դրա պատրաստողը՝ մասնագիտութեամբ քաղաքաշինարար ինժեներ Յարութիւն իսկահատեանը այս գրքում ներկայացրել-ամփոփագրել է Հայոց Յեղասպանութեան մասին նախորդ տարիներին լոյս տեսած եւ բացառապէս յուշագրական բնոյթ ունեցող այլալեզու (հիմնականում, ի հարկէ հայերէն) 38 հրատարակութիւններ: Այսպիսով, իսկահատեանի ներկայացրած-ամփոփագրած հատորների քանակը հասնում է 185-ի (Ա. եւ Բ. գրքերը, լոյս տեսած անցեալ տարի եւ այս տարուան Յունիսին, պարունակում էին համապատասխանաբար 92 եւ 55 հրատարակութիւններ): Հատորի հրատարակութեան մեկենասներն են պէյրութահայ ճանաչուած գրքասէրներ տէր եւ տիկին Արմէն եւ Միմի Յարութիւնեանները (նախորդ երկու գրքերը հրատարակուել էին միջոցներովը «Կարպիս Լ. Նազարեան հիմնադրամ»ի, որը չգիտենք ինչու, չի շարունակել մատենաշարի տպագրութեան ֆինանսական հովանաւորումը):

Շարքի նախորդ գրքերի նման երրորդ գրքում եւս պատրաստողը իւրաքանչիւր աղբիւրի սկզբում նշում է նրա հրատարակչական ամբողջական տուեալները՝ ուղեկցուած տուեալ հրատարակութեան առաջին չապիկի կամ անուանաթերթի լուսանկարով: Գրքի աւարտին բերուած են յիշատակուած անձնանունների եւ տեղանունների ցանկերը (համապատասխանաբար էջ 338-

371 եւ 371-391): Ամենավերջում բերուած է մեկենասների հովանաւորութեամբ առ այսօր լոյս տեսած գրքերի ցանկը՝ 41 անուն հրատարակութիւն:

«Վկայարան»ի այս գրքի սկզբում, «Փոխան յառաջաբանի», տպագրուել է Պերլինի Ազատ Համալսարանի հնդեւրոպական եւ համեմատական լեզուաբանութեան հայկական բաժնի վարիչ Դոկտ. Ժիրայր Քոչարեանի «Յուշագրութիւն, Յիշողութիւն եւ Թրքական Ուրացում» վերնագրուած խօսքը: Նա յատկապէս նշում է, թէ ցեղասպանութեան քաղաքականութիւնը թուրքերը հետեւողականօրէն կիրառեցին ու շարունակում են կիրառել ո՛չ միայն հայերի, այլեւ շատ ուրիշ ժողովուրդների նկատմամբ՝ ասորիներ, յոյներ, եզդիներ, արաբներ, քրդեր եւ այլք: Նա դատապարտում է մասնաւորապէս հայկական միջավայրում տարածուած այն թիւր տեսակէտը, թէ Հայոց Յեղասպանութիւնը համիսլամականութեան ծրագրածն էր, մինչդեռ իրականում այդ ցեղասպանութեան շարժիչ ոյժը պանթուրքիզմի անմարդկային գաղափարախօսութիւնն էր: Դրա ամենավառ ապացոյցը հայ վերապրողների հանգրուանումն էր մուսուլման ժողովուրդների՝ արաբների եւ պարսիկների մօտ: Դոկտ. Քոչարեանը Իսկահատեանի կատարածը «վիթխարի աշխատանք» գնահատելով աւելացնում է, թէ մատենաշարի գրքերը «ոչ միայն եզակի են իրենց տեսակի մէջ, այլեւ՝ յոյժ կարեւոր»:

Միանշանակօրէն համամիտ լինելով հայագէտի գնահատանքին, շեշտենք, որ այդ կարեւորութիւնը բազմերեսանի է. մատենաշարը կարեւոր արժէք ունի ո՛չ միայն ցեղասպանագիտութեան համար, այլեւ այդպիսին է նաեւ պատմագիտական, քաղաքագիտական ու առհասարակ 1894-1923 երեսնամեակի հայոց պատմութեանն առընչուած զանազան երեսակների (ժողովրդագրութիւն, տեղա-

գրութիւն, ազգագրութիւն, բանահիւսութիւն եւ այլն) տեսակէտից:

Մեր ունեցած հաւաստի տեղեկութիւններով Յարութիւն Իսկահատեանը աներեր հաւատքով եւ անկոտրում թափով շարունակում է ընթերցել ու ամփոփագրել նորանոր հատորներ, հետեւաբար, հաւանական է, որ շուտով ընթերցողի սեղանին դրուի մատենաշարի հերթական հատորը: Այժմ նա նախապատրաստական քայլեր է կատարում շարքի գրքերը անգլերէնի թարգմանելու եւ հրատարակելու ուղղութեամբ, ինչը նախորդ գրքերը գրախօսողների եւ ընթերցողների մեծագոյն մասի ցանկութիւնն է եղել (շարքի երկրորդ գրքի մամուլի արձագանգների մի փունջ տեղ է գտել երրորդ գրքի 10-13-րդ էջերում): Ինչպէս միշտ, հիմնական խոչընդոտը Ֆինանսական հնարաւորութիւնների սահմանափակ լինելն է:

Յակոբ Մանուկեան, «Վկայարան Հայկական Ցեղասպանութեան» Գիրք Գ., «Ազդակ», Պէյրուսթ, 21 Մայիս 2012

2011-ին Պէյրուսթի մէջ «Քէստէնեան» տպարանէն լոյս տեսաւ Յարութիւն Իսկահատեանի «Վկայարան Հայկական Ցեղասպանութեան» խորագրեալ հատորը՝ մեկենասութեամբ տէր եւ տիկին Արմէն եւ Միմի Յարութիւնեաններուն:

Ինչպէս նախորդ գիրքերուն, 396 էջերէ բաղկացած յիշեալ հատորին մէջ եւս կը աւելնէ Մեծ Եղեռնի արիւնոտ դէպքերուն հետ առնչուած շիրմային միջոցներ մը, ուր իւրաքանչիւր ընթերցող իրազեկ կը դառնայ եղերականօրէն աննախընթաց այն իրադարձութիւններուն, որոնց զոհը հանդիսացաւ ողջ հայութիւնը Արեւմտահայաստանի եւ Կիլիկիոյ մէջ, 20-րդ դարու սեմին:

Իրողութիւն է, թէ բոլոր ազգերու պատմութեան մէջ ոչ մէկ ազգ ենթարկուեցաւ այնքան քստմնելի չարչարանքներու, որքան՝ հայ ժողովուրդը, որ աքսորի ճամբաներուն վրայ ճանչցաւ երկրային գեհեներ՝ իր անպատմելի ահաւորութեամբ:

Արդարեւ, 1915 թուականէն մինչեւ այսօր յուշագրական բազմաթիւ գործեր լոյս տեսան սփիւռքի զանազան գաղթօճախներու մէջ: Այդ գործերուն հեղինակները ականատեսի իւրայատուկ վկայութիւններով կամ Եղեռնէն վերապրած անձերու միջոցով փոխանցեցին ժամանակակից սերունդներուն՝ ցաւատանջ եղելութիւններ:

Այս յղացքով, պէտք է ըսել, որ Յարութիւն Իսկահատեան «Վկայարան Հայկական Ցեղասպանութեան» խորագրեալ իր երրորդ հատորին մէջ կը համախմբէ բիւրաւոր հայ նահատակներուն մասին լոյս տեսած այն հրատարակութիւնները, որոնց առհասարակ ծանօթ

չէ ընթերցասէր հասարակութիւնը: Իր յուշագրական վերոյիշեալ նախաձեռնութեամբ, Իսկահատեան կը կատարէ գնահատելի աշխատանք մը՝ լոյս ընծայելով Հայոց Ցեղասպանութեան կապակցութեամբ անյայտ մնացած այլազան պատահարներ:

Հատորին բովանդակութեան մաս կազմող գործերուն միջոցով հաղորդակից կը դառնանք անապատի ամայքներուն մահացած հայ սրախողխող վկաներու աճիւններուն: Յիշեալ գործերը իրենց դառնակսկիծ ու եղերական հանգամանքով իրազեկ կը դարձնեն մեզ՝ մեր պատմութեան վերջին հարիւրամեակի արիւնոտ պայքարներուն: Յուզելով հանդերձ մեզ, անոնք կը գօտեպնդեն մեր սրտերը գոյատեւելու անբեկանելի վճռակամութեամբ, խորացնելով միանգամայն մեր սէրն ու հաւատքը՝ հանդէպ մեր դիւցազնաբոյր հողին եւ մեր պապենական տոհմիկ աւանդութիւններուն:

Ձեռնարկելով «Վկայարան Հայկական Ցեղասպանութեան» խորագրեալ երրորդ հատորին հրատարակութեան՝ Յարութիւն Իսկահատեանին հիմնական նպատակն է կենդանի պահել հայ ժողովուրդին յիշողութեան մէջ տարագրութեան տարիներուն հետ կապուած եղերական որեւէ դիպուած:

Պէտք է ըսել, որ սոյն գործով հեղինակը կը թելադրէ ընթերցողներուն, որ քննական ակնոցով նային 1915 թուականի եղեռնաշուք տարիներուն եւ ներկայացնեն զանոնք՝ գիտական փաստարկութեամբ:

Կը մաղթենք, որ Յարութիւն Իսկահատեան շարունակէ հրատարակել «Վկայարան»-ներու շարքը՝ նոյն ոգեւորութեամբ, դառնալով հարազատ թարգմանիչը Եղեռնի նահատակներու ոգեղէն ապրումներուն:

Փաստագրական Տուեալներ - Յարուժիւն Իսկահատեան

- 1- Պատուելի Թովմաս Մկրտիչեան իր «Տիգրանակերտի Նահանգին Զարդերը» գիրքին մէջ կը նկարագրէ իր տիկնոջ եւ զաւակներուն ու ապա իր փախուստը: Ան Տիգրանակերտի բրիտանական հիւպատոսարանին թարգմաննէր («Վկայարան Հայկական Յեղասպանութեան», Ա. հատոր էջ 84): Լէսլի Տէյվիսի «Սպանդի Նահանգը» գիրքի 137-րդ էջին մէջ այս մասին յստակ եւ համառօտ նկարագրութեան մը կը հանդիպինք:
- 2-1914-ին, Ամերիկայէն նոր վերադարձած Գէորգ Համբարձումեան (Տէֆճեան կամ Բոշենց) էվէրէկի իր տան մէջ ուումբի մը փորձարկութեան ընթացքին կը ձախողի եւ ուումբը կը պայթի ձեռքին մէջ: Այս մասին գրուած է իրարմէ անկախ քանի մը աղբիւրներու մէջ.
 - Ա. Գաբրիէլ Թազուրեան, «Գորշ Գայլը Կատղեր էր - 1915 - Վկայութիւններ Ու Տպաւորութիւններ» - տպարան «Յոսաբեր», Գահիրէ, 1953, գլուխ 17, էջ 170-178-ի մէջ կայ այս դէպքին մանրամասն նկարագրութիւնը:
 - Բ. Շաւարշ Միսաքեան, «Տերեւներ Դեղնած Յուշատետրի Մը» - Մատենաշար «Ազդակ»ի թիւ 80, Պէյրութ. 1957, էջ 5: Դէպքին անդրադարձ եղած է հպանցիկ կերպով:
 - Գ. Ալեքս Գրիգորեան (հաւաքող) եւ Սեդրակ Գարակէօզեան (աշխատասիրող), «Յիշատակարան էվէրէկ-Ֆէնէսէի». հրատարակութիւն էվէրէկ-Ֆէնէսէի Մեսրոպեան-Ռուբինեան Հայրենակցական Միութեան Կեդրոնական Վարչութեան, Փարիզ, 1963, էջ 583:
- 3- 1909-ի Ապրիլին Կիլիկիոյ Աղէտի ժամանակ Կարս Պազար

քաղաքի հերոսամարտին մասին տեղեկութիւններ կան հետեւեալ հրատարակութեանց մէջ.

- Ա. Զապէլ Եսայեանի «Աւերակներուն Մէջ».
- Բ. Անդրէաս Գարամանեանի «Տարագրեալի Մը Յուշերը» յուշագրութեան Ա. հատորին մէջ:
- Գ. Միսաք Քէլէշեանի «Սիս-Մատեան»ին մէջ՝ համառօտ նկարագրութեամբ:
- Դ. Յակոբ Թէրզեանի «Աղէտք Կիլիկիոյ» գիրքին մէջ տրուած են ընդարձակ տեղեկութիւններ:
- Ե. Յակոբ Պ. Պօղոսեանի «Հաճընի Ընդհանուր Պատմութիւնը» գիրքին մէջ:

«Կիլիկեան Կսկիծներ (Վաւերագրեր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դիւանի 1903-1915)», Հաւաքեց՝ Զաքարիա Պատրիկեան, տպարան «Հրազդան», Պէյրուսթ, 1927, փոքր չափի 207 էջ

Զաքարիա Պատրիկեան հրատարակած է Ն. Ս. Օ. Տ. Ս. Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսի դիւանին կարգ մը վաւերաթուղթերը, որոնք կ'ընդգրկեն 1903-1915 տարիներուն գրուած նամակներ: Ատանայի ջարդերն ու Մեծ Եղեռնի սկզբնաւորութեան բռնագաղթերու եւ տխուր դէպքերու մասին տեղեկութիւնները լայն տեղ գրաւած են այս փաստաթուղթերուն մէջ:

Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետը իր գահակալութեան առաջին տարիներուն (1903-1915) շատ նեղ օրեր անցուցած է, բայց մեծ արիութիւն եւ քաղաքացիական առաքինութիւն ցուցաբերած է ու իր կարողութեան սահմաններուն մէջ բողոքած եւ պայքարած է գործուած ոճիրներուն ու անարդարութեանց դէմ, դիմումներ կատարած է աղէտներուն առաջը առնելու կամ անոնց գէշ հետեւանքները սահմանափակելու համար: Ատանայի դէպքերէն առաջ եւ անոնց ընթացքին, ան բազմաթիւ դիմումներ կատարած է իր հօտը ջարդերէն կարելի եղածին չափ զերծ պահելու համար:

1909-ի Փետրուարին Կիլիկիոյ մէջ խլրտումներն սկսած էին արդէն: «10 Փետրուար 1909, Սիս» նշումներով ու Ատա-



նայի թեմի Առաջնորդ Մուշեղ Եպիսկոպոս Սերոբեանին ուղղուած հայրապետական նամակին մէջ այս մասին տեղեկութիւններ կան (էջ 72-74): Կաթողիկոսը թրքական պետութեան բռնագրաւումներուն մասին կ'ըսէ. «Տարիներ կը գուրգուրաս կտոր մը հողիդ վրայ, կը մշակես, կը պարտացնես, կը ցանես եւ յանկարծ օր մը քանի մը գինեալ թուրքեր առջեւդ կ'ելլեն, կը սպառնան, եզներդ եւ արօրդ կը գրաւեն եւ կը նետեն, ու իբրեւ իրաւատէր՝ ցանածդ կը քաղեն եւ նորէն կը ցանեն: Տարիներով, դարերով, եկեղեցին կամ վանքը տէր ճանչցուած է այս կամ այն կալուածին, կառավարութեան մէկ կամայական հրամանով կը գրաւուի կալուածը եւ հաստատութիւնը քայքայման կ'ենթարկուի»: Շարունակելով, ան կը գրէ. «Երուսաղէմը Պալեան ամիրայի մահուանէ ի վեր Եալովայի ագարակի խնդիր ունի եւ չի կրնար լուծել: Հալէպի եկեղեցին քառասուն տարիներէ ի վեր ծանօթ գետնի խնդիր ունի, որուն իրաւախոհութեամբ կարգադրութիւնը եղաւ կիսով չափ գոհողութեամբ եւ ձեռք բերուած իլամը՝ ծանուցագիրը Պատրիարքարան ղրկեցի մեշէխէթէն վաւերացնել տալու համար եւ քանի՛ քանի՛ անգամ գրեցինք, պատասխան տալ չկայ»: Հայրապետը կը շեշտէ նաեւ, թէ թրքական Շուրայի-Տէվլէթն (Պետական Խորհուրդ – Յ. Ի.) իր տուած որոշումով կը միտի Սիսի վանքը աղքատութեան մէջ խեղդել եւ զայն ի վերջոյ փակել: Ապահովութեան մասին Սահակ Կաթողիկոսը կը տեղեկացնէ. «Տեղւոյս միւթասարրիֆը Ուրբաթ գիշեր Կարս Պագարէն եւ Վահկայէն ժողուած 10-12 սուարիներով Հաճըն գնացին չո՞ւն մեզի անծանօթ է. այդտեղէն եկած լուրի մը համեմատ՝ հայ վարժուհի մը բռնաբարելու խնդիր կայ: Ես լաւ բան չեմ տեսներ այս ցուրտ եղանակին միւթասարրիֆին Հաճըն երթալուն մէջ. կանխագուշակուած փոթորիկը կը մօտենայ, նոր արհաւիրքներու ամպերը կը կուտակուին եւ մերկ ու անօթի ժողովուրդը սպանդանոց պիտի առաջ-

նորդուի:

Այդ գեղի ճամիին (մզկիթին) մասին այլ բաներ մը կը պատմուին. եթէ ընողները թուրք են եւ բռնուած, հարկաւ չէք լսեր, քանի որ նպատակը ծանօթ է. նոյնիսկ հիւպատոսներուն հասկցնելու է, որ այս ճանաւար (հրէշ) ազգը արիւն խմելու գազանութեան յագուրդ տալու համար իր սրբութիւնները իր ձեռքով կը պղծէ, ըսելու համար որ «Հայը ըրաւ»:

Զաքարիա Պատրիկեան կը մատնանչէ Ատանա քաղաքին եւ նոյնանուն նահանգին արիւնալի դէպքերէն առաջ Ատանայի Պատերազմական Ատեանէն Պոլիս ղրկուած ընդարձակ յիշատակագիր մը, որուն մէջ յիշուած են նախընթաց դէպքերն ու նշանները: 1 Ապրիլ 1909-ի երեկոյեան՝ Ատանայի մէջ խառնակութեանց մասին տարածայնութիւններ կը շրջին: Յաջորդ օրը Օսմանիէէն եւ Համիտիյէէն գէշ լուրեր կը հասնին: Աւելի լայն ծաւալով վայրագ դէպքերու լուրեր կը հասնին Սիսի ազարակներէն, ուրկէ հայերը փախչելով կ'ապաստանին Սիս, որուն հայ բնակիչները, լքելով իրենց տուները, վանքին մէջ կը պատսպարուին:

Սահակ կաթողիկոս «2435/257, 1909, Մերսին» նշումները կրող եւ Խնդիր էֆենտի Սիմոնեանին ուղղուած նամակով մը անոր Կիլիկիոյ մէջ շրջագայութեան եւ նպաստի բաշխման գործին արժեւորումը կ'ընէ: Խնդիր Սիմոնեանը Պոլսոյ Հայոց Պատրիարքարանի պատուիրակութեան անդամ ըլլալով, Կիլիկիոյ ջարդերէն ետք անոնց թատերավայր եղած տեղերն այցելած էր: Այս վայրերուն մէջ թուրքերը խժոժութիւններ, աւերումներ եւ սպանութիւններ կատարած էին: Ժողովուրդը մահատիպ թշուառութեան եւ կարօտութեան մատնուած էր: Խնդիր էֆենտի այցելած էր Միսիս, Համիտիէ, Սիս, Կարս Պազար, Օսմանիէ, Պախչէ, Խառնը, Լափաճը, Հասան Պէլլի, Ինթիլլի, Քեւէր, Զորք

Մարզպան, Օճագլը, Էօզերլի, Աղեքսանտրէթ, Պէլլան եւ Գրըրք Խան եւ թուրքերուն պատճառած աւերներուն ականատես եղած: Կաթողիկոսը Խնդիր էֆենտին կը յորդորէր հայ այրիներն ու որբերը չմոռնալ:

Կիլիկիոյ աղէտէն մօտաւորապէս ութը ամիս ետք, Սահակ կաթողիկոս իր «2435 (կենթադրենք, որ ճիշդն է՝ 2345 - խմբ.)/408, 24 Դեկտեմբեր 1909, Մերսին» նշումներով նամակով Հ. Բ. Ը. Միութեան նա-խագահ Պօղոս Նուպար Փաշան կը տեղեկացնէ, թէ նոր հիմնուելիք Քէլէկեան որբանոց-կրթարանին վայրը պէտք է Սիսի մէջ ըլլայ՝ վերջինիս շատ մը առաւելութիւններ ունենալուն շնորհիւ: Ըստ երեւոյթին, Կիլիկիոյ աղէտին որբացածներէն շատեր պէտք է հոն պատսպարուէին:

Սահակ կաթողիկոսի՝ «2355/27, 24 Յունուար 1910, Ատանա» նշումներով նամակը ուղղուած է Երուսաղէմի Պէյ Աղաթօնի: Ան նախագահն էր Ատանայի հայկական միութիւններէն մէկուն, որ մտադրած էր որբանոց մը հիմնել: Սահակ կաթողիկոս որբանոց-կրթարանը կը յանձնարարէ ծառայեցնել գիւղատնտեսական եւ արհեստագործական նպատակներու եւ կ'առաջարկէ զայն հաստատել Սիսի մէջ:

Մէկ կողմէ Սահակ կաթողիկոսի, միւս կողմէ՝ Ատանայի Առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսի եւ ազգային բարերարներու միջեւ գրուած նամակները ցոյց կու տան Կիլիկիոյ ջարդերուն եւ աւերումին հետեւանքները հայ հասարակաց կեանքին մէջ: Շեշտը դրուած է հայկական որբանոցներ հիմնելու վրայ:

Կիլիկիոյ ջարդերուն ընթացքին Սահակ կաթողիկոս գրաւոր բազմաթիւ դիմումներ կատարած է Ատանայի նահանգապետին, բայց ապարդիւն:

Գիւտ վարդապետին (Միսիթարեան - խմբ.) ուղղուած իր նամակին մէջ Սահակ կաթողիկոս յստակօրէն կը

մատնանշէ հայոց դէմ իթթիհատականներու թշնամական կեցուածքը, եւ մտավախութիւն կը յայտնէ, թէ անոնք խռովութեանց ատեն հայոց առաջին ջարդարարները պիտի ըլլան: Սահակ կաթողիկոս իթթիհատականները «Նոր Համիտներ» կը կոչէ: Նամակներու բովանդակութիւնները կը խօսին նաեւ Ատանայի շրջանէն հայ երեսփոխան մը ունենալու հայութեան առաջարկին եւ թրքական մերժումին մասին: Այս նամակները 1909-էն մինչեւ 1915 կ'երկարին: Հակառակ անոնց կարեւոր բնոյթին, քանի մը նամակներ անպատասխան մնացած են:

Ուշագրաւ է Սահակ կաթողիկոսի՝ «4536/326, 27 Սեպտ. 1914, Հալէպ» նշումներով նամակը՝ ուղղուած կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարք Զաւէն Արք. Տէր Եղիայեանին: Նամակին մէջ Ձէյթունի ժողովուրդին կրած տառապանքը կը մատնանշուի: «Տեղի ունեցած ծեծը, խոշտանգումը եւ անպատուութիւնը միայն ապստամբներու վայել ըլլալը յայտնեցինք, իսկ զէյթունցիք իբրեւ հաւատարիմ հպատակներ բնաւ մտքէ անգամ անցուցած չեն այդպիսի եպերելի նպատակ մը», - կը յայտնէ կաթողիկոսը: Այս ոճրային արարքներն Ատանայի նահանգապետին վերագրուած են: Յովհաննէս վարդապետ Գարանֆիլեանն ալ ձերբակալուած էր: Սահակ կաթողիկոս նահանգապետին մօտ կը միջամտէ անոր համար՝ առաջարկելով զայն յանձնել Հայոց Առաջնորդարանին, բայց կը մերժուի: Նահանգապետը ձերբակալեալ վարդապետը Մարաշի բանտը կը ղրկէ:

Նամակին մէջ կը յիշուի Ձէյթունի գայմազամ (գաւառապետ) ալպանացի Հիւսնի էֆենտիի սերտ գործակցութիւնը նոյնպէս ալպանացի մութասարիֆին հետ: Սահակ կաթողիկոս կոչ կ'ուղղէ Զաւէն պատրիարքին, որպէսզի ջանք թափէ Հիւսնի էֆենտին պաշտօնանկ ընել տալու համար: Թուրք պատասխանատուներն արդէն

1914-ին սկսած էին հայերը հալածել: Առաջին կարգին Ձէյթունի եւ Մարաշի մէջ խռովութիւններ կը ծագին: Նամակներէն կ'իմանանք, թէ երկու քաղաքներուն մէջ ալ ձերբակալութիւններ տեղի ունեցած են: Ձէյթունի մէջ ձերբակալուածներէն Նազարէթ Չաուշը (Եէնիտիւնեայեան) դաժան ծեծի եւ անարգանքի ազդեցութեան տակ մահացած էր: Նազարէթի որդին՝ Յակոբ Եէնիտիւնեայեանը, որ հուժկու մարդ մըն էր, նոյնպիսի ծեծի ենթարկուած էր եւ վախ կար, որ ան կը մահանայ: Այս բոլորը հրամայողը մութասարիֆ Հայտարն էր:

Ձէյթունը գէնքով նուաճելու նպատակով թուրքերը ժողովուրդը ստիպած են 1600 թուրք զինուորներ 25 օր կերակրել՝ բնակչութեան համբերութիւնը սպառելով զայն ընդդիմութեան մղելու ու այսպիսով զանոնք իբրեւ ապստամբներ ներկայացնելու մտօք:

Մութասարիֆ Հայտարին օժանդակած է Ձէյթունի ալպանացի գայմազամը՝ Հիւսնի էֆենտին: Սահակ կաթողիկոսը Զաւէն պատրիարքին ուղղուած իր նամակին վերջաւորութեան կ'ըսէ. «Բնաւ սխալած չենք ըլլար եթէ ըսենք, թէ ներկայ կառավարութիւնը (այսինքն՝ իթթիհատական իշխանութիւնը - Յ. Ի.) նախորդ ռեժիմէն շատ աւելի կու գայ լեցնելու դառնութեան բաժակը»:

Ձէյթունի եւ Մարաշի դէպքերուն շուրջ Սահակ կաթողիկոս թուրք պատասխանատուներու բազմաթիւ նամակներ գրած է: Անոնց մէջ հովուապետը բռնարարքները նկարագրելէ յետոյ հարց կու տայ պատճառներու մասին: Այս դիմումներուն շնորհիւ, Բարձրագոյն Դուռը (օսմանեան կառավարութիւնը) կը հրամայէ Ձէյթունի բանտարկեալներէն կամովին անձնատուր եղածները ազատ արձակել, իսկ հետապնդմամբ ձերբակալուածները դատել Օսմանիէի մէջ: Ձէյթունի մէջ ձերբակալուած եւ Հալէպ տարուած

Յովհաննէս Վրդ. Գարանֆիլեանը ուրիշ երեք անձերու հետ ազատ կ'արձակուի:

Գիւտ եպիսկոպոսին ուղղուած 25 Փետրուար 1915 թուականակիր նամակով, Սահակ կաթողիկոս ահազանգ կը հնչեցնէ՝ Ձէյթունի մէջ կատարուած դէպքերը յիշեցնելով: Վտանգաւոր կացութիւնը մեղմացնելու նպատակով, Սահակ կաթողիկոս 1915-ի սկիզբը, Հաճըն, Սիւս եւ Ատանա կ'այցեւէ՝ իր հօտին հոգերով զբաղելու համար:

Թուրքերու հրահրած խլրտումները կը շարունակուին մանաւանդ Ձէյթունի եւ Մարաշի մէջ: Պատրիարք Զաւէն Արք. Տէր Եղիայեանը Սահակ կաթողիկոսին ուղղուած իր նամակին մէջ կը յիշէ, թէ Ձէյթունի կացութեան վտանգաւոր ըլլալուն պատճառաւ, ինք դիմում պիտի ներկայացնէ օսմանեան կառավարութեան եւ թէ յոյս ունի որ հարցերը բարւօք լուծուին:

Սահակ կաթողիկոսի՝ Զաւէն պատրիարքին ուղղուած «7 Ապրիլ 1915, Ատանա» նշումներով նամակէն կ'իմացուի, որ 20-26 հայ յեղափոխականներ, ըմբոստանալով թուրքերուն դէմ, Ձէյթունի մօտ հայկական վանք մը ապաստանած են (վանքին անունը նշուած չէ): Թուրք զինուորները վանքը պաշարած են ու յարձակած անոր վրայ, տեղի ունեցած է հրացանաձգութիւն, թնդանօթներէ ուռմբեր արձակուած են, սակայն հայ յեղափոխականները պաշարման շղթան կտրելով՝ առաւօտեան փախուստ տուած են: Թուրքերը վանքը եւ շուրջի գիւղը կրակի տուած են, ապա՝ Ձէյթուն քաղաքին մէջ 63 հայեր ձերբակալած: Իշխանութիւնները Ձէյթունի ժողովուրդը երեք խումբերով տեղահան ըրած են՝ առանց պատրաստութեան ժամանակ տալու: Ձէյթունի հայ բռնագաղթեալները Մարաշէն, Ատանայէն եւ Տարսոնէն անցնելով դէպի Գոնիա պիտի ղրկուէին: Ըստ շրջան ընող լուրերուն՝ ամբողջ Ձէյթունը պիտի բռնագաղթեցուէր:

Այս լուրերը Կիլիկիոյ ողջ հայութիւնը ահ ու սարսափի կը մատնեն: Չորք Մարգպանի եւ Սուէտիոյ մէջ նախապէս պատահած դէպքերը Ձէյթունի աղէտին քով շուքի մէջ կը մնան: Խօսքեր կը շրջին, թէ նոյն չարիքը պիտի պատահի նաեւ Հաճնոյ ու Հասան Պէյլիի հայութեան:

«8 Ապրիլ 1915, Ատանա» նշումներով յաջորդ նամակին մէջ Սահակ կաթողիկոս Զաւէն պատրիարքին կը յայտնէ, թէ Մարաշի նախորդ կառավարիչ Հայտար Պէյը օրէնքի եւ խիղճի հակառակ գործելով, փոխանակ յանցաւորները պատժելու, անմեղ հայ կիներ, երեխաներ եւ այրեր ծեծի, լլկումի եւ խոշտանգումի կ'ենթարկէ: Շատերուն ոտքի մատները նետելով կը փտտին եւ կ'իյնան, յղի կիներ կը վիժեն: Ձէյթունի մէջ, հայ յեղափոխականներ կը մտադրեն կառավարութեան զէնքերու մթերանոցին տիրանալ, բայց հայ աղաները թոյլ չեն տար: Մրագիրը կը ձախողի Հայկ Ասմըեանի ու անոր նմաններու մատնութեան պատճառով (տես էջ 146-154):

Բռնագաղթն ու ջարդերը սկսած էին 1915-ի առաջին ամիսներուն: Այս իրողութիւնը յստակօրէն կ'երեւայ Սահակ կաթողիկոսի նամակներուն մէջ: Օսմանիէ, Սուէտիա եւ Քեսապ Ձէյթունի ճակատագրին կը հետեւին:

Սահակ կաթողիկոսի ուրիշ նամակներէն կ'իմանանք, թէ Ձէյթունէն 3000 հայեր բռնագաղթեցուած են: Ձէյթունի աղքատ դասակարգը իր տեղը մնացած է:

Կիլիկիոյ Աթոռին գահակալը կը շարունակէ դիմել օսմանցի զանազան պաշտօնական անձնաւորութեանց՝ կացութիւնը դարմանելու նպատակով:

Սահակ կաթողիկոս Դ. բանակի հրամանատար Ճեմալ Փաշայի փոխանորդ Ֆախրէտտին փաշայի հետ մէկ ու կէս ժամ տեսակցութիւն ունեցած է: Վերջինս հնչակեաններու մասին շատ աննպաստ գաղափար ունէր:

Ֆախրէտտին փաշա Ձէյթունէն, Մարաշէն, Այնթապէն ու Հալէպէն անցնելով Ատանա հասած էր: Սահակ կաթողիկոսին հետ տեսակցութեան ընթացքին ան շատ յայտնուածիւններ ըրած էր եւ կաթողիկոսի դիմումներուն մէջ յիշուած բռնարարքները չափազանցուած նկատած: Փաշան Ձէյթունի, Մարաշի, Այնթապի եւ Քիլիսի հայոց բռնագաղթերը կ'արդարացնէ: Հաճնոյ մասին Ֆախրէտտին փաշա կաթողիկոսը կը հանգստացնէ, սակայն չի մոռնար ըսելու, թէ կուսակցականները պէտք է բռնագաղթեցուին, որովհետեւ անոնք կառավարութեան հնազանդ չեն: Աւելի յառաջ երթալով, Ֆախրէտտին կ'ըսէ, թէ Պօղոս Նուպար Փաշան օսմանեան հայրենիքին խայիս (դաւաճան) մըն է: Այս տեղեկութիւնները քաղուած են Սահակ կաթողիկոսի «4980/86, 10 Մայիս 1915, Ատանա» նշումներով նամակէն, զոր նոյնպէս ուղղուած է Ջաւէն պատրիարքին (էջ 164-172): Նոյն նամակին մէջ, Վեհափառ Հայրապետը կը տեղեկացնէ, թէ 17 Ապրիլէն ետք կացութիւնը Ատանայի մէջ վատթարացած է. գնդակահարութիւն, կախաղան, հայոց տուններու խուզարկութիւններ, ձերբակալութիւններ եւ բանտ: Ատկէ առաջ նման խժոժութիւններ Ձէյթունի եւ Չորք Մարզպանի մէջ տեղի ունեցած էին: Տեղեկութիւններ կային, թէ Ատանայէն 500 տուն հայեր, Տարսոնէն 200 հոգի, Մերսինի եւ Չորք Մարզպանի ողջ հայութիւնը, իսկ Հաճընէն 1000 տուն պիտի բռնագաղթեցուին: Ահն ու սարսափը բոլորին վրայ կը տարածուին: Թուրքերը 1 Մայիսին նման հալածանքներ կը գործադրեն նաեւ Սիսի մէջ:

Մարաշի գաղթականներուն համար կաթողիկոսարանէն 100 ոսկի օգնութիւն կը դրկուի: Ատանայի մէջ ձերբակալուած հայերէն քանի մը հոգի կախաղան կը բարձրացուի: Ձէյթունէն եւ ուրիշ քաղաքներէ ու գիւղերէ հայեր դէպի

Գոնիա աքսորուած էին: Անոնց կացութիւնը շատ գէշ էր: Վերջապէս, Սահակ կաթողիկոս իր նամակին մէջ կը յայտնէ, թէ վալիին (նահանգապետին) հետ տեսակցութենէն ոչ մէկ յոյս կ'ակնկալէ:

Հայոց Հայրապետը կը շարունակէ նամակներով դիմել թուրք քաղաքական եւ զինուորական պատասխանատուներուն, խնդրելով դադրեցնել հայոց դէմ բռնարարքները ու բարելաւել հայ բռնագաղթեալներուն վիճակը:

«Վշտաբեկ եւ աղօթարար կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ» ստորագրութեամբ ուրիշ նամակ մը (համար 4950/91, 5 Յուլիս 1915, Հալէպ) ուղղուած Ջաւէն պատրիարքին, հայ գաղթականներուն վիճակը կը նկարագրէ: Գոնիա հասած զէյթունցի բռնագաղթեալներուն թիւը 5000-ի կը հասնի: Մնացեալները Սուլթանիէի եւ Կարս Պազարի մէջ տարածուած են: Ձէյթունի գիւղերը՝ Ֆոնուզ, Կոկիսոն, Կապան, Պունտուք, Շիվիկիլ, Ալպիստան եւ Եարփուզ բոլորովին պարպուած են: 20,000-է աւելի հայեր արաբներուն մէջ ցրուած են: Թուրք գաղթականներ գրաւած են հայոց տունները: Սահակ Բ. 1915-ի Մայիսին Ատանայի նահանգապետին գիտութեամբ եւ հաւանութեամբ Ատանայէն Հալէպ կ'երթայ: Քիլիսցի, եդեսիացի, տիգրանակերտցի, մարաշցի եւ սուէտիացի հայ զինուորներուն վիճակը ամէլէ թապուրին (բանուորական վաշտ) մէջ շատ թշուառ է: Հալէպի հայկական եկեղեցիներու բակերուն, դպրոցներու եւ այլ վայրերու մէջ հայ գաղթականներուն վիճակը շատ սրտակեղծ տեսարան մը կը պարզէ: Հարուստ, աղքատ, ուսուցիչ եւ աշակերտ, բոլորն ալ նոյն վիճակն ունին: Տակաւին նոր գաղթականներ ալ կը հասնին:

5 Մայիս 1915-էն ի վեր Հալէպ հասած են՝

1. Չորք Մարզպանէն	318 տուն	885 այր	758 կին
2. Էօզերլիէն	42 տուն	113 այր	113 կին

3. Օճագլըն 72 տուն 172 այր 159 կին
 Ընդհանուրը՝ 2200 բռնագաղթեալներ:

- 4. Հասան Պէյլիէն 187 տուն 1112 հոգի
 - 5. Մարաշէն 8 տուն 67 հոգի
 - 6. Կարս Պագարէն 6 տուն 35 հոգի
 - 7. Հաճընէն 70 տուն 495 հոգի
- Ընդամէնը՝ 1715 հոգի:

Վեհափառ Հայրապետի նամակէն յայտնի կը դառնայ, թէ իրենց ոճրային արարքներն արդարացնելու համար, թուրքերը հայոց դէմ զրպարտութիւններ եւ սուտ ամբաստանութիւններ կը տարածեն: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին կ'ըսեն, թէ Հաճընի եւ Հասան Պէյլիի մէջ ռումբեր եւ տինամիթ գրաւուած են, մինչդեռ Հաճընէն գրաւուած երկու երկաթեայ գնդակները եգիպտացի իպրահիմ փաշայի օրերէն (1830-ական թուականներ - Յ. Ի.) մնացած պարզ երկաթէ գունդեր են, որոնք իբրեւ կշիռքի չափ կը գործածուէին, իսկ տինամիթն ալ ձուկ որսալու համար կը գործածուէր: Թուրքերը ամբողջ Հաճընն ու անոր մօտակայ Շար գիւղը տեղահան ըրած էին:

Հայ գաղթականները կը տարածուին Սուրիոյ հիւսիսը գտնուող Պապ, Մունպուճ, Էրիհա եւ Իտլիպ աւաններուն մէջ: Անոնց արգիլուած էր Հալէպ մտնել: 12 Մարտ 1915-էն մինչեւ Յունիս՝ Ատանայի, Տարսոնի, Մերսինի, Ճիհանի, Օսմանիէի, Կարս Պագարի եւ Սիսի մէջ 12 հայեր կախաղան բարձրացուած են:

Մինչ թուրքերը մէկ կողմէն իրենց ստոր արարքները ամէնուրէք ի գործ կը դնեն, միւս կողմէ ձեմալ Փաշան քանի մը նամակ կը գրէ Սահակ կաթողիկոսին հայ

գաղթականներուն մասին, եւ անոնց «հանգստութիւն»ն ապահովելու եւ հոգիներն ու ինչքերը պահպանելու «մտավախութիւն» կը յայտնէ: Կաթողիկոսը կը պատասխանէ պատշաճ նկարագրութիւններով եւ բացատրութիւններով:

Ձաւէն պատրիարքին ուղղուած, 4980/93 համարը կրող եւ 6 Յունիս 1915 թուագրեալ կաթողիկոսական նամակը կը յայտնէ, թէ Հալէպ հասած են Գրիգոր Զօհրապը, Վարդգէսը, Տօթթ. Տաղաւարեանը, Ակնունին եւ ուրիշներ: Կ'ըսուէր, թէ անոնք Տիգրանակերտ պիտի դրկուէին Պատեւրազմական Ատեանին առջեւ դատուելու համար:

Հալէպի կառավարիչ ձեյալ Պէյը, որ հայասէր եւ մարդասէր մէկն էր, Գոնիա կը փոխադրուի: «Վշտի եւ տառապանքի (Հայ) ցեղը անդարմանելի կորուստ մը ունեցաւ», - կ'ըսէ Սահակ կաթողիկոս: Ձեյալ Պէյը ի տես եկեղեցւոյ գաւիթին մէջ հաւաքուած հայ գաղթականութեան թշուառ վիճակին, արցունքոտ աչքերով կը մեկնի դէպի Գոնիա: Հայրապետը անկէ կը խնդրէ 5-6000 գէյթունցի գաղթականներուն հայրական խնամքով նայիլ եւ այդպիսով մեղմացնել Հալէպէն իր բաժանման պատճառած կսկիծը:

Կաթողիկոսը ձեմալ Փաշային հետ տեսակցութիւն մը ունեցած էր Հալէպի մէջ: Վերջինս հայ կամաւորներուն, Վանի, Չորք Մարզպանի եւ Զէյթունի հայոց հասցէին զրպարտութիւններ կը շռայլէ ու խոր ատելութեամբ կ'արտայայտուի անոնց մասին:

Սահակ Հայրապետը «4980 (կ'ենթադրենք որ ճիշդն է 4981 - խմբ.)/94, 19 Յունիս 1915, Հալէպ» նշումները կրող նամակով Ձաւէն պատրիարքին կոչ կ'ուղղէ Հալէպ եւ չրջակայքը գտնուող հայ գաղթականներուն համար նիւթական օգնութիւն հասցնել: Ան պատրիարքին կը թելադրէ մանաւանդ ամերիկեան եւ նոյնիսկ գերմանական բարեսիրական հաստատութեանց դիմել: «Չորս կողմս,

գիշեր եւ ցերեկ, մերկութիւն, անօթութիւն, նուաղում, լաց ու վայնասուն», - կը գրէ վշտակիր Հայրապետը: «Բայց գիտեմ թէ ամէն դիմում (թուրքերուն - Յ. Ի.), ամէն աղաչանք ու պաղատանք անօգուտ են, եւ աւելի նոր խստութեան ու չարիքի դուռ կը բանան»:

Կաթողիկոսը օսմանեան Դ. բանակի հրամանատար Ճեմալ Փաշային, պատերազմական եւ ներքին գործոց նախարարներուն ուղղուած նամակ մը կը գրէ գաղթականներու վիճակին մասին՝ բողոքելով այդ կացութեան դէմ: Սոյն նամակը թուագրուած է «2 Թուրքիի էվվէլ 331, Հալէպ»:

Այս բողոքը պատճառ կը դառնայ Սահակ Հայրապետին Հալէպէն աքսորման նախ դէպի Իտլիպ, ապա՝ Երուսաղէմ, ուր կը հասնի 31 Հոկտեմբեր 1915-ին:

Մանօթ. Սոյն գիրքին մէջ յիշատակուած եւ թրքերէն գրուած նամակներուն թարգմանութիւնը տպուած է «Յաւելուած»ին մէջ:


Յովհաննէս Տէր Համազասպեան, «Էլմալուի (Գոնիայի) Հայերուն Գաղթականութեան Պատմութիւնը», հրատարակիչը չէ նշուած: Գրքոյկը տպուած է Փարիզ, 1959-ին, միջակ չափի 24 էջ

Ա.- Հայկական Մեծ Աղէտը 1915-ին եւ Էլմալուի Փրկութիւնը (էջ 20-21)

Հայը միշտ հետամուտ եղած է իր արդար քրտինքով իր հացը շահելու եւ բարւոքելու իր կեանքը: Իր հայրենի հողին կապուած, իր գրականութեան ու կրօնքին հաւատարիմ, դարեր ու դարեր ապրած է ան:

1915-ին դժոխային ոգի թալաթ, էնվէր եւ ուրիշներ հայոց բնաջնջման հրաման կը հանեն: Մեր մայրերը, հայրերը եւ եղբայրները հայրենի տուներէն կը բռնագաղթեցուին եւ անապատներու մէջ կը խողխողուին: Տէր Զօր եւ ուրիշ վայրեր հայոց սպանդանոցներ կը դառնան: Հայը այս դժոխային պայմաններու մէջ, Աստուծոյ եւ Հայրենիքին հաւատարիմ մնալով, կը նախընտրէ մահը անարգ ուրացումէն:

Հայկական Յեղասպանութեան գլխաւոր պատասխանատուներէն երեքն իրենց արժանի պատիժը կը ստանան. Թալաթը դիտապաստ կ'իյնայ 1921-ին Սողոմոն Թեհլիրեանի ձեռքով, Պերլինի մէջ: Էնվեր փաշան 1922-ին վրիժառու հայու մը կողմէ կը սպաննուի երբ Աֆղանիստան կը



փախչելը: Ճեմալ փաշա 1922-ին Թիֆլիսի մէջ կը զգեստնուի Ստեփան Շահպաղի ձեռքով:

Էլմալուն 1915-ի Մեծ Աղէտէն նախախնամական հրաշքով մը կը փրկուի եւ բացառութիւն կը կազմէ ընդհանուր աղէտի պատկերին մէջ:

Էլմալուի 90 տուն հայերը բռնագաղթէ զերծ կը մնան շնորհիւ Նէթէներու պարագլուխ բարեկամներու, ինչպէս Թահսիտար Իպրահիմ էֆենտիին եւ Գըրճը օղլու Մուհամմէտ աղային: Վերջինս հեղինակին՝ Յովհաննէս Տէր Համազասպեանի հօր՝ Տէր Համազասպ քահանայի (Փափագեան - խմբ.) մօտիկ բարեկամն էր եւ Էլմալուի մէջ ազդեցիկ անձնաւորութիւն մը:

Վերոյիշեալ Նէթէապետները Էլմալուի հայկական դպրոցին մէջ Տէր Համազասպին մօտ գալով, կը խոստանան Էլմալուի հայերը բռնագաղթէն զերծ պահել: Եւ իրենց խոստումը կը յարգեն:

Բ.- Էլմալուի Աքսորը Քեմալական Շրջանին (էջ 22-24)

17 Յուլիս 1921-ին Մուսթաֆա Քեմալը հայերն աքսորելու հրաման կ'արձակէ: 15 տարեկանէն մինչեւ 50 տարեկան այրերը դէպի Սեբաստիա, Ուարբերդ եւ Կարին կ'աքսորուին: 18 ամիս աքսորի մէջ մնալէ յետոյ, 5 Հոկտեմբեր 1922-ի նոր հրամանին շնորհիւ, աքսորուածներն իրենց բնակավայրը կը վերադառնան:

Յովհաննէս Տէր Համազասպեան իր հայրենակիցներով կը պատրաստուի տուն վերադառնալու: Ան տուն կը հեռագրէ, սակայն պատասխան չստանար: Կը պարզուի, թէ անոր ընտանիքը բռնագաղթեցուած էր: Արդարեւ,


5 Հոկտեմբեր 1922-ին Էլմալուի հայոց եւ յոյներուն կը հրամայուի 10 օրուան մէջ պատրաստուիլ եւ մեկնիլ: Իտրիս աղա անունով թուրք մը Մուսթաֆա Քեմալին մօտ կը միջնորդէ, որպէսզի Էլմալուի հայերը ծովու ճամբով մեկնին: Այս միջնորդութիւնն իր բարերար ազդեցութիւնը կը գործէ բռնագաղթեալներու ապահովութեան եւ կեանքին տեսակէտէն: Թուրքերը կը կողոպտեն տուները հայ գաղթականներուն, որոնք իրենց հետ ո՛չ մէկ բան կրնան տանիլ: Էլմալուցիները Յունաստան կը գաղթեն:

**Հայկազուն Յ. Եսփուճեան, «Յիշատակարան
Րուստիկինի», հրատարակութիւն Րուստիկինի
Հայրենակցական Միութեան, տպարան «Ատլաս»,
Պէյրուս, 1967, միջակ չափի 288 էջ**

**Ա.- Հայկազուն Յ. Եսփուճեան,
«Րուստիկինի Զարդը» (էջ
139-155)**

Րուստիկին գիւղը կը գտնուի
Կեսարիոյ հիւսիսը՝ անկէ ոտքով
ինը ժամուայ հեռաւորութեան
վրայ:

19-րդ դարու սկիզբը կը յատ-
կանչուի օսմանեան ծանր լուծին
տակ հեծող ժողովուրդներու ազ-
գային զարթօնքի եւ ազա-
տագրական ձգտումներու ըս-
կզբնաւորութեամբ: Ամէնէն շատ
տառապածը՝ հայ ժողովուրդը մեծ
տէրութեանց նկատմամբ, որոնք կը
խոստանային Օս-
մանեան Պետութեան մէջ բարենորոգումներ
կիրարկել տալ: Արեւմտեան Հայաստանն
ու Փոքր Ասիոյ միւս մասերը
գեհէնի վերածուած էին սուլթան Ապտիւլ
Համիտ Բ-ի գահակալութեան շրջանին:
Հայ ժողովուրդը ճորտութեան
ճիրաններուն մէջ կը տուայտէր:
Նման տխուր վիճակ կը
պարզէին նաեւ Եոզկատի եւ
Կեսարիոյ շրջանները, հեռու
կեդրոններէն, իրենց բախտին
ձգուած: Ազգային ոգի եւ
գիտակցութիւն ներմուծելու
գեղեցիկ գաղափարէն մղուած,
Ս. Դ. Հնչակեան եւ Հ. Յ. Դաշնակցութիւն
յեղափոխական կուսակցութիւններն
իրենց նուիրեալ գործիչներով



պիտի աշխատէին այստեղի հայ
ժողովուրդին զաւակները
ստրկութենէն ազատել:

Հնչակեան Ժիրայր Պոյաճեանը
(Մօրուք Ժիրայր), ապա
դաշնակցական գործիչներ Գ.
Վիշապեանն ու Քիւրքճեանը
Րուստիկին կը հասնին: Ազնիւ
գաղափարի սերմնացան այս
գործիչներուն ցանածները
հազիւ սկսած էին հունձք տալ,
երբ Առաջին Համաշխարհային
Պատերազմը կը պայթի:

Հեղինակը հոս կը մէջբերէ
հատուածներ Հայկազն Գ.
Ղազարեանի թարգմանած՝
Մեւլան զատէ Ռիֆաթի
«Օսմանեան Յեղափոխութեան
Մութ Ծալքերը» (Թիւրքիյէ
ինքիլապընըն Իչ Եիլգիլ)
երկէն՝ լոյս տեսած «Ազգակ»
օրաթերթի 18-23 Մարտ
1965-ի թիւերուն մէջ: Այս
գիրքը յատկապէս կը քօղազերծէ
Պէհաէտտին Շաքիրի
գլխաւորութեամբ Հայկական
Յեղասպանութիւնը գործադ-
րելու ծրագիր մը, որու
ամէնէն յատկանշական
գաղափար-հրահանգն է՝
«Հայերը, առանց բացառութեան,
առանց խտրութեան, երեխայ,
մանուկ, կին, աղջիկ,
ծեր, հիւանդ, մինչեւ
վերջինը՝ բնաջնջել»:

1913-ին Րուստիկինի մէջ
թուրքերու եւ հայոց միջեւ
մեծ կռիւ մը տեղի կ'ունենայ:
Տէր Խորէն Քահանայ
Աճերեան խիզախօրէն կը
փորձէ կառավարութեան բողո-
քել՝ մատնանշելով թուրքերուն
ոտնձգութիւնները: Սա-
կայն թուրքերը իրենց
վայրագութենէն չեն հրաժարիր
եւ Րուստիկինի մէջ քառասուն
երեւելի անձեր կը ձեր-
բակալեն ու Կեսարիոյ բանտը
կը նետեն, ուր բոլորն ալ
կը նահատակուին սոսկալի
ծեծի տակ:

1914-ի պատերազմը վրայ
կը հասնի եւ զէնքերը հա-
ւաքելու հրաման կու գայ:
Կրկին հալածանք, ծեծ եւ
բանտարկութիւն:

12 Յուլիս 1915-ին Րուստիկինի
շրջակայ գիւղերէն մեծ
թիւով ոստիկաններ, չէթէներ
եւ աւագակներ գիւղը կը

լեցուին: 18-65 տարեկան հայ այրերը Բուժատիկինի եկեղեցին կը հաւաքեն՝ զինուորագրելու պատրուակով: Սակայն զինուորագրուելու համար գացող այրերը կը ձերբակալուին եւ գիւղէն մէկ ժամ հեռու գտնուող Թորաման կոչուած թրքական գիւղին դիմացի Ֆրըրն Տէրէսի ձորին մէջ բոլորն ալ կը ջարդուին: Այս լուրը յաջորդ օրը կը տարածուի Բուժատիկինի մէջ: Ականատեսներ գիւղ կը հասնին եւ լուրը կը հաստատեն: Ամբողջ գիւղը սուգի կը մատնուի: Նախապէս ուրիշ 15 այրեր, Ներսէս Քահանայ Խորասանճեանին հետ միասին, տարուած էին Պողազլեան, ուր հարցաքննուելէ յետոյ ճաւախ Տէրէ կոչուած գիւղի ձորին մէջ սպաննուած էին: Ոչ ոք կը հաւատար, թէ առանց յանցանքի կարելի է մարդ սպաննել:

Բուժատիկինի այրերը կարաւան առ կարաւան մօտակայ ձորերը կը տարուին ու կը սպաննուին: Կարգը կու գայ կիներուն եւ երեխաներուն: Շրջակայ գիւղերէն հաւաքուած թուրք խուժանը, ոստիկաններուն առաջնորդութեամբ, տունէ տուն մտնելով կը ժողուէ հայերը եւ կ'առեւանգէ գեղեցիկ աղջիկներն ու հարսերը: Մնացեալները, որոնք ընդհանուր թիւին եօթանասուն առ հարիւրը կը կազմեն, կը հաւաքեն Օրոցիկ կոչուած լեռան Օթման ձորին մէջ, ուր զանոնք կողոպտելէ յետոյ կը սպաննեն:

Շաբաթ մը վերջ թուրքերը կը նշմարեն, թէ հոս ու հոն պահուրտած հայեր կան գիւղին մէջ: Զանոնք ալ հաւաքելով, կը տանին եւ կը կոտորեն: Փոքրաթիւ հայոց համար՝ գիւղին մէջ մնալն անկարելի էր այլեւս: Շատ չանցած, գեղեցիկ հարսերը, աղջիկներն ու պատանիները իսլամացնելով կը թրքացնեն:

Այս պատուհասին հեղինակները՝ Պէհաէտտին Շաքիր, Թալաթ եւ Էնվեր, շատ չանցած, հայ վրիժառուներու գնդակներով գետին կը փռուին:

Բ.- Գէորգ Եափուճեան, «Յուշեր» (էջ 157-180)

Բուժատիկին գիւղին մէջ 500 տուն հայ եւ 250-300 տուն թուրք բնակչութիւն կար: Հայերն իրենց արհեստներով, խելացիութեամբ եւ տնտեսական վիճակով, թուրքերէն աւելի բարձր դիրքի վրայ էին:

Զարդերը տակաւին չսկսած, թուրքերը հայոց հանդէպ իրենց վերաբերմունքը փոխած էին: Անոնք յաճախ կռիւներ կը սարքէին: Երբ Ա. Համաշխարհային Պատերազմը կը պայթի, զինահաւաք տեղի կ'ունենայ: Զէնք ունեցողն ալ, չունեցողն ալ պատրաստ էր զէնք մը բերելու եւ յանձնելու կառավարութեան, քանզի թուրք ոստիկանները զէնք չբերողները կ'ենթարկէին ամէնէն դաժան տանջանքներուն՝ շիկացած երկաթով խարանել, ակռաներն ու եղունգները քաշել, անութներուն տակ խաշած հաւկիթ դնել եւայլն:

12 Յուլիս 1915-ին, ոստիկանապետ Պէքիր Չաւուշ մուտք կը գործէ Բուժատիկին: Ուսեալ եւ երեւելի հայեր ժողովի կը հրաւիրուին: Ասոնք Պողազլեան աւանը կը տարուին եւ այլեւս չեն վերադառնար: Եոզկատի շրջանի 48 գիւղերու մտաւորականութիւնն այսպէս կը ջարդուի: Յետագային կը պարզուի, թէ անոնք Պողազլեանէն խումբ-խումբ դէպի արեւմուտք տարուելով Համամլը կոչուած հանքային ջերմուկներու ջրվէժին մօտ, Աբբասի ջաղացքին քովերը սպաննուած էին:

Բուժատիկինէն 320 այրեր կը զինուորագրուին եւ ճամբաներու շինութեան մէջ կ'աշխատին: Մնացեալ հայ տղամարդիկը խումբ-խումբ տանելով կը սպաննեն:

Գէորգ Եափուճեանի մօրաքոյրը՝ Սինէն 1894-ին առեւանգուած եւ թրքացուած էր: 1915 Ապրիլի այդ դժնդակ օրերուն, Սինէն Գէորգենց տունը կու գայ յանկարծ եւ Գէորգի մօր կ'առաջարկէ իրենց տունը ապաստանիլ ըն-

տանեօք: Գէորգը, քոյրը, երեք տարեկան եղբայրը, եօթն ամսական երեխայ մը եւ մայրը Սինէին տունը կ'երթան: Սինէին ամուսինը՝ Ղուրու Ղաֆա Իպրահիմը յայտնի հայատեաց մըն էր: Քանի մը օր ետք, ան Գէորգի մօր կը թելադրէ երթալ եկեղեցի, ուր հաւաքուած հայոց թրքացման արձանագրութիւնները կը կատարուէին: Գէորգի մայրը իր զաւակները առած՝ կ'իջնէ փողոց, ուր թուրք խուժանին կը հանդիպին: Եկեղեցւոյ մէջ արձանագրութիւն չկար, այլ՝ թուրք շէթէները հայոց տուներուն մէջ եւ փողոցները հայ կանայք ու երեխաներ կը ջարդէին: Շատեր եկեղեցին ապաստանած էին: Սակայն թուրքերը հոն մտնելով, կիներն ու փոքրերը կը վերցնէին ու սպաննելու կը տանէին: Թուրքերէն ոմանք կը թելադրեն հայերը գիւղէն դուրս տանիլ եւ սպաննել, որպէսզի նետած դիակներն իրենց վնաս չտան:

Բռնագաղթը կը սկսի եւ կարաւանը յառաջ կը շարժի: Շուրջի գիւղերուն թուրքերը գաղթականներուն վրայ կը յարձակին: Նուհ անունով թուրք մը Գէորգին եօթնամեայ եղբայրը կը գլխատէ եւ քոյրը կ'առեւանգէ: Գաղթականները կը կողոպտուին: Թուրք սայլապանը Գէորգի մօրմէն կը պահանջէ ունեցած դրամները, ըսելով թէ քիչ ետք բոլորն ալ պիտի սպաննուին: Մայրը իր զաւակներուն համար մտահոգութիւն յայտնելով, քսակ մը դրամ կու տայ սայլապանին, որ կ'ուզէ օգնել անոնց: Ոստիկանը կաշառելով, ան Գէորգը գիւղ կը դրկէ՝ իր տան մէջ ծառայելու համար:

Գէորգ Եափուճեան խոտամբարձ սայլով իր տունը կը վերադառնայ: Երեկոյեան, սայլապանը մայրն ու փոքր եղբայրը առած՝ տուն կու գայ: Մայրը իրենց տան մէջ թաղուած ոսկիները սայլապանին կը յանձնէ: Գէորգ իր մօր եւ եղբօր հետ սայլապան Ֆազլի աղային տունը կը

փոխադրուի:

Նոյն երեկոյ Ֆազլի աղան իր որդին՝ 20-22 տարեկան կռուարար Ուզէիրը Գէորգին հետ կը դրկէ՝ վերջինիս տունն ու արտերը քննելու՝ անոնց տիրանալու նպատակով: Ճամբուն վրայ, Գէորգ հայ կիներու մորթուած դիակներ կը տեսնէ: Թուրքերը իրենց «քաջագործութիւն»ները կը պատմեն: Գէորգ Ուզէիրը իրենց այգիներն ու կալուածները կը տանի: Իրենց մէկ այգիին մէջ Գէորգ իր ծեր հօրեղբօր դիակը կը տեսնէ: Հոն գտնուող մարդիկ կը պատմեն, թէ ան շաբաթ մը առաջ քարկոծուած ու սպաննուած էր, ապա տանձենիէ մը կախուած:

Ողջ մնացած հայերը բռնի կերպով կ'իսլամացնեն եւ կը թրքացնեն ու իրենց պապենական սեփական արտերուն մէջ ստրուկի պէս կ'աշխատցնեն՝ կտոր մը հացի փոխարէն: Գէորգ թուրքերու տուներուն եւ արտերուն մէջ կ'աշխատի: Մայրն ու եղբայրը Սէոպեր Չիմէն կոչուած հեռաւոր գիւղը կ'աքսորուին 23 հոգինոց խումբի մը հետ: Այս աքսորը Գէորգի փոքր եղբօր մահուան պատճառ կը դառնայ: Իսկ ինք, Գէորգ, կիսամերկ ու հին կօշիկներով, գարիի չոր հացի կտորի մը համար տաժանակիր աշխատանք կը տանի Բումտիկիինի մէջ: Քանի մը ամիս Գէորգ իր հօրեղբօրորդւոյն՝ այս գիրքի հեղինակ Հայկազուն Եափուճեանի հետ միասին նոյն թուրքին մօտ կը ծառայէ:

Բումտիկիինի մէջ Գէորգ կը հանդիպի շատ թուրքերու, որոնք հայոց դէմ իրենց գործած չարիքները կը պատմէին: Այդպիսիք ընդհանրապէս շատ չեն ապրիր հայու անէծքին պատճառաւ:

1918-ի աշնան, ո'վ հրաշք, բանակէն զօրացրուած հայեր եւ ցկեանս բանտարկութեան դատապարտուածներ կ'երեւան Բումտիկիինի մէջ: Թուրքիոյ ժամանակաւոր կառավարութիւնը, որ զինադադարն ստորագրած էր, հայոց հանդէպ

բարեացակամօրէն կը վարուի. օրինակ՝ հայ մը՝ Լեւոն Այրճեան Եոզկատի մութասարքիֆ կը նշանակուի: Ան շատ հայ աղջիկներ եւ երեխաներ կ'ազատէ թուրքերու տուներէն: Կարճ ժամանակի մէջ, հայերը կրկին կը փայլին:

Գէորգ Եսփոլճեան իր մօր եւ քրոջ հետ միասին կրկին կ'ապրի իր պապենական տան մէջ: Սակայն այս «ազատութիւն»ը երկար չի տեւեր: 1922-ին Գէորգը բանակ կը տանին 18 տարեկան հասակին: Պողոզլեանի զօրանոցէն փախուստ տալով՝ ան կերպով մը Յունաստան կը հասնի: Մայրը կը յամառի մնալ Րումտիկին եւ հոն ալ զոհ կ'երթայ, իսկ քոյրը ստրուկ կը մնայ թուրքերուն մօտ:

Գ.- Մկրտիչ Դանիէլեանի վկայութիւնը. «Կանանց Ջարդի Հետքերով» (էջ 181-184)

Մկրտիչ Դանիէլեանը Րումտիկինի Ջարդէն ձեւով մը ազատած էր եւ թուրք Մուլլային տղուն՝ Լուիֆի էֆենտին քով կը ծառայէր: Ան ականատես կ'ըլլայ կանանց տեղահանութեան եւ Ջարդին: Երբ կարաւանը Աստուծոյ Մարագ կոչուած ձորին վերը կը հասնի, բոլոր ծերերը սայլերէն վար կ'իջեցնեն, ծալապատիկ վիճակի մէջ զանոնք կը կապեն եւ ձորն ի վար կը գլտորեն: Կարաւանը կրկին կը շարժի, եւ կիներն ու երեխաները ամէն տեսակ գործիքներով եւ վայրագութիւններով կը Ջարդեն Օթման ձորին մէջ: Այս կիներէն Պաշարին Կարապետին մայրը կ'ազատի դիակներուն տակ մնալով, թէեւ վիզէն կացինի հարուած մը ստացած էր: Ծեր կիները գիշերը մեծ դժուարութեամբ Րումտիկին վերադարձած եւ իր տունը մտած էր: Քանի մը օր ետք, երբ Մկրտիչ այդ տան առջեւէն կ'անցնի, տնքոց կը լսէ եւ տանիքի լուսամուտէն կը տեսնէ վիրաւոր կիներ: Վստահեցնել յետոյ, թէ ինք հայ մըն է, կիներ դուռը կը բանայ

եւ Մկրտիչը ներս կը մտնէ: Մկրտիչ կնկան վէրքը կը լուայ եւ իր աղան՝ Լուիֆի էֆենտին կը տեղեկացնէ այս կնկան մասին: Վերջինս Պաշարին Կարապետին մօր վէրքը կը բուժէ եւ իր պաշտպանութեան տակ կ'առնէ զայն:

Մկրտիչ Պաշարին Կարապետին մօր հարց կու տայ իր հարազատներուն մասին: Մահէն փրկուած կիներ տեսած էր Մկրտիչի մայրն ու քոյրերը կարաւանին մէջ: Անոնք մորթուած էին, որովհետեւ մերժած էին իսլամանալ եւ թրքանալ:

Դ.- Կարապետ Իսկէնտէրեան-Սարոյլանեան, «Կեսարիոյ Բանտին Մէջ» (էջ 186-197)

Կարապետ Իսկէնտէրեան ծնած է 1896-ին, Էվէրէկ Ֆէնէսէի մէջ (բնագիրին մէջ, էջ 186, այսպէս տպուած է - Յ. Ի.): 1912-ին տեղւոյն Ռուբինեան Վարժարանը աւարտելով, ուսումը կը շարունակէ Ս. Կարապետի վանքին մէջ՝ Վահան Թէքէեանի տնօրէնութեան շրջանին: Ընդհանուր Պատերազմը կը պայթի եւ ուսումը կ'ընդհատուի: Կացութիւնը կը վատթարանայ եւ ինքն ալ ուրիշ հարիւրաւորներու հետ կը ձերբակալուի որպէս կուսակցական ու կը նետուի Կեսարիոյ բանտը, ուր կը մնայ մինչեւ պատերազմին վերջը: Կարապետ 1919-1929-ին Կեսարիոյ մէջ ուսուցչութեամբ կը զբաղի: Քեմալականները զայն բանակ կը տանին դէպի Երզնկա: Փոխանորդագին վճարելով ան կ'ազատի գինուորութենէն: Ան Կեսարիոյ մէջ Րումտիկինցիներու բանտակիցը եղած է: 1929-ին Կիպրոս կը մեկնի եւ հոն կը հաստատուի:

Բանտին մէջ Կարապետ Կեսարիոյ եւ շրջակայքի գիւղացի հայերը աւելի մօտէն կը ճանչնայ: Անոնց մէջ ամէնէն աչքառունները Րումտիկինի հայերն էին: Ան թուրք գիւղացիներու քմահաճ վերաբերմունքներուն հանդէպ շատ

տարօրինակ եւ արտասովոր կը գտնէ բուսականութիւններուն խիզախ կեցուածքը:

Կարապետ բուսականութիւններէն կը յիշէ հըն-
չակեան Յակոբ Էֆենտին՝ ուսուցիչ, ազգային գործիչ եւ
պարտաճանաչ անձնաւորութիւն մը, որ ձերբակալման սեւ
օրերուն, իր մօտ գտնուող կուսակցական անդամացանկերը
եւ զէնքերը փճացնելէ յետոյ, գալիքը դիմակայելու պատ-
րաստուած էր հանգիստ սիրտով: Բանտին մէջ սաստիկ
ծեծի ենթարկուած էր՝ առանց որեւէ գաղտնիք յայտնելու:
Անոր մահապատիժը կախաղանով գործադրուած էր:

Բուսականութիւնցի ուրիշ հերոս մըն էր Սահակ Գայսերեանը
(Պիճիեանց Սահակ): Ան ալ հնչակեան էր: Արիաբար
տոկացեր էր բոլոր տեսակի չարչարանքներուն՝ առանց ու-
րեւէ գաղտնիք դուրս տալու: Գայսերեանն ալ կախաղան
բարձրացուած էր:

Հետաքրքրական է ջաղացքաչէն վարպետ Յովհաննէս-
Վէյսէյլ Գուրտեանի պարագան: Կէօմէճլի Հաճի Մեհմէտ
աղայի բանտարկութիւնը Ղալէի բոլոր բանտարկեալներուն
եւ մանաւանդ Յովհաննէսին համար մեծ շնորհք մը
եղած էր: Կէօմէճլի աղան իր բարձր հեղինակութեամբ
եւ թուրք բարձրաստիճան պաշտօնէութեան հետ սերտ
յարաբերութեան շնորհիւ, բանտերէն դուրս, մնացեալ
չէնքերուն վրայ ձեռք դրած էր ու բուսականութիւնցի վար-
պետներու յանձնած: Անոնց մէջ առանձնաշնորհեալ դիրք
ունէր Յովհաննէսը, որովհետեւ Կէօմէճլի աղային ամէնէն
յարգելի վարպետն էր: Յովհաննէս հաւանաբար իր աղային
աջակցութեամբ եւ գիտութեամբ բուրդ եւ մազ կը մտցնէ
բանտը: Բուսականութիւնցի քանի մը ընկերներով պարան մը կը
չինեն: Պահակներու ժամանակաւոր բացակայութենէն կամ
քունի մէջ մտնելէն օգտուելով, պարանը բանտին դուրսի
պատին հաստատելով, Յովհաննէսն ու ընկերները մէկիկ-

մէկիկ փախուստ կու տան, ու ատեն մը Կէօմէճլի աղային
ազարակը աշխատելէ յետոյ, Ատանա կ'անցնին:

Բանտին մէջ Կարապետ Իսկէնտէրեան կը ծանօթանայ
նաեւ Ղարաճէհէննէմ կոչուող Արդէնպապ Քէշիշեանին, որ
ճարպիկ եւ բաւական յանդուգն բուսականութիւնցի մըն էր:
1921-ին ան կուտած էր Հաճընի մէջ, Հերոսամարտին:

Բուսականութիւնցի ուրիշ բանտարկեալ մըն էր փեհլիվան
Աւետիս Հայրապետեանը, որ հակառակերիտասարդ տարիքին
եւ բնատուր մկանային ոյժին, շատ հանդարտաբարոյ բնա-
ւորութիւն ունէր: Փեհլիվան Համբարձում ալ նոյնպէս
մարմնապէս հզօր բուսականութիւնցի մըն էր:

Ուրիշ բուսականութիւնցի բանտարկեալ մըն էր վայրագ
խառնուածքով եւ անզուսպ բնաւորութեամբ Համբարտի
Գալֆայեանը, որ Սուպաշընց կը կոչուէր: Թուրքերը անոր
հետ չէին կրնար ճակատիլ, ուստի կուտարարութեան կը
դիմէին: Ան նոյնիսկ ոստիկաններուն վրայ կը յարձակէր:
Համբարտի բանտէն ազատած էր բուսականութիւնցիներուն հետ
փախուստ տալով: Անոր սիրած կիներ կը մերժէ ընդունիլ
զայն: Սուպաշըն իր սէրը կը հետապնդէ, սակայն կիներ
որոգայթ մը կը լարէ եւ զայն սպաննել կու տայ:

Բարմագսրզ Մարտիրոս Զուլգատարեանը կենսունակ եւ
պատրաստաբան բուսականութիւնցի մըն էր: Ամերիկայէն նոր
վերադարձած էր եւ ամուսնացած: Թուրքերը անոր գե-
ղանի կիներն առեւանգած էին: Մարտիրոսն ալ բանտէն
փախչողներէն մէկը եղած է:

Կար նաեւ Կիւտիկ Համբար կոչուող Համբար Շամ-
լըեանը, որ առեւտրականի յատկութիւններ ունէր. բան-
տարկեալներուն ուտեստեղէն կը ծախէր, որով յաջողած էր
գումար մը գոյացնել եւ կրպակ մը բանալ:

Տրդատ Հայրապետեան կամ Տրդատ Քեհեայ բուսականութիւնցի
պատկառելի ծերունի մըն էր, առատաձեռն եւ հիւրասէր

մարդ մը: Ան բանտին մէջ մահացած էր, ետին ձգելով իր որդին՝ Միհրանը, որ յետոյ Փարիզ կը հաստատուի:

Ե.- Աբրահամ Ազատեան (Օհանեֆ), «Իմ Յուշերը» (էջ 199-207)

Աբրահամ Ազատեան, որուն ընտանիքը ճանչցուած էր Օհանեֆ անունով, 1914-1918-ին կը ճաշակէ բանտարկութիւն, փախուստ, թշուառ եւ տառապալի կեանք, կրկին բանտ եւ, վերջ ի վերջոյ, ազատութիւն:

Բուժմտիկինի մէջ երբ Աբրահամ Ազատեան 23 հոգինոց հայ երիտասարդներու խումբով կերուխումի մէջ էր, տեղացի թուրք լրտեսներ ոստիկանութեան հետ գործակցելով, զրպարտութիւններով լեցուն լուրեր կը փոխանցեն կառավարութեան՝ հայ երիտասարդներու պարզ խընճոյքին յեղափոխական ժողովի պիտակ տալով: Առանց հարցուփորձի, իշխանութիւնները զանոնք կը ձերբակալեն: Այս դէպքէն առաջ ուրիշ հայեր ալ ձերբակալուած էին եւ ոստիկանատան մէջ բանտարկուած:

Թուրք ոստիկաններ կ'իմանան, որ գիւղին մէջ թէ շրջակայ այգիները կը շրջին տակաւին չձերբակալուած եւ փախստական հայեր: Աբրահամ Ազատեանի մեծ հայրն ու հայրը կը ձերբակալուին ուրիշներու հետ միասին: Փախստական մնացած Արդէն Փաշա անունով բուժմտիկինցի հայ երիտասարդ մը, իրեն մօտեցող Ահմէտ Օնպաշը կոչուող ոստիկանապետին վրայ կը յարձակի իր որսորդական գէնքով եւ անոր գլուխը կը ջախջախէ: Ընկերակցող ոստիկանները փախուստ կու տան: Արդէն Փաշա փախստական կը մնայ կարճ ատեն մը, մինչեւ որ Բուժմտիկինի մօտակայ քաղաքներէն օգնութեան հասնող թուրք ոստիկաններ, զայն անտառին մէջ քնացած գտնելով՝ կը սպաննեն:

Թուրքերը Աբրահամ Ազատեանը եւ ուրիշները նախ Պողազլեանի բանտը, ապա Եոզկատի բանտը եւ ի վերջոյ Կեսարիոյ բանտը կը դրկեն: Դաշնակցականներ Սահակ էֆենտի, Սահակ Գայսերեան (Պիճիեանց Սահակը) եւ Յակոբ Պէրպէրեան մահուան կը դատապարտուին: Սխալ տեղեկութիւն մը ստուգուելուն շնորհիւ Սահակ էֆենտի մահէն կ'ազատի, մինչ միւս երկուքը կախաղան կը բարձրացուին:

Աբրահամ Ազատեանի տասնչորս տարեկան եղբոր՝ Գրիգոր Ազատեանի օգնութեամբ քառասուն արգելափակեալներ փախուստ կու տան բանտէն: Արդարեւ, Գրիգոր կը յաջողի բանտի պատին դուրսի կողմէն ծակ մը բանալ եւ քառասուն հոգի, որոնցմէ միայն երեքը հայ, բանտի դժոխքէն կը փրկուին: Աբրահամն այս խումբին մէջն էր: Սակայն ան մէկ դժոխքէն միւսը կ'իյնայ: Թուրք հովիւներ անոր վրայ կը յարձակին, կը խոշտանգեն ու կը կողոպտեն զայն: Հազիւ ողջ մնալով՝ ան լեռներն ու ձորերը կ'իյնայ: Երկար եւ տառապալի թափառումներէ ետք ան կը վերադառնայ Կեսարիա, ուր կրկին կը ձերբակալուի ու չորս ամիս բանտը կը մնայ, որմէ ետք բոլոր բանտարկեալներուն ներում կը շնորհուի: Աբրահամ Ազատեան 1922-ին Յունաստան կ'ապաստանի: 1947-ին կը ներգաղթէ Հայաստան ու Երեւան կը հաստատուի:

Զ.- Յովհաննէս Պիլալեան, «Յուշեր Եւ Նօթեր» (էջ 208-213)

Յովհաննէս Պիլալեան կը պատմէ Արդէն Փաշայի (Կճողին Տղան) դրուագը, զոր նախորդ նկարագրութեան մէկ ուրիշ տարբերակն է:

Երբ թուրք ոստիկանները Ահմէտ Օնպաշըին գլխաւոր-

րութեամբ կը շրջէին, այգիներուն մէջ կը հանդիպին Արդէն Փաշայի, որ ձեռքին որսի գէնք մը ունէր: Ոստիկանապետն անոր կը հրամայէ անձնատուր ըլլալ: Արդէն Փաշա յանձնուելի ձեւացնելով, կը մօտենայ եւ բռունցքի հարուածով մը ոստիկանապետը գետին կը փռէ: Ան այնքան արագ կը շարժի, որ միւս ոստիկանները կը շժմին եւ զայն հետապնդելու անկարող կ'ըլլան: Անոնք իրենց վիրաւոր մեծաւորն առնելով կը հեռանան, մինչ Արդէն Փաշա փախուստ կու տայ ու անտառներուն եւ ձորերուն մէջ անօթի-ծարաւ շրջելէ յետոյ «Եօլվէրմէզ» կոչուող ձորը կ'ապաստանի:

Արդէն Փաշայի հետքերուն փնտռտուքը կը շարունակուի: Ան յիշեալ ձորին մէջ յարմար տեղ մը ընտրելով խոր քուն կը մտնէ: Թուրք հետապնդողներն իրենց հետ ղուժարկիներ հայերէն քանի մը հոգի առած էին: Վերջիններս կը գտնեն Արդէն Փաշան խոր քունի մէջ եւ կը շուարին, որովհետեւ չեն ուզեր անոր ձերբակալութեան պատճառ դառնալ: Թուրքերը եղելութեան հասու կ'ըլլան: Անոնք անմիջապէս շրջապատը քննելով կը գտնեն Արդէն Փաշան, որ կը սկսի կրակել՝ ինքնապաշտպանուելով: Թուրքերը կը փոխադարձեն եւ Արդէն Փաշան կը սպաննուի: Ափսո՛ս Արդէն Փաշային եւ անոր նման հերոսներուն, որոնք մեր այդ դժբախտ օրերուն եթէ կազմակերպուած ձեւով կռուէին, կրնային հրաշքներ գործել:

1914-ի Օգոստոսին մեծ թիւով հայեր զինուորութեան կը տարուին եւ ճամբաներու շինութեան աշխատանքի կը լծուին իբր աշխատանքի բանակին (ամելէ թապուրու) մէկ մասը: Շատ չանցած, ղուժարկիներ մէջ կը սկսին զինահաւաքն ու ձերբակալութիւնները: Մտաւորականներ, կուսակցականներ եւ երեւելի անձեր վար կը դրուին: Անոնցմէ էր Յակոբ Պէրպէրեան կուսակցական յայտնի

ղեկավարը, որուն տան մէջէն կարգ մը փաստաթուղթեր ու գիրքեր գտնուած էին: Մեծն ու չարչարանքը կը խստանան:

Տաշտէմիր կեղծանունով Ռուբէն Եափուճեանը փախստական կը դառնայ՝ չձերբակալուելու համար: Անոր օրինակին կը հետեւի այս յուշերուն հեղինակը՝ Յովհաննէս Պիլալեանը: Ասկէ երկու շաբաթ ետք, ղուժարկիներ առաջին կարաւանը ճամբայ կը հանեն եւ Չաղլըզի ըսուած տեղը բոլորը կը ջարդեն:

ղուժարկիներ կարաւանները բնակավայրէն դուրս կը տանին հերթով ու կը ջարդեն: Երրորդ կարաւանին մեկնումի օրը Յովհաննէս Պիլալեանը կ'աշխատէր իրենց արտին մէջ, ուր կու գան թուրքերը՝ զանոնք ալ տանելու: Մեծ հայրը՝ Մանուկ, Յովհաննէսը ցորենի դէզին տակ կը պահէ: Մնացեալները, ներառեալ մեծ հայրը, կ'առնեն ու կը տանին: Յովհաննէս երեկոյեան դուրս կու գայ եւ դէպի ղուժարկին կ'ուղղուի: Ճամբան ծանօթ թուրք կին մը իրեն կը յանձնարարէ գիւղ չմտնել, այլ՝ իրեն հետ երթալ: Ան Յովհաննէսը կը տանի իր տունը՝ ամուսնոյն քով: Ամբողջ գիշերը գիւղին մէջէն ողբի ու կոծի աղաղակներ կը լսուին: Առտուն, Յովհաննէսը գետեզերք կ'երթայ: Թուրք խուժանը կը ձերբակալէ զայն: Յովհաննէս երեք անգամ փախուստ կու տայ: Վերջին անգամին կը բռնուի, սակայն Յովհաննէսենց տան բարիքներէն օգտուած թուրք կին մը զայն կ'ազատէ: Շատ չանցած, Յովհաննէսի մեծ հայրը բանտէն ազատ արձակուելով՝ անոր քով կու գայ եւ միասին տուն կ'երթան: Յաջորդ օրը թուրքերը հայեր կը հաւաքեն ու «Կէտուկ»ի ձորին մէջ կը սպաննեն: Նոյն գիշեր, մեծ հայրը՝ Մանուկ Պիլալեանը 8 հոգիոց խումբով կը ձերբակալուի եւ սպանդանոց կը տարուի: Սակայն Մալահաճը ըսուած գիւղէն թուրք բարեկամներ կ'ազատեն Մանուկը, որ իր տունը կը վերադառնայ:

Պիլալեանենց տան մէջ Մանուկն իր շուրջիններուն կ'ըսէ. «Տակաւին շատ տանջանք ու չարչարանք պիտի տեսնենք: Մեր հաւատքին վրայ ամուր կենանք, կարելի չէ որ հայր բնաջնջուի»: Տան մէջ ապաստան գտած իրենց մէկ ազգականը՝ Աբրահամ Պիլալեանը ուրիշներու հետ կը տանին եւ կը սպաննեն: Աբրահամ երեք տարի բանակին մէջ ծառայած ըլլալով մարմնապէս աննկուն էր: Ան գինք կապողներուն վրայ կը յարձակի, սակայն կռնակէն կացինի հարուած մը ստանալով կը սպաննուի:

Յովհաննէս Պիլալեան այս դժոխքէն կ'ազատի փոքր տարիք ունենալուն շնորհիւ: Հազար չարչարանքներով, գիւղէ գիւղ թափառելէ յետոյ Ղուրուհիւկ գիւղին մէջ կը գտնէ իր փոքր եղբայրը՝ Գրիգորը եւ միասին կեսարիա կ'անցնին:

Է.- Գրիգոր Միւճէրէտեան, «Մօր Մը Զոհողութիւնը» (էջ 214-224)

Րուժտիկինի հայերը եկեղեցին կը հաւաքեն՝ բռնագողթեցնելու նպատակով: Թուրքեր եկեղեցի կու գան՝ իրենց աչքին հաճելի երեւցող կիներն ու աղջիկները տանելու: Երեխայ Գրիգոր Միւճէրէտեան իր մօր հետ եկեղեցոյ մէջ սարսափի մատնուած՝ կը սպասէ գալիքը: Թուրք մը կը մօտենայ Գրիգորի մօր եւ կ'առաջարկէ ամուսնանալ անոր հետ: Մայրը կը մերժէ՝ ըսելով, թէ կը նախընտրէ մեռնիլ, քան հաւատափոխ ըլլալ: Ուրիշ թուրք մը կ'առաջարկէ Գրիգորը իր մօտ ծառայութեան առնել: Գրիգոր կ'ընկերանայ ասոր, սակայն ճամբան փախուստ կու տայ եւ իր տունը կը մեկնի: Թոփալ Մուրատ անունով թուրք մը Գրիգորն ու Երուանդ Դանիէլեան անունով ուրիշ հայ տղայ մը իր կալերուն մէջ կ'աշխատցնէ: Թոփալ

Մուրատ Երուանդը ոչխարի պէս դաշոյնով կը մորթէ՝ Գրիգորի վրայ սարսափ ազդելով: Ժամանակ մը ետք Գրիգոր տուն կը վերադառնայ եւ մայրը հոն կը գտնէ: Մայր ու որդի ուրիշ չարիքի մը կը հանդիպին. Ղօճա Նէճիպ կոչուող թուրք հրէշ մը կ'ուզէ Գրիգորի մօր հետ ամուսնանալ: Երբ մայրը կը մերժէ թրքանալ, թուրքը կը սպառնայ մայրն ու Գրիգորը սպաննել: Մայրը կը յաջողի Գրիգորը դրկել կեսարիա՝ հօրեղբորորդուոյն քով: Ղօճա Նէճիպ Գրիգորի մայրը կը սպաննէ:

Գրիգոր կեսարիոյ մէջ կարճ ատեն մը կ'ապրի հօրեղբորորդուոյն հետ, ապա կը մեկնի կեսարիոյ գիւղերէն Մունճուսուն՝ թուրքի մը մօտ ծառայելու: Կառավարութեան հրամանով երբ Գրիգոր տասնեակ մը թուրք գործաւորներու հետ ալիւր կը փոխադրէր, հայ մարտիկներու խումբ մը զանոնք կը կեցնէ եւ պարէնը անոնց ձեռքէն կը խլէ: Այդ տղոց մէջ էր Րուժտիկինցի Համբար Հայրապետեանը, որուն Գրիգոր տարիներ ետք կը հանդիպի Պէյրուսի մէջ:

Մունճուսունի մէջ Գրիգոր տառապանքով լի կեանք մը կ'անցընէ իր հայ ընկերոջ հետ, որուն անունը չի յիշեր: Օր մըն ալ, կեսարիայէն երկու ոստիկաններ կու գան եւ Գրիգորն ու ընկերը կեսարիոյ քաղաքապետին քով կը տանին: Ճամբան ոստիկանները զանոնք սաստիկ չարչարանքի կ'ենթարկեն՝ ձիերուն ետեւէն վազցնելով: Երբ կեսարիոյ քաղաքապետը եղելութիւնը կ'իմանայ, երկու ոստիկանները կը պատժէ: Հեղինակը չի յիշեր այս պատահարին թուականը, բայց պէտք է 1918-ի աշնան զինադադարէն անմիջապէս ետքն եղած ըլլար, որովհետեւ քաղաքապետը կ'ըսէ, թէ հայ ազգը գիրենք կը պահանջէ: Գրիգոր որբանոց կը մտնէ: Կարճ ատեն ետք ան կը գտնէ իր հայրը: Բախտը զանոնք կը նետէ Տրանսա, ուր ալ կը հաստատուին:

Ը.- Մեսրոպ Շխրրտմեան, «Արդէնպապ Քէշիշեան (Ղարաճէհէննէմ)» (էջ 226-232)

1919-ի ամրան հայ կամաւորները հաճընցիներուն հետ միասին Հաճըն կու գան: Քեմալական արշաւանքներուն դէմ ապահովութեան միջոցներ ձեռք առնելու նպատակով երկու հարիւր հոգիի մասնակցութեամբ ժողով մը կը գումարուի Հաճնոյ մէջ: Մեսրոպ Շխրրտմեանի կողքին, այս ժողովին ներկայ է ըրումտիկինցի Արդէնպապ Քէշիշեանը, որ ճանչցուած էր Ղարաճէհէննէմ անունով: Վերջինս խօսք կ'առնէ՝ յայտարարելով, թէ ոչ-հաճընցի երիտասարդները պատրաստ են ապրելու եւ մեռնելու իրենց հաճընցի ազգակիցներուն կողքին:

Ղարաճէհէննէմ հրամանատար Ճեպեճիին հետ լեռնային դիրքերը կը շրջէր անդադար: Անոր փոխ-վաշտապետի պաշտօն կը տրուի: Ան իրեն օգնական եւ թիկնապահ ունէր տասնութամեայ Հեթում անունով քաջ երիտասարդ մը: Հաճնոյ ինքնապաշտպանութեան կռիւներուն՝ Ղարաճէհէննէմ շատ քաջագործութեանց հեղինակ կը դառնայ ու կը նահատակուի թուրք արձակազէնի մը գնդակէն:

Թ.- Խաչեր Պէրպէրեան, «Յակոբ Պէրպէրեան Քահանայ» (էջ 233-236)

Բումտիկինցի բարեկեցիկ ընտանիքի մը գաւակն էր ուսուցիչ եւ երաժիշտ Յակոբ Պէրպէրեանը: Ան յեղափոխական կուսակցական մըն էր: Զինահաւաքի օրը, Բումտիկինի իրենց տան մէջ կը յայտնաբերուին ծերունի հօր թաղած թուղթերն ու գիրքերը: Յակոբ կը հանուի Կեսարիոյ Զինուորական Ատեանին առջեւ եւ բանտարկութեան կը

դատապարտուի իբր կուսակցական վտանգաւոր ղեկավար, իսկ 15 Նոյեմբեր 1916-ին կախաղանի վրայ կը նահատակուի, հազիւ քառասուն տարեկան հասակին՝ իրեն գործակից Սահակ Գայսերեանի հետ:

Ժ.- «Դպա՛ւ, Դպա՛ւ», պատմեց՝ Գրիգոր Դանիէլեան, գրի առաւ՝ Հ. Հայրապետեան (էջ 237-238)

Թրքական բարբարոսութիւններուն զոհ գացած եօթը տարեկան հայ մանուկի մը նահատակութեան դրուագն է այս գրութիւնը:

Երբ 1915-ի Յուլիսին Բումտիկինի հայ բնակչութիւնը ջարդուած եւ բռնազաղթեցուած կամ շրջակայ գիւղերը ցրուած էր արդէն, տասնըչորս տարեկան պատանի Գրիգոր Դանիէլեանը թուրք հարկահաւաքի մը քով կը ծառայէր: Ան Եափու կոչուած բերդին մօտ կը տեսնէ թուրք խուժանը, որ մօտակայ հայաբնակ գիւղերէն շուրջ քսանհինգ հոգի հաւաքած, արիւնարբու Հասան աղայի հրամանին կը սպասէր: Հայերը զոյգ-զոյգ կապուած էին, իսկ թուրքերը՝ կացիներով ու սուրերով զինուած: Հասան աղայի հրամանին վրայ՝ թուրքերը հայոց վրայ կը յարձակին եւ կը սկսին անխնայօրէն կոտորել:

Թուրք ոստիկան մը հազիւ 6-7 տարեկան հայ տղեկ մը կը քարկոծէ եւ տասնապետ Ահմէտ Չաւուշին առջեւ կը նետէ: Մէկ ուրիշ թուրք ոստիկան մը հայ տղեկը խոշոր քարի մը վրայ կանգնեցնելով՝ կ'ըսէ. «Հիմա քեզի նշան պիտի առնեմ եւ գնդակս արձակեմ. երբ դպնայ՝ «դպա՛ւ» պոռա՛»:

ԺԱ.- «Մօրս Մահը», պատմեց՝ Նշան Հայրապետեան, գրի առաւ՝ Հ. Հայրապետեան (239-241)

Հագիւ 14 տարեկան պատանի Նշան Հայրապետեանը 1915-ի Յուլիսին բազմաթիւ տխուր դէպքերու ականատես եղած է: Բուժմտիկինի այրերը տարած եւ ջարդած էին, իսկ անտէր կիներն ու երեխաները՝ եկեղեցին լեցուցած: Շատերը իրենց փոքր զաւակը թուրքի մը կը յանձնէին՝ իրենց սրտահատորներուն կեանքը փրկելու համար: Նշանին մայրը զայն կը յանձնէ թորամանցի Չէրքէզ աղային, զոր թորաման Տէլի Չէրքէզ կը կոչէին: Նշանի կեանքն անտանելի կը դառնայ օտար տիրոջ մօտ: Ան մօր կարօտին չի դիմանար, ու երեք շաբաթ ետք փախուստ տալով՝ կ'երթայ Բուժմտիկին՝ քրոջ քով, ուր կը գտնէ իր մայրը: Նշանի՝ ամելիէ թապուրին մէջ ծառայող եղբայրը՝ Համբարը կը փախչի եւ իրենց մօտ կու գայ: Յաջորդ օրը, մայրը իր փոքր դուստրն առնելով կ'երթայ Բուժմտիկին՝ տան գոյքերը վաճառելու, սակայն այլեւս չի վերադառնար:

Նշան մայրը ուրիշ գիւղերու մէջ ալ կը փնտռէ: Ի վերջոյ, կը պարզուի, թէ թուրքերը մայրն ու քոյրը Տարլու գիւղին մօտակայ ձորին մէջ սպաննած են: Նշան կ'երթայ եւ անձամբ կը տեսնէ մօր եւ քրոջ կտոր-կտոր եղած մարմինները: Աւելի ուշ կը յայտնուի, թէ ղուրուհիւկցի Քէլ Ատէլն է Նշանի մայրն ու քոյրն սպաննողը: Ոճիրը կատարուած էր Նշանենց «բարեկամ» Իպիչին թելադրանքով, որպէսզի վերջինս իրենց գոյքերուն տիրանայ վերջնականապէս:

ԺԲ.- «Ըկըրենց Առաքելը», պատմեց՝ Աւետիս Գոճաքեհեան (էջ 242-244)

Աւետիս Գոճաքեհեան կը նկարագրէ իր հօր՝ Ըկըրենց Առաքելին՝ ամելիէ թապուրիէն երկու անգամ Բուժմտիկին ուղեւորութիւնը: Օսմանեան բանակին մէջ ծառայող Առաքելի հայրենակիցները մտահոգ էին իրենց ընտանիքներով: Ըկըրենց Առաքելը երկու անգամ Բուժմտիկին կը ճամբորդէ հազար դժուարութեամբ եւ իր ընտանիքը կը տեսնէ: Ան միւս հայ զինուորներէն նամակներ կը բերէ անոնց հարազատներուն եւ պատասխաններն ալ կը տանի:

Բուժմտիկինի վտանգուած կացութիւնը կը ստիպէ Աւետիսը, որ Կեսարիա մեկնի: Ըկըրենց Առաքելը բանակէն փախուստ կու տայ եւ Կեսարիոյ մէջ կը միանայ իր որդւոյն: Այսպէս կ'անցնին տարիները: Աւելի ուշ, զինադադարէն ետք, ընտանիքը Սուրիա կը հաստատուի:

ԺԳ.- Ովսաննա Շողոտեան, «Մայրը՝ Իր Զաւակին Գերեզմանափոր» (էջ 245-247)

Ովսաննա Շողոտեան իր ծծկեր երեխան կուրծքին՝ կը քալէ կարաւանին հետ: Ճամբան թուրք մը Ովսաննան եւ փոքրիկը իրեն հետ կը տանի: Այս գազանը կը մերժէ երեխային գոյութիւնը իրենց հետ ու զայն Ալիս գետը կը նետէ: Ովսաննա գետը կը նետուի՝ դատրիկն ազատելու համար: Թուրքը Ովսաննային մագերէն քաշելով՝ զայն գետէն դուրս կը բերէ ու բռնի կերպով իր տունը կը տանի: Ովսաննա բացարձակապէս կը մերժէ անոր կիներ դառնալ: Գիւղապետը Ովսաննան իր տունը կը պահէ:

Երեք օր ետք Ովսաննա գետեզերք կ'երթայ եւ իր

փոքրիկին մարմինը կը փնտռէ: Շատ փնտուտուքներէ ետք, ան վերջապէս կը գտնէ իր հոգեհատորին անշնչացած մարմինը: Ովսաննա փոքրիկը կը սեղմէ իր մայրական կուրծքին եւ կը սկսի ձեռքերովը հողը փորել՝ զայն թաղելու համար: Գիւղապետն ու գիւղացիները կու գան եւ կը մասնակցին թաղման արարողութեան:

Գիւղապետը Ովսաննան կ'ամուսնացնէ իր թուրք մէկ ազգականին հետ, որմէ ան կը ծննդաբերէ մանչ մը, որ զրկուած էր հօր ժառանգութեան իր բաժինէն՝ հայ մօրմէ ծնած ըլլալուն համար: Ովսաննա բնաւ չի հաշտուիր իր այս կեանքին հետ եւ կտակ կը ձգէ իր հայացած որդւոյն՝ գտնել իր հայ քրոջ հետքերը: Արդարեւ, երբ Ովսաննա կարաւանին հետ կը քայլէր, երկրորդ դուստրը իրմէ խլեր էին:

Ովսաննայի հայացած թուրք որդին իր հայ քոյրը կը գտնէ Տամասկոսի մէջ: Ան վարդավառ Գույումճեանի տիկինը՝ Շուշիկ Շողոտեանն էր:

Ջանազան հեղինակներ, «Հերոսապատում Մեծ Եղեռնի», «Ազդակ» օրաթերթի հրատարակութիւն, Պէյրութ, 1978, միջակ չափի 416 էջ

«Հայ ժողովուրդի պահանջատիրական բաբախումներուն հետ քայլ պահելու հրամայականին ծնունդն է այս գիրքը, որ աշխարհասփիւռ հայ երիտասարդութեան առջեւ կը բանայ 1915-ի Մեծ Եղեռնին միւս էջը, ո՛չ Սեւը: Հերոսապատումի էջն է ատիկա եւ կը վկայէ թուրքին ծրագրած պետական ոճիրին դէմ ծառանալու եւ չըխոնարհող եղէգ մը դառնալու հայկական դիւցազնութեան մասին»:



Այս գործին համար օգտագործուած աղբիւրներուն հեղինակները Մեծ Եղեռնէն վերապրող ակնատեսներ են:

Օգտագործուած աղբիւրներ՝

1. Օ[ննիկ] Մխիթարեան, «Վանի ինքնապաշտպանութիւնը», «Հայրենիք» ամսագիր, Պոսթոն, 1924
2. «Վասպուրական» Ապրիլեան Հերոսամարտի 15-ամեակին առիթով
3. Ա[րամ] Հայկազ, «Շապին Գարահիսարի ինքնապաշտպանութիւնը»
4. Կ[արօ] Սասունի [Ղազարեան], «Պատմութիւն Տարօնի Աշխարհի»
5. Ռուբէն [Տէր Մինասեան], «Հայ Յեղափոխականի Մը

Յիշատակները» (Է. Հատոր)

6. Կոմս [Վահան Փափազեան], «Համաշխարհային Պատերազմը Եւ Տարօնի Աշխարհը», «Վէմ» հանդէս, Փարիզ, 1935
7. Վեր. Տ[իգրան] Անդրէասեան, «Զէյթունի Տարագրութիւնը Եւ Սուէտիոյ Ապստամբութիւնը»
8. Յ. Գ. Գրիգոր Պուրսալեան, «Մուսա Լերան Հերոսամարտը»

Ուսումնասիրական եւ համադրական այս յօդուածներուն աշխատանքին իրենց մասնակցութիւնը բերած են «Ազդակ»ի խմբագրական կազմէն Նազարէթ Պէրպէրեան («Փշոտ Դափնեպսակը» եւ «Տարօնի Աշխարհը. Հայկական Յեղափոխութեան Միջնաբերդին Վերջին Ծառացումը»), Սարգիս Մահսէրէճեան («Վանի Ապրիլեան Ինքնապաշտպանութիւնը Կամ Ազատ Հայաստանի Նախաքայլը»), Շահանդուխտ («Մխացող Լեռը՝ Շապին Գարահիսարի Ինքնապաշտպանութիւնը (2-28 Յունիս 1915)»), Նուպար Զարխուտեան («Մուսա Լեռ՝ Միջնաբերդ Եւ Փրկութեան Տապան») եւ Էվա Տէրվիշեան («Ուրֆայի Ինքնապաշտպանութիւնը Կամ Դիւցազնաշունչ Հայութեան Վկան»):

1- Վանի Ինքնապաշտպանութիւնը Կամ Ազատ Հայաստանի Նախաքայլը

Հայկական զարթօնքի առաջին օրրաններէն մէկն եղած է Վանը: Անոր մեծ ռահվիրան բնիկ վանեցի Խրիմեան Հայրիկն է, որ յեղափոխութեան գաղափարներու սերմնացանն է: Խրիմեան Հայրիկ Պերլինի ժողովէն ետք նոր աւետարանի մը՝ «Երկաթէ Շերեփ»ի քարոզչութեան կը սկսի: Անոր

պատրաստած առաջին սերունդին առաքելութիւնը յեղափոխութեան ենթահողին պատրաստութիւնը կ'ըլլայ:

1880-ական թուականներուն սկսող հանգրուանին մէջ կարեւոր դեր կը կատարէ Մկրտիչ Փորթուզալեանը: Անոր գործունէութեան շնորհիւ, Վանի մէջ կը հիմնուի Արմենական կուսակցութիւնը, որուն կը յաջորդեն Հնչակեան եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութիւնները: Վերջիններս կը կազմակերպեն օսմանեան բռնատիրութեան դէմ հայոց յեղափոխութիւնն ու գինեալ պայքարը՝ ներծծելով հոս ու հոն սաղմնաւորուած ֆետայական շարժումները: Վանը այդ աշխատանքներու կարեւոր կեդրոններէն մէկը կը դառնայ: Հ. Յ. Դ-ի վասպուրականի շրջանի կեդրոնական կոմիտէին կեդրոնը Վանի մէջ կը հաստատուի: Շնորհիւ իր աշխարհագրական դիրքին եւ հայահոծ բնակչութեան, Վանը Պարսկաստանէն փոխադրուող գէնքի ու գինամթերքի փոխադրութեան կայան եւ պահեստանոց կ'ըլլայ:

1895-1896 տարիներու ապտիւհամիտեան ջարդերուն ընթացքին, Վանի հայութիւնը ցոյց կու տայ իր առաջին դիմադրութիւնը եւ ետ կը մղէ յարձակող թուրքերն ու քիւրտերը:

1908-ի Յուլիսին տեղի կ'ունենայ օսմանեան յեղաշրջումը Ապտիւլ Համիտի բռնակալութեան դէմ եւ Սահմանադրութիւնը կը վերահաստատուի: Հայկական յեղափոխական գաղտնի աշխատանքը վերջ կը գտնէ: Սահմանադրական վարչաձեւը քաղաքական ասպարէզ կը բանայ նաեւ հայութեան առջեւ: Ֆետային լեռներէն վար կ'իջնէ: Հազար ու մէկ բարիքներու հեռանկարներ կ'ուրուագծուին հորիզոնին վրայ: Սակայն ցնծութեան ալիքին թափը կը կտրուի 1909-ի Ապրիլին՝ Կիլիկիոյ հայութեան աղէտով:

1912-ին բռնկած Պալքանեան Առաջին Պատերազմը

աղիտալի կ'ըլլայ Օսմանեան Կայսրութեան համար: 1914-ի Փետրուարին թուրքերը կ'ընդունին արեւելեան հայկական նահանգները վերածել երկու շրջաններու, որոնց վարչութիւնները պիտի ղեկավարէին եւրոպացի կառավարիչներ: Սակայն կէս տարի չանցած, կը պայթի Առաջին Համաշխարհային Պատերազմը, թուրքերուն ընծայելով յարմարագոյն առիթը՝ «դասաւորելու» Օսմանեան Կայսրութեան ներքին խնդիրները:

Օսմանեան կառավարութիւնը մինչեւ 45 տարեկան տղամարդիկը զօրակոչի կ'ենթարկէ: Հ. Յ. Դ. ն 1914-ի Յուլիս-Օգոստոսին Կարնոյ մէջ գումարուած իր 8-րդ Ընդհանուր Ժողովին որոշած էր չէզոք դիրք բռնել ռուս-թրքական ճակատի բռնկման պարագային: Թրքական կառավարութիւնը միշտ մտավախութիւն ունեցած էր, թէ հայերը ռուսերուն կողմը պիտի անցնին:

Վանի մէջ Արամ Մանուկեան [բուն անունով՝ Սարգիս Յովհաննիսեան - խմբ.] - Արշակ Վռամեան [բուն անունով՝ Օննիկ Դերձակեան - խմբ.] - Իշխան [բուն անունով՝ Նիկողայոս Պօղոսեան (Միքայէլեան) - խմբ.] եռեակը իբր վասպուրականի շրջանին մէջ Հ. Յ. Դ. ի պատասխանատուներ, Վանի հայութեան դիրքորոշումը կը ճշդէ չէզոք մնալու սկզբունքին վրայ: Երեք ղեկավարները Վանի նահանգապետին ու շրջանային այլ պատասխանատուներու հետ կապի մէջ կը մնան:

Պատերազմի առաջին ամիսը համեմատաբար խաղաղ կ'անցնի Վանի մէջ: Սակայն թուրքերը հետզհետէ կը նեղեն հայ քաղաքացին եւ գիւղացին, որու պատճառով ընդվզումի ալիք կը բարձրանայ: Վռամեանը թուրք պատասխանատուներուն բողոք կը ներկայացնէ ահուելի քանակով բռնազրաւումներուն դէմ, զորս թրքական կառավարութիւնը հայոցմէ կը վերցնէ պատերազմին իբր

«օգնութիւն»:

1915-ի սկիզբը ռուսական բանակը կը նահանջէ: Վանի կառավարիչ Թահսին պէյը պաշտօնի բարձրացում ստանալով Կարին կը փոխադրուի: Նոր կառավարիչ կը նշանակուի Վանի նախկին կառավարիչի մը՝ Թահիր պէյի որդին՝ Ճեւտէթը: Վերջինս կ'ուզէ փրկագին (պէտել) վճարած հայերը բանակ տանիլ եւ հայերէն կը պահանջէ յանձնել զէնքերն ու զինամթերքը:

Թուրքերն իրենց պահանջներուն մէջ շատ յառաջ կ'երթան: Անոնք օսմանեան բանակի հայ դասալիքները կը պահանջեն: Ճեւտէթի կողմէն չընդառաջել պիտի նշանակէր ապստամբութեան դրօշ պարզել, ինչը կը հակասէր Հ. Յ. Դ. ի Ընդհանուր Ժողովի որոշումին: Այս ստիպողական պայմաններուն տակ, պահանջուած 4000 հայերէն միայն 500 հոգին կը յանձնուի կառավարութեան: Կացութիւնը ծանրակշիռ էր եւ պէտք էր որեւէ բախումէ խուսափիլ (տես էջ 52-53):

Վանի հարաւ-արեւմուտքը գտնուող Շատախի գաւառի Թաղ գիւղին մէջ բախումներ տեղի կ'ունենան հայերու եւ քիւրտերու միջեւ: Լուրը 1 Ապրիլ 1915-ին յաջորդող օրերուն Վան կը հասնի: Արամը, Վռամեանն ու Իշխանը խորհրդակցութիւններ կ'ունենան Ճեւտէթի հետ: Կ'առաջարկուի Իշխանը Շատախ դրկել: Դէպի Շատախ ճամբուն վրայ Իշխանն իր թիկնապահներով կը սպաննուի Հայոց Ձորի Հիրճ գիւղին մէջ՝ թուրք եւ քիւրտ դաւադիրներու կողմէ: Վանի մէջ Ճեւտէթը Վռամեանն ու Արամը կառավարչատուն կը հրաւիրէ իբր թէ խորհրդակցելու համար: Միայն Վռամեանը կ'երթայ Ճեւտէթի մօտ ու «վար կը դրուի»: Արամ Վռամեանի ձերբակալութիւնն ու Իշխանի սպանութիւնը հայ կառապանի մը բերնէն լսելով կը զգուշանայ եւ նահանգապետարան չ'երթար:

Ան Վանի մէջ Իտալիոյ հիւպատոս Սփորտոնիին միջոցով բանակցութիւններ կը վարէ նահանգապետ Ճեւտէթի հետ, սակայն, ապարդիւն:

Արամ լաւապէս կ'ըմբռնէ կացութեան վտանգաւորութիւնը: Մէկ բան կը մնայ ընել՝ կազմակերպել Վանի հայոց ինքնապաշտպանութիւնը:

Արամ Մանուկեան հայկական երեք կուսակցութեանց պատասխանատուները 5 Ապրիլ 1915-ին ժողովի կը հրաւիրէ Այգեստանի մէջ ու ինքնապաշտպանութեան գործնական աշխատանքներուն կը ձեռնարկէ: Կը կազմուի Զինուորական Մարմինը, որու մաս կը կազմեն Փետայական կռիւներու մէջ փորձառութիւն ձեռք բերած հայդուկներ՝ դաշնակցականներ կայծակ Առաքելն [բուն անունով՝ Տիգրան Ապաճեան - խմբ.] ու Պուլկարացի Գրիգորը [բուն անունով՝ Գրիգոր Կէօզէեան - խմբ.] եւ նախկին արմենական, ապա՝ ռամկավար Արմենակ Եկարեանը: Այգեստանի մէջ 73 դիրքեր կը ճշդուին:

Հայոց ոյժը ընդամէնը 1053 զինուոր կը հաշուէր: Զինուորական Մարմինն իբրեւ անմիջական օգնական կը կազմուի տեղեկատու մարմին մը եւ զէնքերուն հաշուեկշիռը կը կատարուի:

Այս միջոցին, Ճեւտէթի հետ բանակցութեանց ընթացքին, ան դասալիքները եւ զէնքերը յանձնելու համար 24 ժամ պայմանաժամ կու տայ հայոց: Ան Վանի ամերիկեան եւ գերմանական շրջանակներուն մօտ պատուիրակ կը ղրկէ ու անոնց՝ Այգեստանի մէջ գտնուող շէնքերուն ապահովութեան համար պահակներ գետեղելու առաջարկ կ'ընէ:

6 Ապրիլին, հայոց Զինուորական Մարմինը կարգապահութեան կոչ կ'ուղղէ դիրքերու վրայ գտնուող երիտասարդներուն եւ կը հրահանգէ կռիւները պայթելու պարագային փամփուշտները խնայողութեամբ գործածել:

7 Ապրիլի առաւօտուն, թրքական հալածանքներէն փախած շրջակայ գիւղերու հայեր կը փորձեն Այգեստան մտնել, բայց դիրքերու վրայ գտնուող քանի մը թուրք զինուորներ հայ կիներ կ'առեւանգեն: Հայ տղաներէն քանի մը հոգի կանանց օգնութեան կը փութայ, սակայն թուրքերը անոնցմէ երկու հայ երիտասարդ հրացանազարկ կ'ընեն: Ահա՛ այս վայրկեանին կռիւները կը պայթին հիւսիսային ճակատին վրայ: Թրքական թնդանօթները գործի կը դրուին, իսկ թուրք զինուորները ամէն կողմէ յարձակումի կ'անցնին: Հայոց առաջին դիմադրութիւնը բուռն կ'ըլլայ: Արդիւնաւէտ կ'ըլլան նաեւ յաջորդող բոլոր դիմադրութիւնները: Առաջին օրը հայերը տասնեակ մը զոհեր կու տան, մեծ մասը՝ քաղաքացիներ, որոնք կը սպաննուին թնդանօթներու ռումբերէն:

Ամբողջ կռիւն ընթացքին մեծ էր Այգեստանի՝ Մարգար Փախչոյեանի ղեկավարած նուազախումբին դերը: Պուլկարացի Գրիգորն ալ զինուորական գետնի վրայ մեծ դեր կը կատարէ, մանաւանդ իր գաղտնի ծրագրով: «Համմուտ Աղա» կոչուած թրքական զօրանոցը կ'այրի եւ փուլ կու գայ (էջ 69-71):

Յաջորդ օրերուն՝ կռիւը կը շարունակուի: Քիչ չեն արձանագրուած հերոսական դրուագները: Զինուորական Մարմինը փամփուշտի պատրաստութեան արհեստանոց մը հիմնելու աշխատանքին կը ձեռնարկէ: Օրական մինչեւ 2000 փամփուշտ կ'արտադրուի:

21 Ապրիլի կռիւները շատ բուռն կ'ըլլան: Կրկին թրքական յարձակում կ'ըլլայ: Հայոց դիմադրութիւնը նոյնքան հզօր էր: Յաջորդ օրը կ'ըլլայ թրքական յարձակման վճռական օրը: Սակայն սա եւս կը կասեցուի: Իմանալով, որ ռուսական բանակը կը մօտենայ Վանի, օսմանեան բանակին զինուորները խուճապի կը մատնուին եւ Վանէն

հեռանալու կը պատրաստուին:

Այգեստանէն դուրս կար Վանի Քաղաքամէջը, ուր կը գտնուէին հայոց առաջնորդարանը, վարժարանները, հայոց շուկան ու արհեստանոցները: Պետական հաստատութիւններն ալ հոն էին: Քաղաքամիջի հայերը հայկական թաղերն ապաստանած էին:

Հերոսամարտը նախորդող օրերուն, Ճեւտէթ հայոց Առաջնորդ Եզնիկ վարդապետին հետ հանդիպման ընթացքին թշնամական վերաբերմունք ցոյց տուած էր՝ հայոց հասցէին սպառնալիքներով արտայայտուելով Շատախի եւ Հայոց Զորի բախումներուն առնչութեամբ:

10 Ապրիլէն ետք թրքական յարձակումներուն կանոնաւոր ընթացքը հարաւամերիկացի զինուորականի մը՝ Ռաֆայէլ տէ Նոկալէսի ռազմագիտական հմտութեան հետեւանքն էր: Վենեգուելլա վերադարձին, Նոկալէս Վանի կռիւներուն կ'անդրադառնայ իր յուշագրութեան մէջ (էջ 89-91):

Մայիսի սկիզբին, թրքական յարձակումներուն թափը զգալիօրէն կը կոտորի: Արդէն Ապրիլի վերջերէն՝ թուրքերն սկսած էին փախուստի դիմել:

4 Մայիս 1915-ին հայկական դրօշը կը ծածանի Վանի բերդի գագաթին: 5 Մայիսին հայերը կը հրդեհեն ու կը քանդեն բոլոր այն հաստատութիւններն ու շէնքերը, որոնք թրքական բռնատիրութեան ամրոցներ դարձած էին դարերով: Նոյն օրը Վան կը մտնէ հայկական կամաւորական գունդերու առաջին խումբը՝ Դաշնակցական Խեչոյի (բուն անունով՝ Խաչատուր Ամիրեան - խմբ.) հրամանատարութեամբ: Զինուորական Մարմինը նուազախումբի յաղթական նը-լազով եւ Պուլկարացի Գրիգորին շինած թնդանօթի գո-ւումով կը դիմաւորէ զայն:

7 Մայիսին Արամ Մանուկեանը պաշտօնապէս կը նշանակուի Վանի նահանգապետ:

Մէկ ամսուան կռիւներէն ետք Վանի հայութիւնն անմիջապէս կ'անցնի կազմակերպչական աշխատանքի: Փոքր խումբեր օգնութեան ձեռք կ'երկարեն Շատախի եւ Հայոց Զորի այն գիւղերուն, ուր ինքնապաշտպանական կռիւներ մղուած էին Վանի կռիւներուն զուգահեռ:

Իր նահանգապետութեան օրերուն, Արամ Մանուկեան արդիւնաւոր աշխատանք կը կատարէ, ինչպէս որ իր բացառիկ կարողութիւնները ցոյց տուած էր ինքնապաշտպանութեան կռիւներուն տեւողութեան: Սակայն անոր կառավարումը կարճատեւ կ'ըլլայ: Եօթանասուն օր ետք, ռուսական բանակը ընդհանուր նահանջի մը կը դիմէ՝ «ռազմագիտական» հաշիւներով: Թուրք եւ քիւրտ խաժամուժի ջարդերէն ազատած աւելի քան 200 հազար հայեր դէպի Արեւելեան Հայաստան եւ Կովկաս գաղթի ճամբան կը բռնեն՝ հերոսութեան յիշատակներ ձգելով իրենց ետին:

106-108-րդ էջերուն մէջ տպուած է Գարեգին Նժդեհի ստորագրած «Յեղին Ոյժը» վկայութիւնը, իսկ 109-119-րդ էջերուն մէջ արտատպուած է Ռուբէնի «Վասպուրական՝ Իբրեւ Անկիւնաքարը Միացեալ Հայաստանի» գրութիւնը:

2- Շապին Գարահիսարի ինքնապաշտպանութիւնը (2-28 Յունիս 1915) (էջ 123-167)

Երբեմն թաթարական, երբեմն ալ՝ թիւրքմէնական տարազով հանդէս եկած ու մեզ կոտորող ցեղը օր մըն ալ փոխեց իր տարազը եւ ինքզինք օսմանցի կոչեց: Բայց ներքնապէս նոյն նենգ, դաւադիր, խորամանկ եւ վատ ազգին ձեռքին տակ մենք՝ հայերս չարչարուեցանք եւ խաչուեցանք:

Թուրքին գազանային ախորժակներուն «Ո՛Չ» ըսաւ

հայ ժողովուրդը հերոսական առաքինութեամբ: Այդ մարտընչումներէն մէկը կը կոչուի «Շապին Գարահիսարի Հերոսամարտ»:

128-130-րդ էջերուն մէջ կը տրուին պատմական եւ աշխարհագրական տեղեկութիւններ Շապին Գարահիսարի մասին:

Թրքական եւ քրտական բռնութիւններն ու անոնց պէյերուն եւ պէկերուն ոխակալ նենգութիւնները հայոց սրտին մէջ կ'արթնցնեն ըմբոստութեան ոգին: 1880-ական թուականներուն Շապին Գարահիսարի մէջ յեղափոխական խմորումներ ծայր կու տան: 1894-ին Հնչակեան կուսակցութիւնը հոն կը զրկէ գործիչ Արամ Աչրգպաշեանը, որ կը կազմակերպէ տեղական ոյժերը: 1896-ին Դաշնակցութիւնը մուտք կը գործէ չըջանէն ներս, եւ իբրեւ գաղափարական գործիչ հոն կը զրկուի Տօթ. Կարապետ Փաշայեանը [կեղծանունները՝ Թափառիկ, Թափառական - խմբ.], որ շատ չանցած կը ձերբակալուի եւ Պոլիս կը զրկուի:

Թուրքերու եւ քիւրտերու ճնշումներուն տակ, ըմբոստ հայ հոգիները չեն դիմանար: 1890-ին գաղտնի մարմին մը կը կազմաւորուի, որ զինավարժութեանց եւ մարզանքներու կը սկսի: Երզնկացի Ռուբէն Շիշմանեանի (Տերսիմի Քեռի) խմբապետութեամբ կը կազմուի առաջին հայդուկային խումբը հետեւեալ երիտասարդներէն՝ Վարդան Շահինեան, Յակոբ Տէլի Օղլանեան, Ղուկաս Տէօվլէթեան, Սեվիւնտիկցի Յարութիւն, պուսէիացի Յակոբ Տէրտէրեան եւ զարապողագցի Գալուստ Անդրէասեան: Քիչ ետք կը կազմուի երկրորդ խումբ մըն ալ Դանիէլ Չաւուշի, Մկրտիչ Թացեանի, Թոտորկացի Բարսեղի եւ արաբկիրցի Սեդրակ Յովսէփեանի մասնակցութեամբ: Ուրիշ թուցիկ խումբ մըն ալ կը ձեւաւորուի Գէորգ Առաքելեանի,

Անդրանիկ Երզնկէնեանի, Սերովբէ Տէր Ներսէսեանի, Գէորգ Պօղոսեանի, Յարութիւն Պէրպէրեանի եւ Օտապաշի Նշանի ընդգրկումով: Յետագային ազգային հերոս դարձած Անդրանիկն ալ կ'անդամակցի վերջին խումբին:

Հայ ժողովուրդի շահերու պաշտպան այս նուիրեալներուն գործունէութիւնը շատ կը նեղէ թրքական կառավարութիւնը, որ խստագոյն միջոցներու կը դիմէ զանոնք յայտնաբերելու եւ վերացնելու համար: Այդուհանդերձ, դաշնակցական եւ հնչակեան գործիչներ կը շարունակեն հայդուկային գործը կազմակերպել:

1908-ի Օսմանեան Սահմանադրութեան վերահռչակումէն սկսեալ մինչեւ Շապին Գարահիսարի հերոսամարտի աւարտը Արամ Հայկազ կը պատմէ իր «Շապին Գարահիսարի Ինքնապաշտպանութիւնը» խորագրին տակ գրուած եւ օրագրային բնոյթ ունեցող յուշերուն մէջ:

Սահմանադրութեան վերահաստատումը վաղանցուկ խանդավառութիւն կը բերէ: Կիլիկիոյ ջարդերը տիրող լաւատեսութիւնը կը պղտորեն: Պալքանեան պատերազմին մէջ թուրքերուն պարտութիւնը աւելի կը կատրեցնէ զանոնք: Հայոց վրայ թրքական իշխանութեանց ճնշումները կ'աւելնան: 1914-ին Ա. Համաշխարհային Պատերազմը կը պայթի եւ թուրքերը կը սկսին կողոպտել հայերը՝ պատերազմին օգնելու անուան տակ: Կը սկսին ձերբակալութիւններն ու սպանութիւնները: Զօրակոչի հրամանով հայ երիտասարդութիւնը բանակ կ'երթայ կոտորուելու համար վասն թրքական շահերուն: Հայոց զէնքերը կը հաւաքուին, միայն քանի մը տեղերու մէջ հայերը կը պատրաստուին ինքնապաշտպանութեան: Անոնցմէ էր Շապին Գարահիսարը:

Շապին Գարահիսարի՝ բնական եւ արհեստական ամրութիւններով պաշտպանուած բերդը իբրեւ ապաստանարան

եւ ռազմակայան կը ծառայէ: Շապին Գարահիսարի 3000 հայ տուները կիսաշրջանակ մը կը կազմէին այս բերդին շուրջը:

Թրքական պետութիւնը կը շարունակէ իր հայաջինջ քաղաքականութիւնը: Թուրք եւ քիւրտ խուժանը ազատօրէն կը կողոպտէ: Բանտէն ազատ արձակուած Քէլ Հասան անունով աւագակ մը իր 200 զինեալներով Շապին Գարահիսարի հայկական թաղերը կը ղրկուի՝ հայ փախստականներ փնտռելու համար: Քաղաքի հայոց ղեկավարները հայոց կը յորդորեն չկռուիլ, բայց ամէն անակնկալի պատրաստ ըլլալ: Քէլ Հասան քանի մը ժամուան ընթացքին 15-20 հայ երիտասարդ կը ձերբակալէ: 1915-ի Յունիս ամիսն էր: Հայկական թաղերը կ'ամայանան եւ սուգը ամէն տուն կը մտնէ: Միջին թաղէն կը սկսի հրացանաձգութիւն մը՝ Քէլ Հասանին ախորժակը կասեցնելու համար: արդարեւ, այս աւագակը իր փնտռած հայերը չկարենալով գտնել, սկսած էր անմեղ կիներն ու երեխաները խոշտանգել: Հայ զինեալ տղաքը, այլեւս չգիմանալով իրենց սիրելիներուն ողբին ու կոծին, կը սկսին կրակել Քէլ Հասանի մարդոց վրայ: Այսպիսով կը սկսի Շապին Գարահիսարի հայոց հերոսական դիմադրութիւնը թրքական բռնակալութեան դէմ:

Քաղաքին բոլոր հայերը դիրքեր պատրաստելու կը սկսին: Անձնուրաց մարդիկ, մանաւանդ Պարոնվարդեան գերդաստանը, ժողովուրդը մահէն փրկելու գործին կը նուիրուին:

Շապինգարահիսարցիք Անդրանիկն ու Սեբաստացի Մուրատը [բուն անունով՝ Մուրատ Խրիմեան - խմբ.] կը սպասէին: Սակայն վերջիններս չէին կրնար օգնութեան հասնիլ:

Թուրքերն իրենց ձերբակալած հայերէն ոմանք կը կացինահարեն, իսկ ուրիշներ՝ կը գնդակահարեն:

Շապին Գարահիսարի հայոց առջեւ դրուած էր «մահ կամ ազատութիւն» հրամայականը: Բերդի թաղին հայ բնակիչները մեծ զոհողութիւն կը ցուցաբերեն իրենց տուներուն դուռերը բոլոր հայոց առջեւ բանալով: Կիները մթերք կը հաւաքեն գալիք օրերուն համար:

Կռիւները վարելու գործը կը վստահուի Ղուկաս Աղբօր [Տէօվլէթեան], որ բոլոր հոսանքներուն եւ կողմերուն համակրանքը կը վայելէր: Հայերը համերաշխօրէն կը կարգաւորեն հարցերը: Քաղաքին բոլոր հայերը բերդին եւ մօտակայքի տուներուն մէջ ապաստանած էին, ու հոնկէ կը կռուէին: 5062 հոգիներէն 1500-ը արական սեռէ էր, որոնցմէ 250-ը կռուի ատակ էին: Մնացեալները կիներ, մանուկներ, պատանիներ, ծերեր եւ հիւանդներ էին: Վերջին մէկ ամսուան ընթացքին 400 հայեր սպաննուած էին: Հայերը կը կազմեն զինուորական խորհուրդ մը, որուն կը հնազանդին երիտասարդները: Բերդին մէջ եւ շուրջը եօթը ճակատ կը բացուի: Ամառնային այդ տաք եղանակին ջուրի սուր տազնապ մը կը սկսի բերդին մէջ: Մօտակայ Սրա Սառնիճ լիճերուն ջուրէն հայերը չէին կրնար օգտուիլ, որովհետեւ անոնք թուրքերուն ձեռքն էին:

Սակայն, հայոց զինուորական կացութիւնը բարւօք էր: Ղուկաս Աղբար հրահանգած էր ոչ մէկ կապար կամ ուռմբ պարապ տեղ գործածել: Մնդաբաշխումը կանոնաւոր կերպով կը կատարուէր: Վառելանիւթի տազնապ կար: Հայերը ջուրի ակեր կը փնտռեն Սրա Սառնիճի սանդուխներուն տակէն: Խեղճ հայ տղայ մը ջուր կրած ատեն կը սպաննուի:

Թուրքերը կռուին հինգերորդ օրը հաշտութեան առաջարկ կը ներկայացնեն: Անոնք ձեռքին ճերմակ դրօշ բռնած հայ կին մը կը ղրկեն բերդ եւ անձնատուութիւն ու զէնքերու յանձնում կը պահանջեն: Նկատի ունենալով,

որ քաղաքին հայոց բոլոր տունները հրկիզուած էին, թուրքերը կ'առաջարկեն հայերը Սեբաստիա կամ Կիրասոն փոխադրել: Թրքական խորամանկութեան եւ սուտին ծանօթ ըլլալով, հայերը չեն հաւատար տրուած խոստումներուն ու թուրքերուն առաջարկը կը մերժեն:

Կռիւները կը վերսկսին: Հայերը բուռն կերպով կը հակադարձեն: Երեկոյեան, թուրքերը կը նահանջեն: Բերդին մէջ ուտելիքի պաշարը կը հատնի: Պէտք էր շրջակայ թրքական գիւղերէն ուտելիք ճարել՝ ի հարկին բռնի ոյժով:

Թուրքերը հաշտութեան երկրորդ առաջարկ մը կը ներկայացնեն: Այս ու յաջորդ՝ երրորդ փորձն ալ կը ձախողին:

Շրմալիի ճակատին վրայ հայ ազատամարտիկները յանկարծ ռումբ մը կը պայթեցնեն: Ասոր վրայ, թուրքերը կը սկսին փախչիլ: Քանի մը ուրիշ ռումբեր ալ կը պայթին: Սակայն կը յաջորդէ ցաւալի դէպք մը: Թուրք խուժանը, ծպտուած հայկական դրօշակներով եւ տարազներով, կը խաբէ հայ զինեալները եւ բերդ կը մտնէ: Սակայն այս դաւը շուտով երեւան կ'ելլէ ու կը բռնկի կատաղի կռիւ մը, որուն վերջաւորութեան թուրքերը բերդին դուռը կը գրաւեն եւ մուտքի պատը կը քանդեն: Այդ վայրկեանին, 14 տարեկան պատանի մը՝ Հ. Թեւեքելեանը իր կեանքին գնով ռումբ մը կը հասցնէ կռուողներուն: Ռումբն իր փրկարար դերը կը կատարէ՝ մուտքին մէջ խոնուած 5-6 թուրք զինուորներ սպաննելով: Բուռն կռիւներէ ետք, թշնամին ի վերջոյ կը նահանջէ:

Յաջորդ քանի մը օրերը խաղաղ կ'անցնին:

Սակայն թուրքերը բերդը պաշարած էին եւ ամէն կողմէ կրակ կը տեղացնէին: Թուրքին չկրցածը սովն ըրաւ: Հայոց վիճակը շատ ծանրացաւ եւ անհանդուրժելի դարձաւ: Ճարահատ, Անդրանիկ Պարոնվարդեանն ու Նշան

Սերճանեանը թուրքերուն մօտ բանակցելու կը դրկուին, բայց անոնք չեն վերադառնար: Այս կացութեան դիմաց, Ղուկաս Աղբար ժողովի կը հրաւիրէ բոլոր մարտիկները: Ան կ'առաջարկէ շրջակայ լեռները ապաստանիլ եւ թէ՛ թուրքին դէմ կռուիլ ու թէ՛ հսկել բերդին մէջ մնացող ժողովուրդին: Առաջարկին իրականացումն անկարելի կը թուի շատերուն եւ անոնք յուսահատ ու շուարած կը մնան: Առաւօտեան, հայերը կը նշմարեն, թէ թուրքերն ամրացուցած են իրենց դիրքերը: Հայ մարտիկները կ'իջնեն բերդին դրան կողմերը, ուր շատ թուրքեր հաւաքուած էին: Կը սկսի գիրկընդխառն կռիւ մը, որու ընթացքին հազար հայ մարտիկներէն հարիւրը կը նահատակուի: Մնացեալները կը ճեղքեն պաշարման շղթան, կը տարածուին հոս ու հոն, եւ երկու տարի պայքար մղելով՝ գրեթէ բոլորն ալ կը նահատակուին:

28 Յունիս 1915-ին բերդին վրայ կը պարզուի ճերմակ դրօշը: Եթէ հայերը դուրսէն օգնութիւն ստանային, այս վախճանը պիտի չունենար Շապին Գարահիսարի հերոսամարտը: Արդարեւ, շատերը կը սպաննուին, իսկ ողջ մնացողները կը բռնեն բռնագաղթի ճամբան:

168-172-րդ էջերուն մէջ գետեղուած է Արամ Հայկազի «Կ'անիծեմ Այն Աստուածը Որ Մեր Ճակատագիրը Գրեց» վկայութիւնը հերոսամարտին մասին:

3- Տարօնի Աշխարհը. Հայկական Յեղափոխութեան Միջնաբերդին Վերջին Ծառացումը (էջ 175-269)

Հայաստանի կեդրոնական նահանգներէն է Տուրուբերանը, որ աւելի ծանօթ է Տարօնի Աշխարհ անունով: Տարօնը հին Տուրուբերան նահանգին մէկ գաւառն է:

Ուսումնասիրութեան սկիզբը (էջ 175-182) աշխարհագրական եւ պատմական լայն տեղեկութիւններ կը տրուին Տարօնի մասին, առնուած Կարօ Սասունիի «Պատմութիւն Տարօնի Աշխարհին» գիրքէն, իսկ էջ 183-190-ի մէջ տպուած «Տարօն Աշխարհի Հայութիւնը» գրութիւնն արտատպուած է Ռուբէնի «Հայ Յեղափոխականի Մը Յիշատակները» շարքի Գ. հատորէն: Նոյն հատորէն առնուած է նաեւ «Տարօնի Հ. Յ. Դ. Կազմակերպութիւնը» հատուածը (էջ 191-194):

Կարմիր Սուլթան Ապտիւլ Համիտի նման, իթիհատականներն ալ գլխաւոր երազ մը ունէին՝ հայկական ծառայողներու օրրան Տարօնի լեռնաշխարհը ճնշել:

Տարօն Աշխարհի մէջ 1890-ին սկսած Փետայական գործունէութիւնը Սահմանադրութեան վերահռչակումով դադրած էր 1908-ին: Տարօնը շինարարական աշխատանքի լծուած էր: Պալքանեան պատերազմէն ետք գինումի գործը կրկին սկսած էր պարզապէս թրքական եւ քրտական ոտնձգութիւններուն դիմադրելու եւ ոչ թէ կառավարութեան դէմ ըմբոստանալու համար:

Տարօնի մէջ կը գործէր միայն Հ. Յ. Դ.: Կուսակցական կառոյցին կեդրոնը Մուշ քաղաքն էր՝ «Դուրան-Բարձրաւանդակ» Կեդրոնական Կոմիտէով: Նոյն քաղաքին մէջ էր նաեւ Տարօնի թեմի առաջնորդարանը: Առաջնորդ Ներսէս Եպս. Խարախանեանը հայրենասէր եւ հին յեղափոխական մարդ մըն էր: «Դուրան-Բարձրաւանդակ»-ի Կ. Կ.ին մաս կը կազմէին՝ մշեցի Մճօ Պոլէեանը, Կորիւնը, Վարդան Վարդապետը, Ռուբէնը, Լեւոն Ասլանեանը, Տիգրան Գաւաշեանը, Կառնէնի Մկրտիչն ու Սեմանցի (բնագրին մէջ այսպէս է - Յ. Ի.) Քաթիպ Մանուկը: Շուտով Մուշ պիտի գար եւ իր գործօն դերն ունենար նաեւ օսմանեան խորհրդարանի երեսփոխան Կոմսը (Վահան Փափագեան):

Թուրք նահանգապետը՝ Մուսթաֆա Ապտիւլ Խալըզը Բաղէշ (Պիթլիս) կը մնար: Մուշի գաւառապետն էր Սերվէթ պէյը, որ թունդ իթիհատական մըն էր եւ Թալաթի հովանաւորութիւնը կը վայելէր:

Տարօնի քիւրտերը ինքնիշխան կերպով գործող Համիտիէ գունդերուն գինուորագրուած էին: Անոնք հայութիւնը կողոպտելու, սպաննելու եւ մաշեցնելու գաղտնի հրաման ստացած էին պետութենէն: Շրջանին մէջ կային քրտական բազմաթիւ ցեղախումբեր՝ հայտարանցիները, հասանանցիները, ճարանցիները, մոտկանցիները, Մուսա եւ Ղասրմ պէկերուն աշիրէթը, բագրանցիները եւ Շէկոյի տան ցեղախումբը, որոնց ազդեցութիւնը կը տարածուէր Սասունի, Մշոյ դաշտի, Բաղէշի, Պուլանըխ-Մանազկերտի, Վարդոյի եւ Կէնճի շրջաններուն վրայ: Հայութիւնը ամէն կողմէ շրջապատուած էր: Թուրքին եւ քիւրտին մօտ հետզհետէ կը հասուննար հայասպանութեան պետական ծրագիր մը, մինչ հայն անպատրաստ էր սպասուող արհաւիրքին:

Յեղասպան թուրքը իր ոճիրին ազդանշանը կու տայ 1914-ի Յունիսին՝ զօրակոչի յայտարարութեամբ, երբ Ա. Համաշխարհային Պատերազմը դեռ չէր սկսած: Կայսրութեան քիւրտերուն եւ հայոց մեծամասնութիւնը անպատասխան ձգեց այս կոչը: Զօրահաւաքէ խուսափող թուրքերը պաշտօնեայ (ճանպեղար) կը դառնան՝ ստանձնելով զօրահաւաքը կազմակերպելու պարտականութիւնը: Դասալիք քիւրտերը համիտիէ կը գրուին եւ իրենց շրջաններուն մէջ գինուած կը մնան՝ հայութիւնը կողոպտելու եւ սպաննելու յանձնառութեամբ: Զինուորագրութենէ խուսափող հայերը թրքական իշխանութեանց բուռն հակազդեցութեան կը հանդիպին. քանի մը փախստական հայ երիտասարդներ ձերբակալելու պատրուակով, թուրք

ոստիկանները հայկական գիւղերը կը մտնէին, տուները կը խուզարկէին եւ ձերբակալութիւններ կը կատարէին՝ հայութիւնը ձգելով առանց ղեկավարութեան եւ կռուող ոյժերու: Այս խժոժութեանց պատճառով, Տարօնի հայութիւնը Ֆիզիքապէս եւ տնտեսապէս քայքայուեցաւ: Թուրքերը ուրիշ միջոցներ ալ գործադրեցին հայոց վրայ՝ զանոնք ջլատելու նպատակով: Պատերազմին՝ ամէնէն շատ նիւթական օգնութիւնը պահանջուեցաւ հայերէն: Ոչ միայն կողոպտեցին հայոց ուտեստեղէնը, հագուելիքը, կենդանիները եւ այլն, այլեւ՝ բանակին անհրաժեշտ այս կարիքներուն փոխադրութեան հարցն ալ հայոց ուսին դրուեցաւ: Յայտնապէս, թուրքերը Տարօնի հայութիւնը ամէն ձեւով տկարացնելու սկսած էին:

Թէ՛ Առաջնորդարանը եւ թէ՛ Դաշնակցութեան պատասխանատու մարմինը կոտորածներու վտանգը կ'ըմբռնէին անցեալի չափանիշներով, այսինքն՝ յեղափոխականներու հալածանք եւ մասնակի կոտորածներ ու աւերում:

1914-ի Նոյեմբերի վերջերը կառավարութիւնը Ալիճանցի Տիգրան անունով նախկին փորձառու հայդուկին ատրճանակը կ'ուզէ գրաւել: Մուշէն տրուած խորհուրդներուն անսալով, Տիգրան ատրճանակը կը յանձնէ թուրք ոստիկաններուն: Սակայն «Դուրան-Բարձրաւանդակ»ի Կ. Կ.ի քարտուղար Գեղամ Ասատուրեանը, իմանալով հարցը, դիտողութիւն կ'ընէ Տիգրանին: Տիգրան ոստիկաններուն ճամբան կը կտրէ քանի մը Ֆետայիներով, կը սպաննէ զանոնք, իր ատրճանակը ետ կը խլէ եւ փախստական կը դառնայ: Թուրքերը անոր տունը կը հրկիզեն:

Ստեղծուած ծանր կացութեան առաջին առնելու համար, «Դուրան-Բարձրաւանդակ»ի Կեդր. Կոմիտէն բոլոր պատասխանատուները ժողովի կը հրաւիրէ Մուշի մէջ: Ժողովը կ'որոշէ ամբողջ Տարօնը բաժնել ինքնապաշտպա-

նական շրջաններու՝ իւրաքանչիւր շրջանին տալով որոշակի պարտականութիւններ (էջ 207-208):

Թրքական եւ քրտական ասպատակութիւններուն եւ ճնշումներուն ծաւալումը կանխելու նպատակով, միշտ հաղորդակցութիւն կար Մուշի գաւառապետ Սերվէթ պէյի եւ Դաշնակցութեան, ինչպէս նաեւ առաջինին ու հայոց առաջնորդարանին միջեւ: Կ'որոշուի Կորիւնի հրամանատարութեան տակ քիւրտ-հայկական կամաւորական խառն գունդ մը կազմել՝ շրջանները խաղաղեցնելու համար: Սակայն լարուածութիւնը կը շարունակուի եւ թուրքերն ու քիւրտերը չեն հրաժարիր իրենց ոտնձգութիւններէն:

1915-ի Յունուարի վերջաւորութենէն սկսեալ, միջադէպեր եւ բախումներ կ'արձանագրուին Տարօնի բոլոր շրջաններուն մէջ, իսկ Մարտ ամիսէն մինչեւ Օգոստոս բուռն ընդհարումներ տեղի կ'ունենան: 1915-ի առաջին բախումը կը պատահի Յրօնք գիւղին մէջ, երբ փախստականներ ձերբակալելու պատրուակով բռնութիւններ կատարող թուրք զինուորները յանկարծ հայոց ինքնապաշտպանութեան կը հանդիպին: Կարճ ընդհարումէ մը ետք, Յրօնքի զինեալներն ու անգէն երիտասարդները լեռները կը բարձրանան կամ դրացի գիւղերը կ'ապաստանին: Թուրքերը գիւղին մէջ 150 տուններ կ'աւերեն եւ շարք մը երեւելիներ ձերբակալելով Մուշ կը տանին: 6 Փետրուարին Ռուբէնը եւ Կորիւնը կ'այցելեն Մուշի հիւսիսը գտնուող գիւղ մը, որուն գիւղապետը Կորիւնն էր: Կորիւնն իր տունը հրաւիրած էր Աղջան գիւղին միւլտիքը եւ թուրք պատասխանատուներ, որոնց կարգին՝ իր ոխերիմ թշնամի Շէյխ Մեհմէտ էմինը: Հիւրերուն ընկերակցող զինուորներէն քիւրտ մը, որ Կորիւնին բարիքները վայելած էր, խղճահարելով անոր, կ'իմացնէ, թէ Շէյխ Մեհմէտ էմին զայն եւ Ռուբէնն սպաննելու ծրագիր ունէր: Կորիւն եւ Ռուբէն կ'որոշեն

նախայարձակ ըլլալ: Կորիւն իր ընտանիքը տունէն կը հեռացնէ եւ իր սեփական տունը կրակի կու տայ՝ տան մէջ այրելով բոլոր հրաւիրեալները բացի Աղջան գիւղի միւտիքէն եւ զինք զգուշացուցած քիւրտ զինուորէն:

Այս դէպքը ապստամբութեան ազդանշան կ'ըլլայ: Ռուբէն եւ Կորիւն գիւղին ֆետայական խումբերն իրենց հետ առնելով Սասուն կը մեկնին: Սերվէթ պէյն ու Մուշի իթթիհատական ղեկավարները կը կատղին: Սերվէթ իր մօտ կը կանչէ Առաջնորդ Խարախանեան Սրբազանն ու Կոմսը (Վահան Փափագեան) եւ Ռուբէնի ու Կորիւնի անձնատուութիւնը կը պահանջէ: Ան Կոմսը իր մօտ կը պահէ իբրեւ պատանդ: Վերջինս կ'առաջարկէ քննութիւն բանալ հարցին շուրջ: Սերվէթ կ'ընդունի եւ Մուշի թրքական զօրքերու հրամանատար Վասրֆ պէյի, Պուլանըխի գայմագամին եւ ուրիշներու մասնակցութեամբ քննութիւն կը բացուի: Երեւան կու գայ, թէ Շէյխ էմին իսկապէս դաւ մը նիւթած էր Ռուբէնի եւ Կորիւնի դէմ: Այս միջոցին, Գոմս գիւղի բնակչութիւնը Եաչեալտաղ գիւղն ապաստանած էր: Սակայն ճամբու ընթացքին ոմանք Արածանիի մէջ խեղդուած էին: Քննութենէն ետք Կոմս ազատ կ'արձակուի, իսկ Կորիւնի կինն ու աղջիկը Մուշ տարուելով կը բանտարկուին: Սերվէթ հաշտութեան հրաւեր կը ղրկէ Ռուբէնին ու Կորիւնին: Որոշապէս, այս հրաւերը նոր դաւադրութիւն մըն էր: Ռուբէն եւ Կորիւն այս հրաւերին չեն ընդառաջեր: Սերվէթ պէյ կը հրամայէ Մուշի Դաշնակցութեան ակումբը խուզարկել եւ փակել:

Ռուբէն եւ Կորիւն Սասնոյ ինքնապաշտպանութեան պատրաստութիւններ կը տեսնեն: Անոնք Շէնիկ գիւղին մէջ պատմական ժողով մը կը գումարեն շրջանի բոլոր հայդուկապետերուն մասնակցութեամբ եւ Սասունի ընդհանուր ճակատը եօթը գլխաւոր գիծերու կը բաժնեն:

Թուրքերը Սասունի հարաւը գտնուող Խուլփ աւանի դաշնակցական զինեալներու պատասխանատուն՝ Գալուստ Սասունեանն ու անոր եղբայրը՝ Գէորգը կը սպաննեն դաւադրութեամբ: Խուլփի շրջանը կը գլխատուի:

Երբ Սասունը Փետրուարին (1915) ապստամբութեան դրօշը կը պարզէ, Մուշ տակաւին կը սպասէր: Մկրտիչ Պուլէյեանը (Մճօ) թուրքերու եւ քիւրտերու գործած ոճիրներն այլեւս չէր կրնար հանդուրժել: Ան 1915-ի Մարտին իր 30 քաջերով Սրբոց Առաքելոց վանքը կը բարձրանայ եւ կը պատրաստուի ինքնապաշտպանութեան: Սերվէթ ոստիկանական սպայ Մեհմէտ էֆենտիի պարտականութիւն կու տայ զէնքի ոյժով ճզմելու Մճօն: Թուրքերը երբ վանքին կը մօտենան, Մճօն, անձնատուր ըլլալու հրամանին կրակով կը պատասխանէ: Թուրքերը 5-6 ոստիկան սպանեալ տալով կը նահանջեն եւ Մուշ կը վերադառնան:

1915-ի Ապրիլին երբ տակաւին Մուշն սպասման մէջ էր, ջարդերու, կողոպուտներու եւ վայրագութեանց ահաւոր տեղեկութիւններ կը հասնին Մշոյ դաշտի գիւղերէն: Առաջնորդ Խարախանեանը կը հիւանդանայ ու կը վախճանի 23 Ապրիլին: Քանի մը օր ետք կը հիւանդանայ Կոմսը, որ մէկ ամիս զգայազիրկ վիճակի մէջ կը մնայ:

Մշոյ դաշտին հիւսիսը գտնուող Խնուսի շրջան կը խուժեն ռուսական բանակին առջեւէն փախող թրքական զօրքերը: Մանագկերտի եւ Պուլանըխի քիւրտ հրոսակները անոնց կ'ընկերանան: Կոտորածը ամէնօրեայ կը դառնայ: Խնուս-Բերդաքաղաքի եւ Խնուսի գիւղերուն երեւելի հայերը կը ձերբակալուին: Անոնք, թիւով 150 հոգի, Դերձան-Երզնկա ճամբուն վրայ գտնուող Շողալար ձորին մէջ կը կոտորուին:

Համիտիները եւ քիւրտ խուժանը Խնուսի հայկական գիւղերուն վրայ կը յարձակին: Դաշնակցական եւ հնչակեան

Հայդուկներ կարելի եղած չափով կը պաշտպանեն անգէն հայերը՝ ետ մղելով քիւրտերը: Գիւղացիներէն մաս մը կը քրտնազարկուի եւ ռուսական զօրքերուն մօտ ապաստանիլ, մաս մըն ալ լեռները քաշուած կը մնար: 10 Մայիս 1915-ին Խնուսի հայերը կը բռնագաղթեցուին: Տարագրութեան ճամբուն վրայ, անոնց մեծ մասը կը ջարդուի Վարդոյի մօտերը: Գաւառի 25,000 հայերէն միայն քանի մը հազար հոգի կը վերապրի:

Մուշն այլեւս երկար չէր կրնար սպասել: Սերվէթի ոստիկանները Կոմսը կը փնտռէին: Վերջինս Սասուն կը մեկնի եւ Ռուբէնի ու Կորիւնի կը միանայ: Մուշը 10 Յուլիսին արդէն կտրուած էր դաշտի գիւղերէն:

1915-ի Յունիսին, Մշոյ դաշտի գիւղերն անհանդարտ էին: Թուրքերը եւ քիւրտերը շարունակ հայ կը սպաննէին եւ կը կողոպտէին: Մուշ քաղաքին հայկական թաղերը պաշարուած էին: Այս միջոցին, վախճանեալ Առաջնորդը փոխարինած էր Վարդան Վարդապետը: Սերվէթը վարդապետին եւ հայ երեւելիներուն հանդէպ առերես բարեացակամ էր: Թուրքերը քաղաքին բարձունքները զօրքով եւ թնդանօթներով բռնած էին: 8 Յուլիսին, Մուշի մէջ ձերբակալութիւններ կ'ըլլան: Վարդան Վարդապետը եւ Մուշի հայ երեւելիները Սերվէթի մօտ կը կանչուին: Անոնք թուրքերուն ենթարկուելէ ուրիշ ելք չունէին:

Սակայն Մուշի հին ու փորձառու մարտիկները՝ Հաճի Յակոբ Կոտոյեանը, Մուխսի Ֆարհատի Արօն, Լեւոն Ասլանեանը, Տիգրան Մկրտիչեանը եւ ուրիշներ, ընդամէնը քառասուն հոգի, տարբեր կեցուածք ունէին: Անոնք կ'որոշէն Սասուն երթալ եւ կռուիլ: Անոնք երկու խումբերու կը բաժնուին: Մուխսի Ֆարհատի Արօն իր խումբով կը յաջողի թրքական պաշարման շղթան ճեղքել եւ Սասուն անցնիլ, մինչդեռ Յակոբ Կոտոյեանի խումբը Մուշ կը

վերադառնայ:

Վարդան Վարդապետը 12 հոգիով Սերվէթի մօտ կ'երթայ: Միւս հրաւիրեալները կը մերժեն ներկայանալ Սերվէթի: Վերջինս կ'արձակէ բռնագաղթի հրամանը:

Առաջնորդարանն ու քաղաքին Հ. Յ. Դաշնակցութեան վարիչները իրարմէ կը բաժնուին: Առաջնորդարանին մէջ հաւաքուած ազգային ղեկավարները պատրաստ էին ենթարկուելու իխանութեանց հրահանգներուն, իսկ Հ. Յ. Դ-ի Մուշ քաղաքի վարիչները՝ ոչ:

Թրքական ոստիկանական ջոկատ մը առաջնորդարան խուժելով՝ Վարդան Վարդապետն ու հոն հաւաքուած 70 անձերը ճամբայ կը հանէ դէպի կառավարչատուն՝ ժողովուրդի լաց ու կոծին ուղեկցութեամբ: Թուրքերը Մուշի բանտերը նետուած հայերն ալ կ'աքսորեն եւ Բաղէշի ճամբուն վրայ կը կոտորեն: Այնուհետեւ կը սկսին ջարդերը Մուշի մէջ: Քաղաքին հայկական դիմադրական ոյժերը կը գտնուէին երեք թաղամասերու մէջ: Անոնց ղեկավարներն էին Տիգրան Մկրտիչեանը (Դուրան-Բարձրաւանդակի Կ. Կ. անդամ), Հաճի Յակոբ Կոտոյեանը (Կ. Կ. Կ. մարտական ոյժերու գլխաւոր պատասխանատուն) եւ Լեւոն Ասլանեանը (Կ. Կ. Կ. անդամ): Թուրքերու առաջին յարձակումները անյաջող կ'անցնին: Անոնք բուռ մը հայ կռուողներու դէմ թնդանօթներ կը գործածեն (մանրամասնութիւնները կարդալ էջ 235-244): Հերոսամարտի աւարտին, Տիգրան Մկրտիչեանի գլխաւորած զինեալ տղաքը անգէնները պաշտպանելով կ'անցնին Արագի գետակէն եւ Բերդակ գիւղին մէջէն ու Քանի լեռները կ'ապաստանին: Հայերն իրենց ոյժերը Սասունի մէջ կեդրոնացուցած էին: Դաշտի գիւղերէն շատ հայ մարտիկներ հոն գացած էին կռուելու համար: Սակայն թուրքերուն հաշիւը ուրիշ էր: Անոնք նախ դաշտի գիւղերուն վրայ կը յարձակին, որպէսզի

Սասունէն եւ Մուշէն փախչողները ապաստանարան եւ անունդ չկարենան գտնել դաշտի գիւղերուն մէջ: Դաշտի գիւղերուն հայերը մեծամասնութեամբ չեն կրնար դիմադրել եւ քանի մը օրուան մէջ կը կոտորուին: Այսուհանդերձ, կը գտնուին վայրեր, ուր հայութիւնը հերոսաբար կը ծառանայ եւ կը դիմադրէ: Ինքնապաշտպանութեան գլխաւոր կեդրոններն են Կառնէնը, Ս. Կարապետի վանքին շրջանը, Աւրանը, Ալիջանը, Վարդենիսի շրջանը եւայլն (մանրամասնութիւնները տեսնել էջ 245-257):

1915-ի Ապրիլին երբ Վանի ինքնապաշտպանութիւնը կը սկսի, կարգ մը գիւղերու բնակիչները չեն կրնար Վան գաղթել եւ կ'անցնին Ախլաթ: Արամ Մանուկեան, նախագգալով Ախլաթին սպառնացող վտանգը, այդտեղի պատասխանատուին՝ հին եւ փորձառու Ֆետայի Բալապետի Կարապետին (մականունը՝ Սաֆարեան - խմբ.) նամակ մը գրելով, կը թելադրէ իր ոյժերը հաւաքելով լեռ բարձրանալ: Թուրքերն աւելի արագօրէն կը շարժին եւ Բալապետի Կարապետն ու հին Ֆետայի Շամիրամցի Սողոմ կը ձերբակալեն: Բալապետի Կարապետը վերջին վայրկեանին կը յաջողի լեռ բարձրանալու առնչութեամբ իր ցուցումները փոխանցել մնացեալ տղոց: Մօտ 300 հայ զինեալ երիտասարդներ նեմրութ լեռան վրայ թուրքերուն դէմ կը կռուին: Սակայն անոնք Ախլաթի եւ Դատուանի բնակչութեան փրկութիւնը կը կապեն ռուսական բանակի յառաջխաղացքին, զոր կ'ուշանայ: Քաջարի հայ երիտասարդները թշնամիին ծանր կորուստներ կը պատճառեն եւ զէնքեր ու զինամթերք աւար կը վերցնեն: Սակայն, ռուսերը չհասած, 1915-ի Յուլիսի սկիզբները Ախլաթի եւ Դատուանի մէջ կոտորած տեղի կ'ունենայ: Նեմրութի հերոսները իրենց վրէժը կը լուծեն երբ մաս կը կազմեն կամաւորական գունդերուն: Սասունը 1914-ի վերջերուն

ըմբոստացումի ուղին բռնած էր եւ բազմաթիւ դաշնակցական պատասխանատուներ ու հայ զինեալներ հոն հաւաքուած էին: Մինչեւ 1915-ի Մարտը ինքնապաշտպանութեան պատրաստութիւններ տեսնուած էին: Տիգրանակերտի քրտական ցեղախումբերը Սասունի վրայ յարձակելու կը պատրաստուէին: Անոնց պիտի ընկերանային թրքական փոքրաթիւ զօրամասեր եւ գունդեր: 1915-ի Ապրիլին, կռիւները կը սկսին Խուլփի աւանին մէջ Աբրահամ, Գէորգ եւ Գալուստ Սասունեաններուն ձերբակալութեամբ: Քիւրտները Սասունի շրջակայ գիւղերը կ'ասպատակեն: Այս յարձակումին պատճառով, հայերը Խուլփի, Կուրտիքի եւ Տալուորիկի մէջ բուռն դիմադրութիւն ցոյց կու տան (մանրամասնութիւնները նկարագրուած են 255-258-րդ էջերուն մէջ): Սասունի շրջանը կը դիմադրէ մինչեւ 1915-ի Յունիսը, երբ ռազմամթերքի եւ ուտելիքի պակասն այլեւս զգալի կը դառնայ: Մշոյ դաշտէն եւ Տիգրանակերտէն խոյս տուած գաղթականներ Սասնոյ շրջանը կը հասնին: Այս նեղ օրերուն, հայերը հարուածող խումբեր կը կազմեն եւ Յունիսի վերջին երկու շաբաթներուն շեշտակի յարձակումներով ետ կը մղեն թուրքերը: Սասունցի կռուողները նաեւ օգնութեան կը հասնին շրջակայքի վտանգուած գիւղերուն:

Մուշն հրկիզուելէն յետոյ, թուրքերը Յուլիսին իրենց ոյժերը կը կեդրոնացնեն Սասնոյ շրջանին մէջ ու յարձակումներ կը գործեն: Մննդեղէնի եւ զինամթերքի սուր տագնապին պատճառով, կռուող խումբերն ու ժողովուրդը կը նահանջեն եւ կը յաջողին շրջակայքի անառիկ լեռներն ու ապահով վայրերը ապաստանիլ: Ռուբէնի, Վահան Փափազեանի, Մարտիրոսի եւ ուրիշ ղեկավարներու գլխաւորութեամբ, կռուողներն ու ժողովուրդը հիւսիս-արեւելք կ'ուղղուին եւ ռուսական բանակին կը միանան: 1916-ի Փետրուարն էր արդէն:

4- Մուսա Լեռ՝ Միջնաբերդ Եւ Փրկութեան Տապան (էջ 271-335)

Որոնդէսի գետաբերանին հիւսիսը եւ Անտիոք քաղաքին արեւմտեան կողմը, Ամանոսի լեռնաշղթային մէկ ճիւղին արեւմտեան մասին վրայ կը գտնուի 1800 մեթր բարձրութեամբ ձէպէլ Մուսան:

1915-ին ձէպէլ Մուսայի վեց գիւղերէն Պիթիասն ունէր 195 հայ ընտանիք՝ 1050 հոգի: Անոնցմէ 450 հոգին բռնագաղթի օրերուն ճամբայ կ'ելլեն: Գիւղին մէջ 600 հոգի կը մնայ: Մէկ քիլոմեթր հարաւ-արեւմուտք գտնուող Հաճի Հապիպլի գիւղին 1284 բնակիչներէն 384-ը կը գաղթէ, 900 հոգի կը մնայ գիւղը: Պիթիասի արեւմուտքը գտնուող Եոզուն Օլուգի 1233 բնակիչներէն միայն 57 հոգին կը բռնագաղթուի: Գիւղին մէջ կը մնայ 1176 հոգի: 1 քլմ. դէպի հարաւ ծուարած Խըտըրպէկ գիւղը կը գրաւուի: Անոր 1149 բնակիչներէն ընդամէնը 65 հոգին կը բռնագաղթուի, իսկ 1084 հոգին բնօրրանը կը մնայ: Երկու քլմ. դէպի հարաւ ինկած Վազըֆ գիւղի 470 բնակիչներէն 84-ը կը բռնագաղթուի, իսկ 386 հոգին ծննդավայրը կը մնայ: Եոզուն Օլուգէն հինգ քլմ. արեւմուտք կը գտնուի Քեպուսիէ գիւղը, որու 1125 հոգիէն 1040-ը կը բռնագաղթուի եւ միայն 85 հոգին կը մնայ գիւղը: Վեց գիւղերէն հարիւրաւոր երիտասարդներ օսմանեան բանակ զօրակոչուած էին: Ձէպէլ Մուսայի հայութեան տեղահանութեան հրամանն ալ կ'արձակուի: 26 Յուլիս 1915-ին, դրացի Քեսապի շրջանի հայ գիւղացիութեան ալ բռնագաղթի հրաման կու գայ:

Հոս կ'արժէ յիշատակել Հալէպի կուսակալ ձեւալ պէյի հայանպաստ կեցուածքը: Ան բռնագաղթը կարելի եղածին չափ կ'ուշացնէր: Այս պատճառով, կառավարութիւնը զայն

Գոնիա կը տեղափոխէ եւ Վանի կուսակալ Պեքիր Սամի պէյը Հալէպի կուսակալ կը նշանակէ:

ՄուսաԼեռանգիւղերէնգիւնուորագրուածերիտասարդները, չդիմանալով իրենց տեսածին եւ ապրածին, բանակէն փախուստ կու տան եւ տուն կը վերադառնան՝ դաշտերու եւ անտառներու մէջ օրերով թափառելէ յետոյ: Անոնք ահաւոր եւ անհաւատալի բաներ կը պատմէին. իրենց բանակ մտած առաջին օրերուն բարեացակամօրէն վարուած էին, բայց շուտով զիրենք զինաթափելով, հեռաւոր եւ անմարդաբնակ տեղեր դրկած էին ճամբայ շինելու տաժանակիր գործով: Երբ գործէն կը վերադառնային, ամէն իրիկուն շատեր անյայտացած կ'ըլլային:

Աքսորին նախապատրաստուելու համար՝ ձէպէլ Մուսայի հայութեան ութը օր տրուած էր: Այդ ընթացքին պէտք էր որոշել ընելիքը: Վեց գիւղերուն մեծամեծները իրարու մօտ գալով ժողով մը կը գումարեն: Ինչպէս սկիզբը յիշած էինք, ոմանք բռնագաղթի ճամբան կը բռնեն: Մնացեալները՝ 4231 հոգի, կ'որոշեն լեռ բարձրանալ եւ կռուիլ յանուն գոյատեւման:

Կ'արժէ յիշել, թէ 1908-ին ձէպէլ Մուսա այցելած էր Անանիա Վիրաւորեան անունով ազգային գործիչ մը, որ երիտասարդները զինելու եւ ինքնապաշտպանութեան կը պատրաստէր: Անոր ջանքերը ապարդիւն չեն մնար. անոր կազմած «Փոթորիկ» խումբը Դաշնակցութեան գործունէութեան կորիզը կը դառնայ:

Ապստամբութեան կողմնակից էին Ճապրա Գազանճեանը, Տիգրան Գարաճեանը, Մովսէս Տէր Գալուստեանը, Աւետիս Մասմանեանը, Թովմաս Այնթապեանը եւ ուրիշներ: Ընդդիմացողներէն էին Տէր Աբրահամ Տէր Գալուստեանը, Տէր Վարդան Վարդերեսեանն ու Մելքոն Գուլումճեանը, որոնք իրենց դիրքորոշումը կը փոխեն քանի մը օր ետք եւ կը

միանան ապստամբութեան: 31 Յուլիս 1915-ին կը սկսի լեռ բարձրանալու գործողութիւնը: Լեռան վրայ, Թաթար Ալանկի դիրքին մէջ ընդհանուր ժողով մը կը գումարուի 7 Օգոստոսին:

Կռիւները կը սկսին եւ բուռն թափով կը շարունակուին: Մուսալեռցիները ամիսէ մը աւելի կ'անցընեն լեռան վրայ՝ մեծ տառապանքներ կրելով: 9 Սեպտեմբերին, Փրանսական «Կիչէն» եւ «Տեսեքս» զրահանաւերը կ'երեւին ծովուն բացերը: Հայերն անոնց հետ կապի մէջ կը մտնեն: Ճրանսական զրահանաւերը թրքական զինուորական կեդրոններն ու գիւղերը կը ռմբակոծեն: 10 Սեպտեմբերին տեղի կ'ունենայ վերջին ճակատամարտը, երբ թուրք ու պետեւի խուժանը կը յարձակի: Անոր կ'ընկերանային թուրք զինուորներ: Այս խաժամուժը դաշոյններով եւ հրացաններով կը յառաջանայ դէպի հայոց դիրքերը: Հայերը կը կրակեն եւ թշնամիներէն շատեր դիտապաստ կ'իյնան: Կարեւոր դիրքերու վրայ գտնուող հայերէն ոմանք հերոսա-կան դիմադրութիւն ցոյց կու տան: Ասոնցմէ էր Եսայի Եաղուպեանը (մանրամասնութիւնները տեսնել էջ 296-319): Հայերը նաւերով Եգիպտոսի Փոր Սայիտ նաւահանգիստը կը տեղափոխուին:

Ճէպէլ Մուսայի հերոսամարտին մասին նշանաւոր է Յրանց Վերֆելի «Մուսա Լեռան 40 Օրերը» փաստագրական բնոյթ ունեցող վէպը:

..

331-322-րդ էջերուն մէջ կը տեսնենք Սարգիս Զէյթլեանի «Անպարտելի» վկայութիւնը: Տպուած են նաեւ Պօղոս Սնապեանի «Տաղանդ եւ Բարոյական Հարստութիւն» խորագիրով վկայութիւնը (էջ 333-334), այնուհետեւ՝ Եղուարդ Պոյաճեանի մէկ ուսումնասիրութիւնը (էջ 335):

5- Ուրֆայի Ինքնապաշտպանութիւնը Կամ Դիւցազնաշունչ Հայութեան Վկան

Եդեսիա կամ Ուրֆա քաղաքը կը գտնուի Միջագետքի հիւսիսային սահմանին, ծովէն 550 մեթր բարձրութեան վրայ: Նոյնանուն գաւառը շուրջ 10 հազար քառ. քմ. տարածութիւն ունի: Աշխարհագրական եւ պատմական ուրիշ տեղեկութիւններ կը տրուին 340-345-րդ էջերուն մէջ:

1895-1896-ի ապտիւլհամիտեան ջարդերէն Եդեսիան գերծէր մնացած: Եդեսիացիք 1895-ին ջարդի ենթարկուեցան երկու անգամ՝ առաջինը 23-29 Հոկտեմբերին, իսկ երկրորդը՝ 28-29 Դեկտեմբերին: Բացի հայ վերապրողներու զրութիւններէն, այս կոտորածներուն մասին գոյութիւն ունին երկու օտար անհատներու գրի առած վկայութիւններ: Առաջինը Մեծն Բրիտանիոյ փոխ-հիւպատոսին տեղեկագիրն է, գոր Կ. Պոլսոյ մէջ Մեծն Բրիտանիոյ դեսպան Սըր Ֆիլիփ Քըրիի միջոցով ղրկուած է Սալզպըրիի մարքիզին (Մեծն Բրիտանիոյ վարչապետ Ռոպըրթ Արթըր Թելլօթ Կասթոյն-Սէսիլի տիտղոսը - խմբ.) եւ հրատարակուած է բազմաթիւ օրինակներով: Երկրորդը՝ եդեսիացիներու մեծ փրկարար ամերիկուհի Միս Շաթըրգի 1896-ին լոյս տեսած «The Armenian Massacres and Turkish Tyranny» («Հայկական Ջարդերը եւ Թրքական Բռնատիրութիւնը») գիրքն է:

1908-1915 ժամանակահատուածին՝ Եդեսիոյ հայութեան թիւը 30 հազար հոգին կ'անցնէր, իսկ մօտակայ Կարմուճ հայկական գիւղին բնակչութիւնը 5 հազար հոգի էր: Այս շրջանին, երեւան կու գան հայկական միութիւններ, կը բացուին զրադարաններ եւ ընթերցարաններ:

Հայկական յեղափոխական կուսակցութիւններ գործունէութիւն կը ծաւալեն: Եդեսիա կ'այցելեն Տիգրան Մամհուր եւ Փարամազ [բուն անունով՝ Մատթէոս Սարգսեան -

[սմբ.] եւ կազմակերպչական աշխատանքներ կը տանին:

1908-էն ետք Հ. Յ. Դաշնակցութիւնը Եդեսիոյ մէջ զօրաւոր կազմ մը կ'ունենայ: Հարիւրաւոր երիտասարդներ կը միանան անոր: Կը պատրաստուի ինքնապաշտպանութեան նախագիծ մը: Հ. Յ. Դ.ի մէջ կարեւոր դեր կը սկսին կատարել Յակոբ Գասապեանը, Գէորգ Եօթնեղբարեանը, Սարգիս Գասապեանը, Կարապետ Թափթափեանը, Կիրակոս Դերձակեանը, Մկրտիչ Եօթնեղբարեանն ու Յարութիւն Ռասթկէլէնեանը: Եդեսիոյ մէջ Դաշնակցութեան հոգին ու առանցքն էր Յարութիւն Տէր Սորէնեանը:

1908-էն ետք Հնչակեան կուսակցութիւնն ալ Եդեսիոյ մէջ կարեւոր տեղ կու տայ մարտական դաստիարակութեան գործին: Հնչակեան անհատներ ցոյց կու տան իրենց զոհողութեան ու հերոսական ոգին:

1914-ի ամրան պատերազմի յայտարարութիւնն ընդհանրապէս հայութեան, մասնաւորաբար եդեսիահայոց մօտ լաւատեսական միջնորոտ մը կը ստեղծէ. հայերը կը կարծեն, թէ Օսմանեան Կայսրութեան կործանումը մօտ է: Ժամանակաւորապէս պատշաճ յարաբերութիւններ կը մշակուին թուրքերու հետ: Սակայն, օգտուելով հայոց կեցուածքէն, կառավարութիւնը կ'աւարառէ հայոց հարստութիւնը՝ «պատերազմին օգնութիւն» (իսնէ) պիտակին տակ:

1915-ի գարնան Բաղէշի Պատերազմական Ատեանէն հեռագրով մը Եդեսիոյ ոստիկանութեան կը հրահանգուի երկու հայ երիտասարդներ ձերբակալել եւ Բաղէշ ղրկել: Երիտասարդներէն մէկը Ամերիկա ըլլալով անհնար էր գայն ձեռք անցընել, իսկ միւսին ձերբակալութիւնը Եդեսիոյ ամբողջ հայութիւնը կը յուզէ: Այս միջնորոտին մէջ, հայ մտաւորականներու ձերբակալման լուրեր կը հասնին Կ. Պոլսէն: Թուրքերուն քաղաքականութիւնն այլեւս յստակ կը դառնար:

Ձէյթունի հայ բռնազաղթեալներուն կարաւանները կը հասնին Եդեսիա, որուն հայերը կը փութան անոնց օգնութեան: Շատ չանցած, Եդեսիոյ հայ ղեկավարներն ալ կը ձերբակալուին, թուղթեր ու գիրքեր կը բռնագրաւուին:

Ձերբակալութիւններէն առաջ իթթիհատական Ալի Հայտար իբրեւ մութասարրիֆ Եդեսիա կը հասնի՝ իրեն հետ բերելով «Թեշքիլաթը Մախսուսէ»ի անդամ տիգրանակերտցի ջարդարարներ Սալիլն ու Ահմէտը: Նոր ձերբակալութիւններ նախատեսելով, հայոց Քաղաքական Ժողովը նիստ մը կը գումարէ եւ ինքնապաշտպանութեան հարցը կը քննէ: Ժողովականները կ'որոշեն ենթարկուիլ կառավարութեան: Սակայն Մկրտիչ Եօթնեղբարեանն ու անոր ընկերները այս որոշումին դէմ կը կենան (այս մասին տեսնել էջ 353-359)՝ պատուելի ձոնագեանի գրածը):

8 Յունիս 1915-ին Եդեսիոյ մէջ կարգ մը երեւելիներ եւ կուսակցական 16 դէմքեր կը ձերբակալուին ու դէպի Ռաքթա կը քշուին: Առաջնորդարանին կատարած դիմումներն ու խոստացուած կաշառքները ի գուր կ'անցնին: Երբ բանտարկեալներուն կարաւանը տակաւին նոր ճամբայ ելած էր, Մկրտիչ Եօթնեղբարեանը, պետեւիի հագուստով ծպտուած, կալանաւորներուն կը մօտենայ եւ զանոնք զէնքի ոյժով ազատելու ծրագիրը կ'առաջարկէ: Սակայն անոնք կը մերժեն:

Դաշնակցութեան հրաւերով կը գումարուի պատմական ժողով մը, որուն ներկայ կ'ըլլան թաղային ինքնապաշտպանութեան մարմիններ, խմբապետներ, ուսանողական եւ պատանեկան միութեանց ներկայացուցիչներ: Օրակարգին միակ նիւթը ապստամբութիւնն էր: Մկրտիչ Եօթնեղբարեան կ'առաջարկէ անմիջապէս ապստամբիլ: Ան համոզուած էր, որ թրքական կառավարութիւնը Եդեսիոյ հայութիւնը պիտի ջլատէր մասնակի ձերբակալութիւններով: Եօթնեղբարեանի

կը միանայ Յարուսթիւն Ռասթկէլէնեանը: Այս երկուքը ի զուր կը ջանան համոզել ներկաները, թէ այլեւս ակելորդ ու անիմաստ է սպասել:

1550 եղեսիահայ երիտասարդներ Քէօփրիւ եւ Գուտէմէ կոչուած վայրերը աշխատելու տարուած էին՝ զօրահաւաքի անուան տակ:

25 Յունիս 1915-ին թուրքերը Եղեսիոյ մէջ զանգուածային ձերբակալութիւններ կը կատարեն: Դաշնակցութեան ժողովը որոշած էր ապստամբիլ բռնագաղթի յայտարարութեան վայրկեանին: Միւս կողմէ, Մկրտիչ Եօթնեղբարեանը, արաբի հագուստով ծպտուելով, բանտ կ'երթայ եւ ձերբակալուածները կը տեղեկացնէ, թէ պիտի ապստամբի իր ընկերներով եւ զիրենք բանտէն պիտի ազատէ: Բոլորին պատասխանը կ'ըլլայ համբերութեան յորդոր կարդալը: Թուրք ոստիկանները հայկական թաղերուն մէջ կը սկսին տուները խուզարկել՝ փախստական զինուորներ փնտնելու պատրուակով: Կառավարութիւնը կը ջանար Մկրտիչ Եօթնեղբարեանի խումբը ձերբակալել:

Առաջնորդին խորհուրդով Մկրտիչն իր երեսուն քաջերով կարմուճ կը մեկնի եւ Ս. Վանէսի վանքին մէջ քանի մը օր կը սպասէ: Մեծ թիւով երիտասարդներ կը բոլորուին անոր շուրջը:

Իմացած ըլլալով Մկրտիչի խումբին տեղը, կառավարութիւնը քանի մը օր ետք վանք կը ղրկէ մեծ թիւով զին-ւորներ, որոնք կը պաշարեն խումբը: Սակայն երեք ժամ տեւած կռիւներէ ետք, Մկրտիչն ու Յարուսթիւնը կը յաջողին խումբը պաշարման շրջալէն դուրս բերել եւ իջնել քաղաք: Եղեսիոյ թեմի Առաջնորդ Արտաւազդ վարդապետը (Միւրմէեան – խմբ.) հայ բանտարկեալներն ազատելու մեծ ճիգ կը թափէ: Թուրքերը հայկական թաղերու բոլոր զէնքերը կը պահանջեն Առաջնորդէն: Այդ

օրերուն, Պոլսէն Եղեսիա եկած էր հայ սպայ մը՝ Միհրան Հերարդեանը: Միհրան հայ տղոց հետ զինատուութեան նոր ձեւ մը կը գտնէ եւ միայն հին զէնքերը կը յանձնուին: 26 Յունիսին (1915) թուրքերը Արտաւազդ վարդապետը կը նետեն բանտ, ուր ան ուրիշ հայ արգելափակեալներու հետ ծանր չարչարանքի եւ խոշտանգումներու կ'ենթարկուի, որպէսզի գաղտնիքներ խոստովանի: Այդուհանդերձ, ոչ մէկ հայ բանտարկեալ գաղտնիք դուրս կու տայ:

Գիշերով բոլոր բանտարկեալները ճամբայ կը հանուին դէպի Տիգրանակերտ: Երբ 28 Յունիս 1915-ին Շէյթան Տէրէսի կոչուած վայրը կը հասնին, թուրքերը զանոնք կը կոտորեն: Ուրիշ դէպք մը կը պատահի Ռասթկէլէնեաններուն տան մէջ. երբ Մկրտիչ Եօթնեղբարեանն ու ընկերները հոն նստած էին, թուրքերը յանկարծ կը խուժեն թաղը: Տիգրանակերտցի ջարդարար Ահմէտը անձամբ եկած էր ձերբակալելու հայուկապետները: Ահմէտի հետ էր եղեսիացի վատահամբաւ ոստիկան Պաքըր Չաւուչը: Այս երկուքը Ռասթկէլէնեաններու տան տանիքէն տուն կ'իջնեն եւ մօրը պատիւին կը սպառնան: Յարուսթիւն կը սպաննէ Պաքըրը, իսկ Ահմէտ խոյս կու տայ: Մկրտիչ Եօթնեղբարեան իր ընկերներով կ'անցնի Յովհաննէս Սիմեանի տունը: Իրարանցումէ մը ետք, յանկարծ կը լսուին հայոց զոյգ եկեղեցիներու զանգակներուն ղօղանջները, ինչը ինքնապաշտպանութեան սկիզբի ազդանշանն էր:

Վերջապէս հասած էր ապստամբութեան օրը՝ 29 Սեպտեմբեր 1915-ը: Ամբողջ քաղաքին հայութիւնը, մէկ մարդու պէս ոտքի կանգնած, բանակ կազմած, դէմ կը կենայ թրքական կանոնաւոր բանակին եւ խուժանին: Հայկական թաղերուն մէջ կը ձերբակալուին Սարգիս եւ Գրիգոր Տարագճեանները:

Երեսուն թուրք ոստիկաններ կը կրակեն հայոց վրայ:

Մկրտիչ Եօթնեղբարեանը եւ Յարութիւն Ռասթկէլէնեանը այդ ոստիկանները զինաթափ կ'ընեն: Մուրասարիֆ Ալի Հայտար ծերունի ասորիի մը միջոցաւ հայոց կը դրկէ նամակ մը, ուր ան կը խոստանայ Եղեսիան որեւէ վտանգէ զերծ պահել: Հայերը նամակին կը պատասխանեն մերժելով զէնքերը յանձնել, երբ մեծաթիւ հայեր սպանդի ենթարկուած էին:

30 Սեպտեմբերին, թուրք խուժանը կը յարձակի հայկական թաղերուն վրայ: Մկրտիչ Եօթնեղբարեանի հրահանգով հայ տղաքը թոյլ կու տան որ խուժանը թաղերէն ներս մտնէ: Ու ահա՛ խուժանը յանկարծ խուճապի կը մատնուի երբ հայ տղաքը զանոնք խաղի կը բերեն: Պաշտպանները շատ զոհեր տալով կը նահանջեն: Թուրքերը 150 դիակներ կը թողուն հայկական թաղերէն ներս:

Հայերն իրենց թաղերուն մէջ զինուորական խորհուրդ մը, պարենաւորման մարմին մը, հիւանդանոց մը եւ զինագործարան մը կը հիմնեն: Այդ թաղերը կը բաժնուին վեց շրջաններու՝ բոլորը միասին 32 դիրքերով: 1915-ի Հոկտեմբեր ամսուն կը կատարուին թրքական երկրորդ եւ երրորդ յարձակումները: Մութէն օգտուելով, թուրքերը հայ կաթողիկէներու եկեղեցին կը գրաւեն:

Կռիւները կը տեւեն մօտ մէկ ամիս (մանրամասնութիւնները տեսնել էջ 376-381):

Թուրքերը եւ քիւրտերը նոր թնդանօթներ կը բերեն եւ մարդիկ կը հաւաքեն՝ հայոց վրայ բուռն յարձակման պատրաստուելով: Քիւրտի տարազ հագած եօթը հայ ազատամարտիկներ՝ Քէօր Սագօն եւ անոր ընկերները թնդանօթներուն վրայ կը յարձակին, թուրք հարիւրապետը կը սպաննեն եւ մեծ քանակութեամբ զինամթերք կը փճացնեն: Իր զօրքերով եւ թնդանօթներով Եղեսիա ժամանած Ֆախրի փաշան Մկրտիչ Եօթնեղբարեանին կ'ուղղէ նամակ

մը՝ պահանջելով յանձնուիլ իշխանութեանց: Մկրտիչ կը մերժէ: Ասոր վրայ՝ թրքական թնդանօթները կը գոռան եւ կրակ կը թափեն հայկական թաղերուն վրայ:

8 Հոկտեմբերին թուրքերը գործի կ'անցնին զօրաւոր յարձակողականով մը, սակայն անոնց բոլոր ճիգերը ապարդիւն կ'ըլլան: Այս անգամ, անոնք Գալապոյունէն կը սկսին զոյգ թնդանօթներով հարուածել եւ ռումբեր տեղալ հայկական թաղերուն վրայ, որոնց բնակչութիւնը կ'ապաստանի գետնափոր վայրերու մէջ: Մկրտիչ Եօթնեղբարեան գիշերային յարձակման շատ յանդուգն ծրագիր մը կը մշակէ:

Ծպտուած հայ տղաքը թրքական դիրքերը կը մտնեն եւ յարձակողական գործողութիւններ կը կատարեն՝ աւելի քան 200 թուրքերու դիակներ գետին փռելով: Հայկական թաղերուն կռնակը կը գտնուէր Թլֆրտուրի բլուրը, որուն վրայ թուրքերը դիրքեր կ'ամրացնեն, որպէսզի քաղաքին հայաբնակ վայրերը հարուածեն: Անոնք կը սկսին անդադար ումբակոծել հայկական թաղերը:

Օրիորդներ Քէթէնճեան, Չիլինկիրեան եւ Կէմէան ունին իրենց խումբերը եւ զէնն ի ձեռին կը մարտնչին տղամարդոց կողքին: Անոնք դիրքէ դիրք կը դառնան եւ կռուողները կը քաջալերեն:

Մկրտիչ Եօթնեղբարեանը դիրքերու տղոց կը հրահանգէ յեղափոխական երգեր երգել բարձրաձայն: Ժամեր ետք թուրքերը կը յաջողին գրաւել քանի մը դիրքեր: Իրիկուան մօտ թուրք սուլիսամերկ զինուորներ կը խուժեն հայկական թաղերը: Ռմբակոծման ժամանակ Մկրտիչ Եօթնեղբարեան կը վիրաւորուի ծունկէն:

9 Հոկտեմբեր 1915-ն է: Ֆախրի փաշայի զինուորները ծանր կորուստներու կ'ենթարկուին: Յաջորդ օր թուրքերը կրկին իրենց թնդանօթները կը գործածեն:

Գերմանացի միսիոնար Պրունո էֆարթ Մկրտիչ Եօթնեղբարեանի նամակ մը կը գրէ, որուն մէջ հայ կռուողներուն հանդէպ իր հիացմունքը յայտնելէ յետոյ կրակը դադրեցնելու եւ յանձնուելու կոչ կ'ուղղէ: Ան իր նամակով կ'երաշխաւորէ Մկրտիչի Գերմանիա տեղափոխումը: Մկրտիչ կը մերժէ յանձնուիլ: Էֆարթ կը բարկանայ եւ կը սպառնայ անձամբ վարել թնդանօթաձգութիւնը:

Ամերիկեան հաստատութեանց տնօրէնը՝ Մ. Լէսլին այդ հաստատութեանց շէնքերը կը պարպէ եւ Մկրտիչ Եօթնեղբարեան հոն դիրքեր ու կռուող սղաք կը տեղաւորէ: Բուռն կռիւներ կ'ընթանան: Թէեւ 20 Հոկտեմբերին հայոց պաշտպանած տարածքը կը փոքրանայ, այդուհանդերձ, կը շարունակուի դիմադրութիւնը, որուն հոգեւարքը հետըզհետէ թափ կ'առնէ: Քանի մը օրուան մէջ, Եղեսիոյ հերոսները մէկ առ մէկ կ'իյնան՝ մինչեւ իրենց վերջին շունչը կռուելով:


Հերոսամարտը վերջ գտած էր. 23 Հոկտեմբեր 1915-ին խոր ու մեռելային լուծիւն մը կը տիրէր Եղեսիոյ հայկական թաղերուն մէջ...

- 398-400-րդ էջերուն մէջ կը գտնենք Նշան Պէշիկթաշլեանի «Դիւցազնաթուիչ Ուրֆան» խորագիրով վկայութիւնը:
- Արամ Սահակեան կը վկայէ «Մկրտիչ Եօթնեղբարեանի Յեղափոխական Դիմագիծը» խորագրով (էջ 401-403):
- Աւետիս Ահարոնեանի «Ուրֆայի Հերոսամարտը» գրութիւնը կը գտնենք 404-413-րդ էջերուն մէջ:

«Թեհլիրեան Արդարահատոյցը», խմբագիր՝ Յարութիւն Քիւրքճեան, հրատարակութիւն Հ. Յ. Դաշնակցութեան, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, Պէյրութ, 1981, միջակ չափի 424 էջ

«- Անցիր դիմացը, դիմացը, դիմացը, ուղղակի ճակատին, շո՛ւտ, շո՛ւտ, շո՛ւտ, վագիր»:

Դիմացի մայթով հաւասար-ւեցի նրան, արագ քայլերով բաւական յառաջացայ. անցայ նոյն մայթը, ուսկից գնում էր նա: Յետ դարձայ: Մօտենում էինք իրար: Նա գալիս էր ճեմելու ձեւով՝ ձեռնափայտը անփոյթ ճօճելով: Մի կարճ տարածութիւն մնացած՝ զարմանալի անդորրութիւն համակեց էութիւնս: Հաւասարուելու վրայ՝ թալաաթը շեշտակի նայեց ինձ, աչքերի մէջ առկայծեց մահուան սարսուռը: Վերջին քայլը բեկուեց. մի քիչ թեքուեց որ խուսափի, բայց զէնքը դուրս քաշելս ու գլխին պարպելս մէկ եղաւ:



Թալաաթը հարուածից կարծես ցցուեց ու մի ակնթարթ հզօր մարմինը պրկուեց ձիգ, բայց երբեք. ապա՝ սղոցուած կաղնու բունի պէս երեսի վրայ տապալուեց թնդիւնով» (Սողոմոն Թեհլիրեան, էջ 73):

Քիչ ետք երբ բանտի խուցին մէջ կը գտնուի, Թեհլիրեան կ'ըսէ.

«Համակուած էի հոգեկան այնպիսի մի ներքին գոհու-նակութեամբ, որի նմանը չէի ապրել երբեք: Արճիճի

պէս վրաս ծանրացած տեւական մղձաւանջը չբացել էր յանկարծ: Ամէն բան փոխուել էր կարծես, կաշկանդուած հոգիս ազատ ու լայնարձակ թռչում էր. կարծես էութեամբ ձերբազատուած՝ մտքերս չըջան էին անում աշխարհի ծանօթ բոլոր անկիւններում» (էջ 75):

Դատավարութեան (2/3 Յունիս 1921) ընթացքին Սողոմոն Թեհլիրեանի պատմածները իր ընտանիքի բռնագաղթի եւ ջարդի փաստական պատմութիւնը կը ներկայացնեն: Ստորեւ կը ներկայացնեմ զանոնք:

Սողոմոն Թեհլիրեան ծնած է 2 Ապրիլ 1897-ին, Կամախի գաւառի Բագառիճ գիւղը: Հայրը վաճառական էր: Երկու եղբայր եւ երեք քոյր ունէր: Երբ Սողոմոն երեք տարեկան էր, ընտանիքը կը փոխադրուի Երզնկա, ուր կը ստանայ իր ուսումը:

1914-ին պատերազմը կը սկսի եւ հայ զինուորները կը գորակոչուին: 1915-ի Մայիսին լուր կը տարածուի, թէ դպրոցները պիտի գոցուին եւ ուսուցիչները ուրիշ տեղ պիտի դրկուին:

Այրերը խումբերով կը տարուին եւ անոնց ջարդուելուն լուրերը կը հասնին Երզնկա: 1915-ի Յունիսի սկիզբին լուր կը տարածուի, թէ բոլոր հայերը պիտի բռնագաղթեցուին: Շատ չանցած, Երզնկայի հայերը կարաւան կազմած կը շարժին: Երբ խումբը քաղաքէն դուրս կու գայ, «պահապան» ոստիկանները կը կեցնեն զայն եւ կ'ուզեն խումբին դրամն ու թանկագին իրերը կողոպտել: Ճիշդ այդ պահուն, կարաւանին առջեւէն հայ գաղթականներուն վրայ կրակ կը բանան: Թուրք ոստիկան մը Սողոմոնին քոյրը կ'առեւանգէ: Թուրք ոստիկանները ջարդելու կը սկսին: Սողոմոնի եղբոր գլուխը կացինով կը ճեղքեն: Թուրք խուժանն ալ կը միանայ ոստիկաններուն: Մայրը գետին կը փռուի: Սողոմոն գլխուն հարուած մը ստանալով՝ գետին կ'իյնայ:

Թերեւս երկու օր այդ վիճակին մէջ կը մնայ: Երբ աչքերը կը բանայ՝ շուրջը դիակներ կը տեսնէ: Սողոմոն իր մօր դիակը կը տեսնէ, իսկ եղբորը դիակը իր վրայ ինկած էր: Միւս եղբայրն ու քոյրերը անհետացած էին:

Սողոմոն Թեհլիրեան լեռներուն վրայ ծուարած գիւղ մը կ'երթայ: Գիւղացի քիւրտ պառաւ մը իր տունը կ'ընդունի զայն, հակառակ անոր, որ կառավարութիւնը խստիւ արգիլած էր թուրքերուն եւ քիւրտերուն՝ իրենց տուններուն մէջ հայ պահել: Սողոմոն քրտուհիին տունը կը մնայ մինչեւ որ վերքերը կը բուժուին: Քիւրտերը Սողոմոնին քրտական հագուստներ կու տան եւ կը թելադրեն Պարսկաստան անցնիլ:

Թեհլիրեան երկու ամիս Տերսիմի քիւրտերուն մօտ կ'ապաստանի: Հոս պատսպարուած ուրիշ փախստական հայերէ կ'իմանայ, թէ Խարբերդի մէջ ալ ջարդեր տեղի ունեցած են: Ան երկու ուրիշ փախստականներու հետ դէպի արեւելք կ'ուղղուի: Անոնք խոտերով կը սնանին լեռներուն վրայ: Ընկերներէն մէկը թունաւոր խոտ կ'ուտէ ու կը մահանայ: Կը յառաջանային ցերեկը քնանալով եւ գիշերը քալելով: Վերջապէս, ռուսական սահմանը կը հասնին: Թեհլիրեան կ'անցնի Պարսկահայքի Սալմաստ քաղաքը, ուր կը հիւանդանայ: Ապաքինելէ յետոյ Թիֆլիս կ'երթայ եւ տարի մը հոն կը մնայ: Սողոմոն վաճառականի մը մօտ կ'աշխատի ապրուստը ճարելու համար:

Երբ ռուսերը Երզնկան կը գրաւեն, Սողոմոն 1916-ի վերջերը հոն կը մեկնի ու իրենց տան մէկ մասը քանդուած կը գտնէ: Երբ դռնէն ներս կը մտնէ՝ ուշաթափ գետին կ'իյնայ: Երզնկայի մէջ երկու իսլամացուած հայ ընտանիքներ եւ քանի մը ուրիշ հայեր կային միայն՝ ընդամէնը քսան հոգի: Սողոմոն տան մէջ իր հօր պահած 4800 թրքական ոսկիները կը գտնէ ու կ'առնէ: Մէկ ու կէս ամիս Երզնկա

մնալէ յետոյ, ան կ'անցնի Թիֆլիս, եւ ռուսերէն սորվելու համար հինգ ամիս Ներսիսեան դպրոցը կը յաճախէ: Երկու տարի Թիֆլիս մնալէ յետոյ, 1919-ի Փետրուարին Սողոմոն Կ. Պոլիս կը մեկնի: Երկու ամիս ետք կ'անցնի Սալոնիկ, հոնկէ ալ՝ Փարիզ՝ 1920-ին: Սողոմոն ուսանելու մեծ փափաք ունէր, սակայն անոր միտքը միշտ խառնաշփոթ էր: Ամէն անգամ որ անոր աչքերուն առջեւ ջարդերու տեսարաններ կ'երեւային, ջղային նոպաներ կ'ունենար: Կ. Պոլիս գտնուած ատեն Սողոմոն Թեհլիրեան թերթերէն իմացած էր, թէ հայկական ջարդերուն բուն հեղինակը Թալաթ փաշան էր:

Կ. Պոլսոյ մէջ ջարդերուն հեղինակներէն միայն Եոզկատի (այսպէս է բնագիրին մէջ, ճիշդն է՝ Պողազլեանի - խմբ.) կառավարիչ Քեմալ պէյ կախաղան հանուած էր 1919-ի դատավարութեան վճռին ի գործադրութիւն: Թերթերը կը գրէին, թէ Թալաթ եւ էնվեր փաշաներն ալ մահուան դատապարտուած էին:

Բռնագաղթէն առաջ (1915) Երզնկայի մէջ մօտաւորապէս քսան հազար հայութիւն կար: Սողոմոն Թեհլիրեան կը հաստատէ, թէ 1915-ի Յունիսի սկիզբին Կ. Պոլսէն Երզնկա հրաման կու գայ՝ բոլոր հայերը խուճերով եւ իւրաքանչիւր հինգ-վեց հոգին իրարու կապած տեղահանել: Հրամանը գործադրելու համար՝ պաշարման վիճակ յայտարարուած էր Երզնկայի մէջ:

Իր դատավարութեան ընթացքին, Սողոմոն Թեհլիրեան կ'ըսէ. «Թալաթը ահաբեկելէն գրեթէ երկու շաբաթ առաջ, ինքզինքս շատ վատ կը զգայի եւ ջարդերու պատկերները աչքերուս առջեւ կը նկարուէին: Մօրս դիակը տեսայ. այդ դիակը ոտքի ելաւ, առջեւս կանգնեցաւ եւ ըսաւ ինծի. դուն տեսար, թէ Թալաթը հոս է եւ անտարբե՞ր կը մընաս, դուն այլեւս իմ զաւակս չես»:

Վերադառնալով իր կեանքի պատմութեան, Սողոմոն Թեհլիրեան կ'ըսէ, թէ 1920-ի ամբողջ տարին Փարիզ մնացած էր:

Դատավարութեան ընթացքին, դէպքին ականատես վկաներ կը խօսին: Անոնց մէջ կային հայեր, որոնք բռնագաղթի եւ ջարդերու փաստեր կը մէջբերէին (էջ 321-402): Այս վկայութիւնները Սողոմոն Թեհլիրեանի պաշտպան փաստաբանները իրենց տրամադրութեան տակ ունէին դատավարութեան ընթացքին:

Տեղեկագիր Երզնկայի 1915-ի դէպքերուն շուրջ

Երզնկայի մէջ պաշտօնի կոչուած հիւանդապահուհիներ քոյր Թորա Փօն Վետել եւ քոյր Էլա Էլվերս ականատեսի իրենց վկայութիւնը հրապարակած էին այս տեղեկագիրով: Անոնք պատրաստ էին անձամբ վերահաստատելու իրենց վկայութիւնը դատական ատեանին առջեւ:

1914-էն մինչեւ 1915-ի Ապրիլը այս երկու քոյրերը Երզնկայի մէջ թուրք զինուորներ կը բուժէին: 1915-ի Յունիսին երբ Վանի ինքնապաշտպանութեան կռիւները կը սկսին, Երզնկայի Կարմիր Խաչի պատասխանատու տօքթ. Քոլլի իրենց կ'ըսէ, թէ հայերը ապստամբած են եւ թէ միջոցառումներ առնուած են թէ Երզնկայի եւ թէ չըջակայքի ամբողջ հայութեան համար: Հայերը դէպի Միջագետք պիտի աքսորուէին, բայց ջարդեր տեղի պիտի չունենային, որովհետեւ տարագրեալներուն հսկող եւ անոնց կարիքներուն հասնող զինուորական պահակախումբեր պիտի ընկերանային:

Կարմիր Խաչի անձնակազմին կ'արգելուի տարագրեալներուն հետ կապի մէջ մտնել: Երզնկայի հայոց քանի մը օր ժամանակ կը տրուի պատրաստուելու համար: Անոնց կը թելադրուի տուններուն բանալիները իշխանութեանց յանձնել:

Երզնկայէն առաջին կարաւանը՝ հարուստներու խումբը ճամբայ կը հանուի 7 Յունիս 1915-ին: Յաջորդ օրերուն, Երզնկայի հայութիւնը, շուրջ 25,000 հոգի, կարաւան առ կարաւան կը բռնագաղթեցուի: Բուժքոյրները շուտով կ'իմանան, թէ հայերն ամբողջովին կողոպտուած են: Քիւրտերը բռնաբարած ու սպաննած էին կիները եւ Եփրատի ալիքներուն մէջ նետած էին անոնց մանուկները:

11 Յունիսին կանոնաւոր զօրքեր կը ղրկուին՝ «քիւրտերը պատժելու համար»: Սակայն անոնք իրենց առաքելութիւնը կատարելու փոխարէն, անպաշտպան կարաւաններուն հայերը կը ջարդեն: Բուժքոյրները զինուորներուն բերնէն կը լսեն, թէ անոնք ինչպէս գթութիւն աղերսող հայ կիները եւ մանուկները սպաննած են կամ Եփրատի ջուրերուն մէջ նետած: Թուրք զինուոր մը կը խոստովանի. «Սպաննեցէք բոլորը. այս էր հրահանգը: Երբ մանուկները կը դանդաղէին՝ անոնց գանկը կը ջախջախէին»: Բուժքոյրները թուրք զինուորի մը հետ պտոյտ կը կատարեն հայ տարագրեալներուն մօտ: Ճիշերն ու ողբուկոծը աննկարագրելի էին:

Ականատես քոյրերը 21 Յունիսին կը մեկնին Երզնկայէն: Ճամբուն վրայ կը հանդիպին տարագրեալներու ուրիշ կարաւանի մը, ուր փոքրաթիւ այրեր կային: Կիներն ու երեխաները խոր լուսթեան մէջ կը քայլէին: Հագիւ ոտքի կենալու կարող պառաւներ իսկ կը քայլէին պարտադրաբար: Կամախի կիրճին (Քեմախ-Պողագի) յատակը դիակներ կ'երեւային: Մամախաթունէն բռնագաղթեցուած 3000 հայ կիներու եւ երեխաներու ընկերակցող թուրք զինուոր մը կը պատմէ, թէ անոնք «բոլորն ալ գացին, մեռան»:

Գիրքին մնացեալ մասերուն պարագային՝ պիտի բաւականանամ նիւթերուն վերնագիրներն ու սկիզբի էջահամարները նշելով:

- Այլ վկայութիւններ՝ դատավարութեան լուսանցքին	323
- Վկայակոչուած փաստաթուղթեր - Թալաաթի հեռագիրները Հալէպի նահանգապետին	335
- Հալէպի հիւպատոս Ռէօսլեր՝ Ա. Անտոնեանի փաստաթղթային հատորին մասին	351
- Օսմանեան խղճամիտ պաշտօնակատար մը՝ Հայկական Յեղասպանութեան մասին	358
- Իթթիհատականներու դատավարութիւնը	361
- Նախկին իթթիհատական մը՝ Հայկական Յեղասպանութեան մասին	381
- Պէհաէտտին Շաքիրի նամակը	402
- Նիւթեր Հ. Յ. Դ. ի արխիւէն	407

Տեղին է յայտնել, թէ Սողոմոն Թեհլիրեանը դատող գերմանական դատարանին երդուեալներուն գլխաւորը կ'ազդարարէ. «Պատուով եւ խիղճով կը վկայեմ, որ Յանցաւոր է ամբաստանեալ Սողոմոն Թեհլիրեանը 15 Մարտ 1921-ին Շարլոթթենպուրկի մէջ դիտաւորեալ կերպով մարդ մը՝ Թալաաթ փաշան՝ սպաննած ըլլալուն համար:

- Ո՛չ»:

Եւ կը տրուի հետեւեալ դատավճիռը.

«Ամբաստանեալը անպարտ կ'արձակուի պետական սնտուկին հաշւոյն»:

«Համաձայն երդուեալներու որոշումին՝ ամբաստանեալը յանցաւոր չէ իր վրայ իբր մեղադրանք ծանրացող պատժելի արարքին համար»:


Ապա կը ծանուցուի հետեւեալ որոշումը.

«Բանտարկութեան հրամանը ամբաստանեալին նկատմամբ կը ջնջուի»:

Ջաւէն Մ(կրտիչի) Մսրրլեան, «Մկրտիչ Մսրրլեանի Ազգ(ային)-Քաղաքական Գործունէութիւնը», տպարան «Արագ», Պէյրութ, 1981, միջակ չափի 457 էջ

Մկրտիչ Մսրրլեան ծնած է 1898-ին, Գոնիայի նահանգի էլմալու քաղաքը, որ կը գտնուի Փոքր Ասիոյ հարաւ-արեւմուտքը: Ան Դաւիթ Ստեփանի Մսրրլեանի եւ Մարիամ Յովհաննէսի թուճականի չորրորդ զաւակն էր: Ունէր իրմէ մեծ երեք քոյրեր՝ Նազելի, Նեկտար եւ Սրբուհի ու իրմէ փոքր եղբայր մը՝ Թագլուր:

Մկրտիչ Մսրրլեան իր ուսումն ստացած է էլմալուի՝ 1872 թուականին հիմնուած Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շրջափակին մէջ գտնուող Հայոց Ազգային Վարժարանին մէջ, ուր սորված էր հայերէն գրաբար եւ աշխարհաբար ու արաբատառ թրքերէն (օսմաներէն)՝ կատարելապէս տիրապետելով երեքին: Լաւատեղեակ էր նաեւ յունարէնին: 16-17 տարեկանին Մկրտիչը նոյն դպրոցին մէջ տարի մը իբր ուսուցիչ կը ծառայէ՝ տրամադրելի բոլոր նիւթերը դասաւանդելով եւ դպրոցին ներքին վարչական գործերը վարելով: Էլմալուի Տէր Համազասպ Քէնյ. Փափագեանը Մկրտիչի մէջ հմուտ անձ մը նկատած է: Տէր Հօր համարումը նպաստած է, որ Մկրտիչ եկեղեցական դառնալու փափաք յայտնէ: Ան ուզած է Արմաշի դպրեվանքը յաճախել: Էլմալու այցելող Գարեգին Վրդ. Խաչատուրեանը քաջալերած է զայն: Մկրտիչի



մայրը շատ համամիտ չէ գտնուած: Վրայ հասած են Ա. Համաշխարհային Պատերազմն ու Մեծ Եղեռնը եւ անոր այս փափաքը չքացած է:

Էլմալու գուտ թրքական շրջանի մը մէջ կը գտնուէր: Հայութիւնը հոն մեկուսացած կեանք մը կ'ապրէր: Էլմալուի աւատապետներէն Իտրիս աղան ինքզինք շրջանի հայութեան հանդէպ բարեացակամ ցոյց տուած էր: Չէթէներու պարագլուխներէն Թահսիլտար Իպրահիմ, Պէնլի գատէ Հաֆըզ էտհէմ եւ Գըրճը օղլու Մուհամմէտ աղա Համազասպ Քէնյ. Փափագեանին լուր տուած էին, թէ էլմալուի հայերը գերծ պիտի մնան Մեծ Եղեռնի արհաւիրքներէն: Ըստ վաւերագրական աղբիւրներու, Գոնիայի նահանգի 25 հազար հայութենէն 10 հազար հոգին մահէն ճողոպրած է: Զինուորական տարիքի այրերը պարտադրաբար կը զինուորագրուին օսմանեան բանակին: Այսուհանդերձ էլմալուի եւ Անթալիոյ հայոց համար տեղահանութեան եւ ջարդի սպառնալիքը միշտ մնաց:

1916-ին երբ Մկրտիչ Մսրրլեան 18 տարեկան կը դառնայ, զինուորական ծառայութեան մէջ կը մտնէ եւ հայրենակիցներու խումբով Անգարա կը ղրկուի: Իր ճամբուն վրայ, խումբը հայոց դիակներով լեցուն վայրերէ կ'անցնի: Մկրտիչը կը հիւանդանայ ու թրքական հիւանդանոց մը կը մնայ, սակայն թուրք բժիշկի մը իրեն իբր դեղ տուած թոյնը չ'առներ թելադրանքովը հայ հիւանդապահուհիի մը, որու խնամքին շնորհիւ ալ կը բուժուի:

Շնորհիւ Մկրտիչի՝ թրքերէնի տիրապետութեան, Անգարայի մէջ ան զինուորական երկաթուղային վարչութեան դիւանապետ եւ ապա գլխաւոր հաշուակալ կը նշանակուի: Ալպանական ծագումով կրետացի Մուսթաֆա Անգարայի մէջ անոր հրամանատարը եղած է:

Մկրտիչ Մսրրլեան մինչեւ Մուտրոսի զինադադարին

կնքումը (30 Հոկտեմբեր 1918) իր պաշտօնին վրայ կը մնայ: Իր այս հանգամանքէն օգտուելով՝ ան ազգականներուն եւ ազգակիցներուն օգնութեան կը հասնի: Իր պաշտօնավարած գրասենեակին մէջ բազմաթիւ անգլիացի ռազմագերիներ ծառայած են: Իր պաշտօնին բերումով ան ճանչցած է նաեւ անգլիացի ռազմագերի Զօր. Թաուզէնտը, որ թուրքերու կողմէ մասնաւոր վերաբերումի արժանացած էր:

Մկրտիչի աշխատած գրասենեակը հայ ցեղին ամբողջական փճացումը հրահանգող հեռագիր մը եկած էր էնվէր փաշայէն: Հրամանատար Մուսլազատէ Մուսթաֆա դիւանի մեծ տոմարին մէջ չէր արձանագրած զայն: Քանի մը օր ետք այդ հրահանգը ջնջուած էր, որմէ ետք միայն՝ երկու փաստաթուղթերը միասանաբար արձանագրուած էին տոմարին մէջ (այս հեռագիրին մանրամասնութիւնները տեսնել էջ 19-20):

Մկրտիչ Մսրրլեանի պատմած՝ հայոց բնաջնջումը հրահանգող հեռագիրին վաւերականութիւնը հաստատող ուրիշ աղբիւր մըն է Արամ Անտոնեանի «Մեծ Ոճիրը», հրատարակուած Պոսթըն, 1921-ին, որու 232-233-րդ էջերուն մէջ կը կարդանք. «Փոխանակ գործադրութեան հրամանին՝ հասաւ չգործադրելու հակահրամանը»:

Մկրտիչ Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան լուրը կը լսէ Մուսլաֆայէն ու անմիջապէս իմաց կու տայ իր ազգակիցներուն, որոնք կը խանդավառուին եւ գաղտնօրէն կը տօնախմբեն այս պատմական իրադարձութիւնը:

Մուտրոսի գինադադարէն քիչ առաջ, Մկրտիչ էլմալու կը մեկնի: Ճամբան ան կ'իմանայ գինադադարին մասին: Ան Անգարա չի վերադառնար, այլ Ֆինիքէի մէջ Իտրիս աղայի ատաղձագործարանին մէջ իբրեւ հաշուակալ կ'աշխատի:

Դաշնակիցները օսմանեան բանակը գինաթափ չեն ըներ: Ծնունդ կ'առնէ Քեմալական շարժումը, որ շուտով թափ

կ'առնէ: 1921-ին Մկրտիչ Մսրրլեան դէպի Խարբերդ կ'աքսորուի: Թուրք ոստիկանները ջրառատ վայրերէ կը քալեցնէին աքսորեալները՝ միաժամանակ անոնց զլանալով ջուր խմելու իրաւունքը: Մկրտիչ իր ազգակիցներուն եւ յոյներուն հետ միասին կը յարձակի թուրք ոստիկաններուն վրայ, գինաթափ կ'ընէ զանոնք եւ կուշտ ու կուռ ջուր խմելէ յետոյ՝ զէնքերը կը վերադարձնէ ոստիկաններուն: Խումբը Խարբերդ կը հասնի: Ճամբար մտնողներէն առաջինը Մկրտիչը կ'ըլլայ: Ան իր վերարկուն փոխելով դուրս կու գայ եւ պահակ ոստիկանը կը համոզէ, թէ ինք աքսորեալ մը չէ: Յետագային ան ուրիշ ազգակիցներ ալ աքսորէն կ'ազատէ:

Մկրտիչ Խարբերդի մէջ իբր փախստական կ'ապրի: Ան կ'ապաստանի աւետարանական ազնիւ ընտանիքի մը՝ Յովսէփեաններուն փուռը, ուր ալ կ'աշխատի: 1922-ին Մկրտիչ Խարբերդի մէջ Ֆրանսերէնի մասնաւոր դասերու կը հետեւի: Ան բազմաթիւ վտանգներու կ'ենթարկուի, սակայն ճարպիկութեամբ կ'ազատի եւ ուրիշներ ալ կ'ազատէ:

15 Դեկտեմբեր 1922-ին Մկրտիչ Մսրրլեան Թուրքիան ձգելով Հալէպ կու գայ՝ գրպանին մէջ ունենալով միայն 40 թրքական դահեկան: Ապա Լիբանանի Թրիփոլի քաղաքը գալով, Ֆինիքէն իրէն ծանօթ առեւտրական Ահմէտ Ջէքի Քապպարայի ատաղձագործարանը կ'աշխատի իբր հաշուակալ: Մկրտիչ Թրիփոլի կը տեղափոխէ էլմալուէն տեղահան եղած մայրը, քոյրերը, եղբայրն ու ուրիշ հարազատներ: Ապա անոնք Պէյրութ կը տեղափոխուին: Կարճ ժամանակամիջոցի մէջ Մկրտիչ Մսրրլեան խօսակցական եւ գրական արաբերէններն ալ կը սորվի:

1930-ին Մկրտիչ Հոտտոսի մէջ կ'ամուսնանայ Օր. Սաթենիկ Թումայեանի հետ: Ամուլը կ'ունենայ երեք որդի՝ Դաւիթ, Զաւէն եւ Հայկ-Արամ:

**Ստեփան Ալաճաճեան, «Եղէգները Չխոնարհուեցին»
(վէպ), «Սովետական Գրող» հրատարակչութիւն, Երեւան,
1984, միջակ չափի 504 էջ**

Վէպը կը զբաղցնէ գիրքին առաջին 379 էջերը, իսկ մնացեալը «Անառագաստ Նաւակներ» վիպակն է, զոր մեր նիւթին հետ կապ չունի:

Այս վէպը նուիրուած է Մեծ Եղեռնէն այն փրկուած բեկորներուն, որոնք բռնագաղթի վայրերէն Կիլիկիա վերադարձած են հայկական ինքնավար պետականութիւն ստեղծելու յոյսերով:

Խաբուելով եւրոպական նենգ դիւանագիտութենէն, թուրք թշնամիին դէմ հերոսական կռիւ մղելէ յետոյ Մերձաւոր Արեւելքի ժողովուրդներուն մօտ ապաստան գտած են 1921-ին: Վէպը կը պատկերացնէ հեղինակի բնօրրանին՝ Զէյթունի վերջին հերոսամարտը:

Զէյթուն վերադարձողներէն առաջինն են ծերունի թումասն ու անոր կինը՝ Թրվանտան: Երկրորդ խումբին մէջն էին Ենոքն ու անոր դուստրը՝ Դշխուհին: Ապա վարժապետ Փառէնն ալ եկած էր, 1919-ի Սեպտեմբերին: Այդ օրերուն, թուրքերը նոր վերադարձած Բաշալենց Սէթը կը սպաննեն: Թէեւ Փառէն վարժապետը վերադարձած էր, սակայն համամիտ չէր հոն մնալու եւ կը փափաքէր, որ հայերն



աւելի իրատես գտնուին հասկնալու համար, թէ անգլիացիք եւ ֆրանսացիք միայն իրենց շահերը կը հետապնդեն եւ անոնք Կիլիկիոյ մէջ պետականութիւն մը ստեղծելու առիթը չեն տար հայոց: Թուրքէն պաշտպանուելու համար՝ Փառէն չորս տարի առաջ իր պահած գէնքը երեւան կը հանէ:

Արամն (հեղինակը հաւանաբար նկատի ունի Արամ Չոլաքեանը - Յ. Ի.) եւ անոր ընկերները՝ Կարօն, Միքայէլը եւ Սիմոնեանն ալ վերադարձած էին: Անոնք իրենց հետ հինգ հարիւր վերապրող եւ դրամ բերած էին: Տակաւին ուրիշ վերապրողներ պիտի գային: Արամը յոյս դրած էր դաշնակից պետութեանց յաղթանակին եւ թուրքիոյ պարտութեան վրայ: Իրենք պիտի վերակառուցէին իրենց քաղաքը՝ Զէյթունը: Փառէնն այս գաղափարներուն համաձայն չէր: Ան թուրքին եւ եւրոպացիին չէր վստահեր:

Այրածոյ լերան ուսին՝ Քարծայր կոչուած աւերակներուն մէջ, Փառէն հայ տղոց գէնք բռնել եւ նշանառութիւն կը սորվեցնէ: Տղոց տարեկից Փոփօն խմբավար կը նշանակուի:

Արամն ու ընկերները գիշերը Ենոքի տան մէջ կ'անցընեն, իսկ Փառէն զինավարժութենէն ետք, օսմանեան բանակի դատարկ զօրանոցը կը գիշերէ: Առաւօտուն դէպի Զէյթուն իր ճամբուն վրայ Փառէնը տարագրութենէն վերադարձող հայրենակիցներ կը տեսնէ: Ան կը մտածէ, թէ ոչ մէկ բան կրնայ կասեցնել անոնց հոսքը դէպի հայրենի հողը: Թէեւ Եւրոպան խաբէութեան իր խաղը կը խաղար, սակայն տանջուած ժողովուրդին կարօտն էր, որ զինք դէպի իր հայրենական քանդուած օճախը կը քաշէր: Ութը հարիւր հոգի վերադարձողներուն մէջ բազմաթիւ որբեր կային: Պէտք է տուները վերակառուցուէին եւ սնունդն ապահովուէր: Փառէն կ'առաջարկէ վերադարձողները դատարկ զօրանոցին

մէջ տեղաւորել:

Փառէնը, Արամը եւ ընկերները ժողովուրդը զօրանոց կ'առաջնորդեն: Վերադարձողներուն մէջ միայն երեսուն զինեալներ կային:

Փոփոյի հայրը՝ Շերեփ Հմայեակ Մեծ Եղեռնի տարիներուն իր կիներ՝ Օսանը կորսնցուցած ըլլալով, ուրիշի մը հետ ամուսնացած էր: Օսան դժգոհ էր այս վիճակէն: Փառէն վարժապետը այնպէս մը կը կարգադրէ, որ Ենոք Օսանը կնութեան առնէ: Ենոքը, Օսանը, Դշխուհին եւ Փոփոն մէկ ընտանիք կը դառնան: Ընտանիքներ վերակազմելու եւ քանդուած օճախները վերակառուցելու աշխատանքի շրջան մը կը սկսի հայուն համար: Փառէնը տղոց եւ կարգ մը աղջիկներու կը շարունակէ զինավարժութիւն եւ գրել-կարդալ սորվեցնել: Հայու աշխատանքով է, որ կեանքը բնականոն կը դառնայ: Արամը ժողովուրդի կեանքը կազմակերպելու մէջ առաջնային դեր կը կատարէ:

Այս միջոցին հեռաւոր Երուսաղէմէն Զէյթուն կը վերադառնայ Բարդողիմէոս Մ. Վրդ. Թագաճեանը, որ բաւական ծերացած էր:

Ենոք քանի մը հոգիով շրջակայ գիւղերը գացած էր՝ ջորիներ գնելու: Օսանը զայն կը սպասէր անհամբերութեամբ: Վերաշինութեան միջնորդութիւն այս օրերուն էր, երբ Ենոքի ընկերները կը վերադառնան՝ անոր դիակն իրենց հետ բերելով: Դարանակալ թուրքեր սպաննած էին Ենոքը: Վերջինիս յուղարկաւորութեան ատեն զինուած պատասխանատուներ խորհրդակցութիւններ կ'ունենան: Տարաձայնութիւն կը չըլլէր, թէ անգլիացիք իրենց դիրքերէն պիտի քաշուին՝ իրենց տեղերը Ֆրանսացիներուն փոխանցելու համար: Արամը մտադիր էր Ազգային Միութիւն կազմել տասնըմէկ անդամներով: Արամը, Արշակը, Փառէն վարժապետը,

Բարդողիմէոս Մ. Վրդ. Թագաճեանը, Կարօն, Սիմոնեանը, սրնգահար Լեւոնը եւ ուրիշ չորս հոգի իբր Զէյթունի չորս իշխաններուն ներկայացուցիչները՝ Ազգային Միութեան անդամները կը դառնան: Առաջին ժողովին իսկ, անոնք կ'որոշեն կեանքը բնականոն դարձնել եւ կապի մէջ մնալ Հաճընի, Մարաշի եւ Ատանայի հետ:

Կարօն ժայռերու ետեւ դարան մտնելով թուրք ոճրագործներ կը սպաննէ Ենոքի վրէժը լուծելու համար: Փառէն կը շարունակէ այբուբեն եւ գէնք գործածել սորվեցնել հայ պատանիներուն: Փառէնն ու Փոփոն կը հանդիպին նամակաբեր չէրքէզ Ասատին, որ Մարաշի Ազգային Միութենէն նամակ եւ բերանացի պատգամներ բերած էր Արամին: Բոլորը միասին Արամին մօտ կ'երթան, ու նամակաբերէն կ'իմանան, թէ անգլիացիք քաշուած էին Մարաշէն եւ թէ Ֆրանսացիք զանոնք պիտի փոխարինէին: Փառէնը Սիմոնեանի եւ ութը ջորեպաններու հետ դէպի Մարաշ կ'ուղղուի: Արամի քրոջ ամուսինը՝ Արշակը, ճամբաներուն գիտակ երիտասարդի մը հետ Հաճըն կ'երթայ: Պէտք էր ինքնապաշտպանութեան գործը ներդաշնակել եւ գործակցիլ Հաճընի, Մարաշի եւ Ատանայի հետ:

Թուրքերը կը սպաննեն Փառէնին եւ Սիմոնեանին ընկերակցող հայ ջորեպանները: Ֆրանսացի զինուորներ թուրքերու հետ կռիւի կը բռնուին: Գիշերային արկածախնդրութենէ ետք Փառէնն ու Սիմոնեանը Ֆրանսացի կրտսեր սպայի մը (սերժան Տիւրէ) հետ Մարաշ կը մտնեն առաւօտ կանուխ: Հաճըն գացող Արշակն ու Պօղոս Վանեցեանը ճամբան սպաննուած էին, իսկ Միքայէլը վիրաւորուած էր: Օսանը ծառի խէժով եւ մեղրով սպեղանի կը շինէ Միքայէլի վէրքին համար եւ անոր հոգ կը տանի:

Թուրքերը կը փորձէին Զէյթունը մեկուսացնել Հաճընէն

եւ Մարաշէն: Այս նպատակով, անոնք Ձէյթունէն դուրս եկող հայերը կը սպաննէին: Զօրանոցին մէջ գէյթունցիները կը ջանային բնականոն կեանք վարել: Անհոգ Տրդատի կինը տղայ մը կը ծնի: Ծերունի Թումաս կը յիշէ, թէ բռնագաղթէն առաջ հարիւրապետ Թահիֆը (այսպէս է բնագիրին մէջ - Յ. Ի.) վանքին ջուրը գետնին տակէն զօրանոց բերել տուած էր: Արամի հրահանգով, հայ պատանիները գործի կ'անցնին եւ այդ առուն կը գտնեն, որպէսզի զօրանոցը ջուր ունենայ եւ ձմեռը մինչեւ աղբիւր երթալու ամհրաժեշտութիւն չըլլայ:

1920-ի տարեմուտին թուրք Ալի Քեհեայի մարդիկը Ֆռնուզի հայոց վրայ կը յարձակին եւ Ձէյթունի կը մօտենան: Կարօն իր զինեալ տղաներով դէմ կ'ելլէ թուրքերուն: Ծամբուն վրայ Կարօն եւ տղաքը նահանջող Ֆռնուզցի հայոց կը հանդիպին: Կիներ, երեխաներ եւ անգէն տղամարդիկ յաջողած էին խոյս տալ գիշերով, մինչ քսանըհինգ հայ երիտասարդներ կռուելով կը զբաղցնէին թուրքերը: Քեմալականները Մարաշը պաշարած էին եւ շրջակայքի գիւղերուն հայերը կը կոտորէին, որպէսզի որեւէ օգնութիւն չհասնէր Մարաշի հայութեան:

Կարօն եւ իր քաջարի ընկերները Ալի Քեհեայի ճամբան կը կտրեն եւ զայն կը զգետնեն: Ալիի հարիւրեակ զինուորներուն դէմ Ֆռնուզցիները կը կռուին: Թուրքերը ցիր ու ցան կ'ըլլան ու կը փախչին: Կարօն Ֆռնուզցիները դէպի Ձէյթունի զօրանոցը կ'առաջնորդէ իբր ապաստանարան: Միլլիականները Բալենց, Բաղուրենց, Քուշուշ, Ֆռնուզ, Եէնիճէ-Կալէ եւ Արեգին գիւղերը կոտորած էին, իսկ ազատուածները դէպի Ձէյթուն կը փախչէին:

Այդ պահուն Արամ կը զգաստանայ եւ իր սխալին կ'անդրադառնայ: Որքա՛ն արդարացի էին Փառէնի եւ

Կարոյի՝ ժողովուրդը զինելու առաջարկները:

Զօրանոցին մէջ բնակող ժողովուրդը գործաւորներու խումբերու բաժնած էին: Կային ձկնորսներու, որսորդներու, ատաղձագործներու եւ ուրիշ խումբեր, որոնց աշխատանքին շնորհիւ, վերադարձած գէյթունցիք իրենց ապրուստը կը հոգային: Անոնք զօրանոցէն դուրս եկեղեցի մը կը կառուցեն անտառափայտով:

Հայ երիտասարդները թուրքին դէմ դնելու համար խումբ առ խումբ դուրս կու գան: Միքայէլը Օսանին սենեակը կ'երթայ հրաժեշտ տալու եւ ապա Կարս Պագարի կամուրջին վրայ տղոց միանալու համար: 20 Յունուար 1920-ն էր: Երբ բոլորը այդ կամուրջին տակ կը խմբուին, Միմոնեանը գանոնք կը զգուշացնէ, թէ 4000 չէթէներ Կոկիսոնէն եւ Ալպիստանէն Մարաշի վրայ յարձակելու կը պատրաստուին: Մարաշի 25,000 հայութեան կողքին միայն 2,000 Փրանսացի զինուորներ կային: Տղաքը մտադիր էին Թանուր գիւղին վրայ յարձակիլ:

Մարաշի մէջ Փառէն հայասէր սերժան Տիւրէի հետ կը գործակցի եւ հրամանատար Սապէնի դաւաճանութիւնը ի յայտ կը հանէ: Սապէնը կաշառքի փոխարէն թուրքերուն թոյլ տուած էր ձահան գետին կամուրջը գրաւել եւ անգէն հայեր սպաննել:

Սերժան Տիւրէ հրամանատար Սապէնի կը ներկայանայ, անոր հետ կը վիճի ու զայն կը սպաննէ գրասենեակին մէջ: Փառէն անցաթուղթ կը պահանջէր Ատանա մեկնելու համար: Սպաննուած հրամանատարին քարտուղարը Փառէնի եւ Տիւրէի համար անցաթուղթեր կը ձեւակերպէ ու անոնք կը մեկնին: Սապէնի դաւաճանութեան պատճառով՝ ո՛չ միայն հայեր, այլեւ՝ քանի մը տասնեակ Փրանսացի զինուորներ զոհուած էին Մարաշի եւ շրջակայքի մէջ:

Տիւրէ Փառէնի հետ ունեցած զրոյցի մը ընթացքին կ'ըսէ, թէ ինք իբր Փրանսական բանակի զինուոր շատ գաղութներու գրաւման մասնակցած է, սակայն առաջին անգամն ըլլալով կը տեսնէր, թէ Փրանսացիք չէին զինաթափեր թշնամին (թուրքերը): Ան կ'աւելցնէ, թէ շահերու վրայ հիմնուելով, Փրանսացիք ո՛չ միայն կը բարեկամանան Մուսթաֆա Քեմալի հետ, այլեւ՝ անոր դրամական վարկեր կը յատկացնեն: Փառէնը այն եզրակացութեան կը հասնի, թէ Ատանայի մէջ ինք ընելիք չունի եւ պէտք է Ձէյթուն վերադառնայ ու զինուորի, այլապէս՝ թուրքերը զինք կը մորթեն:

Վերադարձի ճամբուն վրայ Ամանոսի լեռնաշղթայէն անցնելով, Փառէն ականատես կ'ըլլայ Մարաշէն փախչող հայոց: Այսքա՛ն չարիք, այսքա՛ն խաբէութիւն: Ժողովուրդը կրկին կոտորուած էր, արտաքսուած եւ բռնագաղթեցուած: Մարաշը կրակներու մէջ էր: Փառէն կ'անցնի Փազարճըքէն եւ ուրիշ հայկական գիւղերէ, որոնք թուրքերու ձեռքն անցած էին:

Փառէնը երբ Մարաշ կը հասնի, Տիւրէին կը հանդիպի կրկին եւ հայ գիւղացիները Մարաշի մէջ Փրանսացիներու զօրանոցին շուրջի պարապ տուններուն մէջ կը տեղաւորէ: Քաղաքին հայերը եկեղեցիները ապաստանած էին: Մարաշի Ազգային Միութեան անդամները կու գան զօրանոց՝ Փրանսացի հրամանատարին հետ տեսակցելու: Փրանսական հրամանատարութիւնը յստակ կերպով կ'արգիլէ Հայկական Լեգէոնին, որ իր ազգակիցները պաշտպանէ թուրքին դէմ: արդարեւ, հայ լեգէոնականները մեկուսացուած էին: Փրանսական հրամանատարութիւնը դիմադրելու հրաման չէր տար: Զօրավար Քերեթ եւ մայրը Մորպիոն Փրանսական նենգ քաղաքականութեան ներկայացուցիչներն էին Մարաշի մէջ: Միայն սերժան Տիւրէն է, որ անկեղծօրէն կ'օգնէր

Մարաշի հայոց:

Ձանազան վայրեր հրկիզելէ յետոյ, թուրքերը կը յարձակին Մարաշի հայոց վրայ՝ Փրանսական բանակայիններու անտարբեր աչքերուն առջեւ: Տիւրէ հայոց ինքնապաշտպանութիւնը կը կազմակերպէ Փառէնի կողքին: Անհաւասար կռիւներ կը մղուին: Հայոց վիճակն անյուսալի էր: Ձմեռնային ձիւնոտ օրեր էին: Տիւրէն կը վիրաւորուի: Փրանսացի զինուորները կը սկսին Մարաշէն նահանջել: Անոնց կը հետեւին երեք հարիւր հայ մարտիկներ ու հազարաւոր հայ կիներ եւ երեխաներ:

Մարաշի Ազգային Միութիւնը օգնութիւն կը խնդրէ Ձէյթունէն, Հաճընէն եւ Ատանայէն: Մարաշէն դրկուած երկու պատգամաբերները Ձէյթունի մօտերը Կարոյի խումբին կը հանդիպին եւ Սիմոնեանին ուղղուած նամակը նոյն ինքն Սիմոնեանի կը յանձնեն: Կարոյի հրահանգով՝ իրենց երեսուն հոգինոց խումբը կ'ուղղուի դէպի Մարաշ՝ թրքական պաշարման շղթան կտրելու համար:

Սիմոնեանը եւ Փոփօն կը միանան Կարոյի խումբին, որ դէպի Մարաշ իր ճամբուն վրայ բերդի մը մէջ կը գիշերէ: Առտուն, Մանուկի հետախուզութեան շնորհիւ, տղաքը մօտէն անցնող երկու թուրքեր կը ձերբակալեն եւ անոնցմէ գաղտնիքներ կը քաղեն: Կը պարզուի, որ այս երկուքին պատկանած խումբը երկու հարիւր հոգիէ բաղկացած է եւ թէ Բերդուսի թրքացած հայեր էին անոնք: Ձեռք բերած տեղեկութիւններէն ետք, հայ երիտասարդները թուրքերուն վրայ կը յարձակին եւ անոնց ծանր վնասներ կը հասցնեն: Այնուհետեւ, Կարոյին խումբը կը շարունակէ իր ճամբան դէպի Մարաշ, որու հայութիւնը երկրորդ գաղթի ճամբան բռնած էր արդէն: Մարաշը թուրքերու ձեռքն ինկած էր: Ուստի Կարոյի խումբը Ձէյթուն կը վերադառնայ:

Զէյթունի բոլոր հայ երիտասարդները քաղաքը պաշտպանելու կը ձեռնարկեն: Մարաշի անկման ատեն տասը հազար հայ կոտորուած էր: Մնացեալները Քրանսական գօտի տեղափոխուած էին ամերիկացիներու հովանաւորութեան տակ: Արամը կը համոզուի Փառէնի եւ Կարոյի իրաւացիութեան, որոնք վստահութիւն չունէին Քրանսացիներուն նկատմամբ:

Փառէնը Զէյթուն կը վերադառնայ: Զայն տեսնելու համար, Արամ անոր սենեակը կ'երթայ, բայց հոն չի գտներ: Կը կարգայ սեղանին վրայ ձգուած անոր գրութիւնները. հայոց՝ Կիլիկիա հաստատուելու պատմութիւնն էր, մինչդեռ այժմ Կիլիկիան հայութենէ կը պարպուէր: Փառէն իր ուղեւորութեան մանրամասնութիւնները գրի առած էր իր ծոցատետրին մէջ:

Կարոյի եւ Արամի միջեւ ծագած վէճի մը պատճառով, Կարոյի խումբը Կարկալարի մէջ կը մնար: Արամը պարզ մարդ էր եւ տակաւին յոյս կը տածէր, թէ Ատանայի մէջ հայկական պետականութիւն պիտի ստեղծուէր: Փառէնը եւ Կարօն միշտ պատրաստ էին ինքնապաշտպանութեան գործին: Թրքական պատուիրակութիւն մը, Շեւքէթի գըլխաւորութեամբ, Արամի մօտ եկած էր Մարաշէն: Սակայն Կարօն եւ Փառէնը յղացած էին միեւնոյն գաղափարը՝ մաքրել Բերդաշիղ-Ֆունուզ ճանապարհը, վնասագերծել Ֆրնտըճագ-Պահչէ լեռնանցքը եւ այդ գիծով ժողովուրդը Ամանոս տանիլ: Ըստ Փառէնի, Արամին դերը ժողովուրդը կազմակերպելը պիտի ըլլար: Այսուհանդերձ, Արամը տակաւին շատ յոյսեր ունէր Շեւքէթին հետ իր հանդիպումին:

Անհամաձայնութեան այս միջնորդութիւն մէջ թեթեւ բախում մը տեղի կ'ունենայ Արամի եւ Կարոյի խումբերուն

միջեւ, սակայն ծերունի վարդապետը կը յաջողի զանոնք հաշտեցնել:

Փառէնը կրկին կ'ուղղուի դէպի Ատանա՝ Զէյթունի նկատմամբ Ազգային Միութեան, Տամատեանին եւ Սահակ Կաթողիկոսին կարծիքը շօշափելու համար: Իր ճամբուն վրայ, Օսմանիէէն դուրս, Բերդաշիղի մէջ ան կը հանդիպի սերժան Տիւրէին ու միասնաբար Ատանա կ'երթան: Փառէնը առանձինն քաղաքապետարան կը մտնէ: 1 Ապրիլ 1920-ին Ատանայի մէջ կը տարածուի Այնթապի եւ Հաճընի կռիւներուն ու պաշարումներուն գոյժը: Այդ օրը գնդապետ Պրեմոնը հիւանդ էր, ուստի Փառէն կը փափաքի կաթողիկոսին հետ տեսակցիլ: Ատանայի մերձակայ ագարակներուն մէջ հայերը զինավարժութիւն կ'ընէին: Վերջապէս, Փառէն կը տեսնէ Վեհափառը, որ յուսահատ վիճակ մը ունէր: Փառէն կը հանդիպի Տամատեանին ալ, որ Զօրավար Անդրանիկին եւ Մուսա Լերան ինքնապաշտպանութեան հրամանատարներէն Եսայի Եագուպեանին կոչ ուղղած էր Կիլիկիա գալ ու հայկական զօրք ստեղծել: Սակայն Քրանսացիք անոնց Կիլիկիա մուտքն արգելած էին:

4 Օգոստոս 1920-ին Կիլիկիոյ անկախ պետականութիւնը կը յայտարարուի: Այդ օրերուն, Հաճընը օրհասական կռիւներ կը մղէր, իսկ Այնթապի հայերը դէպի Սուրիա բռնագաղթի ճամբան բռնած էին: Ֆրանսացիք Կիլիկիոյ ինքնահռչակ ու նորաստեղծ կառավարութեան անդամները կը ձերբակալեն եւ Ալճերիա կ'աքսորեն...

Կարօն Զէյթունի շրջակայքը կը շրջի՝ սպասելով Փառէնի վերադարձին: Արամը տակաւին յոյս ունէր թուրքերու հետ միատեղ ապրելու: Ան հանդիպումներ կ'ունենար գայմազամ Շեպապի հետ, որու բերնէն լսած էր, թէ հայերը եղէգներու կը նմանին, իսկ թուրքերը՝ հովի. հովը որ կողմ որ փչէ՝

եղէգները այդ կողմ կը ծռին:

Արամի զինագործ հայրը որդիէն աւելի հեռատես էր: Ան կ'որոշէ գէնքեր շինել կրկին: 1920-ի աշունն էր:

Արամը կ'ուզէր Չէլտիկի անտէր մնացած այգեստանը ընչագուրկ գիւղացիներուն բաշխել: Այս միջոցին, իրարու սիրահարած Միքայէլն ու Օսանը կը ծրագրէին ամուսնանալ: Միքայէլ Չէլթունի մէջ գնած էր հողամաս մը, զոր պետական տոմարներուն մէջ արձանագրել տալու ինչպէս նաեւ Արամի խնդրագիրը գայմազամին ներկայացնելու համար ճամբայ կ'ելլէ դէպի գայմազամին գրասենեակը: Թուրք կառավարիչը Միքայէլի խնդրանքը կը մերժէ եւ կոպիտ ձեւով կ'ըսէ, թէ հայերը Թուրքիոյ մէջ ստացուածքի որեւէ իրաւունք չունին: Ան իր ոստիկաններուն կը հրամայէ զինաթափել Միքայէլը: Սակայն վերջինս աւելի արագ շարժելով, կը փորձէ փախուստ տալ: Գայմազամն ու անոր պահակ ոստիկանները կը հալածեն Միքայէլը եւ զայն այնպիսի նեղ կացութեան կը մատնեն, որ ան կը ստիպուի գայմազամն սպաննել: Ոստիկանները կը շարունակեն հալածել Միքայէլը: Մօտակայ գիւղէն յիսուն թուրքեր ոստիկաններուն օգնութեան կը հասնին՝ սպաննելու համար Միքայէլը, որ վիրաւոր վիճակի մէջ ինքզինք ձորը կը նետէ ու կը նահատակուի:

Միլլիականները Չէլթունի հայոց գէնքերը կը պահանջեն: Փոփօն Միքայէլի մահուան գոյժը զօրանոց կը բերէ: Հայ զինուած երիտասարդներ յարձակումի կ'անցնին Չարտախ գիւղի թուրքերուն դէմ (Չարտախը փոքր գիւղ մըն էր, 50 տուններով, բայց Չէլթունի եւ չըջկայքի վիճակը տնօրինելու լիազօրութեամբ գայմազամութիւն ունէր): Արամ իր խումբով կռիւներուն կը մասնակցի: Դիմադրող յիսուն թուրքերը հայոց հարուածներուն առջեւ կ'ընկրկին:

Արամ թուրք միլլիական սպայ մը գերի կը բռնէ, եւ հագիւ զայն դէպի զօրանոց պիտի առաջնորդէր, յանկարծ Կարօն սպան կը զգետնէ: Հայ տղաքը միլլիականներ գերի կը բռնեն: Անոնք Միքայէլի անշնչացած մարմինը իրենց հետ առնելով զօրանոց կը վերադառնան:

Ալպիստանի թրքական զօրքերուն հրամանատարը Չէլթունի հայոց ղեկավարներուն գրութիւն մը կ'առաքէ, յայտնելով, թէ թուրքերն ու Ֆրանսացիք գաղտնի համաձայնութիւն մը ստորագրած են, որով վերջիններս Կիլիկիայէն պիտի հեռանան: Ան կը գրէր նաեւ, թէ թուրք միլլիական ղեկավարութիւնը դէպի Կովկաս արշաւանք մը կազմակերպած է եւ հարաւի բոլոր զօրքերը Կեսարիա կանչուած են, ուստի Չէլթունի խռովութիւնը պէտք է յետաձգել:

Արամը, Կարօն, Թագաճեան վարդապետը եւ Սիմոնեանը ժողով մը կը գումարեն ինքնապաշտպանութեան հարցը քննելու համար: Վարդապետը կ'առաջարկէ ժողովուրդը Կիւրէտտիինի բերդը տեղափոխել, իսկ կռուող այրերը զօրանոցին մէջ համախմբել: Կարօն կը ծրագրէ ջրամբարներ կառուցել:

Չէլթունցիք ինքնապաշտպանական կռիւներու պատրաստութիւններ կը տեսնեն: Տասը օր ետք, թուրք թշնամին կը յարձակի հայոց վրայ: Նոր տարուան նախօրեակի օրերն են: 1921 թուականը շատ մօտ էր: Գնդապետ Հագգըն կու գայ հայոց մօտ՝ Արամը տեսնելու: Արամ կը մերժէ զայն ընդունիլ եւ հայ աղաներուն մօտ կը ղրկէ: Վերջիններս Հագգըրի անոյշ խօսքերէն կը խաբուին: Արամ թուրքերուն բոլոր առաջարկները կը մերժէ եւ կը շարունակէ ինքնապաշտպանութեան կռիւները թշնամիին դէմ, որ հիւսիսը դիրքեր բռնած էր: Այդ միջոցին, Փառէնը կ'երեւայ

Զէյթունի հարաւային կողմէն: Ան թուժասին կը հանդիպի: Փառէն նամակ մը ղրկած էր Զէյթուն՝ խորհուրդ տալով դէպի Այնթապ նահանջել: Բայց նամակը տեղ չէր հասած:

Թուրքերը հայոց հինգ ժամ պայմանաժամ տուած էին: Կռուող զէյթունցի բոլոր պատասխանատուները վճռած էին շարունակել հերոսամարտը: Սակայն Մարաշէն եկող ներկայացուցիչներուն խորհուրդով եւ կարգադրութեամբ, ժողովուրդէն մաս մը, այդ թիւին՝ վարդապետը, կը յանձնուի: 741 հոգի կը հաշուէին, մեծ մասամբ կիներ եւ մանուկներ: Ճակատին վրայ թրքական թնդանօթները կ'որոտան: Կանոնաւոր բանակն ու պաշարօգուքները կը պատրաստուին յարձակման: Թշնամին զօրանոցը գրաւել կը փորձէ: Թուրքերը կ'առաջարկեն վարդապետին՝ բերդին մօտ երթալ ու կռուողները անձնատուր ըլլալու համոզել: Հայր Սուրբը թէեւ կը մօտենայ զօրանոցին, բայց կռուողները կը քաջալերէ եւ խորհուրդ կու տայ շարունակել պայքարը:

Արամ ժողով կը գումարէ կռուողներուն հետ եւ կ'որոշէ Բերդաջիղ (Ղալաշուղ) բարձրանալ: Կարօն այս որոշումին դէմ կը կենայ, որովհետեւ նախապէս որոշուած էր պաշարման օղակը ճեղքել եւ ընթանալ դէպի Ամանոս:

Տեղափոխուողներուն գաղտնի բառը «կիւսող»ն էր, որ Զէյթունի բարբառով աքաղաղ կը նշանակէ: Թուրքերը թնդանօթներով կը ռմբակոծեն զօրանոցը եւ ապա կը յառաջանան: Զօրանոցը մարտիկներէն պարպուած էր, միայն կիներ, երեխաներ եւ ծերունիներ կային, թիւով 150 հոգի: Թուրքերը զանոնք բոլորը միասին փայտաշէն եկեղեցիին մէջ լեցնելով՝ կրակի կու տան: Այրուողներուն մէջ էր նաեւ Օսանը, որ կը յաջողի ձեւով մը ինքզինք դուրս նետել եւ թուրք սպայի մը փաթթուիլ եւ զայն իրեն հետ միասին այրել: Այս տեսարանին առջեւ՝ թուրք

զինուորները կ'ընկրկին եւ փախուստի կը դիմեն: Անդին, թուժասը այգեստանին մէջ աշխատած ատեն կը սպաննուի երկու թուրք զինուորներու կողմէ:

Զէյթունի ազատամարտիկները լեռներուն վրայ կը մարտնչին թուրքին դէմ՝ վասն կեանքի եւ ազատութեան: Պայմանները շատ ծանր են, թշնամին՝ բիրտ ու դաժան: Թրքական զօրքը Բերդաջիղին ուղղութեամբ կը քայլէ: Զէյթունի հերոսները մութին մէջ կը նահանջեն դէպի հարաւ՝ դէպի Ամանոսի լեռները: Կարօն, Արամը, Սիմոնեանը եւ Փառէնը միասին են: Անոնք Սաքիի լեռնանցքէն եւ ապա ամայի Խնձորասարէն կ'անցնին: Ֆունուզի արեւմտեան կողմը Նշուտ գիւղէն միայն մոխրակոյտեր մնացեր էին:

Հազար թուրք զինուորներ յարձակումի եկած էին զօրանոցին վրայ: Անոնցմէ մաս մը Սաքիի լեռներուն վրայ դիրքեր բռնած էր: Հոս հայ ազատամարտիկները կռուի կը բռնուին թուրքերուն դէմ: Թշնամին կը նահանջէ եւ կ'անհետանայ: Արամն իր խումբով կորսուած էր: Կարօն զանոնք կը փնտռէր: Անտառը սքանչելի թաքստոց մըն էր: Սակայն կրկին մարտի կը բռնուին յարձակողթուրք զինուորներուն հետ: Այս ընդհարումներուն Կարօն կը զոհուի: Հայ մարտիկները զիրար կը կորսնցնեն: Անոնցմէ Զապէլ անունով աղջիկ մը քաջարի կերպով կը կռուի: Թէեւ թուրք խուժանը զիրենք կը հալածէր, Զապէլ կը յուսար հասնիլ Մարաշ, ուր ամերիկացիք կայք հաստատած էին: 1921-ի Յուլիս ամիսն էր: Սաքիի սարերուն վրայ քահանան ծանրօրէն կը վիրաւորուի: Փառէնը, գթալով անոր վրայ, զայն կը սպաննէ: Մահու եւ կենաց երթ մըն էր դէպի հարաւ: Խումբերն իրարմէ անջատաբար կը յառաջանային՝ մերթ կռուելով, մերթ հանգստանալով: Արամ կ'առաջարկէ Զէյթուն վերադառնալ եւ հոն մեռնիլ: Կրկին թրքական


յարձակում եւ Արամը այս անգամ կը նահատակուի: Հայոց բոլոր խումբերը Կիւրէտտինի բերդը կը վերադառնան, բոլորը միասին վանքը կը մտնեն ու կ'աղօթեն: Հոս Փոփօն եւ Կատարինէն կը պսակուին: Հայ հալածականները կրկին դէպի հարաւ կ'ընթանան եւ Դաշտային Կիլիկիոյ մօտիկ Քիւրթուլ գիւղը կը հասնին 25 Օգոստոս 1921-ին: Գիւղի անտառներուն մէջ անոնք թուրք խուժանէն կը շրջապատուին: Աւելի բարձրերը կ'ելլեն կռուելու համար: Երբ հայ կռուողներու խումբը Ամանոսի լեռները կը մտնէ, հոն վարժապետ Փառէնը Ֆրանսացի սերժանտ Տիւրէին կը հանդիպի: Տիւրէն հայոց խումբին կը միանայ Քիլիս երթալու համար: Հայերը քանի մը տասնեակ զոհեր տուած էին: Ազատուողները Փառէնի առաջնորդութեամբ իրենց ճամբան կը շարունակեն դէպի Քիլիս:

Վերջապէս, հայոց խումբը Տիւրէի եւ անոր զինուորներուն օգնութեամբ Քիլիս կը մտնէ: Անոնք իրենց զոհուած ընկերներուն մարմինները իրենց հետ բերած էին: Զէյթունի ինքնապաշտպանները Քիլիսի հայկական եկեղեցւոյ մէջ կ'աղօթեն: Անոնք այլեւս ազատ էին, թէեւ բնօրրանի կորստեան կսկիծով կ'այրէին...

Գուրգէն Եանիկեան, «Նպատակ Եւ Ճշմարտութիւն», հրատարակութիւն Հայկական Ժողովրդային Շարժման Հայաստանի Ներկայացուցչութեան, խմբագիր՝ Օֆելիա Միքայէլեան, Երեւան, 1994, միջակ չափի 209 էջ

«Ճրեզնօ Պի» օրաթերթն իր 25 Յունուար 1998-ի թիւին մէջ կը գրէ:

«27 Յունուար 1973-ին երկու թուրք դիւանագէտ սպաննած Գուրգէն Մկրտիչ Եանիկեանի դատախազ Տէյվիտ Մինէրը յօդուածով մը անդրադարձած է դատաւարութեան եւ ընդունած, որ ինք սխալ գործած է, երբ արգիլած է լսել Հայկական Ցեղասպանութեան մասին վկայութիւնները դատաւարութեան ընթացքին»:



Յօդուածին սկիզբը դատախազը անդրադարձած է Եանիկեանի «ահաբեկչական արարք»ին, որ տեղի ունեցաւ Սանթա Պարպարայի «Պալթիմոր» պանդոկին մէջ, ուր Գուրգէն Եանիկեան նուէրներ յանձնելու պատրուակով հանդիպումի հրաւիրեց Լոս Անձելոսի մէջ թուրքիոյ ընդհանուր հիւպատոսն ու փոխ-հիւպատոսը, եւ երկուքն ալ սպաննելէ յետոյ իշխանութեանց յանձնուեցաւ:

Եանիկեան ոգեւորուած էր Սողոմոն Թեհլիրեանով, որ 1921-ին սպաննած էր «թուրքիոյ մէջ բոլոր հայերն սպաննելու հրաման արձակած թալաւթ փաշան»: Թեհլիրեանն իր դատաւարութիւնն օգտագործած էր

Հայկական Հարցը եւ Հայոց Յեղասպանութիւնը միջազգային հասարակութեան ներկայացնելու համար:

Եանիկեանը բուռն ցանկութիւն ունէր իր դատաւարութիւնը դարձնել «Հայկական Նիւրենպէրկ»ի նախաքայլը, որովհետեւ թրքական իշխանութիւնները չեն ընդունիր Հայկական Յեղասպանութիւնը:

«Ես էի Եանիկեանի դատաւարութեան դատախազը, եւ հայերն իրենց յոյսը վրաս դրած էին», - կը գրէ Մինէլըր, աւելցնելով, թէ Եանիկեանի փաստաբաններէն Վազգէն Մինասեանը իրեն կոչ ուղղած էր Յեղասպանութեան դէմ վճիռ մը արձակել՝ իրեն յանձնելով Լինտի Աւագեանի հեղինակած ու Սողոմոն Թեհլիրեանի մասին պատմող «Խաչը եւ Մահիկը» գիրքը: «Աշխարհի մէջ արդարութեան խորհրդանիշ ըլլալու առիթ ունիս», - ըսած էր Մինասեանը դատախազին:

Եանիկեանը վեց օր շարունակ կը ներկայացնէ Հայկական Յեղասպանութեան փաստերը՝ նկարագրելով իր ընտանիքի քսանվեց անդամներուն սպանութիւնը:

Ի՞նչ կ'ըսէ Գուրգէն Եանիկեան.

«Հայեացքս ինկած էր պատին վրայ կախուած ծնողներուս նկարներուն: Շատուոր էինք, բայց հիմա մնացած ենք ես եւ քոյրս, որ ինձմէ երկու տարի աւելի երիտասարդ է: Տեսայ եղբօրս նկարը, զոր երկու թուրք ոճրագործներ մորթած էին: Մայրիկս եւ ես ներկայ էինք ու ոչ մէկ օգնութիւն ցոյց տուինք եղբօրս, եւ ոչ ալ կրնայինք: Ես ինն տարեկան էի եւ մայրիկս իր ձեռքերով սեղմած էր բերանս, որ ձայն չհանեմ: Էրզրում էինք, մեր տան ախոռին մէջ: Աչքերս կը փակէի, աշխատելով փոխել մտածումներուս ընթացքը, ապա կիսաբաց աչքերով կը նայէի, թէ արդեօք այդ տեսարանը, որ մարմինս կը փշաքաղէր, անհետացա՞ւ:

Ոչ սակայն, եղբօրս պատկերը չէր անհետանար, ան կը մեծնար եւ յանկարծ ճչաց: Ո՞վ, ե՞ս, թէ՞ ան, չեմ գիտեր: Ես տեսայ այն տեսարանը, որ 70 տարի առաջ ինչպէս անասունի մը՝ գլուխը բարձրացած, ու կեռ դանակը անոր կոկորդին վրայէն անցաւ, եւ շատրուանի պէս արիւն դուրս վիժեց: Այս անգամ զգացի որ ես ճչացի: Բազկաթոռէն վեր ցատկելով՝ նկարին մօտեցայ եւ կ'ուզէի ձեռքերովս ծածկել արիւնը: Տեսիլքը անհետացաւ: Սառած քրտինքով ծածկուած դէմքիս կը նայէր ժպիտը երեսին այն անձը, որ ժամանակին մայրիկիս հետ միասին գտած էր զիս, կէս սառած վիճակով, ձիւնին վրայ, երբ կոտորածէն ետք մերինները էրզրումէն դէպի ռուսական սահման կը փախչէին:

Ձիս ճամբուն վրայ կորսնցուցած էին եւ ոեւէ մէկը չէր ուզեր վերադառնալ գտնելու համար վեց ամսական, տակաւին չմկրտուած երեխայ մը, որ անուն չունենալուն պատճառաւ՝ «Ջարդի Տղայ» կը կոչէին: Ես բոլոր եղբայրներս կը սիրէի: Սիրելէս զատ, Յակոբ եղբօրս հանդէպ որոշ պարտականութեան մը զգացումն ունէի: Առանց անոր, թերեւս ես, դեռ կեանք չտեսած, արդէն սառած պիտի ըլլայի էրզրումի լեռներուն վրայ:

Բայց միայն իմ եղբա՞յրն էր միթէ զոհուած՝ այդպէս անխիղճ կերպով մորթուելով: Միթէ՞ իմ ցեղիս պատկանող տասնեակ հազարներով մարդիկ նոյն ճակատագրին չէին ենթարկուած գազանին կողմէ: Քանի՛-քանի՛ ուրիշ ազգեր ալ զոհը եղած էին նոյն գազանին, որ թուրք կառավարութիւն կը կոչուի:

Յիշողութիւններս զիս կը տանէին աշխարհի չորս կողմերը: Ես կը մեծնայի, կեանքի ասպարէզ կը մտնէի, կ'ամուսնանայի, կ'աշխատէի եւ որպէս մասնագէտ (ճարտարապետ)

անուն կը շահէի: Դրամ կը վաստակէի մեծ գումարներով եւ արդար քրտինքով: Ամուսնացած էի բժշկուհի Շուշանիկ Քէօմիւրճեանի հետ: Անոր պապերը Ռուսիա գաղթած էին եւ հոն Նոր Նախիջեւան քաղաքը, Տոն գետի ափերուն վրայ, Ռոսթովի մօտ հիմնած էին Խրիմի հայոց հետ միասին: Տիկնոջս եղբայրներէն մէկը Ռոսթովի դրամատան կառավարիչն էր: Ան ինծի Մարտիրոս Սարեանի մէկ յայտնի նկարը՝ «Արեւելեան Սենեակ»ը նուիրած էր, որ մեզի հետ Ամերիկա բերինք:

Ամերիկայի մէջ տիկնոջս եւ ուրիշ բարեկամներու հետ հետամուտ եղայ Հայկական Յեղասպանութեան մասին շարժապատկեր մը պատրաստելու գործին: Ես արիւնով չէ, որ կ'ուզէի ցոյց տալ աշխարհին այն խայտառակ դրութիւնը, որ մենք ունինք մինչեւ այսօր: Սակայն ամերիկեան իշխանութիւնները արգելք եղան այս գործին իրագործման: Իմ նպատակս մարդկային խիղճն արթնցնել էր, ստիպել, որ ցեղիս դէմ կատարուած ոճրագործութիւնը անպատիժ չմնայ, ստիպել, որ գողերը իրենց գողցածը տէրերուն վերադարձնեն:

Այս գաղափարը աւելի արժէքաւոր եւ գնահատելի կը գտնէի քան հրապարակած եօթը գիրքերս»:

Գիրք-յուշագրութեան մնացեալ էջերուն մէջ հեղինակը՝ Գուրգէն Եանիկեանն իր բանտարկութեան եւ դատավարութեան մանրամասնութիւնները կը նկարագրէ:

Ստորեւ հատուածներ Գուրգէն Եանիկեանի մասին «Կենսագրական Համառօտ Ակնարկ»էն (էջ 11-20).

Գուրգէն Եանիկեան ծնած է 1895-ին, Կարին: 1896-ի դէպքերուն, անոր ընտանիքը քսանութը անդամներով երկու շաբաթ պարսկական հիւպատոսարանը կ'ապաստանի: Ապա ճամբայ կ'ելլեն դէպի ռուսական սահմանը՝ Կարս: Վեց

ամսական երեխայ Գուրգէնը յոգնած եւ սառնամանիքէն անզգայ դարձած մօր գիրկէն սահելով՝ ճամբան կ'իյնայ ձիւնին վրայ: Գուրգէնի մայրն ու Յակոբ եղբայրը կը վերադառնան զայն գտնելու: Մօտաւորապէս վեց քլմ. անդին Գուրգէնը կ'իսամեռ վիճակով գտնելով, կ'առնեն ու կը վերամիանան խումբին, որ Կարս կը հասնի: Հայրը Կարսի մէջ Պարսկաստանի հիւպատոսին հետ բարեկամութիւն կը հաստատէ եւ փոքրիկ Գուրգէնը պարսկահպատակ կը դառնայ:

Տարիներ ետք, ինը տարեկան Գուրգէնը, մայրը եւ Յակոբ եղբայրը գաղտնի կերպով կ'երթան Կարին՝ իրենց տան ախոռին մէջ թաղուած ոսկեղէնն ու փաստաթուղթերը բերելու: Ախոռին մէջ երկու թուրքեր Յակոբը կը մորթեն: Այս տեսարանին պատկերը յաճախ կ'երեւայ Գուրգէնի աչքերուն առջեւ՝ անոր ամբողջ կեանքին ընթացքին: 1973-ին երկու թուրք դիւանագէտներ սպաննելէ յետոյ միայն՝ այս պատկերը կ'անհետանայ իր աչքերուն առջեւէն (ահաւաստիկ հոգեցնցման (թրոմա, trauma) ծայրայեղ պարագայ մը, զոր ըմբռնելու համար հոգեբոյժ ըլլալու պէտք չունինք - խմբ.): Կարինի մէջ Պարսկաստանի հիւպատոսը Գուրգէնն ու մայրը անձամբ Կարս կը տանի: Գուրգէն իր մօր եւ Սաթենիկ քրոջ հետ ժընեւ (Չուիցերիա) կը մեկնի՝ կազդուրուելու համար: Հոն Գուրգէնը Փրանսական վարժարան մը կը յաճախէ: Ժընեւի մէջ իրենց ամէնօրեայ ժամադրավայրը Հ. Յ. Դաշնակցութեան օրկան «Դրօշակ»ի խմբագրատունը կ'ըլլայ: Երեք տարի ետք Կարս կը վերադառնան: Գուրգէն իր Լեւոն եղբոր եւ Սաթենիկ քրոջ հետ կը յաճախէ Նոր Նախիջեւանի (Տոնի Ռոսթով, Հիւսիսային Կովկաս) հայկական դպրոցը, ուր կը ծանօթանայ հայ գրականութեան, հայոց պատմութեան եւ ռուս գրականութեան: Գուրգէնի ուսուցիչներէն էին հայագիտութեան տիտան Հրաչեայ

Աճառեանը, Բաբուրդեանը, Երուանդ Շահագիրը, Չէօրէքճեան սարկաւազը (յետագային՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Զ.) եւ Մարինեանը:

Նոր Նախիջեւանի հայկական դպրոցն ակարտելէ յետոյ, Գուրգէնն ու Լեւոնը Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը կը յաճախեն: Չայն ակարտելէ յետոյ, Գուրգէնը Մոսկուայի համալսարանի ճարտարապետութեան դպրոցը կը մտնէ:

Երբ 1914-ին Ա. Համաշխարհային Պատերազմը կը պայթի, Գուրգէն Եանիկեան կը մտածէ, թէ հայ ժողովուրդի եւ իր եղբօր՝ Յակոբի վրէժը լուծելու ժամը հասած է: Ան Թիֆլիսի մէջ կ'անդամագրուի Դրոյի կամաւորական խումբին եւ մօտէն կը ծանօթանայ Համազասպի ու Քեռիի (Արշակ Գաւաֆեան) հետ:

Կրակ դարձած Գուրգէնը թրքական պահականոցի մը գէնքերու մթերանոցը կը պայթեցնէ երկու ձեռնառումներով ինք ալ վիրաւորուելով: Կռնակին երեք ոսկորները կը կոտորին: Այս քաջագործութեան համար, Եանիկեան ռուսական իշխանութեանց կողմէ կը պարգեւատրուի: Կը պարգուի, թէ Գուրգէնի պայթեցուցած մթերանոցը թրքական բանակի զինամթերքի մեծ կեդրոններէն էր: Թիֆլիսի զինուորական հիւանդանոցին մէջ երեք ամիս բուժուելէ յետոյ, Գուրգէն Եանիկեանը բանակի շարքերը կը վերադառնայ:

Թուրքերը 1918-ի Ապրիլին կը գրաւեն Կարսը, եւ Գուրգէնը, ծնողքն ու հարազատները Թիֆլիս կ'ապաստանին: Սակայն երբ թուրքերը Կարսէն կը նահանջեն, քաղաքի հայկական մայր եկեղեցին հրոյ ճարակ կը դարձնեն՝ հոն ապաստանած 3000 հայերով հանդերձ: Գուրգէնի հօր քարիւղի (նաւթ) գործարանը կ'այրի ու կը քանդուի: Գուրգէն Եանիկեան Կարսի քանդումին իբր ականատես կը գրէ:

«Ամբողջ կեանքիս պատմութեան մէջ, որպէս ջարդերու ականատես-վկայ, իմ վրաս ամէնէն շատ սարսափ ազդող տեսարաններուն մէջ ամենադժոխային եւ ահարկու պահը պարեցայ Կարսի մէջ, որու ազդեցութիւնն անջնջելիօրէն քանդակուած է յուշերուս եւ հոգեկան ապրումներուս վրայ՝ սարսուռի եւ ըմբոստացումի պատճառ դառնալով: Այդ օրէն ի վեր, ուխտեցի թուրքը ցնցելը, եւ վրէժը իմ կեանքիս գլխաւոր նպատակը եղաւ: Երբ հայոց մեռելները սայլերով կը փոխադրէինք, յանկարծ երկրորդ սարսափելի տեսարանի մը առջեւ գտնուեցայ, երբ տեսայ փեսայիս՝ Խաչիկին եւ անոր եօթը տարեկան որդւոյն դիակները: Քարացած եւ աչքերս սառած մնացի: Արցունքներս չորցած էին եւ ես երկա՛ր դիտեցի: Տեսարաններ, որոնք կարելի չէ մոռնալ: Անոնք իմ ամէնօրեայ ապրումներուս եւ ծրագիրներուս մղումը տուին»:

Գուրգէն Եանիկեանի առողջութիւնը հոգեպէս եւ մարմնապէս կը վատթարանայ: Հրամանատարին որոշումով, ան Թիֆլիս կը ղրկուի՝ կազդուրուելու համար:

1917-ի համայնավարական յեղափոխութենէն ետք, ռուսական բանակը կը սկսի նահանջել եւ կազմալուծուի: Գուրգէն Եանիկեան Մոսկուա կը մեկնի շարունակելու համար իր կիսատ թողած ուսումը: Բացառիկ յաջողութեամբ կ'աւարտէ համալսարանը եւ ճարտարագէտի վկայական կը ստանայ: Ուսումը կը կատարելագործէ Չուիցերիոյ մէջ: Թիֆլիս վերադառնալէ յետոյ կ'անցնի Խարքով, ուր պատասխանատու պաշտօնի մը կը նշանակուի: Յեղափոխութեան շրջանին Գուրգէնի մէկ եղբայրը կը գնդակահարուի, հայրը կը մահանայ, միւս եղբայրները կը ցրուին եւ մայրը թափառական կը դառնայ: Գուրգէն կը յաջողի մայրը իր մօտ՝ Խարքով բերել: Եանիկեան հոս

կ'ամուսնանայ քաղաքի յայտնի հայ ընտանիքներէն Քէօմիւրճեաններուն դստեր՝ բժշկուհի Շուշանիկի հետ:

Սթալինեան շրջանին Գուրգէն Եանիկեան կ'անցնի Թաւրիզ (Իրան) եւ հոն կը հաստատուի: Իրանի մէջ ան Դաշնակիցներուն համար Պարսից Մոցէն մինչեւ խորհրդային սահման ճանապարհաշինութեան մէջ մեծ դեր կը վերցնէ:

Բ. Համաշխարհային Պատերազմէն ետք ամերիկացիք Գուրգէնին եւ անոր տիկնոջ ամերիկեան քաղաքացիութիւն կը շնորհեն: Երկուքով Ա. Մ. Ն. կը հաստատուին:

Ընթերցողին արդէն յայտնի է Գուրգէն Եանիկեանի վրէժխնդրական գործողութիւնը: Ան կը մահանայ Ա. Մ. Ն.ի մէջ՝ 27 Փետրուար 1984-ին (գիրքին մէջ ամսանունը սխալ է տպուած՝ Մարտ - Յ. Ի.):

Մկրտիչ Սարգսեան, «Խաչուած Քաղաքը» (վէպ),
խմբագիր՝ Դաւիթ Սարգսեան, «Հայաստան»
հրատարակչութիւն, Երեւան, 1996, փոքր չափի 188 էջ

«Խաչուած Քաղաքը» վէպին հեղինակը՝ Մկրտիչ Սարգսեան թէեւ որոշ արկածայնութիւն հաղորդելու նպատակով նորամուծութիւններ կատարած է, սակայն ան անձամբ ծանօթ եղած է վերապրած իր հերոսներէն քանի մը հոգիին:

Եղիսաբէթ Սիրունեանը, որ Ջեբէթ ալ կը կոչուէր, ճաւախքէն Ռուսիա գացած էր ուսման համար: Երբ ան իր մօր մահուան գոյժը կ'առնէ, իր ամուսնոյն՝ պուլկարացի Սերկէյի հետ ճաւախք կը վերադառնայ 1917-ին, Քերենսքիի իշխանութեան օրերուն: Քաղաքին ու գաւառին հայ եւ վրացի բնակիչներուն կեանքը վտանգուած էր ռուսական բանակին նահանջելով: Քաղաքին մէջ լենինեան գաղափարախօսութեամբ ոգեւորուած միակ անձը պատմութեան դասատու Նորայր Նորունին էր: Ան իր շուրջը համախոհներ հաւաքելու ճիգ կը թափէր, բայց քաղաքին մտաւորականութեան մէջ ան հետեւորդներ չէր գտներ: Միւս կողմէ, հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցիչ՝ դաշնակցական Մեհրաբ Չոբանեանը աւելի ազգային կեցուածքով իր շուրջ դաշնակցական համախոհներ հաւաքելով ինքնապաշտպանութեան կը պատրաստէր ժողովուրդը: Ջեբէթ այս խումբին մէջ գործունեայ դեր մը



կը կատարէր: Անոնց տան մէջ ժողովներ կը գումարուէին թիֆլիսէն եկած պատուիրակներու հետ: Հայ եւ վրացի բնակիչները ինքնապաշտպանութեան կը պատրաստուէին թուրքին դէմ, քանզի Վեհիպ փաշան իր զօրքով Ճաւախքի կը մօտենար:

Ճաւախքի՝ թրքաբնակ եւ քրտաբնակ գիւղերով շրջապատուած Կումպուրտա գիւղը 1918-ի Մայիսին կը սկսի դէմ դնել թշնամիին՝ Չարմայր Խանոյեանի ղեկավարութեամբ: Երբ ինքնապաշտպաններուն փամփուշտը վերջանալու վրայ էր, Չարմայր նոր հնարամտութեամբ մը գիւղին նաւթի պաշարը կ'օգտագործէ. կռուողները աթարի դէզերէն մեծ գունդեր կը կազմեն, զանոնք նաւթով կը թրջեն ու կրակի տալով կը նետեն դէպի ձորը՝ նաքալաքեն եւ Մարգաստան քրտական գիւղերուն վրայ, որոնք հրոյ ճարակ կը դառնան:

Եղիսաբէթ Ախալքալաքի պատուիրակութեան կազմին մէջ, իր ամուսնոյն հետ կ'երթայ Ախալցխայի գաւառի Տամալա գիւղը, որ թրքական քսան գիւղերով շրջապատուած էր: Եղիսաբէթ Ախալքալաքի եւ Ճաւախքի ուրիշ բնակավայրերու հետ ամէնօրեայ կապի մէջ էր: 1918-ի գարնան Արսէն Պետրոսեանի 19 հոգինոց խումբը թրքական հրոսակներուն առջեւ կը փակէ Տամալայի ճամբան եւ բռնն կռուի մէջ կը մտնէ անոնց հետ:

Նոյն այս պատուիրակութիւնը, որուն Եղիսաբէթ կ'ընկերանար, ուրիշ հայկական եւ վրացական գիւղեր այցելելէ յետոյ Ախալքալաք կը վերադառնայ բարձր տրամադրութեամբ:

Սակայն, հայաբնակ գիւղերը գէնքի պէտք ունէին:

Ախալցխայի գաւառը, ինչպէս նաեւ Ճաւախքի Ախալքալաք քաղաքը հերոսական կռիւներ կը մղեն թուրքերուն դէմ: Հայերն ու վրացիները Ախալցխան բնաւ չեն լքեր եւ զայն

կը պաշտպանեն, հակառակ անոր որ 1918-ի կէսերուն Վրաստանի մենչելիկները Ախալցխան թուրքերուն կը զիջին հարկադրաբար: Ախալցխայի եւ անոր գաւառին բնակիչները գաղթի ճամբան չեն բռներ, այլ՝ ժողովուրդն իր տեղը կը մնայ ու կը դիմադրէ: Սակայն Ախալքալաքը, հակառակ իր ժողովուրդին ցուցաբերած հերոսութեանց, տեղահան կ'ըլլայ: 1918-ի Ապրիլի վերջերը եւ Մայիսին Ճաւախքը կը պարպուի իր հայ բնակչութենէն, որ Մանգլիս եւ թիֆլիս կ'ապաստանի: Գաղթի ճամբաներուն վրայ շատերը հիւանդութիւններէ եւ տիրող գէշ պայմաններէն ազդուելով կը մահանան: Ճաւախքի 20 հազարնոց հայութիւնը կը բռնագաղթէ: Յետագային այս թիւին միայն կէսը կը վերադառնայ Ճաւախք: Այսուհանդերձ, թուրքերու գրաւած Ճաւախքի մէջ խումբ մը քաջեր կը մնան եւ կը կռուին:

1918-ի Մայիսին երբ թրքական թնդանօթները կը գողան Ախալքալաքի վերեւ, ճաւախքցիք խուճապի կը մատնուին: Ճաւախքի Մաճատիա գիւղին առջեւ, երեք հարիւր հոգիէ բաղկացած հայ կռուողներու գունդ մը Սեւ Արսէնի ղեկավարութեամբ խրամատներու մէջ կը կռուի թուրքերուն դէմ: Անոնք կենաց-մահու օրհասի մէջ էին: Այս տղոցմէ քանի մը հոգի կը յաջողի քանդել Բաւրա գիւղին կամուրջը՝ թշնամիին յառաջխաղացքը կասեցնելու կամ ուշացնելու համար: Թուրքերը աւելի կ'ուշանան, սակայն յարձակողականի կ'անցնին հազարապետ Օմարի հրամանատարութեամբ: Հարիւրապետ Հէյտարը կը սպաննուի: Թուրքերը 200 մեռեալ կը թողուն կռուին վայրը: Բայց հայ տղաքը շատ կը տուժեն եւ կը նահանջեն: Քաղաքը հայերէն դատարկուած էր, թէեւ շատ քիչ տեղեր թաքնուած հայեր կային: Թուրք զինուորներն ու խուճանը քաղաքին մէջ կը շրջէին: Հայ տղոցմէ շատեր տակաւին

պահուրտած կը մնային քաղաքին տուններուն մէջ: Անոնք կը սպաննեն թուրք տասնապետ Ումուտը, որ տունէ տուն կը պտըտէր եւ ողջ մնացած հայերը կը սպաննէր: Գաւառներու թուրք խուժանը զինուորներուն հետ Ախալքալաք քաղաքը կը կողոպտէր:

Թուրքերը լքուած քաղաքին մէջ կը շրջէին՝ նորանոր առարկաներ գտնելու եւ կողոպտելու յոյսով: Անոնք արիւնաթաթախ դիակներու եւ հագուստներու մէջ պրպտումներ կը կատարէին: Հայ երիտասարդները իրենց պահուրտած տեղերէն անձայն եւ անաղմուկ կերպով մօտենալով թուրք կողոպտիչներուն, կը սպաննէին զանոնք: Երկու տասնեակ թուրքեր այս ձեւով ոչնչացուած էին: Տղաքը կը վերացնեն նաեւ թուրք ոստիկան մը, որ հայ մանուկի մը գլուխը ծառի մը կոճղին զարնելով փշրած էր:

Ախալքալաքի մէջ, Եղիսաբէթն ու Սերկէյը գերի ինկած էին թուրքերուն ձեռքը եւ իրենց տան մէջ բանտարկուած: Թուրք սպայ Նազըմը շատ կը փափաքէր ամուսնանալ Եղիսաբէթին հետ: Այս նպատակով Նազըմը Եղիսաբէթի տան մէջ կ'անցընէր իր ժամանակը՝ զրուցելով անոր հետ: Այս միջոցին, հայ բռնագաղթուածները ողբերգութիւն կ'ապրէին Ախալքալաքէն Թիֆլիս երկարող ճամբուն վրայ: անօթութիւն, սով, հիւանդութիւններ եւ այլ դժուարութիւններ անոնց կ'ընկերակցէին:

Խոսպիա գիւղին մօտ, Սեւ Արսէնը իր Ֆետայիներով կը շրջապատէ թրքական բանակի զօրամաս մը, որ իրեն հետ կը տանէր իրենց առեւանգած հայ երեխաները: Տասնապետը կ'ընդդիմանայ հայ տղոց, բայց Սեւ Արսէն տեղն ու տեղը կը սպաննէ զայն: Այս դէպքին վրայ, թուրք զինուորները մէկ առ մէկ իրենց զէնքերը կը յանձնեն եւ գերի կ'իյնան հայ Ֆետայիներուն ձեռքը: Տասներկու թուրք զինուորներ, կապուած, կը հետեւին հայ տղոց, որոնք մօտակայ վայրերէն

ոչխարներ կը գրաւեն, զանոնք կը մորթեն եւ անոնց միսով երեխաները կը կերակրեն:

Թուրքերը մտադրած էին Թիֆլիսը գրաւել, սակայն Ախալցխայի եւ Ախալքալաքի մէջ հայ Ֆետայիներուն դիմադրութեան հանդիպած էին: Հայ մարտիկներուն այս յարձակումներէն վախնալով, թուրքերը Եղիսաբէթն ու Սերկէյը արագօրէն իրենց հետ կը տանին Ախալքալաքէն: Թրքական այս խումբը Օմար փաշայի հրամանով կ'ընթանար: Անոնք Եղիսաբէթը Զէյնապ կը կոչէին: Հայ տղաքը այս խումբին կը հետեւէին եւ անոնց բոլոր շարժումները կը լրտեսէին: Յարմար առիթով մը հայ Ֆետայիները յանկարծակի յարձակում մը կը գործեն եւ Եղիսաբէթն ու Սերկէյը կ'ազատեն թուրքերուն ձեռքէն: Ճեմալ անունով թուրք սպայ մը հազարապետ Օմարն ու ընկերները կը հեռացնէ եւ գերի իյնալէ կ'ազատէ զանոնք:

Այս միջոցին թուրքերը, թէ՛ խուժան եւ թէ՛ զինուոր, Ախալքալաքի կողոպուտը կը շարունակէին: Անոնք իրենց կողոպտած ապրանքները թրքական գիւղերը կը փոխադրեն ձիերով, սայլերով եւ հետիոտն: Թուրք ամբօխը կորիսի կամուրջը չհասած, անծանօթ զինեալներու կը հանդիպի: Անոնք ժողովուրդին կը հրամայեն թալանը տեղւոյն վրայ ձգելով, հեռանալ: Ամբօխին մեծաւորը՝ ծերունի թուրք մը, կ'ընդդիմանայ զինեալներուն եւ տեղն ու տեղը կը գնդակահարուի: Անծանօթ զինեալները հայ վրիժառու երիտասարդներ էին, որոնք կը սկսին կրակել ամբօխին վրայ եւ հրացանաձգութիւն մը կը սկսի: Այս կռուին մէջ շատ թուրքեր կը սպաննուին: Լուրը Օմար փաշային կը հասնի: Հայ տղոցմէ միայն Լոմանը գերի բռնուած էր իր կաղուլթեան պատճառաւ: Քանի մը օր ետք Քամի Յարուլթը զայն կարմիր կամուրջին մօտ կը գտնէ ուշակորոյս եւ արիւնաթաթախ վիճակով ու զայն շալկելով հայ մարտիկ-

ներուն քով կը տանի: Թուրքերը չարչարած էին Լոմանը:

Կռուող տղաքը անգամ մը եւս Եղիսաբէթի մօտ կ'երթան եւ կը խորհրդակցին կացութեան շուրջ: Այս միջոցին, Խոսպիա գիւղին թրքախօս յոյները հայոց օգնել կը խոստանան: Թուրքերը Խոսպիայի մէջ սպաննած էին յանդուգն յոյն մը, որ իր մօր պատուին պաշտպանութեան համար թուրք զինուոր մը դաշունահարած եւ սպաննած էր: Հայ ինքնապաշտպանները բաւական սերտ յարաբերութեանց մէջ էին Խոսպիայի յոյներուն հետ: Անոնք վերջիններուս գէնք կը հայթայթեն, իսկ յոյները անոնց՝ հաց եւ ծխախոտ: Հաց բերելու համար երկու հայ Ֆետայիներ իրենց յոյն բարերարին հետ կ'երթան որոշուած վայրը, ուր դարանակալած թուրքերը զանոնք կը ձերբակալեն ու պարպուած Ախալքալաքի հրապարակին վրայ երեքն ալ կախաղան կը բարձրացնեն: Կը պարզուի, թէ խումբի այս երկու տղոց կորուստը դաւադրութեան եւ մատնութեան հետեւանք էր: Այդ օրերուն Ախալքալաքի մօտակայ Մուրջախեթ գիւղէն երեք վրացի երիտասարդներ խումբին կը միանան: Անոնք երկար ժամանակ տառապած էին թուրքերու հետապնդումներէն: Երեւան կու գայ մատնիչը, որ Լոմանն էր: Խմբապետ Սեւ Արսէնը Լոմանն իր սուրով երկուքի կը բաժնէ:

Սեւ Արսէնը կռիւի ընթացքին կը վիրաւորուի: Սերկէյ անոր հոգ կը տանի թէյ եւ դեղօրայք բերելով: Սեւ Արսէն օրերով պառկած կը մնայ: Ան իր ընկերներով աւերակ բերդի մը մէջ ապաստան գտած էր: Օր մըն ալ երբ Արսէն առանձին էր, թուրք ասքեար մը ներս կը մտնէ եւ կը փորձէ խմբապետն սպաննել: Բայց վերջինս աւելի արագ շարժելով, թուրքը կը սպաննէ իր սուրով: Քիչ ժամանակ ետք, հայ տղոց խումբը իր տեղը կը փոխէ:

Աշնանամուտին (1918 թուականին պէտք է ըլլայ - Յ. Ի.)

Թրքական բանակը Ախալքալաքի մէջ իր ներկայութիւնը կը զօրացնէ: Հայ տղաքը ծպտուած դուրս կու գան միայն: Նազըմ պէյը Ձէյնապ խանումին (Եղիսաբէթ) թաքնուած վայրը նորէն գտնելով, յաճախ անոր կ'այցելէ: Նազըմ պէյ կրկին Եղիսաբէթի կ'առաջարկէ իրեն հետ ամուսնանալ: Ասկէ առաջ հայ տղաքը թուրք ասքեարներ սպաննելով, Եղիսաբէթի թոնրատան նկուղը թաղած էին: Օր մը կրկին Նազըմ պէյ Եղիսաբէթի մօտ կու գայ եւ այդ տունէն այլեւս դուրս չելլէր: Հայ տղաքը անոր հաշիւը կը մաքրեն: Թուրք սպայ մը իր զինուորներով Եղիսաբէթի տունը խուզարկութեան կու գայ: Ամբողջ օր մը տան անկիւնները եւ գաղտնարանները պրպտելէ յետոյ, ոչ մէկ բան երեւան կու գայ:

Թուրք ոստիկանները այսպէս ամէն օր Եղիսաբէթի տունը կը խուզարկէին: Եղիսաբէթ կ'որոշէ Օմար փաշային մօտ երթալ եւ բողոքել: Եղիսաբէթ թուրք զինուորներուն կողոպուտի կիրքն ու անոնց անբարոյականութիւնը խուզարկող սպայի երեսին կու տայ: Սպան յստակօրէն կ'ըսէ, թէ թուրքիան այն երկիրը չէ որ հայերը թուրքերէն պիտի պաշտպանէ:

Վերջապէս Եղիսաբէթ Օմար փաշայի մօտ երթալով, անկէ կը խնդրէ իր տունէն հեռու պահել հետախուզութեան թուրք սպան: Փաշան Եղիսաբէթը կը լսէր՝ անոր գեղեցկութեամբ հմայուած, իսկ Եղիսաբէթ իր գործը կատարեալ դիւանագիտութեամբ կը կատարէր: Օմար փաշայի աւագ կինը նախանձով կը լեցուի Եղիսաբէթի հանդէպ: Եղիսաբէթ Օմար փաշայէն կը խնդրէ, որ մօտ ապագային ղէպի Ալեքսանդրապոլ իր ճամբորդութեան ապահովութիւնը ստանձնէ:

Վերադառնալով իր տունը, Եղիսաբէթ իր այցելութեան մանրամասնութիւնները կը հաղորդէ հայ Ֆետայիներուն:

Սեւ Արսէն բարձր կը գնահատէ Եղիսաբէթին արարքը:

Այս միջոցին, Ախալքալաքի մօտակայ խորթըզ գիւղին թուրքերը գետափին վրայ թուրք զինուորականի մը՝ Նազրմ պէյի դիակը գտած էին: Միւս կողմէ, Օմար փաշային Եղիսաբէթի տուած այցելութեան իբր արդիւնք, հետախուզութեան սպան Օմարէն խիստ կերպով յանդիմանուելով՝ դէպի Կ. Պոլիս կը փախչի: Օմարը իր սպաններէն ճամալը անոր ետեւէն կը ղրկէ եւ փախստական զինուորականն սպաննել կու տայ: Անոր դիակը Վոսփորի նեղուցէն կը գտնուի:

Թրքական զօրամասը ծրագիր ունէր Ախալքալաքը գրաւելէ յետոյ յառաջանալ դէպի հիւսիս՝ Թիֆլիս: Սակայն Ախալցխայի եւ Ախալքալաքի գաւառներուն մէջ հայոց դիմադրութեան շնորհիւ՝ ճամբան գոցուած էր անոր առջեւ:

Օմար փաշան Եղիսաբէթին այցելելով կը խնդրէ անկէ լքել իր ամուսինը՝ Սերկէյը եւ իրեն միանալ: Եղիսաբէթ առաջարկը կը մերժէ: Օմար փաշան իր մարդոցմով անմիջապէս կը ձեռնարկէ Եղիսաբէթին առեւանգումը: Յանձնարարութիւնը կատարող խումբը հազիւ ճամբայ ելած, ահա՛ հայ Ֆետայիները կը յարձակին անոր վրայ եւ հրացանաձգութիւն կը սկսի: Օմար փաշա կը յաջողի փախուստ տալ, սակայն անոր մարդիկը գերի կ'իյնան հայ տղոց ձեռքը: Այս կռիւին՝ Քամի Յարութը ուսէն կը վիրաւորուի: Հայ մարտիկները գաղտնի նամակներու միջոցով կ'իմանան, թէ փախուստէն քիչ ետք, թուրքեր Օմար փաշան սպաննած են՝ զայն կողոպտելու նպատակով:

Հրապարակի վրայ այս անգամ կ'երեւայ հազարապետ (պինպաշի) Խալիս պէյը: Սա ալ Եղիսաբէթի գեղեցկութենէն հմայուած, կը փորձէ անոր սիրտը գրաւել:

Նախկին փորձառութենէն օգտուելով, թուրքերը հաշուի կ'առնեն հայ Ֆետայիներու գոյութիւնը Ախալքալաքի մէջ,

ուստի, անոնց թաքստոցներ կարծուած քարայրներն ու այլ վայրերը կը ումբակոծեն: Արսէնի խումբը յաճախ իր թաքստոցը կը փոխէր՝ երբեմն ընդհարումներ ալ ունենալով թշնամիին հետ: Հայ տղաքը կը հնարամտեն եւ Խումար Հրաչ անուկով երիտասարդը Խալիս պէյի մօտ կը ղրկեն: Խումար Հրաչ կը խոստանայ թուրք բանակին օգնել, պայմանով, որ հազարապետն իրեն օգտակար դառնար Եղիսաբէթն իրեն կին ունենալու: Խումար Հրաչ կը ծրագրէր լրտեսել թուրքերը: Սակայն Խալիս պէյ, արուամուլ ըլլալուն, կ'ուզէ Խումար Հրաչը իր քով պահել: Այս նպատակով, ան Հրաչի կ'առաջարկէ թլփատուիլ եւ թրքանալ: Խումար Հրաչ Սեւ Արսէնի մօտ վերադառնալով՝ անոր կը պատմէ պատահածը:

Խումար Հրաչ իսկապէս սիրահարած էր Եղիսաբէթին: Հայ դիմադրականները կը ծրագրեն շփոթ յառաջացնել թրքական գրաւման բանակին մէջ: Խումար Հրաչն ու Քամի Յարութը Ախալքալաքի եկեղեցիներուն զանգերը կը հնչեցնեն: Թրքական բանակի շարքերուն մէջ կը սկսի իրարանցում մը, որուն զոհ կ'երթայ բանակին պարետը:

Ձինուորականներու սպաննութիւնները թուրքերը կը մղեն աւելի խստացնելու գրաւուած Ախալքալաքի հսկողութիւնը՝ հետապնդելով հայ Ֆետայիները: Ասոր վրայ, երկու կողմերուն միջեւ ընդհարումներն աւելի կը սաստկանան եւ յաճախակի կը դառնան: Հայ Ֆետայիներուն թիւը երեսուն հոգին չէր անցներ, հաշուի առնելով նաեւ վիրաւորները: Զգալի էր զինամթերքի եւ պարենաւորման պակասը: Շատ քիչ քանակութեամբ դեղօրայք մնացած էր: Այդուհանդերձ, խումբը գէնքերը վար դնելու բնաւ մտադրութիւն չուներ: Այդ ահաւոր շրջանին, ժանտատենդը (տիֆ, թիֆոս) կը տանի խումբին ամէնէն քաջ մարտիկներէն մէկը՝ Քամի Յարութը:

Այսպիսի խառնակ օրերէն մէկը, Խումար Հրաչի հաւաքած

տեղեկութիւնները ցոյց կու տային, թէ թուրքերը նոր յարձակման կը պատրաստուէին: Անոնք Ախալքալաքի բոլոր մուտքերը պիտի փակէին եւ հայ Ֆետայիները պիտի չըջապատէին: Հրաչ այս տեղեկութիւնները Սեւ Արսէնին փոխանցելէ յետոյ Եղիսաբէթի տունը կ'երթայ եւ Եղիսաբէթն ու Սերկէյը գիշերով Կորիս գիւղին քարայրները կ'առաջնորդէ:

Այդ օրը քաղաքին մէջ ո՛չ մէկ անսովոր շարժում տեղի կ'ունենայ: Ֆետայիները, ժամանակ շահելով, իրենց պատրաստութիւնները կը տեսնեն: Թուրքերու եւ մանաւանդ խալիս պէյի նպատակն էր միանգամընդմիջտ վերջ տալ հայ վրիժառուներու գոյութեան:

Երբ թուրքերու վոհմակը կամաց-կամաց կը մօտենայ հայ տղոց խումբին, վերջիններս արդէն պատրաստ վիճակի մէջ էին: Խմբապետ Սեւ Արսէնը կը հրահանգէ փամփուշտները խնայողութեամբ գործածել եւ միայն նշանառութեամբ կրակել: Այս միջոցին, Պօղոսն իր նշանացոյցը կ'ուղղէ եւ կը կրակէ գլխուն թուրք սպայի մը, որ գետին կ'իյնայ իր կողքի ասքեարին փաթթուելով: Հայ Ֆետայիներէն հերոս Մկօն կը զոհուի: Տղաքը խրամատներուն մէջէն կը կռուին «Մեր Հայրենիք»ը երգելով: Թուրքերը բազմաթիւ զոհեր կու տան: Իր կրած ձախողութեան համար, հազարապետ խալիսն իր տեղակալը կը մեղադրէ ու զայն կը գնդակահարէ:

Հայերը, կռուելով հանդերձ, կ'անցնին ձորին միւս կողմը՝ յաղթականօրէն ծածանելով Եռագոյն դրօշը: Ծակատամարտը վերջ կը գտնէ եւ հայ Ֆետայիները լեռները կը բարձրանան՝ շարունակելու համար ազատագրական պայքարը թրջական բռնատիրութեան դէմ:

Իտա Ալամէտտին, «Փափա Քիւնցլէր Եւ Հայերը», Թարգմանութիւն՝ Թորոս Թորանեանի, հրատարակութիւն «Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակ»ի թիւ 36, տպարան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Անթիլիաս-Լիբանան, 1999, միջակ չափի 190 էջ


Հեղինակը՝ լիբանանցի արաբի կին դարձած Իտա Ալամէտտինը այս գիրքով կը ներկայացնէ իր հօր՝ Եագոպ Քիւնցլէրի կեանքն ու գործունէութիւնը:

Հայու Գողգոթայի օրերուն, Իտան տասը տարեկան էր: Ան մինչ իր ծնողքը կը կենսագրէ՝ հայ տառապանքին պատմութիւնը կու տայ:

Իտա իր ծնողքին կենսագրութիւնը կը սկսի պատմել 1923-ին Ղազիրի (Լիբանան) մէջ պատահած դրուագով մը:

Ցաւալի դէպք մը պատճառ կը դառնայ, որ Եագոպ Քիւնցլէր կորսնցնէ իր աջ թեւը: Այնուհետեւ հեղինակը կը ներկայացնէ Արեւելեան Հայաստանի եւ Արեւմտեան Հայաստանի հայոց վիճակը Թուրքիոյ, Ռուսիոյ, Անգլիոյ եւ Ֆրանսայի՝ զիրար խաչաձեւող շահերու լոյսին տակ: Ան կ'եզրակացնէ, թէ հայոց՝ քաղաքական խաղերու իբր արդիւնք ծնած տառապալի վիճակը կը մղէ Եագոպ Քիւնցլէրը հայ ժողովուրդին մէջ գործելու եւ ծառայելու:

Եագոպ Քիւնցլէր ծնած է 1871-ին, Զուհիցերիոյ Ավենցել քանթոնի Հունտվիլ գիւղը: Ինը տարեկանին՝ հայրը կը մահանայ, եւ ան հօրեղբօր տունը կը փոխադրուի: Եագոպ



կ'օգնէ այս տան գործերուն եւ իր երկու փոքր եղբայրներուն հոգ կը տանի: Քանի մը ամիս ետք մայրն ալ կը մահանայ: Եագոպ տասներկու տարեկան հասակին որբ կը մնայ ու իր միւս հօրեղբօր տունը կը տեղափոխուի: Դպրոցական ժամերէ դուրս՝ Եագոպ իր այս ատաղձագործ հօրեղբօրը կ'օգնէր:

Եագոպ Քիւնցլէր Զուլիցերիոյ Պագէլ քաղաքը կը մեկնի: Սկիզբը կ'աշխատի իբր որմնադիր, ապա աւետարանական հիւանդանոցի մը մէջ իբր հիւանդապահ: Ան վիրաբուժութեան հանդէպ մեծ հետաքրքրութիւն ունէր, մարդակազմութեան գիտութեան կը հետեւէր, վիրաբուժական գործողութիւններ կը դիտէր եւ անոնց տեսութեան վերաբերեալ գիրքեր կը կարդար:

Եագոպ Քիւնցլէր կը փոխադրուի Պագէլի քաղաքապետական հիւանդանոցը, ուր երիտասարդ բժիշկ Հերման Քրիսթին օգնականը կը դառնայ:

Եղեսիոյ գերմանական առաքելութեան հիմնադիրը՝ դոկտ. Եոհաննէս Լեփսիուս 1895-ին երբ Պագէլ կը հասնի, Եագոպ Քիւնցլէրն իր քով կը կանչէ ու զայն Հալէպ կը դըրկէ՝ միսիոնարութեան միանալու համար:

Եագոպ Հալէպի մէջ կը ծանօթանայ գերմանուհի էլիզապէթ Պէնտրրին, որ չորս տարեկանին որբացած էր ու մանկութիւնը Երուսաղէմի գերմանական որբանոցին մէջ անցուցած:

Եագոպ Քիւնցլէր Հալէպէն կ'անցնի իր ապագայ գործունէութեան դաշտը՝ Եղեսիա, որու վաթսուն հազար բնակչութեան քսան հազարը հայ էր: Եղեսիոյ գերմանական հիւանդանոցի պատասխանատուն էր սօքթ. Հերման Քրիսթը: Երբ Եագոպ Եղեսիա կը կը հասնի, Քրիսթը ճամբորդած էր երեք օրուան համար: Հիւանդանոցին մէջ Եագոպ Քիւնցլէր կը կատարէ իր առաջին գործողութիւնը՝

ստիպողական պայմաններու տակ: Գործողութիւնը յաջողութեամբ կը պսակուի: Հիւանդանոցին դեղագործը Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն վկայուած Աբրահամ էֆենտին էր:

1895-ի ջարդերուն ատեն, երբ Աբրահամ էֆենտին քիւրտ հիւանդ մը բուժելու գացած էր քանի մը օրով, իր տան շրջանը յարձակման կ'ենթարկուի թուրքերու կողմէ: Եղեսիոյ վալիին իր կարելի միջոցներով կ'օգնէ հայոց: Վերադարձին, Աբրահամ էֆենտի իր կիսն ու զաւակները ողջ կը գտնէ: Շատ հայեր կ'իսլամանան՝ վտանգներէ զերծ մնալու համար: Սակայն Եագոպ Քիւնցլէրի ջանքերով անոնցմէ շատերն իրենց քրիստոնէական հաւատքին կը վերադառնան:

Քիւնցլէր կ'որոշէ Եղեսիոյ որբացած հայ երեխաներուն համար որբանոց մը բանալ: Ան Տիգրանակերտի թրքական կառավարչութեան ներկայացուցիչներուն կը դիմէ՝ արտօնութեան համար: Մինչ այդ, որբանոց մը բանալու կապակցութեամբ գերմանացիներուն եւ թուրքերուն միջեւ վէճ մը ծագած էր: Քիւնցլէր կը փորձէ դժուարութիւնները հարթել: Այս միջոցին, Եագոպ գերմանական հիւանդանոցը կը զարգացնէ: Ան անձամբ հիւանդապահուհիներ կը պատրաստէ: Հիւանդները զայն կը սիրէին եւ անոր այցելութիւնները կարօտով կը սպասէին:

Քիւնցլէրի հիւանդանոցային գործունէութեան դրուագները շատ են: Բոլոր հիւանդները երախտագիտութեամբ դուրս կու գային հիւանդանոցէն: Եագոպ ամէնէն դժուար գործերու ձեռնամուխ կ'ըլլար եւ կը յաջողէր: Ան ճամբորդելու, վիրաբուժական գործողութիւններ կատարելու եւ արկածախնդրութեանց դիմելու մեծ հակում ունէր: Քիւնցլէր բոլորին, մանաւանդ՝ քիւրտերուն հետ բարեկամ էր: Օրինակ, Համիտիէ զօրագունդի սպաներէն Իպրահիմ

փաշան անոր մօտիկ բարեկամն էր:

Եագոպ Քիւնցլէր էլիզապէթ Պէնտրրի մասին կը մտածէր, քանզի սէր կը տածէր անոր հանդէպ: Երբ կ'իմանայ, թէ էլիզապէթը Սկովտիա կը գտնուի, անոր նամակ մը կը գրէ, կը բացատրէ իր զգացումները եւ կը յայտնէ անոր հետ ամուսնանալու իր փափաքը: Եագոպի առաջին երկու նամակներն անպատասխան կը մնան: Էլիզապէթ Եագոպի երրորդ նամակին պատասխանելով կը գրէ, թէ իր վկայականն ստանալէ յետոյ Սաֆատ (Պաղեստին) պիտի մեկնի, իր քրոջ մօտ:

Որոշուած ժամանակին Եագոպ Քիւնցլէր կը մեկնի Հայֆա, ուր էլիզապէթ զայն կը դիմաւորէ: Ամէն ինչ բարեյաջող կ'ընթանայ եւ անոնք կ'ամուսնանան Սաֆատի մէջ՝ 7 Նոյեմբեր 1905-ին:

Ամուսնական ամուր Եղեսիա կը տեղափոխուի: Էլիզապէթ իր ընտանեկան կեանքը կը կանոնաւորէ, միեւնոյն ժամանակ աշխատելով հիւանդանոցին մէջ: Քիւնցլէր ընտանիքը շուտով կը բազմանայ: Եագոպ Քիւնցլէր կ'ապրէր հիւանդանոցի շէնքին մէջ՝ տօքթ. Վիսչերի դրացնութեամբ: Անոնցմէ իւրաքանչիւրը ամրան եղանակին այգի մը կը վարձէր՝ ամառներն ալ իրարու դրացնութեան մէջ ապրելով:

1910-ի վերջաւորութեան Քիւնցլէր գոյգը կը բախտաւորուի եւս մէկ զաւակով. կը ծնի Իտան:

Եագոպն ու էլիզապէթը բոլորին կ'օգնէին անխտիր: Անոնք կ'որդեգրեն թշուառ եւ հիւանդ հայ աղջնակ մը՝ Վարդուհի-Ռոզան ու լաւ հոգ կը տանին անոր: Զայն իրենց տան մէջ խնամելէ եւ չափահասութեան հասցնելէ յետոյ, զայն կ'ամուսնացնեն Եղեսիոյ մէջ:

1908-ին Իթթիհատի Յեղափոխութիւնը մեծ հրճուանք կը բերէ ժողովուրդին: Թուրքերն ու հայերը, իսլամներն ու քրիստոնեաները իրարու հետ կը գրկախառնուին փողոց-

ներուն մէջ: Ամէն կողմ եղբայրութիւն կը քարոզուի: Քրիստոնեաները եւս զինուորական ծառայութեան կ'արձանագրուին:

Սակայն խանդավառութեան ալիքը երկար չի տեւեր: Արեւմտեան Հայաստանի մէջ (Իտա Ալամէտտին կը գործածէ «Արեւելեան Անատոլու» եզրը, զոր հիմնովին անընդունելի է - իմբ.) քիւրտերը կը յարձակին թուրքերու, հայերու եւ ասորիներու վրայ: Ատանայի եւ չրջակայքի մէջ թուրքերը կը յարձակին հայոց վրայ եւ 30,000 հոգի կ'ոչնչացնեն: Ամբողջ տարի մը անհանդարտութիւն կը տիրէ: Երիտթուրքերու կառավարութիւնը ինքզինք կ'ամրացնէ եւ օսմանցիութեան ու համիւլամականութեան գաղափարներն իրականացնելու կը ձգտի:

1909-ին Եագոպ Քիւնցլէր ընտանեօք Հալէպ կ'երթայ՝ հոնկէ Զուլիցերիա մեկնելու համար: Հալէպի մէջ ան կը լսէ Ատանայի ջարդերուն մասին: Հայ քանի մը քրիստոնեայ հոգեւորականներ, որոնք դէպի Ատանա կ'ուղղուէին հաւաքական հանդիպում մը ունենալու համար, հագիւ կը կարողանան Օսմանիէի աւետարանական ժողովարանն ապաստանիլ: Թուրք ջարդարարները կը յարձակին ժողովարանին վրայ ու կը հրկիզեն զայն՝ մէջիններով հանդերձ: Միայն երկու հոգի կը փրկուի մահէն: Հոն գոհ կ'երթայ նաեւ Եղեսիոյ հինգ հազարնոց ասորի համայնքին առաջնորդը, որ Եագոպ Քիւնցլէրի լաւ բարեկամն ու աշխատակիցն էր եւ վերջերս աղքատ ասորիներուն համար դպրոց մը բանալու ձեռնարկած էր:

1914-ին երբ Ա. Համաշխարհային Պատերազմը կը սկսի, Միսիոնարական Առաքելութեան տնօրէնը՝ Տօքթ. Վիսչեր, Զուլիցերիա կը գտնուէր իր ընտանիքին հետ: Ան մինչեւ 1919 թուականը չի կրնար Եղեսիա վերադառնալ: Քիւնցլէրները առանձին կը մնան եւ պատերազմի ընթացքին

բոլոր գործերը իրենք կը վարեն՝ բոլոր դժուարութիւնները դիմագրաւելով:

Պատերազմին սկիզբը, դեղագործ Աբրահամ էֆենտի ստիպուած էր թողուլ Քիւնցլէրի հիւանդանոցը եւ բանակին մէջ ծառայել: Եղեսիոյ եւ արտաքին աշխարհի միջեւ կապերը կտրուած էին: Քիւնցլէր ստիպուած էր դրամը հայթայթել տեղական ոյժերէն: Աշխատանոցներու արտադրանքները՝ գորգեր, կօշիկներ եւ տարբեր իրեր կը վաճառուէին եւ լաւ եկամուտ կ'ապահովէին: Յանկարծ կը յայտնուի դրամի ուրիշ աղբիւր մըն ալ. ժընեւէն, ռուսերուն դէմ սրբազան պատերազմ գրգռելու նպատակով գերմանացիներու կողմէ դէպի Պարսկաստան ղրկուած երկու պարսիկ իշխաններ Եղեսիա կը հասնին: Իշխաններէն մէկը Քիւնցլէրի կ'առաջարկէ իրենց ընկերանալ մինչեւ Պաղտատ, իբր անձնական բժիշկ՝ փոխան լաւ վարձատրութեան: Քիւնցլէրի այս ճամբորդութիւնը օսմանեան 45 ոսկի կը բերէ հիւանդանոցին: Այս ուղեւորութեան ընթացքին Քիւնցլէր ականատես կ'ըլլայ հայոց ապրած սարսափներուն: Իր առջեւ թուրքերը բացէ ի բաց հայոց մասին կը խօսէին, թէ հայերը կ'ուզէին թրքական իշխանութիւններէն ձերբազատուիլ եւ անկախ պետութիւն հաստատել: Այս խօսքերէն խորապէս ցնցուած Քիւնցլէրը բողոքելու կարիքը կը զգայ:

«Անշուշտ, - կ'ըսէ ան, - ամէն անձ ապրելու իրաւունք ունի, յատկապէս այն երկրին մէջ, ուր ծնած է: Հայ ժողովուրդին համար՝ այդ երկիրը թուրքիան է: Տուէք այս ժողովուրդին այն իրաւունքը, զոր դուք անձնապէս կը վայելէք, յարգեցէք զանոնք, վարուեցէք անոնց հետ ձերայիներուն նման, եւ հարցը կը լուծուի աւելի լաւ, քան կրնայ լուծուիլ հալածանքներով»: Սակայն թուրքերը չեն հասկնար Քիւնցլէրին խորհուրդը:

Հիւանդանոցին գործերը կը նուազին, որովհետեւ հի-

ւանդներէն քիչեր կրնային հոն հասնիլ: Ստիպուած էին պարապ մահճակալներ թողուլ վիրաւոր կամ հիւանդ զինուորներ ընդունելու համար: Առաքելութիւնը ամբողջ եօթը ամիս Եւրոպայէն ոչ մէկ օգնութիւն կը ստանայ: Եագոպ Քիւնցլէր կը հիւանդանայ եւ 17 օր անկողնին կը ծառայէ:

1915-ին ռուսերը վաճառ ու Բաղէշը կը գրաւեն: Կը տարաձայնուի, թէ հայերը անկախ պետութիւն մը հիմնած են:

Թուրքին դէմ միշտ ըմբոստացած եւ թուրք թշնամին ետ մղել յաջողած Զէյթունն այս անգամ տեղի տուած էր եւ բռնագաղթեցուած: Զէյթունցի երիտասարդները բանակ տարուած էին: Զէյթունի իշխաններէն Նազարէթ Չաուշը 1914-ի Հոկտեմբերին ձերբակալուած էր, Մարաշի մէջ բանտարկուած եւ ապա չարչարանքներու տակ նահատակուած: Զէյթունի հայութիւնը մաքրագործելու առիթը հասած էր: 1915-ի գարնան Զէյթունի մէջ կարգ մը հայեր ընդդիմութիւն ցոյց տուած էին եւ յարձակած ոստիկաններու վրայ երբ անոնք հայ աղջիկներ պղծած էին:

Իթիհատի դեկավարները գաղտնի ժողով մը գումարելով կ'որոշեն թուրքիոյ մէջ ապրող բոլոր հայերը բնաջնջել: Թրքական կառավարութիւնն ամէն միջոց ձեռք կ'առնէ, որպէսզի ջարդին լուրերը երկրէն դուրս չելլեն: Ճիհատ կը յայտարարուի ոչ-իսլամներուն դէմ, որով յուզումներն աւելի կը բորբոքին:

Այս բարբարոս եւ կանխամտածուած ոճիրին առաջին հանգրուանը հայ մտաւորականներուն ու երեւելիներուն բնաջնջումն էր: Ժողովուրդը անառաջնորդ, անտէր եւ անպաշտպան ձգելէ յետոյ, յաջորդ հանգրուանին զայն բռնագաղթեցնելը դիւրին կ'ըլլար: Թուրքերը Զէյթունէն սկսած էին: Անոնք բանտերուն մէջ գտնուող բոլոր գողերը,

աւագակներն ու ոճրագործները ազատ արձակելով, անոնցմէ չէթէներու խումբեր կազմած էին՝ հայութիւնը վերացնելու նպատակով:

18 Մարտ 1915-ին Եդեսիոյ մեծագոյնցիկ հայ ընտանիքները կը ձերբակալուին եւ Ռաքթա կը քշուին: Երիտասարդներն անմիջապէս վրէժի կը պատրաստուին: Զէնքերու սակաւութեան պատճառով, երէցները կը վախնան եւ կ'ուզեն յանձնուիլ: Աւելի քան երկու հարիւր եդեսիացի հայեր կը ձերբակալուին: Ոմանք փախուստի կը դիմեն: Եդեսիոյ թեմին Առաջնորդը Եագոպ Քիւնցլէրին կ'առաջարկէ Պերլին երթալ եւ դոկտոր Լեփսիուսին միջամտութիւնը խնդրել:

Եդեսիայէն առաջին բռնագաղթեալներն կըրցան իրենց պէտք եղած գոյքերը տանիլ իրենց հետ, մինչդեռ յաջորդող կարաւաններն աւելի վատ պայմաններու տակ քշուեցան: Յետագայի բռնագաղթեալներն իրենց տուներէն պէտք է փախչէին՝ ամէն ինչ իրենց ետին ձգելով:

1915-ի Յունիսին Պաղեստինէն, Լիբանանէն եւ Սուրիայէն 500 եւրոպացիներ գաղթելով՝ Եդեսիա կու գան: Կառավարութեան առջեւ անոնց պատասխանատուներն էին Լէսլի անունով մէկն ու Եագոպ Քիւնցլէրը, որ Միջագային Կարմիր Խաչը կը ներկայացնէր:

Երկրի հիւսիսային կողմերէն բռնագաղթեցուած հայերը Եդեսիայէն կ'անցնէին: Խարբերդէն եւ Կարինէն եկողները շատ թշուառ վիճակ մը կը պարզէին: Խարբերդցի կին մը փախուստ կու տայ կարաւանէն, հիւանդանոցը կ'ապաստանի եւ Քիւնցլէրի կը պատմէ իր ողիսականը: Ամուսինը Ամերիկա գտնուող կնոջ ըստած էր, որ յաջորդ օրը ճամբայ պիտի ելլեն: Ան իր դուստրերը շքեղ կերպով կը հագուեցնէ: Երեկոյեան, գաղթի դուրս եկող հայերը եկեղեցոյ մէջ հաւաքուելով կ'աղօթեն եւ զիրար կը

քաջալերեն: Առաւօտուն ճամբայ կ'ելլեն դէպի Մալաթիա: Թուրքերը կարաւանին այրերը կը մեկուսացնեն: Կիներն ու երեխաները շաբաթներ թափառելէ յետոյ Եփրատի ափերը կը հասնին: Գետին միւս կողմը անցնելէ յետոյ, քիւրտերը անոնց վրայ կը յարձակին դանակներով եւ գէնքերով: Ոմանք կը կոխկռտուին եւ շատերը կը սպաննուին: Մեռելներուն եւ ողջերուն հագուստները կը կողոպտուին: Ողջ մնացածները, թէկուզ անօթի ու ծարաւ էին, կ'ուզէին վայրկեան առաջ փախչիլ այդ սարսազգոյցիկ վայրէջքէն: Կիներ քիւրտերէն կը խնդրէ զինք եւ իր դուստրերը իրենց հետ տանիլ: Զինք թողելով, քիւրտերը միայն աղջիկները կը տանին: Կոտորակուած կարաւանը երկու օր ետք կը հասնի Կարմուճ գիւղը, որու հայ բնակիչներն իրենց հագուստներ կու տան որպէսզի ծածկեն իրենց մերկութիւնը: Կիներ կը հասկնայ, թէ իր դուստրերը այլեւս երբեք պիտի չտեսնէ:

Այդ ատենները՝ Քարէն Եփփէ Եդեսիոյ մէջ որբանոց մը կը ղեկավարէր: Ան կ'ապրէր սօքթ. Վիսչերի բնակարանը, ուր ապաստան գտած էին հայ փախստական տղամարդիկ եւ կիներ: Ուրիշներ պատսպարուած էին Եագոպ Քիւնցլէրի եւ գերմանացի Պրունօ Էքարթի («Ապրածս Օրերը Ուրֆայում» յուշագրական գիրքին հեղինակը) տուներուն մէջ:

Եդեսիոյ հայերը թուրքերուն նկատմամբ իրենց վստահութիւնը կորսնցուցած էին, ուստի կ'որոշեն սուղ ծախել իրենց կեանքը: Հայերը կը սկսին դիմադրութեան պատրաստուիլ: Հայոց տուները բերդերու կը վերածուին: Գրեթէ ամէն տուն իր ջուրն ունէր: Դիմադրութեան պատասխանատուները, թրքական բանակի սպայի հագուստներ հագած, Հալէպ կ'երթան եւ գէնք կը բերեն: Հայ տղամարդիկը կը զինուին: Հայկական թաղերուն մէջ պատնէշներ կը բարձրացուին:

30 Սեպտեմբեր 1915-ին կը լսուին առաջին կրակոցներուն

ձայները: Կռիւները կը սկսին: 9-րդ օրը Եղեսիա կը հասնի Ֆախրի պէյը՝ գերմանացի յիսնապետի մը ընկերակցութեամբ եւ քանի մը հարիւր զինուորներով ու հրետանիով: Հայկական թաղերը կը պաշարուին: Կռիւներուն 16-րդ օրը ինքնապաշտպանութեան երիտասարդ հայ առաջնորդը կը սպաննուի: Հայ երէցները համամիտ էին յանձնուելու երբ դեռ ջուր եւ պաշար կար հայոց տուններուն մէջ: Աճող անյուսութիւնը հայոց քաջութիւնը կը ցամքեցնէ:

Եղեսիոյ հայոց արհաւիրքի օրերուն, Հալէպէն եկած Լէսլի անունով ամերիկացի միսիոնար մը մշտական օժանդակութիւն կու տար հայոց: Այս պատճառով, թուրքերը զայն հսկողութեան տակ կը պահեն եւ ապա անոր գլխուն սպառնալիքներ կը կարդան, ինչ որ Լէսլին անձնասպան ըլլալու կը մղէ: ան Քիւնցլէրի տնօրինած որբանոցի ղեկարանէն թոյն մը վերցնելով կը խմէ եւ կը մահանայ:

Եղեսիոյ հայոց դիմադրութեան աւարտին, կռիւներուն չմասնակցած երկու հարիւր հայ երիտասարդներ կը ձերբակալուին ու կը ղրկուին Հալէպ՝ բանակին մէջ ծառայելու համար: Լէսլիի տան մէջ ապաստանած 56 հայ երիտասարդները կախաղան կը բարձրացուին: Թուրքերը եւրոպացիներուն տուններուն մէջ ապաստան գտած բոլոր հայերը, մեծ մասամբ կիներ, կը ձերբակալեն եւ կ'աքսորեն: Ասոնք անապատները քշուելով՝ անօթի եւ ծարաւ մեռան: Քիւնցլէրի տան մէջ ապաստանած սպասաւորներն ու սպասուհիները կ'աքսորուին: Կռուող հայ երիտասարդներ քարայրներու եւ գաղտնի վայրերու մէջ կը պահուըտին: Քարէն Եփեփէի տան մէջ ապաստանածներէն էր Միսաք անունով հայ երիտասարդ մը: Ան իր ճարպիկութեան շնորհիւ հետապնդումներէ փախուստ տալով կը հասնի Քիւնցլէրին տունը, ուր կը գտնէ իր կիներ: Քարէն Եփեփէի

տան ճաշասեղանին տակ եօթը հայ երիտասարդները փոսի մը մէջ թաքնուած էին: Հակառակ բազմաթիւ խուզարկութեանց, թուրքերը չեն կրնար զանոնք երեւան հանել:

Աքսորականներէն 13,000 հոգի Եղեսիոյ շրջակայքը ջարդուած էր, իսկ 70,000 հոգի դէպի Տէր Զօր քշուած էր:

Հայոց դիմադրութիւնը ճզմելէ յետոյ, թրքական բանակը կը պատրաստուի մեկնիլ Եղեսիայէն: Դուրս գալէ առաջ, հրամանատար Ֆախրի պէյ կ'այցելէ Եագուպ Քիւնցլէրի հիւանդանոցը, ուր բազմաթիւ հայ հիւանդներ կը տեսնէ: Ֆախրի պէյի մեկնումէն ետք, թուրք զինուորներ կու գան հիւանդանոց եւ բոլոր հայ հիւանդները կը տանին անվերադարձ կերպով:

Էլիզապէթ Քիւնցլէր շատ եռանդուն գործունէութիւն կը տանէր: Անոր օգնականը Լուսիա անունով ասորի կին մըն էր: Երկուքով դուրս կու գային Եղեսիոյ փողոցները եւ լքուած երեխաները կը հաւաքէին: Էլիզապէթ զանոնք կը լողցնէր, ոջիւնները կը մաքրէր եւ մեծ դժուարութեամբ ճաշ կը հայթայթէր: Հայ երեխաներ պահելու գործը մեծ գաղտնապահութեամբ կը կատարուէր:

Էլիզապէթ ամէն օր կ'երթար հայ տարագիրներուն հանդիպելու, անոնց հաց բաշխելու եւ հիւանդները հոգալու: Էլիզապէթի գործին մեծապէս օգտակար կը դառնային պետեւի Ալին եւ անոր կիներ՝ Ամինէն, որոնք թափառական հայեր կը պահէին ու կը կերակրէին, նաեւ կ'օգնէին Էլիզապէթին՝ հայ աղջիկներ դէպի Սուրիա փախցնելու համար: Էլիզապէթի խիղճը հանգիստ էր, սակայն ան միշտ վախի մէջ էր թուրք ոստիկաններուն հետապնդումներուն պատճառով:

Թուրքերը Եագուպ Քիւնցլէրը Եագուպ էֆենտի կը

կոչէին: Ան կը շարունակէր հիւանդներուն եւ որբերուն ծառայել: Ժանտատենդի համաճարակը տարածուած էր քաղաքին մէջ: Եագոպ էֆենտի նախապէս ժանտատենդէ բռնուած ըլլալով կրնար այս հիւանդութեան դիմադրել եւ անկէ վարակուածներուն ծառայել: Էլիզապէթն ու որդին՝ Առնոլտն ալ ժանտատենդէ կը բռնուին: Եագոպ Քիւնցլէր զանոնք կը խնամէր ու կը բուժէր:

Եագոպ Քիւնցլէր սկիզբը միայն հիւանդապահ մը ըլլալով կրցած էր բժիշկի մը փորձառութեան տիրանալ: Ան ինքնաշխատութեամբ եւ գիրքեր կարդալով բժշկական բազմաթիւ գործողութիւններ կատարած էր: Երբ Առաքելութեան հիւանդանոցին նոր բժիշկը կ'արգիլէ Քիւնցլէրի իբր բժիշկ գործել, ան կը յաջողի ուրիշ բժիշկի մը հետ դարմանատուն մը բանալ: Քիւնցլէր զանազան հիւանդութեանց բուժման մասնագէտ դարձած էր: Երբ դեղօրայքի պակաս զգար, դեղն ինք կը պատրաստէր:

1916-ի վերջերը Եդեսիա կը վերադառնան արաբներու կամ թուրք եւ քիւրտ ընտանիքներու մօտ ապաստան գտած հայերը: Քիւնցլէր իր կարելիութեան սահմաններուն մէջ անոնց մեծապէս օգտակար կը դառնայ: Բաբերդի եւ Արղն Մատէնի հայերէն ունէ մէկը չէր վերադարձած: Կը պարզուի, թէ 1915-ին այս քաղաքներու թուրք պատասխանատուները երբ մերժած էին իթթիհատի հրահանգները, Եդեսիոյ կառավարիչը ջարդերու գործը ինք յանձն առած եւ կատարած էր:

Քիւնցլէր Հալէպ կը մեկնի Զուլիցերիայէն ղրկուած դրամական օգնութիւնն ստանալու համար: Ան Ռաքթայի հայ թշուառ գաղթականներուն դրամ կը բաշխէ:

1916-1917-ի ձմրան թուրքերը փոքրամասնութիւնները եւ քիւրտերը կը հետապնդեն: Այս անգամ Բաղէշի եւ Կարինի իսլամ քիւրտերը ռուսերուն հետ գործակցելու

կասկածանքի տակ առնուած էին, ուստի թուրքերը զանոնք տեղահան կ'ընեն դէպի Մարաշ, Այնթապ եւ Եդեսիա: Այս քիւրտերէն շատերը անօթութեան ու ցուրտին պատճառով կը մահանան, իսկ մնացեալները շատ թշուառ վիճակի կը մատնուին: Քիւնցլէր քիւրտերուն կ'օգնէ իր կարելի բոլոր միջոցներով: Ան Հալէպի մէջ Ա. Մ. Ն.ի եւ Գերմանիոյ հիւպատոսներէն օգնութիւն կը ստանայ՝ քիւրտերուն բաշխելու համար:

Պատերազմի վերջաւորութեան՝ հայոց սիրտերը թուրքերուն հանդէպ ատելութեամբ լեցուած էին: Անոնք կ'ուզէին, որ թուրքերն իրենց կալուածները վերադարձնեն, սակայն առանձինն անկարող էին: Բրիտանացիք Եդեսիա կը մտնեն եւ հայերը ազատ շունչ կը քաշեն: Վերադարձող հայոց թիւը օր ըստ օրէ կը մեծնար: Կը հիմնուի Եդեսիոյ Հայ Ազգային Կոմիտէն, որ վերադարձող հայերով կը զբաղէր: Կը նորոգուի եկեղեցին, որու վերականգնումին Եագոպ էֆենտի մեծապէս օգտակար կը դառնայ:

Սակայն հայերէն փոքր խումբ մը Եագոպ Քիւնցլէրը իբր գերմանասէր կ'ամբաստանէր: Այս զրպարտութիւնը ծանր կու գար Քիւնցլէրի, որ մեծապէս հայոց նուիրուած էր անցած տարիներուն: 1919-ի գարնան Քիւնցլէր որբերը սօքթ. Վիսչերի եւ Ամերիկեան Կարմիր Խաչին յանձնելով, ընտանեօք Զուլիցերիա կը վերադառնայ եւ Պագէլ քաղաքը կը հաստատուի: Կարճ ատեն ետք Եագոպ եւ Էլիզապէթ կու գան այն եզրակացութեան, թէ իրենք հայ ժողովուրդին ծառայելու պէտք է վերադառնան: Քիւնցլէր Զուլիցերիոյ քաղաքները շրջելով հայոց համար դրամական հանգանակութիւն կ'ընէ: Պերլինի մէջ ան կը հանդիպի Եոհաննէս Լեփսիուսի, որ իր շուրջ իրեն նման հայասէր շատ բարեկամներ ունէր: Քիւնցլէր կ'որոշէ միանալ Լեփսիուսի՝ անոր հայանպաստ գործունէութեանց մէջ:

Պագէլի համալսարանին մէջ քննութիւններ յանձնելով, Քիւնցլէր վիրաբոյժի եւ բժիշկի վկայականներ կը ստանայ:

Մէկ տարի Եդեսիա մնալէ յետոյ, սօքթ՝ Վիսչեր ընտանեօք Պագէլ կը վերադառնայ: Ան իրեն հետ տհաճ լուրեր կը բերէ: Թուրքերը, Մուսթաֆա Քեմալի ղեկավարութեամբ, դաշնակից բանակներուն դէմ ըմբոստացած էին: Ֆրանսացիք փոխարինած էին բրիտանացիները Եդեսիոյ մէջ: Թուրքերը յարձակած էին Ֆրանսացիներուն վրայ, որոնք դուրսէն օգնութիւն չէին ստացած: Տեղի տալով քեմալական ոյժերուն առջեւ, Ֆրանսացիք նահանջած էին Եդեսիայէն:

Քիւնցլէր իրեն հետ Զուհիցերիայէն հանգանակած հագուստներու տոպրակները առնելով ճամբայ կ'ելլէ դէպի Կ. Պոլիս, ուրկէ կ'անցնի Մամսոն, ուր մեծ դժուարութիւններով եւ իրեն բարեկամ վալիին միջնորդութեամբ առանց մաքս վճարելու դուրս կ'ելլէ նաւէն: Մերզիֆոնի (Մարգուան - խմբ.) ամերիկեան հիւանդանոցին մէջ ան աչքի թրախոմայի ցուցադրական գործողութիւն մը կը կատարէ բժիշկներուն երկայնութեան եւ կ'անցնի Մալաթիա, ապա՝ Եդեսիա, ուր կը զբաղի հարիւրաւոր հիւանդներ բուժելով:

Եագոպի ետեւէն էլիզապէթն ու դուստրը՝ Ռոզան Եդեսիա կը հասնին: Շատ գործ կար ընելիք: Թուրքերը իբրեւ լրտես կ'ամբաստանեն Եագոպի էֆենտին: Ան հին բարեկամներ կը գտնէ եւ ինքզինք կը պաշտպանէ:

Քիւնցլէր իր առաքելութեան մէջ մեծապէս կ'օգտուէր ամերիկեան Նիր Իսթ Ռիլիֆ կազմակերպութեան ընձեռած օժանդակութիւններէն:

1922-ին Գոնիայի մէջ ստորագրուած խաղաղութեան համաձայնագիրը (այսպէս է բնագիրին մէջ - Յ. Ի.) Թուրքիոյ սահմաններուն մէջ Ազատ Հայաստան մը հիմնելու երազներուն վերջ կու տար: Հայ երեխաներն էին ապագայի

յոյր: Երկրին ներքին մասերէն որբերը հաւաքուեցան եւ գթութեան կազմակերպութեան խնամքին տրուեցան: Որբերուն համար աւելի լաւ պիտի ըլլար զանոնք տանիլ դրացի երկիրներ, ինչպէս Սուրիա, Լիբանան, Յունաստան եւ անշուշտ՝ Հայաստան: Քեմալականները ամէն կողմ կ'արշաւէին:

Հայ որբերը Եագոպի Քիւնցլէրը Փափա կը կոչէին, իսկ էլիզապէթը՝ Մամա: Փափան եւ Մաման հայ որբերը առնելով ճամբայ կ'ելլեն դէպի հարաւ: Անոնք ո'չ միայն Եդեսիոյ հայ որբերուն կ'օգնէին, այլեւ՝ Խարբերդի, Տիգրանակերտի եւ այլ վայրերու մէջ գտնուող որբերու փոխադրութեան կ'օժանդակէին: Երկար ճամբորդութենէ եւ դժուարութիւններէ ետք որբերը աւելի ապահով տեղեր կը հասնին:

Փափան ու Մաման Պագէլ կը մեկնին, եւ իրենց զաւակներուն դպրոցական հարցերը կարգի դնելէ յետոյ կրկին ճամբայ կ'ելլեն դէպի Արեւելք: Անցնելով Աղեքսանդրիայէն (Եգիպտոս) ու Հայֆայէն՝ կու գան Պէյրութ՝ հոգ տանելու համար ամերիկեան Նիր Իսթ Ռիլիֆի տեղափոխած որբերուն, որոնք մէկտեղուած էին Լեռնալիբանանի Ղազիր գիւղին մէջ: Ղազիրի որբանոցին մէջ կար 1400 երեխայ, որոնց զրեթէ բոլորն ալ Փափային ու Մամային ծանօթ էին:

Գիրքին մնացեալ մասով Իտա Ալամէտտին կը նկարագրէ Քիւնցլէրներու, Պէյրութի եւ Ղազիրի որբանոցին կեանքը:

1947-ին Եագոպի Քիւնցլէր Պագէլի համալսարանէն պատուոյ տոքթորայի աստիճան կը ստանայ իբր գնահատանք բժշկութեան մէջ մատուցած ծառայութեանց: Եագոպի Քիւնցլէր կը մահանայ սրտի տագնապէ՝ 1949-ի Յունուարին, 78 տարեկան հասակին:

Սուրէն Ա. Փափագեան, «Վերապրողի Մը Ողբասկանը», «Ամարաս» հրատարակչութիւն, Երեւան, 2000, միջակ չափի 256 էջ

Գիրքի երկրորդ մասին մէջ (էջ 212-254) Մեսրոպ Արք. Աշճեան, «Հաւաւի Քարցրահայեաց Ս. Աստուածածինը» խորագրին տակ կը գրէ իր մօրեղբօր՝ Սուրէն Փափագեանի մասին:

Սուրէն Ա. Փափագեան ծնած է Բալուի գաւառի Հաւաւ գիւղը, 1901-ին: Անկէ քանի մը ամիս առաջ, հայրը եւ հօրեղբայրը Ամերիկա մեկնած էին: Կրտսեր հօրեղբայրը՝ Տիգրանը եւ երկու հօրաքոյրները՝ Հռիփսիմէն եւ Պաղտատը, ինչպէս նաեւ մօրեղբօրորդին՝ Ղազարը, մեծ մայրը եւ մայրը իրենց հետ կը մնային: 1906-ին կը ծնի իր Խաչիկ եղբայրը:

Հաւաւի մէջ 250 ընտանիք կ'ապրէր, որոնցմէ 40-50 ընտանիքը հողագործ էր: Քիւրտ պէկերը ծանր տուրքեր դրած էին անոնց վրայ: Միւս կողմէ, թուրքերն իրենց պետական ծանր տուրքերը կը հաւաքէին: Երբեմն կը պատահէր, որ խեղճ հողագործ ընտանիքի մը յաջորդ տարուայ սերմնացու չէր մնար: Դժուար էր տոկալ այս գոլլումին:

Հեղինակը գիրքի առաջին գլուխին մէջ մանրամասնօրէն կը խօսի Հաւաւ գիւղի կեանքին մասին, իսկ երկրորդ գլուխին մէջ՝ Հաւաւի հայոց աւանդասիրութեան ու աւանդապահութեան մասին:



Սուրէնի հայրն ու հօրեղբայրը 1907-ին կը վերադառնան Ամերիկայէն, բայց Օսմանեան Պետութիւնը անոնց թոյլ չի տար երկիր մտնել՝ երկրէն ապօրինի ձեւով դուրս ելած ըլլալուն պատճառով: Զանոնք նաև ղենելով Կիպրոս կը ղրկեն: 1908-ի Սահմանադրութենէն ետք, հօրեղբայրը կը վերադառնայ, բայց հայրը՝ ոչ: Սուրէնի մայրը շատ կը տխրի եւ այն աստիճան կը տառապի, որ երկու տարի ետք կը մահանայ սրտի տագնապէ:

Սուրէնի հայրը՝ Արամը 1912-ի Օգոստոսին Ամերիկայէն կը վերադառնայ եւ կ'ապրի իրենց հետ: Արամ կը վերամուսնանայ եւ Սուրէնն ու եղբայրը կ'ունենան նոր մայր մը (մօրու)՝ Հայկանոյշը: Արամ չէր սխալած իր երկրորդ կնոջ ընտրութեան մէջ:

1912-ին Սուրէն Հաւաւի դպրոցը կը մտնէ: Յաջորդ տարի Ամերիկայէն 50-60 հոգի Հաւաւ կը վերադառնայ: Անոնք միամտօրէն հաւատացած էին 1908-ի Սահմանադրութեան հռչակման: Կը սկսի պալքանեան պատերազմը: Հայերն ալ պէտք է զինուորագրուէին: Բանակ չերթալու համար՝ շատեր Ամերիկա կ'արտագաղթեն:

1913-ին Սուրէնի դասարանին կը վիճակուի գիւղին մարդահամարը կատարել: Ան լաւապէս կը յիշէ, թէ Հաւաւը 1995 բնակիչ ունէր: Հաւաւէն պանդխտութեան գացողներուն թիւը 400-500 հոգի էր: 1914-ին Սուրէնի մօրեղբայրը՝ Յարութիւն Մերկինեանը կը վերադառնայ Ամերիկայէն:

Գիւղին մէջ դաշնակցականներու ո'չ միայն կոմիտէ կար, այլեւ՝ կուսակցութեան պատանեկան մասնաճիւղեր կային: Կային նաեւ հնչակեաններ եւ վերակազմեալ հնչակեաններ: Բոլորն ալ ազգային գործունէութիւն կը տանէին: Դաշնակցութիւնը կը նախապատրաստուէր գիւղին պաշտպանութեան: Կուսակցական ղեկավարներ Սուրէնի հօրը՝

երկաթագործ Արամի մօտ կու գային եւ ռումբերու համար թիթեղէ տուփեր շինել կու տային:

1914-ի ամառը կը պայթի Առաջին Համաշխարհային Պատերազմը: Կը սկսի զօրահաւաքը: Կառավարութիւնը 1915-ի սկիզբը բոլորէն ուտեստեղէն եւ մթերք կը հաւաքէ: 25-30 հոգի սայլերով ճամբայ կը հանուին եւ դէպի Կարին մթերք կը փոխադրեն (տարապարհակ աշխատանք՝ օլլամ): Ամէն մարդ մտահոգութեան մէջ էր: Սիրտերը կոտրած էին: Շուտով ձերբակալութիւններ տեղի կ'ունենան: Մեր «լաւատես» ժողովուրդը կը յուսար Ս. Ծնունդը ռուսերուն հետ անցընել:

Հաւաւ գիւղը թուրք գինուորներով կը շրջապատուի: Հայերը ժողով կը գումարեն եւ կ'որոշեն չդիմադրել: Գայնագաւը կը յայտնէ, թէ կառավարութեան որոշումով հայերը պէտք է զինաթափուին: Հաւաւի երիտասարդներն իրենց զէնքերը առած՝ լեռ կը բարձրանան: Գիւղը կը մնան տարիքոտ մարդիկ, կիներն ու երեխաները: Գայնագաւը գիւղապետին՝ Անտոն Թագլորեանին տունը երթալով, կը պահանջէ զէնքերը յանձնել «բարեկամաբար»: Հաւաւցիները գայնագաւին «բարեացակամութեան» իրապէս կը հաւատան, եւ իսկոյն, մանր-մունր զէնքերը հաւաքելով, կը յանձնեն: Գայնագաւը երբ կը տեսնէ զէնքերը, կը բարկանայ եւ խստօրէն կը հրամայէ բոլոր զէնքերը յանձնել: Իսկոյն ձերբակալութիւններ, ծեծ եւ խոշտանգումներ տեղի կ'ունենան: Ըմբոստացողները ջուրը կը նետուին եւ խեղդամահ կ'ըլլան: Գայնագաւը կը յաջողի այս տեսակ միջոցներով զէնքերը հաւաքել: Անկէ ետք, գիւղին մեծամեծները կը ձերբակալուին:

1915-ի Մայիսի մէջ օր մը թուրք խուժանը Հաւաւ կը մտնէ: Մէկը՝ դանակով, միւսը՝ գէնքով, աջ ու ձախ մարդ կը սպաննեն եւ կը վիրաւորեն: Նոյնիսկ շատ երեխաներ

կը կոտորուին: Թուրքերը եւ քիւրտերը լկտիաբար կը մտնեն հայոց տուները եւ կը կողոպտեն զանոնք: Սուրէն իր ընտանիքին հետ ընդարձակ բակի մը մէջ ապաստան գտած էր, սակայն քիւրտերը եւ թուրքերը հոն ալ կը խուժեն եւ հայ ծերունի մը եւ Սարգիս Ապար անունով մէկը սուրով կը գլխատեն: Հոն հաւաքուած հայերը երբ այս վայրագութիւնը կը տեսնեն, ամէն մարդ մէկ կողմ կը փախչի: Խուժանը գիւղին ելքերը գոցած էր: Սուրէն ո՞ւր փախչիլը չէր գիտեր: Ան կը սկսի վազել անորոշ ուղղութեամբ: Քիչ մը անդին կը տեսնէ իր եղբայրը՝ Սարգիսը՝ երեսի վրայ ինկած: Ան Սուրէնին կը թելադրէ հեռանալ եւ իր կեանքն ազատել:

Ողջ մնացողները գիւղէն դուրս իրարու մօտ գալով Բալու կ'երթան եւ Առաջնորդարանը կ'ապաստանին: Առաջնորդը՝ Եզնիկ Եպս. Գալփաքճեանը զանոնք կ'ընդունի սրտնեղած: Ան եկեղեցին կը բանայ եւ բռնագաղթեալները հոն կ'ապաստանին: Թուրքերուն կատարած արարքներուն սարսափը այնքան զօրաւոր էր, որ բռնագաղթեալներու սիրտերուն մէջ ապրելու տենչ չէր մնացած: Երբ այդ սարսափի պահերէն մէկուն ընթացքին Սուրէն Փափագեանն իր մօրուին եւ եղբօրը՝ Խաչիկին հետ Բալուի եկեղեցւոյ մէջ իրենց ճակատագրին կը սպասէր, յանկարծ իրենց ընտանիքին քիրվան (բարեկամը)՝ քիւրտ Մհօն դրան մէջ կ'երեւայ: Մհօն իրեն մօտենալով կը յայտնէ իր հօր եւ հօրեղբօրորդւոյն՝ Մինասի ողջ ըլլալը: Մհօն Սուրէնը, Խաչիկը եւ մօրուն՝ Հայկանոյշը Ապարանք գիւղը կը տանի: Հոն իրենց ընտանիքին մօտիկ քիւրտ բարեկամ մը կար, որ 1895-ին իրենց կեանքը ազատած էր: Ընտանիքին հայրը արդէն մեռած էր, բայց կինը՝ Ֆերիտա հանրմը իր որդին՝ Ֆերիքը շրջելով, Մինասը ջարդէն ազատած եւ իր մօտ բերել տուած էր: Սակայն աչքերէ հեռու պահելու

համար Արամն ու Մինասը այգիին մէջ կը թաքնուին: Սուրէնը, եղբայրը եւ մօրուն Արամին եւ Մինասին հետ կը տեսնուին:

Երկու օր ետք Արամ եւ Մինաս կը սպաննուին, երբ թաքստոց-հորէն դուրս կ'ելլեն օդ շնչելու:

Մհօն Փափագեաններուն անկեղծ բարեկամն էր: Արամ եւ Մինաս անոր մօտ ոսկեղրամ պահած էին, որպէսզի Արամի ընտանիքին հոգ տանի: Լուր կը տարածուի, թէ կոտորածի վտանգն անցած է եւ ամէն մարդ իր գիւղը կրնայ վերադառնալ: Սուրէնը, Խաչիկը, Հայկանոյշը եւ ուրիշ ամսական քոյրը՝ Լուսաբերը Հաւալ կ'երթան: Հաւալի մէջ ամէն մարդ կը վախնար իր տան մէջ ապրելու: Տուներուն մեծ մասը քանդուած էր: Երեք-չորս ընտանիք մէկ տան մէջ կը մնային համախումբ կերպով: Նոր ամուսնացած երիտասարդ Յովսէփն ու Սուրէնի հօրեղբորորդին բանակ գացած ատեն սպաննուած էին: Գիւղին մէջ շատ քիչ մարդ կար: Անոնք իրենց կեանքը քարշ կու տան մեծ դժուարութեամբ եւ սարսափի մթնոլորտին մէջ:

Գիւղին միւստիւրը Սուրէնը իր մօտ կանչելով, կը հրամայէ, որ իրեն համար քանի մը ընկերներով վանքի պարտէզէն թուփ քաղեն ու բերեն: Վանքի պարտէզներուն տիրացած քիւրտ Մահմուտը աննշան պատճառաբանութեամբ մը կը փորձէ Սուրէնը սպաննել, բայց վերջինս այնքան արագ կերպով կը ճողոպրի անոր ձեռքէն, որ զարմանք կը պատճառէ:

Կարինի կողմերէն թուրք մուխաճիքներ (գաղթականներ) Հաւալ կը հասնին եւ կը սկսին հայոց նեղութիւն պատճառել: Կառավարութիւնը կ'որոշէ հայերը տարագրել: Սուրէնի մօրուն՝ Հայկանոյշը իր փոքր դստրիկն առած՝ տունէն կը հեռանայ խելակորոյս վիճակով: Աւելի ուշ, Սուրէն կ'իմանայ անոնց մահուան լուրը: Գիւղին մէջ վերապրող

մօտ 150 հայերը կարաւան կազմելով՝ թուրքերու հրամանով դէպի Բալու կը քշեն: Տաժանակիր ճամբորդութենէ ետք, տարագրուածները կը հասնին Բալու, ուր միայն մէկ գիշեր կը մնան: Առաւօտեան երբ ճամբայ պիտի ելլէին, դրան առջեւ լաւ հագուած թուրքեր ու քիւրտեր իրենց մօտ ծառայող երեսայ կը պահանջեն: Յանկարծ մօրուքաւոր թուրք մը Սուրէնը կը բռնէ: Տարօրինակօրէն, Երուանդ մեծ մօր ձեռքը կը ձգէ եւ թուրքին մօտ կ'երթայ: Այդ մղումը ապրելու վերջին յոյսն էր Սուրէնին: Թուրքը քիչ մը անդին Սուրէնը Խըտըր անունով քիւրտի մը կը յանձնէ եւ ինք ուրիշ տղայ մը կը տանի իրեն հետ: Սուրէն ետքը կ'իմանայ, թէ իր մեծ մայրը ինքզինք ջուրը նետած էր՝ տառապանքէն ազատելու համար:

Խըտըր Սուրէնը կը տանի շուկայ, ուր հաց եւ պտուղ գնելով՝ միասին կը ճաշեն: Խըտըր իր մեռած եղբոր՝ Մուսթաֆայի անունով կը վերանուանէ Սուրէնը: Շուտով կը հասնին Բալուի հայկական գիւղերէն մէկը՝ Խոշմաթ: Խըտըր քահանայի թոռնուհի գեղեցիկ հայուհի մը հետ ամուսնացած էր: Գիւղին մէջ հայոց դիակները կը նեխէին եւ օդն անշնչելի դարձած էր: Խոշմաթի մէջ Սուրէնի տարիքով հայ տղաներ կը լեցուին: Հովիւութիւն ըրած ատեն տղաները իրարու կը պատմէին իրենց գլխուն եկած փորձանքները: Բոլորին սիրտերը կոտրած էին:

1916-ի գարնան կը պայթի բաւական հայ ազատած Տերսիմի քիւրտերուն ապստամբութիւնը: Այդ օրերուն, քիւրտերը Բալու կը հասնին եւ թուրքերը փախուստ կու տան:

Սուրէն քիւրտ ընտանիքին հետ Չարսանճագի Խէչի գիւղը կը փոխադրուի: Խէչի մէջ գտնուող երկու հայ տղաք կ'ուզեն Խարբերդի որբանոցը ապաստանիլ: Իրենց աղան թոյլ չի տար գիւղէն հեռանալ, ուստի փախուստի

կը դիմեն: Աղան իր ծառաները անոնց ետեւէն ղրկելով, սպաննել կու տայ զանոնք:

Օր մը աղաներէն մէկը՝ Մամաչաւուշ անուկով, Սուրէնի թոյլ կու տայ որ երթայ եւ իր գլխուն ճարը նայի: Սուրէն Փերի կ'երթայ 1917-ի ձմեռը: Հոն կը հանդիպի իրմէ երէց համագիւղացի երիտասարդներու, որոնք իրեն համար գործ կը ճարեն հնակարկատի մը մօտ: Ապա անոնցմէ մէկը՝ Վահանը Սուրէնը կը ղրկէ Խարբերդ, որպէսզի քաղաքին ամերիկեան որբանոցը մտնէ: Սուրէն ճամբուն վրայ Բերդակ գիւղը կը գիչերէ, ապա կ'անցնի Խարբերդ, ուր կը գտնէ իր հօրեղբօր կիներ՝ Մաննան: Մաննան Սուրէնի լաւ հոգ կը տանի: Սուրէնը Խարբերդի մէջ ուրիշ հաւաւցիներու կը հանդիպի: Հայրը՝ Արամը Ա. Մ. Ն. ի քաղաքացի դարձած ըլլալով՝ Սուրէն Խարբերդի ամերիկեան հիւպատոսարանը կը դիմէ: Սակայն շուտով Ամերիկան ալ երբ պատերազմին մէջ կը մտնէ Առանցքի պետութեանց դէմ, իր ներկայացուցչութեանց շէնքերը Դանիայի պետութեան կը յանձնէ եւ ամերիկացի միսիոնարները կը հեռանան Օսմանեան Կայսրութենէն: Այսպիսով, թուրքերը ամերիկահպատակ հայերուն կրկին նեղութիւն կու տան:

Նկատելով որ հօրեղբօր կիներ՝ Մաննան իրեն հոգ տանելու կարողութիւն չունի, ազգականները Սուրէնը խարբերդցի թուրք հարուստի մը տան մէջ ծառայութեան կու տան: Թուրքը Սուրէնի անունը կը փոխէ եւ զայն Էհսան կը կոչէ՝ անոր հետ իր որդիին նման վերաբերելով: Ամառները անոնք մօտակայ Պուզլուխ գիւղը կ'անցընեն:

Զինադադարին, 1918-ի վերջերը, շատ հայ երիտասարդներ Խարբերդ կը վերադառնան եւ կօշկակարութեամբ կամ երկաթագործութեամբ կը զբաղին: 1920-ի Ապրիլին, Սուրէն թուրք ընտանիքին շնորհակալութիւն յայտնելով՝ անոր հրաժեշտ կու տայ եւ ուղղակի կ'երթայ իր հօրաքրոջ

աղջկան՝ Մարթայի մօտ, որ իր մօր հետ ամերիկեան որբանոցը կը գտնուէր: Սուրէն ապաստան կը գտնէ որբանոցին մէջ եւ անոր դպրոցը կը յաճախէ:

Սուրէն Փափագեան մանրամասնութիւններ կը նկարագրէ որբանոցին մէջ իր կեանքէն: 1923-ի վերջերը, քեմալականները վերապրող հայոց կ'արտօնեն իրենց փափաքած տեղերը երթալ: Սուրէն նախ Հալէպ կ'երթայ, ապա կ'անցնի Պէյրութ: 1925-ին ան կը մեկնի Ամերիկա եւ հոն կը հաստատուի: Սուրէն Փափագեան Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը կը մտնէ Նիւ Եորքի մէջ:

Լէսլի Էմըրսոնը Տէյվիս, «Սպանդի Նահանգը»,
Թարգմանիչ եւ խմբագիր՝ Գրիգոր Զանիկեան, «Դավ»
հրատարակչութիւն, Երեւան, 2001, փոքր չափի 368 էջ

1- Մարդասիրութեան եւ հայասիրութեան նոր վկայութիւն մը - Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեան (էջ 5-8)

Լէսլի Էմըրսոնը Տէյվիս ծնած է 1876-ին, Փորթ Ճեֆֆըրսըն:

Ան Ուաշինկթընի «Ճորճ Ուաշինկթըն» համալսարանի իրաւաբանութեան դպրոցէն շրջանաւարտ ըլլալէ յետոյ կ'աւարտէ նաեւ Նիւ Եորքի համալսարանի իրաւաբանութեան դպրոցը:

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արտաքին Գործոց Նախարարութիւնը Տէյվիսը դէպի Պաթում դիւանագիտական ծառայութեան կը ղրկէ: Միջպետական դիւանագիտական յարաբերութիւններէն աւելի, Տէյվիս կը հետաքրքրուի շրջապատյոններով: Առիթը օգտագործելով, ան Իւզպէքիստան եւ Միջին Ասիոյ անապատները եւ ապա կովկասեան լեռներ կը հասնի ու մինչեւ Մասիսի գագաթը կը բարձրանայ: Ի վերջոյ Տէյվիս Խարբերդ կը հասնի իբր հիւպատոս:

Լէսլի Է. Տէյվիս հայկական ջարդերուն իբր ականատես վկայ, արեւմտահայութեան բնաջնջումը «համաշխարհային պատմութեան աննախադէպ նախճիրը» կը կոչէ: Խարբերդի



նահանգը կամ Մամիւրէթ-Իւլ-Ազիզի վիլայէթը իբրեւ սպանդի վայր ընտրուած էր: Ոչ միայն տեղւոյն հայերը, այլեւ Արեւմտահայաստանի տարբեր նահանգներու հայութիւնը հոն կը քշէին, կը հաւաքէին ու կը սպաննէին: Խարբերդի մէջ գտնուող Լէսլի Տէյվիսն անտարբեր չի մնար ու կամովին կը ստանձնէ նահատակուող հայութեան պաշտպանութիւնը: Ան տեւաբար ծածկագիր հեռագիրներ կը ղրկէ Պոլիս՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու դեսպան Հենրի Մորկընթաուին, ինչպէս նաեւ Ամերիկայի պետական հաստատութեանց: Իր գրութեանց մէջ Տէյվիս թրքական ոճրագործութեանց սահմուկեցուցիչ մանրամասնութիւնները կը նկարագրէր եւ իր պետութեան կառավարութիւնը կը յորդորէր միջամտել եւ արհաւիրքի տարածման առաջքն առնել: Ան չէր զլացած նոյնիսկ մէկ հայու կեանքը ազատելու համար դիմել ընդհանուր կառավարիչին: Ան հիւպատոսարանը ապաստարանի կը վերածէ: Տարիներով քանի մը տասնեակ հայեր պատսպարելէ յետոյ, Տերսիմի ճամբով Կովկաս կը ղրկէ զանոնք:

1917-ին երբ Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ Օսմանեան Կայսրութիւնը իրենց դիւանագիտական յարաբերութիւնները կը խզեն, Տէյվիս իր երկիրը կը վերադառնայ ու երեք տարիներու իր հիւպատոսական գործունէութեան գրաւոր հաշուետուութիւնը կը ներկայացնէ: Անոր գրածները ականատեսի անողոք մեղադրանքներ են, անհերքելի փաստերով ու մանրամասնութիւններով լեցուն: Ան կը նկարագրէ երիտթուրքերու յղացած, նախաձեռնած եւ գործադրած ոճրագործութիւնները: Պետական պաշտօնեաներ երբ կ'ընթերցեն Տէյվիսի գրածները, խուճապի կը մատնուին ու զանոնք «գաղտնի» կնիքով կը դրոշմեն, ինչի պատճառով անոնք երկար տարիներ անձեռնմխելի եւ անհասանելի կը մնան: Միայն վերջերս, հայ ժողովուրդի ուրիշ բարեկամ մը՝ ամերիկացի ուսումնասիրող Տիկին

Սիւզան Պլէրը Տէյվիսի հաշուետուութեան մէկ օրինակը կը պատճէնահանէ, կը գաղտնագերծէ եւ մանրակրկիտ ուսումնասիրութեան կ'ենթարկէ: Ան կը յայտնաբերէ նաեւ Տէյվիսի՝ 1915 թուականին Խարբերդի մէջ լուսանկարած պատկերներուն մէկ մասը եւ զանոնք ծանօթագրութիւններով օժտելով կը հրատարակէ: Այս բոլորը անգլերէնէ թարգմանւելով՝ լոյս կը տեսնեն նաեւ Ֆրանսայի մէջ, իսկ սոյն հրատարակութեամբ՝ նաեւ հայերէնով:

2- Նախաբան - Սիւզան Ք. Պլէր

Ա.- Ցեղասպանութիւն. Փաստաթուղթը կը Վկայէ (էջ 13-23)

Լէսլի Տէյվիսի գրած հաշուետուութեան ամբողջական հրատարակումը արհաւիրքին պատմութեան յետագայ աղաւաղումը կը կանխէ: Մամիւրէթ-իւլ-Ազիզի նահանգի Խարբերդ (այժմ էլազիկ) եւ Մեզիրէ քաղաքներու անցքերուն Տէյվիսի հաշուետուութիւնը բացառիկ է, որովհետեւ արխիւներէն հանուած առաջին փաստաթուղթն է, որ գրուած է չէզոք երկիր մը (Ա. Մ. Ն.) ներկայացնող արտասահմանցի դիւանագէտի մը կողմէ: Այս վկայութիւնները բարձր կը գնահատուին: Թղթածրարներուն մէջ կ'երեւան դիւանագիտական առաքելութեան ծառայողներուն ականատեսի նամակներն ու հեռագիրները: Ատկէ բացի, Հալէպի մէջ Գերմանիոյ հիւպատոսին՝ Ռէօսլերի «Ցեղային Բնաջնջում» արտայայտութիւնը յայտնաբերուած էր 1915-ի Ապրիլի կէսերուն: Այս մասին գոյութիւն ունեցող փաստաթուղթերը կը պահպանուին Պոննի մէջ՝ Գերմանիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան արխիւներուն մէջ: Ուրիշ փաստաթուղթեր կան վախճանեալ Գերապայծառ Գրիգոր Կերկերեանի (Գրիկեր)՝ Հայոց Ցեղասպանութեան

վերաբերեալ հաւաքած արխիւներուն մէջ, որոնք այժմ Քեմպրիճի (Մեսէչուսէցի նահանգ) «Զօրեան» հաստատութեան մէջ կը պահուին:

Փորթ Ճեֆֆըրսոնի իր տան մէջ աւելի քան երեք ամիս աշխատելով, հիւպատոս Լէսլի Տէյվիս կը գրէ իր հաշուետուութիւնը եւ Փետրուար 1918-ին զայն կը ղրկէ Պետական Բաժանմունքին:

Բ.- «Հեռաւոր Ու Դժուարահասանելի» Խարբերդը (էջ 23-31)

30 Դեկտեմբեր 1915-ի իր զեկոյցին մէջ, Լէսլի Տէյվիս Օսմանեան Պետութեան մէջ Ա. Մ. Ն.ի դեսպան Հենրի Մորկընթաուին կը յայտնէ.

«Լիովին արդարացաւ «Սպանդի Վիլայէթ» արտայայտութիւնը, ինչպէս կոչած էի այս նահանգը (Մամիւրէթ-իւլ-Ազիզը) նոյն դէպքերու առընչութեամբ իմ գրած վերջին՝ 7 Սեպտեմբերի հաղորդագրութեան մէջ, մեկնելով այն ամէնէն ինչ որ այն ժամանակէն ի վեր իմացայ եւ տեսայ: Պարզուեցաւ որ կարաւանի այր մարդիկը, կիներն ու երեխաները, զորոնք յիշատակած եմ այդ զեկոյցի 15-րդ էջին մէջ, այստեղէն ոտքով հինգ ժամ հեռաւորութեան վրայ կոտորած են: Իրապէս գրեթէ հաստատ է, թէ քաղաքէն բռնագաղթուածները Վիլայէթի սահմաններէն դուրս չհանած՝ Յուլիսի առաջին օրերուն ջարդած են՝ բացի ջնջին բացառութիւններէ: Բաւական դժուար է ըմբռնել իմաստը այն ծրագրին, զոր Տրապիզոնի, Օրտուի, Կիրասոնի, Ջառայի, էրզրումի եւ Երզնկայի գաղթականները հոս հասցնելով, այստեղ կոտորել է: Մենք մեզի հարց կու տանք, թէ ինչո՞ւ այս Վիլայէթը ընտրուած է որպէս սպանդանոց»:

Լէսլի Տէյվիսի մօտ՝ Ա. Մ. Ն.ի հիւպատոսարանին մէջ

մօտաւորապէս 50 հայեր ապաստան գտած էին: Ան զանոնք կը պատսպարէր՝ ինքզինք լուրջ վտանգի ենթարկելով:

Գ. 1.- Տէյվիսը Բուի Հեծեալ է (էջ 31-37)

Ինչպէս որ վերը նշուած է, Տէյվիս 1912-ի Մարտէն մինչեւ 1914-ի Ապրիլը Պաթուժի մէջ կը ծառայէ: Տէյվիս 1914-ի Մայիսին Խարբերդ կը հասնի: Ծնողներուն հիւանդութեան պատճառաւ ան քիչ ետք Ա. Մ. Ն. կը մեկնի եւ Օգոստոսին Խարբերդ կը վերադառնայ՝ անցնելով Պէյրութէն ու Ռաս-իւլ-Այնէն:

Գ. 2.- Օսմաններն Ու Երիտթուրքերը (էջ 37-43)

1792-ին առեւտրական յարաբերութիւններ հաստատուած էին Ա. Մ. Ն.ի եւ Օսմանեան Պետութեան միջեւ երբ «Կրանտ Թուրք» (Մեծ Թուրք) անունով նաւը Չմիւռնիոյ նաւահանգիստը մտած էր թուզ եւ գորգ գնելու համար: 1830-ին երկու պետութեանց միջեւ բարեկամութեան եւ առեւտուրի համաձայնագիրը մը կը ստորագրուի:

Այդ թուականներէն, ամերիկացի միսիոնարները կը սկսին գործել եւ հետզհետէ շատնալ Օսմանեան Կայսրութեան մէջ: Անոնք յամառ աշխատանք կը տանին յատկապէս հայոց եւ յոյներու մէջ ու մեծ յաջողութիւն կը գտնեն: 1908-ին, Սահմանադրութեան վերահռչակումով, Օսմանեան Կայսրութեան սուլթան-խալիֆան թոյլ իշխանութեամբ տիրակալի մը կը վերածուի: «Միութիւն եւ Յաւանքի միութիւն» կուսակցութիւնը երկրին ղեկը ձեռք կ'առնէ Թալատի, Էնվեր եւ Ճեմալ փաշաներու ղեկավարութեամբ: Անոնք իրենց ընդիմադիրները անգթօրէն

եւ հետեւողական կերպով կ'ոչնչացնեն ու իրենց դիրքերը կ'ամրապնդեն:

Հայոց Յեղասպանութեան արմատները մինչեւ «միլլեթ»-ներու (ոչ-խալիֆական յարանուանութեանց) ստեղծման ժամանակը կ'երկարին: Արդարեւ, իսլամութիւնն ընդունելէ յետոյ, թուրքերը իրենց հպատակ քրիստոնեայ ազգերուն եւ հրեաներուն կ'առաջարկեն կամ իսլամանալ, կամ մեկուսանալ երկրին հասարակական կեանքէն: Կրօնական փոքրամասնութեան կարգավիճակ կը ստանան հայերը, յոյները եւ հրեաները:

Դ.- Կերկերեանը Յեղասպանութենէն Վերապրող է Ու Գիտնական (էջ 43-51)

Սիւզան Ք. Պլէրի ուսուցիչը՝ Հայր Կերկերեանը, իր կեանքի յիսուն տարիները Հայկական Յեղասպանութեան ուսումնասիրութեան նուիրած էր: Ան վերապրող ակա-նատես մըն էր: Ան Հայաստանի պատմութեան վերաբերեալ լայն տեղեկութիւններ եւ գիտելիքներ կը փոխանցէ Պլէրի: Հայր Կերկերեանը դատական նիստերու ընթացքին որպէս ապացոյց կը ներկայացնէ Թուրքիոյ կեդրոնական կառավարութեան՝ տեղական իշխանութեանց ղրկած հեռագիրներն ու գրաւոր հրամանները, որոնց մէջ յստակօրէն կը պահանջուէր Օսմանեան Կայսրութեան հայերը ոչնչացնել: Այս դատական նիստերը Թուրքիոյ ռազմական պարտութենէն եւ երիտթուրքերու վարչակարգի տապալումէն ետք կը գումարուէին Կ. Պոլսոյ մէջ, թրքական նոր կառավարութեան ժամանակ:

Անգամ մը երբ Պլէր Հայր Կերկերեանի պատրաստած փաստաթուղթերու միջբրոֆիլմերը կը դիտէր Ամերիկայի Ազգային Արխիւներու գրասենեակին մէջ, Լէսլի Տէյվիսի

հաշուետուութեան շարքը կը նկատէ: Իւրաքանչիւր հաշուետուութիւն 12-14 էջերէ կը բաղկանար: Անոնք բոլորն ալ Մամուլէթ-իւլ-Ազիզի նահանգին եւ հիւսիսային շրջանի հայոց բռնի վերաբնակեցման եւ բնաջնջման ահաւոր մանրամասնութիւնները կը նկարագրէին: Անոնցմէ ամէնէն յատկանշականը կ'ըսէր.

«Կը պարզուի, թէ բոլոր անոնք, որոնք նախորդ գեկոյցիս 15-րդ էջին մէջ նկարագրուած խումբերուն մէջ կը գտնուէին՝ այրեր, կիներ եւ երեխաներ, մորթած են այն վայրին մէջ, որ այստեղէն հինգ ժամ հեռաւորութեան վրայ կը գտնուի»:

Ուրիշ տեղ մը Լէսլի էմըրտըն Տէյվիս կը գրէ.

«Այժմ կարելորը այդ մարդիկը ողջ պահելն է, ապա օգնել, որ կարելի ըլլայ երկրէն դուրս ղրկել զանոնք»:

Ե.- Անորսալի Լուսանկարները կը Գտնուին (էջ 52-67)

Սիւզան Ք. Պլէր յարատեւօրէն կը հետապնդէր Հայկական Յեղասպանութեան մասին գրուած գեկուցագիրներու եւ լուսանկարներու հետազօտումը: Ան 1982 տարին ամբողջ Ա. Մ. Ն. ի «Ազգային Արխիւներ»ուն մէջ ուսումնասիրութիւններ կը կատարէ, ապա իր ազատ ժամերը այս գործին կը յատկացնէ: «Ազգային Արխիւներ»ուն մէջ ան կը ծանօթանայ Ա. Համաշխարհային Պատերազմի տարիներուն Գերմանիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան փաստաթուղթերու պատճէններուն մէջ «ցեղային բնաջնջում» որակումին:

Պլէրը Մաք-Դանիէլզին եւ անոր տիկնոջ մօտ Լէսլի Տէյվիսի լուսանկարած պատկերներ կը գտնէ պատահաբար եւ զանոնք կը հրատարակէ: Այդ լուսանկարները հայկական

ջարդերու խօսուն վկայութիւններ են: Մաք-Դանիէլզ եւ տիկինը 1919-ին Մերձաւոր Արեւելք եւ մասնաւորաբար Արեւմտեան Հայաստան այցելած էին:

Զ.- Հետեւանքը՝ Երախտագիտութիւն Եւ Պաշտօնանկութիւն (էջ 68-76)

Տէյվիսի ցնցող հաշուետուութիւնը կը ներկայացնէ Մամուլէթ-իւլ-Ազիզի նահանգին եւ Խարբերդ քաղաքին կեանքը, պատերազմը, տեղի թուրք պաշտօնէութիւնը, բանակը, հայոց հալածանքը, հիւսիսէն քշուած հայ զաղթականներու տառապանքն ու տանջանքը եւ դէպի ստոյգ մահ տարուիլը:

1915-ի ու յաջորդ տարիներու հայոց գրաւոր վկայութիւնները Տէյվիսի հաշուետուութիւնը աւելի կը հիմնաւորեն: Հայալեզու թղթակցութեանց բրիտանական գրաքննիչ նշանակուած Պետրոս Տօնապետեանը վերապրողներու նամակները հաւաքելով, զանոնք հրատարակած է Փարիզի մէջ՝ «Ձայն Տառապելոց» խորագրուած հատորով (տես «Վկայարան Հայկական Յեղասպանութեան», Գ. գիրք, էջ 26-45):

1917-ին երբ Լէսլի Տէյվիս Ա. Մ. Ն. կը վերադառնայ, հոն հաստատուած 189 խարբերդցի հայեր անոր հետ կը տեսակցին զանազան քաղաքներու մէջ: Տէյվիս անոնց սիրելիներուն եւ ազգականներուն մասին տեղեկութիւններ կը փոխանցէ: Ո՛չ միայն հայեր, այլ նաեւ օտարներ զնահատած են Տէյվիսի ջանքերը: Անոնցմէ է մինչեւ 1917 թուականը Խարբերդի մէջ ծառայած միսիոնար Հենրի Ռիցը, որ Ա. Մ. Ն. ի պետական հիւպատոսական ծառայութեան պետին կը գրէ Տէյվիսի՝ հայոց օգնելու եւ պատսպարելու ուղղութեամբ կատարած աշխատանքներուն մասին: Սակայն

այս ծառայութեան պետը Տէյվիսի չի թոյլատրեր ելոյթներ ունենալ հայոց եւ ասորիներու օգնութեան ամերիկեան կոմիտէի հիմնադրամ ստեղծելու նպատակով: 1918-ին Տէյվիս Ա. Մ. Ն.ի հիւպատոս կը նշանակուի «Սպիտակ Ռուսաստան»ի Արխանկէլսք նաւահանգստային քաղաքին մէջ, ապա կը փոխադրուի Հելսինքի: Յետագային կը ծառայէ նաեւ ուրիշ քաղաքներու մէջ: Ան կը մահանայ 1960-ին, Մեսէչուսէցի նահանգի Փիցֆիլտ քաղաքին մէջ:

3- Լէսլի Տէյվիսի՝ Թուրքիոյ Մէջ Խարբերդի Նախկին Ամերիկեան Հիւպատոսի Հաշուետուութիւնը Ներկայ Պատերազմի Սկիզբէն Ի Վեր Խարբերդի Մէջ Ամերիկեան Հիւպատոսարանի Գործունէութեան Վերաբերեալ

Հաշուետուութեան սկիզբը Լէսլի Տէյվիս կը նկարագրէ Մամիւրէթ-իւլ-Ազիզի վիլայէթը, Խարբերդ եւ Մեզիրէ քաղաքները ու տեղեկութիւններ կու տայ այդ շրջանի առեւտրական, կենցաղային եւ քաղաքական վիճակին մասին: Ան կը շեշտէ ծովեզերքէն Խարբերդի հեռու գտնուելու փաստը: Սամսոնէն դէպի Խարբերդ հասնող եւ Փրանսացիներու Ֆինանսաւորած երկաթուղագիծին աշխատանքներն սկսած էին Սամսոնի մէջ Ա. Համաշխարհային Պատերազմէն առաջ, բայց պատերազմին պատճառով կիսատ մնացած էր գործադրութիւնը:

Տէյվիս կը գրէ նաեւ Մամիւրէթ-իւլ-Ազիզի նահանգապետ Սապիթ պէյի նկարագրին մասին: Ան կը յիշէ, թէ վերջինս պատերազմի տարիներուն թոյլ տուած էր շատ հայոց դէպի Ռուսիա փախուստը:

Լէսլի Տէյվիսի գլխաւոր բարապանը (ղապազ) Կարապետ Պետրոսեանն էր, օգնական երկու բարապանները՝ Թուրքեր: Կարապետ չափազանց ընդունակ եւ վստահելի ծառայող

մըն էր: Անոր հայ ըլլալը մեծ դժուարութիւններ յարուցած էր, սակայն Տէյվիս միշտ անոր պաշտպան կեցած էր:

Շատ չանցած, մեծ վեզիր Հագգը փաշան Սապիթ պէյը կը փոխարինէ: Շէնքերուն տիրանալու եւ զանոնք զինուորական նպատակներով գործածելու համար, թրքական կառավարութիւնը 1915-ի Մարտին Խարբերդի ամերիկեան բոլոր դպրոցները կը փակէ՝ ժանտատենդի տարածման կանխարգիլումը պատրուակելով:

Ա. Համաշխարհային Պատերազմի սկիզբին շուկներ կը չըլին, թէ որոշ հայոց տուներուն բակերը թաղուած զէնքեր ու ռումբեր յայտնաբերուած են եւ թէ այդ զէնքերը հայ յեղափոխականներու կը պատկանին: Յետագայ դէպքերը ցոյց տուին, թէ այս երեւոյթը Թուրքիոյ զանազան շրջաններուն մէջ նոյն ատեն յայտնուած է եւ թէ թրքական ոստիկանութիւնն ինքն էր զէնքերն ու ռումբերը յիշեալ տեղերուն մէջ գետեղել տուողը: Շատ վայրերու մէջ զէնքի խուզարկութիւնը այնպիսի վայրագութեամբ կը կատարուէր, որ զէնք չունեցող հայերը զէնք կը գնէին եւ կառավարութեան կը յանձնէին:

Տիգրանակերտէն ամերիկացի միսիոնար բժիշկ Սմիթը Խարբերդի միսիոնարներու գլխաւորին՝ միսթր Ռիցին կը յայտնէ, թէ Տիգրանակերտի մէջ ահ ու սարսափի մթնոլորտ կը տիրէ հայոց դէմ շղթայազերծուած հալածանքին պատճառով: Թուրք զինուորները տանիքներու վրայ դիրք բռնած էին եւ իր տան բակն իջնող ամէն հայն անմիջապէս հրացանազարկ կ'ընէին:

23 Յունիս 1915-ին, Թուրքերը հայոց Առաջնորդ սրբազանը, «Եփրատ» Գոլէճի հայ ուսուցիչները եւ մեծ թիւով խարբերդցի հայ վաճառականներ բանտերէն հանելով, անծանօթ ուղղութեամբ կը տանին: Երկար ժամանակ անոնց ճակատագիրն անյայտ կը մնայ: Աւելի ուշ կը պարզուի, թէ

զանոնք բոլորն ալ Արդն Մատէն գիւղաքաղաքին մօտերը կոտորած են:

Վերոյիշեալ դէպքէն քանի մը օր ետք ամբողջ Խարբերդի եւ շրջակայ գիւղերուն հայոց բռնագաղթը կը սկսի: Կ'ըսուէր, թէ հայ բռնագաղթեալներու հաւաքման հանգրուանը Ուրֆան պէտք է ըլլար, սակայն Տէյվիս անոր չէր հաւատար, որովհետեւ, իր կարծիքով, եթէ հայերն ապահով տեղ մը պիտի հասցնէին, քաղաքէն դուրս չէին հաներ արդէն: Ան այս մասին Կ. Պոլսոյ ամերիկեան դեսպանատան կը զեկուցէ:

Մամիւրէթ-իւլ-Ազիզ նահանգի բռնագաղթեալ հայերէն ողջ մնացածները, որոնք Յդեսիա հասած էին, դէպի սուրիական անապատներ կը քշուին: Տաք ամառ էր: Կիներ եւ երեխաներ, մեծ մասը ոտքով կ'ընթանային, օրերով ջուր չէին գտներ եւ ճամբուն վրայ կը մնային:

Լէսլի Տէյվիս կ'ազատէ շատ հայեր, մանաւանդ ամերիկահայատակները: Ան նահանգապետին մօտ կը միջամտէ, որպէսզի բռնագաղթեալները ժամանակ ունենան պատրաստուելու: Սակայն մարդիկ իրենց տունները, հողն ու ամբողջ ունեցուածքը կը թողնէին ու կը մեկնէին՝ միայն թէ ազատէին այս թրքական գեհէնէն: Շատ քիչեր իրենց հետ գումարներ կը տանին, սակայն անոնք ալ ճամբան կը կողոպտուին:

Վեռաւոր գիւղերու մէջ ամերիկահայատակ հայեր կային: Տէյվիս բազում ջանքերով կը յաջողի զանոնք հիւպատոսարան բերել:

Հակառակ անոր, որ թրքական իշխանութիւնները մեկնող հայոց պահակախումբերով ապահով տեղ հասցնել կը խոստանային, ճամբաները վտանգաւոր էին եւ լեցուն նոյն ինքն կառավարութեան ղրկած քիւրտերով եւ շէրքներով, որոնք խեղճ հայերը կը կողոպտէին ու կը սպաննէին:

Բերկրիէն եւ Կարինէն տեղահանուած հայերը Խարբերդ կը բերուէին եւ քաղաքի ծայրամասերուն մէջ ժամանակաւոր բնակութիւն կը հաստատէին: Անոնք իրենց տեղերէն մէկ ամիս առաջ ճամբայ ելած էին եւ շատ զրկանքներ ու տառապանքներ տեսած էին:

1915-ի ամրան սկիզբին, օր մըն ալ Տէյվիսի գլխաւոր բարապանը՝ Կարապետ Պետրոսեանը կը ձերբակալեն եւ ոստիկանատուն կը տանին, այնուհետեւ զայն կը փոխադրեն Քրմըզը Քոնաք (Կարմիր շէնք Խարբերդի մէջ, նաեւ Կարմիր Խոնախ կը կոչեն), ուրկէ կարճ ժամանակ առաջ հազարաւոր հայ զինուորներ, զինաթափ ընելէ յետոյ, քանի մը օր խիստ չարչարանքներու ենթարկած եւ ապա գիշերով տարած էին: Թրքական իշխանութիւնները տարբերութիւն չէին դներ զինուորական ծառայութենէն ազատուելու տուրքը (պէտէլ) վճարողներուն եւ չվճարողներուն միջեւ ու բոլորն ալ բանակ կը տանէին: Տէյվիս Կարապետը բանտէն կ'ազատէ:

Տէյվիս կոտորածէն ազատուած հայ երիտասարդի մը վկայութիւնը կը լսէ: 5 Յուլիս 1915-ին թուրքերը ութը հարիւր հայ երիտասարդ կը ձերբակալեն Խարբերդի մէջ: Թուրք ոստիկանները զանոնք բոլորը կը խուզարկեն, դրամները, ինչպէս նաեւ՝ արժէքաւոր իրեղէնին եւ հազուատներուն մէկ մասը կը խլեն, ապա զանոնք 14 հոգինոց խումբերով քաղաքէն դուրս կը հանեն գաղտնի կերպով: Քրտական գիւղ մը տանելով՝ մզկիթի մը եւ յարակից շէնքերուն մէջ կը բանտարկեն զանոնք: 7 Յուլիսի կէսօրին թուրք զինուորները զանոնք կը սկսին գնդակահարել: Հայ երիտասարդներուն մեծ մասը փամփուշտով սպաննելէ յետոյ, «խնայողութեան» համար, սպանդը սուիներով կը շարունակեն: Այս յաւելեալ սարսափը հայ երիտասարդներէն մէկուն՝ դեղագործի մը ոյժերուն լարումը գագաթնակէտին

կը հասցնէ, եւ ան, պարանը կտրելով, կը յաջողի փախուստ տալ ու Ամերիկեան հիւանդանոցն ապաստանիլ: Այս ընթացքին, ուրիշ 15-20 երիտասարդներ ալ կը յաջողին նոյնպէս փախուստ տալով փրկուել ստոյգ մահէն:

Խարբերդի հայոց մեծ մասը բռնագաղթեցուելէ յետոյ, Տէյվիս մնացած կիները պաշտպանելու եւ երեխաներուն համար որբանոց մը բանալու ճիգեր կը թափէ: Ան նահանգապետ Հազգը փաշային կը դիմէ, սակայն կը մերժուի: Վերջինս կ'ըսէ, թէ կառավարութիւնն այդ ուղղութեամբ աշխատանքներ կը տանի: Իրապէս ալ, թրքական կառավարութիւնը հայ երեխաներուն համար որբանոցներ կը հիմնէ՝ միայն որոշ ատեն զանոնք «պատսպարելու» համար: Յետոյ այդ որբերը կ'անհետանան. լուր կը տարածուի, թէ անոնք տարուած են Խարբերդէն քսան մղոն հեռու գտնուող լիճ մը եւ խեղդամահ եղած: Տէյվիս անձնապէս տեսած էր մանկական ոսկրակոյտեր ճամբաներուն վրայ: Ո՛չ մէկ հայ, ո՛չ իսկ արտօնագիր (վեսիքա) ունեցողն ապահովուած էր:

Մօրենիկ գիւղէն ամերիկահպատակ Վարդեր Ճորճ անունով կին մը իր չորս փոքր երեխաներով Խարբերդի ամերիկեան հիւպատոսարանը կ'ապաստանի: Տէյվիս անոնց արտօնագիր կ'ապահովէ: Ծնողներն սպաննուած շատ հայ երեխաներ Ամերիկա ծնած էին: Տէյվիս իր կարելի բոլոր միջոցները կը գործադրէ զանոնք, ինչպէս նաեւ կանայք ու սղամարդիկ պատսպարելու համար: Որոշ ատեն մը, Տիգրանակերտի բրիտանական փոխ-հիւպատոսի թարգման, պատուելի Թովմաս Կ. Մկրտիչեանի տիկինն ալ՝ Եսթեր Կ. Մկրտիչեանը Խարբերդի ամերիկեան հիւպատոսարանը կ'ապաստանի (էջ 137): Պատուելին իր տիկինը եւ վեց զաւակները Տէյվիսի վստահելով՝ Եգիպտոս անցած էր:

Պատուելի Թովմաս Մկրտիչեանի հեղինակած «Տիգրանակերտի Նահանգի Զարդերը» գիրքի 3-4-րդ էջերուն մէջ

տպուած է իր տիկնոջն ուղղուած նամակ մը, ուր պատուելին անոր եւ վեց զաւակներուն ապահով կերպով Ռուսաստան հասնիլը կը յիշէ:

Տէյվիս «Եփրատ» Գոլէճի ուսուցիչներէն Փրոֆ. Լիւլէճեանը կ'ազատէ ու Տերսիմ կը ղրկէ զայն: Ապա Ամերիկա ապրած ծերունի Գրիգոր Մաղաքեանը իր մօտը կ'առնէ եւ անոր բարապանի պաշտօն կու տայ:

Հիւպատոսին համար լուրջ մտահոգութիւն էր բոլոր այս փախստականները կերակրելը, մինչդեռ կացարան տալը համեմատաբար դիւրին էր. հիւպատոսարանի շէնքը երեք յարկանի էր եւ ազատ շատ տեղեր կային:

Լէսլի Տէյվիս իր բոլոր տեսածներն ու լսածները ծածկագիր հեռագիրներով Կ. Պոլիս՝ դեսպան Հենրի Մորկընթաուին կը հաղորդէ: Հայոց թշուառութեան, տառապանքներուն եւ նահատակութեան ականատեսի վկայութիւններ են ասոնք:

Բռնագաղթեալները Խարբերդէն դէպի Հալէպ կը ղրկուէին խումբ առ խումբ: Ճամբուն վրայ կողոպուտ, տառապանք եւ ջարդ տեսնելէ յետոյ, շատ քիչեր Հալէպ կը հասնէին՝ հոնկէ ալ չըջակայ անապատները քշուելու համար:

Տէյվիս տակաւին չաքսորուած սակաւթիւ հայերը բռնագաղթէն ազատելու յոյսով բերանացի դիմում կը կատարէ կուսակալին: Վերջինս միւտիքին միջոցով Տէյվիսէն կը պահանջէ, որ ան գրաւոր դիմում կատարէ այս ուղղութեամբ եւ դիմումին մէջ յիշէ, թէ բռնագաղթուած հայերը յանցագործներ են, իսկ մնացեալները՝ անմեղ: Նպատակը յստակ էր. այսպիսի գրաւոր դիմում մը, գրուելու պարագային, ցոյց տալ արտաքին աշխարհին: Տէյվիս բնաւ չի զիջիր եւ կը մերժէ այսպիսի սուտերու հեղինակ դառնալ:

Լէսլի Տէյվիսի զեկուցումները լեցուն են հայոց տառա-

պանքները եւ ջարդերը նկարագրող իրարայայջորդ դրուագներով: Անոր լուսանկարած պատկերները փաստեր են դրուագներու հաւաստիութեան: Իւրաքանչիւր լուսանկարի տակ կը տեսնենք անոր բացատրութիւնը:

Էնվեր փաշա Խարբերդի մէջ Տէյվիսի պաշտօնավարութեան ընթացքին երկու անգամ կ'այցելէ Արեւմտահայաստանի այդ քաղաքը: Տէյվիս հիւպատոսի իր հանգամանքով ներկայ կը գտնուի հանդիպումներէն մէկուն: Էնվեր սուր հայեացքով մը Տէյվիսի հարց կու տայ. «Պարո՞ն հիւպատոս, ի՞նչ բանով կը զբաղիք այժմ: Ձեր գեկուցագիրները վերջացուցիք, չէ՞»: Դուք շատ նամակներ չէք գրեր, այդպէս չէ՞»: Պարզ էր, թէ Էնվեր ինչի կ'ակնարկէր: Հայոց նկատմամբ գործադրուող դաժանութեանց մասին Տէյվիսի գեկույցներէն շատերը թրքական իշխանութիւնները գրաւած էին, որովհետեւ անոնց բովանդակութիւնն իրենց շահերուն կը հակասէր:

Կարինի ռուսական գրաւումով, թուրք եւ քիւրտ մուհաճիքներ (գաղթականներ) շարան-շարան Խարբերդ կու գան: Տէյվիս եղելութեանց ականատես ըլլալով զանոնք կը նկարագրէ:

1917-ի Փետրուարին Ա. Մ. Ն. կը խզէ իր դիւանագիտական յարաբերութիւնները Գերմանիոյ հետ: Տէյվիս շատ հաւանական կը նկատէ, որ իր պետութիւնը նոյնն ընէ Օսմանեան Պետութեան հետ: Արդարեւ, շատ չանցած, 21 Ապրիլին Տէյվիս կ'իմանայ թէ Ա. Մ. Ն. ի եւ Օսմանեան Պետութեան միջեւ յարաբերութիւնները խզուած են ու կը նախապատրաստուի երկրէն հեռանալու: Սակայն կարգադրելիք գործերը շատ էին: Ան կուսակալին կը յայտնէ, թէ բոլոր ամերիկահպատակ հայերը իրեն հետ պէտք է տանի: Կուսակալը համաձայն կը գտնուի:

Տէյվիս ծանօթացած եւ մտերմացած էր Խարբերդի մէջ պաշտօնավարող Վեհիպ պէյի հետ, թէեւ կարգ մը հարցերու

մէջ տարակարծիք գտնուած էին: Վեհիպ պէյ մանաւանդ շատ դժգոհ էր Տէյվիսի կարգ մը հայեր Տերսիմ հասցնելու յամառ փորձերէն:

Վերջին օրը՝ 16 Մայիս 1917-ին, Տէյվիս ակամայ իր ետին կը թողուր շատ մը պաշտպանեալ հայեր: 18 օրուան ճամբայ կտրելով ան իր խումբով կը հասնի Կ. Պոլիս:

Ամերիկա հասնելէն յետոյ, Տէյվիս կը շարունակէ իր հայանպաստ գործը: Ան ամերիկահպատակ 189 հայոց տեղեկութիւններ կը փոխանցէ անոնց ազգականներուն մասին եւ մեծապէս օգտակար կը դառնայ Խարբերդ մնացող հայոց:

4- Յաւելուած


Այս մասին մէջ հրատարակուած են Խարբերդի մէջ Լէսլի Տէյվիսի պաշտօնավարութեան շրջանին անոր հեղինակած հաղորդագրութիւնները, որոնք բոլորն ալ դեսպան Հենրի Մորկընթաուին ուղղուած են:

Zaven Messerlian, The Premeditated Nature of the Genocide Perpetrated on the Armenians (Զավեն Մսրրլեան, «Հայոց Դէմ Գործադրուած Յեղասպանութեան Կանխամտածուած Բնոյթը»), հրատարակութիւն «Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակ» թիւ 44, Անթիլիաս-Լիբանան, 2001, միջակ չափի 106 էջ

Այստեղ թարգմանաբար կը ներկայացնեմ այս երկի անգլերէն բնագիրէն դրուագ մը (էջ 33-37), որ ցայտուն փաստ մըն է Հայկական Յեղասպանութեան կանխամտածուած բնոյթին:

Հասկնալու համար չէթէնե-րուն դերը, Մեծն Բրիտանիոյ Արտաքին Գործոց Նախարարու-թեան «Գաղտնի Արաբական Զեկոյց»էն (էջ 37-ի էջատակի թիւ 51 ծանօթագրութիւնը, որ կը նշէ. F. O. 371/2781/264888. Reproduction of crown copyright record in the Public Record Office, London, appears by permission of the controller of H. M. Stationary Office) կը մէջբերենք հետեւեալը, որ թարգմանուած է Դեկտեմբեր 27, 1916 թուագրուած, Յաւելուած Բ. (Appendix B) նշումով, ինչպէս նաեւ «Հայկական Զարդեր» խորագրուած հատուածը: Զեկոյցը վկայութիւն մըն է ականատես, տեղա-կալ Սայիտ Ահմէտ Մուխթար Պաաթի, որ չէթէները կը կոչէ «շոթաներ» (shotas), այսինքն՝ աւազակներ:

«1915-ի Ապրիլին Կարին (էրզրում) կը գտնուէի: Կոստանդնուպոլիսէն հրաման եկաւ, թէ սահմանային



քաղաքներու եւ գիւղերու մէջ բնակող հայերը պէտք է ներքին գաւառներ աքսորուին: Կ'ըսուէր թէ ասիկա նախագրուչական միջոց մըն էր: Այդ ատեն տեսայ հայոց հսկայ կարաւաններ, մեծ մասամբ ծեր մարդիկ, կիներ եւ երեխաներ, որոնք Կարինէն կ'անցնէին: Լաւ առողջութիւն ունեցած այր մարդիկը թրքական բանակին մէջ կը ծառայէին: Անոնցմէ շատեր Ռուսիա փախած էին: Զարդերը տակաւին չէին սկսած: 1915-ի Մայիսին Տրապիզոն փոխադրուեցայ: Տրապիզոնի նահանգին բոլոր հայերը դէպի ներքին գաւառներ աքսորելու հրաման կու գայ Յուլիս ամսուն մէջ: Ռազմական դատարանի անդամ ըլլալով՝ գիտէի, թէ աքսորը ջարդ կը նշանակէ»:

«Տրապիզոնի հայ Առաջնորդը Կարին կը կանչուի իրեն դէմ եղած ամբաստանութիւններուն պատասխանելու հա-մար: Սակայն Կարին տարուելու փոխարէն, կը տարուի Բաբերդ, հոնկէ ալ՝ Կիւմիւշխանէ, որուն կառավարիչը գնդապետ Ապտիւլ Քատիր Այնթապլին էր: Ան տիրահազակ էր հայոց դէմ գործած վայրագութիւններով: Ան Առաջնորդը գիշերով կը սպաննէ: Այնթապլի Կարինի Առաջնորդն ալ սպաննած էր Կիւմիւշխանէի մէջ»:

«Վերը յիշուած աքսորի հրամանէն բացի, հրապարակուած էրկայսերական «իրատէ» մը՝ աքսորէն բոլոր փախստականները գնդակահարել առանց դատելու: Գաղտնի հրամանին մէջ «աքսորէն փախստական» բառերուն տեղ «հայերը» գրուած էր: Սուլթանին «իրատէ»ին կողքին հրապարակուած էր նաեւ շէյխ-ուլ-իսլամին «Փաթուա»ն, ուր կ'ըսուէր, թէ հայերը թուրքերուն արիւնը թափած էին, ուրեմն հայ սպաննելը օրինական էր: Ետքը աքսորը կը սկսի: Երեխաները մէկ կողմ դրուած էին: Կառավարութիւնը անոնց համար դպրոց մը բացած էր: Տրապիզոնի մէջ Ա. Մ. Ն. ի հիւպատոսարանը հայ երեխաներուն համար ապաստանարան մը հիմնած էր:

Երբ հայ բռնազաղթեալները Կիւմիւլիսանէ կը հասնին, անոնցմէ կը զատուին լաւ առողջութիւն ունեցող տղամարդիկը՝ անոնց գործ հայթայթելու պատրուակով: Պահակ ոստիկաններու ուղեկցութեամբ, կիներն ու մանուկները կը շարունակեն իրենց ճամբան թրքական իշխանութեանց այն վստահեցումով, որ անոնց վերջնական հանգրուանը Մուսուլը պիտի ըլլար: Մէկ կողմ դրուած տղամարդիկը 15 կամ 20-ական հոգինոց խումբերով քաղաքէն դուրս հանուելով, նախապէս փորուած փոսերու եզերքը գնդակահար կ'ըլլային եւ այդ փոսերուն մէջ ալ կը նետուէին: Օրական հարիւրաւոր մարդիկ այս ձեւով կը սպաննուէին: Կիներն ու երեխաները իրենց ճամբուն վրայ յարձակումի կ'ենթարկուէին չէթէներու կողմէ, որոնց շարքերը թրքական կառավարութիւնը կազմակերպած էր: Չէթէները կիներէն եւ երեխաներէն մաս մը կը տանին: Տարուած կիներն ու երեխաները բռնաբարելէ յետոյ, չէթէները զանոնք սառնասրտօրէն կը սպաննեն: Այս յարձակումները ամենօրեայ երեւոյթներ եղան, մինչեւ որ անոնք բոլոր կիներէն եւ երեխաներէն ձերբազատուեցան: Պահակ ոստիկանները չէթէներու գործին չմիջամտելու խիստ հրահանգ ստացած էին»:

«Կառավարութիւնը կ'աքսորէ եւ կը ջարդէ իր մօտ պահած երեխաները»:

«Տրապիզոնի մէջ Ա. Մ. Ն. ի հիւպատոսարանի պաշտպանութեան տակ առնուած երեխաներն ալ կը տարուին՝ զանոնք Սեբաստիոյ մէջ պատրաստուած ապաստանարանը տեղաւորելու պատրուակով: Անոնք նաւակներով կը տարուին ծովուն բացերը, կը դաշունահարուին եւ տոպրակներու մէջ լեցուելով, ջուրը կը նետուին: Քանի մը օր ետք անոնցմէ ոմանց դիակները ծովեզերքը փռուած էին»:

«1915-ի Յուլիսի մէջ, աքսորականներու կարաւանի մը

ուղեկցելու հրաման եկած էր ինծի: Տրապիզոնէն ելած վերջին կարաւանն էր ասիկա: Խումբին մէջ 120 այր մարդիկ, 700 երեխաներ եւ 400 կիներ կային: Տրապիզոնէն զանոնք տարի Կիւմիւլիսանէ: 120 այրերը կը տարուին: Աւելի ուշ իմացայ, որ անոնք սպաննուած էին: Կիւմիւլիսանէի մէջ ինծի հրաման եկած էր, որ կիներն ու երեխաները Երզնկա տանիմ: Ճամբուն վրայ հայոց հազարաւոր անթաղ դիակներ տեսայ: Չէթէներու խումբեր եկան եւ ինձմէ պահանջեցին կիներն ու մանուկները իրենց յանձնել: Մօտաւորապէս 200 երեխաներ իսլամ ընտանիքներու մօտ թողուցի: Վերջիններս անոնց հոգ տանելու եւ զանոնք դպրոց ղրկելու պատրաստակամութիւն յայտնեցին: Երզնկայի միւլթասարրիֆը հրամայեց ինծի, որ կարաւանը Քամաշ (հաւանաբար Անի-Քեմախն է - խմբ.) տանիմ: Քամաշի իշխանութիւնները մերժեցին կարաւանը յանձն առնել: Հիւանդ էի եւ վերադառնալ կ'ուզէի, բայց ինծի ըսուեցաւ, որ այնքան ատեն որ գաղթականները ողջ են, պէտք էր անոնց տեղէ տեղ ուղեկցելի: Յաջողեցայ իմ պատասխանատուութեանս տակ գտնուող գաղթականները միացնել Կարինէն ելած կարաւանին, որուն պատասխանատուն իմ գործընկերս էր՝ Մուհամմէտ էֆենտին: Աւելի ուշ ան ինծի պատմեց, թէ Քամաշէն ետք երբ կարաւանը Եփրատի եզերքը կը հասնի, չէթէները զայն կը կեցնեն: Անոնք կարաւանին իւրաքանչիւր անդամը կը գնդակահարեն եւ ջուրը կը նետեն»:

«Տրապիզոնի իսլամները (այսինքն՝ թուրքերը) զգուշացուած էին հայերու ապաստան չտալ, այլապէս՝ մահուամբ պիտի պատժուէին»:

«Տրապիզոնի կառավարական պաշտօնեաներ հայոց ընտիր ընտանիքներէն գեղեցիկ կիներ առեւանգելով, բռնաբարած եւ ապա սպաննած էին»:

«Բազմաթիւ են կիներու եւ աղջիկներու բռնաբարման պարագաները, նոյնիսկ հրապարակաւ: Անարգուելէ յետոյ, անոնք կարգաւ սպաննուած էին»:

«Կարինէն բռնագաղթուածները մեծաթիւ արջառով եւ կարելի եղած չափով կրելի ապրանքներով ճամբայ ելած էին: Երբ անոնք Երզնկա հասած էին ու տեսած բոլոր հայոց բռնագաղթուելը, լրջօրէն մտահոգուած եւ կասկածոտ դարձած էին թուրքերուն հանդէպ: Կարինի վալիին փորձած էր անոնց կասկածները փարատել եւ վստահեցնել, թէ որեւէ չարիք պիտի չհասնի իրենց: Ան ըսած էր, թէ առաջին կարաւանը Քամաչ պիտի մեկնի: Տակաւին Կարին մնացող հայերը հանգստացած էին լսելով որոշուած տեղը՝ Քամաչ իրենց ազգակիցներուն հասնիլը: Սակայն, շատ չանցած, Քամաչ հասնող կարաւանին այրերը գնդակահարուած էին, իսկ կիներն ու երեխաները՝ Քամաչէն դուրս ելլելէ յետոյ, չէթէներու կողմէ ջարդուած»:

«Հայոց բռնագաղթի եւ բնաջնջման թուրք պատասխանատուները հետեւեալներն էին. Կարինի մէջ՝ Պէհաէտտին Շաքիր պէյ, Տրապիզոնի մէջ՝ Նաիլ պէյ (ոստիկանական գնդապետ) եւ Թոֆիք պէյ Մանասթիրլի (ոստիկանական յանձնակատար եւ Քամաչի մէջ՝ Երզնկայի կողմէ խորհրդարանի անդամ): Չէթէներուն կեդրոնը Քամաչի մէջ էր: Անոնց մեծաւորը քիւրտ Մուրզա պէյն էր, որ յոխորտացած էր, թէ 70,000 հայեր սպաննած էր: Աւելի ուշ ան թուրքերու կողմէ վտանգաւոր նկատուելով, ոստիկան մը սպաննած ըլլալու ամբաստանութեամբ բանտը նետուած էր, ու վերջապէս՝ գաղտնօրէն սպաննուած»:

Վարդգէս Անդրէասեան, «Եղբերոք» (վիպասք), հեղինակային հրատարակութիւն, Երեւան, 2006, փոքր չափի 272 էջ

Խարբերդի նահանգի Բերդակ գիւղացի Թորոս պապը 1915-ի գարնան բռնագաղթէն վեց ամիսներ առաջ, իր ծանօթ «բարեկամ» թուրք Օմար աղայէն արդէն իմացած էր, որ հայերը պիտի կոտորէին:

Թորոս Տերսիմի Ագրակ քաղաքին մէջ իբր կլայագործ կ'աշխատէր: Թորոս պապին գործաւորը՝ Ղազարոսը Տերսիմի աշիւթապետներէն Տիապ աղայի թոռնուհին՝ Չարէին սիրահարած էր:

Այն օրը, որ Թորոս պապը հայերը կոտորելու ծրագիրին գոյժը կ'իմանայ, կը պատրաստուի տուն երթալու՝ գործը կիսատ ձգելով: Այդ նեղ պահուն Ղազարոսը կը փութայ դէպի Չարէի տան բակը, ուր անոր հայրը՝ Խըլլը գինով վիճակի մէջ գետինը պառկած էր: Ղազարոս պահը յարմար նկատելով յառաջ կ'երթայ գինովը այդ վիճակէն ազատելու: Չարէի ընտանիքին անդամները, մինչեւ իսկ անոր մեծ հայրը՝ Տիապը մեծապէս կը գնահատեն Ղազարոսի այս քայլը: Տիապ իր մեռած որդւոյն տեղ կ'ուզէ որդեգրել Ղազարոսը: Նոյն օրը ուրիշ բարեբաստիկ դէպք մը կու գայ նպաստելու Ղազարոսին: Վերջինս Տիապ աղայի սպասաւորներուն հետ անոր գողցուած ոչխարները ետ բերելու կ'երթայ ու մեծ յաջողութիւն կ'արձանագրէ: Ան Տիապ աղայէն չի մերժուիր, երբ Չարէի ձեռքը կը խնդրէ:



Թորոս պապն այս ամուսնութեան առաջին համա-
ձայնողներէն եղած էր՝ գալիք կոտորածներուն մասին
իմացած ըլլալով: Ան Բերդակի քահանան եւ բոլոր գիւ-
ղացիները համոզած էր, թէ վտանգի պահուն Տիապ աղան
կրնար օգտակար եւ փրկարար դեր խաղալ հայոց համար:

Թորոս պապի թուրք «բարեկամ» Օմարը աչք ունէր
անոր ստացուածքին վրայ, այդ հեռահար նպատակով
ալ ան գալիք կոտորածներուն գաղտնի լուրը Թորոսին
փոխանցած էր: Ուստի, երբ ան կը տեսնէ, թէ Թորոս
պապն ու բերդակցիք իրենց ստացուածքները վաճառելու
եւ հեռանալու կ'աշխատին, այնպէս կ'ընէ, որ Թորոսը
Բերդակի, իսկ անոր որդին՝ Նշանը Փողաղարձ գիւղին մէջ
ամբողջ ընտանիքով սուրի ճարակ կը դառնան: Սպանդէն
կ'ազատի Նշանի որդի Համբարձումը միայն (այս դէպքը
24-լոյս 25 Ապրիլ 1915-ի գիշերը կը պատահի):

Տիապ աղան իր փեսային՝ Ղազարոսին թոյլ կու տայ,
որ գերեվարուած հայեր ազատէ կարելի եղած չափով: Ան
բերդակցի հայրենակից մը՝ Համբարձումը Թորոս պապի մէկ
թուրք բարեկամին՝ Սուլէյման պէկին կը յանձնէ, որպէսզի
վերջինս հոգ տանի անոր: Ապա Սուլէյմանի եղբայրը՝
Մամուտ Ալի հոճա անունով հարկահաւաքը Համբարձումն
իր քով կ'առնէ եւ կ'ուզէ որդեգրել զայն: Համբարձում
միշտ կը մտածէ փախուստ տալու մասին:

1916-ի սկիզբին կը պայթի քրտական ապստամբութիւնը
թուրքերուն դէմ: Համբարձումը հոճային տունէն փախուստ
կու տայ եւ Սուլէյման պէկին քով կ'երթայ: Համբարձում
գիւղին մէջ կը գտնէ իր եղբայրը՝ Աւետիսը, ուրիշ որբերու
հետ: Սուլէյման պէկ Աւետիսը իր եղբոր՝ Մամուտ Ալիին
կը վերադարձնէ՝ անոր հոգ տանելու պայմանով, իսկ միւս
հայ որբերը գիւղին բարեկեցիկ ընտանիքներուն միջեւ կը
բաժնէ:

Սովին պատճառով, երկու թուրք եղբայրները՝ Սուլէյման
եւ Մամուտ Ալի կ'որոշեն Խարբերդ տեղափոխուիլ: Հոս
եւս երկու հայ եղբայրները սովի ճիրաններուն մէջ քարչ
կու տան իրենց գոյութիւնը:

Օր մը, Սուլէյմանի կինը անչափահաս Համբարձումը իրեն
հետ բաղնիք կը տանի: Հոն Համբարձումը պատահաբար
կը հանդիպի ծանօթ Ղազարոսին հօրաքրոջ՝ Մարգրիտ
ապլային, որ Համբարձումին խորհուրդ կու տայ փախչիլ
եւ իր քով գալ: Համբարձում գիշերով կը փախչի եւ կը
յաջողի հասնիլ Մարգրիտ ապլային տունը, ասորիներու
թաղին մէջ: Իրմէ առաջ, այդ տան մէջ քսանեօթը հայ
որբեր հաւաքուած էին արդէն: Թաղին ասորի քահանան՝
Մար Շմոնը, դաւաճանելով հայոց, թուրքերուն կը մատնէ
հայ որբերուն գտնուած տուները: Թուրքերը չհասած՝
Մարգրիտ կ'իմանայ ստոր քահանային մատնութիւնը եւ
կը ծրագրէ պատժել զայն:

Համբարձումն այնպէս կը ձեւացնէ, թէ Մար Շմոնին
կ'ուզէ օգնել իր դաւաճանութեան մէջ եւ փախստականներ
թաքցնող հայոց տուները ցոյց տալ թուրքերուն: Ան
քահանան Մարգրիտին տունը կ'առաջնորդէ. երբ դուռը
կը բացուի՝ երեք ամրակազմ երիտասարդներ քահանան
ներս կը քաշեն: Մար Շմոնը հոն կ'անյայտանայ:

Ապրուստ ճարելու համար՝ Մարգրիտ ապլան տղոց եւ
աղջիկներուն մոմ շինել եւ զանոնք վաճառել կու տար:
Այդ սովի եւ նեղութեան օրերուն Մարգրիտ ապլայի
եղբորորդին՝ Ղազարոսը օգնութեան կը հասնի որբերուն:
Ղազարոս բոլոր տղաքը եւ աղջիկները նախ դէպի Տերսիմ
եւ ապա Կովկաս կը փախցնէ՝ իր քիւրտ ընկերներուն
օգնութեամբ:

Շատ չանցած, Մարգրիտ Խարբերդի նահանգի զանազան
ըջաններէն ութսուն հայ փախստականներ կը հաւաքէ՝

անոնց կեանքը փրկելու նպատակով: Ղազարոսի վարձած քիւրտ ձիաւորները կ'աշխատին զանոնք ապահով տեղ մը հասցնել: Տղոց մէջն էր Համբարձումի կողքին, պատուելի Արմենակ Սիմոնեանի որդին՝ Լեւոն Սիմոնեանը: Անոնք կ'ընթանան պատուուած հագուստներով եւ կիսամերկ, ցերեկները պահուրտելով եւ գիշերները քալելով: Տերսիմի ձիւնածածկ լեռներէն կ'անցնին ու Երզնկայի սահմանները կը մտնեն: Չափահասները հայ կամաւորական խումբերուն կը միանան, իսկ փոքրերը որբանոց կը դրուին: Համբարձում «Մոսկուայի Հայկական Կոմիտէ»ի որբանոցը կը փոխադրուի: Որբանոցին հետ, ան նախ Սարիղամիշ, ապա Կարս, Ալեքսանդրապոլ եւ Ճալալօղլի (ներկայիս՝ Ստեփանաւան) կը տեղափոխուի: Որբանոցի ջրամատակարարման պատասխանատուն էր Հասան Չաւուշը՝ իբրեւ թէ անուանափոխ հայ մը, որ մեծ հոգ կը տանէր երեխաներուն: Ան կորսուած հայ երեխաները կը խլէր թուրքերուն ձեռքէն ու որբանոց կը բերէր: Ամէն ոք զայն կը սիրէր: Սակայն աւելի ուշ երեւան կ'ելլէ այս Հասան Չաւուշին իսկական դէմքը: Ան Իսմայիլ անունով, ազգութեամբ թուրք մէկն էր եւ հայ որբուկները դէպի մահ կ'առաջնորդէր՝ զանոնք անօթի ձգելով: Երբ որբանոցը Ճալալօղլի կը փոխադրուի, հոն Շուշանիկ անունով մայրապետ մը որբանոցի տնօրէն, բժիշկ Տիգրան Պոնափարթեանի ականջին կը փսփսայ Չաւուշի մասին իրեն հասած գաղտնիք մը: Այս դէպքը թրքական բանակի յառաջախաղացման եւ ռուսական բանակի նահանջի օրերուն կը գուգադիպէր: Մուշեղ եւ Համբարձում անունով երկու հայ երիտասարդներ լողի հագուստներով յաջողած էին թրքական բանակ մտնել եւ ի նպաստ հայոց աշխատանք տանիլ: Միւս կողմէ, Ղազարոսն ու Մարգրիտ ապլան մեծ ծառայութիւններ կը մատուցէին հայոց: Հասան Չաւուշ անունով ճանչցուած բուն անձը Ղազարոսն էր:

Որբանոցի թուրք Հասան Չաւուշին մասին Ղազարոսը (Հասան Չաւուշ Ա.) տեղեկացուած էր: Վերջինս իբր թէ հայեր հալածելու գործին մէջ թուրք գինուորականութեան եւ ոստիկանութեան աջակցող, ազատօրէն տեղէ տեղ կը սուրար իր քրտական տարազով, եւ իր կարողութեան սահմաններուն մէջ հայ խլեակներուն զօրաւիգ կը կանգնէր:

1917-ին թուրքերը կը յառաջանային դէպի Ճալալօղլի, իսկ Չօրավար Անդրանիկ անոնց դէմ դնելով Ճալալօղլիի հայերով կը նահանջէր դէպի Լոռի: Ղազարոս Անդրանիկ Չօրավարին բանակը կը փնտռէր, որովհետեւ լսած էր, թէ լրտես Հասան Չաւուշը յաջողած էր հոն մտնել: Վերջապէս Ղազարոս Չօրավար Անդրանիկը կը գտնէ եւ անոր կ'իմացնէ, թէ լրտես Հասան Չաւուշն անոր խումբին մէջ մտած է՝ զայն սպաննելու համար: Հայ Հասան Չաւուշ-Ղազարոսը թուրք Հասան Չաւուշ-Իսմայիլը կը փնտռէ: Չօրավար Անդրանիկի խումբը եւ հայ գաղթականները դէպի Սանահին կ'ուղղուին: Այս ճամբուն վրայ Ղազարոս լրտես Հասան Չաւուշը կը գտնէ: Ղազարոս ինքզինք թուրք ձեւացնելով շատ գաղտնիքներ կ'իմանայ Հասան Չաւուշէն, զայն գինաթափ ընելէ յետոյ: Ապա ան Հասան Չաւուշ-Իսմայիլը ձերբակալելով Չօրավար Անդրանիկի առջեւ կը հանէ եւ թուրք լրտեսն իր արդար պատիժը կը ստանայ:

Որբերը Ախթալա գիւղին մէջ կը տեղաւորեն: Ամիս մը ետք անոնք Ալավերտիի մօտիկ Սաղէն գիւղը կը փոխադրուին, ուտելիքի սաստիկ պակասին պատճառով: Ապա անոնք Չանախճի գիւղը կը տեղափոխուին: Յաջորդ օրը լուր կը հասնի, թէ գիւղին ճամբաները բռնուած էին եւ թէ Նազարբէկովի վեց հարիւր հոգինոց բանակը ջախջախուած էր: Ամբողջ գիւղն իրար կ'անցնի: Պէտք էր թիֆլիս փախչիլ: Շոգեկառքով երթալն անկարելի էր եւ

պէտք էր որբերը ոտքով փոխադրել: Անոնք ճամբայ կ'ելլեն եւ կ'անցնին շրջակայ անտառներուն մէջէն. ճանապարհներուն ծանօթ գիւղացիներ կ'առաջնորդեն գիրենք: Ճամբաները լեցուն էին դիակներով եւ սահմուկեցուցիչ տեսարաններով: Յոյները բոլոր որբերը եւ Չանախճիի ժողովուրդը իրենց գիւղը՝ Մարէն կը տանին: Այս անգամ թուրքերը Մարէնն ալ կը պաշարեն: Դարձեալ իրարանցում. Հայերն ու յոյները կը յաջողին որբերը ձեռով մը շոգեկառքի բեռնատար վակոններուն մէջ տեղաւորել եւ ճամբայ հանել դէպի Թիֆլիս: Երբ Սաղախլու գիւղին կայարանը կը հասնին, հոն խմբուած մարդիկ որբերուն վրայ կը յարձակին. ամէն մէկն իր ընտրած որբը կ'առնէ ու կը տանի: Յանկարծ, Պարոն Գէորգ եւ Վարուժան անունով երկու քաջերու գլխաւորութեամբ խումբ մը ձիաւորներ կը յարձակին կողոպտիչներուն վրայ: Հինգ վայրկեան հրացանաձգութենէ ետք, որբերը կ'ազատին: Բոլորը կրկին կը լեցուին վակոններուն մէջ եւ շոգեկառքը կը շարժի: Այդ շրջանին գաւառապետը՝ Հաճի Խալիլ յանձն կ'առնէ որբերը Թիֆլիս հասցնել ապահով կերպով: Սակայն օգտուելով իր հանգամանքէն, ան կ'ուզէ տղայ մը իրեն հետ վերցնել: Հաճի Խալիլ Համբարձումի կ'առաջարկէ իրեն հետ երթալ: Համբարձում պայման կը դնէ իր ընկեր-եղբայրներն ալ՝ Խորէն Թոռչեանն ու Քրիստափորը իրենց հետ վերցնել: Հաճի Խալիլ կը համաձայնի, մինչ որբանոցին տնօրէնը՝ Տիգրան Պոնափարթեանը կը հակառակի: Երեք տղաները իրենց նոր տունը կ'երթան Հաճի Խալիլի ընկերակցութեամբ, իսկ շոգեկառքը ճամբայ կ'ելլէ դէպի Թիֆլիս: Համբարձում կը մնայ Հաճի Խալիլի, Խորէնը՝ անոր եղբօր, իսկ Քրիստը (Քրիստափորը)՝ աներորդւոյն տան մէջ: Այս հանգիստ կեանքը հագիւ մէկ շաբաթ կը տեւէ: Վրացիք ատրպէյճանցիներուն (այդ ատեն՝ թուրք կը կոչուէին) վրայ կը յարձակին եւ Բորչալու գաւառը

կը գրաւեն: Ամբողջ Բորչալուի ատրպէյճանցի-թուրք բնակչութիւնը գաղթի ճամբան կը բռնէ: Հաճի Խալիլի մեծ ընտանիքը չէր կրնար այս գաղթէն գերծ մնալ: Ատրպէյճանցի-թուրք գաղթականները կը յառաջանան: Երբ անոնք Սանդար վրացական գիւղին մօտէն կ'անցնին, Հաճի Խալիլ կը թողու, որ անոնք հոն ապաստանին: Երեք տղաքը վրացի կայարանապետին՝ Գրիգորի տունը կը հիւրասիրուին:

Ղազարոսի հայրը՝ Յովհաննէս շատ գոհ էր Աստուծոմէ, քանզի այդ նեղ օրերուն, Տիապի պէս հզօր հովանաւոր մը ունէր, որ շատ համագիւղացիներու օգտակար կ'ըլլար: Ղազարոսը Տիապի յոյսերը լիուլի կ'արդարացնէր: Ան աշիրէթին քայքայուած տնտեսութիւնը կը վերականգնէ:

Վերադառնալով Համբարձումի եւ անոր երկու ընկերներուն՝ Խորէնին եւ Քրիստին, վրացի սպայ Գրիգորը զանոնք դէպի Կարս ղրկելու պատրաստութիւններ կը տեսնէ, որովհետեւ թուրքերը Կարսէն նահանջած էին: Սանդար գիւղի կայարանին մէջ երեք հայ տղաքը՝ Համբարձումը, Խորէնը եւ Քրիստը Ղազարոսին կը հանդիպին եւ բոլորը միասին շոգեկառք նստելով Ալեքսանդրապոլ կը հասնին: Որբանոցներու լիազօր տնօրէնը՝ Երուանդ Հայրապետեանը այս երեք տղաքը Չախմախ թաղամասի շէնքերուն մէջ կը տեղաւորէ:

30 Հոկտեմբեր 1920-ին թուրքերը Կարսը վերջնականապէս կը գրաւեն առանց դիմադրութեան հանդիպելու: Զէնքերու հսկայական պաշար ու զինամթերք, թնդանօթներ եւ կանոնաւոր ու անկանոն զօրք ունենալով հանդերձ, հայերը որեւէ դիմադրութիւն ցոյց չեն տար: Այդ օրերուն Քեազիմ Գարապէթիւր շատ յառաջ կ'երթայ: Ան կը փորձէ բոլոր անչափահաս հայ որբերը եւ որբուհիները հաւաքել, Անգարա տանիլ եւ թրքացնել: Բոլոր որբանոցներու

պատասխանատուները դէմ կը կենան այս որոշումին: Համբարձումն ու անոր ընկերները, որոնք Կարս փոխադրուած էին (նախապէս Ալեքսանդրապոլ էին) գիշերով ճամբայ կ'ելլեն դէպի Ալեքսանդրապոլ:

Հայ որբերը թրքացնելու գաղափարը գերմանացիներէն բխած էր: Անոնք կ'ուզէին աշխարհի ցոյց տալ, թէ իրենց բառերով՝ «Արեւելեան Թուրքիոյ» մէջ թուրք ազգաբնակչութիւնը գերիշխող է եւ հայոց բռնագաղթով դատարկութիւն գոյութիւն չունի: Քեազիմ Գարապէքիր այս ծրագիրին իրագործումը կը հետապնդէր:

Կը ձերբակալեն եւ կը կողոպտեն հայ որբերը, որոնք ինքզինքնին թուրք ձեւացնելով՝ աւելի մեղմ վիճակ կ'ունենան: Թուրքերը զանոնք Ղազարապատ գիւղը կը ղրկեն: Սակայն Ղազարոս-Հասան Չաւուշը շուտով գալով անոնց բով, բոլորն ալ կ'ազատէ:

Ղազարոսի կիներ՝ Չարէն մունջ գաւակ մը կը ծննդաբերէ:

Ղազարոս ճամբայ կ'ելլէ որպէսզի տառապեալ հայեր ազատէ կարելի եղածին չափ: Արկածախնդրական դէպքեր իրարու կը յաջորդեն: Թուրքերու դէմ յարատեւ պայքար կ'ընթանայ: Հայ չափահաս որբերը Կարսի բանտը կ'իյնան: Ղազարոսի, երէց Համբարձումի եւ Մուշեղի օգնութեամբ անոնք փախուստ կու տան:

Զօրավար Անդրանիկ այդ ժամանակ զանազան շրջաններէ վտանգուած հայեր ապահով վայրեր կը փոխադրէր եւ թուրքերուն դէմ կը կռուէր: Երբ Զանգեզուրը վտանգուած էր, Զօրավարը հոն հասած էր: Ան ցիր ու ցան եղած հայ որբերը կը հաւաքէր:

Աստանդական հայոցմէ շատեր Թիֆլիսը ապահով վայր կը նկատեն: Կարինը կը պարպուի հայերէն եւ գաղթականները դէպի հիւսիս եւ արեւելք կը տարածուին: Կարինէն գաղթող

որբերու խումբի մը պատասխանատուն Տիկին Շուշանիկ անունով ազգասէր կին մըն էր:

Թիֆլիսի մէջ հայ տղաքը, որոնց մէջ՝ Վազգէն անունով խարբերոցի տղայ մը, կը փափաքին Բարեգործականի սան դառնալ եւ ուսանիլ: Օր մը երբ Վազգէն Բարեգործականի Տան առջեւ կը սպասէր, կը հանդիպի իր ուսուցիչին՝ Վահան Թոթովենցին: Միասին ճաշելէ յետոյ Վազգէնն ու Թոթովենցը կ'երթան «Հայաստան» թերթին խմբագրատունը՝ Զօրավար Անդրանիկի մօտ: Զօրավարը Վազգէնը իր հոգեզաւակը կը դարձնէ եւ անոր դպրոցական ծախսերը կը հոգայ: Նոյն օրերուն կը պայթի Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը: Ռուս-թրքական ճակատին վրայ զինադադար կը հաստատուի: Խառնափնթոր իրադրութիւն մը կը ստեղծուի: Պարենաւորման դժուարութիւններն անպակաս կ'ըլլան: Զօրավարին եւ «Հայաստան»ի խմբագիրին համար դժուար էր տեսնել համայն հայ գաղթականութեան անձկութիւնը: Արհամարհանք, վէճ, կռիւ եւ նախատինքի խօսքեր՝ հայկական տարբեր հոսանքներու միջեւ՝ հանդէսներու ատեն, «չաչքա չայ»երու (թէյի գաւաթ) շուրջ, մամուլով եւ Թիֆլիսի փողոցներուն մէջ: Անծանօթ ու անյայտ մարդիկ, օգտուելով հայ պատասխանատուներու թոյլ վիճակէն, Սանահին-Թիֆլիս եւ Թիֆլիս-Պաքու գիծերուն վրայ շոգեկառքի երթեւեկի ընթացքին հայեր կ'առեւանգեն ու կը սպաննեն:

Զօրավար Անդրանիկի հոգեզաւակը՝ Վազգէնը Ներսէսեան ձեմարան կը յաճախէր: Գարեգին Մ. Վրդ. Յովսէփեանցի կարգադրութեամբ, Զօրավարն իր սանը՝ Վազգէնը Ս. էջմիածնի Գէորգեան ձեմարանը կը տեղաւորէ: Վազգէնի հետ կ'երթայ ուսանող Արտաշէս Գարասէֆէրեանը: 1918-ի Ապրիլին Կարսի գրաւումէն ետք, Մայիսին տեղի կ'ունենայ Սարդարապատի ճակատամարտը: Թրքական

գործը խայտառակ պարտութիւն կը կրէ եւ թշնամին ետ կը մղուի:

Հայ գաղթականները Լոռիի մէջ հաւաքուած էին: Անոնցմէ շատեր իրենց սիրելիները կորսնցուցած էին: Ուր որ գաղթականները պէտք ունէին փախչելու թշնամիին երեսէն, Անդրանիկը անոնց օգնութեան կը հասնէր: Հայաստանի բոլոր շրջաններուն մէջ որբանոցներ բացուած էին, ինչպէս Դիլիջանի, Երեւանի, Աշտարակի, Ստեփանաւանի եւ Կիւմրիի մէջ: Յովհաննէս Թումանեանը միշտ հայ որբերուն հետ էր: Ան որբի մը բերնէն գրի առած էր հետեւեալը.

«Ես, Ղուկաս Եղիազարեանս, ծնած եմ 1904 թուին, Խարբերդի նահանգի Չմշկածագի Սիսնա գիւղը: Հայրս հողագործ էր: Դպրոցին մէջ յառաջադէմ աշակերտ էի: Երբ Ա. Համաշխարհային Պատերազմը կը սկսի, հայրս զինուոր կ'երթայ: Ստիպուած՝ դպրոցը կը լքեմ ու ընտանիքին հոգը վրաս կ'առնեմ:

Թուրքերը գէնքերը կը հաւաքեն: Թուրք զինուորներն այս պատրուակով հայոց տուները մտնելով, մանրակրկիտ խուզարկութիւններ կ'ընեն: Հայրս բանակէն փախուստ տուած էր ու տան մէջ թաքնուած: Քիւրտ աշիրէթապետ մը կը սկսի յարձակիլ եւ կողոպտել հայ ընտանիքները: Մենք թուրք դրացիին կը դիմենք՝ մեզ պատսպարելու խնդրանքով: Սակայն դրացին՝ Մուսլիմը պայման կը դնէ որ թրքանանք: Ետ տուն կը դառնանք: Քիւրտերը մեր տունը կը մտնեն ու կը կողոպտեն: Բոլորս միասին դուրս կ'ելլենք: Ես ու հայրս մէկ, իսկ միւսները՝ տարբեր ուղղութեամբ կ'երթան: Կարնեցի բարեկամի մը տունը պիտի հանդիպէինք: Հայր ու որդի երբ կը հասնինք մօրեղբօրս փայտէ շինուած աշտարակը՝ վեր կը բարձրանանք: Հոնկէ ահաւոր տեսարան մը կը պարզուի մեր աչքերուն առջեւ: Թուրք զինուորները,

քիւրտերուն հետ միասին, հայ ամբօխը՝ կին, երեխայ, ծեր եւ պառաւ, հարս ու աղջիկ ոչխարի հօտի պէս կը քշին: Մօրեղբօրս տունը պարապ կը տեսնենք, բայց կը շարունակենք մեր ճամբան: Անտառ կը մտնենք: Հոն տասնըմէկ հայ փախստականներու կը միանանք: Լքուած տան մը մէջ՝ մէկ ամիս կ'ապրինք: Մեզմէ գիւղը այցելողներ կ'ըլլան եւ կը պատմեն, թէ ամբողջ գիւղը հիմնայատակ քանդուած է: Նկատելով, որ այլեւս անտառին մէջ մնալը ապահով չէ, ճամբայ կ'ելլենք դէպի Հազարի գիւղը: Մեր ճամբուն վրայ անտառներէ կ'անցնէինք: Տերսիմի մէջ էինք: Տեղ մը հարազատ մեղր գտանք եւ սնուեցանք: Լեռնէն երբ վար կ'իջնենք՝ կը հանդիպինք քիւրտերու, որոնք մեզմէ դրամ կը պահանջեն: Կը հնազանդինք: Անոնք կ'ըսեն, թէ Խտարան (քիւրտ աշիրէթապետ) գործ կու տայ: Խտարա կը դիմենք: Խտարան շատ լաւ կ'ընդունի մեզ: Խտարայի որդւոյն համար քարէ դղեակ մը կը կառուցենք: Ան կը խոստանայ օգնել մեզի: Քիւրտ հովանաւոր մը յանձն կ'առնէ հոգալ ինձի իբր հոգեզաւակ: Երբ անոր տունը կ'երթամ, զիս շատ լաւ կ'ընդունի, սեղան կը բանայ եւ հանգստաւէտ անկողին մը կու տայ գիշերը: Անունս Իսմայիլ կը դնեն:

Տերսիմի խստաշունչ ձմեռն էր:

Օր մը լուր տարածուեցաւ, թէ ռուսերը Կարինը գրաւած են: Բոլոր հայերս կը հաւաքուինք եւ ռուսերուն կողմը կ'անցնինք: Ատեն մը ետք, Ռուսական Յեղափոխութիւնը կը ծագի: Հայկական շրջաններուն մէջ անորոշութիւն եւ իրարանցում կը սկսին: Ռուսական բանակը կը սկսի քաշուիլ: Հայերը կը գաղթեն դէպի հիւսիս եւ արեւելք: Ամէն կողմ խուճապ է: Ես սիսնացի հայրենակիցի մը օգնութեամբ, Հասանգալէի հիւանդանոցը կը տեղաւորուիմ: Թրքական արշաւանքը Հասանգալէի կը մօտենար, ուստի պէտք էր հոնկէ հեռանալ: Հայ գաղթականներու բեռնատար

չոգեկառքը դէպի Ալեքսանդրապոլ կ'ընթանայ: Մարդիկ իրարու վրայ լեցուած էին: Ժողովուրդին հետ միասին ամերիկացի Անտերսընն ալ կ'երթար որբերուն հոգ տանելու: Զիս Ալեքսանդրապոլի հիւանդանոցը կը դնեն: Հիւանդապահուհին զիս լաւ կը խնամէ եւ ես կը լաւնամ: Թուրքն ահա՛ կրկին Ալեքսանդրապոլի մօտեցած էր: Մենք շոգեկառքի վակոններուն մէջ լեցուելով կ'երթանք Թիֆլիս, ուր ութը ամիս եւս հիւանդանոց մնալէ յետոյ, կ'առողջանամ»:

Անդին, Մուշեղն ու երէց Համբարձումը իրենց ազգային գործը կը շարունակէին թուրք սպայի զգեստով՝ Ղազարոս-Հասան Չառուշի հետ միասին: Անոնք պէտք է Զօրավար Անդրանիկին միանային: Ուստի, Մուշեղն ու Համբարձումը, Ղազարոսէն բաժնուելով, դէպի Սեբաստիա կ'ուղղուին: Անոնց մտադրութիւնն էր Յունաստանի կողմէն դառնալով Կովկաս հասնիլ, որովհետեւ Կարսի ճանապարհն ապահով չէր:

Սեբաստիոյ շուկան առաջուան տեսքը չունէր: Հայ վաճառականը չկար: Փեղկերը աղքատիկ էին: Սեբաստիոյ մէջ Մուշեղն ու երէց Համբարձումը կը հանդիպին գերմանացի առեւտրական Շուլցին, զոր Մուշեղը ժամանակին ազատեր էր խեղդուելէ: Շուլց հայ տղոց սիրալիր ընդունելութիւն ցոյց կու տայ: Տղաքը Յունաստան մեկնելու իրենց մտադրութիւնը կը յայտնեն եւ Շուլցին օգնութիւնը կը խնդրեն: Շուլց անոնց կ'առաջարկէ Հալէպ երթալ ու հոնկէ ուրիշ ճամբով Յունաստան հասնիլ, եւ կ'աւելցնէ, թէ ինք բոլոր ճանապարհաճախսերը հոգալու պատրաստ է:

Մուշեղն ու Համբարձումը ճամբայ կ'ելլեն դէպի Հալէպ: Սակայն երբ Այնթապ կը հասնին, հետեւելով Մուսլիմ անունով բարի թուրքի մը խորհուրդին, դէպի Ատանա կ'ուղղուին:

Միւս կողմէ, Տերսիմը շրջափակուած էր եւ Ղազարոս ոչ մէկէն լուր ունէր: Տիապ աղայի իշխանութեան տակ միայն հինգ հայ ընտանիք մնացած էր: Ղազարոս մտահոգուած էր Զօրավար Անդրանիկի վիճակով: Ան Մուշեղի եւ երէց Համբարձումի մասին ալ կը մտածէր եւ ընդհանրապէս Հայաստանի վիճակով մտահոգ էր:

Ղազարոս Չմշկածագ կ'երթայ Մարգրիտ ապլային մասին տեղեկութիւններ հաւաքելու: Ան պէտք եղած մանրամասնութիւնները չի կրնար քաղել: Կ'անցնի Խարբերդ, ուր կ'իմանայ, թէ քիւրտ վաշխառու վաճառական մը եւ անոր եղբայրը՝ Մսթօն, որոնք ժամանակին իրենց ընտանիքին բարիքներէն օգտուած էին, Մարգրիտ ապլան թրքական իշխանութեանց մատնելով, անոր մահուան պատճառ դարձած էին: Ղազարոս երկու եղբայրներուն հաշիւը կը մաքրէ: Սակայն, նախապէս տեղեկացուած թուրք ոստիկանները կը յարձակին Ղազարոսի վրայ, որ փախուստի կը դիմէ: Դարձդարձիկ ճամբաներով պահ մը սուրալէ յետոյ, անոր առջեւ ուրիշ թուրք ոստիկաններ կ'ելլեն: Ղազարոս բոլոր կողմերէն կը շրջապատուի: Հրացանաձգութեան ընթացքին, թշնամի գնդակ մը ճակտին դպչելով, վերջ կը դնէ անոր հերոսական կեանքին:

Մուշեղի եւ երէց Համբարձումի դէպի Ատանա ուղեւորութիւնը Մուսլիմը կ'առաջնորդէր: Բաւական արկածախնդրական պարագաներու տակ անոնք կը մատնուին: Համբարձումը կը սպաննուի, իսկ Մուշեղը Ատանայէն Փրանսական «Մինայա» նաւով Պաթում կ'երթայ: Ասոնք տեղի կ'ունենան 1922 թուականին: Պաթումէն Մուշեղ Խորհրդային Հայաստան կ'անցնի ու հոն կը հաստատուի:

Աշոտ Ղազարեան, «Դէպի Փրկութիւն. Եղեռնը Ականատեսի Աչքերով - Յիշողութիւններ (1956-1960)», «ՀՄՏ» ՓԲԸ տպարան, Երեւան, 2006, փոքր չափի 176 էջ

Աշոտ Մեսրոպի Ղազարեանը ծնած է 1906-ին, Կարսի մարզի Կաղզուան քաղաքը: Հայրը՝ Մեսրոպ Ղազարեանը հայերէնի ուսուցիչ եղած է:

Կաղզուանն ունէր քանի մը թաղամասեր՝ Քիւմպէթը (որու բնակիչներուն մեծամասնութիւնը թուրքեր եւ քիւրտեր էին), Պետրոս-Բերդը, Կոտրած Կամուրջը, Զվաթը եւ Շենլինգը: Վերջինս քաղաքին կեդրոնն էր:

Մինչեւ 1917-ի Ռուսական Յեղափոխութիւնը, քաղաքը հանդարտութեան մէջ կ'ապրէր:

Համայնավարական յեղափոխութենէն ետք, ռուսական զօրքը կը թողու Կաղզուանը եւ ընդհանրապէս Հայաստանի տարածքը՝ հայ ժողովուրդը ձգելով բախտի քմահաճոյքին: Հայերը կրկին ահ ու սարսափի կը մատնուին: Մթնոլորտը չափազանց լարուած վիճակ մը կը ստանայ: Թուրքերն իրենց թաղերէն կը կրակեն հայոց տուններուն վրայ: Աշոտի ընտանիքն ինքզինք ապահով չի զգար սեփական տան մէջ: Ուստի շէնքին ետեւի կողմը գտնուող ուրիշ տուն մը կը վարձեն ու հոն կը բնակին:

Դրութիւնը չափազանց լուրջ էր: Կաղզուանի հայերը 1918-ի սկիզբին կը գաղթեն դէպի Կարս եւ ապա Ալեքսանդրապոլ



(Կիւմրի): Աշոտ Ղազարեանի ընտանիքն ալ գաղթողներուն մէջն էր: Կաղզուանի շրջակայ հայկական գիւղերուն՝ Ղարավանքի, Զանգլիի, Քերսի, Խարի ու Ղարաբաղի բնակիչներն ալ կը գաղթեն:

Կարսի մէջ կուտակուած բոլոր գաղթականներուն նման, Աշոտի ընտանիքն ալ, անօթի, ծարաւ, հաց աղերսելով, կ'ապրէր ահ ու դողի մէջ: Անոնք Կարսն ալ թողելով, Ալեքսանդրապոլ կը հասնին: Հոն, Աշոտի հայրը՝ Մեսրոպը իր աներորդիները կը գտնէ եւ անոնք բոլորը միասին տան մը մէջ մէկտեղուելով, կ'ապրին: Բայց այս խաղաղութիւնն ալ երկար չի տեւեր եւ թրքական յարձակումներուն լուրերը Ալեքսանտրապոլ կը հասնին: 1918-ի ամրան տաք առտու մը հեռուէն թնդանօթի խուլ որոտներ կը լսուին: Տան մեծերը ահ ու դողով ներս ու դուրս կ'ընեն, իսկ երեխաները՝ լալով անոնց ետեւէն կը վազեն: Փողոցին մէջ մարդիկ իրարու կը խառնուին, կը վազեն, կու լան եւ կը հայհոյեն: Քաղաքը աննկարագրելի խուճապի մը մատնուած էր: Թրքական զօրքը կը յառաջանար (թրքական զօրքը Ալեքսանդրապոլը գրաւեց 1918-ի Մայիսի կէսին – խմբ.): Աշոտի մօրեղբայրներէն Մկրտիչը խորհուրդ կու տայ չգաղթել եւ ապաստանիլ քաղաքին Առաջնորդարանը, որ կը գտնուէր Կիւմրիի կեդրոնական մասին մէջ, Փուշքինսքի փողոցին վրայ, «Եօթն Վէրք» կամ Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցւոյ դիմացը:

Աշոտ Ղազարեանի եւ անոր մօրեղբօր ընտանիքները հոն կը հաւաքուին: Ամէն մարդ անօթի ու ծարաւ էր: Առաջնորդարանը պարապ էր: Դահլիճին սեղանին վրայ երչիկի, պանիրի, միսի եւ լաւաշի կտորներ ձգուած էին: Փոքրերն իսկոյն այս փշրանքներուն վրայ կը յարձակին եւ մեծ ախորժակով իրենց ընթրիքը կ'ընեն: Այդ պահուն՝ թրքական

զօրքին նուագախումբը փողոցին մէջ կը տողանցէր: Աշոտ այս բոլորը Առաջնորդարանին պատշգամբէն կը դիտէր: Ան կը տեսնէ դիմացի կողոպտուած խանութներն ու արհեստանոցները: Շատ հայ ընտանիքներ, որոնք չէին գաղթած, բայց պահուրտած էին քաղաքի այս կամ այն թաղին մէջ, կամաց-կամաց դուրս կու գային եւ իրենց գործերուն կ'անցնէին: Թուրքերուն՝ ջարդեր չկազմակերպելու լուրը հասած էր ականջը քաղաքէն հեռացած հայոց, որոնք կը սկսին հետզհետէ վերադառնալ:

Աշոտենք կը շարունակեն ապրիլ Առաջնորդարանին մէջ: Սակայն, շատ չանցած, հայ հոգեւորականները Ալեքսանդրապոլ կը վերադառնան: Աշոտենց ընտանիքը եւ մօրեղբայրները մօտակայ տուն մը կը փոխադրուին:

Դրութիւնը սոսկալի էր: Ժողովուրդը հաց չէր կրնար ճարել: Գարիէ եւ եգիպտացորենէ պատրաստուած հաց կար, որ շատ սուղ գիներով կը վաճառուէր: Յուրտը, սովը եւ վարակիչ հիւանդութիւնները ամէն օր հարիւրաւոր մարդոց կեանքը կը խլէին:

Քաղաքը հարուստ էր «Կարմիր», «Սեւ», «Փրկիչ», «Շօթն Վէրք», «Պլպլան» եւ «Ուռումներու» եկեղեցիներով: Սակայն սովն էր, որ հոն կը թագաւորէր: 1919-ի Ապրիլին, Ալեքսանտրապոլի մէջ հրատարակուող «Շիրակի Ռանչպար» թերթը կը յայտնէր, թէ հայկական կառավարութիւնը Կարսի մարզն ազատագրած էր իր շրջակայ քաղաքներով եւ գիւղերով: Այս հաղորդագրութիւնը ոտքի կը հանէ իրենց տուն ու տեղին ձգտող գաղթականները: Մննդավայրը ջերմ սիրով իրեն կը քաշէր Կարսի, Կաղզուանի, Գեազիրի (այսպէս է բնագիրին մէջ - Յ. Ի.) եւ ուրիշ գիւղերու բնակիչները: Աշոտի հայրը՝ Մեսրոպը Կաղզուան վերադառնալու պատրաստութիւն կը տեսնէ մեծ հրճուանքով:

1919-ի ամրան, Աշոտ Ղազարեանի ընտանիքը ճամբայ կ'ելլէ դէպի Կարս՝ ուրիշ գաղթականներու հետ միասին: Հոնկէ ճամբան կը շարունակեն դէպի Կաղզուան, որու քարուքանդ տեսքէն գէշ տպաւորուած Աշոտ Ղազարեանը հետեւեալը կը գրէ. «Այգիներուն ու քաղաքին վրայէն անողոք փոթորիկ մը անցած էր: Թրքական զօրքերը, բնակիչներն ու աւագակները թալանած, ամէն ինչ տակնուվրայ ըրած էին: Անխնամ այգիները աղտով պատուած, դեղնած էին: Խանութները, արհեստանոցները փակ էին. ուրախացնող ո՛չ մէկ բան կար»:

Մեսրոպ Ղազարեանն իր ընտանիքը Կաղզուանի գլխաւոր փողոցին վրայ գտնուող «Նորմալնի Ուչիլիչէ» կոչուող դպրոցի շէնքին մէջ կը տեղաւորէ: Մինչեւ գաղթը, Աշոտ չորս տարի այդ դպրոցին մէջ ուսանած էր: Բռնագաղթէն անցեր էր երկու տարի եւ իրենց տունէն ո՛չ մէկ բան մնացած էր:

Կաղզուանցիներուն ստեղծագործ ձեռքերը կրկին կեանք կու տան անմշակ մնացած եւ թառամած այգիներուն: 1920-ի գարնան, Աշոտ իր քոյրերով, եղբայրներով եւ ընկերներով իրենց փոքրիկ այգիին մէջ կը խաղար: Երկար չի տեւեր այս խաղաղութիւնը: 1920-ի Սեպտեմբերին, թրքական զօրամասերը կրկին դէպի Կաղզուան կը յառաջանան: Դեռ նախորդ գրաւման պատճառած վէրքերը չբուժուած, ահն ու սարսափը կը տարածուին Կաղզուանի հայ բնակիչներուն մէջ: Քաղաքին մէջ կը տիրեն կրակոցները, կողոպուտն ու լաց ու կոծը: Նոր գաղթին լուրը կը տարածուի Կաղզուանի մէջ եւ մեծ իրարանցում կը յառաջացնէ: Մեսրոպը լաւ ճանչցող համաքաղաքացի թուրքեր խորհուրդ կու տան չհեռանալ: Սակայն Կարսը գրաւած թուրքերը թոյլ չէին տար, որ փափաքող հայերը Սովետական Հայաստան անց-

նին: Մինչեւ 1921-ի գարունը Կաղզուանի հայերը իրենց թուրք դրացիներուն հետ խաղաղութեամբ կ'ապրին: Երբ Կաղզուանի հայերէն ոմանք թրքական իշխանութեանց կը դիմեն Սովետական Հայաստան անցնելու արտօնութեան համար, կտրականապէս կը մերժուին: Սակայն աւելի ուշ, անոնց տեղափոխումը կ'արտօնեն: Բայց այս արտօնութիւնը նենգ նպատակ կը հետամտէր: Մեսրոպ Ղազարեանը, իր ընտանիքն առած, նորէն կը բռնէ գաղթի ճամբան, այս անգամ՝ դէպի Սովետական Հայաստան: Երբ անոնք Կարս-Սարիղամիշ ճամբուն վրայ գտնուող Բագլամաղ (այսպէս է բնագիրին մէջ - Յ. Ի.) գիւղը կը հասնին, թուրքերը ուրիշ շատ հայ երիտասարդներու հետ Մեսրոպն ալ կը կանչեն իրենց քով, ինչը կանչուողներու սիրելիներուն սիրտին մէջ ահաւոր վախ եւ կասկած կը ստեղծէ: Թուրքերը զանոնք բոլորն ալ կը տանին դէպի Կարին եւ ոչ թէ Սովետական Հայաստան: Սարսափի, լացի ու արցունքի երկար պատմութիւն մը կը սկսի Կաղզուանի հայոց համար: Հարիւրաւոր անմեղ հայեր՝ տղամարդիկ, կիներ ու երեխաներ կը խոչտանգուին ու կ'առեւանգուին: Այս դէպքերը 1921-ի գարնան տեղի կ'ունենան:

Թշնամին Աշոտի հայրը՝ Մեսրոպն ալ տարած էր: 8 Ապրիլ 1921-ի գիշերը կարաւանն իր ճամբան կը շարունակէ: Սարիղամիշի մէջ Աշոտ իր մօրը, եղբայրներուն եւ քոյրերուն հետ երեք օր կ'ապաստանի հայոց եկեղեցին: Հոնկէ թուրքերը հայ գաղթականները դէպի Կարին կը քշեն: Երբ Կարին կը հասնին, թուրք մը Աշոտը իրեն հետ տանիլ կ'ուզէ: Աշոտի մայրը՝ Սաթենիկը, նախ կը մերժէ, բայց յետոյ թոյլ կու տայ:

Թուրքը՝ Ասկեար Քեռին, Աշոտն իր տունը կը տանի: Հոն ան եւ կիներ՝ Կիւլնարան անոր հոգ կը տանին: Թուրքը

Աշոտը բերած էր, որպէսզի ան իր կնոջ օգնականը դառնայ: Աշոտի անունը կը փոխեն «Շուսուֆ»ի: Ասկեարը Աշոտին համար նոր կօշիկ եւ հագուստներ կը գնէ:

Բայց Աշոտին ներքնաշխարհը խաղաղ չէր: Ան կ'ուզէր իր մօրը, քոյրերուն եւ եղբայրներուն միանալ: Ասկեարն ու Կիւլնարան բարի մարդիկ էին: Երեք օր ետք անոնք փափաք կը յայտնեն, որ Աշոտը տեսակցի իր մօր հետ: Աշոտի ուրախութիւնն անսահման էր: Աշոտ իր մայրն ու քոյրերը՝ Քնարիկը, Գոհարիկն ու Յասմիկը կը տեսնէ: Ասկեարը այս տեսարանէն շատ կը յուզուի եւ երեք օր ետք Աշոտին թոյլ կու տայ, որ իր ընտանիքին միանայ: Նոյն օրը հայ գերիները պիտի փոխադրէին անորոշ ուղղութեամբ:

Իր հարազատ ընտանիքին միացած Աշոտը ճամբայ կ'իյնայ հայ գաղթականներու կարաւանին հետ: Կարաւանը Կարինէն դուրս կ'ելլէ եւ կը հեռանայ: Գաղթականները, անօթի, ծարաւ ու յոգնած, կը հաւաքուին դաշտի մը մէջ, ուր ալ կը գիշերեն առաջին օրը: Երեսուներկու օր ու գիշեր, անձրեւին, տաքին, հովին եւ ձիւնին տոկալով, անոնք բաց երկինքին տակ կը քալեն: Անցնելով Հասանգալէն եւ Քէօփրիւ Քէօյ, էշակ-էլագը, Ալաշկերտ, Ունուս, Աղչայ, Փառնաուտ, Կողբ, Ալիղամար քաղաքներէն ու գիւղերէն, վերջապէս կը հասնին Իգտիր: Մեծերէն մինչեւ փոքրերը, երիտասարդներն ու ծերերը, կիներն ու տղամարդիկը բոլորն ալ կը քալէին: Երեսուներկու օր ետք կարաւանը կը հասնի Մարգարա գիւղը: Ոմանք իրենց հարազատները յաւանք կը կորսնցնեն եւ կ'ողբան: Աշոտի հայրը թուրքերու կողմէ քշուելէն քիչ առաջ իր քովի դրամը ամբողջութեամբ իր կնոջ՝ Սաթենիկին տուած էր: Տարագրութեան օրերուն՝ այդ գումարն իր օգտակարութիւնը ունեցած էր:

Աքսորի ճամբուն վրայ անօթութեան, ծարաւի եւ

խոշտանգումներուն վրայ կ'աւելնար գեղեցիկ աղջիկներու առեւանգումը թուրք զինուորներու կողմէ: Շատ կիներ եւ աղջիկներ տղամարդու ցնցոտիներ կը հագնէին, իրենց երեսները կ'այլանդակէին եւ մազերը կը խուզէին, որպէսզի թուրքերուն ուշադրութիւնը վրիպեցնեն իրենցմէ:

Թուրքերը գաղթականները կը քշեն հազար ու մէկ չարչարանքներ պատճառելով անոնց: Կաղզուանէն կը տանին Երասխի ափերը, ապա Արագած լեռան փէշերը պտըտցնելէ յետոյ, զանոնք կրկին կը բերեն Երասխի ափը, ուր թուրք զինուորները կը ծրագրեն զանոնք սուրէ անցընել: Այդ վայրկեաններուն, երբ կիներն ու աղջիկները, երեխաներն ու ծերերը լաց ու կոծի մէջ էին, յանկարծ քանի մը թուրք բարձրաստիճան սպաներ կը ժամանեն եւ բարկանալով զինուորներուն վրայ, ջարդը կը դադրեցնեն: Այսպիսով, կը խափանուի թուրք զինուորներուն գազանային ծրագիրը:

Աշոտ Ղազարեանը լաւապէս կը յիշէ այն պահը, երբ կարաւանը Սովետական Հայաստանի սահմանամերձ շրջանները կը հասնի: Ան կը պատմէ հայ տարագիրի մը՝ Նազարէթի անողոք գնդակահարութիւնը: Երբ Մարգարա գիւղին կը մօտենան, թուրք զինուորները զանոնք ազատ կը թողուն, որպէսզի Հայաստանի հողերը մտնեն: Երագի պէս իրականութիւն մը: Հայ տարագրեալները Մարգարայի մէջ իրենց հարազատներուն կը միանան: Բոլոր ազատուածները գիւղի բնակիչներուն միջեւ կը բաժնուին: Աշոտ Ղազարեանի ընտանիքը եօթը հոգի կը հաշուէր: Անոնք գիւղին քահանային տունը կը հիւրասիրուին: Երէցկին Զապէլը իրենց համար «չալթակ» (ապուրի կամ ճաշի մը անունը) կը սարքէ, զոր կ'ուտեն առանց հացի, որովհետեւ հաց չկար: Գիւղին համայնավար կուսակցութեան պատասխանատուները գաղթական կաղզուանցիներուն հաց կը բաշխեն:

Ղազարեան ընտանիքը կը մեկնի Էջմիածին, ապա Երեւան, ուր Աշոտն իր երեք քոյրերուն հետ միասին որբանոց կ'ընդունուի: Կարճ ժամանակ ետք Աշոտ իր մօր եւ եղբայրներուն հետ կ'անցնի Ալեքսանդրապոլ, ուր ան Յեղկոմի (Յեղափոխական Կոմիտէ) ցրուիչ կը դառնայ: Իրենց նիւթական վիճակը կը բարելաւուի: Քնարիկն ու Գոհարիկը Ալեքսանդրապոլ կու գան եւ ընտանիքին կը միանան: Յասմիկը հիւանդանալով մահացած էր:

Ալեքսանդրապոլի մէջ, Աշոտի մեծ քոյրը՝ Քնարիկը սուր եւ վարակիչ հիւանդութեամբ վարակուելով կը մահանայ: 1921-ի աշնան, Աշոտը Փոլիկոններու Ամերիկեան որբանոցը կ'ընդունուի: Մէկուկէս տարի հոն մնալէ յետոյ, ան 1923-ի գարնան դուրս կու գայ որբանոցէն:

Ժանէթ Քասունի, «Ուրիշ Գիծ Ունիմ», հատորը կազմեց եւ խմբագրեց Դոկտ. Երուանդ Քասունի, Մ. Ա. Հ. Ա. Ե. Միութեան Հրատարակչական Գրասենեակի հրատարակութիւն, The United Printers and Traders տպարան, Պէյրութ, 2006, միջակ չափի 168 էջ

Մեր ուսումնասիրած նիւթին առնչուած յատկանշական են հատորին մէջ տեղ գտած չորս պատմուածքներ (էջ 107-127), որոնց հերոսները Մեծ Եղեռնէն վերապրողներ են:

1- «Շարադրութեան Դաս Մը» գրուած հեղինակին վերապրող եւ ականատես հօր յիշատակին: (էջ 107-111)

Հեղինակը՝ Ժանէթ Քասունի իր աշակերտութեան ժամանակ հօրմէն կը խնդրէ իրական կեանքէ առնուած դրուագ մը պատմել, որպէսզի զայն շարադրութեան ձեւով ներկայացնէ: Ստորեւ անկէ մէջբերուող հատուած մը.

«Հայրը կ'ըսէ.

- Ես՝ պատմեմ, դուն՝ գրէ՛:

Մայր մըն էր հերոսը, որ սատկած կատու մը խելայեղօրէն գրկելով, աղի արցունքներու մէջ կը տապալակէր փողոցը, մինչ հետաքրքիր մարդիկ՝ «Խե՛նթ»ը կը պռուային:

- Հայրիկ, գիտե՞ս թէ ինչ պիտի ըսէ ուսուցիչը:

- Ի՞նչ:



- Պիտի չհաւատայ, որ այդպիսի դէպք կրնայ պատահած ըլլալ: Արդէն միշտ դիտողութիւն կ'ընէ, որ անիրական բաներ կը գրենք:

- Ճիշդ ես, շատ ճիշդ: Շիտակ է, որ պիտի չհաւատայ ու թերեւս կարծէ, թէ հասարակ զուարճալիք մըն է խենթերու աշխարհէն: Բայց ըսէ՛ ուսուցիչիդ, որ հայրս տեսած է ու ականատես եղած է այդ դէպքին՝ Հայոց Յեղասպանութեան սեւ տարիներուն: Հարս մըն էր այս խենթը, որուն ամուսինը տարած էին. մնացած էր ինք ու իր զաւակը: Անպատին մէջ, մերկ, բոպիկ, անօթի ու ծարաւ, կը քաշկռտէր իր գոյութիւնը, երբ մինուճարն ալ տարին եւ մորթեցին իր իսկ աչքին առջեւ, իր ու մեր աչքին առջեւ: Յետոյ՝ լացաւ մայրը ու քալեց, լացաւ ու քալեց, գլուխը քարին զարկաւ ու կրկին քալեց՝ միշտ յոյսով որ ինք ալ կը մեռնի Ու այնքան լացաւ, այնքան ողբաց որ խենթեցաւ: Եւ այդ օրէն՝ ամէն անգամ որ աղմուկ լսէ, սարսափով ու ցրիւ մագերով փողոց կը վազէ՝ «տղաս կը տանի՛ն» աղաղակելով: Այս ու նման դէպքերու շատ ականատես եղած եմ. միայն Աստուած ձեզի ցոյց չտայ: Ու օր մը, այդպէս՝ տեսայ զինք կրկին, սեղմած արիւնլուայ սատկած կատու մը, կ'ողբար.

- Տղա՛ս, չե՛մ ձգեր որ տանին քեզ, չե՛մ ձգեր»:

2- «Մայրիկին Վիշտը» (էջ 112-117)

«Թրքերէն խօսողին հայերէն պատասխանէ»

(Հայաստանի եւ Կիլիկիոյ կարգ մը քաղաքներուն եւ գիւղերուն մէջ արգիլուած էր հայերէն խօսիլ: Իսկ Կեսարիոյ մէջ հայերէն խօսողին լեզուն կը կտրէին թուրքերը):

Սակայն, որոշ պարագաներու, ինչպէս հեղինակին՝ Ժանէթ Քասունիի մօր պարագային, ինչպէ՞ս գործադրել տալ

ենթավերնագիրին նշանախօսքը: Այս մայրիկը այնթապցի էր, թրքախօս: Ան կը պատմէր:

«Մնողքս շատ հարուստ էր: Հայրս սնտուկ մը «թափու» ունէր՝ այգիներու, տուններու, հողերու եւ կալուածներու: Առանց սնտուկը բանալու՝ չէր գիտեր թէ ո՞ր հող ունէր: Ամէն ինչ ձգեց: Տէր Զօր աքսոր էր: Իսկ քոյրս, որ տասը օրուան հարս էր, ամուսինով ու քսան հոգինոց գերդաստանով տարուեցաւ: Ալ չտեսանք: Ըսին թէ այրեր են Տէր Զօրի մէջ: Եւ դեռ՝ մէկ գիշերուան մէջ ամուսինիս ու իր երկու եղբայրներուն մագերը ճերմկցան, երբ լսեցինք թէ Տէր Զօր պիտի լրկուէինք: Բայց բարին Աստուած ողորմեցաւ մեզի: Մունետիկը օր մը պոռաց, որ արհեստաւորները Տէր Զօր պիտի չերթան: Մեզ քշեցին Ուրֆա: Ուրֆայի մէջ զոհերու եւ կրակներու հետքեր կային տակաւին: Թուրքին կատաղութիւնը դեռ վառ էր: Երբ տեսնէին երեք եղբայրները, որոնք իրենց ջուհակի նոր գործատեղին կ'երթային ու կու գային, կ'ըսէին. «Մառի ճիւղերէն կախուելիք ի՛նչ ապրանքներ»:

Մայրիկը նոյն սարսափին մէջ էր, երբ Պէյրութի մէջ կը գտնուէր խանութ մը, որուն ցուցափեղկի հայելիին վրայ հայերէն գրութիւն մը կ'ըսէր. «Թրքերէն խօսողին՝ հայերէն պատասխանէ»: Ան կը զգար, թէ կարծէք թուրք ոստիկանները պիտի գային ու սպառնային իրեն՝ հայելիէն վար առնելու այդ գրութիւնը:

Մայրիկը հայերէն սկսած էր սորվիլ «Հայկարան»ի մը միջոցով: Նոր սկսած էր սորվիլ ան, երբ օր մը հայ խանութպանի մը հետ թրքերէն խօսած պահուն յանդիմանուած էր երիտասարդի մը կողմէ:

Մայրիկը շատ վշտացած էր եւ կու լար: Ան իր կեանքին մէջ առիթը չէր ունեցած հայերէն սորվելու եւ խօսելու: Թուրքերը արգելած էին: Սակայն մայրիկը իր բոլոր

գաւակները հայկական դպրոց դրկած էր:

«Տարագիր մեր ծնողները, տարագրութեան դժուարին պայմաններուն մէջ ու անոնց հետեւանքներուն ենթակայ, մեծ գիտակցութեամբ եւ յատուկ ոճով իրենց գաւակներուն ինչպէ՛ս տուեր են «Հայու հոգի»ն պահելու տենչը:

Այսօ՞ր»:

3- «Շատ Կը Ցաւիմ, Աղջիկս» (էջ 118-122)

Մարաշ ծնած Մարից մայրիկը հեղինակին՝ ժանէթ Քասունիին կը պատմէ Մեծ Եղեռնէն: Հետաքրքրական հատուածներն արտագրուած են հետեւեալ տողերուն մէջ.

«Ամուսինս կառավարական պաշտօնեայ էր: 1914-էն առաջ էր, Մարաշ, օր մը նամակներ ցրուեցին բոլոր հայերուն, ըսելով թէ պիտի չբանանք մինչեւ որ հրամայուի: Յետոյ հրաման եկաւ որ բանայինք: Նամակին մէջ այսպէս կ'ըսուէր. «Մեր թագաւորը պատերազմ ունի եւ ամէն մարդ պատրաստ ըլլայ, զինուոր պիտի հաւաքենք: Մինչեւ պատերազմը վերջանայ, հայ ժողովուրդը ուրիշ տեղ պիտի տեղափոխենք»: Ալ ի՛նչ իրարանցում, տեսնես»:

«Սկսան մեծերէն: Բողոքական, կաթոլիկ, լուսաւորչական տասը-տասներկու մեծ ընտանիքներ Հալէպ դրկեցին: Ամիս մը չտեւեց, ըսին. «Անոր որուն անունը ելլէ, քաղաքը պէտք է ձգէ անմիջապէս»: Ինչ որ կրցան ծախել՝ ծախեցին: Արդէն ի՛նչ կրնային տանիլ իրենց հետ: Ահագին զինուոր ալ տարին»:

«Թուրքերէն ոմանք, որոնք կը սիրէին հայերը, կ'ըսէին. «Եթէ Տէր Զօր դրկեն, մի երթաք, Տամասկոս եւ այդ կողմերը գացէք»:

«Մաս մը Հալէպ գնաց, մաս մը Պապ Տէր Զօրի դուռը:

Ա՛լ բաժնեցին կինը՝ այր մարդէն, ծերը՝ երիտասարդէն»:

«Մենք չգացինք: Ինչպէս ըսի, ամուսինս կառավարական պաշտօնեայ էր: Մեր պաշտպանութիւնը յանձնուած էր գերմանացի սպայի մը՝ միսթըր Սբիրսի: Երբ ամայի ճամբաներու մէջ յանկարծ չէթէներ ելլէին, միսթըր Սբիրս գերմանական դրօշակ կը պարզէր: Ինչե՛ր կը տեսնէինք ճամբան, Տէ՛ր Աստուած: Մոռցեր էի: Նիհար, ոսկրացած, մեռելի աչքերով կիներ ու երեխաներ կ'աղաչէին ոստիկաններուն որ արտօնէին ջուր խմել: Խեղճերը մարած ինկած էին, չէին կրնար քալել անօթութեան եւ ծարաւի պատճառով»:

«Ջո՛ւր, ջո՛ւր, կ'աղաղակէր կին մը չորցած կոկորդով: Իրեն պէս շատեր չորցած լեզուի եւ չորցած շրթունքի ճայնով մը, չըփ-չըփով ջո՛ւր կ'աղաչէին»:

«Հեքիաթ չէ, աղջիկս, իրական է: Ես շատ չեմ տեսած բայց շատ տեսած կին մը վերջը ինծի շատ բաներ պատմեց: Սա ալ պատմեմ, մտիկ ըրէ: Պիտի գրես, գրէ: Կարաւաններուն մէջ յղի կիներ կային: Անոնցմէ մէկուն ցաւը կը բռնէ: Անմիջապէս շուրջը պատի պէս քանի մը կիներ կը կայնին, մինչ ուրիշներ նորածինը կ'առնեն: Որպէսզի ոստիկանին գութը շարժեն որ թոյլ տայ կինն ու երեխան հանգիստ ընեն, նորածինը ձեռքերնուն վրայ ցոյց կու տան ոստիկանին ու կ'ըսեն. «Խղճա՛, էֆենտի՛»: Ամա՛ն, կ'ըսէ պատմողը, օրերով լացինք, մեր աչքերը չորցան, մեր սրտերը բզիկ-բզիկ եղան, երբ ոստիկանը անմեղ նորածինը խլեց եւ արիւնլուայ թաց լաթի մը պէս մէկդի նետեց»:

«Բարեսիրտ պէյ մը ամուսինիս այսպէս պատմեր է. «Օր մը տեսայ որ մութին մէջ պատ մը կը շարժէր: Մօտեցայ եւ ի՛նչ տեսնեմ. Ողջ եւ դիակ խառներ, վրայ-վրայի դիզեր, պատ են շիներ: Փոս կը փնտռեն, որ մէջը նետեն, չկար: Այս ի՛նչ զուլում է, մէմուր (պաշտօնեայ - Յ. Ի.), մեղք

են, աղաչեցի: Ատոր համար գէշ եղայ»»:

«1918-ին երբ պատերազմը վերջացաւ, ետ Մարաշ գացինք: Հոն՝ 1920-ին ջարդ մը եղաւ: Ա՛յ, ամա՛ն: Ջարդ մը, անանկ ջարդ մը: 1920-ի Մնունդն էր: Քանի որ պատերազմը վերջացեր էր ու ազատութիւն տրուած, ժողովուրդը ուրախ էր: Մնունդէն քանի մը օր ետք էր կարծեմ, Ուրբաթ օրը, հաց կ'եփէինք, փսփսուք մը կար: Ֆրանսացի գացեր էր, բայց կ'ըսէին թէ գէնք տուեր էր թուրքին: Յանկարծ լսեցինք չաթ-փաթ մը: Աստուած ձեզի ցոյց չտայ այդպիսի օր: Շատեր տունը չէին, հարսերը՝ իրենց մօրը տունը, թոռնիկները՝ մայրերուն քով, ուրիշ շատ կիներ գոլէճին մէջ աղքատներուն հագուստ կը կարէին: Երբ կրակը սկսաւ, մարդ տեղէն չկրցաւ շարժիլ: Ի՛նչ ջարդ էր: Մայրը գաւկէն, կինը ամուսինէն հեռու՝ մեռաւ: Հայր Ֆրանսացիին հետ էր կուրիւն ատեն: Թուրքը չի՞ գիտեր ասիկա: Երբ Ֆրանսացին գնաց, «Ահա՛ ձեզի Ֆրանսացի, դուք մեզի դէ՞մ կը կուրիք, հա՞» ըսին, ու դանակը քաշեցին: Անոնք որոնք կրնային, մինչեւ Ատանա քալեցին: Չմեռ, ձիւն, փոթորիկ: Չե՞ս լսած այս պատմութիւնը: Ով որ ազատած էր ջարդէն, ձիւնին մէջ մեռաւ: Ի՛նչ ահաւոր ջարդ էր»:

Ամուսինիս ըսի որ ընտանիքին մէկ մասը ազատէր, երեք տղաքս ալ արդէն կ'աղաչէին. «Պապա՛, մենք ալ չկենանք, մեզ ալ տար»: Անոնք գացին: Ի՛նչ ընէինք, գէթ մէկ մասը ազատէր: Քաղաքին մէջ կին, ծեր, երեխայ մնացին միայն: Երբ ձեմալ փաշան եկաւ, մեզի այլեւս բան մը չըրին: Յետոյ «Ռիլիֆ»ը եկաւ եւ ալ ազատեցանք ու Հալէպ եկանք»:

Խե՛ղճ մայրիկ: Գիտե՞ս թէ ինչ ըսիր: Շատ կը ցաւիս: Ինչո՞ւ. անոր համար որ ուրիշ շատ մը թշուառ մայրերու պէս շատ չե՞ս տեսած: Պայմա՞ն էր որ տեսնէիր: Ինչո՞ւ:

Գէթ քանի մը հատ չտեսնողներ չըլլայի՞ն: Ինչո՞ւ կը
ցաւիս, խեղճ կին: Գիտե՞ս թէ ինչ ըսիր:

- Շատ կը ցաւիմ, աղջիկս»:

4- Ժապաւէնը... (էջ 123-127) (արտագրուած)

Մեծ մաման երբ ողջ էր, կը պատմէր: Անոր պատմածները
ժապաւէնի վրայ արձանագրուած էին:

«Առաջին անգամ էրիկ մարդիկը տարին: Մեզի ալ ըսին
որ մեր ամուսիններուն քով պիտի տանին մեզ: Հալպուքի,
սո՛ւտ, սո՛ւտ: Յետոյ մեզ քշեցին չօլուխ-չօճուխ, նոր հարսեր,
աղուոր աղջիկներ, տղաներ, կը տանէին հեռուները»:

«Խեղճ ու անուշիկ հարսեր իրենց ամուսնութեան
մատանին կը հանէին, արցունքով կը համբուրէին, իրենց
կորսուած ամուսինին յիշատակը ոստիկանին կու տային,
որպէսզի ծարաւէ մեռնող իրենց զաւկին ջուր խմցնելու
արտօնութիւն ստանան»:

«Ազգական մը ունէի, որ ծարաւէն պիտի մեռնէր:
Կաթիլ մը իսկ ջուր կրնար փրկել զինք: Ինչպէ՛ս կ'աղաչէր
անգութ ոստիկանին, որ պուտ մը ջուր տայ: Գետինները կը
տապալտկէր չորցած ու դուրս ինկած լեզուով: Եւ կոտրելիք
ոստիկանները, կայնած, կը խնդային: Յանկարծ վրան
քաջութիւն եկաւ, սողաց, հասաւ ջրհոր մը ու ինքզինք
նետեց մէջը՝ ըսելով. «Քանի մեռնիլ կայ, գոնէ ջուր խմեմ,
յետոյ մեռնիմ»:

«Պատմե՛մ, տղա՛ս, պատմե՛մ: Պատմելը դիւրին է, տես-
նելը՝ դժուար: Վա՛յ, աչքս կուրանար՝ չտեսնէի: Իրարու
վրայ հորը կը նետէին: Ալ եթէ սիրտ ունիս՝ դիմացիր լաց
ու կոծերու: Աղուոր աղուոր տղաք ինչպէ՛ս կու լային,
ինչպէ՛ս կը գալարուէին գետինները՝ իրենց հայրն ու մայրը

կամ հարագատը կորսնցնելով: Ամա՛ն, քու պօյիդ տղոցմէ
հեռու: Այդ խեղճ չօճուխներէն քանիները տեսեր եմ, որոնք
մեռածներու կուրծքէն կաթ կը փնտռէին. այդ կաթը կա՞թ
է, տղա՛ս, թո՛յն է, թո՛յն: Տախտակ ու մեռելի ուրուական
դարձած մանուկներ, աղտոտ ու մաշած հագուստներով,
գրեթէ մերկ, ոտաբոպիկ երեւակայէ՛, մեռելներու հետ
պառկին, ելլեն, խոտ ուտելէ իրենց փորերը ուռին, ոսկոր
կրծեն, մեռելներու եւ քարերու վրայէն արիւն լզեն, թաց
կաթ ծծեն: Կոտորի՛ն, կոտորի՛ն»:

«Ես այդ տղոցմէ քանի մը հատը ազատեր եմ: Գիտե՞ս,
առաջ ասանկ նեղ փէշ չէին հագուեր կիները: Լայն ու
շատ երկար փէշ մը կը հագնէինք: Այդ փէշին տակ երկու-
երեք տղայ կը պահէի, հետս կը քալէին ու հետս ալ կը
կենային: Փոքր են չօճուխները, դուրս ելլել կ'ուզեն, ջուր
խմել կ'ուզեն, կը յոգնին, նստիլ կ'ուզեն, է՛հ, պէտք է
քալեն ինծի հետ»:

- Նենէ՛, դե՛ռ պատմէ,- կ'աղաչէ նոյն տղայական ձայնը:

«Պատմե՛մ, տղա՛ս: Բազմաթիւ չարչարանքներէն մէկն ալ
այս էր: Շատերուն աչքը կը հանէին, թելի մը կ'անցընէին
ու որպէս նուէր կը դրկէին հայ մեծամեծներու, ըսելով.
«Ձեզի հուլունք, գործածեցէ՛ք»: Ոմանց ալ թարթիչները
եւ մազերը մէկ-մէկ կը փետտէին: Չարչարելով մեռցնել էր
ասիկա. նախընտրելի էր վայրկեանական մահը, ամէն մարդ
կ'աղօթէր այդպիսի մահուան համար»:

- Նենէ՛,- կը պոռթկայ տղուն ձայնը,- հայերը ինչո՞ւ
չէին կռուեր, չէին ծեծեր ոստիկանները:

«Տղա՛ս, ճամբայ չհանած՝ անանկ կը ծեծէին, որ վրանին
հալ չէր մնար: Իրենց բերանները բանալու ոյժ չէր մնար,
ուր մնաց որ ապստամբէին»:

Raphael Lemkin, Raphael Lemkin's Dossier On the Armenian Genocide - Turkish Massacres of Armenians (Manuscript from Raphael Lemkin's Collection), American Jewish Historical Society, Center for Armenian Remembrance (CAR)


Ռաֆայել Լեմքին, «Ռաֆայել Լեմքինի Թղթածրարը Հայկական Ցեղասպանութեան Մասին - Թուրքերու Զարդերը Հայոց (Զեռագիր Ռաֆայել Լեմքինի Հաւաքածոյն)», «Հայկական Յիշատակարանային Կեդրոն»-ի հրատարակութիւն, Կլէնտէյլ, Գալիֆորնիա, 2008, հրատարակութեան իրաւունքները վերապահուած են Վարդգէս Եղիայեանի, միջակ չափի 160 էջ

Փրոֆ. Մայքըլ Պագիլըր յառաջաբանին մէջ կը գրէ.

1- Ռաֆայել Լեմքին քսաներորդ դարու ամէնէն ազդեցիկ իրաւաբաններէն եւ մարդկային իրաւանց պաշտպաններէն է, որ առաջին անգամ ըլլալով Հայոց Մեծ Եղեռնը «Ցեղասպանութիւն» (Genocide) որակեց:

Ան Մ.Ա.Կ.ի կողմէ «Ցեղասպանութեան ոճիրի կանխարգիլման եւ անոր համար պատիժի» պայմանագրի (The Genocide Convention) վաւերացման գըլխաւոր մղիչ ոյժը դարձաւ:

2- Հայոց Մեծ Եղեռնի եւ Ցեղասպանութեան մասին իր գրութիւնները ուժեղ կերպով ցցուեցան Հայոց Ցեղասպանութեան թրջական ուրացման դէմ:



Հեղինակը էջ 1-18-ին մէջ, «Հայերը» (The Armenians) խորագիրին տակ կը ներկայացնէ հայոց պատմութեան ամփոփ պատկերը: Ապա 19-48-րդ էջերուն մէջ կը խօսի օսմանցի թուրքերու՝ հայոց վրայ դրած ծանր եւ դաժան տուրքերու մասին:

49-72-րդ էջերուն մէջ Լեմքին «1915-1916-ի Զարդերն Ու Բռնագաղթերը» (Massacres and Deportations of 1915-1916) խորագիրին տակ ականատեսներու վկայութիւններ կը բերէ:

Ռաֆայել Լեմքին կը ներկայացնէ ոչ-հայ ականատեսներու վկայութիւններ հայկական ջարդերու եւ տառապանքի մասին, թէ ինչպէս թուրքերը կը ստիպեն հայ մանկահասակ տղաքը եւ ծերերը, որ բեռ կրեն օսմանեան բանակին համար: Ըստ գերմանացի ականատես վկայի մը՝ անոնք ճամբան կը կողոպտուին, կը ծեծուին, կը խոչտանգուին եւ կը սպաննուին 1914-ի Հոկտեմբերէն սկսեալ, թէ ինչպէս կիներ, երեխաներ, ծերեր եւ անկար մարդիկ իրենց հետ ոչինչ առնելով բռնագաղթի ճամբան կը բռնեն իրենց վրայ հազած զգեստներով միայն: «Allgemeine Mission Zeitschaft» («Գերմանական Առաքելութեան Ժամանակագրութիւն») գերմանական թերթը 1915-ի Նոյեմբերին կը գրէ.

«Ոստիկան մը մեզի պատմեց, թէ ինչպէս թուրքերը խումբ մը աքսորուած կանանց եւ երեխաներու հետ կը վարուէին: Մենք սարսուացինք: Անոնք հայերը առանց որեւէ խոչընդոտի մորթեցին: Ամէն օր տասը կամ տասներկու մարդ հեղեղատներու մէջ կը նետուին: Անոնք քալերու անկարող մանուկներու գանկերը կը փշրեն: Առաւօտ մը լսեցինք մահուան դատապարտուած խումբի մը տարուելուն մասին: Անոնց դժբախտութիւնն աննկարագրելի էր: Անոնք քար լուրթեամբ կը քալէին: Երիտասարդ եւ ծեր մարդիկ ծանր բեռներու տակ կը յառաջանային: Իրարու կապուած,

անոնք բարձր ժայռի մը վրայէն Եփրատի ջուրերուն մէջ նետուեցան: Մեր սրտերը սառեցան: Մեր ոստիկանը պատմեց, թէ անոնք Մամախաթունէն քշուած էին. 3000 հայեր, կիներ եւ երեխաներ, որոնք բնաջնջուեցան»:

«30 Մայիսին 674 հայեր Տիգրիսի վրայ 13 նաւակներու մէջ լեցուեցան: Իւրաքանչիւր նաւակի վրայ ոստիկաններ կային: Նաւակները ճամբայ ելան դէպի Մուսուլ: Նաւարկութեան ընթացքին ոստիկաններ զանոնք իրենց հագուստներէն եւ դրամէն զրկելէ յետոյ ջուրը նետեցին: Դրամն իրենց մօտ պահելով, հագուստները վաճառեցին»:

«Պաղտատի երկաթուղիին վրայ աշխատող պաշտօնեայ մը պատմեց, թէ շատ հայեր Պէրէճիքի գնտաններուն մէջ բանտարկուած էին՝ գիշերով Եփրատի մէջ նետուելու համար: Գետեզերքի վրայ անոնց դիակները շուներու եւ գիշակեր թռչուններու կեր դարձան»:

«Sonnenafgang» թերթը Հոկտեմբեր 1915-ին կը գրէ, թէ Եփրատի ափերուն գտնուած դիակները գազանաբար մորթուած էին: Արուններուն սեռային օրկանները կտրուած էին, իսկ էգերուն դիակները՝ կտոր-կտոր եղած»:

Թուրքերը շատ գէշ վերաբերմունք ցոյց կու տային մշակոյթի եւ քաղաքակրթութեան բարձր մակարդակի հասած հայոց, ինչ որ քաղաքակիրթ աշխարհի աչքերուն սարսափելի կը թուէր: Առնույտ Թոյնպի կը գրէ.

«Հազիւ թէ կարելի է երեւակայել այս տեսակ հրամանի (կ'ակնարկէ բռնագաղթին) հետեւանքները: Այս հայերը վայրենի չէին կարմիր հնդիկներուն նման, որոնք ճերմակամորթ մարդուն՝ ամերիկեան աշխարհամասի գրաւումով նահանջեցին, անոնք թափառական հովիւներ չէին իրենց բարբարոս դրացիներուն՝ քիւրտերուն նման, այլ՝ մեզի պէս նոյն կեանքը կ'ապրէին, սերունդներէ ի վեր քաղաքներու մէջ ապրող եւ տեղւոյն վրայ գտնուող բոլոր

հարստութեանց տէրն էին: Անոնք նստակեաց մարդիկ էին, բժիշկներ, իրաւաբաններ, ուսուցիչներ, առեւտրականներ, արհեստաւորներ եւ խանութպաններ, եւ անոնք իրենց խելացութիւնն ու ճարտարարուեստի ընդունակութեան արդիւնքը հաստատ կոթողի նման ցցած էին: Անոնք ծախսալից շինարարութեամբ եկեղեցիներ եւ լաւ դպրոցներ հիմնած էին: Անոնց կիները փափկասուն եւ յղկուած էին ու շատ քաղաքակրթուած, որովհետեւ թրքական ոճիրին ենթարկուած հայկական կեդրոններուն մէջ վերջին յիսուն տարիներուն ամերիկեան միսիոնարութեան անդամներ կը ծառայէին: Հայերը ծանօթ էին օտար բարեկիրթ մարդոց եւ կիներու, որոնք իրենց ուղղութիւն կու տային»:

Եղեսիայէն սուրիացի մը՝ Լուիս Կանիմա կու տայ ականատեսի իր վկայութիւնը.

«1915-ի աշնան, 10,000 կիներ, աղջիկներ եւ երեխաներ Մուհամմէտի-Խան քշուած անապատային վայրը կը հասնին: Առաջին քանի մը օրերը զինուորները իրենց զոհերը կողոպտելով կը զբաղին: Մերկ վիճակի մէջ, ցուրտէն եւ անօթութենէն տառապելով, անոնցմէ երկու հազար հոգի կը մահանայ: Հարիւրաւորներ, ծարաւէ տառապելով, ինքզինքնին ջուրի պարապ շտեմարաններու մէջ նետելով, կը մեռնին, մինչ անոնցմէ մեծ թիւով մարդիկ քիւրտերու կողմէ սպաննուելով, միւս դիակներուն վրայ կը կուտակուէին: Այս ձեւով 13 շտեմարաններ դիակներով կը լեցուին: Մնացեալ հազարաւոր քրիստոնեաները, հարիւրաւոր քիւրտ զինեալներու եւ 150 թուրք ոստիկաններու ձեռքով զիրենք շրջապատող չոր խոտերու հետ կրակի կը տրուին: Նախքան կրակի տալը, անոնք կը կողոպտեն իրենց զոհերը: Փախուստ տուողները իսկոյն ատրճանակի գնդակներով կը սպաննուէին: Կարաւանին մնացեալ քանի մը հազար մարդիկը այս ձեւով կը կոտորուին»:

«Այս ահաւոր ողջակիզումէն ետք, քիւրտ կիներ եւ երեխաներ մաղերով հասան դէպքին վայրը եւ կրակէն յառաջ եկած մոխիրը մաղելով, ոսկի փնտռեցին, որովհետեւ հայ կանայք կը կլլէին ոսկեդրամները՝ նեղ պարագաներուն գործածելու համար»:

Թուրքիոյ մէջ «Գերմանական Առաքելութեանց Անձնակազմ»ի (German Missions Staff) չորս անդամներ քայգերական Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան հասցէագրած «Հալէպ, 8 Հոկտեմբեր, 1915» նշումները կրող նամակով հետեւեալը կը գրեն.

«Ի տես դպրոցի շէնքին շրջակայքը ամէն օր մեր աչքերուն առջեւ պարզուող սարսափի տեսարաններուն, մեր կրթական գործունէութիւնը մարդկութեան ծաղրանքը կը դառնայ: Դրացի շէնքերուն մէջ մահը կը խլէ սովէ տառապող անոնց հայրենակիցները. մերկ կիներ, աղջիկներ եւ երեխաներ՝ գետին պառկած, ուրիշներ՝ իրենց համար պատրաստուած դագաղներու կողքին պառկած, իրենց վերջին շունչը կը քաշեն»:

«Հայկական Բարձրաւանդակէն հոս բերուած 2000-3000 գիւղացի առողջ կիներէն միայն 40-50 կմախքի վերածուածներ ողջ կը մնան: Սիրուն կիները գիրենք բռնաբարոյներու զոհերը կը դառնան, իսկ մնացեալները անօթի ու ծարաւ վիճակի մէջ (ջուրին եզերքը պառկած, բայց ջուր խմելէ արգիւտած) են: Եւրոպացիներուն արգիւտած է սովի մատնուածներուն հաց բաշխել: Ամէն օր հարիւրէ աւելի դիակներ դուրս կը բերուին Հալէպէն»:

«Այս բոլորը թուրք բարձրաստիճան պաշտօնեաներուն աչքերուն առջեւ տեղի կ'ունենան: Քառասուն կամ յիսուն նիհարցած ուրուականներ խոնուած են մեր դպրոցի շէնքին հանդիպակաց բնակարանին մէջ: Իրենց խելքը կորսնցուցած կիներ, որոնք ուտելը մոռցած են»:

«Կարելի է ակնկալել աւելի ահուելի արիւնահեղութիւն ձեւալ փաշայի հրատարակուած հրամանէն ետք (Պաղտատի երկաթուղային ընկերութեան երկրաչափներուն արգիւտած է հայկական կարաւանները լուսանկարել: Անոնք պարտաւոր են արդէն իսկ լուսանկարուած ֆիլմերը յանձնել 24 ժամուան ընթացքին՝ Պատերազմական Ատեանի առջեւ հետապնդուելու եւ դատուելու սպառնալիքով): Ասիկա փաստ մըն է, թէ պատասխանատու հեղինակութիւնները անոնց լոյս ընծայումէն կը վախնան, սակայն մտադրութիւն չկայ անոնց մօտ վերջ մը դնելու այս տեսարաններուն, որոնք նախատինք են մարդկութեան դէմ»:

Տոքթ. Ֆորէլը սոյն նամակէն պատճէն մը տուած էր «Berner Tagenacht» գուիցերիական թերթին (Berne Reveille կամ «Պեռնի Զարթօնք» - Զուիցերիոյ Սոցիալ-Դեմոկրատ կուսակցութեան պաշտօնական օրկանը, հիմնուած 1893-ին, Պեռնի մէջ) եւ ապա վերահրատարակուած «Journal de Geneve» թերթին (1826-ին հիմնուած, լուրջ եւ ազատական հակումով գուիցերիական թերթ) մէջ: Նամակն ստորագրած էին Դոկտ. Կրէյթլըրը (գուիցերիացի), Հալէպի Գերմանական Թեքնիք Վարժարանի բարձր կարգերու ուսուցիչ Դոկտ. Մարթին Նիբաթը (Dr. Martin Niepage, գերմանացի) եւ երկու ուրիշներ, որոնց անուններն անյայտ կը մնան:

Գերմանական Առաքելութեան (German Mission) ականատես վկայ մը հայոց չարչարանքներուն մասին կը գեկուցէ դեսպան Մորկընթաուին.

«Մամիւրէթ-իւլ-Ազիզի (Խարբերդի) նահանգին մէջ ուրիշ ահուելի բան էին այն չարչարանքները, որոնց ենթարկուեցաւ ժողովուրդը երկու ամիս: Անոնք կոպտօրէն վարուեցան բարձր դասակարգի ընտանիքներու հետ: Ոտքեր, ձեռքեր եւ կուրծքեր փայտի կտորի մը վրայ գամուած էին: Ձեռքերու եւ ոտքերու մատներուն եղունգները քաշուած

էին, ինչպէս կ'ընեն ձիերուն: Ուրիշներ պահարաններէն կախուած էին ոտքերը վեր եւ ձեռքերը վար դիրքով: Որպէսզի դուրսը հաւաքուած ժողովուրդը անոնց ճիչերուն եւ աղաղակներուն ձայները չլսէ, իրենց մարդիկը թմբուկներով եւ սուլիչներով կ'աղմկէին այն բանտին շուրջը, ուր այս վայրագութիւնները կը կատարուէին:

22 Յուլիս 1915-ին Փեթրոկրատի «Նովոյէ Վրեմիա» թերթը հետեւեալը կը հրատարակէ.

«Բաղէշ (Պիթլիս) քաղաքին մէջ կատարուած վայրագութիւններն աննկարագրելի են: Քաղաքին եւ շրջանին բոլոր տղամարդիկը կոտորելէ յետոյ, թուրքերը շրջակայ գիւղերէն 9000 կիներ եւ երեխաներ Բաղէշ կը բերեն: Երկու օր ետք զանոնք Տիգրիսի եզերքը տանելով կը գնդակահարեն բոլորն ալ եւ 9000 դիակներ գետը կը նետեն»:

«Ճփրատի ափերուն, թուրքերը 1000 հայեր կը կոտորեն եւ անոնց մարմինները գետը կը նետեն: Նոյն ատեն, չորս գումարտակներ Մշոյ դաշտը արշաւելու եւ հոն բնակող 12,000 հայերը կոտորելու հրաման կը ստանան: Ըստ վերջին տեղեկութեանց, ջարդն սկսած է արդէն Տիգրանակերտի շրջանի բոլոր հայերն ալ պիտի ջարդուին»:

Թրքական բանակին մէջ ծառայած եւ դէպքերուն ականատես եղած իսլամ պաշտօնեայ մը կը գեկուցէ.

«1915-ի Օգոստոսին, Մուշի արուարձաններուն մէջ մեծ թիւով հայ տղամարդոց, կիներու եւ երեխաներու դիակներ տեսայ, գետինը փռուած: Ոմանք գնդակահարուած էին, սակայն անոնց մեծ մասը ասուելիօրէն յօշոտուած էր: Կիները գրեթէ մերկ էին»:

«Մուշի մօտ գիւղի մը մէջ տեսայ փողոցները թափառող կիներ եւ մանուկներ, որոնք վայրին չէին ընտելացած եւ շատ նիհարցած էին»:

«Նոյն ամսուան մէջ, Բաղէշէն (Պիթլիս) դուրս գաղթակայանի մը մէջ տեսայ ոստիկաններու կողմէ հաւաքուած եւ անոնց հսկողութեան տակ գտնուող 500 կիներ, աղջիկներ եւ երեխաներ: Ոստիկաններուն հարցուցի, թէ այս ժողովուրդը ի՞նչ պիտի ըլլայ: Անոնք պատասխանեցին, թէ աքսորելու համար հաւաքուած էին, սակայն իրենք հրաման ունէին աւազակախումբերուն արտօնել անոնց հետ վարուելու ճամբուն վրայ: Թրքական կառավարութիւնը կազմակերպած էր աւազակախումբերուն գործը՝ հայերը ջարդելու նպատակով: Աւազակախումբերը կազմուած էին քիւրտերէ, թուրք ոստիկաններէ եւ ոճրագործներէ, որոնք բանտերէն ազատ արձակուած էին այս նպատակով»:

«Գետին մէջ, Բաղէշ, բաւական թիւով հայերու դիակներ ջուրին վրայ կը ծփային, քանի մը հատն ալ գետեզերքը նետուած էին: Հոտը շատ գէշ էր եւ ջուրը չէր խմուեր»:

«Կրկին Օգոստոս ամսուան մէջ, Ջառա (քաղաք Սեբաստիոյ նահանգին մէջ) քաղաքէն երկու ժամ հեռու, մօտաւորապէս 15,000 ջարդուած հայերու մարմինները տեսայ: Անոնք իրար վրայ շարուած էին երկու շարքերով: Ջառայի հայ եպիսկոպոսը, իր խնդրանքին վրայ, մօտակայ քարայր մը տարուած ու գնդակահարուած էր»:

«Ջառայէն Մուշ վերադարձին, Մուշի շրջակայքը գիւղի մը մէջ, աւելի քան 500 հայեր, մեծաւ մասամբ կիներ եւ երեխաներ, ախոռի մը մէջ բանտարկուած էին: Ոստիկանները առաստաղին բացուածքէն վառող ջահեր նետած էին: Բոլորն ալ ողջ-ողջ հրկիզուած էին: Շատ չմօտեցայ, բայց հեռուէն դիտեցի եւ խեղճ զոհերուն աղաղակները լսեցի»:

«Լաւատեղեակ մարդոցմէ լսեցի, թէ յղի կիներու մարմինները բացուած՝ եւ չծնած մանուկները դուրս հանուած ու նետուած էին»:

«Մուշի փողոցները հայոց մարմիններով լեցուած էին: Տունէն դուրս եկած իւրաքանչիւր հայ կը սպաննուէր»:

«Զէրքէզ-քէօյ եւ Հինիս (հաւանաբար՝ Խնուս - Յ. Ի.) գիւղերուն միջեւ գտնուող երկու խոր կիրճերու մէջ հայերու մարմիններ տեսայ, մօտաւորապէս 400 մարմին իւրաքանչիւր կիրճին մէջ, մեծաւ մասամբ՝ այր մարդոց: Ուրիշ հեղեղատ մը մանուկներու մարմիններով լեցուած էր»:

«Երբ Երզնկա գացի, լսեցի թէ լայնածաւալ Ջարդեր գործադրուած են Երզնկայի, Մամախաթունի եւ ամբողջ շրջանին մէջ: Թուրքերու սպաննածներէն եւ ողջ-ողջ այրածներէն բացի, անոնք հազարաւոր հայեր Եփրատի մէջ նետած էին: Մեծ թիւով հայեր ալ, տեսնելով թէ իրենց մահն անխուսափելի էր եւ աւելի գէշ վայրագութիւններէ վախնալով, ինքզինքնին Եփրատի մէջ նետած էին («Գերմանիա, Թուրքիա եւ Հայաստան» (էջ 123-128))»:

Դոկտ. Մարթին Նիբաթ հայոց դէմ կատարուած քստմնելի դաժանութեանց մասին զեկոյց մը կը դրկէ Գերմանիոյ դեսպանատուն: Ահաւասիկ քանի մը հատուածներ անոր զեկոյցէն.

«[Թէլ] Ապիատէն Ռաս-իւլ-Այն երկարող երկաթուղիին եզերքները բռնաբարուած կիներու մերկ դիակներ փռուած էին, Հալէպէն կը տեղեկացնէ Հեր Կրիֆ (Herr Grief): Շատերու յետոյքներուն մէջ ցիցեր մխրճուած էին: Հալէպէն Հեր Շփիքըր (Herr Spieker) տեսած էր թէ ինչպէս թուրքեր հայ այրերը իրարու կապելով անոնց վրայ կրակած էին: Անոնք կը զուարճանային երբ խեղճերը մարմնի կծկումներով կը մահանային: Ուրիշներ իրենց ձեռքերը կապուած, ցից գառիվարներու վրայ կը նետուէին գլորուելու համար: Վար հասնողները չար կիներու կողմէ կը դաշունահարուէին»:

«Մուսուլի գերմանացի հիւպատոսը Հալէպի Գերմանական Ակումբին մէջ կ'ըսէ թէ Մուսուլէն Հալէպ երկարող


ճամբուն վրայ մարմնէն փրցուած մանուկներու ձեռքեր կ'երեւային: Անոնք այնքան շատ էին թիւով, որ կարելի էր անոնցմով ճամբան սալայատակել:

Գիրքին մնացեալ մասին մէջ հեղինակը վերլուծումներ կ'ընէ թուրքերու՝ սպաննելու տրամադրութեան մասին, ապա կը գրէ արտաքին աշխարհի հակազդեցութեանց մասին:

Վերջաւորութեան՝ օգտագործուած աղբիւրներու ցանկ մը ներկայացուած է:

A. Adossides, Armeniens et Jeunes Turcs - Les Massacres de Cilicie, Paris, 1910

Ա(նաստաս) Ատոսիտիս, «Հայերը եւ Երիտասարդ Թուրքերը - Կիլիկիոյ Կոտորածները», հրատարակութիւն Բերիոյ Հայոց Թեմի, «Այգ» մատենաշար թիւ 8, Հալէպ, 2009, միջակ չափի 166 էջ



Գիրքին սկիզբը տեղ գտած են ընտրովի տեղեկութիւններ «Հայկազեան Հայագիտական Հանդէս»-ի Ի. Է. հատորին մէջ (Պէյրուս, 2007) լոյս տեսած՝ հայրենի պատմաբան Վարուժան Պօղոսեանի «1909-ի Կիլիկիայի Հայկական Կոտորածները Յրանսիական Պատմագրութեան Գնահատմամբ» գրութեան մէջ (էջ 33-43) տեղ գտած՝ Անաստաս Ատոսիտիսի կենսագրութենէն եւ անոր այս աշխատութեան գնահատականէն (զարմանալի է, որ կազմող-հրատարակիչը բաւարարուած է միայն «ՀՀՀ»-ի անուան եւ Ի. Է. հատորին

նշումով՝ հիմնովին անտեսելով գրութեան հեղինակին անունն ու վերնագիրը - խմբ.): Պօղոսեանի գրախօսութեան մէջ կը յայտնուի, թէ Ատոսիտիս իր գիրքին մէջ հիմնուած է ամերիկացի, անգլիացի եւ ֆրանսացի դիւանագէտներու եւ միսիոնարներու վկայութեանց վրայ: Ատոսիտիս բազմիցս կը քննադատէ օսմանեան իշխանութեանց գործելակերպը, մանաւանդ որ անոնք Կիլիկիոյ ջարդերուն պատասխանատուութիւնը հայոց վրայ կ'ուզէին բարդել: Ատոսիտիս կը հաստատէ, թէ հայերը որեւէ անջատողական ձգտումներ չունէին: Ան կ'ապացուցէ կոտորածներուն կանխամտածուած բնոյթն ու օսմանեան իշխանութեանց՝ անոնց թոյլտուութիւնը: Ատոսիտիս կը շեշտէ նաեւ թուրքին «տիրապետող»ի հոգեբանութիւնը: Հայերը եւ միւս քրիստոնեաները թուրքին համար պարզապէս «տիրապետող» տարրեր էին: Ան երիտթուրքերուն իրազեկուած եւ ջարդերը նախապատրաստողի դերը կը շեշտէ:

1- Նախքան Կոտորածը (էջ 17-37)

Ատանայի ջարդերը Եւրոպայի մէջ աննկատ անցած էին, որովհետեւ 13 Ապրիլ 1909-ին Պոլսոյ մէջ տեղի ունեցած էր Ապրիլ Համիտի պետական հակահարուածը, զոր միջազգային մտահոգութեանց առաջին տեղը գրաւած էր: Յաջորդ օրն իսկ, 14 Ապրիլին, Ատանայի ջարդերն սկսած էին:

1907-ի Դեկտեմբերին Փարիզի մէջ գումարուած «Միութիւն Եւ Յառաջդիմութիւն» կոմիտէի նախաձեռնած խորհրդաժողովին Օսմանեան կայսրութեան հակասուլթանական տարրերէն միայն «յեղափոխական հայերը» (իրականութեան մէջ՝ միայն Հ. Յ. Դաշնակցութիւնը - խմբ.)

ընդառաջած էին Կայսրութիւնը փլուզումէն փրկելու եւ զայն վերականգնելու կոչին: Բնականաբար, այս յեղափոխական հայերն իրենց հայրենակիցներու փրկութեան կը ձգտէին: Հայերը բնաւ անջատողական նպատակներ չունէին, սակայն անոնք կը ձգտէին նոր վարչակարգի մը հաստատման՝ երկրին մէջ օրէնքի վրայ հիմնուած խաղաղութիւն եւ արդարութիւն վայելելու համար: Սակայն, ինչպէս յետոյ պիտի տեսնենք, հայոց՝ փրկութիւն ենթադրած նոյն այդ վարչաձեւը պիտի ըլլար անոնց սարսափելի ողբերգութիւնը ծրագրողն ու իրականացնողը:

Հեղինակը՝ Անաստաս Ատոսիտիսը 24-27-րդ էջերուն մէջ կը ներկայացնէ Կիլիկիոյ եւ Հիւսիսային Սուրիոյ ամփոփ պատմութիւնն ու աշխարհագրութիւնը: Ան կ'ընդգծէ Կիլիկիոյ աշխարհագրական կարեւոր դիրքն ու բնական հարստութիւնները: Ըստ հեղինակին, Կիլիկիոյ մէջ թուրքերէն ետք ամէնէն շատ եղող հայերը խելացի, աշխատասէր եւ նախաձեռնող ժողովուրդ մըն են: Վենետիկի Միթարեանները կէս դարէ ի վեր ուժգնութեամբ հրահրած էին հայ ցեղին գրական եւ պատմական անցեալի յիշողութիւնը, որուն շնորհիւ՝ վերածնունդ մը յառաջ եկած էր ու մշակոյթը տարածուած էր ժողովուրդին մէջ: Հայ առաքելական համայնքի կողքին հայ կաթողիկէ համայնք մը, ապա նաեւ հայ աւետարանական բարգաւաճ համայնք մը գոյութիւն առած էին:

Կիլիկիան գերծ մնացած էր 1895-1896-ի կոտորածներէն: 1906-ին եւ 1907-ին ուրիշ կոտորած մը ծրագրուած էր Կիլիկիոյ համար, սակայն Ատանայի նահանգի այդ օրերու կառավարիչ Պահրի փաշան ձախողցուցած էր զայն: Թուրքերը նախանձով կը նայէին հայոց յառաջդիմութեան: Ասկէ գատ, օսմանեան պատմութեան մէջ չգրուած օրէնք դարձած էր այն, որ թուրքը միշտ ապրէր ստրուկ քրիստոնեաներուն

հաշւոյն: Թուրքերուն մեծ հարստութիւնները դիզուած էին քրիստոնեաներու վայրագ կողոպուտով: Այս ուղղութեամբ, Տարսոնի «Սէյնթ Փօլզ» Գոլէճի տնօրէն դոկտոր Թոմաս Քրիսթի թուրք պաշտօնատարի մը խօսքերը կը մէջբերէ. «Կը սպասենք որ փեթակը լեցուի, յետոյ նոր միայն մեղրը քաղենք»: Թուրքերը հայոց ինչքերուն տիրանալ կը ցանկային: Ոմն թուրք Քերիմ աղայի ցեղակիցները, անցնելով Չորք Մարգպանի շրջանի Նաճարլը հայաբնակ գիւղէն, գիւղացիներուն կը յայտարարեն. «Ո՛վ կեալուրներ, հիմա դուք կը սերմանէք, սակայն գիտցէ՛ք, թէ Աստուծոյ օգնութեամբ, ձեր աշխատանքին պտուղը մենք պիտի քաղենք»:

Սահմանադրութեան վերահռչակումը հայոց վիճակը իբր թէ պիտի բարելաւէր: Անոր բերած փոփոխութիւնները թուրքերը որպէս իսլամ կրօնքին եւ Ղուրանին դէմ եղած արարքներ կը դիտէին: Ատանայի մէջ հայերը շատ աճապարած էին իրենց խանդավառութիւնը դրսեւորելու Սահմանադրութեան բարեփոխումներու հանդէպ: Քարողւած հաւասարութիւնը թուրքերն իրենց համար իբր նախատինք կ'ընդունէին, որովհետեւ անոնք միշտ իշխողի դերին մէջ գտնուած էին: Թուրքերը բարկացած էին, մանաւանդ որ հաստատուած նոր վարչաձեւին բարեացակամութեան շնորհիւ, մեծ թիւով հայեր գէնքեր կ'ապահովէին: Անոնք չէին կրնար հանդուրժել, որ անհաւատ հայերը հրագէններ ունենալու համարձակութիւն ունենային յայտնապէս: Ոչ-իսլամը գէնք կրելու իրաւունք չունէր: Հայերը բանակին մէջ ծառայելու իրաւունք ալ ստացած էին եւ օսմանեան խորհրդարանին մէջ քանի մը երեսփոխաններ ունեցած էին:

1908-ի աշնան, Սահմանադրութեան հռչակումէն քանի մը ամիս ետք, Կիլիկիոյ մէջ կը նիւթուէր եւ կը ծրագրուէր

հակահայկական շարժում մը հոճաներու, թուրք երեւելի անձնաւորութեանց եւ ցեղապետներու կողմէ: Պուլանըք գաւառի Պահչէ գիւղի միւլթիին՝ Իսմայիլ Հազգըն, անոր մեղսակից կիւլէլի Օղլու Վելին, Հաճնոյ Քէօր Ահմէտ անունով կրօնականը, իսլահիէցի վարպետ Քիւսէ աղան եւ ուրիշներ կը յայտարարէին, թէ Սահմանադրութիւնը հայոց գործն է եւ թուրք հաւատացեալները կը հրաւիրէին պաշտպանելու «անարգուած» իսլամ կրօնքը: Նոր իրավիճակէն դառնացած եւ յոյժ դժգոհ թուրքերը կը մտածէին հայոց վրայ յարձակիլ: Արաբ Մուլլա անունով աստուածաբան մը Ատանայի նահանգը կը շրջագայէր եւ թուրքերը հայոց դէմ «Ճիհատ»ի (սուրբ պատերազմ) կը հրաւիրէր: Մոլեռանդներ Ատանայի բաց շուկային մէջ կը ծաղրէին հայերը՝ գոչելով. «Ո՛վ կեաւորներ, շուտով ձեզ պիտի մորթեն»: Սահակ Բ. Խապայեան կաթողիկոսը, Ատանայի թեմի Առաջնորդ Մուշեղ Եպիսկոպոս Սերոբեանը, Ատանայի նահանգապետ Ճեւատ պէյը, ներքին գործոց նախարարը, մեծ վեզիր Քեամիլ փաշան եւ անոր յաջորդը՝ Հիւմի փաշան ի զուր կը նախազգուշացնէին հայերը:

Իշխանութեանց տկարութեան եւ անհոգութեան պատճառով, Ատանայի նահանգը ամբողջական անիշխանութեան մէջ յայտնուած էր: Հայերու առանձին սպանութիւններ կը պատահէին: 1909-ի Փետրուար ամիսէն սկսեալ ահարկու լուրեր կը լսուէին ամէն կողմէ: «Բոլոր հայերը պիտի սպանուին»: Մարտ ամսուն մէջ, թուրքերը հայոց ծայրայեղ թշնամիներ դարձած, անոնց կը սպառնային արդէն բացայայտօրէն: Նախապէս կանխամտածուած եւ համակողմանիօրէն պատրաստուած կոտորածին գաղափարը բաւական հասունցած էր՝ յարմար պահուն գործի դրուելու համար:

2- Ատանայի Առաջին Կոտորածը (էջ 38-65)

Ատանայի կանխաւ պատրաստուած կոտորածն արդարացնելու եւ անոր պատասխանատուութիւնը հայոց վրայ բեռցնելու նպատակաւ, երկու թուրքեր 9 Ապրիլ 1909-ին Յովհաննէս Եափուճեան անունով հայու մը վրայ երրորդ անգամ ըլլալով կը յարձակին: Վերջինս ատրճանակի հարուածներով կը հակադարձէ, յարձակող թուրքերէն մէկը կը սպաննէ եւ միւսը կը վիրաւորէ: Ասիկա Ապտիւլ Քատէր կոչուած թուրք շէթէի մը խմբակին պատրաստած հարուածն էր անկասկած, որ նպատակ ունէր թուրք ամբօխը յուզումի մատնել: Իսկապէս ալ, թուրքերը սարսափի կը մատնուին եւ փախած «ոճրագործ»ը գտնել ու պատժել կը պահանջեն՝ այս պահանջով ցոյցեր կազմակերպելով: Կառավարութիւնը թէեւ կը զսպէ ցոյցերը, բայց թուրք հոճաներուն արտասանած հակահայ բուռն ճառերը իւր կը թափեն միտքերու գրգռութեան վրայ:

9-14 Ապրիլ 1909-ին թուրքերը կը փորձեն գրգռել հայերը: 12 Ապրիլին թուրքերը Ատանայի փողոցներէն մէկուն մէջ երկու հայ կը սպաննեն: Անոնք հայոց դէմ սուտ լուրեր կը տարածեն: Երբ Պոլսոյ մէջ պայթած խռովութիւններուն լուրը Ատանա կը հասնի եւ կը տարածուի, թէ փատիշահը (թագաւորը) պիտի պատժէ իսլամ կրօնքին բոլոր թշնամիները, նոյն օրը երեկոյեան, լաւ զինուած թուրք զիւղացիներ կը գրաւեն Ատանա քաղաքը: Անոնք մահակներով, գամերով, կացիներով, դանակներով եւ երկժանի փայտերով կը յարձակին հայոց վրայ: Ուրիշ թուրքեր հրագչներով եւ ատրճանակներով զինուած էին:

Ատանայի նահանգապետ Ճեւատ պէյի մօտ թուրքերը ժողով մը կը գումարեն եւ կ'որոշեն հայոց հետ «խստօրէն

վարուհի»։ Ժողովին որոշումներուն որպէս եզրակացութիւն միւլթիւն կը յայտարարէ. «Արտօնուած է սպաննել անհաւատները եւ տիրանալ անոնց ինչքերուն»։

Թուրքերը հայոց վրայ իրենց յարձակումը առաւօտուն կը սկսին։ Նահանգապետը կեղծիքի բառերով եւ ժպիտով «կը հանգստացնէր» հայերը եւ կը թելադրէր, որ ամէն մարդ իր գործին երթայ։ Ամերիկեան առաքելութեան ղեկավարներէն մին՝ Պրն. Ուիլերմ Չէմպրըզ զղջում կը յայտնէ, որ ինք նահանգապետի խօսքին հաւատարիմ յորդորած էր հայ առեւտրականները՝ բանալ իրենց խանութները։ Կայ Ատանայի առաջին ջարդին մասին Ամերիկեան Վարժարանի դասախօս Հերպրթ Ատամս Կիպպընսի վկայութիւնը, զոր իբր նամակ ուղղած էր Մերսինի մէջ Մեծն Բրիտանիոյ դեր-հիւպատոս հազարապետ Չարլզ Տաութի Ուիլիին (էջ 42-45)։ Հերպրթ Ատամս Կիպպընսն ու Ուիլերմ Չէմպրըզը դէպքերուն օրը Ատանայի շուկային մէջ կը շրջագայէին։ Անոնք հայկական վաճառատուններուն մեծ մասը փակ կը գտնեն ու արիւնլուայ հայ երիտասարդի մը կը հանդիպին։ Թուրքերը բոլոր ճամբաները գոցած էին։ Անոնք հանգուցաւոր գաւազաններ ունէին։ Երկու օտարերկրացիները թուրք աւարառուներու կը հանդիպին եւ կը տեսնեն անոնց իրականացուցած կողոպուտը։ Զինուորական հրամանատարին (Ֆէրիք) եւ հայ քահանային կը հանդիպին ու առաջինէն կը խնդրեն շուկան բանալ եւ հանդարտեցնել թուրք ամբոխը, որ մահակներով, թուրերով եւ կացիներով զինուած՝ ազատ-համարձակ կը շրջագայէր շուկային մէջ՝ հայապատկան վաճառատունները կողոպտելով։

Առանձնակի սպաննութիւններ գործուած էին հայկական թաղերուն, մանաւանդ Թոսպաղա Մահալլէսիի եւ Շապանիէի մէջ։ Ճեւատ պէյ, պատասխանելով հայոց դիմումներուն, վերանորոգած էր իր խոստումները։ Անոր

դիմողներէն յայտնի իրաւաբան Դաւիթ Ուրֆալեանը շուտով սպաննուած էր։

Հերպրթ Ատամս Կիպպընսը ականատես կը դառնայ նահանգապետի նստավայրի սենեակներէն մէկուն մէջ թուրով սպաննուող հայու մը նահատակուելուն։ Կիպպընս կ'ըսէ, թէ հակառակ իրենց բողոքներուն, նահանգապետը թուրք աւազակներուն զէնք եւ ռազմամթերք բաժնել կուտայ՝ հայերը ջարդելու համար։

Հեղինակը՝ Անաստաս Ատոսիտիսը կ'ըսէ, թէ հայերը ռեւէ մէկու վրայ յարձակում չէին գործած, այլ՝ միայն ինքնապաշտպանութեան պատրաստուած էին։ Անոնք ուժգնօրէն կը դիմադրէին նախայարձակ խաժամութիւն։

Թուրքերն ամէն կողմէ կ'աղաղակէին. «Կոտորեցէ՛ք, կոտորեցէ՛ք կեալուրները»։

Հրագէնի հարուածներ կը թնդան՝ կարկուտի պէս։ Թուրքերը կատղած վիճակ ունէին։ Մեծն Բրիտանիոյ դեր-հիւպատոսը կը գրէ, թէ թուրք կրօնապետներէն միայն հատուկեմտներ կը փորձէին հանդարտեցնել ամբոխը, սակայն հոճաներուն մեծագոյն մասը, հրացաններ ձեռք անցուցած, իրենք եւս կը մասնակցէին կռիւներուն։

Թուրքերն երբ իրենք զիրենք պաշտպանող հայերու կը հանդիպէին, կը զայրանային եւ աւելի կը գրգռուէին։ Կողոպուտի, ջարդի եւ վայրագութեանց մասին կը վկայեն նաեւ օտարներ։ Անոնցմէ են միսիոնարուհի Օր. Էլիզապէթ Ուէպն ու միսիոնար Պրն. Մ. Վ. Չէմպրըզը, որ կ'ըսէ. «Կործանումի այս խենթութիւնը կը գլխէ կ'անցնի ամէն ինչ որ երեւակայութիւնը կրնայ յղանալ»։

Ջարդերն աւելի կազմակերպուած եւ «օրինաւոր» ձեւով կը շարունակուին 15 Ապրիլ 1909-ին։ Այս մասին ամերիկացի միսիոնար Սթէֆըն Թրօպրիճ կ'ըսէ, թէ թուրք զինուորները մզկիթներու մինարէներուն վրայ բարձրանալով՝ հայկական

Թաղերու վրայ անընդհատ կը կրակէին:

Կիպարնս կառավարչատուն կ'երթայ՝ անցուդարձերուն մանրամասնութիւնները մօտէն իմանալու համար: Իր վերադարձին, ան Չարլզ Տաութի Ուիլիի ուղղած գեկոյցին մէջ կը գրէ, թէ իշխանութիւնները գէնքեր կը բաժնեն ամբոխին, որպէսզի հայոց վրայ յարձակի: Նահանգապետն այս արարքը կ'արդարացնէ՝ ըսելով, թէ անոնք պահեստի գինուորներ էին: Քաղաք մտած թրքական զօրագունդը գերակշիռ բաժին կ'ունենայ ջարդին, կողոպուտին եւ հրդեհներուն մէջ:

Ամերիկացի բազմաթիւ դիւանագէտներ եւ միսիոնարներ կը վկայեն, թէ թուրք գինուորներ հայերը կը կոտորեն: Ասքեարները կրակի կու տան տուն մը, որուն մէջ 150 հայ ծերեր, կիներ եւ երեխաներ թխմուած էին: Այս դժբախտները բոլորն ալ ողջ-ողջ կ'այրին: Կանոնաւոր զօրքերը հայկական թաղամասերուն վրայ կը գրոհեն: Ամերիկացի երկու միսիոնարներ՝ Տէյվիտ Ռոճըրզ (բնագիրին մէջ՝ Ռոժէ Է - խմբ.) եւ Հենրի Մորէր, աւետարանական դպրոցի մը մէջ ծագած հրդեհը մարելու ատեն կը սպաննուին: Հայկական բազմաթիւ թաղամասեր ամբողջովին կը քանդուին:

Հեղինակը՝ Անաստաս Ատոսիտիսը մանրամասնօրէն կը նկարագրէ սպանդի եւ կողոպուտի տեսարանները: Քաղաքը հայեր կոտորող մարդակերպ արարածներու իշխանութեան ձեռքն անցած էր: Թուրքերը հայոց պատսպարանները կը խուժէին եւ հարիւրաւոր մարդիկ կը սպաննէին կամ ողջ-ողջ կ'այրէին զանոնք: Պաշարուած ըլլալով հանդերձ, հայ ինքնապաշտպաններու քանի մը խումբեր տեղ-տեղ քաջաբար կը դիմադրէին: Թուրքերն ի գործ դրած էին վայրագութիւնն ու անհաւատալի լրբութիւնը՝ բնաջնջելու համար ամբողջ հայ ժողովուրդը: Տիկին Տաութի Ուիլին այս մասին կը գրէ. «Թուրքերը մարդիկը կ'ստովին կը սպաննէին, եւ այն պահուն երբ դժբախտները արեան մէջ

կը լողային, անոնց կիները կը բռնաբարուէին աչքերնուն առջեւ»: Միսիոնարուհի քոյր Մարի-Սոֆին կը գրէ. «Կը լսէինք սրտաճմլիկ ճիչերը, դժբախտներուն աղաղակները, երբ անոնց փորը կը ճեղքէին եւ կը շարչարէին»: Ֆրանսական առաքելութեան անդամներէն Հայր Պենուան կը պատմէ. «Դահիճները խեղկատակութիւն կ'ընէին նոր կտրուած գլուխներով եւ նոյնիսկ ծնողներուն աչքերուն առջեւ օդը կը նետէին երեխաները, զորս կը բռնէին իրենց դանակներուն ծայրամասով»: Թուրքերը հայ մայրերը շնչահեղձ կ'ընէին անոնց բերանը թխմելով իրենց գաւկին միսի կտորները: Դժոխային գարշանքներ եւ արեան ահաւոր խնձոյքներ...»:

Այս էջերուն մէջ յիշուած վայրագութիւնները ամբողջութեամբ թուրքերու գործը չէին միայն, այլ նաեւ՝ կիլիկեցի իսլամներու եւ քիւրտերու, որոնք անգործ ցեղ մը կը կազմեն: Հեղինակը՝ Անաստաս Ատոսիտիսը վկայութիւն մը կը մէջբերէ 1895-1896-ի կոտորածներէն (էջ 59-61) եւ կ'աւելցնէ, թէ Ատանայի ջարդերը նախորդները կը գլեն-կ'անցնին իրենց ահաւորութեամբ:

16 Ապրիլ 1909-ին, բրիտանացի դեր-հիւպատոս Չարլզ Տաութի Ուիլին պատգամ մը կը յղէ Ճեւատ պէյին՝ պահանջելով իսկոյն դադրեցնել ջարդերը: Քաղաքին մէջ չըջագայող օտարագրի դիւանագէտներ եւ միսիոնարներ մանրամասնօրէն կը տեղեկագրեն կատարուած սպանդը, կողոպուտն ու կործանումը:

3- Ատանայի Երկրորդ Ջարդը (էջ 66-75)

Երեք օր տեւող ջարդերէն ետք կը թուէր, թէ իրենց կատարած ոճիրներէն գինովցած եւ աւարներէն յղփացած թուրքերը կեանք պիտի շնորհէին ջարդուած, տրորուած, անօթութեան եւ թշուառութեան մատնուած

հայ ժողովուրդի մնացորդացին: Ատանայի հայկական թաղամասերու տուններուն երկու երրորդը քանդուած էր, շուկային մեծագոյն բաժինը՝ աւերուած: Խոստացուած էր վերապրողները պաշտպանել: Նոր զօրք պիտի հասնէր Ատանա՝ կարգն ու կանոնը վերահաստատելու համար: Եւրոպական ռազմանաւեր խարխիս նետած էին Մերսին նաւահանգիստը: Սակայն աւելի ուշ պիտի յստականար, թէ Եւրոպան ոչ մէկ օգնութիւն պիտի հասցնէր հայոց:

Երիտթուրքերու Ատանայի պաշտօնաթերթ «Իթիտալ»ը, Իհսան Ֆիքրիի տնօրինութեամբ, կը մեղադրէր հայերը օտար միջամտութեանց պատճառ դարձած ըլլալնուն համար: Եւրոպական պատուիրակութիւն մը Ատանա պիտի հասնէր՝ անցուդարձերուն աւելի մօտէն տեղեկանալու համար: Պատուիրակութիւնը կու գայ ու նաւահանգիստ կը վերադառնայ՝ առանց որեւէ օգուտ բերելու:

Ռուսներու բանակէն սահմանադրական գումարտակներ, Պոլիսը գրաւելէ յետոյ, 24 Ապրիլ 1909-ին Ատանա կը հասնին: Յաջորդ օրը կը սկսի Ատանայի երկրորդ ջարդը, որ առաջինէն շատ աւելի սարսափելի կ'ըլլայ: Քանի մը օր առաջ, իթիտակական Իսմայիլ Սեֆան «Իթիտալ»ի մէջ գրած էր, թէ եղածը բաւարար չէր:

Մինչ այդ, սակաւաթիւ դիմադրող հայերէն զէնքերը կը հաւաքուին եւ որոշ թիւով հայեր կը բանտարկուին: Օրէնքը շատ յստակ էր՝ բացի պետական համապատասխան կառոյցներէն՝ ոչ ոք զէնք ունենալու եւ կրելու իրաւունք ունէր, ուստի հայերն իրենց զէնքերը պէտք է յանձնէին: Սակայն, թուրքերը զինաթափ ընելու մտադրութիւն բնաւ չկար:

Ատանա քաղաքի հայ բնակչութեան մեծ մասը իր տուններէն զրկուած էր եւ եկեղեցիներու, դպրոցներու ու միսիոնարական կեդրոններու մէջ խցկուած: Կիրակի, 25

Ապրիլի առաւօտեան, Ատանա կը հասնին երիտթուրքական զօրագունդերը: Թուրքերն արդէն սկսած էին ամբաստանել հայերը: Նոյն օրը յետմիջօրէին, նոր ժամանած զինուորներ հայոց պատսպարաններու վրայ կը յարձակին եւ շատ հայեր կը սպաննեն: 2000 հայ վերապրող հիւանդներ, ծերեր եւ երեխաներ պատսպարած Աբգարեան վարժարանը բանակայիններու յարձակման թիրախ կը դառնայ: Հրչէջները կ'օժանդակեն զինուորներուն՝ չէնքին վրայ քարիւղ սրսկելով: Դպրոցն իսկոյն կը վերածուի ամեհի խարոյկի մը, ուրկէ զոհերու սարսափելի աղաղակներուն հետ այրող միսերու թունաւոր կծու ճենճերահոտը կը տարածուի: Փախչիլ փորձողները «սահմանադրական» զինուորներու կողմէ կը գնդակահարուէին: Կարգը կու գայ հայ խլեակներու ապաստանարանի վերածուած միւս բոլոր դպրոցներուն:

Քանի մը օր ետք, երբ Ատանայի հայկական թաղամասերը բոլորովին այրած էին, զինուորներն աւարներով բեռնաւորուած, կ'ուղղուին դէպի Մերսին ու նաւերը կը բարձրանան: Մեծն Բրիտանիոյ դեր-հիւպատոս հազարապետ Տաւութի Ուիլիսն նահանգապետին մօտ գացած էր եւ համարձակ ու բարձրաձայն խօսելով թուրքերուն ոճրային արարքներուն դէմ, կըրցած էր կրակը դադարեցնել տալ: Սակայն բազմաթիւ վայրերու մէջ թուրք պաշտպանութիւնները չէին ուզեր կանգ առնել: «Սեն Փօլ» Ֆրանսական գոլէճը բոցերու մէջ կ'այրէր՝ 6000 ապաստանեալ հայերով: Հայր Պենուա կը գրէր. «Տանիք կը բարձրանայինք բոցավառող կրակին վրայ ջուր թափելու համար, սակայն մինարէթներու բարձրութենէն թուրքերը ազատարարներուն վրայ կը կրակէին»:

Օտար միսիոնարներուն եւ դիւանագէտներուն միջամտութեամբ՝ կոտորածն ի վերջոյ կը դադարի: Կ'արտօնուի հայ թշուառները հաւաքել կառավարչատան առջեւ, ուր թուրքերը կը ստիպեն զանոնք, որ սուլթան Ապտիւլ Համիտին

արեւշատութեան մաղթանքներ գոչեն բարձրաձայն, ապա զանոնք բաց դաշտերու մէջ կը հաւաքեն:

Կրակը դադրելէ յետոյ, 14000 հայեր յոյն գործարանատէր թրիփանիսի գործարանին մէջ ապաստան կը գտնեն: Ուրիշ 5000 վերապրողներ գերմանական գործարանը կը պատըսպարուին: Օտարներու միջամտութեամբ, վերապրող հայոց հաց կը բաշխուի:

4- Ատանայի նահանգին Կոտորածը (էջ 76-99)

Ատանայի նահանգի գաւառներուն մէջ ջարդը նահանգի կեդրոն Ատանայէն նուազ սաստիկ չէր եղած: Փոքր քաղաքներու եւ գիւղերու աւերակները ինքնին կը վկայէին ջարդերու ահաւորութիւնը: Այս մասին Ուիլեմ Չէմպլըրը կը գրէ. «Կարծես թէ եօթն անգամ միւրճուած էին բոցավառ հնոցի մը մէջ»:

14 Ապրիլ 1909-ին ճեւատ պէյ իր իշխանութեան տակ գտնուող բոլոր պատասխանատուներուն կը գրէր. «Հայերը յարձակում գործած են մեր վրայ, ղրկեցէք պահեստի ոյժեր եւ միջոցներ ձեռք առէք՝ ձեր նահանգին թուրքերը պաշտպանելու համար»:

Ճէպէլ Պէրէքէթի գաւառակին կոտորածները ամէնէն սարսափելին էին: Կառավարիչ Ասաֆ պէյի հրամանով, թուրք երիտասարդները գինուորագրուած էին եւ մէկ ազդանշանով քրիստոնեաներուն վրայ կը յարձակէին, զանոնք կը սպաննէին ու կը կողոպտէին: Հոս հայոց կը պարտադրուի իսլամանալ: Կարմեղեան միսիոնարութեան մեծաւոր Հայր Ժոզեֆ կը վկայէ այստեղի դէպքերուն մասին (էջ 77-78): Ուրիշ եւրոպացի միսիոնարներ եւ նման վկայութիւններ կու տան: Բժիշկ Լորսըն Չէմպլըրը կը

գրէ. «Թեւերը կապուած հայերը գետը կը նետէին եւ կը զուարճանային կրակելով այդ դժբախտներուն գլխուն, ամէն անգամ որ ջուրին երեսը ելլէին»: Կաթողիկէ մէկ ուրիշ միսիոնարութենէ Հայր Ռիկալը կը վկայէ հայ քահանայի մը չարչարանքները՝ իսլամանալ մերժած ըլլալուն համար: Ամերիկեան տեղեկագիր մը կը գրէ. «Մարդու մը բերանը վառօդ թխմեցին եւ ապա լուցկիով կրակի տուին»: Ականատես վկայող մը՝ Պրն. Լէոփոլտ Ֆալր, թուրքին մոլեռանդ եւ անգութ նկարագիրը շեշտելով կը նկարագրէ, թէ ինչպէս հարուստ թուրք մը իր վեց հայ սպասաւորները կը սպաննէ: Հայուհի ահանատես մը հետեւեալը կը վկայէ. «Ճամբորդ մը, որ Կիլիկիոյ դռներէն կը մտնէր, կը պատմէ, թէ լեռներու վրայ ոչ մէկ անգղ կը տեսնուի այլեւս: Կենդանիներու դիակները կը փտտին ամբողջական վիճակի մէջ, որովհետեւ որսի թռչունները կը նախընտրէին իրենց սնունդը ճարել դաշտին մէջէն, ուր մարդկային միսի վայելքը կրնան ունենալ»:

Ֆրանսացի ճարտարապետ Մ. Ճ. Ատանայի նահանգի ջարդերէն մաս մը կը նկարագրէ իր յուշատետրին մէջ: Մերսինի հայերը կը կոտորուին 15 Ապրիլին: Չէրքէզներն են ջարդարարները: Փոքր թիւով հայեր, ամբօրէն փակուած իրենց տուններուն մէջ, ինքնապաշտպանական մահու կենաց կռիւներ կը մղեն:

Ջարդեր կը կատարուին նաեւ Մամեստիոյ եւ Հաճնոյ մէջ: Մամեստիոյ հայերէն միայն 80 հոգի կ'ազատի: Ինճիրլիք գիւղի 700 հոգի հաշուող հայերէն միայն 60 հոգին ազատած են: 145 տուներ ամբողջովին քանդուած են: Խրիսթիանքէօյ կոչուած գիւղին 45 տուներէն միայն երեքը մոռցուած են աւերիչ թուրքերուն կողմէ: Ապտի Օղլու գիւղին հայութիւնը 500 զոհ տուած էր:

Տարսոնի 16-17 Ապրիլ 1909ի խռովութեանց ընթացքին

մօտաւորապէս 800 տուններ կրակի կը տրուին՝ զանոնք կողոպտելէ յետոյ: Սկիզբը թուրքերը տարածայնութիւններ կը սփռեն, թէ յեղափոխական Կէօվտէրէլեանը, 15000 հայ զինեալներու գլուխն անցած, դէպի քաղաք կ'արշաւէ: Ատանայէն վերադարձող պահեստի 400 թուրք զինուորները եւ հրահրուած թուրք ամբոխը հայոց թաղերը կ'ասպատակեն: Տարսոնի զոհերուն թիւն է՝ 73 հոգի քաղաքին եւ 242 հոգի արուարձաններուն մէջ: Մօտակայ Քոզօլուք գիւղին մէջ 138 հայ կը նահատակուի: Ատանայի դաշտին մէջ, հայոց մեծ եւ հարուստ ազարակները աւարի կը տրուին:

Մամեստիա, Փայաս եւ ուրիշ քաղաքներ կոտորածի իրենց բաժինը կը ստանան: Խառնը գիւղին մէջ սարսափելի կոտորածներ տեղի կ'ունենան: Այս մասին Խառնըի քահանային երէցկինը մանրամասն տեղեկութիւններ կու տայ: Նոյնպէս Քէնըս (բնագիրին մէջ այսպէս է - Յ. Ի.), Հիսար եւ Հասան Պէյլի գիւղերուն մէջ շատ հայեր կը կոտորուին եւ շատ տուններ աւերակի կը վերածուին: Այս մասին կ'իմանանք ամերիկեան առաքելութեան մէկ տեղեկագրութենէն (էջ 90-93): Պահչէ, Լափաճլը, Խասսա, Եարփուզ, Կէօվչայիր, Էօզերլի, Քարատաշ եւ Այաս գիւղերը, ինչպէս նաեւ Իսլահիէ աւանը շատ կը տուժեն: Ամերիկեան միսիոնարութեան թղթածրարին մէջ այս մասին վկայութիւններ կան:

Կիլիկիոյ հիւսիսը գտնուող Սիս եւ Հաճըն քաղաքներուն շուրջ ու անոնց միջեւ գտնուող գիւղերուն մէջ սպանդի եւ կողոպուտի անցուղարձերը շատ են, ինչպէս Ռուժլուի, Քարաքէօյի եւ Շարի մէջ պատահած աղէտները:

Կոտորածներու շարանին մէջ, անկասկած յիշատակութեան արժանի են Կարս Պազար աւանի հայոց ինքնապաշտպանութեան կռիւները (տես Զապէլ Եսայեանի «Աւերակներուն Մէջ», էջ 195-225, Մատենաշար «Ազդակ»ի թիւ 61, Պէյրութ,

1952 եւ Յ. Պօղոսեան, «Հաճընի Ընդհանուր Պատմութիւնը եւ Շրջակայ Գօգան Տաղի Հայ Գիւղերը», էջ 580-583, Լոս Անճըլլոս, Ա. Մ. Ն., 1972 - խմբ.): Աւելի յատկանշական են Հաճընի հայոց իրագործած վրէժի արարքները: Անոնք բաւականաչափ զինուած ըլլալով, կ'որոշեն ամէն յարձակումի դիմադրել: Հաճընցիք կը յաջողին թուրք պաշարողները հեռու պահել: Յիշատակելի է նաեւ Չորք Մարզպան քաղաքին եւ Իսիւս աւանին տասը օր թրքական պաշարման դիմանալը: Ագպէզ եւ Չէքլէ գիւղերն ալ կը յաղթահարեն պաշարման զրկանքներն ու կը փրկուին շնորհիւ Հալէպի մէջ Ֆրանսայի հիւպատոս Ռոքֆէրիէրի, որ 200 ձիաւորներու գլուխն անցած, օգնութեան կը հասնի պաշարեալներուն (էջ 99):

5- Հալէպի նահանգի Հայութեան Կոտորածը (էջ 100-111)

1909-ի Ապրիլին Հալէպի նահանգի հայութիւնը եւս գերծ չմնաց կոտորածէն: Անտիոքի մէջ Ապրիլ ամսուան սկիզբը թուրքերը կը պատրաստուին: Իշխանութիւնները բանտէն կ'ազատեն ոճրագործներն ու մարդասպանները՝ հայոց վրայ յարձակելու պայմանով: Աւետարանական միսիոնարութեան տնօրէնը՝ բժ. Ճէյմս Մարթէն կը յայտնէ, թէ թուրքերը Անտիոքի հայ երեւելիները ժողովի կը հրաւիրեն եւ կեղծ խոստումներով ու շողոքորթութեամբ զանոնք կը հանգստացնեն: Այս հաւաքոյթը տեղի կ'ունենար ազատութիւն եւ եղբայրութիւն յայտարարելու համար: Սակայն կոտորածը կը սկսի ժողովը տակաւին չվերջացած: 400 աւագակներ, Գրըք Խան գիւղը ոչնչացնելէ յետոյ, Անտիոք կու գան եւ իրենց սեւ գործը հոն կը շարունակեն: Կառավարութիւնը անոնց գէնք եւ զինամթերք կը հայթայթէ: Գերմանական առաքելութեան տեղեկագիրը կ'ըսէ, թէ գլուխները ճերմակ

փաթեթոցով թուրքերը զօրանոց կը վագեն եւ գէնքեր կը ստանան: Անտիոքի հայկական թաղամասերը կ'այրին: Լէոփոլտ Ֆավրը այս մասին կը տեղեկագրէ մանրամասնօրէն (էջ 102-111): Քեսապի հայութիւնն ալ յարձակման կ'ենթարկուի, չրջանին գիւղերը կը կողոպտուին ու կը հրկիզուին, իսկ ժողովուրդը փախուստ կու տայ դէպի լեռները եւ ծովափը:

6- Կոտորածներուն Հաշուեցուցակը (էջ 112-122)

Հիմնուելով եւրոպական ու ամերիկեան առաքելութեանց եւ դիւանագէտներու տեղեկագիրներուն վրայ, հեղինակը՝ Անաստաս Ատոսիտիսը կոտորածներուն ամփոփ հաշուեցուցակը կը ներկայացնէ:

7- Կոտորածներէն Ետք (էջ 123-163)

Ատանայի նահանգապետ Ճեւատ պէյը եւ զինուորական հրամանատար Ռեմզին կը փոխարինուին քիւրտ Զիհնի փաշա Պապանգատէով եւ երիտասարդ թուրք գնդապետ Մեհմէտ Ալի պէյով: Ջարդերուն մասնակցած զինուորներ եւ պաշտպանութիւններ ազատ-համարձակ կը պտըտին, իսկ անդին հարիւրաւոր անմեղ հայեր կը ձերբակալուին: Ամերիկեան միսիոնարութեան տեղեկագիրը կ'ըսէ. «Դժբախտաբար, յստակ է, որ նոր կառավարիչները կը զբաղին առաւելաբար հայերը ամբաստանելով, քան իսկական յանցաւորները փնտռելով: Իշխանութիւնները կը ձերբակալեն հարիւրաւոր հայեր, մեծ մասամբ՝ անմեղներ, մինչդեռ կոտորածը դրդողները կը մնան անպատիժ եւ յոխորտանքով կը ղեկավարեն արդարութեան գործը»:

Տիկին Տաութի Ուիլի կը վկայէ, թէ թրքական իշխանութիւնները հայեր ձերբակալելով եւ զանոնք ծանր շարչարանքի ենթարկելով կը յաջողին երեւակայական ոճիրներու խոստովանութիւններ կորզել անոնց բերնէն: Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին նշանակած յատուկ յանձնաժողովը կը յայտարարէ, թէ օրէնքը միայն հայոց դէմ կը գործադրուի:

Ջարդերու գլխաւոր հրահրիչներէն Ապտիւլ Քատէրը, անոր որդին՝ Ապտիւլ Ռահմանը, Իհսան Ֆիքրին, Իսմայիլ Սեֆան, Կիւլէքլի Թեւֆիքը, Պոչնաքգատէ Սալիհը, Պաթումը Օսմանը եւ ուրիշ թուրք ղեկավարներ, մարդասպաններ եւ ոճրագործ պաշտօնեաներ ոչ միայն ազատութեան մէջ կը ձգուին, այլեւ՝ նոր, աւելի բարձր պաշտօններ կը ստանան:

Այս բոլոր տեղեկութիւնները մէկէ աւելի ամերիկեան, անգլիական, ֆրանսական եւ գերմանական տեղեկագրութեանց մէջ հրատարակուած են նոյնութեամբ:

Վերոյիշեալ թուրք պաշտօնեաներն են, որ օսմանեան խորհրդարանին քուէարկած օգնութեան վարկերը պիտի տնօրինէին իրենց ուզած ձեւով: Խորհրդարանը երկու երեսփոխաններ՝ Յակոբ Պապիկեանը եւ Եոլսուֆ Քեմալը (երկուքն ալ իթթիհատական - խմբ.) կը լիազօրէ՝ Կիլիկիոյ Ջարդերուն շուրջ տեղւոյն վրայ քննութիւն բանալու համար: Պապիկեան Ատանա կու գայ եւ երեք շաբաթ քննութիւն կատարելէ յետոյ կը վերադառնայ Կ. Պոլիս: Պապիկեան իր զեկոյցին մէջ կ'եզրակացնէ, թէ հայերը յանցաւոր չէին: Ան Ջարդերուն հանգամանքները քննող Զինուորական Ատեանին կողմնակալութիւնը կը մատնանշէ: Շատ չանցած՝ Յակոբ Պապիկեան կարճատեւ հիւանդութենէ մը ետք կը մահանայ: Միւս կողմէ, Եոլսուֆ Քեմալ շատ տարբեր ձեւով կը ներկայացնէ իր զեկոյցը: Ան կը ձգտի հայոց

վրայ բեռնել ամբողջ մեղքը: Սակայն շուտով ան Փարիզի օսմանցի ուսանողներու քննիչ նշանակուելով, կը թողու իր պաշտօնը: Այսպիսով, օսմանեան խորհրդարանը կը թաղէ Ատանայի կոտորածներուն հարցը:

Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Սթեֆան Փիչոնը (Stephan Pichon) երկրի խորհրդարանին մէջ բացայայտօրէն կը յայտարարէ, թէ թուրքերը նախապատրաստած էին ջարդերը եւ նոյն իրենք ալ՝ գործադրած: Թիւով քիչ հայեր, որոնք կրցած էին ինքզինքնին պաշտպանել, իբրեւ յարձակող ներկայացուած էին: Ըստ Ֆրանսացի բարձրաստիճան պաշտօնեային՝ թուրքերն ի զուր կ'արդարացնէին իրենք զիրենք:

Թուրքերը հայերն ամբաստանելու մէջ շատ առջեւ կ'երթան: Սակայն, շատ չանցած, Հայոց Պատրիարքարանին եւ հայ երեսփոխաններուն տրամադրութիւններն ըմբռնելով, նախարարաց խորհուրդը մասնաւոր շրջաբերականով մը ետ կը քաշէ հայոց դէմ եղած ամբաստանութիւնները: 1 Օգոստոս 1909-ին լոյս տեսած փաստաթուղթին մէջ, «Դրօշակ»ի եւ «Հնչակ»ի կոմիտէներուն գործունէութիւնը անվնաս եւ ոչ-յեղափոխական կը համարուի եւ կը հաւաստուի հայոց հաւատարմութիւնը օսմանեան հայրենիքին:

Հակառակ պաշտօնական այս յայտարարութեանց, Զինուորական Ատեանը կը յամառի որպէս ըմբոստ դատել անմեղ հայեր: 1909-ի Յունիսին վեց անմեղ հայեր կախաղան կը հանուին Ատանայի մէջ: Իննը թուրքեր եւս մահուան կը դատապարտուին: Այս անարդար մօտեցման դէմ նոյնիսկ ազնիւ թուրք անձնաւորութիւններ, ինչպէս Տիկին Խալիտէ Սալիհը, երեսփոխան Հիւսէյն Ճահիտը, կը բողոքեն եւ ցաւ կը յայտնեն:

Ֆրանսայի խորհրդարանի անդամ Տենիս Քոչէնը կ'ըլլայ եւրոպացի միակ քաղաքագէտը, որ ձայն կը բարձրացնէ՝

ամբաստանելով երիտթուրքերը. «Մեր պարտականութիւնն է ըսել, որ մենք համաձայն ենք ընդունելու երիտթուրքական վարչաձեւը այնքանով, որքանով ան ցոյց տայ քաղաքակրթութեան օրէնքներուն հետեւելու իր կամքը: Կարելի է ափսոսալ, որ մեր դեսպանը այս պարագաներուն յստակ ուղղութեամբ չէ գործած»:

Եթէ երբեք Կիլիկիոյ կոտորածը երիտթուրքերու գործը չէր, այն ատեն անոնցմէ կ'ակնկալուէր, որ իբր իշխանութեան տէր՝ արգելք ըլլային այդ կոտորածին: Հեղինակը՝ Անաստաս Ատոսիտիսը կ'աւելցնէ, թէ ժամանակը չէր եկած եւ հաւանաբար երբեք չգայ, որ Թուրքիոյ մէջ քրիստոնեային իրաւունքը հաւասար կշիռքի վրայ դրուած ըլլայ թուրքի շահին հետ:


Թարգմանիչը՝ Էմմա Ազարիկեանը իր կողմէ կը նշէ, թէ հայութիւնը 1909-ի ջարդերէն եւ 1915-ի Մեծ Եղեռնէն ետք աշխարհի չորս կողմերը տարածուեցաւ: Ան Կիլիկիոյ ջարդերու զոհերուն ընդհանուր թիւը 30,000 հոգի կը հաշուէ:

Philippos Balikian, «Biographical Memoir», Belmont, Massachusetts, U. S. A. (Փիլիպպոս Պալիքեան, «Կենսագրական Յուշեր»), Պելմոնթ, Մասչչուսեթս, Ա. Մ. Ն., 2009, միջակ չափի 123 էջ

Փիլիպպոս Պալիքեան ծնած է Արաբկիր, 1883-ին: Երկուքուկէս տարեկանին կը մահանայ հայրը՝ ընտանիքին բաւարար հարստութիւն ձգելով: Մայրը աղքատութիւն չի տեսներ եւ ան իր երեք զաւակները պատշաճ կերպով կը մեծցնէ: Հեղինակը՝ Փիլիպպոս Պալիքեան մանրամասնօրէն կը նկարագրէ Արաբկիր քաղաքը, որուն Մամասեան թաղը կը բնակէին: Փիլիպպոս եկեղեցւոյ կից մանկապարտէզը կը յաճախէ: Ան լաւապէս կը յիշէ մանկապարտէզի շէնքին փուլ գալը եւ 40 հոգիի մահը, 1891-ի Աւագ Ուրբաթ օրը: Այդ տարուան Զատիկուան տօնը սուգի կը վերածուի:

Փիլիպպոս կը փոխադրուի Արաբկիրի Տէրպէտէրեան դպրոցը եւ ապա Արաբկիրի Լիսէն: Լիսէին մէջ, հայ ուսանողները հայրենասիրական եւ ազատագրական պայքարի երգեր կը սորվէին: Քաղաքաբնակ թուրքերէն շատերը հայերէն գիտէին եւ այս երգերը կ'երգէին: 1895-ի Զարդերուն թուրքերը կ'անարգէին հայերը, եւ այդ հայրենասիրական երգերուն բառերը հայոց յիշեցնելով՝ զանոնք կը սպաննէին:

23 Հոկտեմբեր 1895-ին թուրքերը եւ քիւրտերը միաց-



եալ ոյժերով Արաբկիրի հայկական թաղամասերուն վրայ կը յարձակին: Կարմիր Հող կոչուած բլուրին կողմէն յառաջանալով, անոնք հայոց թաղերը նուաճելու քանի մը փորձ կը կատարեն, բայց կը ձախողին: Հայերը հերոսաբար կը դիմադրեն Աստուծոյ օգնութեամբ: Հայ դիմադրողներուն մեծաւորը Լիւլէճեան աղան էր: Երկու օր ետք թրքական բանակը հազարապետ Իլիասի (Major Ilias) գլխաւորութեամբ, հայոց թաղերուն վրայ կը յարձակի եւ մեծ վնաս կը հասցնէ: Հայապատկան շէնքերը կրակի կը տրուին: Հայկական ոյժերը կը տկարանան: Երկու ժամ ետք մոնետիկը կը կանչէ, թէ սուլթանը ներում կը շնորհէ եւ ամէն ոք պէտք է իր գործին երթայ: Անշուշտ, ասոնք սուտ խօսքեր էին: Քանի մը օր ետք, թուրքերը երեւելի հայերը կը ձերբակալեն եւ ապա կը սպաննեն: Թուրքերն ու քիւրտերը հայերը առանց գութի Զարդելու հրովարտակ կը ստանան. «Ոչ մէկ հայու պէտք է խնայուի» հրամայած էր Կարմիր Սուլթանը: «Չհնազանդող թուրքերը անհաւատ հայոց նման պիտի սպաննուին», - կ'աւելցնէր հրովարտակը: Զէնքերը յանձնելու հրաման եկած էր: Հետեւաբար, թուրք եւ քիւրտ գիւղացիներ հրաւիրուած էին Զարդի «խնճոյք» սարքելու:

Պաշրպօզուքներուն ամբօխը կը յարձակի Գազանճըլար եւ Խէրպէկլի հայկական թաղերուն վրայ, որոնք Մամասեան թաղեր կը կոչուէին: Խաժամուժը հայապատկան շէնքերը կրակի կու տայ: Փիլիպպոսենց չորս յարկանի շէնքն ալ կը հրդեհուի: Փիլիպպոս իր մօր եւ միջնեկ քրոջ հետ կ'ապաստանի Գող Աղբիւրին մօտակայ Փիւսքիւլի կոչուած պարտէզը, ուր կը հաւաքուին նաեւ հազարաւոր հայեր՝ լացող եւ պողոտացող մանուկներ, խեղճ կիներ, պատանիներ եւ երիտասարդներ, ինչպէս նաեւ ծերեր: Արշալոյսին թուրքերը եւ քիւրտերը Գող Աղբիւրի մէջ

հաւաքուած հայոց վրայ կը յարձակին եւ կարգ մը հայեր կը կողոպտեն, կը վիրաւորեն ու կը սպաննեն, ապա ժողովուրդին կը հրամայեն կարմիր Հող կոչուած բլուրը բարձրանալ, ուր երկու օր բաց երկինքին տակ կը մնան: Փիլիպպոս բլուրին վրայէն իրենց շէնքին մոխրանալը կը տեսնէ: Երկու օր ետք թուրքերը բռնահանուած հայերը կառավարչատուն կը տանին: Վերապրող հայերը ազատ կ'արձակուին: Փիլիպպոս իր մօր եւ քրոջ հետ մէկ ամիս կ'ապաստանի Տէր Յակոբեան մականունով ազգականներուն տունը:

Թուրքերը կարգ մը երեւելի հայեր ազատ կ'արձակեն: 17 Նոյեմբեր 1895-ին 105 հայեր դէպի Խարբերդ կ'աքսորուին: Երկարատեւ դատավարութենէ մը ետք անոնցմէ ոմանք կալանքէն կ'ազատին, իսկ մնացեալները մինչեւ 1899-ը բանտը կը մնան: Տասնմէկ հոգի մահապատիժ կը ստանայ: 1895-ի ջարդերուն, Արաբկիրի մէջ 800 հայեր կը սպաննուին եւ քաղաքը աւերակներու կը վերածուի: Երեւելի հայերէն շատեր Արաբկիրը լքելով, կարին, Այնթապ, Պոլիս եւ Զմիւռնիա կը հաստատուին:

Պալիքեանները իրենց մօր զարմիկին տունը կը փոխադրուին, Արաբկիրի Միրէշլի թաղը, որ 1895-ի ջարդերէն զերծ մնացած էր քիւրտ Հասան էֆենտիին շնորհիւ. ան իր զինեալներով թաղին 27 հայ ընտանիքները պաշտպանած էր: Դէպքերէն ետք Հասան էֆենտի Նիկոլեաններու դստեր հետ ամուսնացած էր: Աւելի ուշ՝ անոր զաւակը օսմանեան բանակին մէջ հազարապետ դարձած էր:

Տարի մը ետք Պալիքեանները իրենց շէնքը վերականգնելով, տուն կը վերադառնան: Փիլիպպոսի մայրը կը վերագտնէ իր ողջ հարստութիւնը՝ իրենց տան ետեւը գտնուող հորին մէջ պահած ոսկիները: Դէպքերէն ետք Փիլիպպոս փռապանի աշկերտ կ'աշխատի եւ ընտանիքին

համար բաւարար դրամ կը շահի: Փիլիպպոսի մայրը ծոմ կը պահէր եւ աղքատներուն կ'օգնէր: Յետագային Փիլիպպոս փռապանութիւնը լքելով, կը սկսի ատաղձագործի աշկերտ աշխատիլ վարպետ Աշրգպաշեանի մօտ, ու անոր հետ տուներ կը կառուցէ: Փիլիպպոս թէ՛ ատաղձագործ եւ թէ՛ հիւսն էր: Հինգ տարի ետք ան անձնական գործի կը ձեռնարկէ իբր շինարար ու բարձր եկամուտով բարեհամբաւ գործակատար մը կը դառնայ:

1909-ի Ապրիլին Ատանայի ջարդերը տեղի կ'ունենան: 1912-ին Փիլիպպոս կ'ամուսնանայ Քենովաբէ Քոնթիկեանի հետ: Շատ չանցած՝ մայրը կը մահանայ: 1914-ին կը պայթի Ա. Համաշխարհային Պատերազմը եւ Փիլիպպոս բանակ կը կանչուի: Ան ինը արաբկիրցի հայ զինուորներու խումբով Խարբերդի մօտ Մեզիրէի մէջ օսմանեան բանակին համար հացագործութիւն կ'ընէ: Տասնհինգ օր ետք տեղի զինուորական մեծաւորը՝ Օսման էֆենտիին Փիլիպպոսը իր քով քարտուղարութեան պաշտօնին կը նշանակէ:

Երկու ամիս քարտուղարութիւն ընելէ յետոյ, Փիլիպպոս իր ընկերոջ՝ Սարգիս Բանչուտուգեանի հետ միասին, բանակի ծառայութենէ զերծ կացուցուելու արտօնութիւն ձեռք կը ձգէ կաշառքով: Երկու ընկերները կը վերադառնան Արաբկիր, ուր այդ արտօնութեան կեղծ ըլլալը երեւան կ'ելլէ եւ Փիլիպպոսն ու Սարգիսը Մեզիրէ կը վերադարձուին: Ատեն մը հոն մնալէ յետոյ ընկերները կրկին Արաբկիր կը վերադառնան՝ իրենց հետ Սարգիս Գունդ-Յակոյեան անունով երրորդ ընկեր մը բերելով:

Այս ընթացքին՝ Արաբկիրի հայոց կացութիւնը վտանգաւոր դարձած էր. տուններու խուզարկութիւն, ձերբակալութիւն եւ բանտարկութիւն սովորական բաներ էին: Փիլիպպոս ուրիշ հայոց հետ բանտ կը նետուի, ուր Զարմայր անունով հայրենասէր հայ մը սաստիկ չարչարանքներու կ'ենթարկուի:

Ան իր յուսահատ վիճակին մէջ Փիլիպպոսի եւ անոր բանտակիցներուն կը խրատէ, ողջ մնալու պարագային, գալիք սերունդներուն պատմել թուրքերուն կատարած ոճիրները:

Թուրքերը Փիլիպպոսն ու անոր բանտակից ընկերը՝ Յակոբը, ձեռնաշղթաներով իրարու կապած, Մեզիրէի բանտը կը փոխադրեն: Օրական 40-50 հայեր բանտ կը բերուէին: Հայ արգելափակեալներուն թիւը 300-ի կը հասնի: Ամէն երեկոյ քանի մը հայոց «ներում» շնորհելով կը տանէին Խարբերդի «Կարմիր Խոնախ» կոչուած բանտը, ուրկէ ամէն գիշեր խումբ մը հայեր վեց ժամ հեռու վայր մը տանելով կը սպաննէին ամէն տեսակ գէնքերով:

Փիլիպպոսը, Սարգիս Բանշուտուզեանը եւ թուրք ոստիկան մը սպաննած ձեմալ անունով տերսիմցի քիւրտ մահապարտ մը նոյն բանտախոցը կը մնային: Փիլիպպոս փախչիլ կ'առաջարկէ: Երեք ընկերները պատը փորելու կը սկսին: Այս գործին պատասխանատուութիւնը Փիլիպպոսն իր վրայ կը վերցնէ: Չարաբաստիկ պատահար մը պատճառ կը դառնայ, որ թուրք ոստիկանները գիրենք պատը փորելու յանցանքին վրայ բռնեն: Այս պատճառով, երեքն ալ սաստիկ ծեծի կ'ենթարկուին: Սակայն ձեմալը կը խոստովանի, թէ ինք էր պատը փորելու միակ պատասխանատուն: Յաջորդ օրը ան կախաղան կը բարձրացուի:

Փիլիպպոս բանտին մէջ կ'իմանայ, թէ Խարբերդէն 160 հայեր ջարդուած են: Ընկերներով միասին փախչելու մասին կը մտածէ դարձեալ: Բանտին մէջ միայն 27 հայ եւ 32 թուրք բանտարկեալներ մնացած էին: Փիլիպպոս կ'իմանայ նաեւ, թէ Մելքիայի դաշնակցական եւ հնչակեան բանտարկեալները իրենք գիրենք եւ բանտը կրակի տուած են նախքան մորթուելու տարուիլը թուրքերուն ձեռքով:

Իրիկուն մը բանտին թուրք զինուորական պատասխա-

նատուները թուրք եւ հայ բանտարկեալները իրարմէ կը բաժնեն եւ տարբեր սենեակներու մէջ կ'արգելափակեն:

Բարեբաստիկ պատահարով մը, Փիլիպպոսի բարեկամ ձեմալ էֆենտի անունով արաբկիրցին նոր բանտապետ նշանակուելով պաշտօնի գլուխ կ'անցնի: ձեմալ էֆենտի Փիլիպպոսը եւ անոր հետ եօթը հայեր բանտէն կ'ազատէ 13 Օգոստոս 1915-ին: Թուրք զինուորականներն այս ութը հայերը իբր դերձակ եւ երկաթագործ կ'աշխատցնեն: Այս խումբէն Վահրամ անունով չմշկածագցի հայ երիտասարդ մը կը մտադրէ Տերսիմ փախչիլ: Փիլիպպոսն ու ընկերները կ'ուզեն անոր հետ երթալ: Երեք ամիս անցած էր բանտէն անոնց ազատ արձակուելուն: Սակայն Փիլիպպոս չար դիպուածով մը կը ձերբակալուի: 18 օր բանտարկուած մնալէ յետոյ, ձեմալ էֆենտի զայն դարձեալ կ'ազատէ: Փիլիպպոս տարի մը եւս թուրք զինուորականներու մօտ իբր երկաթագործ կ'աշխատի, ապա Սարգիս Բանշուտուզեանի հետ փախուստ կու տայ, որու համար ալ Պատերազմական Ատեանին կողմէ կախաղանի կը դատապարտուին: Խարբերդի մէջ երկու ընկերները Ս. Յակոբ ամերիկեան թաղը երթալով, Փրօֆ. Խաչատուրեանի օգնութիւնը կը խնդրեն Տերսիմ անցնելու համար: Աւագ Շաբաթ օրը շուկայ իջնելով ուտելիք եւ քրտական տարազներ կը գնեն: Թուրքերը զանոնք կը փնտռէին խիստ խուզարկութիւններ կատարելով: Չանոնք փախցնելու տերսիմցի քիւրտ Մահմուտի փորձը կը ձախողի: Փիլիպպոս եւ Սարգիս ամերիկեան դպրոցի ուսուցչուհի Աննայի տան մէջ կը պահուուին: Քանի մը օր ետք երկու ընկերները Ալի Պէկ անունով քիւրտի մը հետ ճամբայ կ'ելլեն դէպի Տերսիմ: Հազիւ առաջին քայլերը նետած՝ թուրք ոստիկաններ կը պաշարեն զանոնք: Ամէն մէկը մէկ կողմ կը փախչի: Փիլիպպոս գետի մը եզերքի ծառերուն տակ կը պահուուի: Գիշերով ան արաբկիրցի բարեկամ

Խոսրով Աղաճանեանի տունը կ'երթայ: Յաջորդ օրերուն Փիլիպպոս Խոսրովի օգնութեամբ քանի մը թաքստոց կը փոխէ: Կառավարութիւնը զայն կը փնտռէր, ուստի ոչ ոք կ'ուզէր պահել Փիլիպպոսը: Բազմաթիւ արկածախնդրական փորձերէ ետք Փիլիպպոսը ուրիշ հայոց հետ Տերսիմ կը հասնի Ալի Պէկի եւ Տէլէ անունով քիւրտ կնոջ մը օգնութեամբ: Անոնք բազմաթիւ հայոց հետ, քիւրտերու օգնութեամբ Երզնկա կը հասնին: Փիլիպպոսն իր ընկերոջ՝ Վահրամի հետ Մուրատ Փաշային (խօսքը կը վերաբերի Սեբաստացի Մուրատին [Խրիմեան] - խմբ.) այցելութիւն կու տայ: Երզնկայի մէջ ռուս զինուորներ եւ հայ կամաւորներ կային: Փիլիպպոս իրեն հայրենակից արաբկիրցիներու հետ առեւտրական գործեր կը վարէ եւ բաւական դրամ կը շահի:

Երզնկայի մէջ Փիլիպպոս Մուրատ Փաշայի կամաւորական գունդին մէջ կը մտնէ զարաբաղցի Տէր Յակոբովի հրամանատարութեան տակ եղող խումբին մէջ: Սարգիս Ճեպեճեանն ալ Երզնկայի մէջ կը գործէր: Հայրենասէր բազմաթիւ ուրիշ հերոսներ ալ կային քաղաքին մէջ: Վերագրաւուած շրջաններուն մէջ եռուզեռ կար եւ կեանքը կը խայտար: Հայոց տուներու բուխերիկներէն կրկին կը սկսէր ծուխ բարձրանալ:

1917-ի Փետրուարին կը պայթի ռուսական յեղափոխութիւնը եւ կարգ ու կանոնը ռուսական բանակէն կը վերանան: Ռուս զինուորները ճակատները կը լքեն եւ տուն կը վերադառնան: Երզնկայի ճակատին վրայ միայն 500-600 ռուս զինուոր կը մնայ գնդապետ Մորէլի հրամանատարութեան տակ: Տրապիզոնէն երկու հարիւր արեւելահայ զինուորներ Երզնկա կու գան՝ քաղաքին մէջ խանդավառութիւն ստեղծելով:

Երզնկայի մէջ Մուրատ Փաշա զինուորական հայերը կարգի կը դնէ եւ կարին գտնուող գնդապետ Թորգոմէն

(բուն անունով՝ Արսէն Արշակ Յարիթոն Նազգաշեան - խմբ.) օգնութիւն կը խնդրէ: Թուրքերու դրդումով՝ քիւրտերը հայոց վրայ կը յարձակին: Երզնկայի մէջ գտնուած հայկական ոյժերով դժուար էր քիւրտերը զսպել: Գնդապետ Թորգոմ կը պատրաստուէր անկախութիւն հռչակելու կարինի մէջ եւ Մուրատ Փաշային հեռաձայնելով կը յանձնարարէր նոյնը ընել Երզնկայի մէջ:

Հայոց դէմ քրտական ոտնձգութիւններէն ետք թրքական բանակը Վեհիպ Փաշայի հրամանատարութեամբ Երզնկայի ճակատը կը բռնկեցնէ: Հայերը կը փորձեն ճակատի վրայ ժամանակ շահիլ, որպէսզի ժողովուրդը նահանջէ: Օգնութիւն սպասելն անկարելի էր: Թուրքերը դէպի Մամախաթուն կը յառաջանային: Անոնք Երզնկան կը ռմբակոծեն, որու հետեւանքով քաղաքին գլխաւոր մթերանոցը կը պայթի: Հայերը Եփրատի կամուրջը կը պայթեցնեն քրտական թափանցումն արգելակելու համար: Նահանջը կը շարունակուի դէպի հիւսիս: Հայերը հին գգեստներու մէջ փաթթուած, իրենց մանուկները գրկած, հոս ու հոն կը վազէին: 6000 հայեր եւ զինուորներ կը նահանջէին: Թուրքերը կը մտնեն Երզնկա, ուր միայն վիրաւորներն ու ծերերը մնացած էին: Գնդապետ Մորէլ նահանջը կը գլխաւորէր, իսկ Մուրատ Փաշա ժողովուրդը կը պաշտպանէր: Նահանջի տեսարանը սրտաճմլիկ էր:

Փիլիպպոսն ու ընկերները Մուրատի խումբին մէջ թուրքերու եւ քիւրտերու դէմ կռուելով կը նահանջէին: Հայոց կարաւանը կը հասնի Չիլիկ գիւղը, սակայն հանգստանալու ժամանակ չկար: Չիլիկէն դուրս ճամբուն վրայ քիւրտերը Դերձանի լեռներէն կը կրակեն հայոց վրայ: Բուռն կռիւներ տեղի կ'ունենան եւ հայերը 25 զինուոր զոհ կու տան: Սարգիս Ճեպեճեան իր ընկերներով զօրաւոր յարձակում մը կը գործէ քիւրտերուն վրայ եւ զանոնք

կը ցրէ: Սակայն կարաւանի յառաջամասի նահանջող հայ բազմութիւնը մեծապէս կը տուժէ քիւրտերու յարձակումներէն: Հայոց զոհերուն ընդհանուր թիւը 500-ի կը հասնի: Բազմաթիւ գիւղերէ անցնելէ եւ քիւրտերուն հետ ընդհարումներ ունենալէ յետոյ, նահանջող հայերը վերջապէս կը հասնին Կարին, ուր ուրիշ քաղաքներէ եւ գիւղերէ փախած հազարաւոր հայեր հաւաքուած էին: Զօրավար Անդրանիկ Կարնոյ մէջի հայկական ոյժերուն հրամանատարն էր, սակայն ան տակաւին Ալեքսանդրապոլ կը գտնուէր: Փիլիպպոս իր ընկերներուն հետ միասին գնդապետ Թորգոմի հետ կը տեսակցի: Վերջապէս Անդրանիկ իր ոյժերով Կարին կը հասնի՝ ժողովուրդին մէջ խանդավառութիւն ստեղծելով: Սակայն, շատ չանցած, մթնոլորտը կը մթազնի եւ դասալիք պատասխանատուներ յուսալքութիւն կը սփռեն ժողովուրդին մէջ: Անոնք կը սկսին Անդրանիկը քննադատել: Զինուորներէն շատեր չեն ուզեր կռուիլ: Թրքական յարձակումը չ'ուշանար եւ հայոց նահանջը կը սկսի: Թուրք թշնամին նահանջող հայերը կը հալածէ: Հայ գաղթականները Սարիղամիշէն եւ Կարսէն Ալեքսանդրապոլ կը հասնին: Երբ անոնք Կարսի մէջ էին, Չխենկելին (Անդրկովկասեան Կոմիսարիատի վրացի նախագահը - խմբ.) Զօրավար Նազարբէկեանի կը հրամայէ Կարսը թուրքերուն յանձնել եւ նահանջել: Փիլիպպոս իր ընկերներով եւ խումբով կը մեկնի Թիֆլիս, ուր կը հանդիպի Մուրատին ու Սեպուհին (բուն անունով Արշակ Ներսէսեան - խմբ.), որոնք անձանաչելի դարձած էին:

Գերմանացիք ուսներէն հայ կամաւորները կը պահանջեն: Գերմանացիք կ'ըսէին, թէ հայերը շատ վայրագ վերաբերմունք ունեցած էին թուրքերուն հանդէպ:

Փիլիպպոս իր խումբով Ռուսաստանի Վլատիկակազ քաղաքը կ'անցնի: Այս միջոցին, թուրքերը Պաքու կը

մտնեն եւ տեղի հայերը կը ջարդեն: Պաքուի կռիւներուն՝ Մուրատն ալ կը զոհուի:

Փիլիպպոս կը մտադրէ Ամերիկա մեկնիլ: Ան իր ընկերներով կ'անցնի Ռուսիոյ Սամարա քաղաքը, ուր կը մնան 15 օր: Ապա Փիլիպպոս եւ ընկերները՝ 36 հայ կամաւորներ Պուրկիսլաւ, Տաւուլիա, Ուֆա, Չէլեապինսք, Օմսք, Նովիյ Նիքոլայեւսք, Թոմսք, Չիմա, Քրասնոեարսք, Փոլովիա բնակավայրերէն անցնելէ յետոյ Սիպերիոյ Իրքուլսք քաղաքը կը հասնին վերջապէս: Ռուսերը լաւապէս կը հիւրասիրեն այս կամաւորները: Իրքուլսքի մէջ անոնք կը հանդիպին հայ գաղթականներու, որոնց տասներկու տարի առաջ ցարը Սիպերիա աքսորած էր Հայաստանի հայոց համար զէնքեր փոխադրելու յանցանքով: Կամաւորներու խումբը զանազան քաղաքներէ անցնելով, դէպի արեւելք կ'ընթանայ եւ Վլատիվոսթոք կը հասնի 13 Յունուար 1919-ին: Կրկին ճամբայ ելլելով, անոնք երեք օրէն Ճափոնի Եոքոհամա քաղաքը կը հասնին 17 Յունուար 1919-ին: Հայ կամաւորները Եոքոհամայի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Տիկ. Տիանա Աբգարեանին կ'այցելեն: Վերջինս զանոնք կը հիւրասիրէ ու կը պատուէ: Ութը օր Ճափոնի մէջ մնալէ յետոյ, անոնք կ'անցնին Չինաստանի Շանհայ քաղաքը, ապա՝ Սինկափուր, Քոլոմպօ (Սրի Լանքա) եւ 6 Մարտ 1919-ին Փոր Սայիտ եգիպտական նաւահանգիստը կը հասնին: Անգլիական ոյժերը հայ կամաւորներուն ապաստանարան եւ գործ կը հայթայթեն: Փիլիպպոս անգլիական բանակին պատկանող փուլի մը մէջ երեք ամիս կ'աշխատի:

Փիլիպպոսի եւ անոր կամաւոր ընկերներուն բնակած գաղթակայանին մէջ Սուէտիայէն, Մարաշէն, Քիլիսէն, Այնթապէն, Չորք Մարզպանէն եւ ուրիշ կիլիկեան քաղաքներէ եւ գիւղերէ բռնազաղթեցուած շատ հայեր

կային: Անոնք անգլիական հրամանատարութեան կ'աղաչէին իրենց քաղաքներն ու գիւղերը վերադառնալ, որովհետեւ Ա. Աշխարհամարտը վերջ գտած էր: Անգլիացիք «Տակաւին կանուխ է» կը պատասխանէին...

Փիլիպպոս ութը օր Գահիրէ կ'այցելէ՝ իր ազգականներուն: Տարածայնութիւններ կը շրջին Փոր Սայիտի գաղթակայանին մէջ, թէ հայերը մօտ ատենէն իրենց բնակավայրերը պիտի վերադառնան: Փիլիպպոս քանի մը ընկերներով կ'անցնի Պէյրուս, ապա՝ Ատանա: Շատ չանցած, Կիլիկիոյ մեծ մասը կրկին թուրքերուն ձեռքը կ'անցնի: Ատանայի հայոց վիճակը կը վատթարանայ: Հաճընը կենաց-մահու հերոսամարտ կը մղէ: Հայերը երկրորդ անգամ կը բռնագաղթեցուն Կիլիկիայէն: Փիլիպպոս կը մեկնի Աղեքսանտրէթ, ուր կը ծանօթանայ Ազգանոյշ Քէշիշեանի հետ եւ անոր ձեռքը կը խնդրէ, բայց աղջկան հօրեղբայրը կը մերժէ: Փիլիպպոս իր գործընկերոջ՝ Մարտիրոսին հետ կ'երթայ Պաղեստին, ուր երկուքով կը փորձեն գործ մը սկսիլ, սակայն չեն յաջողիր, ուստի կը վերադառնան:

Բարեկամներ կը յաջողին համոզել Ազգանոյշ Քէշիշեանի հօրեղբայրը՝ համաձայնելու Փիլիպպոսի եւ Ազգանոյշի ամուսնութեան: Ս. Պսակէն ետք, նորակազմ ընտանիքը Աղեքսանտրէթէն Գըրըք Խան կը փոխադրուի: Ամուր կ'ունենայ երեք զաւակ՝ Սրբուհին, Ժիրայրն ու Ենովքը: Ընտանիքը երբ Պէյրուս կը տեղափոխուի, Նորայր անունով չորրորդ զաւակով մը կը բախտաւորուին:

Փիլիպպոսի որդին՝ Տօթթ. Ժիրայր Պալիքեանը գիրքին յառաջաբանին մէջ կ'ըսէ. «Յաւերժական լոյսը՝ Փիլիպպոս Պալիքեան, որուն թուրքերը փորձեցին հանգցնել, կը շարունակէ փայլիլ, եւ անոր ժառանգութիւնը յաւիտեան կ'ապրի»:


Սերոբ Շերպեթեան, «Պատմութիւն Սուէտահայերու», խմբագիր՝ Եսայի Հաւաթեան, հրատարակութիւն Մուսա Լեւան Հերոսամարտի 95-ամեակի եւ Այնճարի 70-ամեակի Յորելինական Մարմինի, Համագգայինի «Վահէ Սէթեան» տպարան, Այնճար-Լիբանան, 2010, միջակ չափի 270 էջ

Իր յուշագրութեան սկիզբը հեղինակը՝ Սերոբ Շերպեթեան Սուէտիոյ գիւղերը եւ սուէտահայութեան մասին պատմական եւ աշխարհագրական տեղեկութիւններ կը փոխանցէ ընթերցողին:

Մուսա Լեւան ունէր վեց հայկական գիւղ՝ Եողուն Օլուք, Հաճի Հապիպլի, Քեպուսիէ, Պիթիաս, Խըտըրպէկ եւ Վազըֆ:

Մուսա Լեւան եկած յեղափոխական առաջին գործիչը հնչակեան Աղասին (Կարապետ թուրսարգիսեան) է, որ Սուէտիա եկած է 1894-ին: Հնչակեանները Աղեքսանտրէթը ազատագրական պայքարին համար կարեւոր կեդրոն նկատած են: Հոնկէ անցած են Մուրատը, Ժիրայրը, Զաքարեանը, Մարօն եւ Աղասին, իւրաքանչիւրն իր ետին ձգելով կազմակերպչական աշխատանքներ (Սուէտիոյ մէջ հնչակեաններու գործունէութեան մանրամասնութիւնները տես էջ 35-46):

1907-ին Եողուն Օլուք գիւղին մէջ խումբ մը երիտասարդներ կը կազմեն դաշնակցական առաջին խումբը՝ «Փոթորիկ» անունով: Տարի մը ետք օսմանեան սահմանադրութեան հռչակումը կը խանդավառէ ժողովուրդը: Դաշնակցութիւնը



գաղտնի կը գործէր: Շատ չանցած, կը կազմուին «Շանթ» եւ «Գայլ Վահան» խումբերը Եողուն Օլուք եւ Խըտըրպէկ գիւղերուն մէջ:

1909-ի Կիլիկիոյ արհաւիրքի ատեն Հ. Յ. Դ.ի երկու անդամներ՝ Լաթաքիայէն Միմոն Պիտանեանն ու Հալէպէն Խաչեր Համմուտեանը գէնք փոխադրած միջոցին կը բռնուին եւ կը մորթուին: Անտիոքի թուրքերը տեղւոյն հայերը կոտորելէ յետոյ, մեծ ամբոխ մը կազմելով, Սուէտիոյ կը մօտենան: Հայերը գիւղերուն շրջակայքը իսկոյն խրամատներ կը փորեն ինքնապաշտպանութեան համար: Անոնք պատգամաւորներ կը դրկեն կառավարութեան, զգուշացնելով թուրքերը, թէ որեւէ յարձակման պարագային հայերը շրջանին բոլոր թուրքերը պիտի վերացնեն:

Սուէտիոյ գիւղերուն հայ երիտասարդները իրենց սահմանափակ զէնքերով քաջարի կեցուածք մը կ'ունենան թուրքերուն հանդէպ եւ Սուէտիան կը փրկուի:

Վրայ կը հասնի 1915-ի Մեծ Եղեռնը: Մինչ Հայաստանի ու Կիլիկիոյ քաղաքներու եւ գիւղերու հայութիւնը կը բռնագաղթեցուի, Սուէտիոյ գիւղերը դէմ կը կենան բռնագաղթին եւ կը նախընտրեն ինքնապաշտպանական պայքարով մնալ իրենց հողին վրայ: Այս ուղղութեամբ Հ. Յ. Դաշնակցութիւնը մեծ աշխատանք տարած էր՝ 1907-էն ի վեր ժողովուրդին հոգեբանութիւնը յեղափոխութեան եւ պայքարի պատրաստած էր: Հարուստներուն եւ կղերականներուն մէջ մեծ ձգտում կար բռնագաղթի հրամանին հնազանդելու: Այդուհանդերձ, լեռ ելլելու եւ կռուելու ծրագիր կը մշակուի եւ վճռական որոշում կը կայացուի: Նկատի ունենալով ծովէն գալիք օգնութեան նախատեսութիւնը, հայերը կ'որոշեն Տամլաճրգի մէջ տեղաւորուիլ: 26 Յուլիս 1915-ին Քեսապ աւանն ու շրջակայքի գիւղերը բռնագաղթի հրաման կը ստանան:

Ասոր վրայ, մուսալեռցիներուն մէջ լեռ բարձրանալու եւ կռուելու գաղափարը աւելի կ'ամրապնդուի: 30 Յուլիսին Անտիոքի գայմազամէն բռնագաղթի հրամանը կու գայ Մուսա Լեռ: Երբ հայութեան եօթը օր պայմանաժամ կը տրուէր գաղթելու համար:

Այս միջոցին ընդհանրապէս Եողուն Օլուքի, Խըտըրպէկի, Վազըֆի եւ երկու էյզըրներուն (բնագիրին մէջ այսպէս է - պէտք է ըլլայ՝ Ազգուր՝ Վերի եւ Վարի Ազգուրներ - խմբ.) ժողովուրդը լեռ կը բարձրանայ ու Գոգճրղազ, Տամլաճրգ եւ Գրզըլճա վայրերուն մէջ կը հաստատուի: Անմիջապէս կը կազմուի կռուողներուն ցանկը եւ տասներկու հոգինոց խումբեր մէջտեղ կու գան:

Պիթիասէն, Հաճի Հապիպլիէն եւ Քեպուսիէն շատ քիչ ընտանիքներ լեռ բարձրացած էին, որովհետեւ թուրք զինուորներն այդ գիւղերուն մէջ տեղաւորուած էին:

Քեսապէն 140, իսկ Հալէպէն՝ «կրա» հրացաններ բերուած էին: Սահմանափակ քանակով փամփուշտ ալ ապահովուած էր: Եողուն Օլուքի եւ Խըտըրպէկի հայերը մասնագէտ էին վառօդ պատրաստելու մէջ:

7 Օգոստոս 1915-ին ընդհանուր ժողով մը կը գումարուի Թաթար Ալանկ կոչուած վայրին մէջ: Ժողովի ընթացքին երկու հարիւր թուրք զինուորներ Եօլ Աղըզի կողմէն լեռը կ'արշաւեն: Երկուստէք հրացանաձգութիւն կը սկսի: Հայերը թոյլ չեն տար, որ թուրք զինուորները յառաջանան: Չորսհինգ ժամ տեւած այս կռիւը երեկոյեան վերջ կը գտնէ թուրքերու պարտութեամբ: Թշնամին քանի մը մեռեալ կ'ունենայ, իսկ հայերը՝ ոչ մէկ: Լերան ժողովուրդը կը խանդավառուի այս յաղթանակով:

Երկրորդ ճակատամարտը տեղի կ'ունենայ 10 Օգոստոսին: Թշնամին գործի կը դնէ Հաճի Հապիպլի գիւղին մօտերը գետեղուած թնդանօթները: Հակառակ տեղացող անձրեւին,

հայերը մեծ դժուարութեամբ, սակայն քաջաբար կը դիմադրեն մինչեւ իրիկուն: Մուլթն իջնելուն՝ թուրքերը կը թաքնուին: «Սուէտիոյ Առիւծը»՝ Ըլլօն (բնագիրին մէջ այսպէս է - պէտք է ըլլայ՝ Ըլլօն - Յ. Ի.), բուն անունով Յակոբ Գարակէօզեանը (դաշնակցական), որ տարիներով թուրքերը ահ ու դողի մէջ ձգած էր, ինքնապաշտպանութեան կռիւներուն առաջին նահատակը կը դառնայ:

Իմբակոծումին պատճառով, Գրգըլճայի եւ Գոգճըղազի ժողովուրդն ու կռուողները Տամլաճըզ կը փոխադրուին: Մէկտեղուելու ուրիշ պատճառ մըն ալ թուրքերու՝ հայոց անջատ հաւաքատեղիները հարուածելով ծունկի բերելը դժուարացնելն էր: Տամլաճըզի մէջ հայոց ինքնապաշտպանութեան դիրքերը լաւապէս կը կազմակերպուին: Վերջին կռիւին, բացի Յակոբ Գարակէօզեանէն, կը նահատակուին նաեւ Պօղոս Անտէքեանը, Աբրահամ Սելուկեանը (Սէքլեմեան) եւ քեսապցի Յակոբ Հաւաթեանը: Թուրք թշնամիին կորուստը հարիւրէ աւելի էր:

Լաւ կազմակերպուելէ յետոյ, լերան պատասխանատուները դուրսի աշխարհին հետ կապի մէջ մտնելու ծրագիր կը յղանան: Կարմիրով ներկուած խաչի նշանով կտակէ խոշոր սաւան մը կը պարզուի Տամլաճըզի մէջ՝ ծովուն դիմացը: Օտար լեզուով նամակներ կը գրուին ու կը տրուին քանի մը լաւ լուղորդներու՝ ծովէն անցնող դաշնակից ռազմանաւի մը յանձնելու համար:

Թէեւ ուտելիքի եւ միսի հաւասար բաշխում տեղի կ'ունենար, սակայն ժողովուրդը մտահոգ էր. եթէ պաշարումը երկարէր՝ լերան գագաթը սովէն պիտի մեռնէին:

Երկրորդ ճակատամարտէն տասներկու օր ետք կը սկսի երրորդը, որ շատ բուռն կ'ըլլայ: Այս կռիւներուն ընթացքին երկու հայ եղբայրներ մատնութիւն եւ դաւաճանութիւն ընելով, թուրքերուն կ'օգնեն: Անոնք իրենց արդար պատիժը

կը գտնեն մահուամբ: Թուրքերը որոշ յառաջխաղացում կ'արձանագրեն Տամլաճըզի ուղղութեամբ, սակայն հայ քաջերը ետ կը մղեն զանոնք: Ըստ հաւաստի աղբիւրներու՝ թշնամին ութը հարիւրէ աւելի մեռեալ ունեցած էր, իսկ հայերէն նահատակուած էին հետեւեալ քաջերը՝ Ճապրա Խայոյեան, Յովհաննէս Գոճանեան, Սամուէլ Պոյաճեան, Սամուէլ Մարգարեան, Պաղտասար Մարտիկեան (Պեչուեան), Սարգիս Շաննագեան, Գրիգոր Գպուրեան, Պետրոս Փենենեան, Պօղոս Անտէքեան, Աբրահամ Սելուկեան եւ Յակոբ Հաւաթեան (քեսապցի): Կային նաեւ վիրաւորներ:

Այս պարտութենէն ետք, թուրքերը թէեւ մինչեւ չորրորդ ճակատամարտը չեն յարձակիր, սակայն պաշարման օղակը կը սեղմեն, որպէսզի հայերը սովամահ ըլլան կամ յանձնուին: Այդ նեղ պահուն, հայ սուրհանդակներ Սուէտիոյ յոյներէն լուր կը բերեն, թէ երկու հազարէ աւելի արաբներու ամբոխ մը թուրք զինուորներուն միանալու եւ հայոց վրայ յարձակելու կը պատրաստուի: Հայերն իրենց դիրքերուն հանդիպակաց կողմի անտառներուն ծառերը կը կտրեն, որպէսզի յստակօրէն տեսնեն իրենց վրայ յարձակողները:

4 Սեպտեմբեր 1915-ին ծովուն մէջ մարտանաւ մը կ'երեւայ: Ժողովուրդը բլուրներուն վրայ կը բարձրանայ եւ սաւաններ կը ճօճէ: Զէնքերէ կրակներ կ'արձակուին ուշադրութիւն գրաւելու համար: Բոլոր փորձերն անօգուտ կ'անցնին: Յաջորդ օրը, Կիրակի, 5 Սեպտեմբերին երբ լերան վրայ պատարագ կը մատուցուէր, բաց ծովուն վրայ մարտանաւ մը կ'երեւայ դարձեալ: Մինչ այդ՝ մեծ դրօշակ մը պարզուած էր: Քանի մը տղաք, թաշկինակները ճօճելով, ծովափ կը վազեն: Թուրք զինուորները տղոց ուղղութեամբ կրակ կը բանան: Հայ տղաքը, դիրքեր բռնելով, կը պատասխանեն թշնամիին: Մարտանաւը թուրքերուն յարձակողականը տեսած ըլլալով, անոնց դիրքերը կը ռմբակոծէ: Այս կռիւներուն Յակոբ Ապաճեանը

կը վիրաւորուի: Նաւապետը արագընթաց նաւակ մը (steamboat) ղրկելով՝ Յակոբը եւ չորս-հինգ տղաք նաւուն վրայ փոխադրել կու տայ: Խաչիկ Տումանեանը կացութիւնը կը պատմէ նաւապետին: Այդ պահուն, Փրանսերէն իմացող Պետրոս Տմլագեանը Տամլաճրգէն ծովեզերք կ'իջնէ ուրիշ քանի մը տղոց հետ:

Թուրք թշնամին այս բոլորը տեսնելով, հայոց հետ «բանակցելու» կը դիմէ: Հայերն անդրդուելի կը մնան: Թուրքերը կրկին կը յարձակին հայոց դիրքերուն վրայ: Ֆրանսացիներուն քով մեկնելու համար, հայերը կը կազմեն պատուիրակութիւն մը՝ Մովսէս Տէր Գալուստեան, Միքայէլ Կէկէճեան, Գրիգոր Թովմասեան, Ճապրա Գազանճեան եւ Պետրոս Տմլագեան: Անոնք «Կիչեն» եւ «Տեզեքս» գրահանաւերուն վրայ կը բաժնուին եւ նաւերը կը շարժին: Ֆրանսական մարտանաւերը թրքական դիրքերը կը ուժեղացնեն: Հայ պատուիրակները Ֆրանսացիներուն հետ կը բանակցին՝ Մուսա Լերան ժողովուրդը ազատելու նպատակով: Մարտանաւերուն ընդհանուր հրամանատարը՝ Տաթրիժ տիւ Ֆուրնէ կ'առաջարկէ ժողովուրդը Եգիպտոս փոխադրել: Հայերը սրտագին կը պաղատին Ֆրանսացիներուն՝ իրենց գէնք հայթայթել կռիւր շարունակելու համար: Ֆրանսացիք կը մերժեն եւ կ'ուզեն ժողովուրդը Եգիպտոս փոխադրել: Անոնք թրքական զինուորական դիրքերը անգամ մըն ալ կը ուժեղացնեն՝ ժողովուրդը ապահով կերպով նաւեր տարհանելու համար:

Ֆրանսական ծովոյժին մէջ յիշատակելի է ծովային սպայ Տիրան Թէքէեանի ընձեռած մեծ օժանդակութիւնը Մուսա Լերան ժողովուրդին: Ամբողջ ժողովուրդը նաւերը լեցուելէն յետոյ, ճամբայ կ'ելլեն դէպի Եգիպտոսի Փոր Սայիտ նաւահանգիստը: 15 Սեպտեմբեր 1915-ին Մուսա Լերան ժողովուրդը՝ 4058 հոգի, կը տեղաւորուի Փոր Սայիտի նորահաստատ վրանաքաղաքին մէջ (102-137-րդ

էջերուն մէջ հեղինակը Փոր Սայիտի հայ գաղթականութեան կեանքը կը մանրամասնէ):

1918-ի զինադադարէն ետք Մուսա Լերան ժողովուրդը կ'ուզէ իր ծննդավայրը վերադառնալ: Մուսալեռցի երիտասարդներէն շատեր հայկական Լեզնոնին միացած էին:

Այդ օրերուն Եգիպտոսի Հ. Յ. Դ. ի կառույցը շրջանային ժողով մը կը գումարէ Աղեքսանդրիոյ մէջ: Սերոբ Շերպեթճեան իբր Փոր Սայիտի վրանաքաղաքի պատգամաւոր՝ կը մասնակցի այդ ժողովին: Ազգային Պատուիրակութեան նախագահ՝ Պողոս Նուպար փաշան Փարիզէն Եգիպտոս հեռագրած էր, թէ Դաշնակիցները Թուրքիան իրենց միջեւ բաժնած են, Ֆրանսացիք Կիլիկիոյ տիրած են եւ այդ պատճառով ալ կ'ուզեն Հայկական Լեզնոնը ցրուել: Հ. Յ. Դ. ի Շրջանային ժողովը Կարպիս Աստուածատուրեանը Կիլիկիա կը ղրկէ: Հակառակ տարուած աշխատանքներուն՝ Ֆրանսացիք հայ կամաւորները զինուորական ծառայութենէն կ'արձակեն: Հայ լեզնոնականները կը ցրուին: Մուսալեռցիք դիմումներ կը կատարեն Ֆրանսացիներուն՝ բնօրրան վերադառնալու թոյլտուութիւն ստանալու համար: Դիմումները դրական պատասխան չեն ստանար եւ ժողովուրդը Մուսա Լեռ կը վերադառնայ իր սեփական ծախսով:

Վերադարձողները Սուէտիոյ գիւղերուն մէջ անմիջապէս գործի կ'անցնին. աւերակ տուները կը նորոգեն ու խոպանցած պարտէզները կը վերամշակեն: Ապրուստը ծանր էր գիւղերուն մէջ: Հայ տղաքը գէնքեր ապահոված էին, եւ շէթեական խումբեր կազմած՝ շրջակայքի թրքական գիւղերէն արջառ կը գողնային ու ժողովուրդն անով կը կերակրէին: Հայերը հետզհետէ կը վերակազմակերպեն ազգային կեանքը Մուսա Լերան մէջ:


Գիրքին մնացեալ մասին մէջ Սերոբ Շերպեթճեան մանրամասնօրէն կը նկարագրէ յետագայ դէպքերը՝ ընդգծելով 1939-ին դէպի Լիբանան գաղթը:

Արշալիր Շիրակեան, «Կտակն էր Նահատակներուն», Գ. տպագրութիւն, Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, Պէյրութ, 2010, միջակ չափի 422 էջ

«Անմիջապէս քալեցի միւս մայթը, որպէսզի լաւագոյն դիրքով մը ահաբեկումը կատարեմ, բայց քանի մը ակնթարթ ուշացած ըլլալուս, քիչ մնաց ձիերու տակ մնայի. ձեռքս վերցուցի, բռունցքըս ցցած. ձիերը խրտչեցան եւ ծառացան:

Այդ իրարանցումին մէջ, արագ ուտումով մը անցայ եւ ցատկեցի կառքին վրայ, կոխելով ոտնատեղին: Մէկ ձեռքով բռնեցի կառքին յենարանը, քիչ մը երերացի, բայց հաւասարակշռութիւնս կրցայ պահել: Մինչ թիկնապահը կառապանին կը նայէր ու բաներ մը կ'ըսէր, երեւի հասկնալու համար ձիերուն խրտչիլը, Սայիտ Հալիմ փաշային աչքերը հանդիպեցան աչքերուս: «Երէն» ըսաւ թիկնապահին: Այս եղաւ Սատրազամին վերջին բառը: Աչքերը սարսափով լեցուն էին երբ ատրճանակիս փողը ուղղեցի աջ քունքին եւ կրակեցի: Երկրորդ փամփուշտի մը հարկ չմնաց: Խռպոտ ձայն մը եւ Փաշան նստած տեղէն տապալեցաւ կառքին մէջ, գլուխը իմ կողմս, գրեթէ ոտքերուս տակ: Կառքը դեռ կ'արշաւէր»:

Արշալիր Շիրակեանի յուշագրութեան վերահրատարակութեան առթիւ, հրատարակիչները յարմար գտած են բուն նիւթէն առաջ տպել Հայոց Յեղասպանութեան ու



Արշալիր Շիրակեանին առնչուած քանի մը շահեկան նիւթեր՝ յուշագրութեան ընկալումն աւելի ամբողջական դարձնելու համար: Այդ նիւթերն են հետեւեալները:

Ա.- Յառաջաբանին՝ Ե. Մ. սկզբնատուերով հանդէս եկող հեղինակը կը վկայէ (էջ 5-20)

Արշալիր Շիրակեան ծնած է 1900-ին, Պոլիս, ուր ազգայնաշունչ կրթութիւն կը ստանայ: Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներուն, դաշնակցական մտաւորականներու եւ գործիչներու ժամադրաւայր դարձած իրենց ընտանեկան յարկին տակ, Արշալիր Շիրակեան հայաշունչ ազգայնականութեամբ կը թրծուի: Դաշնակցական պատասխանատուները այսպիսի միջավայրի մէջ ապրող պատանիին կը վստահէին ոչ միայն տան մէջ թաքնուած փախստականներուն համար լուրեր եւ տեղեկութիւններ հաւաքելու պարտականութիւնը, այլ նաեւ՝ զէնքեր փոխադրելու եւ պահելու գործերը:

Զինադադարէն ետք Շիրակեան կ'աշխատի հանրակառքի սպասարկութեան մէջ եւ կը շարունակէ տեղեկութիւններ հաւաքելու, ինչպէս նաեւ ամէն հաւանականութեանց պատրաստ ըլլալու նախատեսութեամբ զէնքերու գնման գործերը՝ վտանգաւոր պարագաներու մէջէն անցնելով: Իր քաղած տեղեկութեանց վրայ հիմնուելով, ան կը վկայէ (էջ 10). «Անատոլիցիներէն ոմանք երբեմն ուրիշ բաներ կը պատմէին, ինչ որ մեծապէս կը հետաքրքրէր զիս. ականջ կը կտրէի. մարդիկը կը պատմէին դրուագներ հայերու տարագրութենէն. թէ ինչպէս ոստիկաններն ու ժանտարմները զանոնք հաւաքած ու խումբ-խումբ քշած էին դէպի անծանօթ վայրեր, այրերը կիներէն ու երեխաներէն զատելով. եւ թէ ինչպէս իրենք ալ առիթներէն օգտուելով, տիրացած էին այդ կեալուրներու տունին»:

տեղին, ինչքերուն եւ հարստութեան: Ասոնք կը պատմէին այնպիսի հաճոյքով եւ այնքան բնական բան մը ըրածի պէս: Հայերու կոտորածի պատմութիւններ եւս պատմեցին, ամենայն բնականութեամբ, կարծես ոչխար մորթելու պարագայ մը պատմած ըլլային: Լսողները նոյն հաճոյքը կ'ունենային»:

Պատերազմի տարիներուն Արշաւիր այս տեսակ արարքներուն արձագանգները միայն լսած էր, սակայն Զինադադարէն ետք ան նոյն ինքն դերակատարներու բերնէն կը լսէր: Անոր հոգին կը խռովէր, կ'ընդվզէր, կ'ըմբոստանար եւ, բնականաբար, ան վրէժխնդրական ոգիով կը սնանէր:

Հ. Յ. Դաշնակցութեան Պատասխանատու Մարմինը կ'որոշէ ու կը ծրագրէ Հայկական Յեղասպանութեան պատասխանատուներն ու դերակատարները պատժել: Քրտանամեայ Արշաւիր Շիրակեանը կը ներկայանայ յանձն առնելու այս գործը:

Կրօնափոխ Վահէ Իհսանը պատերազմի եւ զինադադարի տարիներուն իր ցուցմունքներով ու մատնութիւններով եւ Արշաւիրենց տան քանի մը խուզարկութիւնները առաջնորդելով, աւեր գործած էր Կ. Պոլսոյ հայութեան կեանքին մէջ: Դաւաճանը պէտք է անպայմանօրէն պատժուեր: Քաղաքի Թարլապաչը պողոտային վրայ Արշաւիր Շիրակեան Վահէ Իհսանը գետին կը փռէ 27 Մարտ 1920-ին: Արշաւիրն աւելի քան մէկ ամիս փախստական ապրելէ յետոյ, կը ղրկուի Երեւան, ուր զինուորական նախարար Ռուբէն Տէր Մինասեանի թելադրութեամբ, ոստիկանապետ Լեւոն Քալանթարեանը Արշաւիրին պաշտօն մը կու տայ գաղտնի ոստիկանութեան բաժանմունքին մէջ: Աւելի ետք, Ռուբէնն իրեն կը վստահի Խալիլ եւ Էնվեր փաշաները մաքրագործելու պարտականութիւնը: Արշաւիր կ'իմանայ, թէ Վահէ Իհսանի ահաբեկման մէջ իրեն գործակից չենկիլերցի Արշաւիր

Փափագեանը բանակային հետախուզութեան մը ընթացքին մահացած էր: Սակայն ան կ'ունենայ նոր գործակից մը՝ Արամ Երկանեանը: Պաքուի ճամբուն վրայ Արշաւիրն ու Արամը կը ձերբակալուին: Բանտի, չարչարանքի, անարգանքի եւ սաստիկ չարչարանքներու ենթարկուելէ յետոյ, Արշաւիր Շիրակեան փախուստ կու տայ եւ Կ. Պոլիս կը մեկնի:

Հ. Յ. Դ. Կ. Պոլսոյ Պատասխանատու Մարմինը Եւրոպա կը ղրկէ Արշաւիրը՝ շարունակելու համար սուրբ գործը: Հոռմի մէջ ան կը յաջողի 5 Դեկտեմբեր 1921-ին զգետնել Օսմանեան Կայսրութեան մեծ վեզիր Սայիտ Հալիմ փաշան: Իբրեւ ուսանող, Արշաւիր կը ծանօթանայ գեղանի եւ հարուստ այրի կնոջ մը՝ Մարիային, որու տան մէջ ան ապաստան կը գտնէ: Արշաւիր Արամի հետ կը վերադառնայ Կ. Պոլիս եւ ներկայ կ'ըլլայ Սայիտ Հալիմի յուղարկաւորութեան: Նախապէս Արշաւիր Կ. Պոլսոյ մէջ հանդիպած էր իր կեանքի ապագայ ընկերոջ՝ Գայեանէին:

Իրեն գործակից Արամ Երկանեանի հետ, Արշաւիր Պերլինի մէջ Պէհաէտտին Շաքիրն ու Ճեմալ Ազմին շանսատակ կ'ընէ 17 Ապրիլ 1922-ին: Արշաւիր կը յաջողի խոյս տալ եւ Վիեննա հասնիլ: Ապա Կ. Պոլիս մեկնելով կը նշանուի Գայեանէին հետ:

Քեմալականներու օրէ օր յառաջխաղացումով Կ. Պոլիսն անապահով վայր մը դարձած էր այլեւս: Արշաւիր իբրեւ ահաբեկումներու հեղինակ հետապնդումներու կ'ենթակուէր: 10 Հոկտեմբեր 1922-ին, ան Սուրէն Ղազարեան ծածկանունով կը մեկնի Փարիզ, ուր կ'ընդունուի հերոսի մը արժանի պատիւներով: 1923-ի սկիզբին Արշաւիր Շիրակեան Ամերիկա կը հասնի:

Գայեանէի հետ ամուսնութենէն Սոնա անունով դուստրով կը բախտաւորուի Ա. Մ. Ն. ի մէջ: Անոնք Նիւ Եորք կ'ապրին: Արշաւիր Շիրակեան կը մահանայ 12 Ապրիլ 1973-ին:

Բ.- Կարօ Սասունին կու տայ Արշաւիր Շիրակեանի արժանի գնահատականը (էջ 21-24)

Արշաւիր Շիրակեանի մասին ի շարս այլ նկարագրականներու, Կարօ Սասունի կ'ըսէ. «Ահա՛ այդ օրերուն փորձուեցաւ այս տղան, որ պատրաստակամ էր կրակի մէջ նետուելու՝ հայոց անսահման արեան վրէժը լուծելու համար: Ու առաջին արարքին իսկ, այդ գործին իրական նկարագիրը ի յայտ բերաւ»:

Գ.- Երուանդ Փամպուքեան, «Ապրիլեան Եղեռնը», Պէյրուսթ, Դեկտեմբեր 1964, էջ 25-73

Հիմնուելով վերապրողներու եւ ականատեսներու վկայութեանց վրայ, Երուանդ Փամպուքեան այս հատուածին մէջ կը նկարագրէ Ապրիլեան Եղեռնը:

Իւրաքանչիւր հայ մարդու միտքը կը չարչրկէ հետեւեալ հարցումը. - Ինչո՞ւ եւ ինչպէ՞ս կատարուեցաւ այս եղեռնագործութիւնը:

ԺԹ. դարու երկրորդ կիսուն հալածանքները կը սաստկանան հայկական գաւառներուն մէջ: Թուրք պաշտօնեաներու ապօրինութիւնները եւ քիւրտ ու թուրք ցեղերու յարձակումները կը զօրանան: Հայերը կը խորհին, թէ իրենց վիճակին բարւոքումը կարելի պիտի ըլլար ձեռք բերել եւրոպական մեծ պետութեանց ճնշումով: Պերլինի Վեհաժողովին 61-րդ յօդուածով Թուրքիա յանձն առած էր բարեկարգումներ մտցնել հայաբնակ գաւառներուն մէջ: Սակայն թրքական կառավարութիւնը ոչ մէկ գործնական քայլ առած էր մինչեւ 1914-ը: Սուլթան Ապտիլ Համիտ Բ. սկսած էր կայսրութիւնը կառավարել որպէս բիրտ բռնակալ

մը: Հայերը, որոնց հլութիւնն ու համբերութիւնը չարաչար գործածուած էին սուլթան Ապտիլ Համիտի եւ եւրոպական պետութեանց կողմէ, արթնցան իրենց դարաւոր թմբիրէն՝ հետեւելու համար Խրիմեան Հայրիկի քարոզած «Երկաթէ Շերեփ»ի քաղաքականութեան: Մնունդ առին հայկական յեղափոխական կուսակցութիւնները, որոնք ժողովուրդը զինուած ինքնապաշտպանութեան պատրաստեցին: 19-րդ դարու վերջին սուլթան Ապտիլ Համիտի գործած բարբարոսութիւնները առիթ եղած էին, որ Հայկական Հարցն իր ամէնէն արիւնալի երեսներով պարզուի միջազգային հանրային կարծիքին առջեւ: «Իթիհատ վէ Թէրաքքը» կուսակցութիւնը լայն տարածում գտած էր Սելանիկի թրքական զօրամասերուն մէջ: 1908-ին երբ վերջիններս Կ. Պոլսոյ վրայ կը քալեն, սուլթան Ապտիլ Համիտ կ'աճապարէ սահմանադրութիւնը հռչակել: Սակայն 1909-ի Ապրիլին, սուլթանը մոլեռանդ եւ յետադիմական տարրերը գործի կը լծէ՝ իր ամբողջատիրական բռնակալութիւնը վերահաստատելու նպատակով: Իթիհատականները անգամ մը եւս ոտքի կ'ելլեն: Այս խառնակ օրերուն՝ Կիլիկիոյ եւ Հալէպի նահանգի հայութիւնը 30,000 զոհ կու տայ թրքական եաթաղանին: Ռուսիա, Մեծն Բրիտանիա եւ Ֆրանսա թիկունք կը կանգնին Պերլինի Վեհաժողովի 61-րդ յօդուածով խոստացուած բարենորոգումներուն: Գերմանիա կը յաջողի բարենորոգումներու նախաձրագրին տարողութիւնը մեծ չափով նուազեցնել: Վերջապէս, 8 Փետրուար 1914-ին կարելի կ'ըլլայ կնքել ռուս-թուրք (-գերման) համաձայնութիւն մը, որով արեւելեան եօթը նահանգներ բարենորոգումներու պիտի ենթարկուէին: Այս գործը յաջողցնելու համար կը նշանակուին եւրոպացի երկու հսկիչներ՝ նորվեկիացի Հոֆը եւ հոլանտացի Վեսթենենկը: Սակայն 1914-ի Օգոստոսի սկիզբը Եւրոպան աշխարհամարտով կը բռնկի:

Օսմանեան Կայսրութեան իշխող շրջանակները կ'երագէին Կ. Պոլսէն մինչեւ Կեդրոնական Ասիա ձգուող թուրանական կայսրութիւն մը հիմնել: Գործելու ժամը հասած էր: Երիտասարդ թուրքերուն համար, բացի Ռուսիայէն, գլխաւոր միւս արգելքը հայութիւնն էր: Այս երազն իրականացնելու նպատակէն մղուած, Իթթիհատ կուսակցութեան երկու ղեկավարներ՝ Պէհաէտտին Շաքիրն ու Նաճի պէյը 1914-ի Օգոստոսին կու գան Կարին, ուր նոր աւարտած էին Հ. Յ. Դաշնակցութեան Ը. Ընդհանուր Ժողովին աշխատանքները եւ կ'առաջարկեն հայկական կամաւորական գունդեր կազմել ու Ռուսիոյ դէմ կռուիլ, ինչպէս նաեւ Անդրկովկասի մէջ հակառուսական ըմբոստութիւն յառաջացնելու նպատակով աշխատանք տանիլ, իսկ արտասահմանի մէջ՝ թուրքիոյ կողքին միացեալ ճակատ կազմել: Դաշնակցութիւնը կը ջանայ համոզել Իթթիհատի ղեկավարները չէզոք մնալ ծագած համաշխարհային պատերազմին մէջ, իսկ եթէ անպայման պէտք է մտներ անոր մէջ, այդ պարագային հայութիւնը լրիւ կերպով պիտի կատարէր իր զինուորական եւ քաղաքացիական պարտականութիւնները՝ օսմանեան բանակին եւ հայրենիքին բերելով իր ծառայութիւնը: Սակայն Դաշնակցութիւնը չէր կրնար կովկասահայութեան անունով պատասխանատուութիւն վերցնել: Իթթիհատականները այս պատասխանէն դժգոհ՝ կը մեկնին, յայտարարելով, թէ կովկասահայութեան՝ ապստամբութեան չմիանալը ծանր հետեւանքներ կրնայ ունենալ Օսմանեան Կայսրութեան հայութեան համար: Անոնք կը հաւաստիացնեն, թէ վրացիք եւ թաթարները այս ծրագրին իրենց համաձայնութիւնը յայտնած են արդէն:

Արդարեւ, պատերազմը չյայտարարուած, թրքական բռնութիւնները կը սկսին գործադրուիլ հայոց վրայ: Հայութիւնը սաստիկ անապահով վիճակի կը մատնուի:

Զօրակոչին, հայերն ալ զօրանոցներ կը ներկայանան: 18-50 տարիքը ունեցող բոլոր այրերը, նոյնիսկ նախապէս փրկագին (պէտէլ) վճարածները, բանակ կը տարուին: Հայոցմէ գրաւումները եւ օսմանեան բանակին նպաստ հաւաքելու պատրուակով առնուած «նուէր»ները յաճախ կողոպուտի հանգամանք կը ստանան:

Հայոց դէմ գործադրուած ոճրային արարքներու հրամաններուն ամէնէն գրգռիչը արաբերէնով հրատարակուած գրքոյկ մըն էր, որ Սրբազան Պատերազմին (Ճիհատին) մանրամասնութիւնները կը թուէր. «Գիտցէք, - գրուած էր գերմանացիներու պատրաստած այս գրքոյկին մէջ, - որ անհաւատներու արիւնը, բացի դաշնակիցներէն՝ որոնց պաշտպանութիւն խոստացած ենք (ակնարկութիւնը գերմանացիներուն եւ աւստրիացիներուն է - Յ. Ի.), կրնայ անպատիժ կերպով թափուիլ: Իւրաքանչիւր մահմետական, աշխարհի որ անկիւնն ալ գտնուի, թող հանդիսաւոր երդում կատարէ՝ իր շրջապատին մէջ գտնուող նուազագոյնը երեք կամ չորս քրիստոնեայ սպաննել: Ո՛վ որ հնազանդի այս օրէնքին՝ կ'ազատի վերջին Դատաստանի ահէն եւ կ'արժանանայ յաւիտենական յարութեան»:

Ասկէ ետք կը սկսին հայոց կոտորածն ու տեղահանութիւնը, եւ ընդհանուր գիծերու մէջ այնպէս կը գործադրուէին՝ ինչպէս իր յուշերուն մէջ կը պատմէ Իթթիհատ վէ թէրաքըր կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի անդամ Մելլան գատէ Ռիֆաթը: Իսկ Գործադիր Յանձնախումբի մշակած ծրագրին (որու գլխաւոր հեղինակն էր Պէհաէտտին Շաքիրը) հիմնական մասը կ'ըսէ.

«Ո՛ր քաղաքի եւ գիւղաքաղաքներու մէջ որ հայ կայ եւ ասոնցմէ որ մէկուն առաջին անգամ բնաջնջուիլը հարկ է, այդ քաղաքները ներքին նախարարին հետ կ'որոշենք եւ իւրաքանչիւր շրջանակին պէտք եղածին չափ այս ոյժերէն

կը ղրկենք (ակնարկուծիւնը բանտերէն արձակուելիք ոճրագործներուն եւ աւագակներուն մասին է, որոնցմէ կը յուսային 10-20 հազարնոց ոյժ մը գոյացնել, Ե. Փ.). ասոնք մեր նշանակելիք յարմար վայրերը հասնելիք հայ կարաւանները կը սպասեն, ներքին նախարար Թալաթին ալ այդ քաղաքներու վարչական պաշտօնեաներուն կը հրահանգէ, որ հոն գտնուող բոլոր հայերը, պատերազմական շրջանակէն դուրս գտնուելու հարկը պատճառաբանելով, խումբ-խումբ եւ ամէն օր երկու անգամ, ոստիկան զինուորներու հսկողութեան տակ այսինչ ճամբէն այնինչ տեղ ղրկուին: Ոստիկանները այս հրամանին վրայ բոլոր հայերը հաւաքելով, հսկողութեան տակ, խումբերով, որոշուած ճամբաներէն ղրկել կը սկսին: Ճամբան ասոնց գալուն սպասող Յատուկ Կազմակերպութեան չէթէներուն կեցած վայրը հասնելուն, խումբերը մեր չէթէներուն կը յանձնեն եւ կը վերադառնան, չէթէներն ալ այս հայերը մինչեւ վերջին անհատը անմիջապէս կը սպաննեն, եւ որպէսզի հանրային առողջութիւնը չվնասուի, դիակները նախապէս պատրաստուած փոսերուն մէջ կը ձգեն ու կը թաղեն: Եւ այս կերպով յաջորդաբար բնաջնջման գործողութիւնը կը լրացնեն: Այս հայերուն քով գտնուող գոյք, դրամ, գոհարեղէնն ալ իբրեւ աւար՝ չէթէներուն կը բաժնուի»:

Հայերը կոտորելու եւ տեղահանելու ծրագիրը գործադրելու համար պատերազմը բացառիկ պատեհութիւններ կ'ընձեռէն թուրքերուն: 1915-ին սկսած ջարդերը ապտիլհամիտեան ջարդերէն բոլորովին տարբեր էին: Իթիթհատի ժողովները, հանդիպումները եւ Թալաթի շրջանային կառավարչութեանց ղրկած բազմաթիւ նամակները անվիճելի ապացոյցը կու տան հայկական կոտորածներու կանխօրօք որոշուած եւ ծրագրուած ըլլալուն, ծրագիր մը, որ սերտօրէն կապուած է համաթրքական

ու համաթուրանական վարդապետութեանց կենսագործման հետ: Ներքին գործոց նախարարութենէն Հալէպի կուսակալութեան ղրկուած հեռագիրը աւելի քան պերճախօս է այս տեսակէտով (էջ 43-44):

1915-ի Յունուարին, Կովկասեան ճակատը կը բռնկի: Թրքական կառավարութիւնը ուշադրութիւնը կը կեդրոնացնէ արեւելեան նահանգներու հոծ հայութեան, ինչպէս նաեւ Կիլիկիոյ մէջ՝ Ձէյթունի վրայ:

Երուանդ Փամպուքեան մանրամասնօրէն կը նկարագրէ դէպքերուն շարքը: Վանի, Ձէյթունի, Տարօնի, Սասունի, Մուշի եւ արեւելեան ուրիշ շրջաններու ջարդերը եւ ինքնապաշտպանութիւնները կը յիշուին: Ապա հեղինակը կը նկարագրէ 24 Ապրիլ 1915-ի գիշերը Կ. Պոլսոյ մտաւորականութեան ձերբակալութիւնն ու անոր հետեւող դէպքերը: 1915-ին բուն գաւառներու եւ քաղաքներու հայոց տեղահանութիւնը կը սկսի: Մինչեւ 1916-ի սկիզբը, Օսմանեան Կայսրութեան հայութիւնը, բացի ռուսական բանակի մտած շրջաններէն, Կ. Պոլսէն ու եւրոպական Թուրքիայէն (այս շարքէն պէտք է բացառել եւրոպական Թուրքիոյ Ռոտոսթօ, Մալկարա եւ ուրիշ աւաններու հայերը, նաեւ պէտք է յաւելել Թուրքերու տիրապետութեան տակ գտնուող արաբական երկիրներու հայութիւնը՝ բացառութեամբ հիւսիս-արեւմտեան Սուրիոյ - խմբ.), արդէն տեղահանուած կամ բոլորովին կոտորուած էր: Վասպուրական, Տարօն, Շապին Գարահիսար, Սասուն, Ուրֆա եւ Սուէտիա (Մուսա Լեռ) ինքնապաշտպանութեան դիմած էին:

Կը գտնուին թուրք կուսակալներ եւ պատասխանատուներ, որոնք կը մերժեն հայոց դէմ ոճրային արարքներ գործելու Թալաթի հրահանգը եւ պաշտօնանկ կ'ըլլան: Անոնցմէ են Հալէպի նահանգապետ Ճելալ պէյը եւ Տէր Զօրի

կառավարիչ Սուլտան պէյր:

Այսահաւորցեղասպանութիւնը յաջողութեամբ կատարելու համար, թուրքերը խաբեպատիր յայտարարութիւններով կը կարծէին քնացնել օտար հանրային կարծիքը: Սակայն 24 Մայիս 1915-ին Ֆրանսա, Մեծն Բրիտանիա եւ Ռուսիա հաւաքական ազդարարութիւն մը կը հրապարակեն՝ պահանջելով դադրեցնել կոտորածները: Թուրքիայէն ետք, հայկական կոտորածներու պատասխանատուութեան առաջին բաժինը կ'իյնայ Գերմանիոյ վրայ, որ սկիզբէն ամէն բանէ տեղեակ էր: Ըստ գերմանական փաստաթուղթերու, դեսպան Փօն Վանկենհայմ ոչ միայն չէ ուզած ճնշում բանեցնել Իթթիհատի վրայ, այլեւ՝ ջանք չէ խնայած իր կառավարութիւնը եւս համոզելու, որ գաղտնապահօրէն զօրավիզ կանգնի Իթթիհատին: Սակայն, հոս պէտք է երախտագիտութեամբ յիշել Գերման-Հայկական Ընկերութեան նախագահ դոկտոր Եոհաննէս Լեփսիուսը, որ մարդասիրական ազնիւ զգացումէ մղուած, իր ամբողջ կարելին ըրած է, այդ սեւ օրերուն, հայ ժողովուրդին տառապանքը մեղմելու եւ ճշմարտութիւնը հրապարակելու համար:

Պատերազմի սկիզբին, Ռուսիա նաեւ իր տարածքին հայութիւնը ոտքի հանած էր՝ հայոց ինքնիշխանութիւն տալու խոստումով, սակայն 1916-ին իր քաղաքականութիւնը յանկարծ փոխած էր: Զինադադարէն ետք, անգլիացիք ու ֆրանսացիք ալ իրենց փոքր դաշնակիցը՝ հայերը լքեցին՝ առանց պատժելու ոճրագործը:

Համառօտ ցանկ օգտագործուած աղբիւրներու:

- Կարապետ Գաբրիէան, «Եղեռնապատում», Պոսթըն, 1924:
- Զաւէն Արք. Եղիայեան, «Պատրիարքական Յուշերս», Գահիրէ, 1947:

- Վահան Մինախորեան, «1915 թուականը - Արհաւիրքի Օրեր», Վենետիկ-Ս.Ղազար, 1949:
- Մեւլան զատէ Ռիֆայթ, «Օսմանեան Յեղափոխութեան Մութ Ծալքերը», Պէյրութ, 1938:
- Գրիգորիս Մ. Վրդ. Պալաքեան, «Հայ Գողգոթան», Ա. եւ Բ. հատորներ, Կ. Պոլիս, 1921:
- Հայր Յակոբոս Տաշեան, «Հայ Ազգի Տարագրութիւնը Գերմանական Վաւերաթուղթերու Համեմատ», Մասն Ա., Վիեննա, 1921:
- Պլետրոս Տօնապետեան, «Զայն Տառապելոց», Փարիզ, 1922:
- Aram Andonian, Documents Officiels concernant les Massacres Armeniens, Paris, 1920. *անգլերէնը՝* The Memories of Naim Bey, London, 1920, Բ. տպ., 1964:
- Viscount James Bryce, The Treatment of the Armenians in the Ottoman Empire, London, Hodder & Stoughton, 1916. *ֆրանսերէնը՝* Le Traitement des Armeniens dans l'Empire Ottoman (1915-1916), Laval, 1917.
- R. Donikian, J. Nazarian, V. Solakian, Le Deuil National Armenien, Paris, 1964.
- Herbert Adams Gibbons, The Blackest Page of Modern History, New York, 1916. *ֆրանսերէնը՝* La Page la Plus Noire de l'Histoire Moderne - Les Derniers Massacres d'Armenie, Paris, 1917.
- Johannes Lepsius, Le Rapport Secret sur les Massacres d'Armenie, Paris, 1919.
- Johannes Lepsius, Deutschland und Armenien, 1914-1918, Sammlung Diplomatischer Aktensturcke, Potsdam, 1919.
- Henri Morgenthau, Memoires de l'Ambassadeur Morgenthau, Paris, 1919.
- Arnold Toynbee, Armenian Atrocities: The Murder of a Nation, London-New York-Toronto. *ֆրանսերէնը՝* Massacres Armeniens, Lausanne-Paris, 1916.

Դ.- Ս. Վ., «Հայկական Նիւրենպէրկը» (էջ 75-81)

Բ. Համաշխարհային Պատերազմէն ետք, նացի ջարդարարներուն համար Նիւրենպէրկի մէջ գումարուած դատական ատեանին վճիռով, նացի գլխաւոր պատասխանատուները մահապատիժի կ'ենթարկուին եւ գերման ժողովուրդին վրայ տուգանք կը դրուի, իբրեւ հատուցում հրեաներուն՝ «քաղաքակիրթ մարդկութեան» վրդոված խիղճը հանգստացնելու համար: Տարբեր կ'ըլլայ սակայն նոյն այդ «քաղաքակիրթ մարդկութեան» վերաբերմունքը հայոց հանդէպ: Օսմանեան կայսրութեան հայութեան կէսը կոտորուեցաւ ամենատմարդի միջոցներով, միւս կէսն ալ աշխարհով մէկ հողմացրիւ եղաւ, հայոց ստացուածքը յափշտակուեցաւ, գիւղեր ու քաղաքներ ամայացան: Սակայն երբ հասաւ հատուցման ժամը, «քաղաքակիրթ մարդկութիւնը» անտարբեր մնաց: Հայ ժողովուրդը ինքը, իր «Քաջ որդոց սուրբ արիւնով» կազմակերպեց Հայկական Նիւրենպէրկ՝ թուրք դահճապետներուն համար:

- 16 Մարտ 1921-ին Պերլինի մէջ Սողոմոն Թեհլիրեանի արձակած գնդակով շանսատակ ինկաւ Մեծ Եղեռնի գլխաւոր պատասխանատու Մեհմէտ Թալաթ փաշան:
- 19 Յուլիս 1921-ին Պոլսոյ մէջ Միսաք Թորլաքեանի վերիժառու գնդակով սպաննուեցաւ Պաքուի ջարդարար Պէհպուր խան Ճիւանշիրը:
- 6 Դեկտեմբեր 1921-ին Հռոմի մէջ Արշաւիր Շիրակեանի ձեռքով գործադրուեցաւ Օսմանեան կայսրութեան երբեմնի մեծ վեզիր Սայիտ Հալիմ փաշային մահապատիժը:
- 17 Ապրիլ 1922-ին Պերլինի մէջ Արշաւիր Շիրակեանի եւ Արամ Երկանեանի ձեռքով գետին փռուեցան հայոց

տեղահանութեանց եւ ջարդերու գլխաւոր կազմակերպիչներէն Պէհպուրին Շաքիրն ու Ճեմալ Ազմին:

- Երեք ամիս ետք, Թիֆլիսի մէջ, Ստեփան Մաղիկեանի եւ անոր ընկերներուն՝ Պետրոս Տէր Պողոսեանի եւ Արտաշէս Գէորգեանի ձեռքով ահաբեկուեցաւ իթիհատական եռապետութեան անդամ Ահմէտ Ճեմալ փաշան:
- Հայ երիտասարդի մը ձեռքով նոյն պատիժին արժանացաւ եռապետութեան մէջ Թալաթի ու Ճեմալի յանցակից էնվեր փաշան:

Ե.- Արշաւիր Շիրակեան, «Կտակն էր Նահատակներուն» (էջ 83-419)

1914-ին երբ Ա. Համաշխարհային Պատերազմը կը պայթի, Արշաւիր Շիրակեան պատանի էր: Անոր ծնողներուն տունը բարձրագոյն ուսում ստացած դաշնակցական մտաւորականներու եւ շարք մը գործիչներու ժամադրաւայրը դարձած էր: Անոնք էին Խոսրով Պապայեանը, Մանուկ Արսլանեանը, Տիգրան Պողոսը, Սամուէլ Մովսէսեանը, Արմենակ Շալճեանը, Լեւոն Ղարիպեանը եւ ուրիշներ: Կարճ ատենէն, կամայակամայ, անոնք Արշաւիրն ալ կ'առնեն իրենց շրջանակին մէջ եւ աշխատանքներ ալ կը յանձնեն անոր:

Զօրակոչի օրերուն, Հ. Յ. Դաշնակցութիւնը, հաւանական վտանգի մը նախատեսութեամբ, գէնք ու զինամթերք հայթայթելու եւ զանոնք ապահով վայրեր փոխադրելու եւ տեղաւորելու աշխատանք կը տանէր՝ ինքնապաշտպանութեան նպատակով:

Արշաւիր Շիրակեանի կը վստահուի գէնքերու փոխադրութիւնը եւ դուրսէն լուրեր ու տեղեկութիւններ հաւաքելու գործը: Արշաւիրենց տունն այցելող դաշնակցական գործիչ-

ներէն շատերը զօրակոչին չէին պատասխանած: Փրկագին վճարողներն ալ ատեն մը ետք կրկին կանչուած էին: Պոլսահայութիւնը սարսափի մթնոլորտի մէջ կ'ապրէր:

Կ. Պոլսոյ հայ մտաւորականութեան ձեռքակալութենէն ետք, արեւմտահայութեան խմբական տարագրութեան եւ կոտորածներու սարսափելի լուրերը Կ. Պոլիս կը հասնին: Արշաւիր Շիրակեանը փախստական ընկերներու փոխադրութեան եւ տեղաւորման գործով զբաղող կամաւոր մըն էր: Կառավարութիւնը պոլսաբնակ ամուրի հայ գաւառացիներուն դէմ հետապնդման սաստիկ արշաւ մը սկսեց էր: Պոլսահայութիւնն ընդհանրապէս, Արշաւիր Շիրակեանը մասնաւորապէս, միշտ օգտակար եղած է հայ փախստականներուն:

Պատանի Արշաւիրի ազգային եւ կուսակցական գործունէութիւնը Կ. Պոլսոյ մէջ կ'անցնի շատ վտանգաւոր փուլերէ, սակայն շնորհիւ իր ճարպիկութեան եւ վճռակամութեան, ան միշտ կը յաջողի անվնաս դուրս գալ: Արշաւիր հայ ազգին մեծ ծառայութիւններ կը մատուցէ տակաւին իր պատանի հասակին մէջ: Այս գործունէութիւնն ունի բազմաթիւ վտանգաւոր, բայց հետաքրքրական դրուագներ, սակայն հոս պիտի չմանրամասնենք զանոնք:

Այսպէս կ'անցնին տարիները մինչեւ 1918-ի գինադադարը: Հայ ազգի կորուստներն անչափելի էին: Արեւելեան վեց նահանգներու հայ բնակչութիւնը բնաջնջուած էր թուրք բարբարոս կառավարութեան եւ խուժանին ձեռքով: Միջին Անատոլի, Կիլիկիոյ եւ Արեւմտեան Հայաստանի նահանգներու հայութեան տասը կամ քսան առ հարիւրը ազատած էր անապատներէն, այն ալ՝ գոյութիւնը քարշ տալով թշուառագոյն վիճակի մէջ: Հայոց մեծագոյն միտիթարութիւններէն մէկն էր ջարդարար թուրքերու

գերութիւնը: Համաձայնական յաղթական բանակները Կ. Պոլսոյ եւ Անատոլիի գանազան շրջաններուն մէջ էին: Հայութիւնը կը հաւատար, թէ թուրքն այլեւս չղթայի զարնուած է եւ չի կրնար վնասակար կամ վտանգաւոր դառնալ հայուն համար: Միւս կողմէ, Ազատ ու Անկախ Հայաստանը հիմնուած էր: Հայութեան սիրտը անհուն յոյսերով եւ փայլուն ապագայի հեռապատկերով լեցուած էր:

Կ. Պոլսոյ հայ ազգային կեանքը արագօրէն կը վերակազմուի: Մուսուլի աքսորէն կը վերադառնայ տարագիր պատրիարք Տ. Զաւէն Արք. Տէր Եղիայեանը, կը հիմնուի Հայկական Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, երգչախումբեր եւ նուագախումբեր կը կազմուին Կոմիտաս Վարդապետի աշակերտներուն կողմէ, կը հիմնուի Հայ Տրամաթիկ Թատերախումբը, որուն մաս կը կազմէ Արշաւիր Շիրակեանը: Թուրքերը ընկճուած վիճակ մը ունէին՝ համաձայնական գինուորներու եւ սպաներու ամէն տեսակ անարգանքին ենթակայ: Սակայն 1919-ի ամրան լուրեր կը հասնին Կ. Պոլիս, թէ Անատոլիի մէջ թուրքերն սկսած են գլուխ բարձրացնել: Ծայր տուած էր Միլլի կոչուած շարժումը:

Ահաբեկումներու Պատասխանատու Մարմինը կը կազմուի «Ճակատամարտ»ի շէնքին մէջ: Իրարու ետեւէ կը պատուհասուին հայանուն մատնիչ-լրտեսները:

Արշաւիր Շիրակեան հոս քանի մը դրուագներ կը պատմէ մատնիչ-լրտեսներու մասին, մանաւանդ Վահէ Իհսանի, որ աւելի ետքը, իր պատիժը կը ստանայ:

Երէկուան հալածուած, չարչարանքի ենթարկուած քրիստոնեան, մանաւանդ հայը, ազատութեան գինովութիւնը կ'ապրէր: Թուրքը ստրկացուած տարր մը դարձած էր: Իթիթհատի տխրահռչակ եւ գազանատիպ դեկավարները

փախուստ տուած էին: Անոնցմէ խումբ մը բրիտանացիք ձերբակալած եւ Մալթա դրկած էին: Սակայն Անատոլուի քեմալական շարժումը օրէ օր կը մեծնար: Կ. Պոլսոյ ստրուկ թուրքերը գաղտնօրէն կ'օժանդակէին անոր՝ զէնք, պարէն եւ դրամ հասցնելով: Օրուան սուլթանին կառավարութիւնը թէեւ անուանական էր, սակայն ճիգ կը թափէր խեղդելու քեմալական շարժումը, անոր դէմ դրկելով Ազնաւուր փաշայի եւ Չէրքէզ Էտհէմի հրամանատարութեամբ թրքական ոյժեր, որոնք շուտով պարտութեան կը մատնուին:

Այս միջոցին Արշաւիր Շիրակեան զէնքերու փոխադրութեան գործին վրայ էր տակաւին: Այս աշխատանքին մէջ Արշաւիր իր ընկերոջ՝ չենկիլբերցի Արշաւիրի հետ արկածախնդրական պահեր կ'անցընէ: Դաւաճան Վահէ Իհսան տակաւին իր սեւ գործերը կը շարունակէր, թէեւ Դաշնակցութենէն կը սոսկար: Ան Հիտայէթ անունով իսլամացած հայանուն կաթոլիկ կրօնաւորի մը մեղսակցութեամբ դաւաճանութիւն կ'ընէր: Արշաւիր Շիրակեան երկար ատեն Վահէ Իհսանը հետապնդելէ յետոյ, «կը բարեկամանայ» անոր հետ: Երկու քաջ երիտասարդները կ'որոշեն Վահէ Իհսանին հաշիւը մաքրել: Այդպէս ալ կ'ընեն. Արշաւիր Շիրակեան իր ընկերներուն օգնութեամբ կը մաքրագործէ Վահէ Իհսանը: Գործողութիւնը յաջողութեամբ կ'աւարտի, սակայն ականատեսներէն Վահէ Իհսանի թիկնապահ թուրք ոստիկանը Արշաւիր Շիրակեանը ճանչցած էր: Ձերբակալութեան հրամանագիր մը կ'արձակուի Արշաւիրի դէմ: Այս պատճառով, ան Սեւաստոփոլ կը մեկնի: Հոնկէ կ'անցնի Քերչ, ուրկէ նաևով արկածալից ճամբորդութենէ մը ետք կը հասնի Պաթում: Հոս ան կը հանդիպի Տիգրան Խոյեանին եւ անոր հետ միասին Հայաստան կ'ուղղուի: 1920-ի Յունիսին անոնք կը հասնին Երեւան, որ վերականգնումի տենդոս կեանքով կ'ապրէր: Արշաւիր կը ներկայանայ գինուորական

նախարար Ռուբէն Տէր Մինասեանին: Նախարարին յանձնարարութեամբ, Արշաւիր Շիրակեան ոստիկանապետ Լեւոն Քալանթարեանէն պաշտօն կը ստանայ գաղտնի ոստիկանութեան բաժինին մէջ ու Հայաստանի զանազան շրջաններուն մէջ բեղուն գործունէութիւն կը տանի: Ան կարեւոր գործով դէպի Պաքու կ'ուղեւորուի: Հայաստանի վրայ հաւանական յարձակումի մը վախը կար Խալիլ եւ Էնվեր փաշաներու ղեկավարութեամբ: Ռուբէն Տէր Մինասեանի թելադրութեամբ, Արամ Երկանեան կ'ընկերանայ Արշաւիրին: Արամին ծածկանունը Ալի Շեւքէթ էր, իսկ Արշաւիրինը՝ Իսմայիլ Էշրէֆ: Անոնք հայաստանեան դիւանագիտական անցագիրներ ալ ունէին, Արամը՝ Գրիգոր Մուրատեան, իսկ Արշաւիրը՝ Ահարոն Աւետիսեան անունով: Վերջին երկու անցագիրները կը գործածուին մինչեւ անոնց Թիֆլիս հասնիլը, ուր ազդպէյճանական անցագիրներ պիտի վերցնէին: Թիֆլիսի մէջ անոնք կը ձերբակալուին ու հարցաքննութեան կ'ենթարկուին: Երկու տղաքը ամէն ինչ կ'ուրանան՝ Պաքուի հայութիւնը չփտանգելու համար: Վրացի ոստիկանապետը զանոնք կը նետէ Մետեխի տխրահռչակ բանտը, որու զնտանին մէջ տանջալից օրեր կ'անցընեն: Տասը օր ետք ոստիկանները երկու տղաքը զնտանէն հանելով գնդակահարելու կը տանին: Արշաւիրի միտքը գաղափար մը կը լուսաւորէ: Բանտի բակին մէջ ան յանկարծ կը սկսի պոռչտալ՝ ոտքի հանելով բոլոր բանտարկեալները, որոնք կատարուելիք ոճիրին դէմ կը սկսին բողոքել: Բանտապետը տեղի կու տայ այս բողոքներուն առջեւ եւ, ակամայ, զանոնք կրկին զնտան կը տանին: Վրացի բանտապահները երկու հերոսները սաստիկ շարշարանքի կ'ենթարկեն:

Արշաւիր Շիրակեան կ'որոշէ բանտէն փախչիլ: Նոյն գիշեր, վրացի պաշտօնեայ մը իրենց կը հաղորդէ, թէ

յաջորդ օրը Քուլթայիսի պիտի փոխադրուին: Ճամբուն վրայ Արամին ընկերները իրենց կը մօտենան եւ փախուստի պատրաստութիւններ կը տեսնեն: Փախուստը կը յաջողի, եւ Արշաւիրն ու Արամը իրենց յեղափոխական ընկերներուն կը միանան: Վրացիները սաստիկ հայատեացութեամբ եւ անողոքաբար վերաբերած էին անոնց հանդէպ:

Արշաւիրի եւ Արամի համար Պաքու երթալն աւելորդ էր այլեւս: Հարցերը փոխուած էին: Անոնք Պաթում կ'անցնին եւ շոգենաւ մտնելով դէպի Կ. Պոլիս կը մեկնին: Շոգենաւին մէջ կը գտնուէին պոլշեւիկեան արհաւիրքներէն փախուստ տալով ապահով վայրեր որոնողներ: Կ. Պոլսոյ մէջ, սակայն, Արշաւիր Շիրակեանի դէմ մահապատիժ վճռուած էր: Արշաւիրն ու Արամը Հ. Յ. Դ.ի պաշտօնաթերթ «Ազատամարտ»ի շէնքը կ'ողողուին: Արշաւիրի քեռայրը՝ Մանուկ Արսլանեանը, լսելով անոնց ժամանումը, կու գայ ողջագուրուելու: Արշաւիր կը հանդիպի իր համակրած Գայեանէին ու կը սկսի անոր ընտանիքին տունը յաճախել:

Հ. Յ. Դ. Կ. Պոլսոյ Կ. Կ.ի գործավար Հրաչ Փափագեանը Արշաւիրի մօտ գալով՝ անոր կը յայտնէ ազգային սուրբ գործին յաջորդ հանգրուանը: Գրիգոր Մերձանօֆ Հոռոմ մեկնած էր: Արշաւիր նոր անցագիրով մը իբր Արսիլ Սիրաք անունով էտիրնեցի յոյն՝ Հոռոմ պէտք է մեկնէր:

Արշաւիր Շիրակեան 30 Յունիս 1921-ին կը հասնի Մարսէյ, ուր պէտք եղած կարգադրութիւնները կ'ընէ, Մերձանօֆին նամակ մը կը ղրկէ ու շոգեկառքով Հոռոմ կը մեկնի:

Իտալիոյ մայրաքաղաքին մէջ Արշաւիր Գրիգոր Մերձանօֆի գործակցութեամբ հետապնդումներ կը կատարէ: Այս գործը դիւրին չէր: Արշաւիրի եւ Գրիգորի ուրիշ գործակից մըն ալ կար՝ Վարդանեանը: Այս հետապնդումներուն շնորհիւ՝ հայ տղաքը կը յայտնաբերեն Սայիտ Հալիմ փաշան եւ

անոր թիկնապահներէն Թեւֆիք Ազմին: Անոնք մօտէն կը քննեն հաւանական զարգացումները եւ կը բազմապատկեն հետապնդումները: Հայ տղոց հետապնդումներուն շնորհիւ, թուրք ջարդարար ուրիշ պատասխանատուներ ալ երեւան հանուած էին, սակայն զանոնք ալ ահաբեկելու բաւարար ոյժեր չկային: Վրիժառու Արշաւիր Շիրակեանը 5 Դեկտեմբեր 1921-ին վերջապէս կ'ահաբեկէ հայոց ջարդարարներէն Սայիտ Հալիմ փաշան (էջ 232-259):

Ահաբեկումէն ետք, Արշաւիր տանտիրուհիին՝ Մարիայի հետ կը մեկնի Վենետիկ, ուր Արամ Երկանեանը զինք կը սպասէր: Մարիա երկու օր ետք կը վերադառնայ Հոռոմ: Արշաւիրն ու Արամը Վենետիկի տեսարժան վայրերը կը պտըտին եւ Ս. Ղազար վանքը կ'այցելեն, ապա Վիեննա կ'անցնին:

Արշաւիրը 1922-ի Յունուարին Սլիվենկրատ (Պուլկարիա) կը հասնի: Պէտք էր Յունաստանէն անցնիլ եւ Կ. Պոլիս հասնիլ: Արշաւիր էտիրնեցի յոյն Արսիլ Սիրաքի անունով անցագիր կը կրէր, իսկ այդ օրերուն Յունաստանը 18 տարեկանէն վեր բոլոր յոյն երիտասարդները բանակ կը տանէր քեմալականներուն դէմ պատերազմելու համար: Արշաւիր հնարք մը կը մտածէ: Պուլկար-յունական սահմանին վրայ ան յոյն պաշտօնեային կ'ըսէ, թէ ինք անցագիրը կորսընցուցած հայ մըն է: Պաշտօնեան իրեն արտօնագիր մը կու տայ եւ Արշաւիր ատորմով Յունաստան կը մտնէ: Ապա ան Պուլկարիոյ Պուրկազ նաւահանգիստը կը մեկնի եւ հոնկէ Կ. Պոլիս կը վերադառնայ երկար բացակայութենէ մը ետք:

Արշաւիր Կ. Պոլսոյ մէջ վերստին Գայեանէին կը հանդիպի: Անշուշտ, «Ազատամարտ» այցելութիւններն ալ յաճախակի կ'ըլլան: Դաշնակցական պատասխանատու Ամատունին Արշաւիրի կը յայտնէ, թէ գործունէութեան յաջորդ վայրը Պերլինն է: Վահան Նաւասարդեանն ալ այս գործի

ղեկավարութեան մէջ դեր ունէր: Պերլին պիտի գտնուէին վեց երիտասարդներ, այդ թիւին՝ Հրաչ Փափազեանը (Մեհմէտ Ալի անուանով), Արամը եւ Արշակը (Պիթլիսցի Արշակ կամ Եգիտ Արշակ): Գործողութեան ղեկավարներէն Շահան Նաթալին ալ քանի մը օրէն դէպի Պերլին պիտի ուղղուէր: Այդ օրերուն, Սայիտ Հալիմ փաշայի յուղարկաւորութիւնը տեղի կ'ունենայ Կ. Պոլսոյ մէջ:

Արշաւիրն ու Եգիտ Արշակը Պերլին կը հասնին Գոսթանցայի, Պուքրէշի եւ Վիեննայի վրայով: Անոնք միւս ընկերներուն հետ Պերլինի մէջ հետապնդումներ կը կատարեն: Արշաւիր Շիրակեան դաշնակցական կարգ մը պատասխանատուներու հետ գործակցելով, Պէհաէտտին Շաքիրի եւ Ճեմալ Ազմիի ահաբեկման պատրաստութիւնները կը տեսնէ (մանրամասնութիւնները տես՝ էջ 294-345): 17 Ապրիլ 1922-ին Արշաւիրը, Արամն ու Շահան Նաթալին գործողութենէն առաջ գիշերային վերջին հետապնդումները կը կատարեն: Արշաւիր կը յաջողի սպաննել Պէհաէտտին Շաքիրն ու Ճեմալ Ազմին՝ գլխաւոր օգնական ունենալով Արամ Երկանեանը:

Ոճրագործներուն կ'ընկերանար Թալաթի կինը:


Արշաւիր Շիրակեան Կ. Պոլիս կը վերադառնայ: Ճամբուն վրայ, Վառնայի մէջ, թուրք գաղտնի ոստիկաններ կը փորձեն առեւանգել զայն: Կ. Պոլսոյ մէջ Արշաւիր Գայեանէի հետ կը նշանուի: Քիչ ետք, երկուքով Ամերիկա կը մեկնին՝ Փարիզէն անցնելով:

Աշխատասիրեց՝ Յովսէփ Տէր Վարդանեան, «Մարաշի Ջարդը 1920-ին Եւ Պատմական Համառօտ Ակնարկ Մը Իր Անցեալին Վրայ», հրատարակութիւն Մարաշի Հայրենակցական Միութեան, Հալէպ, 2010, նախապէս՝ տպագր. «Արաքս»՝ Բ. Թոփալեան, 1927, փոքր չափի 104 էջ

«Մարաշի դէպքերուն պատասխանատուութիւնը կ'իյնայ անոնց վրայ, որոնք չկրցան երկու կամ երեք հարիւր մարդիկ բերել անհրաժեշտ թնդանօթներով, որպէսզի կարելի ըլլար զսպել Քեմալական առաջին ապստամբութիւնը որ դեռ նոր ծայր կուտար, ինչպէս նաեւ անոնց վրայ՝ որոնք անհրաժեշտ հրամանները Պոլսէն չտուին թուրք պաշտօնեաներուն համար»:

Աշխատասիրողը՝ Յովսէփ Տէր Վարդանեան գիրքը երեք մասերով կազմած է: Առաջին մասը պատմական ծանօթութիւններ են, երկրորդը՝ նշանաւոր վայրերու, ուխտատեղիներու, լեզուի եւ սովորութիւններու մասին, իսկ երրորդ մասը՝ 1920-ի դէպքի՝ Փրանքօ-թուրք ընդհարումին եւ հայոց ջարդին ականատեսի նկարագրութիւնն է: Այս Գ. մասին (էջ 72-94) վրայ է, որ պիտի կեդրոնանամ:

Ա. Համաշխարհային Պատերազմի վերջաւորութեան պարտըուած Գերմանիան, Աւստրիա-Հունգարիան, Պուլկարիան եւ Թուրքիան զինադադար եւ հաշտութիւն կը խնդրեն Անգլիայէն, Ֆրանսայէն եւ ընդհանրապէս դաշնակիցներէն:



Մուտրոսի մէջ 25 (բնագիրին մէջ այսպէս է, ճիշդն է՝ 30 - խմբ.) Հոկտեմբեր 1918-ին զինադադար կը կնքուի թուրքերուն հետ:

Անգլիացիք կը գրաւեն Հալէպը: Ֆրանսա ձեռք կը դնէ Կիլիկիոյ վրայ: Անոր հովանաւորութեան տակ կը սկսի հայոց վերադարձը Կիլիկիա: Ողջ մնացած մարաշցիներ կը փութան վերադառնալու իրենց քաղաքը եւ կը սկսին բնական վիճակով շինարարական խաղաղ աշխատանքի: Այս խաղաղութիւնը 1919-ի Փետրուարէն մինչեւ Նոյեմբեր կ'երկարի:

Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ գոյացած համաձայնութեամբ, Ֆրանսա անգլիացիներէն Մարաշը կը ստանձնէ 1 Նոյեմբեր 1919-ին: Օսմանիէի կառավարիչ հարիւրապետ Անտրէ (Փիէռ Անտրէ Ռէտան, captain Pierre Andre Redan) Մարաշի կառավարիչ կը կարգուի: Մարաշի հայերը Ֆրանսացիներուն փառաւոր ընդունելութիւն կը կատարեն: Այս արարքը թուրքերու աչքին վատ կ'երեւայ: Թըրքական ոյժը շատոնց գոյութիւն առած էր ու կը գործէր Պոլսոյ սուլթանական կառավարութենէն անկախ՝ կեդրոն ունենալով Սեբաստիան: Թրքական շարժման ղեկավարն էր Մուսթաֆա Քեմալը:

Մարաշի թուրք երեւելիներէն Հասան Գատի, Հաճի Գօճապաշ օղլու Օմար, Տօքթ. Մուսթաֆա Խիւտայի Թահսին եւ ղեղազորժ Լութֆի պատգամաւորութիւն մը կազմած՝ Ալպիստան (Մարաշի գիւղերէն) կ'երթան եւ միլլի պետերուն հետ տեսակցութիւն մը կ'ունենան: Անոնք Ֆրանսացիներուն եւ հայոց հետ վարուելու հարկ եղած հրահանգը ստանալէ յետոյ, Մարաշ կը վերադառնան: Հայերը իրենց մտահոգութիւնը Ֆրանսացիներուն կը յայտնեն: Թուրքերը տենդոտ պատրաստութիւն կը տեսնեն եւ ժողովուրդին զէնք կը բաժնեն: Հայերը բերանացի եւ գրաւոր

ղիմումներ կը կատարեն Ֆրանսական իշխանութիւններուն թէ՛ Մարաշի եւ թէ՛ Պէյրութի մէջ: Մարաշի, Այնթապի եւ Եղեսիոյ Ֆրանսական զօրաց ընդհանուր հրամանատար ժէնէրալ Քերեթ (General Querette) կը յանդիմանէ հայերը եւ անոնց զիմումները իրեն համար նուաստացուցիչ կը գտնէ:

Հարիւրապետ Փիէռ Անտրէ Ռէտան թուրքերուն կը հրամայէ Ուրբաթ օրուան աղօթքի ընթացքին բերդին վրայ դրօշ չպարգել: Առաջին անգամն ըլլալով, թուրքերն առանց աղմուկ հանելու կը համակերպին: Սակայն յաջորդ Ուրբաթ օր հազարաւոր զինուած թուրքեր «Ուլու ճամի» մզկիթին մէջ կը մերժեն աղօթել առանց բերդին վրայ դրօշակ պարգելու: Անոնք դէպի բերդը կ'ուղղուին, եւ Ֆրանսական դրօշակը վար առնելով՝ տեղը թրքականը կը բարձրացնեն, ապա մզկիթ վերադառնալով՝ հանդարտ սրբտով կ'աղօթեն: Ի տես այս բոլորին՝ Ֆրանսացիք լուռ կը մնան:

Կառավարիչ Փիէռ Անտրէ Ռէտան իր թարգմանին՝ Վահան Խուպէսէրեանի հետ կառավարչատուն կ'երթայ թուրքերէն բերդն ու կառավարութեան շէնքը ստանձնելու համար: Թուրքերը կը մերժեն եւ Վահան Խուպէսէրեանը սաստիկ կը ծեծեն: Ան հազիւ կ'ազատի ստոյգ մահէն: Հարիւրապետ Փիէռ Անտրէ Ռէտան Այնթապ կը հեռաձայնէ եւ օգնական ոյժ կը խնդրէ քաղաքին խաղաղութիւնը վերահաստատելու համար: Այնթապէն Ռէտանի փոխանակ ոյժ ղրկելու, խորհուրդ կը տրուի մեկնիլ Ատանա, ուր ժէնէրալ Քերեթ թուրքերուն հանդէպ աւելի թոյլ կեցուածք կը բռնէ: Թուրքերը կ'որոշեն Ֆրանսացիները անաղմուկ կերպով դուրս քշել Մարաշէն:

Թրքական վտանգէն զգուշացնող Մարաշի հայոց քանիցս

դիմուճներուն, Ֆրանսացիք «Մենք գիտենք, դուք հայերդ անհոգ եղէք» կը պատասխանեն: Մարաշի ջարդէն առաջ 500 հայ կամաւորներ հոն հասած էին, սակայն դէպքերէն մէկ օր առաջ անոնցմէ 450-ը Ֆրանսացիներու կողմէ իսլահիէ դրկուած էին՝ ռազմանիւթ բերելու համար: Հոս հեղինակը՝ Յովսէփ Տէր Վարդանեանը հարց կու տայ. «Արդեօք կամաւորներուն քաղաքէն դուրս դրկուելը ժէնէրալ Քերեթի կողմէ թուրքերուն հաճոյ երեւալու համար խաղցուած խաղ մը չէ՞ր միթէ»:

Մարաշի հայերը զօրավար Քերեթը կրկին կը զգուշացնեն մօտալուտ վտանգէն եւ ինքնապաշտպանութեան համար անկէ զէնքեր կ'ուզեն: «Մենք քաղաքը եւ քրիստոնեայ բնակչութիւնը պաշտպանելու չափ զինուորական ոյժ ունինք եւ ձեր աջակցութեան պէտք չունինք», - կը պատասխանէ Ֆրանսացի զօրավարը:

Մարաշի թրքական կառավարութեան ղեկը ձեռք առնելու նպատակով, զօրավար Քերեթ 21 Յունուար 1920-ին Մարաշի թուրք զինուորական եւ քաղաքական պաշտօնէութեան երեւելիներէն ինը հոգի իր մօտ կը կանչէ եւ յանձնումի պարագան կը յայտնէ անոնց, իննէն միայն երկուքը՝ կառավարիչի փոխանորդ Ճելտէթը եւ գումիւէրը կը թողու որ մեկնին, իսկ միւս եօթն իր մօտ կը պահէ իբր պատանդ (Մարաշէն նահանջի ժամանակ Ֆրանսացիք այս պատանդներն իրենց հետ Ատանա կը տանին):

Ազատ արձակուած գումիւէրը կառավարչատունէն դուրս ելլելէն հազիւ տասը վայրկեան ետք երբ Պէքթուլիէ թաղը հասած էր, Գերմանական հիւանդանոցին մօտ իր ատրճանակով հինգ փամփուշտ կը պարպէ օդին մէջ՝ հայոց եւ Ֆրանսացիներուն վրայ յարձակելու ազդանշան տալով թուրք զինեալ ամբոխին: Բերդին վրայ հսկայ բազմութիւն

մը կը հաւաքուի անմիջապէս, չէթէներու խումբ մը եւ ոստիկաններ կ'եալուրները ջարդելու համար կրակ կը բանան քաղաքին տուններուն վրայ: Ֆրանսացիներուն հետ զինեալ ընդհարում ունենալէ առաջ թուրքերը հայոց կ'առաջարկեն իրենց հետ կռուիլ կամ չէզոք մնալ: Հայերը չեն վստահիր թուրքերուն, քանի որ պարզ էր, թէ Ֆրանսացիք քշելէ յետոյ, անոնք հայոց հաշիւն ալ պիտի մաքրէին:

Թուրքերը խաղաղութեան կոչերը կ'անտեսեն եւ Մուսթաֆա Բեմալէն եկած հրահանգները կը կատարեն միայն: Մարաշ եկող Ֆրանսական պաշարակիր կարաւան մը քաղաքէն երեք ժամ հեռաւորութեան վրայ յարձակման կ'ենթարկուի թուրքերէն: Թուրք չէթէներ Մարաշը ամէն կողմէ կը պաշարեն եւ կրակի տակ կ'առնեն քաղաքը, ներառեալ՝ Մարաշի հիւանդանոցը: Ֆրանսացի զինուորներ եւ հայեր զոհ կ'երթան:

Ֆրանսական զինուորութիւնը տակաւին կը ջանայ կացութիւնը հանդարտեցնել, թէեւ ընդհարումը իրողութիւն դարձած էր եւ զոհեր կ'իյնային: Հայեր կ'ապաստանին Ս. Գէորգ, Ս. Աստուածածին եւ Ս. Սարգիս եկեղեցիները, որոնք, այդուհանդերձ, կրակի կը տրուին իրենց մէջ ապաստանած հայերով: Թուրքերը անպաշտպան թաղերու եւ տուներու մէջ անձնատուր եղած անգէն հայերը տեղույն վրայ կը սպաննեն: Անոնք 4-500 հայ կիներ եւ մանուկներ «Ուլու Ճամի» մզկիթին մէջ կը հաւաքեն՝ իբր թէ զանոնք պաշտպանելու համար, սակայն բոլորը դանակէ կ'անցընեն: Այս նախճիրէն ազատած պատանի Երուանդ Սէֆէրեանը սպանդին մասին կը պատմէ որպէս ականատես վկայ: Ան ինքզինք յարմար պահուն դիակներուն մէջ նետելով ազատած էր: Մզկիթին մէջ մորթուածներու շարքին են հեղինակին կիներ՝ Մարիամ եւ բոլոր զաւակները՝ Նորայր, Ասանէթ եւ Ստեփանէ՝ համապատասխանաբար 12, 10 եւ

1 տարեկան:

Մարաշի Ուլուզ թաղին մէջ հայոց ուրիշ սպանդ մը կը կատարուի: 21 Յունուարէն 12 Փետրուար 1920 տեւած ջարդերուն 14,000 հայեր զոհ կ'երթան Մարաշի մէջ: Անոնցմէ զատ, 500 ֆրանսացի զինուորներ կը սպաննուին եւ 200 ուրիշներ ցուրտէն անդամահատ կ'ըլլան: Հրկիզուած էին առաքելական հայոց հինգ եկեղեցիները, աւետարանականներուն երեք ժողովարանները, մեծ շուկան (Պէտէսթէն), բազմաթիւ խանութներ, բայց ընդամէնը՝ մէկ կամ երկու մզկիթ:

Հեղինակը՝ Յովսէփ Տէր Վարդանեանը հարց կու տայ. «Ընդհարումի պահուն ֆրանսական ոյժերու ցոյց տուած սառնասրտութիւնը ինչի՞ վերագրել արդեօք»:

Կռիւին օրերուն, ֆրանսական օդանաւ մը Ատանայէն գալով, Մարաշի վրայ կը սաւառնի եւ վարէն նշանացի տեղեկութիւններ ստանալով կը մեկնի: 7 Փետրուարին 2000 ֆրանսացի զինուորներ Մարաշ կը հասնին զօրավար Նորմանի հրամանատարութեամբ: Անոնք քաղաք չեն մըտներ, այլ՝ 4-5 քլմ. անդին կը կանգնին: Թուրքերը կը բարոյալքուին եւ քաղաքին շուրջի գիւղերը կը պահուրտին: Թուրք ղեկավարներէն Գըլըճ Ալի պատուիրակութեան մը գլուխն անցած զօրավար Քերեթի մօտ կ'երթայ ընդհարումին վերջ տալու համար: Թուրքերը սպիտակ դրօշ պարզելով ֆրանսացիներուն կը մօտենան: Նախքան անոնց խօսք առնելը, ֆրանսացիք կը յայտարարեն, թէ իրենք որոշած են ... քաղաքը պարպել եւ հեռանալ:

10-11 Փետրուար 1920-ին ֆրանսական ոյժերը կը լքեն Մարաշն ու անոր հայերը՝ իրենց նահանջին մասին հայերը բնաւ տեղեակ չպահելով:

Այսպիսով, Մարաշի հայութիւնը եւրոպական տէրութեանց

ստոր քաղաքականութեան եւ հակամարտ շահերուն զոհը կը դառնայ:

Կարճ ատեն ետք Մարաշի պիտի հետեւէին Եղեսիան, Հաճընը, Այնթապը եւ Ատանան:

Առճակատումը դադրելէն քանի մը օր ետք, թուրքերը 100 հայեր նենգութեամբ կը սպաննեն:

Մարաշի աղէտին, հեղինակը՝ Յովսէփ Տէր Վարդանեանը կը կորսնցնէ նաեւ իր ծնողները՝ Տէր Վարդան Աւագ Քահանայ Տէր Մինասեանն ու երէցկին Ագապին:

Translated and annotated by Arda Arsenian-Ekmekji, Towards Golgotha: The Memoirs of Hagop Arsenian, A Genocide Survivor, Haigazian University Press, Beirut, 2011


Թարգմանեց եւ ծանօթագրեց՝ Արտա Արսէնեան-էքմէքճի, «Դէպի Գողգոթա. Յեղասպանութենէն Վերապրող Յակոբ Արսէնեանի Յուշերը», Հայկազեան Համալսարանի տպարան, Պէյրուսթ, 2011, միջակ չափի 238 էջ

Գիտական մօտեցումով կատարուած այս գործին մէջ մեր ուշադրութիւնը կը կեդրոնանայ թարգմանիչ եւ ծանօթագրող Դոկտ. Արտա էքմէքճիի հօրական մեծ հօր՝ Յակոբ Արսէնեանի բռնազաղթի եւ տարագրութեան պատմութեան վրայ:

Յուշերուն ժամանակահատուածը կ'ընդգրկէ 1880-1940 վաթսունամեակը ու կ'երկարի Օվաճրգէն մինչեւ Կազա (Պաղեստին):

Բռնազաղթն ու անոր յաջորդող 1915-1920-ի շրջանը մանրամասնօրէն օրագրուած են դէպքերու առօրեայ գեկուցումներով: Արտա էքմէքճի գործը լուրջ աշխատանքով հարստացուցած է լայնածաւալ տեղեկութիւններով եւ ծանօթագրութիւններով:

Արտա Արսէնեան-էքմէքճի 2002-ի Օգոստոսին Նիկոմեդիա կ'այցելէ իր ամուսնոյն՝ Պրն. Ժագ էքմէքճիի հետ: Անոնք կ'անցնին Իզմիրէն, Ատաբազարէն եւ Օվաճրգէն:



Այս այցելութեան նկարագրութիւնը, լայն ծանօթագրութիւններով, էքմէքճի կու տայ գիրքին 9-17-րդ էջերուն մէջ:

Հեղինակը՝ Յակոբ Արսէնեանը իր յուշերը գրի առած է 1919-ին, Բեթղէհէմի մէջ: Իր յուշերուն յառաջաբանին մէջ ան փափաք կը յայտնէ, որ խաղաղութիւն հաստատուի ամբողջ աշխարհի մէջ եւ իր որդիները, կարդալով այս յուշերը, դասեր քաղեն անցեալէն՝ ապագայի համար, ինչի շնորհիւ խիզախութիւնն ու ինքնավստահութիւնը պիտի զօրանան անոնց մէջ: Անոնք պիտի հեզնեն անարդարութիւնը, բնաւ պիտի չյուսահատին, դժուարութիւնները պիտի արհամարհեն՝ իրենց կեանքով առաջնորդ եւ ուղեցոյց ըլլալով ուրիշներուն:

Յակոբ Արսէնեան ծնած է Նիկոմեդիոյ (Իզմիր) նահանգի Օվաճրգ գիւղը, 1880-ին: Ան երրորդ զաւակն էր Արսէնի (Մերտինէն) եւ Մարիամի (Սիլոյէն): Իր ծնունդէն երկու ամիս առաջ հայրը կը մահանայ:

Յակոբ եօթը տարեկանին կը սկսի Օվաճրգի դպրոցը յաճախել: Շատ ուսուցիչներ կու գան ու կ'երթան: Գրիգոր էֆենտի Յարութիւնեանի (յետագային՝ եկեղեցական ձեռնադրուած եւ նահատակուած) տնօրէնութեան ժամանակ Յակոբ դպրոցը կ'աւարտէ եւ վկայական կը ստանայ 1900-ին: Յաջորդ ուսումնական տարեշրջանին Յակոբ նոյն դպրոցին մէջ օգնական ուսուցիչի պաշտօն կը վարէ: 1901-ի Սեպտեմբերին կ'անցնի Կ. Պոլիս եւ կ'աշխատի վառարան սարքող (սոպաճը) Արտաշի մօտ մինչեւ 1902-ի Յունուարի վերջը, երբ իր փափաքներուն գոհացում տալով կը մտնէ Հայկ Ալլահվերտեանի դեղարանը՝ իբր սկսնակ աշկերտ. ըստ թրքական օրէնսդրութեան, ան պէտք է երեք տարի դեղարանի մը մէջ աշխատած ըլլար՝ համալսարան ընդունուելու համար: Նոյն տարուան 20

Սեպտեմբերին, Յակոբ Արսէնեան կ'անցնի Արմաշ եւ Օննիկ էֆենտի Քիւրտեանի դեղարանը գործի կը սկսի: Երկու տարի աշխատելէ յետոյ դեղագործ Քիւրտեանը Յակոբի երեք տարուան փորձառութեան գիր կը շնորհէ, որով ան կ'ընդունուի Կ. Պոլսոյ համալսարանին բժշկական դպրոցը եւ 1904-ի Սեպտեմբերին կ'արձանագրուի իբր դեղագործութեան բաժանմունքի ուսանող: Սակայն ան նիւթականի մեծ կարիք ունէր: Յակոբ չ'ուզեր ուրիշներուն ձեռք բանալ եւ կը նախընտրէ ցերեկները համալսարան յաճախել ու գիշերները դեղարանի մը մէջ աշխատիլ: Ան Բանկալիթի մէջ Անթուն էֆենտի Տէօվլէթեանի դեղարանը գիշերային գործ կը ճարէ: Շատ դժուար էր առօրեայ փոխադրութիւնը Բանկալիթէն Գում Գափու, ուր կը գտնուէր համալսարանը: 1904-1905 տարեշրջանը յաջողութեամբ աւարտելէ յետոյ ամրան արձակուրդը Օվաճրգի մէջ կ'անցընէ: Ան իրեն հետ զանազան դեղեր տանելով գիւղին մէջ մալարիայէ տառապող հիւանդներ կը բուժէ եւ քիչ մը դրամ կը վաստակի: Երբ համալսարանին վերամուտի օրերը կը մօտենան, Յակոբ Արսէնեան կ'երթայ Իզմիթ՝ դէպի Պոլիս ճամբորդելու արտօնագիր վերցնելու համար: Կառավարական պաշտօնեաները կը մերժեն բոլոր հայերուն արտօնագիր տալ. կը պարզուի, թէ սուլթան Ապտիւլ Համիտ Բ-ի դէմ մահափորձ մը կատարուած էր եւ հայերը կասկածի տակ առնուած էին: Ամիսներ կ'անցնին եւ Յակոբ համալսարանէն կը զրկուի: Բազում ճիգեր թափելէ յետոյ ան վերջապէս կրկին համալսարան կ'ընդունուի եւ 1904-1905 տարեշրջանին միայն երկու ամիս կը կարողանայ ուսանիլ: Յակոբ Արսէնեան Արամ Ատիլեանի դեղարանը աշխատած միջոցին, անսպասելի եւ տհաճ դէպք մը պատճառ կը դառնայ իր եւ դասընկերոջ մը ձերբակալութեան ու երեսունհինգ օր բանտարկութեան: Թրքական սարսափի օրինակներէն մէկն էր այս:

Բանտէն դուրս գալէ ետք, Յակոբ Արսէնեան ծանր աշխատանքով եւ յարատեւութեամբ կ'աւարտէ համալսարանը եւ դեղագործ կը վկայուի 1907-ի Օգոստոսին: Նոյն տարուան մէջ ան պարտքով դեղարան մը կը գնէ Ատաբազարի մէջ: 1910-ի Հոկտեմբերին ան կ'ամուսնանայ օրիորդ Հռութ Կիւլէմէրեանի հետ: 1912-ի Յուլիսին աշխարհ կու գայ անոնց անդրանիկ զաւակը՝ Նուպար-Արսէնը (Արտա էքմէքճիի հայրը): Յակոբ Արսէնեան 1910-ին Ատաբազարի Կեդրոնական Վարժարանի հոգաբարձութեան անդամ կը դառնայ: 1914-ի Մարտին, ան Իզմիթի մէջ դեղարան մը կը բանայ եւ հոն կը փոխադրուի: 1914-ի Սեպտեմբերին Յակոբ եւ Հռութ կը բախտաւորուին երկրորդ մանչ զաւակով մը, զոր Նորայր կը կոչեն: 1914-1915-ի ձմեռը Արսէնեանները Իզմիթի մէջ բարեկամ հայ ընտանիքներու հետ հաճելի ժամանակ կ'անցընեն: Այս ուրախութիւնը սակայն երկար չի տեւեր: 1915-ի Ապրիլ, Մայիս եւ Յունիս ամիսներուն սարսափի մթնոլորտ մը կը տիրէր: Թրքական կառավարութիւնը Թուրքիոյ բոլոր շրջաններուն մէջ հայերը կը հալածէր: Հայ մտաւորականներ եւ երեւելի անձեր կը ձերբակալուին ու կ'աքսորուին անյայտ ուղղութեամբ: Իզմիթի մէջ 10-15 հայեր կը բռնագաղթեցուին: Այդ օրերուն, Յակոբ Արսէնեան ինքզինք կը պատրաստէ որեւէ հաւանական բռնագաղթ դիմագրաւելու:

Այդ դժնդակ օրերը կ'անցնին եւ Արսէնեան իր դեղարանին մէջ գործը կը շարունակէ: Սակայն շուտով աւելի գէշ օրեր կու գան: Նախապէս ծրագրուած եւ կանխամտածուած բռնագաղթերը կը սկսին: Իթիհատի կառավարութիւնը ժամանակը յարմար նկատած էր հայութիւնը բնաջնջելու համար:

Ինչպէրի եւ Թալաթի ոճրային խումբը մարդու կերպարանքով հրէշներ զրկած էր թուրք ժողովուրդը հայոց

դէմ գրգռելու համար: Այս իրողութիւնը աւելի ուշ կը պարզուէր: Մզկիթներու մէջ թուրքեր հայոց դէմ կը հրահրուէին եւ երդում կու տային այս ծրագիրը գաղտնի պահել մինչեւ գործադրութեան ժամանակը:

Յուլիս 1915-ին Յակոբ Արսէնեան անձամբ ականատես կ'ըլլայ Իզմիթի մէջ թուրքերու գործած վայրագութեանց: Չէթէպաշը Իպրահիմ անունով հրէշ մը Ատաբազար, Պարտիզակ, Օվաճըզ, Արսլանպէկ, Տէօնկէլ, Արմաշ եւ Իզմիթ կը ղրկուի: Ձէնքերու խուզարկութեան պարտրուակով հարիւրաւոր հայեր եկեղեցիին մէջ կը հաւաքեն եւ կը ծեծեն: Իզմիթի ծերունի առաջնորդը՝ Տէր Ստեփանոս (Արք. Յովակիմեանը - խմբ.) կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւն ամենօրեայ մանրամասն տեղեկագիրներ կը ղրկէ: Ոչ մէկ օգնութեան յոյս կար: Նախ Իզմիթի արուարձաններէն կէյվէի հայութիւնը կը բռնագաղթեցուի, ապա՝ Ատաբազարի, Արսլանպէկի եւ Օվաճըզի հայերը: Անոնք ամէն ինչ իրենց ետին ձգած, դժնդակ պայմաններու տակ, անապահով եւ ճնշուած, անորոշ ուղղութիւններով կ'երթան:

24 Յուլիս 1915-ին, Նիկոմեդիոյ Հայոց Առաջնորդարանը քաղաքի հայութեան բռնագաղթի հրահանգ կը ստանայ գործադրելի «24 ժամէն»: Հայերն իրենց իրերը մայթերուն վրայ փռելով վաճառքի կը հանեն: Սակայն գիտնալով, որ շատ կարճ ժամանակ ետք այդ ապրանքները իրենցը պիտի ըլլային, թուրքերէն ոեւէ մէկը չի գներ զանոնք:

Յակոբ Արսէնեան իր ղեղարանը ծախու կը հանէ: Քաղաքին միակ թուրք ղեղապորժը նախ 20 ոսկի միայն կ'առաջարկէ: Սակայն բոլոր ղեղերը իր ղեղարանը փոխադրելէ յետոյ, միայն 10 ոսկի կը վճարէ Յակոբին: Նոյն իրիկունը, Շաբաթ, 25 Յուլիս 1915-ին Իզմիթի հայոց բռնագաղթի առաջին կարաւանը ճամբայ կ'ելլէ շոգեկառքով: Յակոբ Արսէնեան Նիկոմեդիոյ թեմի

Առաջնորդին՝ Ստեփանոս Արքեպիսկոպոսին միջոցով կ. Պոլսոյ հայոց պատրիարք Զաւէն Արք. Տէր Եղիայեանը տեղեակ կը պահէ բռնագաղթին մասին:

Յակոբ Արսէնեան 26 Յուլիս 1915-ի գիշերը իր ընտանիքի անդամներուն եւ բարեկամ ընտանիքներու հետ Նիկոմեդիոյ շոգեկառքի կայարանէն ճամբայ կ'ելլէ դէպի Գոնիա: Անոնք իրենց հետ առած էին ինչ որ կրնային տանիլ: Ամէն ինչ իրենց ետին թողած, սեփական տանիքէն դուրս քշուած էին: Թուրքերը Ատաբազարի, Տէօնկէլի, Պարտիզակի եւ Օվաճըզի հայերէն նախապէս դրամ գանձած էին, խոստանալով զանոնք իրենց տեղերը պահել, սակայն մէկ օր ետք բռնի ոյժով տեղահանած էին հայերը:

Յաջորդ օրը Յակոբ Արսէնեանի խումբը կ'անցնի Արիֆիէի կայարանէն, ուր հազարաւոր ատաբազարցիներ երեք օրէ ի վեր կը սպասէին: Ապա վերոյիշեալ խումբը կը հասնի Պիլէճիքի կայարանը: Յաջորդ հանգրուանը Էսկիշէհիրն էր: Հոն հազարաւոր բռնագաղթուած հայեր վրաններու տակ կ'ապրէին: Ապա կը հասնին Գոնիա, ուր չորս-հինգ ընտանիքներով միասին նոյն վրանին տակ կը պատսպարուին: Անոնց կը հրահանգուի իրենց ապրանքները վաճառել, որովհետեւ Պոզանթիի կայարանէն անդին այլեւս հետիոտն պիտի ընթանային: Գոնիայի մէջ Յակոբ Արսէնեան եւ բարեկամ ընտանիքներ պանդոկի մը մէջ սենեակ մը կը ճարեն ու հոն կը հանգրուանին: Թուրք ոստիկաններ պանդոկ գալով կ'ուզեն զանոնք ճամբայ հանել դէպի Գողգոթա, դէպի մահ:

Գոնիայի հայերը տակաւին չէին աքսորուած: Յովհաննէս Գազանճեան անունով բարի մարդ մը Արսէնեանն ու ընտանիքը իր տունը կը տանի: Ապա անոնք դէպի Գարաման աւանը կ'ուղղուին:

Գարամանի մէջ եւս Արսէնեանները վրանի մը տակ կը

պատասպարուին Նիկոմեդիոյ բոլոր հայոց նման: Թուրք ոստիկանները հայոց հանդէպ դաժան վերաբերմունք ցոյց կու տան: Անոնց կ'արգելուի ջուրին մօտենալ: Խմելիք ջուրը կը բաշխուի ժլատօրէն: Օգոստոսի կիզիչ արեւուն ազդեցութեան տակ հայ գաղթականները կը յառաջանային: Անոնց թոյլ չի տրուիր մօտակայ հորի մը ջուրէն օգտուիլ:

Գարամանի կայարանին մէջ սպասող գաղթականներուն մեծ մասը շոգեկառքով էրէյլի կը տանին: Աւետարանականներուն կ'արտօնուի Գարաման մնալ: Յաջորդ օրը կեանքը աւելի դժուար կը դառնայ: Թուրք ոստիկանները ալ աւելի բրտութեամբ կը վարուին հայոց հետ: Հազարաւոր հայեր պարտէզի մը մէջ կը հաւաքեն եւ դուրսի հետ անոնց կապերը կը կտրեն: Անօթի եւ ծարաւ վիճակի մէջ՝ ժողովուրդը օգնութիւն կ'աղերսէ: Թուրքերը կ'որոշեն բոլոր հայ գաղթականները էրէյլի փոխադրել: Շոգեկառքի տոմսերուն գումարը հաւաքելու պատրուակով, թուրք ոստիկանները կողոպուտի կը սկսին: Այդ օրը Գարամանի հայերն ալ կայարան կը բերուին՝ բռնագաղթեցուցելու համար:

Գարամանէն հայ գաղթականները կը փոխադրուին էրէյլի, որու կայարանին մօտ գտնուող դաշտին մէջ բացօթեայ կը գիշերեն: Արսէնեան ընտանիքն ալ անոնց մէջն էր: Յաջորդ առտու ոստիկանները կը ստիպեն ժողովուրդը, որ Պոզանթի մեկնելու պատրաստուի: Զինուորներու ընտանիքներուն կ'արտօնուի էրէյլի մնալ: Յակոբ Արսէնեան անմիջապէս արտօնագիր (վեսիքա) մը կը ճարէ եւ իր ընտանիքով էրէյլի կը մնայ:

Շատ չանցած, թուրք ոստիկանները վրանները կը քանդեն եւ ժողովուրդը կը ստիպեն Պոզանթի մեկնիլ: Կիները կ'աղերսեն զայնազամին մօտ, որ գիրենք շոգեկառքով փոխադրեն: Էրէյլի վրանաքաղաքին մէջ քանի մը տեսակ

տարածայնութիւններ կը շրջին. պահ մը ուրախ, ուրիշ պահ մը տխուր ու գէշ լուրեր կը տարածուին: Առաւօտ մը թուրք ոստիկանները իրենց հետ պաշրպօզուքներ կը բերեն եւ ժողովուրդը կը նեղեն, երիտասարդ տղամարդիկը կը ձերբակալեն ու կը տանին: Յակոբ Արսէնեան այս ձերբակալութենէն ճարպիկութեամբ մազապուրծ կ'ազատի: Վերջապէս, ան իր եղբայրը՝ Ղազարոսը եւ իր ընտանիքն առնելով կ'ուղղուի դէպի Պոզանթի, ուր կը հասնի 28 Օգոստոս 1915-ին: Օվածրգի քահանան՝ Տէր Արսէնը էրէյլի կը մնայ: Պոզանթիի մէջ Յակոբ Արսէնեան ականատես կ'ըլլայ Անգարայէն եւ ուրիշ վայրերէ հայ բռնագաղթեալներու ժամանումին: Անոնք թշուառ վիճակի մէջ էին: Քանի մը օրուան համար Արսէնեանները Տաւրոսեան լեռներու վրայ հիւանդանոց մը կ'ապաստանին: Սակայն թուրքերը կրկին կու գան եւ այրերը կ'ուզեն Տարսոն դրկել: Բոլոր տղամարդիկը այս փորձանքէն կը փրկուին շնորհիւ իրենց հաւաքած ոսկիներուն, զորս այդ անօթի մարդակերպ բորենիներուն իբրեւ կաշառք կու տան:

Թուրքերը գիրենք կը ստիպեն այս հիւանդանոցէն ալ հեռանալ: Յակոբ Արսէնեան երկու կառքեր վարձելով ընտանիքը կը փոխադրէ յաջորդ հանգրուանը Գողգոթայի ճամբուն վրայ: Անոնք գիշերով կը հասնին Պոզանթիի հարաւը, Տաւրոսեան լեռներու վրայ գտնուող Խան Զիֆթէ Հաւուշ գիւղը: Երկու օր հոն մնալէ եւ յուսահատած բարեկամ Տօքթ. Զարեհ Լութուֆեանի հետ իրենց ցաւերը բաժնելէ յետոյ, ճամբայ կ'ելլեն դէպի Տարսոնի՝ Կիւլէկ կոչուող երկաթուղիի կայարանը, ուր քանի մը օր հանգիստ կ'առնեն: Սակայն թուրքերը կրկին գիրենք ոտքի հանելով կ'ուզեն աւելի հեռու վայրեր քշել: Յակոբ Արսէնեան իր մէկ տարեկան ծանր հիւանդ զաւակը՝ Նորայրը ցոյց տալով կ'աղերսէ իրենց թոյլատրել Տարսոն մնալ: Բազում ճիգեր

Թափելէ յետոյ ան կը յաջողի հոն մնալու արտօնութիւն վերցնել: Մեկնողներուն յաջորդ հանգրուանը Օսմանիէն էր:

1915-ի Սեպտեմբերի վերջերը Յակոբ Արսէնեանի աները կառավարական շինարարական գործի մէջ արձանագրուած ըլլալով, իրենց վրաններուն վրայ մասնաւոր դրօշակի մը նշանով անոնք կ'արտօնուին Կիւլէկ կայարանին վրանաքաղաքը մնալ:

Ամէն օր նոր կարաւան մը կու գար ու կ'անցնէր Կիւլէկէն: Անբացատրելի եւ տարօրինակ դէպքերու ականատես կ'ըլլայ հեղինակը: Թուրքերը մէկ կողմէ հայերը դէպի սպանդանոց կ'առաջնորդէին, իսկ միւս կողմէ հաց կը բաժնէին անոնց: Հոկտեմբերին՝ տեղատարափ անձրեւները լիճերու կը վերածեն վրանաքաղաքը: Թշուառ գաղթականներուն իրերը ջուրերուն վրայ կը ծփան: Անտանելի վիճակէն ազատելու համար Յակոբ Արսէնեան իր ընտանիքը առնելով կը փորձէ Տարսոն քաղաքն ապաստանիլ: Ճամբան թուրք ոստիկաններ գանոնք մտրակելով վրանաքաղաք կը վերադարձնեն: Վերջապէս, Արսէնեան բարեկամի մը միջնորդութեամբ կը յաջողի քաղաքին մէջ սենեակ մը վարձելու արտօնութիւն վերցնել: Նոյեմբեր էր, ցուրտն սկսած էր արդէն եւ կարաւաններն ալ Պոզանթիէն անցնելէ դադրած էին: Չորս ամիսներու ընթացքին մօտաւորապէս կէս միլիոն բռնագաղթեալ հայեր անցած էին Պոզանթիէն:

Արսէնեան իր ընտանիքով միայն կարճ ատեն կը մնայ քաղաքին մէջ ու կրկին կը ստիպուի վրանաքաղաք վերադառնալ: Յակոբի աներով շինարարական գործը վերջացած ըլլալով, անոնց արտօնութիւն կը տրուի շարունակել Գողգոթայի իրենց ճամբան:

Շոգեկառքով փոխադրուելով, Յակոբ Արսէնեան իր ընտանիքին հետ կ'անցնի Ատանայէն եւ Օսմանիէէն ու

Մամուրիէի կայարանը կը հասնի: Տեղատարափ անձրեւ կը տեղար, ուստի անոնք Մամուրիէի հայ կայարանապետէն կը խնդրեն շոգեկառքին մէջ մնալ: Յաջորդ օրն անոնք իրենց վրանները կը լարեն ցեխոտ դաշտերուն եւ ջուրերուն մէջ: Օսմանիէ քաղաքին մօտերը անոնք հայ գաղթականներու հաւաքական գերեզմաններ կը տեսնեն:

Մամուրիէէն Իսլահիէ երթալու համար Արսէնեանները երեք ուղտ կը վարձեն: Ամանոսի լեռներուն վրայ անոնք ականատես կ'ըլլան հայ գաղթականի դաժան ճակատագրին ենթարկուած հայ ապրող թէ նահատակուած խլեակներու տառապանքին: Ամանոսի լեռներուն գագաթը հասնելէ յետոյ դէպի Ինթիլիի վայրէջքին վրայ անոնք վախեր կ'ապրին ձիւնին պատճառով: Ինթիլիէն անցնելով վերջապէս կը հասնին Իսլահիէ, ուր կը մնան քսան օր: Տէր Արսէնը թրքական կառավարութեան զարմանալի կարգադրութեամբ հայ գաղթականներու շատ քիչ քանակութեամբ հաց կը բաժնէր Իսլահիէի մէջ եւ անոնց համար գործ կը ճարէր Պերլին-Պաղտատ երկաթուղիի շինարարութեան մէջ: Կտոր մը չոր հացի կողքին, անոնք թրքական զանազան վայրագութիւններ ալ կը ճաշակէին: Շատեր կը մահանային եւ մէկ փոսի մէջ կը թաղուէին: 1915-ի Դեկտեմբերի սկիզբն էր:

Արսէնեանները կը հասնին Գաթմա: Տարածայնութիւններ կը շրջին, թէ շուտով Հալէպ պիտի մեկնին: Իբրեւ դեղագործ, Յակոբ Արսէնեան յոյս ունէր Հալէպի մէջ պաշտօն մը ստանձնելու: Շոգեկառքը ճամբայ կ'ելլէ, սակայն Հալէպէն մէկ կայարան առաջ՝ Միւսլիմիէի մէջ, շոգեկառքը իր ուղղութիւնը փոխելով դէպի Ռաս-իւլ-Այն կ'ընթանայ: Յուսահատութիւնը կը պատէ Արսէնեանները, որովհետեւ անոնք լսած էին այդ վայրի դաժան դէպքերուն մասին: Արդարեւ, երբ անոնք կը հասնին Ռաս-իւլ-Այն,

Թուրք ոստիկանները անոնց կ'արգելեն ջուր ճարել: Հանգստանալու ժամանակ չի տրուիր: Առտուն թուրքերը զանոնք կրկին ճամբայ կը հանեն դէպի անապատ՝ սուլիններ եւ մտրակներ գործածելով: Յակոբ Արսէնեան իր ընտանիքին փոխադրութեան համար եզներ եւ ջորիներ կը վարձէ: Երկար եւ յոգնեցուցիչ ճամբորդութեան մը ընթացքին Յակոբ մազապուրծ կ'ազատի աւազակի մը ճիրաններէն: Գիշերով գիւղ մը կը հասնին: Յակոբի մայրը՝ Մարիամը ու մէկ տարեկան զաւակը՝ Նորայրը իրենց ետին, ճամբուն վրայ մնացած էին: Յակոբ երկու արաբ կը վարձէ ու զանոնք ետ կը դրկէ՝ մայրն ու որդին փնտռելու համար, սակայն անոնք ձեռնունայն կը վերադառնան: Առտուն թուրք ոստիկանները զանոնք կը ստիպեն ճամբայ ելլել: Եւ կարաւանը կ'ընթանայ: Վերջապէս, կը հասնին Պապ: Սակայն Յակոբի մայրն ու կրտսեր որդին ո՞ւր էին:

Յաջորդ օրը Յակոբին բարեկամները Նորայրը Պապ կը բերեն, իսկ օր մը ետք, մայրն ալ կը գտնուի: Վերջինս երեք անգամ կողոպտուած էր պետեւիներու կողմէ, սակայն անոնցմէ մէկը խղճալով հացով կերակրած էր զայն: Մայրը, իր կարգին, կերակրած էր մէկ տարեկան Նորայրը:

Պապի մէջ Յակոբ Արսէնեան թուրք զինուորական կառավարիչին եւ գայմազամին կը դիմէ իբր դեղագործ աշխատելու արտօնութիւն ստանալու յոյսով, սակայն կը մերժուի:

Թուրք ոստիկանները սուլիններով եւ զէնքերով բրտօրէն կը յարձակին Պապի վրանաքաղաքին վրայ եւ գաղթականները կրկին ճամբայ կը հանեն: Երեք օրուան դժուար, յոգնեցուցիչ եւ վտանգաւոր ճամբորդութիւն մը կը կատարեն: Ճամբուն վրայ շատերը ինկած եւ մեռած էին: 12 Դեկտեմբեր 1915-ի երեկոյեան կարաւանը կը հասնի հայոց նշանաւոր եղեռնավայրերէն Մեսքէնէ: Գաղթականներէն

մաս մը նաւակներով Եփրատն անցնելով դէպի Տէր Զօր կը մեկնի: Յակոբ Արսէնեան իր ընտանիքով եւ բարեկամներով Մեսքէնէ կը մնայ քանի մը շաբաթ: Աւելի ուշ ան կ'իմանայ, թէ գաղթականները դէպի Տէր Զօր փոխադրող նաւակները յարձակումի ենթարկուած են եւ շատերը՝ մեռած: Մեսքէնէի գաղթականները երեք շաբաթ ահաւոր նեղութիւն կը կրեն, ոմանք, այդ թիւին՝ Յակոբի մայրը՝ Մարիամը հիւանդութիւններէ կը մահանան: Ամէն գիշեր աւազակները գաղթակայանին վրայ կը յարձակէին եւ խեղճերը կը կողոպտէին: Յակոբի հագուստները, մէջը գտնուած 17 օսմանեան ոսկիով, կը գողցուին:

Յակոբ Արսէնեան Մեսքէնէի մէջ կը հիւանդանայ: Դրամ վճարելով եւ ուրիշ դեղագործէ մը վկայագիր ճարելով, ան քանի մը օր դարձեալ աքսորուելէ զերծ կը մնայ: Այս միջոցին Յակոբ սաստիկ յուսահատութեան եւ սարսափի մէջ կ'իյնայ: Իր շուրջը գտնուող քանի մը բարեկամներ կը մահանան:

Տակաւին չապաքինած, ոստիկանները Արսէնեանն ու իրենները կը ստիպեն ճամբայ ելլելու: Շատ տկար վիճակի մէջ, ան ստիպողաբար ոտքի կը կանգնի եւ ճամբայ կ'իյնայ: Երկու կառքեր վարձելով, ան իր ընտանիքին հետ կ'ընթանայ անորոշ ուղղութեամբ: Կարաւանը ձորի մը մէջէն անցած ատեն աւազակներ կը յարձակին, սակայն ոստիկանները օդը կը կրակեն եւ գողերը կը փախչին: Ոստիկաններն իրենց վարձատրութիւնը կը ստանան ... հայ գաղթականները կողոպտելով:

1915 տարուան վերջին օրը կարաւանը կը հասնի Տիփսիի կայարանը, ուր հազարաւոր գաղթականներ բնակութիւն հաստատած էին՝ սաստիկ թշուառութեան մէջ: Ապրուստի նեղ պայմանները, հիւանդութիւններն ու անօթութիւնը չէին բաւեր կարծէք, աւազակները ամէն օր կը կողոպտէին

զանոնք: Բարեկամներով կը հաւաքուին Յակոբ Արսէնեանի վրանին տակ եւ Նոր Տարին կը տօնեն բարեմաղթանքներով: Յաջորդ օր կը մահանայ Յակոբի մօրաքրոջ որդին՝ Պետրոս Փաշա Վարնաժեանը: Կաշառքի շնորհիւ, գաղթականները քանի մը օր հանգիստ կ'առնեն: Սակայն վերջապէս պէտք էր շարունակել Գողգոթայի ճանապարհը: Ֆիզիքական տկարութեան գերի դարձած Յակոբը հագիւ կը շարժէր՝ իրեն հետ քարշ տալով իր սիրելիները: Կը հասնին Հիւսիսային Սուրիոյ Ապու Հարար անապատը: Աքսորի ճամբուն վրայ չթաղուած դիակներ կը տեսնեն: Նոյն թշուառութիւնը կը տիրէ նաեւ Ապու Հարարի մէջ: Յակոբ Արսէնեանի ընտանիքը եւ ուրիշ բարեկամ ընտանիքներ, Տէր Արսէն քահանան եւ ուրիշներ կը յաջողին հոն վեց ամիս մնալ կաշառքի շնորհիւ: Յակոբ թրքական խանի մը մէջ չէրքէզ հիւանդ մը կը բուժէ կոկորդի սաստիկ բորբոքումէ: Վերջինս իրենց խրատ կու տայ այլեւս չշարունակել իրենց ճամբան դէպի Տէր Զօր, ու Տէր Զօրի մէջ իրեն ազգական պատասխանատուին գրութիւն մը կը դրկէ՝ Արսէնեաններուն տուն մը ապահովելու եւ ջարդէ ու աքսորէ հեռացնելու խնդրանքով:

Արսէնեաններուն եւ անոնց բարեկամներուն Ապու Հարարի մէջ անցուցած վեց ամիսները լի են տխուր դրուագներով: Ամէն օր ականատես կ'ըլլային թրքական վայրագութեանց: Յակոբ գաղթականի մաքրութեան պատասխանատու նշանակուած էր: Թուրք ոստիկանները յաճախ վրաններուն վրայ կը յարձակէին եւ երբեմն ալ կարգ մը վրաններ կրակի կու տային: Հարիւր հազարաւոր հայ գաղթականներ կու գային եւ դէպի Տէր Զօր կը քշուէին: Ամէն առտու մասնաւոր մեռելահաւաքներ կը շրջէին եւ դիակները սայլերով կը տանէին: Անօթութիւնն ու ծարաւը մշտական ներկայութիւն էին: Ապու Հարարի շրջակայքի արաբներէն

ուտելիք գնելու արտօնութիւն կը վերցնեն ոստիկաններէն՝ աղաչանքով եւ պաղատանքով: Դրամը հատածները քանի մը օր մուրալէ յետոյ կը մահանան: Ուրիշներ, իբրեւ փրկութեան միակ միջոց, իրենք գիրենք Եփրատի ջուրերուն կը յանձնեն եւ անձնասպան կ'ըլլան: Եփրատը կը նետուին նաեւ գեղեցիկ կիներ եւ աղջիկներ՝ իրենց պատիւը պահպանելու համար: 1916-ի Ապրիլն էր, եւ գետին ջուրերը բարձրացած էին: Արսէնեանները ընտանեօք կը հիւանդանան: Դեղագործ Յակոբը անոնց հոգ կը տանի՝ այնուհետեւ ինք ալ հիւանդանալով երեք շաբաթ պառկելու համար: Նոյն տարուան Մայիսի վերջաւորութեան, թրքական զինուորական պատուիրակութիւն մը Ապու Հարարի գաղթականները կ'այցելէ եւ արհեստաւորներ կը հաւաքէ Մեսքէնէ տանելու համար: Յակոբ Արսէնեան եւս իբրեւ դեղագործ կ'արձանագրուի:

9 Յունիս 1916-ին Յակոբ Արսէնեան իր ընտանիքով Մեսքէնէ կը փոխադրուի հոն իբրեւ դեղագործ աշխատելու համար: Ան Ապու Հարարի դժոխային մթնոլորտէն ազատելու եւ վերջապէս Հալէպ հասնելու յոյս ունէր: Երբ կը հասնին Մեսքէնէ, սելիքաթ մէմուրի (տարագրութեան պատասխանատու) չէրքէզ Հիւսէյն պէյը գիրենք անմիջապէս Ապու Հարար վերադարձնելու հրաման կ'արձակէ: Սակայն Մեսքէնէի մէջ ծառայող զինուորականի մը միջամտութեամբ Յակոբ Արսէնեան կը յաջողի հոն մնալ: Հաճրնցի Աւետիս անունով վաշխառու բժիշկ մը իր պաշտօնը շարաշահելով խեղճ գաղթականները կը նեղէր եւ կը կեղեքէր: Մեսքէնէի գաղթականին մէջ անտանելի վիճակ մը կը տիրէր: Յակոբ Արսէնեան կ'ուզէր անպայման Հալէպ հասնիլ ազատելու համար այդ նեղութիւններէն: Ան Հալէպի մէջ կրնար գործ մը ճարել եւ ընտանիքին ապրուստը հոգալ:

Օր մը Յակոբ Մեսքէնէի գաղթականին պատասխանատու

զինուորական փոխանորդին արտօնութեամբ քանի մը ընկերներով Հալէպ կ'երթայ: Հոն երկար փնտռութիւններէ ետք թրքական բանակին մէջ իբրեւ ղեղազոր զաշտօնի կը կոչուի բժիշկ Պաղտասար պէյի միջամտութեամբ: 28 Յուլիս 1916-ին Յակոբ թրքական բանակին կողմէ Երուսաղէմ կը ղրկուի: Նախքան մեկնելը ան պէտք եղած կարգադրութիւնները կը տեսնէ որպէսզի Մեսքէնէ գտնուող իր ընտանիքը յետագայ աքսորէ զերծ մնայ եւ արտօնագիրով (վեսիքա) օժտուի:

Յակոբ Արսէնեան 3 Օգոստոս 1916-ին Երուսաղէմ կը հասնի: Ան կ'ուղղուի Սրբոց Յակոբեանց վանքը, ուր այդ օրը հայերը կ'ողջունէին իրենց նոր պատրիարքը՝ Սիսի Սահակ Կաթողիկոս Խապայեանը (թրքական կառավարութիւնը վերացուցեր էր իր տարածքին գործող Հայ Եկեղեցւոյ նուիրապետական Աթոռները եւ ստեղծեր էր «Կաթողիկոսութիւն Թուրքիոյ Հայոց» անունով կառուցը՝ կաթողիկոս կարգելով մինչ այդ Կիլիկիոյ Կաթողիկոս Սահակ Բ. Խապայեանը, նստավայրը՝ Երուսաղէմ - խմբ.): Յակոբ հոն հին բարեկամներ կը գտնէ: Անոր ամէնէն մեծ մտահոգութիւնը Մեսքէնէ գտնուող ընտանիքը իր մօտ բերելն էր: Այս ուղղութեամբ ան բազում ճիգեր կը թափէ եւ Հալէպ կը մեկնի թրքական բանակէն ստացած մասնաւոր արտօնութեամբ: Երբ կը հասնի Հալէպ, ընտանիքը հոն կը գտնուէր արդէն: Բոլորը միասին Հալէպէն կ'ուղղուին դէպի Երուսաղէմ, ուր կը հասնին 25 Սեպտեմբեր 1916-ին:

Պաշտօնի բերմամբ երբ Յակոբ Արսէնեան Պաղեստինի Եաֆա քաղաքէն 5 քմ. հիւսիս-արեւելք Մասուտիէ աւանը կը հասնի, բրիտանացիք կը գրաւեն Երուսաղէմը 9 Դեկտեմբեր 1917-ին: Յակոբ իր խումբով Տամասկոս կը ղրկուի: Երբ ան շատ մտահոգուած էր իր ընտանիքին համար եւ չէր

կրնար անոնց հետ կապ հաստատել, յանկարծ կը լսուի, որ էնվեր փաշան հրահանգած է բոլոր հայ զինուորները մէկ տեղ հաւաքել: Ստուգապէս, ասիկա սպանդի համար էր: Թուրքերն սկսած էին Տամասկոսի մէջ դաղթական հայ ընտանիքները ձերբակալել: Յակոբ օսմանեան բանակի իր մեծաւորին կողմէ դէպի Միջերկրական Ծովէն 15 քմ. դէպի արեւելք պաղեստինեան Թուրքարմ քաղաքին ճակատը կը ղրկուի: Բրիտանացիք յանկարծ այս քաղաքին վրայ կը յարձակին: Թուրքերը սարսափի կը մատնուին: Ամէն կողմ մեռեալներ եւ վիրաւորներ: Բրիտանացիք օղանաւերով կը ռմբակոծեն թրքական դիրքերը եւ կը գրաւեն Թուրքարմը: Յակոբ Արսէնեան գերի կ'իյնայ 19 Սեպտեմբեր 1918-ին: Այս կ'ըլլայ իր փրկութեան սկիզբը: Ան այլեւս ազատած էր թրքական վայրագութիւններէն: Բազմաթիւ թուրք զինուորականներ իրեն հետ գերի ինկած էին: Անկէ ետք անոնք կը փոխադրուին Քանթարա՝ Սուէզի ջրանցքի ասիական ափին վրայ, անցնելով Կազայէն, Ռաֆահէն, Էլ-Արիշէն եւ ուրիշ բնակավայրերէ: Այնուհետեւ կը հատեն ջրանցքը ու յաջորդաբար Իսմայիլիա, Զակազիկ եւ Պէնհա քաղաքները կը տարուին:

Յակոբ Արսէնեան իր անգլիացի մեծաւորին աղերսագիր մը կը ներկայացնէ, խնդրելով իր ընտանիքին միանալու հնարաւորութիւն տալ իրեն: Քառասունհինգ հայ գերիներ գլուխ-գլխի հաւաքուած էին եւ թշուառ պայմաններու տակ իրենք զիրենք ուրախ կը փորձէին պահել: Օր մը անոնք հայկական թերթէ մը կը ստանան Պօղոս Նուպար փաշայի ղեկավարութեամբ Ազատ Հայաստան մը հիմնուելուն լուրը:

Յակոբ Արսէնեան եւ ուրիշներ վերջապէս ազատ կ'արձակուին եւ Երուսաղէմ կը մեկնին 7 Յունուար 1919-ին: Յակոբի ուրախութիւնն աննկարագրելի կ'ըլլայ երբ ան կը

վերամիանայ իր ընտանիքին:

142-145-րդ էջերուն մէջ հեղինակը կու տայ ցանկը իրեն հետ բրիտանացիներուն քով գտնուած հայ գերիներուն: Յաջորդ էջերուն մէջ տպուած են զանազան լուսանկարներ, որոնք կը հարստացնեն այս փաստագրութիւնը:

Գիրքին երկրորդ՝ «Սփիւռքի Յուշեր - Կեանք Պաղեստինի Մէջ - (1919-1940)» խորագրուած մասին մէջ Յակոբ Արսէնեան կը պատմէ յաջորդ տարիներու իր անձնական յուշերն ու անցուղարձերը:

Թարգմանողն ու ծանօթագրողը՝ Արտա Արսէնեան-էքմէք-ճին գիրքը օժտած է նաեւ օգտագործուած աղբիւրներու, անձնանուններու եւ տեղանուններու ցանկերով:

Թորոս Թորանեան, «Հայ Բժիշկներ Եւ Բուժաշխատողներ Սուրիոյ Մէջ», խմբագիր՝ Անի Թորոսի Թորանեան, տպարան «Ոսկետառ», Հալէպ, 2012, միջակ չափի 272 էջ, մեկենասներ՝ Արմէն եւ Սալբի Յարութիւնեաններ (Պէյրուժ)

Այս հատորին մէջ բժիշկ եւ գրող Թորոս Թորանեան ընթերցողին կը ներկայացնէ երախտաշատ բազմաթիւ բժիշկներու եւ բուժաշխատողներու կենսագրութիւնները: Ան ենթականերէն շատերուն հետ անձամբ տեսնուած է:

Բոլոր նշուած անուններուն տերերը՝ բժիշկ, աստամնաբոյժ, դեղագործ, մանկաբարձ, բուժքոյր կամ տարբալուծող, մաս կազմած են բժշկական մեծ ընտանիքին եւ ծառայած Սուրիոյ ժողովուրդին: Հեղինակը կը գրէ. «Բժշկութիւնը գերազանցապէս մարդասիրական, մեծ նուիրում պահանջող գործ մըն է»:

Մենք պիտի կեդրոնանանք Մեծ Եղեռնի կամ հայոց տառապանքին վկայութեանց եւ ակնարկութեանց վրայ, որոնք կ'երեւան վերապրող բժիշկներու կամ բուժաշխատողներու կենսագրութեանց մէջ: Պարզապէս գրեթէ նոյնութեամբ կը մեջբերեմ հետեւեալ թուագրեալ ցանկով:

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐ
ԵՒ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐ
ՍՈՒՐԻՈՅ ՄԵՋ

ՀԱԼԷՊ 2012

Ա. Մաս - Ընդհանուր եւ ներքին հիւանդութեանց մասնագէտ բժիշկներ

- Յովհաննէս Հրեշտակեան - Մնած է 1868-ին, Ուրֆա: Եղած է նուիրեալ հանրային գործիչ: Տարագրութեան շրջանին իբր գերմանական երկաթուղային գիծի պաշտօնեայ բժիշկ, կարելին ըրած է հայ տարագիրներուն օժանդակելու համար: Նոյն ձեւով օգտակար եղած է հայոց, երբ Հալէպի կայարանի պաշտօնեայ բժիշկն էր: Բերիոյ (Հալէպի) թեմի Ազգային ժողովին մէջ եղած է Գաւառական ժողովի անդամ ու Քաղաքական ժողովին ատենապետը (էջ 23, թիւ 33):

- Յովակիմ Յովակիմեան - Մնած է 1878-ին, Բալու: Նախնական կրթութիւնը կը ստանայ Ատանա, յիսուսեաններու մօտ: Զինք թէոտոր Կամպուր կը կոչէին: Կաղ ու կուզ եղած է, բայց կառքէն ինկած ու կաղութիւնը բուժուած էր (այսպէս է բնագիրին մէջ - Յ. Ի.): Մեծ դժուարութիւններէ անցած է: Նաևու մը ածխապահեստին մէջ գաղտնի ապաստանելով, կը հասնի Պոլիս: Հազիւ հասած, հայոց կոտորուիլը տեսնելով ուշաթափ կ'ըլլայ: Աչքը կը բանայ հայկական եկեղեցիի մը մէջ: Պատրիարքէն գործ կը խնդրէ: Ի վերջոյ կը հասնի Ատանա, ուր կ'ամուսնանայ, կ'ունենայ հինգ զաւակ, որոնցմէ երկուքը բժիշկ կը դառնան: Մտերիմ եղած է բժշկապետ Ասատուր Ալթունեանին: Պիոս ԺԵ. պապը 1921-ին զայն ոսկէ շքանշանով պարգեւատրած է:

Կը մահանայ 25 Սեպտեմբեր 1929-ին՝ ուղեղային արիւնագեղումէ (էջ 24, թիւ 36):

- Ճորճ Ապօ - «Քանի մը տարի առաջ մահացաւ բժիշկը: Ինծի կ'ըսէր, թէ իրենք զէյթունցի են, մականունով՝ Աբրահամեան: Տարագրութեան ժամանակ Հալէպ հաստատուելով

Ապօ կարճ մականունը որդեգրած են», - կը գրէ Թորոս Թորանեան:

1876-ի Զէյթունի ապստամբութենէն ետք բժիշկին մեծ հօր՝ Աբրահամին հայրը Հալէպ եկած է: Աբրահամեանները հարիւր տարիէ ի վեր Հալէպ կը բնակին: Մեծ հայրը գիրքեր հրատարակած է արաբերէնով: Պատմած է, որ իր հայրը ո՛չ միայն լաւ հայերէն գիտէր, այլեւ՝ հայերէնով գրութիւններ ալ ունեցած է:

Ճորճ Ապօ ծնած է 1918-ին, Հալէպ: 1948-ին աւարտած է Պէյրութի Ֆրանսական Համալսարանի բժշկական ճիւղը: 1958-ին կը մեկնի Փարիզ եւ ուսանելէ յետոյ կը դառնայ մարսողական հիւանդութեանց մասնագէտ:

Հեղինակին հետ զրոյցի աւարտին բժիշկ Ճորճ Ապօ կը յարէ. «Մօ ես հայ եմ, ինչպէս Վարդան Մամիկոնեանը»:

«Հնչիւններն ու շեշտը արաբական էին...», - ցաւով կը նշէ Թորոս Թորանեան (էջ 25, թիւ 38):

- Ֆրանսուա Շատարեւեան - Մնած է 1904-ին, Մարաշ: Հայրը՝ Յովհաննէս, տարագրութեան առաջին օրերուն Սուրիա եկած է ու այլեւս չէ վերադարձած Մարաշ: Եօթը մանչ, երկու աղջիկ ունեցած է (էջ 26, թիւ 39):

- Օգոսթին Յովնանեան - «Պարտաճանաչ բժիշկի համբաւ ունի, այդ մասին լաւ վկայութիւններ կան: Կը պատմեն, թէ աղքատ հիւանդները ո՛չ միայն անվճար կը բուժէր, այլ՝ երբեմն դրամ ալ կու տար:

Շրջան մը բժ. Օգոսթին հայ կամաւորներուն կ'օգնէ: Թրքական կառավարութիւնը զինք մահուան կը դատապարտէ, բայց քանի որ ինք ժամանակին թուրք կնոջ մը կեանքը փրկած էր, որուն ամուսինը սելիքաթի (տարագրութեան) պետն էր, զայն ազատ կ'արձակեն:

Բժ. Օգոսթին Յովնանեան իր հայրն ու եղբայրը սպաննող

Թուրքերն իսկ բուժած է» (էջ 26-27, թիւ 40):

- Նազարէթ Տէր Պողոսեան – Ծնած է 1892-ին, Այնթապ: Հայրը՝ Ռաֆայէլ, երաժշտասէր եղած է, քանոն նուագած է եւ երգիչներու ու երաժիշտներու խումբ մը ունեցած է:

Հայ աւետարանականներուն դպրոցը աւարտելէ յետոյ, ուսումը կը շարունակէ Այնթապի Կեդրոնական Թուրքիոյ Գոլէճին մէջ, զոր կ'աւարտէ 15 Յունիս 1912-ին: Մէկ տարի ուսուցչութիւն կ'ընէ Այնթապի Ներսէսեան Վարժարանին մէջ:

22 Սեպտեմբեր 1913-ին կ'ընդունուի Պէյրութի Ամերիկեան Համալսարանի բժշկական բաժինը: Չորս տարի ուսանելէ յետոյ կը զօրակոչուի, այնուհետեւ ուսումը կը շարունակէ ու կը վկայուի Պոլիսէն: Բանակին մէջ հարիւրապետ բժիշկի պաշտօն կը վարէ, իսկ աւելի ուշ՝ Սուրիոյ Թարթուս նաւահանգիստին մէջ իբրեւ Ֆրանսական պետական պաշտօնեայ բժիշկ կը ծառայէ: Կ'աշխատի նաեւ Արուստ կղզիին մէջ:

7 Փետրուար 1921-էն մինչեւ նոյն թուականի 17 Նոյեմբերը կ'աշխատի Ատանայի մէջ որպէս բժիշկ:

«Ինծի հետ խօսած պահուն Միհրան Տամատեանը կը յիշէ եւ Կիլիկիոյ անկախութեան երազային հռչակումը: Երբ Ֆրանսացիք կը պարպեն Կիլիկիան, ինք կ'անցնի Լաթաքիա, իսկ 1922-ին՝ Եգիպտոս, ուր վեց ամիս որպէս բժիշկ շոգենաւի մը վրայ կ'աշխատի: Այդ պաշտօնէն հրաժարելով, կրկին Լաթաքիա կու գայ, ուր իր դարմանատան մէջ կ'աշխատի երկու տարի:

Այնթապի մէջ գոլէճական եղած միջոցին Ուսումնասիրաց Ընկերութեան վարիչներէն եղած է, ուր իր գործընկերները եղած են դեղագործներ Մովսէս Թէրզեանը, Երուանդ Նազարեանը, Միհրան Պալրզեանը, ուսուցիչ Լեւոն Թ. Լեւոնեանը, Ատուր Լեւոնեանը, Վերապատուելի Ենովք Հատիտեանը,

Յակոբ Շնորհօքեանը, Սարգիս Պալապանեանը, Կարապետ Խալֆէեանը եւ ուրիշներ:

Այնթապ հրատարակած են «Ուսում» անուն ամսագիր մը: Բոլորն ալ ազգին ծառայելու տենդով մը տոգորուած էին, բայց տարագրութիւնը պիտի ցրուէր զիրենք:

15 Յունիս 1924-ին բժիշկը կ'անցնի Գըրըք Խան, ուր կ'աշխատի 19 տարի: 10 Հոկտեմբեր 1942-ին թրքական իշխանութիւնները որպէս սուրիացի զայն Հալէպ կը դրկեն շղթայակապ, տիրանալով անոր կալուածներուն: Շրջան մը՝ 1944-1953, որպէս պետութեան պաշտօնեայ բժիշկ աշխատած է: 27 Յուլիս 1969-ին, իր իսկ դիմումին հիման վրայ, հանգստեան կոչուած է, երբ արդէն վատառողջ էր:

Բժիշկը երաժշտասէր էր ու կը սիրէր ջութակ նուագել: Ան 1926-ի Դեկտեմբերին կ'ամուսնանայ բժ. Գարապաճագեանին քրոջ՝ Ազգանոյշին հետ ու երեք մանչ զաւակներ կ'ունենան: Միշտ պատրաստ եղած է ազգին ծառայելու թէ՛ նիւթապէս եւ թէ՛ բարոյապէս: Իր մեծագոյն ցանկութիւնը եղած է ազգը միշտ համերաշխ տեսնել:

Բժիշկին սնարին վերեւ 132 նահատակուած հայ մտաւորականներուն նկարը կար միշտ» (էջ 27-29, թիւ 42):

- Աբրահամ Երէցեան-Քասսիս – Ծագումով եագուպիէցի է: Ան կը պատմէ, թէ իր հօր մեծ հայրը Եագուպիէ ծնած է:

Բժիշկ Երէցեանը արաբական աղբիւրներէ կ'իմանայ, որ հայերը Ռուճի հովիտի շրջանին մէջ աւելի քան հազար տարի առաջ հաստատուած են: Շրջանը կը գտնուի Ճէպէլ Ալաուի(ին)ի եւ Ճէպէլ Ուասթանիի միջեւ, Հարէմէն մինչեւ Ճըսը Էլ-Շուղուր: Հարէմը Աղեքսանտրէթի Սանճագի բանալին եղած է: Եագուպիէցիները սերունդէ սերունդ զբաղած են իրենց հողերը մշակելով, միաժամանակ ձէթի առեւտուր ընելով Անտիոքի ու Հալէպի հետ:

Երբ թուրքերը կը ճնշեն չրջակայ գիւղերուն հայերը, լատինները 1912-ին կը փորձեն որսալ լուսաւորչական եագուպիէցի հայերը: Գիւղին բնակչութիւնը ժամանակաւորապէս լատին կը դառնայ: «Մեծ հայրս՝ Աբրահամն ու եղբայրը կ'ընդդիմանան: Յետագային, Արտաւազդ Սիւրմէեան Սրբազանի օրով հայրս Հալէպ կու գայ ու կը պատմէ եղածը: Ան գիւղ կ'երթայ ու ետդարձ մը կը կատարուի: 1930-էն ասդին գիւղը դպրոց կ'ունենայ եւ մենք կ'իմանանք մեր հին ազգանունը՝ Շահպագեան: Մեր գերդաստանին մէջ քահանաներ շատ եղած են, մեծ հօրս մեծ հայրը Տէր Գրիգորը եղած է, իսկ մեծ մօրս հայրն ալ՝ Տէր Թադէոսը: Ժամանակին Եագուպիէի մէջ չորս եկեղեցի ունեցած ենք, այսօր Ս. Աննա եւ Ս. Հռիփսիմէ եկեղեցիները կը մնան: Միւս երկուքը եղած են Ս. Թէոդորոս եւ Ս. Գէորգ եկեղեցիները» (էջ 30-31, թիւ 46):

- Ասատուր Խաչատուրի Գոնեալեան - Ծնած է 1897-ին, Գարաման (Գոնիայի չրջան): Նախնական ուսումը ստացած է ծննդավայրի ազգային դպրոցին մէջ: Ինք է ըսողը. «Բոլոր սարսափները տեսած եմ, կեանքիս ամբողջ ընթացքին աչքերուս առջեւ են իրենց սեփական գերեզմանները փորող մեր եղբայրները: Անկարելի է մոռնալ այդ բոլորը: Նոր սերունդը պէտք է այդ մասին գիտնայ եւ սերունդէ սերունդ պէտք է իմանան մեզի պատահածին մասին» (էջ 33, թիւ 48):

- Արսլան Գասպար (Պերճ Արսլանեան) - Ծնած է 1908-ին, Խարբերդի չրջանի Մեզիրէ գիւղաքաղաքը: Արսլանեանները ազգին բժիշկներ տուած են թէ՛ Սուրիոյ եւ թէ՛ Իտալիոյ մէջ:

Արսլան Արսլանեանը իր ծնունդէն մինչեւ 1915 կը մնայ ծննդավայրին մէջ, ուր միայն մանկապարտէզ կը յաճախէ: Այս ընտանիքը 1916-ին եօթն օր բժ. Զարեհ

Արսլանեանին միջոցներով ջորիով ճամբորդելէ յետոյ, կը հասնի Հալէպ: Յետագային բժիշկը կը պատմէ, թէ Եփրատի ջուրերուն մէջ հայոց դիակներ տեսած են: Զինք պահողը, փաստօրէն, հօրեղբայրը կ'ըլլայ: Արսլան 1919-ին Ատանա երթալով, տարի մը յիսուսեաններու վարժարանը կը յաճախէ: 1921-ին փոքր նաւով մը Մերսինէն կ'անցնի Կիպրոս, ուր երեք-չորս ամիս մնալէ յետոյ, յունական նաւով մը ճամբայ կ'ելլէ: Յոյներն այդ նաւը կը գրաւեն: Հինգ շաբաթ կը մնան Միջերկրական Մովուն վրայ: 1922-ին կը հասնի Բիրէա: Աղեքսանդրիա կը հասնի ունեցած ամբողջ դրամը կորսնցուցած: Կը հանդիպի մօր ազգականին՝ Քիւրքճեանին, որու ընտանիքին օգնութեամբ կ'անցնի Պէյրուսթ, յետոյ ալ՝ Հալէպ, հօրեղբօր՝ բժիշկ Զարեհ Արսլանեանին քով (կը զգա՞ք այս թափառական կեանքին ահաւոր դժուարութիւնները): Հօրեղբայրը զայն կը զրկէ Պէյրուսթ, ուր տարի մը նախապատրաստականի ուսանող ըլլալէ յետոյ կ'ընդունուի տեղւոյն Ֆրանսական Համալսարանի բժշկական բաժինը, զոր կ'աւարտէ 1929-ին: Այդ ընթացքին, կը հիմնէ Հայ Ուսանողական Միութիւնը, որուն նախագահը կ'ըլլայ (էջ 34-35, թիւ 49):

- Սերժ (Սերոբ) Մաթոսեան - Ծնած է 1903-ին, Ճէպէլ Մուսայի Եողուն Օլուգ գիւղը, ուր 350 հայ ընտանիք կ'ապրէր: Նախնական ուսումը ստացած է ծննդավայրին, իսկ երկրորդականը՝ Այնթապի Վարդանեան Վարժարանին մէջ:

Ծննդավայր վերադարձած է 1915-ի Յուլիսին, երբ ժողովուրդը լեռ բարձրացած էր ինքնապաշտպանութեան համար: Տասներկու տարեկան իսկ չկար, երբ զէնքով կը մասնակցի այդ կռիւններուն: Քառասուն օրերու կռիւէն ետք, Ֆրանսական նաւ մը ժողովուրդը կը տանի Փոր Սայիտ (Եգիպտոս): Հոս, 13 տարեկանին, ուսուցիչ կ'ըլլայ

«Միսուլան» վարժարանին մէջ: Այդ օրերուն դպրոց այցի կու գան Միհրան Տամատեանն ու Վահան Թէքէեանը՝ ժողովուրդի վիճակին ծանօթանալու նպատակով: Բժիշկը կը պատմէ. «Այցի ընթացքին, երբ մեծ հիւրերը անունս հարցուցին, պատասխանեցի՝ Գեղարդ Շատոյեան: Գեղարդ դրի անունս, որպէսզի մեր ժողովուրդի թշնամիներուն կողմ խրիմ եւ Շատոյեան՝ որպէսզի չկշտանամ մեր թշնամիներուն կողմերը խրելէն: Համարձակութենէս ելլելով՝ զիս ուսանելու համար Եւրոպա զրկել ուզեցին, բայց ես ըսի, թէ չեմ ուզեր ժողովուրդէն բաժնուիլ:

Ուսանեցայ Փրանսական լիսէի մէջ, ի Փոր Սայիս: Հոն, 1916-ին ուսանողական շարժում ստեղծեցինք: Բանակ մտնել ուզեցի, ուզեցի կռուիլ թուրքին դէմ: Մուսա Լերան երիտասարդներուն անունով նամակ մը գրեցի Փրանսական բարձր քոմիսարիատին: Նախ ըսին, թէ փոքր եմ, բայց յետոյ որպէս կամաւոր ընդունեցին: 18 Յունուար 1917-էն մինչեւ 1920 Սեպտեմբեր 10՝ կամաւոր եղայ: Ապա դարձայ Կեդրոնական Միութեան «Արարա» թերթին խմբագիրը: Ահա՛ այդ թերթէն մէջբերում մը. «Մօտ օրէն հայ լեզուականներու «Ղարիպ» թատերախումբը Մերսինի մէջ պիտի բեմադրէ Շիրլանզատէի «Պատուի Համար»ը»: Ահա՛ նոյն թերթին մէջ տպուած տող մըն ալ. «Քալէ, հայ զինուոր, զարհուրանքը իր վրանը տնկած է սպառնացայտ, մեր պապենական հողերուն վրայ» (էջ 39-40, թիւ 56):

- Քիմիագէտ Տօքթ. Ռուբէն Խաչատուրի Մուրատեան – Բնիկ վանեցիի այս որդին ծնած է 1912-ին, Վանայ շրջանի Սեւան գիւղին մէջ: 1915-ին կ'անցնի Արեւելեան Հայաստան, 1917-ին ընտանեօք կը վերադառնան Վան: Վանի հայութեան վերջնական տեղահանութենէն ետք կ'անցնի Խոյէն, Դիլմանէն, Պաղտատէն եւ Նահր էլ-Օմարի որբանոցներէն: Բժիշկը կը պատմէր. «1918-ի Մայիս 28-ի

անկախութիւնը որբերս Պագուպայի մէջ մեծ խանդավառութեամբ նշեցինք: 1918-1922-ին վրաններու տակ ապրեցանք: 1922-ին փոխադրուեցանք Երուսաղէմ: Մեր դասախօսներէն յիշեմ Գէորգ Միսուլեանը, Օննիկ Թաղէ-ոսեանը, Սարգիս Թոփչեանը, Խորէն Երէցեանը եւ ուրիշներ:

1926-ին Պէյրութ եմ, «Քէլէկեան» որբանոց: Կահագործ եղայ հոն: Մայրս գտայ Լաթաքիոյ մէջ, ուր հիւանդանոցի մը մէջ կ'աշխատէր: 1930-ին կը հաստատուիմ Լաթաքիա եւ նոյն տարիէն պետական գոյծին մէջ չորս տարի շարունակ Փրանսերէնի ու արաբերէնի կը հետեւիմ: 1933-ին պետական տարրալուծարանի աշխատող եմ, եւ այդ գործը կը վարեմ 37 տարի անընդմէջ, մինչեւ թոշակի անցնիլս՝ Յուլիս 1970: Յետոյ սեփական տարրալուծարանս կ'ունենամ: Հ. Բ. Լ. Մ. ի վեթերան անդամ եմ: Մանկութեանս անցած եմ Սարդարապատէն, էջմիածնէն ու Երեւանէն: Կրկին երթալ կ'ուզեմ: Մեր ժողովուրդը մէկ ճամբայ ունի՝ Մայր Հողին վրայ համախմբուիլը»: Ահա՛ Մուրատեան քիմիագէտին եզրակացութիւնը» (էջ 41-42, թիւ 58):

Հեղինակը հաւաքած է նաեւ հայ դեղագործներու կենսագրութիւնները: Պիտի յիշեմ միայն անոնք, որոնց կենսագրութեանց մէջ ակնարկութիւն կայ Հայոց Յեղապանութեան մասին:

Բ. Մաս - Դեղագործներ

- Սեդրակ Յովսէփեան – Ծնած է Հալէպ, 1899-ին, սասունցի ծնողներէ: Հայրը 1895-ի ջարդի շրջանին Տալուորիկէն եկած է Հալէպ: Սեդրակ աւարտած է Հալէպի ազգային վարժարաններէն մէկը, ապա յաճախած է Պէյրութի Սեն

ժողովի Ծրանսական Համալսարանը, այնուհետև Զուլի-
ցերիա երթալով աւարտած է Լոզանի դեղագործական հա-
մալսարանը (1919-1923) (էջ 97, թիւ 7):

- Սարգիս Սէլեան (1880-1970) - Շուրջ յիսուն տարի
աշխատած է Հալէպի իր սեփական դեղարանին մէջ՝ Հոգետան
դիմաց: Դեղարանը կոչած էր «Դեղարան Արշալոյս»:

Սէլեանը իր ծննդավայրի՝ Նիկոմեդիոյ ծխական
դպրոցն աւարտելէ յետոյ մէկ տարի ուսուցչութիւն
կ'ընէ հոն: Հետեւելով Պոլսոյ Օսմանեան Համալսարանի
դասընթացներուն, 1905-ին, Ելլաթի պոմպային օրը
աւարտած է ուսման ընթացքը: Սէլեան 1905-1907-ին
Սամսոնի մէջ կ'աշխատի իբրև պետական դեղագործ: Պաշ-
տօնի բերմամբ կը փոխադրուի Սիվրիհիսար, ուր 1910-
ին կ'ամուսնանայ եւ այնուհետ կ'ունենայ իր սեփական
դեղարանը: Շուտով կը լծուի ազգային հասարակական
աշխատանքներու ու Պոլսոյ մէջ հանրածանօթ դէմք կը
դառնայ:

1914-ին Անգարայի մէջ բանակային դեղագործ էր: 1915-
ին կը վերադառնայ Սիվրիհիսար, ուրկէ գայն կ'աքորեն
Ռաքթա, ուր կը կորսնցնէ իր ընտանիքի անդամներէն
քառասուն հոգի: Ինք հրաշքով ողջ կը մնայ ու կը
նշանակուի առողջապահութեան ցանցի պաշտօնեայ: Այդ
չրջանին ստոյգ մահէ կ'ազատէ բազմաթիւ հայ որբեր ու
տարագիրներ (էջ 99, թիւ 11):

- Վազգէն որդի Սարգիսի Սէլեան - Ծնած է 1911-
ին, Սիվրիհիսար: Իր կնքահայրն էր Տօքթ. Սուրէն
Նշանեանը, որուն թուրքերը կախաղան բարձրացուցին
կեսարիոյ մէջ: Վազգէն իր նախնական կրթութիւնը կը
ստանայ ծննդավայրին մէջ: 1915-ին կը գաղթեն Ռաքթա,
ուր կը մնայ 1916-1917 տարիներուն: Ան պատմած է
«Ռաքթայի մէջ էրզրումցի օրիորդ Սաթենիկ մը կար, որ

մեզի՝ փոքրերուս հայերէն գրել-կարդալ կը սորվեցնէր այդ
անպատին մէջ» (էջ 100, թիւ 12):

- Հրանդ Սերայտարեան - Ծնած է Մարաշ, 1914-ին:
Հայրը օսմանեան բանակի զինուոր եղած է: 1915-ին շատ
զինուորներ, անօթի մնալով, ստիպուած կ'ըլլան խոտ ու-
տել, կը թունաւորուին ու խուժքով կը մեռնին:

Հրանդենք երեք եղբայր ու մէկ քոյր եղած են: Իրենց
ընտանիքը Մարաշի ջարդէն ետք՝ 1921-ին Հալէպ կու գայ,
բայց ճամբան երբ խուժքը Գաթմա կայարանը կը հասնի,
թուրք չէթէներէ կը կողոպտուի: Մազապուրծ ազատելով
մահէն՝ Հրանդ գրեթէ մերկ կը հասնի Հալէպ: Ան կը սորվի
քէմփի աւետարանական վարժարանին մէջ: Ընտանիքը կը
խնամէ մօրեղբայրը, որ հօր մը պէս կը հոգայ զիրենք: Հ.
Բ. Ը. Մ. ի կողմէ կը ստանան սեւ վրան մը, որու տակ ալ
կ'ապրին (էջ 109, թիւ 36):

- Գրիգոր Յարութիւնի Ճըլճըլեան - Ծնած է 1909-
ին, Մալաթիա: Ան կը պատմէ. «Կը յիշեմ այն օրը, երբ
թուրքերը բանտին մէջ հայրս լաւ մը ծեծելէ յետոյ, էշի
մը վրայ կիսանստած տուն բերին զինք: Ան Մաքթապի
Իրատէի եւ Լատիններու դպրոցներուն մէջ ուսուցիչ էր:
Մենք ձեւահիրեան կոչուած ենք նախապէս: Մեծ հայրս
Պոլիս երթալու ճամբուն վրայ կողոպտուած է: Վերադարձին
սկսած է մետաքսի գործով զբաղիլ: Մետաքս հիւսող գոր-
ծիքներուն ձայնը նկատի առնելով, մեզ Ճըլճըլենց կոչած
են, որն ալ մեր մականունին հիմքը դարձած է: Մեծ
հայրս միաժամանակ բժշկութեամբ զբաղած է: Իր երկու
հօրեղբայրները բժիշկներ եղած են՝ Սիմոն եւ Մկրտիչ
Ճըլճըլեաններ: Սիմոնը Եղեռնի շրջանին թրքական բանակին
մէջ սպաննուած է: Մկրտիչը առաջին պատերազմէն առաջ
մահացած է: Երկուքն ալ շրջանաւարտ եղած են Պէյրութի
Ծրանսական Համալսարանէն:

Մեր ընտանիքը առողջապահութեան ծառայող ընտանիք մը եղած է ու այդպէս ալ կը մնայ: Եղբօրս տղան՝ Յարութիւնը բժիշկ էր: Քրոջս տղան՝ Ժիրայր Գէորգեանը նոյնպէս բժիշկ էր: Քրոջս միւս տղան՝ Սարգիս Գէորգեանը դեղագործ էր: Տիկնոջս մեծ հայրը բժիշկ Պալթազար Պէյ Փափազեանն էր՝ ակնցի: Անոր գաւակը՝ Լեւոն Պէյ Փափազեան, Հալէպի քաղաքապետարանին բժիշկն էր մինչեւ 1945: Եղբայրը՝ Երուանդ Պէյ Փափազեանը դեղագործ էր: Լեւոնի որդին, Ճորճ Փափազեան վիրաբոյժ է Հալէպի պետական հիւանդանոցին մէջ:

Սաւրէթին էրմիշ (այսպէս է բնագիրին մէջ – Յ. Ի.) անունով թուրք մը, որ մեր ընտանիքին սերտ բարեկամն էր, չափէն աւելի մարդասէր ու բարի, ջարդերուն ու տեղահանութեան հոտը առած ըլլալով, մեր ողջ ընտանիքը հեռաւոր ագարակ մը փախցուց, ուր երեք ամիս մնացինք: Ճամբու ընթացքին դէպի Պէյլար Տէրէ եզան կառքով գացող կաթոլիկ մայրապետներու խումբի մը հանդիպեցանք: Յանկարծ կաթոլիկներուն ներում եկաւ: Ներումը ընդհանուր էր: Մենք նոյն բարեկամ թուրքին միջոցաւ Մալաթիա վերադարձանք ու հոն մնացինք մինչեւ 1922: Մեր տունը հիւանդանոցի վերածեցին: 1918-ին երբ ամերիկեան օգնութեան մարմինը եկաւ, դարձեալ մեր տունը որպէս հիւանդանոց օգտագործուեցաւ: Փոխարէնը մեզի սնունդ կու տային ու մեր ուսումը անվճար էր: Հակառակ այս բոլորին, նիւթական նեղութեան մէջ ըլլալով, ձմրան ցուրտին ու բուքին ծխախոտի թուղթ ու լուցկի կը ծախէինք: Մայրս վաղ առաւօտեան մեզ լալով կ'արթնցնէր: Քեմալական շարժումներուն ընթացքին հայերը դէպի Սուրիա սկսան գաղթել: Մալաթիոյ մէջ գործի անցաւ «Աթաշ Եըլտըրըմ» անուն կազմակերպութիւն մը, որ սկսաւ անհանգստացնել հայերը: Գիշերները կողոպուտի կ'ել-

լէին: Վայրենացած տիպեր էին: Այս պատճառաւ՝ գաղթը արագացաւ: 11 տարեկանիս, Հալէպ հասնելու համար 7 օր քալած եմ: Քառասուն ջորի ունեցող քարաւանի մը միացանք ու Հալէպ հասնելով կեցանք Հոգետան դրան դիմաց: Հօրաքոյրս մեզ գտաւ: Միայն վերմակ մը ու երեք դուրուշ ունէինք: Թիթեղաչէն խրճիթ մը հասանք, ուր արդէն երեք ընտանիք տեղաւորուած էր: Դուրսը քնացանք: Մտանք հայկական որբանոց, ուր Անդրանիկ Մառուկեանը մեզի հետ էր: Որբանոցին մէջ մնացինք 2-3 ամիս: Որբանոցին մայրիկը՝ տիկին Կարապետեան, մեզի սաղմոս կը սորվեցնէր: «Տէրը իմ հովիւս է, ես բանի մը կարօտութիւն պիտի չունենամ»: Օր մըն ալ թիւ 6-ի տղաքը մեզ Պէյրութ տարին: 1923 Օգոստոս 4-ին էր: Մառուկեանը մէկ ոսկի ունէր, որ մայրը տուած էր իրեն: Մեծ տղոց հետ գնաց, ծախսեց ու եկաւ: Ճիպէյլի որբանոցի ուսումնարանին մէջ մնացի երկու տարի: Մեր մէջ ազգային զգացում սերմանեցին: Որբանոցին մէջ խմորատիպ թերթ մը կը հանէին «Տուն» անունով, որուն սկսայ աշխատակցիլ: Որբանոցը ցրուել կ'ուզէին: Չիս Հալէպ ղրկեցին 1929 Օգոստոս 5-ին: Եկայ ու միացայ մօրս, եղբայրներուս ու քրոջս» (էջ 111-112, թիւ 37):

- Նափոլէոն Խաչատուրեան – Խարբերոցիներ Արթինի եւ Մարիամի որդին է: Թուրքեր հօրեղբայրները կը սպաննեն գաղթի օրերուն: 1915-ին թրքական սուրին զոհ կ'երթան նաեւ իր ծնողները:

Նափոլէոն Խաչատուրեան ծնած է 1903-ին, Հալէպի Ֆրանսական Գոլէճին մէջ իր ուսումը կիսատ կը մնայ: Կը մեծնայ որբանոցին մէջ, ուրկէ դուրս գալէն յետոյ 1918-ին, կը յաճախէ Ազգային Հայկազեան Վարժարան, ապա ուսումը կը շարունակէ «Թերրա Սանթա» Գոլէճին մէջ: Մէկ տարի Պէյրութի Ֆրանսական Համալսարանի նախապատրաստական

բաժանմունքի դասընթացքին հետեւելէ յետոյ չորս տարի կը մասնագիտանայ դեղագործութեան մէջ ու 1927-ին կը վկայուի: Անմիջապէս կը վերադառնայ Հալէպ, նախ կ'աշխատի ուրիշներու մօտ, ապա իր սեփական դեղարանը կ'ունենայ: Դեղագործ Խաչատուրեան կը պատմէ իր ողիսականը, գաղթի ճամբաներուն վրայ իր տեսածները: Պատմելու ընթացքին անկարող կ'ըլլայ զսպելու արցունքները: Ան կը պատմէ.

- Մեզ ամէն օր մահուան կը տանէին: Մայր ու աղջիկ մը մեռցնելու տարած էին: Մայրը եաթաղանի մէկ հարուածով մեռցուցին: Աղջիկը մեռած կարծեցին, բայց ան ողջ մնացած ըլլալով՝ գիշերով եկաւ ու մեր խումբին միացաւ:

Խարբերդէն շարժելէս ետք, երկրորդ օրը, մեր խումբին 14-15 տարեկան բոլոր պատանիները սպաննեցին: Տիար-պէքիրի, Մարտինի, Ռաս-իւլ-Այնի մէջ բազմաթիւ քղեցիներ ջրհորներուն մէջ լեցուցած էին: Անոնցմէ միայն երեքը ողջ մնացած էին: Մենք եւս պատահաբար ազատեցանք ստոյգ մահէն՝ Ռաս-իւլ-Այնի մէջ, հայու մը օգնութեամբ: Ճամբան անդադար կը խոչտանգէին մեզ: Երբ հասանք Տէր Զօր, մեզմէ շատ փոքր թիւ մը մնացած էր:

Դեղագործ Խաչատուրեան կ'եզրափակէ.

- Համերաշխութիւնը օղի ու ջուրի նման պէտք է մեզի (էջ 119-120, թիւ 51):

- Սամուէլ որդի Յակոբի Մանուչակեան - Ծնողները՝ Յակոբ եւ Տիւրզիլ՝ մարաշցիներ են: Սամուէլ ծնած է 1910-ին, Մարաշ: 1922-ին, Կիլիկիոյ պարպումին ընթացքին փոխադրուած են Հալէպ: Մեծ Եղեռնի տարիներուն, տարագրուած են մինչեւ Պէրէճիք, իսկ 1918-ին վերադարձած են Մարաշ: Սամուէլ կը յիշէ իրենց անօթութիւնն ու թափառումները, սարսափն ու զուլումը: Ան 1917-1935-ին ապրած է հայկական քէմփի թիթեղաշէն տուներէն

մէկուն մէջ: Յաճախած է Ղազանչի Պազարին մէջ գտնուող հայ աւետարանական դպրոցը, հոն իբրեւ ուսուցիչ ունենալով Արամ Շորօղլեանն ու Վերապատուելի Տիգրան Խրլոպեանը: Նոյն դպրոցի աշակերտներ եղած են Սարգիս Ապտալեանը (գրչանունը՝ Վահէ-Վահեան), Յարութիւն Գալայեանը եւ բժիշկ Ինկիլիզեանը: Սամուէլը եղած է առաջին աշակերտներէն Հալէպի Ամերիկեան Գոլէճին (Ալէփփօ Գոլէճ), որուն հայ աշակերտները այդ օրերուն 88%-ը կը կազմէին: Գոլէճը աւարտելէ յետոյ Մանուչակեան ուսուցչական պաշտօններ վարած է Արաբ Փունարի, Ազէզի եւ Տամասկոսի ազգային վարժարաններուն մէջ, դասաւանդելով անգլերէն, գիտութիւն եւ ուսողութիւն: Կոչումով ուսուցիչ այս հայը 1937-1941-ին ուսանող էր Պէյրութի Ամերիկեան Համալսարանին (A. U. B.) մէջ: Համաշխարհային պատերազմին պատճառով կիսատ կը ձգէ ուսումն ու աշխատանքի դաշտ կը մտնէ: Սակայն 1946-ին կրկին A. U. B. մտնելով՝ կը ստանայ Պսակաւոր Արուեստից (B. A.) գիտական աստիճանը, իսկ 1951-ին՝ քիմագիտութեան մասնագէտ դեղագործի վկայականը (էջ 123, թիւ 59):

Գ. Մաս - Ատամնաբույժներ

- Գրիգոր Եաղսրզեան - Ծնած է 1895-ին, Այնթապ: 1916-ին կ'աքսորուի Համա, ապա Լաթաքիա: 1920-ին կը մտնէ Տամասկոսի Համալսարանի ատամնաբուժութեան բաժինը, զոր 1923-ին աւարտելով, նոյն քաղաքին մէջ ալ կը հաստատէ իր դարմանատունը: 1927-ին կը գաղթէ Պրազիլ (էջ 137, թիւ 9):

- Ճանիկ Երանոսեան - Ծնած է 28 Նոյեմբեր 1916-ին, Տէր Զօր: Նախնական կրթութիւնը կը ստանայ Փրան-

սական դպրոցի մը մէջ: Քանի որ այդ օրերուն Տէր Զօրի մէջ հայկական դպրոց գոյութիւն չունէր, ան իր երկրորդական ուսումը կը ստանայ արաբական դպրոցի մը մէջ, իսկ բարձրագոյն կրթութիւնը՝ Տամասկոսի Բժշկական Համալսարանին մէջ (էջ 137, թիւ 18):

- Յարութիւն որդի Յակոբի Նազարեան - Ծնած է 1909-ին, Այնթապ: Ականատես եղած է չարչարանքին Անատոլուէն եկող գաղթականներու, որոնք աննկարագրելի խեղճութեամբ կը շարունակէին իրենց անստոյգ ճամբան: Այնթապցի ծնողներու դուստր մայրը՝ Ռահելը աւարտած է Այնթապի Աղջկանց Բարձրագոյն Գոլէճը եւ զբաղած է ուսուցչութեամբ, եղած է քաղաքին առաջին մանկապարտիզպանուհին: Առաջին տարագրութեան շրջանին, Նազարեանները Այնթապ մնացած են, իսկ երկրորդ տարագրութեան օրերուն՝ 1922-ին անցած են Հալէպ: Յարութիւնը 1918-1920-ին յաճախած է հայ երեք յարանուանութեանց միացեալ վարժարանը, իսկ Հալէպի մէջ՝ Հայ Աւետարանական Վարժարանն ու Ալէքսիոս Գոլէճը: 1936-ին աւարտած է Պէյրութի Ամերիկեան Համալսարանի ատամնաբուժութեան բաժինը (էջ 139, թիւ 20):

- Նիկողոս Քուլաճեան - Ծնած է 1901-ին, Եդեսիա՝ տեղաբնակ ծնողներէ: Հայրը, մայրը եւ երեք եղբայրները կը նահատակուին քաղաքի հայոց հերոսամարտի օրերուն: 1921-1922-ին Հալէպ կու գայ, յետոյ կ'անցնի Պէյրութ, ուր բաւական երկար ժամանակ կ'աշխատի ատամնաբուժի մը քով (էջ 140, թիւ 22):

- Խաչիկ Կարապետեան - Ծնած է 1911-ին, Սեւերեկ: Տարագրութեան ճամբուն վրայ թուրքերն սպաննած են հայրը՝ Կարապետը: Խաչիկը 1922-ին կը հասնի Հալէպ, ապա շուրջ երկու տարի կը մնայ Լիբանանի Մաամըլթէյնի որբանոցին մէջ: Վերադառնալով Հալէպ՝ Ազգային Հայկազ-

եան Վարժարան կը յաճախէ: Ատամնաբուժ դառնալէ յետոյ, 43 տարի կ'աշխատի այդ մասնագիտութեամբ (էջ 141, թիւ 23):

- Ովսաննա Մկրտիչի Պէկեան - Ծնած է 1906-ին, Եդեսիա: Նախնական ուսումն ստացած է Եգիպտոսի մէջ: Տէր Զօրի մէջ, մեռելներու մէջ ողջ մնացած է: Արաբները երեք-չորս տարի խնամած են զայն: Որբահաւաքին՝ միացած է Հալէպի որբերուն: Հոս գտած է հօրեղբայրը՝ Արթին Պէկեանը, որ Եդեսիոյ մէջ ատամնաբուժ էր: Եգիպտոսէն վերադարձին, կը հաստատուի Համա՝ հօրեղբօր մօտ ու ատամնաբուժութիւն կը սորվի: Ֆրանսացիներուն մօտ քննութիւն յանձնելէ յետոյ, կը ստանայ որպէս ատամնաբուժ աշխատելու արտօնութիւն, որով եւ ծայր կ'առնէ իր աշխատանքային կեանքը (էջ 141, թիւ 24):

- Եղիշէ Էքմէքճեան - Բնիկ պարտիզակցի: Ազատած է Տէր Զօրի դժոխքէն: Ականատեսը եղած է մօր եւ երկու քոյրերու մորթուելուն: Նոյն դժնդակ օրը հայրն ալ շղթայակապ տարած ու գնդակահարած են: Եղիշէ Տէր Զօրի մէջ արաբներու մօտ կը պատսպարուի: Հինգ տարի հոն մնալէ յետոյ կը յայտնուի Համայի մէջ, ուր կը ծանօթանայ ատամնաբուժ Արթինին, որմէ կը սորվի արհեստը: Արթինի մահէն ետք 1934-ին կ'ամուսնանայ Ովսաննային հետ: Կ'ունենան երկու որդի եւ մէկ դուստր ու երկուքով կ'աշխատին Սելիմիէի իրենց դարմանատան մէջ: Որդիներէն Յովհաննէսը ծնողքին արհեստը սորվելով, կը շարունակէ աշխատիլ Համայի մէջ (էջ 141, թիւ 25):

- Գեղէոն Էրմոյեան - Ծնած է 1913-ին: Հայրը խարբերոցի է, մայրը՝ կեսարացի: Որպէս տարագիր, նախ Լաթաքիա եկած են, ապա հաստատուած են Թարթուս ու Սաֆիթա: Արհեստը սորված է Պէյրութի մէջ, Հիմրան Խաչատուրեանի մօտ: 1935-ին, Ֆրանսական բարձր կոմիսարիատէն Պէյրու-

թի մէջ ստացած է ատամնաբուժութեամբ զբաղելու թոյլ-տուութեամբ յատուկ վկայական: Ատկէ ետք էրմոյեանն անցած է Սուրիա, ուր ալ աշխատած է (էջ 142, թիւ 27):

- Գէորգ Հեքիմեան - Վկայեալ Սթամպուլէն ու Լոնտոնէն: Մահացած է 75 տարեկան հասակին, Լաթաքիոյ մէջ, 1951-ին, 45 տարի հոն աշխատելէ յետոյ: Հազարապետի աստիճան ունեցած է օսմանեան բանակին մէջ եւ բազմաթիւ շքանշաններ ստացած է: Իր պաշտօնին բերումով, ան շատ հայեր կրցած է փրկել Տէր Զօրէն (էջ 142, թիւ 31):

Դ. Մաս

Գիրքին մնացեալ մասին մէջ Թորոս Թորանեան կը գրէ բժշկական համալսարաններու եւ հաստատութեանց մասին: Կը բաւականանամ յիշատակելով անոնց անունները.

1. Տամասկոսի Բժշկական Համալսարան
2. Տամասկոսի Դեղագործական Համալսարան
3. Տամասկոսի Ատամնաբուժական Համալսարան
4. Պէյրուսի Ամերիկեան Համալսարան (A. U. B.)
5. Պէյրուսի Ֆրանսական Համալսարան

«Պատմութիւն» խորագրին տակ հեղինակը 164-167-րդ էջերուն մէջ կը գրէ Միջին Արեւելքի բժշկական հաստատութեանց մասին: «Իսլամէն Յետոյ» վերնագրին տակ (էջ 167-168), Թորոս Թորանեան կը խօսի արաբական բժշկութեան մասին (էջ 168-170): «Օսմանեան Տիրապետութեան Շրջան»-ի բժշկութեան մասին գրելէ յետոյ, հեղինակը հակիրճ ձեւով կը ներկայացնէ արաբական բժշկութիւնն ու արաբ ականաւոր բժիշկները՝ «Արաբական

Բժշկական Պատմութենէն» խորագրին տակ (էջ 170-178):

«Հայ Բժշկութիւն» խորագրին տակ, հեղինակը 179-րդ էջէն սկսեալ կը սկսի գրել Արեւելեան Հայաստանի, ապա նաեւ՝ Սովետական Հայաստանի բժշկութեան մասին:

Թորոս Թորանեան 192-207-րդ էջերուն մէջ կը ներկայացնէ Սուրիոյ եւ մասնաւորապէս Հալէպի հայկական հիւանդանոցները, ծննդատուները, դարմանատուներն ու ծերանոցը:

Այս գիրքին մէջ Թորոս Թորանեանի ներկայացուցած՝ բժշկական ասպարէզին ծառայած մարդիկ Հայաստանի եւ Կիլիկիոյ զանազան քաղաքներէն եւ գիւղերէն բռնագաղթեցուած, աքսորուած, տառապանքներու ենթարկուած հայեր ու անոնց յաջորդ սերունդներ են, որոնք իրենց ուսումն ստացած եւ կատարելագործումն իրականացուցած են ընդհատումներով ու մեծ դժուարութիւններով: Անոնք չոր ու ցամաք վայրերու մէջ Մեծ Եղեռնի բռնագաղթի եւ տառապանքներու բաժակը ցմրուր ըմպելէ յետոյ, բոլորն ալ, անխտիր, ծառայած են մարդկային վսեմագոյն զգացումներով եւ նուիրումով: Հայ բժիշկներ, ատամնաբույժներ, դեղագործներ, քիմիագէտներ եւ բուժաշխատողներ Պէյրուսի Ամերիկեան Համալսարանը (նախապէս՝ Սուրիական Բողոքական Գոլէճ), Պէյրուսի Սեն Ժոզեֆ Ֆրանսական Համալսարանը, Եւրոպայի զանազան համալսարաններ եւ մանաւանդ Մոնթելիէի հոչակաւոր համալսարանը, ինչպէս նաեւ Տամասկոսի Պետական եւ ուրիշ զանազան համալսարաններ աւարտելով, թուրքին կատարած ոճիրներուն պատասխան տուած են՝ ծառայելով մարդկութեան:

Անոնցմէ ոմանք Սուրիոյ մէջ հիւանդանոցներ, մայրանոցներ եւ տարրալուծարաններ հիմնելով՝ լաւագոյն ծառայութիւնը մատուցած են հասարակութեան:

Ահաւասիկ վկայութիւններ եւ ակնարկութիւններ, որոնք քաղուած են Սուրիոյ մէջ ծառայած հայ բժիշկներու, ատամնաբոյժներու, դեղագործներու եւ ընդհանրապէս բժշկական դաշտին մէջ աշխատած ու տակաւին աշխատողներու կենսագրութիւններէն: Հետաքրքրական երեւոյթ մըն է, թէ անոնցմէ շատերուն կեանքին մէջ թուրքին ի գործ դրած ցեղասպանութիւնը խոր վէրքեր բացած է, որոնք դեռ չեն սպիացած: Հայոց Յեղասպանութեան իբր արդիւնք, տառապանքները, գրկանքները եւ վերապրողներու հարգատներուն յուշերը վկայողներու կեանքին մէկ անբաժանելի եւ անմոռանալի մասը կը կազմեն: Հայոց Յեղասպանութեան մոռացումը եւ հերքումը ինքնին նոր ոճիր մըն է թէ՛ հայուն եւ թէ՛ համայն մարդկութեան համար:

Հեղինակն այս վկայութիւններն ու ակնարկութիւնները անձամբ լսելով, գրի առած է զանոնք: Բժշկական ասպարէզին այնքան կարեւոր բնոյթէն աւելի շեշտուած է 1895-1896-ի, 1915-1918-ի Մեծ Եղեռնի եւ ուրիշ ջարդերու յիշատակման անհրաժեշտութիւնը: Գալիք սերունդները պէտք չէ մոռնան...

Alexander Aintablian, «Clash of Souls» (Ալեքսանդր Այնթապլեան, «Հոգիներու Բախումը»), The United Printers and Traders, Պէյրութ, Թուական չէ նշուած (հաւանաբար՝ 1960-ականներու երկրորդ կէս), փոքր չափի 215 էջ

Ալեքսանդր Այնթապլեան ծնած է 1901-ին, Հալէպ: 1907-ին հայրը կը մահանայ եւ վեց տարեկան Ալեքսանդրը իր երկու եղբայրներուն հետ Մարաշի «Պէյթ Շալում» որբանոցը կը դրուի: Մեծ եղբայրը՝ Պօղոսը ութը տարեկան էր, իսկ փոքրը՝ Բիւզանդը, չորս տարեկան:

Առաջին քանի մը օրերը մռայլ կը թուին Ալեքսանդրի եւ Բիւզանդի համար: Բիւզանդ իր հայրը կը փնտռէր:

Ո՞վ էր իրենց հայրը: Ալեքսանդրի մեծ մայրը 12-13 տարեկան իր գաւազը Մարաշի Ս. Ստեփանոս նախակրթարանը կը տանի եւ վարժապետին կը յանձնէ: Առաջին օրը վարժապետը հաստ գաւազանի մը հարուածներով կը ծեծէ տղան: Բայց պատանի Փանոսը լուռ ու մունջ ծեծուելէ յետոյ, գաւազանը վարժապետին ձեռքէն կը խլէ եւ կը սպառնայ զայն ծեծել: Վարժապետը դասարանին մէջ մէկ անկիւնէն միւսը կը վազէ: Երբ ան իր տեղը կը նստի շնչասպառ, Փանոս գաւազանը սեղանին վրայ դնելով, կ'ըսէ՝ «Առ քեզի քու գաւազանդ, ես հոս եկած եմ սորվելու եւ ոչ թէ ծեծ ուտելու», ու կը լքէ դպրոցը: Ապա մայրը զայն Մարաշի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցոյ դպրոցը կը ղրկէ: Փանոս վեց տարուան դպրոցական ծրագիրը կ'ա-

CLASH OF SOULS



ւարտէ չորս տարիէն:

Փանոս անարդարութեան դէմ ըմբոստ մէկն եղած է: Ան 17 տարեկան էր, երբ կ'ընդվզի օսմանեան իշխանութեանց տուած թաղման արտօնագիրի մը դէմ, որուն մէջ թուրք միւլթիին հայոց դէմ չափազանց անարգական արտայայտութիւններ գրած էր: Փանոս յեղափոխական մարդ մըն էր, սակայն շատ գաղտնապահ ըլլալուն համար, անոր գործունէութիւնը անյայտ մնացած էր: Այդուհանդերձ, Ալեքսանդրի մայրը՝ Երեւակը լաւ կը ճանչնար իր ամուսինը՝ Փանոսը: Վերջինս իր կնոջ խօսած էր զինեալ ինքնապաշտպանութեան եւ իր գործունէութեան մասին: Փանոսի պահանջով՝ Երեւակ երդում ըրած էր գաղտնի պահել այս իրողութիւնը: Ալեքսանդրի հայրը ամուսնութեան զիշերն իսկ իր կնոջ հետ երկար խօսակցութիւն ունեցած էր այս նիւթին շուրջ: Փանոս Քրիստոսի՝ Ղուկասի Աւետարանին մէջ գրուած հետեւեալ խօսքը մէջբերած է իբր ինքնապաշտպանութեան պատուէր. «Բայց հիմա ան որ քսակ ունի, թող իրեն հետ առնէ, նոյնպէս ալ պարկը, եւ ան որ թուր չունի, թող իր հանդերձը ծախէ ու իրեն թուր մը ծախու առնէ» (Ղուկաս 22:36), ապա կէս գիշերէն ետք ազգային յանձնառութիւն մը կատարելու համար տունէն դուրս եկած էր: Փանոս Կ. Պոլիս կը մեկնի սուլթան Ապտիւլ Համիտի դէմ գործունէութեան մը համար: Ան Կ. Պոլսոյ մէջ կը ձեռքաւորուի եւ վեց ամիս կը մնայ բանտը, ապա փրկեան թրիփոլի կ'աքսորուի: Փանոս թրիփոլիէն կը փախչի եւ, Մարաշ գալով, իր քրոջ տունը կ'ապաստանի գաղտնի կերպով: Անապահով զգալով Մարաշի մէջ, յաջորդ օրը ան Հալէպ կ'երթայ, ուր ձեռագործ կերպասեղէնի գործարան մը կը հիմնէ: Այնուհետեւ ընտանիքը Հալէպ կը փոխադրէ եւ չորս օրդի ալ կ'ունենայ: 1907-ին Փանոս ընտանեօք Մարաշ կը վերադառնայ: Վեց ամիս թոքատապէ

տառապելէ յետոյ, ան կը մահանայ:

Վերադառնալով Ալեքսանդրի որբանոցի կեանքին, տեղին է յիշել, թէ 1909-ին 60 որբեր բաղնիքէն որբանոց վերադարձի ճամբուն վրայ թուրքերուն կողմէ յարձակումի կ'ենթարկուին Մարաշի Տիվանլը Չարչը կոչուած թաղին մէջ: Ուսուցիչ Յովհաննէս Ինկիլիզեանը եւ քանի մը որբեր ծանօթէն կը վիրաւորուին, որբերուն խումբը կը ցրուի: Ալեքսանդր տասը հոգինոց որբերու խումբի մը հետ հայապատկան ջրաղաց մը կ'ապաստանի: Քանի մը ժամ ետք թուրքերը ջրաղացին շէնքը կը խուժեն եւ երեք ջրաղացպանները կը մորթեն որբերուն աչքերուն առջեւ:

Յաջորդող օրերուն, ծաղկախտէ բռնուած Ալեքսանդրը Մարաշի գերմանական հիւանդանոցին մէջ կը բուժուի: Ապաքինուելէ յետոյ մայրը անոր կ'այցելէ որբանոցին մէջ:

Ա. Համաշխարհային Պատերազմի բռնկման պատճառով, գերմանացիք որբանոցին սաները 1914-ի Օգոստոսին տուն կը ղրկեն: Տուն վերադարձին առաջին օրը, Ալեքսանդրը մօր եւ երկու եղբայրներուն հետ անօթի կը քնանայ: Արեւածագէն առաջ, Ալեքսանդր տունէն դուրս կու գայ եւ քաղաքէն կը հեռանայ: Ան ամբողջ օրը վայրի նուշ կը հաւաքէ եւ երեկոյեան քաղաք դառնալով՝ հաւաքածները հայ խանութպանի մը կը ծախէ: Ստացած գումարով բաւարար ուտելիք գնելով՝ ուշ երեկոյեան տուն կը վերադառնայ:

1914-ի աշնան, Գերմանական որբանոցին տնօրէնութիւնը կը սկսի իւրաքանչիւր որբի ուտելիքին բաժինը ամսական դրութեամբ անոր տունը ղրկել: Ալեքսանդրի ընտանիքը չի բռնագաղթուիր (հեղինակը պատճառը չէ յիշած): 1917-ին, երբ Ալեքսանդր արդէն 16 տարեկան դարձած էր, գերմանական «Պէյթ Շալում» որբանոցէն 12 հայ տղոց հետ գերմանական բանակ կը ղրկուի: 1918-ին Ալեքսանդրը Պաղեստինի մէջ անգլիացիներու կողմէ գերի կը բռնուի: Յաջորդ տարուան

սկիզբին ազատ արձակուելով, ան կը վերադառնայ Մարաշ՝ իր մօր մօտ: 1920-ի Մարաշի երկրորդ ջարդին Ալեքսանդրի մայրը՝ Երեւակը եղբրական վախճան մը կ'ունենայ: Երեւակ շուրջ հազար հայերով թուրքերուն ձեռքը գերի կ'իյնայ: Ան տասնեակ մը պարմանուհիներով փախուստ կու տայ դէպի Փրանսացիներուն կեդրոնը: Սակայն ճամբան թուրք չէթէներ խուճը կը կեցնեն: Թուրք բարի պառաւ մը զանոնք չէթէներուն ձեռքէն կ'ազատէ եւ անոնց իր տան մէջ ապաստան կու տայ: Կարճ ժամանակ ետք, Փրանսացիք թուրք չէթէներուն դիրքերը կը ուժակոծեն: Չէթէները ատելութեամբ եւ ոխով կը լեցուին քրիստոնեաներուն նկատմամբ: Անոնք կու գան բարի պառաւին տունը եւ բոլոր հայ պարմանուհիները կը սպաննեն: Երբ կարգը Երեւակի կու գայ, պառաւը չէթէներուն կ'աղերսէ խնայել Երեւակի կեանքին, ըսելով թէ ան իսլամ կրօնքն ընդունած է արդէն: Չէթէներէն մէկը այս իրողութիւնը կ'ուզէ ստուգել Երեւակին խոստովանութեամբ: Վերջինս հաստատ կը մնայ քրիստոնէական հաւատքին վրայ: Թուրք չէթէն անոր մարմինը կացինի հարուածներով կտոր-կտոր կ'ընէ:

Վերադառնալով գերմանական բանակին մէջ Ալեքսանդրի զինուորագրութեան, ան գերման սպաներու հետ ինքնաշարժով Պոզանթինէն անցնելով Մերսին կ'ուղղուի: Ճամբուն վրայ, Ամանոսի լեռներուն մէջ, ինքնապաշտպանութեան նուիրուած հայ մարտիկներ զիրենք կը կեցընեն: Հայդուկները ասպետական եւ քաղաքակիրթ ձեւով կը վարուին գերմանացի սպաներուն հետ: Մերսինի մէջ Ալեքսանդր կը ծանօթանայ գերմանացի սպայի մը սպասուհիին՝ Քաթիային, որ մարաշցի հայ որբուհի մըն էր՝ իրեն գրեթէ տարեկից: Անոր տէրը վատ վերաբերում կ'ունենայ Քաթիային հանդէպ եւ զայն իր տունէն կը վտարէ: Ալեքսանդր Քաթիայի պաշտպան կը կանգնի եւ

զայն խաթուն պաճի անունով հայ կնոջ մը մօտ կը տանի: Պատերազմէն ետք, 1919-ին, Ալեքսանդր կրկին կու գայ Մերսին՝ Քաթիան տեսնելու: Ափսո՛ս, որ ճիշդ նոյն օրը Քաթիան ինքզինք թունաւորելով վերջ տուած էր կեանքի տառապանքներուն: Ան խման եւ անառակ մարդու մը հետ ամուսնացած էր՝ աւելի տանջալից վիճակի մատնուելով:

Ալեքսանդր Այնթապլեան գերմանական բանակին մէջ իր ծառայութեան օրերէն շատ դրուագներ կը պատմէ: Վիզի՝ բուն անունով Ազնիւ, զինուորական ապրանքներու բեռնակառքերու մէջ պահուրտած իրենց զօրակայանը կը հասնի: Տիգրանակերտցի այս աղջիկը շատ տառապանքներ կրած էր թուրքերու ձեռքէն (անոր ողիսականը տես 79-85-րդ էջերուն մէջ): Վիզի Ալեքսանդրի կը պատմէ:

«Տիգրանակերտի հարուստ առեւտրականներէն մէկուն աղջիկն եմ: Իսկական անունս Ազնիւ է, իսկ մօրս՝ Ռոզա: 1914-ի զօրահաւաքին հայրս փրկագին (պէտէլ) վճարելով գերծ կը մնայ զինուորագրութենէ: 1915-ի Փետրուարին, իմ զարմիկներէն մէկը բանակէն փախուստ տալով՝ մեր տան մէջ կը պահուրտի: Ան կը պատմէր, թէ ինչպէս թուրքերը հայ զինուորները զինաթափելով տաժանակիր աշխատանքի կը մղէին եւ ապա կը սպաննէին: Տիգրանակերտի մէջ շատ հայեր կախաղան կը հանուին եւ այրերը բանակ կը տարուին: Թրքական կառավարութիւնը երեսուն հազար ոճրագործներ բանտերէն ազատ արձակելով աւերիչ խուճբեր կը կազմէր՝ հայերը ջարդելու համար: Մենք ալ տեղահան եղանք: Բռնագաղթի ճամբուն վրայ մեզ նախ կողոպտեցին եւ ապա թուրք եւ քիւրտ խուճանը մեր կարաւանը ջարդեց: Ես եւ մայրս դիակներու մէջէն ողջ դուրս եկանք գիշերով եւ գետեգերքը ապաստանեցանք: Ապա մօտակայ գիւղի մը մէջ թուրք մը մեզ ազատեց: Թուրքին երկու կիները հոգ տարին մեզի: Մարդը խոստացաւ մեզ Տիգրանակերտ տանիլ:

Մայրս իրեն հետ գնաց՝ վերադառնալու նպատակով: Սակայն ան բնաւ ետ չեկաւ: Գիւղին մէջ լուր տարածուեցաւ մեր մասին: Թուրք ոճրագործներ զիս առեւանգեցին եւ Ատանա տարին: Ջիս չարաչար աշխատեցուն եւ աշխատավարձս խլեցին ձեռքէս: Փախուստ տուի եւ գերմանացիներուն մօտ ապաստանեցայ»: Ալեքսանդր Ազնիւին համար գործ կը ճարէ գերմանական զօրախումբին մէջ:

Տելեպէթի մէջ, Իզգէթ պէյ անունով զինուորական մը Ալեքսանդրը եւ Ազնիւր կը փորձէ խլել գերմանացիներուն ձեռքէն եւ իր մօտ աշխատեցնել: Երկուքն ալ կը մերժեն: Իզգէթ պէյ կը սպառնայ զանոնք մահով պատժել: Սակայն գերմանացիք կը յաջողին զանոնք ազատել եւ ետ բերել իրենց մօտ: Ալեքսանդրը գերմանացիներուն հետ Պաղեստին կը տարուի: Ան մանրամասնօրէն կը պատմէ անգլիացիներուն ձեռքն իր գերի իյնալը: Ապա 1919-ին Մերսին կը վերադառնայ: Կիլիկիոյ պարպումին՝ Ալեքսանդր Պաղեստին կը հաստատուի: Աւելի ուշ, 1943-ին ան կ'իմանայ Ազնիւի հերոսական մահը, որ պատահած էր 1920-ին՝ Կարսի մէջ: Չբաւականանալով իբր հիւանդապահուհի աշխատելով, Ազնիւ նախընտրած էր իր ազգին համար կռուիլ: Ան թուրքերուն դէմ զէնք բարձրացուցած էր եւ նահատակուած:

Հեղինակը կը շեշտէ, թէ հայերը իրենց յոյսը անգլիացիներուն, Ֆրանսացիներուն եւ ռուսերուն վրայ դրած էին: Ռուսերուն համար անոնք կ'ըսէին. «Քեռին կու գայ»: Սակայն այս բոլոր դաշնակից ազգերը հայոց յուսախաբուութիւն բերին: Անոնցմէ ամէն մէկն իր շահերը ունէր:

Ալեքսանդր Այնթապլեան իր կեանքին դրուագները կը մանրամասնէ: Ան կ'անդրադառնայ Ֆրանսիայէն գիւղի ինքնապաշտպանութեան: Արդարեւ, երբ 1915-ի Ապրիլին թուրքերը բռնագաղթի հրաման կու տան, Ֆրանսիայէն

հերոսները կ'որոշեն կռուիլ: Գիւղին մէջ կար միայն քսանմէկ հրացան, երեք ատրճանակ եւ երկու հազար փամփուշտ: Ինքնապաշտպանութեան կռիւները կը ղեկավարէ Գօգօ անունով հերոս մը: Թուրքերը գիւղին աղջիկները բռնաբարելու տարած էին: Գօգօ կ'ազատէ իր քոյրը եւ ուրիշ աղջիկներ՝ երկու վայրենի թուրք սպաննելով: Ապա թուրքերը Ֆրանսիայէն վրայ կը յարձակին: Գիւղին հարաւային կողմը զօրաւոր դիմադրութիւն ցոյց կու տայ: Թուրքերը կէս ժամ ետք կը նահանջեն՝ իրենց ետին մեծ թիւով սպանեալներ ու վիրաւորներ ձգելով: Սակայն ամբողջ գիւղը կարելի չէր փրկել սահմանափակ թիւով զէնքերով: Ֆրանսիայէն քաջերը գիշերով կը հեռանան գիւղէն, իսկ մնացեալները յաջորդ առտու ճերմակ դրօշ պարգելով՝ բռնագաղթի ճամբան կը բռնեն: Թուրքերը Ֆրանսիայէն վրայ կը կապեն եւ կը սպաննեն:

Գօգօն եւ իր խումբը Ամանոսի լեռները կ'ապաստանին եւ թուրքերուն դէմ կը կռուին մինչեւ 1918-ի զինադադարը: Քեմալականներու յարձակումներու շրջանին ան թուրքերուն դէմ կը կռուի Մարաշի մէջ: Երկրորդ բռնագաղթէն ետք Գօգօ Տամասկոս կը հաստատուի:

Հեղինակը՝ Ալեքսանդր Այնթապլեանը գիրքին վերջին մասով Տատրագոմ գիւղէն Ֆետայի Օհանի կնոջ՝ Արփոյի անարգ արարքին դրուագը կը նկարագրէ: Օհանի երկար բացակայութենէն օգտուելով, Արփօ փախուստ տուած էր քիւրտ երիտասարդի մը՝ Հասոյի հետ ու անոր կինը դարձած: Հայ Ֆետայիները Հասօն եւ Արփօն մահուամբ կը պատժեն: Օսմանեան բռնատիրութեան օրերուն, տարբեր ձեւով մտածելու եւ գործելու հնարաւորութիւն չկար:

ՅԱԻՆԼՈՒԱՄ

«Կեանքիս Յուշերն Ու Փուշերը», պատմեց Մաթիլտ Պէրպէրեան-Արապեան, գրի առաւ Յարութիւն Իսկահատեան, «Զարթօնք» օրաթերթ, Պէյրութ, 7 Մարտ 2012

Տիկին Մաթիլտ Պէրպէրեանին հանդիպեցայ 1992-ի ամառը: Եօթանասունչորս տարեկան տիկինը բնաւ չէր մոռցած իր կեանքին տխուր դրուագները, մանաւանդ հինգ տարեկան հասակին Զմիւռնիոյ (Իզմիր) աղէտի օրերը: Տիկին Մաթիլտ երբեմն թեթեւ ժպիտով, բայց ընդհանրապէս արցունքոտ աչքերով ինծի պատմեց իր կեանքին դրուագները: 1993-ին իր մահէն ետք, անոր դուստրը՝ Քրիսթին Արապեան-Աթալլան ինծի յանձնեց նկարներ եւ յուշատետրեր, որոնց մէջ գրուած են Մաթիլտի եւ անոր մօր՝ Երանուհի յուշերը, ինչպէս նաեւ Յունաստանի իրենց ծովեզերեայ գաղթակայանի կեանքին ու հիւրընկալ Լիբանանի մէջ, վերականգնումի իրենց առաջին քայլերուն նկարագրութիւնը:

«1922-ին Իզմիրի աղէտը առանց արդարացի պատճառի տեղի տրուած էր: Պարզապէս նախանձի եւ կիրքի մղումով գործադրած, անիմաստ քաղաքականութեամբ մը մեծահարուստներս տեղահան ըրած են, անպատշաճօրէն եւ բռնի կերպով: Թողելով իրենց հարստութիւնը եւ ինչքերը, հայերը որպէս քրիստոնեաներ գաղթած են դէպի Յունաստան: Այս գեղեցիկ վայրը ապաստանած են, սակայն զրկուած են իրենց հանգիստ կեանքէն, զոր տնօրինուած էր վայելել Աստուծոյ հրամանով: Մեր վարկին, ուսման եւ պատիւին հակառակ, Յունաստանի մէջ մէկ սենեակի մէջ ամէն ինչէ զրկուած ապրեցանք: Բարեկեցիկ կեանքի վարժուած եւ այդպէս մեծցած ըլլալով՝ շատ պահանջներ ունէինք: Անցեալի մեր պապենական աշխատանքով շահած հարստութիւններուն հակառակ, թշուառ կեանք մը

ապրեցանք: Շատ նեղութիւններ կրեցինք: Ա. Բ. Գ.-էն վեր-
սկսանք: Նոր քաղաքի մը մէջ, նոր եւ թշուառ կեանքով,
նոր ապրելակերպով մեզի անծանօթ վայրի մը մէջ եւ ոչ թէ
հարուստ Աթէնքի: Մեր հարստութեան մէկ ջնջին մասը,
որ մեզի հետ կրցած էինք բերել, այս անծանօթ վայրին
մէջ սպառեցինք: Ապրուստի համար բացառիկ ջանքով մը,
նոր թափով սկսանք վերականգնել ինչ որ փճացած էր:
Ստիպուեցանք Լիբանան փոխադրուիլ եւ կրկին սկիզբէն
կերտել մեր կեանքը: Յաջողեցանք բարեկեցիկ վիճակ մը
ստեղծել շնորհիւ մեր աշխատանքին, կարողութեան եւ
ուշիմութեան, որպէսզի մեր սիրասուն զաւակները մարդա-
վայել կերպով մեծցնենք, եւ ոչ թէ գնչուի նման ապրին:
Գաղթականութեան թշուառ պայմաններու վերջիշումն ան-
գամ մարդուս սոսկում կը պատճառէ»:

Այս խօսքերը Մաթիլտի յուշատետրէն առնուած են:

Կարապետ Պէրպէրեանի եւ Երանուհի Կղերունիի դուստրը՝
Մաթիլտ Պէրպէրեան ծնած է 1918-ին, Զմիւռնիա, ուր
Պէրպէրեաններն ու Կղերունիները ազնուական ընտանիքներ
եղած են: Երանուհի Կղերունի, որ զարգացած տիկին
մըն էր, հայկական դպրոցներու մէջ ձրիաբար Ֆրանսերէն
եւ գրականութիւն կը դասաւանդէր: Եղբայրը՝ Կարպիս
Կղերունին, Փարիզի մէջ քիմիագիտութեան դոկտոր էր, իսկ
հայրը՝ Յակոբը, Զմիւռնիոյ մէջ աղամանդի վաճառական:
Պէրպէրեան ընտանիքն ալ Իզմիրի մեծահարուստներէն էր
եւ ընդարձակ այգիներ ունէր: Երբ Մուսթաֆա Քեմալի
ոյժերը Զմիւռնիոյ վրայ կը յարձակին, հայոց եւ յոյներու
տունները կրակի կու տան եւ ժողովուրդը խուճապահար
դէպի նաւահանգիստ կը փախչի, Յակոբ Կղերունի իր
հարազատները առնելով կը փորձէ փախչիլ: Ան իբրեւ
աղքատ ծախուած, ոսկիներն ու աղամանդները հացերու
մէջ փաթթած եւ կապոցին մէջ դրած, կը փորձէ նաւ

բարձրանալ, սակայն զինուորները կը յաջողին յայտնաբերել
ոսկիներն ու աղամանդները: Անոնք Յակոբը կողոպտելով չեն
գոհանար. նաւահանգիստին մէջ, բոլոր գաղթականներուն
աչքերուն առջեւ կ'առեւանգեն Յակոբը: Աւելի ուշ կը
պարզուի, թէ վերջինս սպաննուած է:

Մաթիլտին մայրը՝ Երանուհին իր հագած հագուստին
եւ անոր կոճակներուն մէջ կրցած էր ոսկեդրամ պահել եւ
նաւ բարձրանալ իր ամուսնոյն՝ Կարապետ Պէրպէրեանին եւ
երեք զաւակներուն՝ Զօհրապի (ծնած 1914-ին), Մաթիլտի
(1918) եւ Կարպիսի (1921) հետ:

Կարապետ եւ Երանուհի իրենց տարած քանի մը ոսկեդր-
ամներով կը յաջողին իրենց զաւակներուն ապրուստը
ապահովել կարճատեւուն մը համար: Անոնք բացառիկ
ջանքով եւ աշխատանքով է, որ կը գոյատեւեն: Երանուհի
շատ ազդուած էր իր հօր կորուստէն, «վիրաւոր թռչունի
մը կը նմանէր»:

Իր հօր յիշատակին ան գրած է հետեւեալ քերթուածը,
որուն բնագիր ըլլալը կը հաստատենք:

Գաղթավայրէս

Ծնած եմ օտար գաղթավայր մ'հեռու
Հարազատ հայրս, թուրքին վաշխառու
Գերի է ինկած, ես հոս առանձին,
Կ'ապրիմ յոյսով մը, ձգուած իմ բախտին:
Ժպիտ մը տուր ինձ, Աստուած՝ բախտալի,
Կեանքն առանց հօր ի՞նչ բերկրանք ունի
Քեզ պաշտող մը ես պիտ ըլլամ յաւէտ,
Հայրական սէրը զգացուր ինձ գէթ:
Կեանքն անոյ է, որոնք հայր ունին

Դրամն ի՞նչ օգուտ ունի մանուկին:
Մայր մ'ունիմ վշտոտ, նա ալ ինձ նման
Կը սպասէ բախտին, տո՛ւր որ ժպտի ան:

Յունաստանի ծովեզերեայ գաղթակայանին մէջ կեանքը դաժան եղած է: Ձմեռները ցուրտ են, փոթորիկը կը սուրայ, տեղատարափ անձրեւները կ'ողողեն գաղթակայանը: Իսկ ամառները սաստիկ տոթը կը տառապեցնէ գաղթականները: Անօթութիւնն ու ծարաւը յաճախ կ'այցելեն անոնց: Այսպիսի պայմաններու մէջ զանազան հիւանդութիւններ կը տարածուին գաղթակայանին մէջ: Անոնցմէ ամէնէն յաճախակին ժանտատենդն էր, որմէ կը բռնուի Երանուհիի կրտսեր որդին՝ Կարպիսը: Ո՛չ բժիշկ կար, ո՛չ ալ՝ դարման: Կարպիս օրերով կը տառապի եւ ի վերջոյ կը մահանայ: Հօր առեւանգման ցաւէն տակաւին չամոքած, Երանուհին կրկին սուգի կը մատնուի: Ընտանիքը դառնապէս կ'ողբայ փոքրիկն Կարպիսի մահը 18 Մարտ 1923-ին:

Երանուհի իր ցաւը կ'արտայայտէ կսկծալի նոր քերթը-
լածով մը:

Հրեշտակիս

Չուարթ իր դէմքը, քաղցր գեղանի
Աչքերը խոհուն, նայուածքը արի
Մազերը գանգուր, նման հրեշտակի
Ճակատը բարձր, արդէն խելացի
Այժմ ինչու չապրի:
Քնքոյչ բերանը, նրբին շրթներով
Կոկոն մէր կարծես, վարդի թերթերով

Ձիւնի պէս ճերմակ, փափուկ այտերով:
Տեսնողը կ'ուզէր, համբուրել սիրով
Անկեղծ մի հոգևով:

Ծնողքին սէրը, յոյսն էր յաւէտ
Սրամիտ խելքը կը մեծնար իր հետ.
Երկու տարին չէր բոլորած թէեւ,
Բայց կը խոստանար, ապագայ մը մեծ:
Թող նա ապրէր գէթ:
Կ'ապրէր անգիտակ կեանքի դառնութեան,
Ժպիտը՝ մարած, զոհը բնութեան.
Հրեշտակս այրեց սիրտս մայրութեան,
Ինչ կար ապրեր ան:

Կարապետ եւ Երանուհի Պէրպէրեաններն իրենց միւս երկու զաւակներով Աթէնք կը մնան մինչեւ 1939 թուականը: Ապա Պէրպէր կը փոխադրուին: Հոս բազում ջանքերով կը պայքարին կեանքի դժուարին պայմաններուն դէմ եւ բարեկեցիկ վիճակի մը կը հասնին:

Մաթիլտի կեանքը քաջքշուած է գաղթակայանէ գաղթակայան, եւ եղած է կենցաղային վերիվայրումներով լեցուն, որոնք արտայայտած է թէ՛ իր յուշերուն մէջ, եւ թէ՛ իր մօր՝ Երանուհիի կարճ չափածոներուն մէջ, որոնք մեզի կը պարզեն այդ օրերու գաղթականներու յուզումներն ու ապրումները:

«Ասոնք են կեանքիս յուշերն ու փուշերը», - եզրակացուցած էր տիկին Մաթիլտ Պէրպէրեանը:


ԿԵԱՆՔԻՍ ՅՈՒՇԵՐՆ ՈՒ ՓՈՒՇԵՐԸ




Երանուհի Կղերունի-Պէրպէրեան
Yeranouhi Guegherouni-Berberian



Մաթիլա Պէրպէրեան-Արապեանը իր թոռներով
Mathild Berberian-Arabian with her grandsons



Երանուհիի ոտանաւորը իր գերի ինկած հօրը մասին
Yeranouhi's poem about her father in captivity



Երանուհիի ոտանաւորը իր ողբացեալ գաւկին՝ Կարպիս Պէրպէրեանի մասին
Yeranouhi's poem about her deceased son Garabis Berberian



Յակօր Կղերունի՝ ծախուած
Hagop Guegherouni disguised



Կարպիս Կղերունի Փարիզի Մէջ
Garbis Guegherouni in Paris





Զարին՝ Երանուհի, Կարապետ (նստած), Զօհրապ եւ Մաթիլա
Պէրպէրեաններ
From left: Yeranouhi, Garabed (seated), Zohrab and Mathild Berberians



Կարպիս Պէրպէրեան մահուան մահիճին մէջ
Garbis Berberian deceased

Մաթիլա
Պէրպէրեան-Արապեանի
ձեռագիր
յուշագրութենէն էջեր

Pages from Mathild
Berberian-Arabian's
handwritten
memoires



THE MEMOIRS AND THORNS OF MY LIFE

Published in Zartonk Daily Newspaper on 7 March 2012

Narrated by Mathild Berberian-Arabian

Written by Haroutune Iskahadian

I met Mrs. Mathild Berberian-Arabian in the summer of 1992. The seventy-four year-old woman had not forgotten the sad events of her life, especially the Disaster of Smyrna when she was five years old. Sometimes with a mild smile, but often with tears, Mrs. Mathild narrated to me the episodes of her life. After she passed away in 1993, her daughter Christine Arabian-Atallah gave me her photographs and notebooks, in which were written Mathild's and her mother Yeranouhi Guegherouni-Berberian's memoirs, in which was written the details of their life as refugees at a seashore camp in Greece and their first steps of reconstructing their lives in hospitable Lebanon.

"The Disaster of Smyrna (Izmir) took place in 1922 without any justifiable reason. Perpetrated and executed merely with the motivation of jealousy and savage lust, we the prosperous class of the city were driven out by force, without any respect, as a result of an absurd policy. Leaving behind their wealth and belongings, the Armenians, Christians by faith, were forced to emigrate to Greece. They were sheltered in that beautiful country, but were deprived of their comfortable lives, the enjoyment of which was denied to them contrary to God's will. Contrary to our prestige, education and honor, all of us were obliged to live in one room deprived of almost everything. Being used to living a decent life we had many requirements. Despite our wealthy past, we had a miserable

life in Greece, as we faced many difficulties. We started from the beginning, in a new city, with a new but miserable life. We adjusted with a new way of life in a foreign place, but not in prosperous Athens. The very small portion of our wealth which we could bring with us, was spent in this foreign place. With much effort and struggle, we succeeded in surviving and reconstructing our living again. Later, we were obliged to leave for Lebanon, where we succeeded in securing a decent living, thanks to our hard work, ability and cleverness. We lived a decent life, unlike the nomads, so that our children would also do the same. Even the mere remembrance of our refugee life terrified us."

This passage is an extract from Mathild's notebook.

Mathild Berberian, the daughter of Garabed Berberian and Yeranouhi Guegherouni, was born in Smyrna (Izmir) in 1918. The Berberians and Guegherounis had been noble families in Smyrna. Yeranouhi Guegherouni, an educated lady, used to teach French language and literature at the Armenian schools of Smyrna without expecting any payment. Her brother Garbis Guegherouni had a PhD in chemistry and was living in Paris, France, and her father Hagop was a diamond and jewelry merchant. The Berberian family was also one of the wealthiest families of Izmir and owned a lot of farms. When the forces of Mustafa Kemal attacked the city of Smyrna, they blazed the houses of the Armenians and the Greeks. The people fled and rushed to the port. Hagop Guegherouni gathered his family and made an attempt to flee. Disguised as a poor man and keeping his diamonds and gold coins in bread loaves wrapped in a bag, they rushed to the port and tried to get aboard a ship. However, Turkish soldiers discovered the diamonds and gold coins with Hagop. Not

only were they satisfied in robbing Hagop, but they also kidnapped him in sight of refugee women and children and took him away; later it was discovered that he was killed.

Mathild's mother Yeranouhi had secretly kept gold coins in her attire and in the buttons. She succeeded in getting aboard a ship with her husband Garabed Berberian and three children, Zohrab (born in 1914), Mathild (1918) and Garbis (1921).

For a short time, Garabed and Yeranouhi managed to secure a living for themselves and their children with some of the gold coins that they were able to bring with them. They survived with much effort and hard work. Yeranouhi was depressed by the shock of her father's kidnapping. She was like "an injured bird". In memory of her father she wrote the following poem:

From My Refuge

Born in a foreign refugee camp
My beloved father has fallen captive
In the hands of Turks; I am alone here
Living with hope, left to my destiny.
Grant me a smile, oh God of destiny,
A life without father, what passion has it?
Your worshipper shall I forever be,
Let me feel my father's love.
Life is sweet for those who have a father.
What good is money to a child.
I have a mother as miserable as I,
Give her luck, so that she would smile again.

Along the Greek seaside refugee camp life was cruel. Cold winters, storms, and rain showers tormented the camp. The severe hot weather during the summer season, on the other hand, severely distressed the refugees. Hunger and thirst often visited them. Under such conditions epidemics were spread in the camp and the most usual illness was typhus, with which Yeranouhi's youngest son Garbis was inflicted. There was neither a physician nor a cure. Garbis suffered of high fever for a few days and died. Yeranouhi's grief for her father's loss had not yet been forgotten when she lost her beloved son. The family mourned in distress Garbis' death on the 18th of March 1923.

Yeranouhi expressed her sorrow with another poem:

To My Angel

His joyous face, sweet and handsome
With deep eyes and a brave look,
Curly hair like an angel's
With a high forehead, already thoughtful
Why should not he live now?

Sweet mouth with delicate lips
He was a blossom with rose leaves;
White as snow, and soft cheeks
One would want to kiss with love
And sincere heart.

His parents' love was his everlasting hope,
His delightful mind thriving with him
Yet not completing two years in age;

He promised a great future to come
Should he live or not?

Living unaware of the severe life
His fresh breath forever I lost,
His smile extinguished, Nature's Sacrifice,
My Angel burned a Mother's heart.

Why did not he live?

Garabed and Yeranouhi Berberian stayed in Athens with their two children until 1939, after which they came to Beirut, Lebanon. First they made ends meet, and then with huge effort they worked hard and achieved a wealthy position.

Mathild had lived a refugee's life before she became a well-to-do lady. Her life was full of ups and downs as is expressed in her memoirs and mother Yeranouhi's poems. They express the feelings and sorrows of many a refugee life.

"THESE ARE MY MEMOIRS AND THORNS", had concluded Mrs. Mathild Berberian-Arabian.

Uprooted Armenian, Roaming Armenian, until when, until when?

Translated from Armenian to English by Haroutune Iskahadian on the 7th of March, 2012.

«Հայկական Յեղասպանութեան 97-ամեակ - Կիւլենիա Մաթոսեան-Փանոսեանի Ողիտականը», պատմեց Կիւլենիա Փանոսեան, գրի առաւ Յարութիւն Իսկահատեան, «Ազդակ» օրաթերթի Ապրիլեան Բացառիկ, 2012, էջ 164-166

Մարինոս Ղուկասեանը ծնած է 1888-ին, Գոնիա քաղաքէն 100 քմ. հարաւ գտնուող Գարաման գիւղաքաղաքը: 1915-էն առաջ, աւանն այգիներ եւ գեղեցիկ պարտէզներ ունէր: Բնակիչները մեծամասնութեամբ հայեր էին: Պոլսէն եկող շոգեկառքի հիմնական գիծը Գոնիայէն անցնելով Գարաման կու գար եւ մինչեւ Կիլիկիա կ'երկարէր: Բերրի այգիները հարուստ էին զանազան պտուղներով եւ մանաւանդ՝ խաղողով: Անտառներն ու պուրակները ծածկուած էին շոճիի ծառերով: Ջուրն առատ էր եւ պարտէզներն ու այգիները պէտք եղած քանակութեամբ ջուր կը ստանային:

1895-ին, Մարինոսի հայրն ու մայրը հիւանդութեան մը պատճառով իրարու ետեւէ կը մահանան՝ միակ դուստրը ձգելով ճակատագրի յորձանքին: Իրենց մօտիկ ազգականներէն Ուղուրլեան ամուլը Մարինոսը կ'որդեգրէ եւ հոգ կը տանի անոր: Մարինոս կը մեծնայ առանց իր որբ ըլլալն զգալու: Ուղուրլեանները զայն տասնչորս տարեկանին կ'ամուսնացնեն համաքաղաքացի Պետրոս Մաթոսեանի հետ: 1903-ին Պետրոսն ու Մարինոսը կը բախտաւորուին առջինեկ մանչ զաւակով մը՝ Յարութիւն: Յաջորդը աշխարհ կու գայ Կիւլենիան՝ 1905-ին: Պետրոս կառավարական պաշտօնեայ էր եւ լաւագոյնս կ'ապահովէր իր ընտանիքին ապրուստը: Ան հօրմէն ժառանգած էր քանի մը այգիներ, որոնց խաղողի բերքը կը վաճառէր: Յարութիւն եւ Կիւլենիա իրենց տան մէջ, ծնողքին հոգածութիւնը կը վայելէին: Յարութիւն տեղույն դպրոցը յաճախած ըլլալով, որոշ զարգացում ունէր:

1914-ին կը պայթի Ա. Համաշխարհային Պատերազմը

եւ ամէն ինչ տակնուվրայ կ'ըլլայ: Ինչպէս բոլորին, այս ընտանիքին հանգստութիւնն ալ կը խանգարուի: Զէնքերու հաւաքում, ձերբակալութիւն, ծեծ, խոշտանգում եւ ամէն տեսակ թրջավայել արարքներ ի գործ կը դրուին հայոց դէմ: Շնորհիւ իր պաշտօնին եւ թուրք բարեկամներուն, Պետրոս Մաթոսեան չարչարանքներէն միշտ ալ անվնաս դուրս կու գայ, սակայն տարի մը ետք, 1915-ի ամրան, բռնագաղթէն ընտանեօք գերծ չի կրնար մնալ: Սկիզբը կ'ընթանան շոգեկառքով, բայց քանի մը օր ետք՝ տարագրութիւնը կը շարունակեն ոտքով՝ կարաւանին հետ ուղղւելով դէպի արաբական անապատները: Ճանապարհին յաճախ կը պատահին կողոպուտներ, առեւանգումներ եւ սպանութիւններ: Իրենց աչքերուն առջեւ թուրք ոստիկան-զինուորները գեղեցիկ աղջիկներն ու հարսերը կ'առեւանգէին, կը բռնաբարէին եւ կամ ուրիշ թուրքերու կը վաճառէին: Կիւլենիայի գեղեցկութիւնը թաքցնելու եւ թուրքերու խենէշութիւններէն գերծ պահելու մտօք, Մարինոս իր դստեր մագերը կարճ կը կտրէ եւ անոր երեսին յաճախ ցեխ կը քսէ:

Ամբողջ Կիլիկիոյ դաշտը եւ Ամանոսի լեռները ոտքով կտրելէ յետոյ՝ կարաւանը կը մտնէ Հիւսիսային Սուրիա: Անոնք ճանապարհին վրայ հազար տեսակ տանջանքներ կը կրեն. անօթութիւնը, ծարաւը, անարգանքը, հիւանդութիւնն ու ծեծը սովորական բաներ էին: Թուրքերը կարաւանը երկու մասի կը բաժնեն: Մէկ մասը, որուն մէջ Պետրոս Մաթոսեանն ու անոր ընտանիքը, դէպի Հաուրան կը տանին, իսկ միւս մասը Տէր Զօր կը քշեն:

Մաթոսեան ընտանիքին համար Հաուրանի գաղթակայանին կեանքը դաժան էր: Հոս ալ սովն ու ծարաւը, ինչպէս նաեւ՝ հիւանդութիւններն անպակաս էին, ըմպելի ջուրը շատ դժուար գտանելի էր: Մարինոս օրն ի բուն դաշտերէն վայրի խոտեր կը հաւաքէր եւ ընտանիքն անոնցմով կը կերակրէր:

Յարութիւնն ու Կիւլենիան իրենց մօր օգնականներն էին: Պետրոս հիւանդ կը պառկէր եւ անկարող էր որեւէ ձեւով օգտակար ըլլալու իր ընտանիքին:

Թուրք հրոսակախումբեր յաճախ կը յարձակէին գաղթակայանին վրայ եւ աքսորեալներն իրենց ունեցած ոսկիներէն եւ զարդերէն կը մերկացնէին: Այս յաճախակի կողոպուտներուն իբրեւ հետեւանք, գաղթականները կեանքը քարշ կու տան կիսամերկ վիճակի մէջ: Այս տեսակ պայմաններու տակ, Պետրոս Մաթոսեան հիւանդութեան չդիմանալով, կը մահանայ: Մարինոս մօտակայ գիւղի արաբներուն տուններուն մէջ ծառայելով, իր զաւակներուն առօրեայ հացը կը հոգայ: Յաճախ կը պատահի, որ կտոր մը հացի ապահովութիւնն ալ կը զլացուի անոնց: Օր մը Կիւլենիա փոռի մը կրպակին վրայ շարուած հացերէն նկանակ մը կը գողնայ, եւ ծոցը պահելով կը սկսի փախչիլ: Քանի մը քայլ անդին, հացը վար սահելով գետին կ'իյնայ. ետեւէն վազող փռապանը զայն կը վերցնէ ու կը ծեծէ Կիւլենիան, որ դառնօրէն կու լայ հացի կորուստին համար: Ան Յարութիւնին հետ խոտեր հաւաքելու «գործ»ին կը վերադառնայ:

Մաթոսեան ընտանիքը չորս տարի կ'ապրի այս տեսակ դժուարութիւններով ու տառապանքներով լեցուն կեանք մը, մինչեւ որ 1918-ի վերջաւորութեան Ա. Աշխարհամարտը կ'աւարտի Թուրքիոյ պարտութեամբ: Հայոց մէջ ընդհանուր խանդավառութիւն կը տարածուի: Անոնք արդէն լսած էին նոյն տարուան Մայիսին Հայաստանի մէջ ազատ եւ անկախ պետութեան մը հիմնադրութեան մասին: Հայոց ուրախութիւնն օր ըստ օրէ կը մեծնայ: Անոնք կը տենչան իրենց ծննդավայրերը վերադառնալ: 1919-ի սկիզբին, աքսորեալ հայերը խումբ առ խումբ իրենց ծննդավայրերը կը սկսին վերադառնալ: Իր երկու զաւակներն առած, Մարինոս համաքաղաքացիներու խումբով մը կը մեկնի Հայէպ, ուրկէ

չոգեկառք նստելով՝ դէպի Գարաման կ'ուղղուին: Երկար, բայց ուրախ ճամբորդութենէ մը ետք խումբը Գարաման կը հասնի: Յարութիւն Մարինոսի հետ միասին իրենց կիսաքանդ տունը կը վերաշինէ: Կիւլենիա անոնց միշտ օգտակար կը դառնայ: Որբահաւաքի դրութենէն օգտուելով, 17 տարեկան Յարութիւնն իր ուսումը շարունակելու նպատակով կը միանայ որբերուն, որոնց մէկ խումբով Ֆրանսա կը մեկնի:

Մարինոս եւ Կիւլենիա կը յաջողին իրենց ապրուստը ճարել ասեղնագործութիւն բանելով Գարամանի մէջ: Սկիզբը կացութիւնը լաւ կը թուէր ըլլալ եւ հայոց յոյսերը մեծ էին. արդարեւ, քանի մը ջարդարար թուրք պատասխանատուներ իրենց պատիժն ստացած էին Պոլսոյ մէջ:

Գարամանի մէջ Մաթոսեան ընտանիքին ազգականներէն եւ բարեկամներէն ոմանք, որոնք նոյնպէս գաղթի անպատներէն վերադարձած էին, կարգադրութիւններ կը տեսնեն եւ Կիւլենիան տասնչորս տարեկան հասակին կ'ամուսնացնեն գարամանցի Կարապետ Փանոսեանի հետ: Կարապետ եւ Կիւլենիա Մարինոսն իրենց մօտ կը բերեն եւ միասին կ'ապրին:

Խաղաղութիւնը երկար չի տեւեր: Մթնոլորտը կը մթազնի քեմալական շարժման ծագումով եւ ծաւալումով: Թուրքերը Գարամանի մէջ կրկին գլուխ կը բարձրացնեն: Հոս կ'արժէ յիշել թրքական ոճրային դրուագ մը, որուն Մարինոս եւ Կիւլենիա ականատես կ'ըլլան: Թուրք զինուորներ գիշերով կը բախեն Կարապետ Փանոսեանի դրացիներէն մէկուն դուռը, որուն ետեւը կ'ապրէին յոյն մայր մը եւ անոր դուստրը, որոնք իրենց ապրուստը կը վաստակէին օղի պատրաստելով եւ վաճառելով: Գիշերուան այդ ժամուն, անոնք վախնալով գողերէ, չեն ուզեր դուռը բանալ: Կատրած թուրք զինուորները կը բարկանան, դու-

ռը կոտրելով ներս կը մտնեն եւ մայրն ու աղջիկը կը մորթեն: Այս դէպքը Գարամանի հայութեան վրայ սարսափ կը թողու:

Ահուդողի այս մթնոլորտին մէջ էր շրջանին հայութիւնը, երբ քանի մը օր ետք քեմալական ոյժերը հայ տղամարդիկը կը ձերբակալեն ու կ'աքսորեն: Կարապետ Փանոսեանն ալ կը ձերբակալուի եւ անձանօթ ուղղութեամբ կը տարուի:

Կացութիւնը հետզհետէ կը բարդանայ եւ հայերն ու յոյները կը սկսին փախչիլ Գարամանէն, ճիշդ այն օրերուն, որ քեմալականները Զմիւռնիոյ վրայ կը յարձակէին: Մարինոս եւ Կիւլենիա հազար ղժուարութիւններով եւ ամէն բան իրենց ետին ձգած՝ կը յաջողին նաև բարձրանալ եւ Յունաստանի Քորֆու կղզին հասնիլ գաղթականներու խումբով:

Գաղթակայանին մէջ Մարինոս եւ Կիւլենիա ղժուար օրեր կ'անցընեն: Անօթութիւնը, ծարաւը, հիւանդութիւնն ու զրկանքը իրենց մշտական ուղեկիցներն էին: Մայր ու աղջիկ կրկին ասեղնագործութիւն բանելով իրենց ապրուստը կը ճարեն: Քանի մը ամիս այսպէս ապրելէ յետոյ՝ յանկարծ իրենց մօտ կը յայտնուի ընտանիքին հայրը՝ Կարապետը, որ յաջողած էր աքսորէն փախուստ տալ, նաև բարձրանալ եւ Քորֆու հասնիլ: Կարապետ Կիւլենիայի եւ Մարինոսի կը պատմէ քեմալական զինուորներուն ի գործ դրած խժեթութիւնները: Թուրքերն ստիպած էին Կարապետը ուրիշ հայ կալանաւորներու խումբի մը հետ ոտքով, գիւղէ գիւղ եւ քաղաքէ քաղաք անցնելով Մուշ հասնիլ: Ճամբուն ընթացքին մերթ միւրճուելով եւ մերթ իյնալով ձիւներու մէջ, խեղճ հայերը տաժանակիր ճամբորդութիւն մը կատարած էին՝ Մուշի մէջ բանտարկուելու համար: Աւելի քան ամիս մը բանտին մէջ մնալէ յետոյ, թուրքերը զանոնք կրկին ճամբայ կը հանեն ու անձանօթ ուղղութեամբ կ'առաջնորդեն: Այս անգամ սակայն, Կարապետ Փանոսեանը


իրեն նման քանի մը քաջ եւ խիզախ հայ կալանաւորներու հետ կը յաջողի փախուստ տալ եւ մօտաւորապէս նոյն ճամբէն ընթանալով Միջերկրականի նաւահանգիստներէն մէկը հասնիլ (պատմող Կիւլենիա Փանոսեանը չի յիշեր քաղաքին անունը): Հոնկէ անոնք ապահով կերպով նաւ նստելով Քորֆու կը հասնին:

Քորֆուի գաղթակայանին մէջ Կարապետ անմիջապէս գործ մը կը ճարէ եւ ընտանիքին ապրուստը կը հոգայ: Սակայն գաղթակայանին դժուար պայմանները ծանր կը ճնշեն Փանոսեան ընտանիքին վրայ, որ ճարը կը գտնէ եւ նաւով Պէյրուս կը փոխադրուի:

Պէյրուսի մէջ Կարապետ Փանոսեան կօշկակարութիւն կ'ընէ եւ քանի մը տարուան ընթացքին բարեկեցիկ վիճակի մը կը հասնի: Կարապետ եւ Կիւլենիա կը բախտաւորուին երկու դուստրերով՝ մեծը՝ Ազատուհին կ'ամուսնանայ Յովհաննէս Իսկահատեանի հետ, կրտսերը՝ Մարգրիտը՝ Մարտիրոս Սրուբեանի հետ: Բոլորն ալ Պէյրուս կը հաստատուին:

Պէյրուս գալէ յետոյ Մարինոս եւ իր հարազատները Յարութիւնէն նամակ մը կը ստանան: Մայրը նամակներուն կը պատասխանէ եւ հաղորդակցութիւնը բնական հունի մէջ կը մտնէ: Մարինոս կը փափաքէր, որ զաւակը՝ Յարութիւնը Լիբանան հաստատուի, սակայն վերջինս կը նախընտրէր Մարսէյ մնալ: Սակայն պանդխտութիւնը անողոք հիւանդութեամբ մը կը հարուածէ Յարութիւնը եւ ան քսանութը տարեկան հասակին կը մահանայ օտար հողի վրայ:

Գարամանէն դէպի Պէյրուս եւ Մարսէյ, բռնազաղթի երկա՛ր ճանապարհ՝ թափառական հայուն վիճակուած:



Կիւլենիա Մաթոսեան-Փանոսեան
Gulenia Matossian-Panosian

In 1914 The First World War erupted and turned their lives upside down. As every family, the War had negatively affected the comfort of this family too. Confiscation of weapons, arrests, beatings, torture and all kinds of deeds which were proper to the Turks were executed on the Armenians. Thanks to his position and Turkish friends, Bedros Matossian could always avert these atrocities and came out safe out of every arrest, until the summer of 1915, when he was forced to be exiled with his family. The first few days of the exile were by train but afterwards they had to continue the route on foot towards the Arabian deserts. On their way they were often subjected to robbery, kidnapping and killing. Marinos cut her daughter Gulenia's hairs short and often painted her face with mud, so as to hide her beauty and keep her safe from kidnapping. Turkish gendarme-soldiers often kidnapped beautiful girls and brides, raped them or sold them to other Turks in front of the parents' own eyes.

After having passed though the Cilician Valley and the Amanos Mountains, the convoy of Armenian refugees reached northern Syria. They suffered a lot along the route of exile: hunger, thirst, outrages, diseases and beatings. The Turks then divided the convoy into two groups. The first group, in which were Bedros Matossian and his family, was led to Hawran and the other group to Der Zor.

Life in the refugee camp of Hawran was cruel to the Matossian Family. Hunger and thirst prevailed in the camp, and diseases spread. Securing potable water was very hard. Marinos gathered wild plants in the fields around the camp and fed her children and husband. Haroutune and Gulenia helped their mother. Bedros was sick and could not help them.

Turkish hordes used to often attack the refugee camp and steal golden ornaments from the refugees. After several attacks the refugees were left stripped and half naked. Under such conditions, Bedros could not fight his illness and died. Serving in the houses of the nearby village, Marinos could hardly secure a living for her children. Often they were left without any food. One day Gulenia tried to steal a loaf of bread from a bakery. She put the loaf beneath her breast and tried to flee. But the loaf fell and she was caught by the baker, who beat her. Gulenia cried for the loss of the loaf. Life was cruel for the Armenians who were forced to leave their native homes. Gulenia joined her brother who gathered wild plants.

For four years the Matossian Family lived in the refugee camp of Hawran, under severe conditions, until the end of 1918, when the First World War came to an end with the defeat of Turkey. There spread a general enthusiasm among the Armenians. They already knew that a free and independent Republic of Armenia had been established. From day to day the optimism grew and all the Armenian refugees wished to return to their homeland. At the beginning of 1919, exiled Armenians returned to their homes in groups. Marinos and her children left Hawran for Aleppo with a group of native Karamantsis. From Aleppo they travelled by train and after a long and a happy journey they arrived in Karaman. Haroutune and Marinos started rebuilding their half-ruined house. Gulenia helped them. After that Haroutune took advantage of the orphan-gathering process and joined a group of fellow orphans for the sake of getting higher education. Haroutune travelled with the group to France and settled there.

Although the father of the Matossian Family was martyred in exile, Marinos and Gulenia managed to earn their living by doing embroidery in Karaman. At the beginning, the situation in Karaman seemed to be going well, and the hopes were high. Some Turkish criminal leaders had been punished in Constantinople.

The Matossian Family's relatives, who had also returned from exile, came together and arranged that the fourteen-year-old Gulenia marry a native Karamantsi young man named Garabed Panossian. Marinos lived with Garabed and Gulenia.

Peaceful days did not last long. The situation deteriorated with the eruption and spread of the Kemalist movement. Turks raised their heads again in Karaman. It is worth mentioning that a Turkish criminal act took place in Karaman during those days and was witnessed by Marinos and Gulenia. Turkish soldiers knocked the door of a neighbor by night. A Greek mother and daughter lived in that house, and prepared and sold arak for a living. At that hour of the night the woman and her daughter were frightened and did not open the door. The Turkish soldiers broke the door down and entered by force. They brutally butchered the woman and her daughter. This tragic event left an atmosphere of horror upon the Armenians of Karaman.

In this atmosphere of terror and after a few days from the above mentioned event, the Kemalist forces arrested all the Armenian men and exiled them. Garabed Panossian was also arrested and taken away to an unknown destination.

The situation became worse; the Armenians and the Greeks started fleeing from Karaman. In those days Smyrna was also being attacked by the Kemalist forces. Marinos and Gulenia also fled leaving everything behind. They succeeded

in getting on board a ship and travelled to Corfu in Greece with a group of refugees.

They settled in the refugee camp of Corfu. They spent very difficult days there. Hunger, thirst, illnesses and privation spread in the camp. Mother and daughter again did embroidery and earned their living. After a few months of living thus, suddenly Garabed Panossian appeared. Garabed had succeeded in escaping from exile, had ascended aboard a ship and made his way to Corfu. He told Gulenia and Marinos about the atrocities of the Kemalist soldiers against the Armenians. The Turks had forced Garabed to go on foot in a group of arrested Armenian men, from village to village and from town to town until they reached the city of Mush (Western Armenia). On their way they proceeded with great difficulty, often plunging into the thick snow and falling onto the ground. After a long and difficult journey, they reached Mush (Western Armenia), where they were imprisoned. After more than a month of imprisonment, the Turks took them away for another march, but this time Garabed and some other shrewd friends managed to get away and reached a port (the name of which Gulenia has forgotten) on the Mediterranean Sea. Getting on board a ship, they had sailed and reached Corfu.

In the refugee camp of Corfu Garabed managed to find a job and earned a living of his family. The hard conditions in the camp forced the Panossian Family to travel on board of a ship and get to Beirut, Lebanon.

In Beirut, Garabed Panossian worked as a shoemaker and within few years he attained a wealthy position. Gulenia gave birth to two daughters: Azadouhi Panossian, the elder daughter who married Hovhannes Iskahadian, and the younger

daughter Markrid, who married Mardiros Srourian. They all settled in Beirut.

After having settled in Beirut, Marinos received letters from her son Haroutune, who was in Marseille, France. The mother responded to the letters and communication became regular. Marinos wished that her son lived with her, but Haroutune preferred to stay in France. But in that foreign city, Haroutune got inflicted by an inexorable disease and died at the age of twenty eight.

Karaman and Diaspora are separated by a deep abyss...

From Karaman to Beirut and Marseille, with forced deportation, it was a long route for the uprooted Armenian...

Translated from Armenian to English by
Haroutune Iskahadian on the 7th of March, 2012.

**«Ճանաչումն Հատուցում - «ՄՎ Պիտի Գրէ Պատմածներս»»,
պատմեց՝ Մարիամ էքմէքճեան-Իսկահատեան, գրի
առաւ՝ Յարութիւն Իսկահատեան, «Ազդակ» օրաթերթի
Ապրիլեան Բացառիկ, 2012, էջ 167-168**

Մարիամ էքմէքճեան ծնած է 1905-ին, Կարս Պազար աւանը, որ կը գտնուի Ատանայէն դէպի Սիս երկարող ճամբուն վրայ, Կիլիկիոյ դաշտին (Չուխուր Օվա) վերջաւորութեան, տակաւին Տաւրոսեան լեռները չբարձրացած, դէպի արեւելք (Տես Գրիգորիս Մ. Վրդ. Պալաքեանի «Հայ Գողգոթա»ն): Թուրքերը աւանին անունը յետագային «Քատիրլի»ի փոխած են: Գիւղաքաղաքը մօտաւորապէս վաթսուն գիւղերու կեդրոնը եղած է: Շրջանին առեւտուրը Կարս Պազարի մէջ տեղի կ'ունենար: Շրջակայքի բարեբեր արտերուն շնորհիւ երկրագործութիւնն ալ լաւ վիճակի մէջ եղած է:

Մարիամին հայրը՝ Յովհաննէս էքմէքճեանը ազարակատէր էր: Մայրը նոյնպէս կը կոչուէր Մարիամ: Ան տան գործերով կը զբաղէր: 1915-ի բռնագաղթի ժամանակ Մարիամին մեծ եղբայրը՝ Պօղոս 17 տարեկան էր, իսկ փոքրը՝ Արսէնը, եօթը տարեկան: Ունէր նաեւ ծծկեր քոյր մը, որուն անունը չէր յիշեր:

Նախքան Ա. Աշխարհամարտը, Մարիամ բարեկեցիկ եւ բարգաւաճ կեանք մը կ'ապրէր իր ծնողքին գուրգուրանքին տակ: Իրենց ազարակին բանուորները թուրքեր էին: Հայերը դրացի թուրքերուն հետ լաւ յարաբերութիւն ունէին: Մարիամ բնաւ դպրոց չէր յաճախած. գիւղաքաղաքին մէջ իգական սեռին համար ամօթ կը նկատուէր դպրոց երթալը... Եղբայրը՝ Պօղոսը որոշ զարգացում ունէր: Արսէնը նոր սկսած էր դպրոց յաճախել:

Չմեռն անոնք տան մէջ գրեթէ փակուած կը մնային: Մարիամին մեծ մայրը պատմութիւններ կը պատմէր

իրենց: Մարտ ամսուն, ագարակին գործերը կը սկսէին: Անծայրածիր արտերուն մէջ ցորեն, գարի, բամպակ եւ բանջարեղէն կը ցանէին: Ամրան եղանակին թէեւ ագարակին գործերը կը շարունակուէին, սակայն Մարիամ ընտանեօք ամարանոց՝ Տեքէ (Վահկա) կը մեկնէր: Հոն պտուղներն ու բանջարեղէնը առատ էին, ինչպէս նաեւ՝ կաթը, մածունն ու կարագը: Կարսպագարցիներն ընդհանրապէս գոմէշի կաթ կ'օգտագործէին մածունի, կարագի եւ պանիրի համար:

Մարիամ զօրաւոր կերպով տպաւորուած էր հաճընցի Ճին Թորոսի (Թորոս Տարտաղանեան) անունէն: Մարիամը 1909-ի դէպքերու ատեն թէեւ չորս տարեկան էր եւ միայն աղօտ կերպով կը յիշէր Կարս Պազարի դիմադրութիւնը թրքական յարձակումներուն դէմ, սակայն իրեն համար Ճին Թորոսը փրկարար հերոսի կերպարն էր: Թորոս Տարտաղանեանը Կարս Պազարի մէջ պաշտօնավարող ոստիկան մըն էր: 1909-ի Ապրիլի սկիզբին ան իր մեծաւորէն կ'իմանայ, թէ թուրք խուժանը Կարս Պազարի հայոց վրայ յարձակելու պատրաստութիւն կը տեսնէ: Ան անմիջապէս կը փութայ լուրը հաղորդել գիւղաքաղաքին երեւելիներուն, որոնք Ճին Թորոսի ղեկավարութեամբ դիմադրական ոյժ մը կազմելով, բոլոր հայերը եկեղեցին ու դպրոցը կը հաւաքեն եւ երեք շաբաթ կը պայքարին (այս մասին տեսնել Ջալէլ Եսայեանի «Աւերակներուն Մէջ» գործը, ինչպէս նաեւ՝ Միսաք Քէլէշեանի «Միս-Մատեանն ու Յակոբ Թէրզեանի «Աղէտք Կիլիկիոյ», Անդրէաս Գարամանեանի «Տարագրեալի Մը Յուշերը» եւ Դոկտ. Յակոբ Պողոսեանի «Հաճընի Ընդհանուր Պատմութիւնը» գիրքերը):

Մարիամի համար անծանօթ պատճառներով, հայրը՝ Յովհաննէսը չէր գինուորագրուած, ոչ ալ մեծ եղբայրը՝ Պողոսը, որ տակաւին 17 տարեկան էր: Բռնագաղթը տեղի կ'ունենայ 1915-ի ամրան սկիզբին: Էքմէքճեան ընտանիքը

եզան սայլով մը բռնութեամբ ճամբայ կը հանուի: Քանի մը օր ետք Մարիամի ծօկեր քոյրը կը մահանայ: Զայն ճամբուն եզրին, ծառի մը տակ, անթաղ կը թողուն եւ կը հեռանան: Աքսորի ճամբան շատ դաժան էր: Անօթութիւն, ծարաւ, սաստիկ յոգնութիւն եւ վերջապէս հիւանդութիւն, որոնք կ'ընտրեն իրենց երկրորդ զոհը՝ Պողոսը, որ նոյնպէս անգերեզման կը մնայ: Ամիս մը ետք անողոք հիւանդութիւն մը Արսէնն ալ կը տանի: Մարիամ իր հօր եւ մօր հետ Հալէպի մօտեցած էր, երբ գիւղի մը փողոցներէն մէկուն մէջ, ընտանիքին հայրը գետնին վրայ պառկած մրափ մը կ'առնէ՝ հանգստանալու համար սաստիկ յոգնութենէն: Սակայն Յովհաննէսը երբեք չ'արթննար: Մայր ու աղջիկ կը շարունակեն իրենց ճամբան եւ կը փորձեն Հալէպ մտնել, բայց այդ շնորհքին չեն արժանանար: Մարիամ իր մօր հետ Հալէպէն անդին գիւղ մը կը մեկնի կարաւանին հետ միասին: Այդ անծանօթ գիւղին մէջ արաբ քրիստոնեաներ հայ գաղթականներու օգնութեան կը փութան, նախ զանոնք կերակրելով, ապա հայ գաղթականները իրենց գիւղի եկեղեցիին մէջ տեղաւորելով: Երկու Մարիամները՝ մայր ու աղջիկ, հանգիստ առնելու առիթ կ'ունենան: Սակայն այս ալ երկար չի տեւեր: Մայրը կը մահանայ եւ Մարիամ առանձինն կը մնայ՝ իր համաքաղաքացիներու հոգատարութեան տակ: Եկեղեցիին մէջ շատեր հիւանդութիւններէ կը վարակուին ու կը մեռնին: Մարիամ վայրի խոտեր խաշելով եւ ուտելով կը սնանի: Ան կը յաջողի հիւրընկալ արաբներէ ալիւր ճարել՝ փոխարէնը անոնց տուներուն մէջ ծառայութիւն մատուցելով:

Օր մըն ալ եկեղեցիի շրջափակին մէջ հաճընցի կառապան մը Մարիամ էքմէքճեանը կը փնտռէ: Մարիամ կը ներկայանայ կառապանին, որ Մուսուլէն եկած էր: Կը պարզուի, որ Մարիամին հօրեղբայրը՝ Մկրտիչ էքմէքճեանը

յաջողած էր աքսորի երկար եւ դժուար ճանապարհներէն անցնելով Մուսուլ հասնիլ ու բրիտանական բանակին մէջ աշխատիլ իբր գրագիր: Շնորհիւ այս աշխատանքին, անոր նիւթական վիճակը բարելաւուած էր: Մկրտիչ լսած էր իր եղբօր եւ անոր ընտանիքին ողբերգութեան մասին: Իմանալով որ Մարիամը ողջ է, գայն փնտռելով կ'ուզէր իր մօտ բերել հաճընցի կառապանին միջոցով, որ բաւական ճարպիկ մէկն էր: Ան Մարիամն իրեն հետ առնելով գիւղէ գիւղ եւ քաղաքէ քաղաք, ինչպէս նաեւ Տէր Զօրէն անցնելով դէպի Մուսուլ կը ճամբորդէ թրքական կրակներուն մէջէն: Ճամբուն վրայ Մարիամ ականատես կ'ըլլայ բազմաթիւ դիակներու, որոնց տէրերը կամ սպաննուած էին, կամ հիւանդութենէ մեռած: Տաժանակիր եւ երկար ճամբորդութենէ ետք կառապանը Մարիամին հետ Մուսուլ կը հասնի:

Իր հօրեղբօր գրասենեակը մտնելով, Մարիամ կը գրկախառնուի անոր հետ: Այդ պահուն, ան չորցած հացի կտոր մը հանելով իր ծոցէն՝ Մկրտիչ հօրեղբօր կը հրամցնէ, որպէսզի ան ուտէ: Մկրտիչ թէ կը ժպտի եւ թէ կը հեկեկայ:

Մարիամ իր հօրեղբօր տան մէջ փառաւոր լոգանք մը կ'առնէ, ապա սեղան կը նստին: Մարիամ տարիներէ ի վեր առաջին անգամն ըլլալով կուշտ ու կուռ կը ճաշէ: Ան լաւ չի յիշեր, թէ որքան ժամանակ Մուսուլի մէջ կը մնան, սակայն պատերազմը թուրքերուն եւ գերմանացիներուն պարտութեամբ վերջացած ըլլալով, Մկրտիչ եւ Մարիամ Ատանա կը վերադառնան ու որոշ ատեն հոն կը բնակին: Մարիամ տասնչորս տարեկան եղած էր: Քանի մը համաքաղաքացիներ իրարու մօտ կու գան եւ Մարիամը կ'ամուսնացնեն կարսպազարցի երիտասարդի մը՝ Կարապետ Իսկահատեանի հետ: Այդ օրերուն Հաճըն

քաղաքը պաշարուած էր քեմալական ուժերու կողմէ: Հաճընցիք հերոսամարտ կը մղէին: Մահու-կենաց խնդիր էր: Մեծամասնութեամբ կարսպազարցի երիտասարդներէ կազմուած «ութսուներ»ու գինեալ խումբ մը կը կազմուի եւ կ'ուղղուի դէպի Հաճըն՝ հայոց օգնութեան: Սակայն, Փրանսական դաւադիր իշխանութիւններ թուրքերուն կ'իմացնեն այս խումբին մասին: «Ութսուներ»ու խումբին մէջ կը գտնուէր Կարապետի կրտսեր եղբայրը՝ Փանոս Իսկահատեանը, որ թրքական կրակին դէմ կը պայքարի: Քեմալականները Հաճնոյ մօտ, ձորի մը մէջ, «ութսուներ»ը թակարդի մէջ ձգելով կը ջարդեն: Կը փրկուին քանի մը հոգի միայն, անոնց շարքին՝ Փանոս Իսկահատեանը: Աւելի ուշ, ան Պէյրութ կը հաստատուի:

Կարապետ եւ Մարիամ Իսկահատեանները կը մեկնին Ադեքսանտրէթ, ուր կը մնան քանի մը ամիս, ապա նաւով ճամբայ կ'ելլեն ու կը հասնին Պէյրութ, ուր ալ կը հաստատուին:

Ամէն անգամ որ մեծ մայրս՝ Մարիամ էքմէքճեան-Իսկահատեանը իր յուշերը կը պատմէր, վերջաւորութեան կ'ըսէր.

- Ո՞վ պիտի գրէ պատմածներս, ո՞վ:



Who Shall Write Down My Narrative?


Narrated by Mariam Ekmekjian-Iskahadian

Written by Haroutune Ohannes Iskahadian- AZTAG Daily Newspaper Special Issue April 2012 pp167-168

Mariam Ekmekjian was born in Kars Bazar in 1905. On the road from Adana to Sis, in the Cilician Valley (Chukhour Ova), before mounting the slopes of the Taurus Mountains and a few kilometers to the east, lies the town of Kars Bazar (See Reverend Grigoris Balakian's "Armenian Golgotha"). Presently the Turks have changed the name Kars Bazar to Kadirly. The town had been the center of around sixty villages and it was the commercial center of the region. Because of the fertile lands around the town, the agriculture had also been prosperous.

Mariam's father Hovhannes Ekmekjian was a farmer. Her mother's name was also Mariam. She was a housewife. During the forced relocation of 1915, Mariam's elder brother Boghos was 17 years old, while her younger brother Arsen was seven. She remembers having a baby sister, but whose name she had forgotten.

Until The First World War, Mariam lived a wealthy and prosperous life under the care of her parents. Their farm workers were Turks. The Armenians were on good terms with their Turkish neighbors. Mariam had never gone to school since it was not an accepted custom for a girl to attend school in Kars Bazar. Her brother Boghos had reached a certain level of education. Arsen had just started attending school.



*Մարիամ
էքմէքեան-իսկահատեան*
Mariam Ekmekjian-Iskahadian



During the winter season, they stayed in the house and Mariam's grandmother would relate stories to them. Work on the farm used to start at the beginning of March. Wheat, barley, cotton and vegetables were planted in the vast fields. Although agricultural work continued into the summer, Mariam used to go with her family to the mountains, and in particular to Vahka (Fekeh). There the fruits and vegetables were abundant, so were the milk, yoghurt and butter. Kars-Bazartsis often used buffalo milk to extract yoghurt, butter and cheese.

Mariam was strongly impressed by the name Jin Toros (Toros Dardaghanian) of Hadjin. She was only four years old during the events of 1909 and vaguely remembered the Resistance of Kars Bazar against the Turkish attacks, and because of that Jin Toros was a hero for her. Actually on the first few days of April 1909, Jin Toros, who was a gendarme and served in Kars Bazar, had rushed to inform the Armenian notables of the town that the Turks were preparing to attack the Armenians population there. The notable Armenians organized a resistance force under the command of Jin Toros, gathered all the Armenians of the town inside the Church and the School, and resisted for three weeks. Reference to this is made in the books "In the Ruins" of writer Zabel Yessayan, "Sis-Madyan" by Missak Keleshian, "Disasters of Cilicia" by Hagop Terzian, "The Memoirs of a Deportee" By Antreas Karamanian and "The General History of Hadjin" by Hagop Boghossian (PhD).

For unknown reasons to Mariam, her father Hovhannes did not join the Turkish army, neither did her elder brother Boghos, who was 17 years old. The forced deportation took place at the beginning of the summer of 1915. The Ekmekjian

Family was forced to move with a carriage driven by oxen. After a few days, Mariam's baby sister died. They left her body unburied beneath a tree on the road side and moved on. Conditions of the exile route were cruel. Hunger, thirst, severe fatigue and finally disease which chose Boghos for its second victim. Boghos had also been left unburied. After a month an inexorable disease took away Arsen, too. It was in a village near Aleppo (Syria) that Mariam's father took a nap on the bare ground in a street and he never woke up. Mother and daughter were left alone to continue their way into exile and tried to enter the city of Aleppo. That grace of entering Aleppo was not granted to them. Mariam proceeded with her mother in the convoy and they reached a village beyond Aleppo. In that village Arab Christians extended help to the Armenian refugees by feeding them. They helped them to settle in the village church. Both Mariams rested for a short period but that comfort did not last long, for mother Mariam died and the daughter was left alone, under the protection of fellow refugee women. In the church many refugees were inflicted by diseases and died. Mariam gathered wild plants and ate them after boiling. She managed to secure some flour from the villagers and she served in their houses in return.

One day Mariam heard that a Hadjintsi (native of Hadjin) carter was looking for her in the courtyard of the church. She met the carter who had come from Mosul. Mariam's uncle Meguerditch Ekmekjian had succeeded in reaching Mosul after a long and hard exile. In Mosul Meguerditch was employed in the British Army as a clerk. His living conditions had improved and he had heard of the tragedy of his brother's family. He then found out that Mariam was alive, so he sent the Hadjintsi carter to look for Mariam and bring her to him.

The carter was quite a shrewd man. Passing through many villages and towns, he drove the cart towards Mosul. On their way, Mariam witnessed scenes of many corpses of Armenians who had died either by massacre or from disease. After a long and difficult journey, the carter arrived in Mosul with Mariam.

In the office, Mariam and Meguerditch embraced each other. At that very moment Mariam took out a piece of dry bread from her breast and offered it to her uncle. Meguerditch smiled in tears

Mariam received a nice bath in her uncle's house. Then they sat for dinner, and Mariam fulfilled her long desire for decent food. She could not remember how long they stayed in Mosul, but after The First World War ended, with the defeat of Turkey and Germany, Meguerditch and Mariam returned to Adana, where they settled for a period of time. Mariam had become fourteen years old. Some Kars-Bazartsis (native of Kars Bazar) came together and arranged her marriage to Garabed Iskahadian, a young native of Kars Bazar.

In those days Hadjin was besieged by the Kemalist forces. The native Armenians of Hadjin were heroically fighting for survival. It was a matter of life and death. With the main participation of a majority of Kars-Bazartsi young men, a battalion of eighty fighters was formed and headed for Hadjin to help the Armenians. The French Military traitor administration had informed the Turks about this fact. Garabed's younger brother Panos Iskahadian was in this battalion. He fought against the Turks. The Kemalist Turks succeeded in ambushing the battalion in a valley near Hadjin and carried out a massacre. Only few Armenian fighters could save their own lives, amongst whom was Panos Iskahadian, who later

settled in Beirut, Lebanon.

The Family of Garabed and Mariam Iskahadian left for Alexandretta, where they stayed for a few months, after which they set out by boat to Beirut, where they settled.

Every time my grandmother Mariam Ekmekjian-Iskahadian narrated her life story, at the end she used to say:

"Who shall write down my narrative?"

Translated from Armenian to English by
Haroutune Iskahadian on the 7th of March, 2012.

ՑԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՑԱՆԿ*

- Աբգար(եան) Տիանա (Հայաստանի Հանրապետութեան Ճափոնի մէջ դեսպան) 255
- Աբրահամ (բժիշկ Աբրահամ Երէջեան-Քասսիսի մեծ հայրը, Եագուպիէ) 314
- Աբրահամ էֆենտի (Պէյրուիէն վկայուած դեղագործ, Եդեսիա) 145, 148
- Աբրահամեաններ (Ապօ) (զէյթունցի ընտանիք Հայէպի մէջ) 311
- Աբրահամեան Աբրահամ (բժիշկ Ճորճ Աբրահամեանի (Ապօ) մեծ հայրը) 311
- Աբրահամեան Ճորճ (արաբացուած անունով Ապօ Ճորճ, զէյթունցի բժիշկ, Հայէպ) 310, 311
- Ազատեան Աբրահամ (Օհանես) (րումտիկիցի) 52, 53
- Ազատեան Գրիգոր (րումտիկիցի) 53
- Ազարիկեան Էմմա (թարգմանչուհի, Հայէպ) 245
- Ազնաուր փաշա (Օսմանեան Պետութեան զօրահրամանատար, 20-րդ դարու սկիզբ) 280
- Ազնիւ (տիգրանակերտցի տարագիր պարմանուհի) 333, 334
- Ալաճաճեան Ստեփան (հայրենադարձ զէյթունցի գրող) 110
- Ալամէտտին Իտա (Եագուպ եւ էլիզապէթ Քիւնցլէրներու դուստրը, գիրքի հեղինակ) 143, 146, 147, 157
- Ալթունեան Ասատուր (բժշկապետ, Ատանա) 310
- Ալի (պետեւի արաբ մը, Եդեսիա) 153
- Ալի Հայտար (Եդեսիոյ մութասարրիֆ) 93, 96
- Ալի Շեքէթ (Արամ Երկանեանի ծածկանուններէն – տե՛ս նաեւ Երկանեան Արամ) 281
- Ալի պէկ (տերսիմցի քիւրտ) 251, 252
- Ալի Սուատ պէյ (Տէր Զօրի կառավարիչ) 274
- Ալի Քեսեայ (Ֆոնուզի հայոց ջարդարարներէն) 114
- Ալիճանցի Տիգրան (Ֆետայի) 80
- Ալլահվերտեան Հայկ (դեղագործ, Կ. Պոլիս) 293
- Ակնունի Էտկար (բուն անունով իսաչատուր Մալումեան, դաշնակցական գործիչ, Մեծ Եղեռնի նահատակ) 37
- Ահարոնեան Աւետիս (գրող, դաշնակցական գործիչ) 98
- Ահմէտ (տիգրանակերտցի ջարդարար մը Եդեսիոյ մէջ) 93, 95

* Յատուկ անուններու ցանկերուն մէջ զանց առած ենք փոխադարձաբար յղել այն անուններուն, որոնք կը հանդիպին թէ՛ հայերէն եւ թէ՛ օտարալեզու տարբերակներով.

- Ահմէտ Ճեմալ փաշա (Օսմանեան Պետութեան ծովային նախարար, հայոց դահճապետներէն) 33, 36, 37, 38, 40, 170, 213, 221, 277
- Ահմէտ Չաւուշ (թուրք տասնապետ, րումտիկիցի) 59
- Ահմէտ Օնպաշը (ոստիկանապետ, րումտիկիցի) 52, 53
- Աղաճանեան Խոսրով (խարբերդցի) 252
- Աղասի (տե՛ս Թուրսարգիսեան Կարապետ)
- Աճառեան Հրաչեայ (հայագէտ, ակադեմիկոս) 129
- Աճերեան Խորէն քահանայ (րումտիկիցի) 43
- Ամատունի (դաշնակցական գործիչ, Կ. Պոլիս) 283
- Ամինէ (պետեւի Ալիի կինը, Եդեսիա) 153
- Ալըճեան Լեւոն (Եոզկատի մութասարրիֆ) 47
- Այնթապլեան Ալեքսանդր (գիրքի հեղինակ) 329, 330, 331, 332, 333, 334, 335
- Այնթապլեան Բիւզանդ (հեղինակ Ալեքսանդր Այնթապլեանի կրտսեր եղբայրը) 329
- Այնթապլեան Երեւակ (հեղինակ Ալեքսանդր Այնթապլեանի մայրը) 330, 332
- Այնթապլեան Թովմաս (Մուսա Լերան հերոսամարտի մասնակից) 89
- Այնթապլեան Պօղոս (հեղինակ Ալեքսանդր Այնթապլեանի երէց եղբայրը) 329
- Այնթապլեան Փանոս (հեղինակ Ալեքսանդր Այնթապլեանի հայրը) 329, 330
- Անդրէասեան Գալուստ (ղարապողազցի, Շապին Գարահիսարի հերոսամարտի մասնակից) 72
- Անդրէասեան Վարդգէս (վիպասքի հեղինակ) 187
- Անդրէասեան Տիգրան վեր. (գիրքի հեղինակ, Մուսա Լերան հերոսամարտի ղեկավարներէն) 64
- Անհոգ Տրդատ (զէյթունցի) 114
- Աննա (ուսուցչուհի, Խարբերդ) 251
- Անտերսըն (ամերիկացի որբախնամ, Ալեքսանդրապոլ) 198
- Անտէքեան Պօղոս (Մուսա Լերան հերոսամարտի նահատակ) 260, 261
- Անտոնեան Արամ (գիրքի հեղինակ) 105, 108
- Աշճեան Մեսրոպ արք. (Կիլիկիոյ Աթոռի միաբան, բարեգործ, գրահրատարակիչ) 158, 166
- Աշըգպաշեան (ատաղձագործ, Արաբկիր) 249
- Աշըգպաշեան Արամ (հնչակեան Քսան Կախաղաններէն) 72
- Ապանեան Յակոբ (Մուսա Լերան հերոսամարտի վիրաւոր) 261, 262
- Ապտալեան Սարգիս (ծածկանունը՝ Վահէ-Վահեան, բանաստեղծ, խմբագիր, ուսուցիչ, հասարակական գործիչ) 323
- Ապտիւլ Համիտ Բ. (Օսմանեան Պետութեան սուլթան) 11, 30, 42, 65, 78, 227, 237, 247, 268, 269, 294, 330
- Ապտիւլ Ռահման (Կիլիկիոյ 1909-ի ջարդերու հրահրիչներէն) 243
- Ապտիւլ Քատէր (Ատանայի երեւելիներէն, Կիլիկիոյ

1909-ի Ջարդերու կազմակերպիչներէն) 231, 243
Ապտիւլ Բատիր (Թուրք չէթէ, Ատանա)
Ապտիւլ Բատիր Այնթապի (գնդապետ, Կիւմրիւշխանէի կառավարիչ) 183
Ապօ (Աբրահամեան) ընտանիք (տես Աբրահամեաններ)
Ապօ Ճորճ (տես Աբրահամեան Ճորճ)
Առաքելեան Գէորգ (Շապին Գարահիսարի հերոսամարտի մասնակից) 72
Ասատ (Թուրքերու զրկած չէրթէզ նամակաբեր, Չէյթուն) 113
Ասատուրեան Գեղամ (դաշնակցական գործիչ, Տարօն) 80
Ասաֆ պէյ (տես Մեհմէտ Էսատ Ասաֆ պէյ)
Ասլանեան Լեւոն (Ֆետայի, դաշնակցական գործիչ, Տարօն) 78, 84, 85
Ասկեար Քեռի (Թուրք, Կաղզուան) 204, 205
Ամըեան Հայկ (զէյթունցի մատնիչ) 33
Աստուածատուրեան Կարպիս (դաշնակցական գործիչ) 263
Ատիլեան Արամ (գեղազործ, Կ. Պոլիս) 294
Ատոսիտիս Անաստաս (Կիլիկիոյ Ջարդերու վկայող, գիրքի հեղինակ) 226, 227, 228, 233, 234, 235, 242, 245
Արաբ Մուլլա (չրջիկ աստուածաբան Ատանայի նահանգին մէջ) 230
Արամ Հայկազ (Չէթմեան, արձակագիր) 63, 73, 77
Արապեան-Աթալլա Քրիսթին (զմիւռնիացի վկայող Մաթիլտ Պէրպէրեան-Արապեանի դուստրը, Լիբանան) 337
Արդէն փաշա (ծածկանունը՝ Կճողին Տղան, ըուժտիկինցի) 52, 53, 54
Արշակ (Չէյթունի հերոսամարտի ղեկավարներէն Արամ Չոլաքեանի զինակիցը եւ քրոջ ամուսինը) 112, 113
Արշակ (վրիժառու խմբակի անդամ – տես նաեւ Եզիտ Արշակ եւ Պիթլիսցի Արշակ) 284
Արսէն (յուշագրող Յակոբ Արսէնեանի հայրը, Օվաճըզ) 293
Արսէնեաններ (Օվաճըզ, Նիկոմեդիոյ նահանգ) 295, 297, 298, 299, 301, 303, 304, 305
Արսէնեան-էքմէքճի Արտա (դոկտոր, Թարգմանող եւ ծանօթագրող) 292, 293, 295, 308
Արսէնեան Ղազարոս (օվաճըզցի վկայող Յակոբ Արսէնեանի եղբայրը) 299
Արսէնեան Մարիամ (յուշագրող Յակոբ Արսէնեանի մայրը, Սիլօ գիւղ) 293, 302, 303
Արսէնեան Յակոբ (օվաճըզցի, վկայող-յուշագիր, գիրքի հեղինակ) 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 300, 301, 302, 303, 304, 305, 306, 307, 308
Արսէնեան Նորայր (օվաճըզցի վկայող Յակոբ Արսէնեանի որդին) 295, 299, 302
Արսէնեան Նուպար-Արսէն (օվաճըզցի վկայող Յակոբ

Արսէնեանի որդին, Արտա Արսէնեան-էքմէքճիի հայրը 295
Արսիլ Սիրաք (Արշաւիր Շիրակեանի անցագրի անուններէն – տես նաեւ Շիրակեան Արշաւիր) 282, 283
Արսլան Գասպար (տես Արսլանեան Պերճ)
Արսլանեաններ (Մեզիրէ) 314
Արսլանեան Ջարեհ (բժիշկ, Հալէպ) 314, 315
Արսլանեան Մանուկ (թերթի խմբագիր) 277, 282
Արսլանեան Պերճ (Արսլան Գասպար, բժիշկ, Մեզիրէ) 314, 315
Արտաշ (վառարան սարքող, Կ. Պոլիս) 293
Արփօ (անպատու հայուհի, Տատրագոմ գիւղ) 335
Աւագեան Լինտի (գիրքի հեղինակ, Ա. Մ. Ն.) 126
Աւետիս (Խարբերդի Բերդակ գիւղացի) 188
Աւետիս (հաճընցի վաշխառու բժիշկ) 305
Աւետիսեան Ահարոն (Արշաւիր Շիրակեանի անցագրի անուններէն – տես նաեւ Շիրակեան Արշաւիր) 281
Բաբուրդեան (ուսուցիչ) 130
Բալարեխ Կարապետ (Մաֆարեան, Ֆետայի) 86
Բանշուտուզեան Սարգիս (արաբկիրցի) 249, 250, 251
Բաշալենց Սէթ (զէյթունցի բնօրրանադարձ, նահատակ) 110
Բոշենց (էվերէկցի յեղափոխական Գէորգ Համբարձումեանի ծածկանուններէն – տես նաեւ Համբարձումեան Գէորգ, Տէֆճեան) 24
Գաբրիէան Կարապետ (սեբաստացի, յուշամատենի հեղինակ) 274
Գազանճեան Ճապրա (Մուսա Լերան հերոսամարտի մասնակից) 89, 262
Գազանճեան Յովհաննէս (գոնիացի) 297
Գալայեան Յարութիւն (ուսուցիչ, Հալէպ) 323
Գալիփեան Եզնիկ եպս. (Բալուէի թեմի Առաջնորդ) 161
Գալիֆայեան Համբարտի (Սուպաշը) (ըուժտիկինցի) 51
Գալլ Վահան (Մամիկոնեան, հայկական ապստամբուժեան ղեկավար) 258
Գայսերեան Սահակ (Պիճիեանց Սահակ) (դաշնակցական նահատակ, Եոզկատ-Կեսարիոյ շրջան) 50, 53, 59
Գասապեան Յակոբ (դաշնակցական, Եդեսիա) 92
Գասապեան Սարգիս (դաշնակցական, Եդեսիա) 92
Գարակէօզեան Յակոբ (ծածկանունը՝ Ըլլէօն, դաշնակցական մարտիկ, Մուսա Լեւ) 260
Գարակէօզեան Սեդրակ (յուշամատենի աշխատասիրող) 24
Գարաճեան Տիգրան (մուսալեուցի) 89
Գարամանեան Անդրէաս (յուշագրուժեան հեղինակ) 25, 366

Գարանֆիլեան Յովհաննէս վրդ. (Զէյթունի թեմի Առաջնորդ) 30, 32

Գարապաճաքեան (բժիշկ, Այնթապ) 313

Գարապաճաքեան-Տէր Պօղոսեան Ազգանոյշ (այնթապցի բժիշկ Նազարէթ Տէր Պօղոսեանի կինը) 313

Գարապէքիր Քեազիմ (թուրք զօրահրամանատար) 193, 194

Գարասէֆէրեան Արտաշէս (ուսանող, Էջմիածին) 195

Գարեգին Նժդէհ (Տէր Յարութիւնեան, զօրահրամանատար, ազգային գաղափարախօս) 71

Գաւաշեան Տիգրան (դաշնակցական գործիչ, Տարօն) 78

Գաւաֆեան Արշակ (ծածկանունը՝ Քեռի, Ֆետայի) 130

Գէորդ Մելիտինեցի (Փոլատեան, գրող, գրական մրցանակի հիմնադիր) 143, 182

Գէորդ Զ. Զէօրէքճեան Կաթողիկոս Ամենայն Հայոց 130

Գէորգեան Արտաշէս (ազգային վրիժառու) 277

Գէորգեան Ժիրայր (բժիշկ) 320

Գէորգեան Սարգիս (մալաթիացի բժիշկ Յարութիւն Ճըլճըլեանի քրոջ որդին, հաւանաբար՝ Մալաթիա) 320

Գըլըճ Ալի (թրքական պատուիրակութեան մեծաւորը, Մարաշ) 290

Գըրճը օղլու Մուհամմէտ աղա (չէթէպետ) 40, 107

Գոճանեան Յովհաննէս (Մուսա Լերան հերոսամարտի նահատակ) 261

Գոճաքեհեան Աւետիս (րումտիկինցի) 61

Գոնեալեան Ասատուր Սաչատուրի (բժիշկ, վկայող) 314

Գուգուճեան Մակի (էլեկտրական ճարտարագէտ Վարդան Գուգուճեանի կինը) 4

Գուգուճեան Վարդան (էլեկտրական ճարտարագէտ, Քաթար) 4

Գուլումճեան Մելքոն (մուսալեռցի) 89

Գուլումճեան Վարդավառ (րումտիկինցի) 62

Գունդ-Յակոբեան Սարգիս (գիրքի հեղինակ արաբկիրցի Փիլիպպոս Պալիքեանի ընկերը) 249

Գուրտճեան Յովհաննէս-Վէյսէյլ (Վաղաք շինող վարպետ) 50

Գպուրեան Գրիգոր (Մուսա Լերան հերոսամարտի նահատակ) 261

Գրիգոր (վրացի կայարանապետ) 193

Գրիգոր Զօհրապ (գրող, փաստաբան, օսմանեան խորհրդարանի երեսփոխան) 37

Գրիգորեան Ալեքս (յուշամատեանի հաւաքող) 24

Գրիգորեան Էտուարտ Ա. (գրող, հրապարակագիր) 16

Գօգօ (Ճընտըճագի ինքնապաշտպանութեան ղեկավար) 335

Դանիէլ Զաւուշ (Շապին Գարահիսարի հերոսամարտի մասնակից) 72

Դանիէլեան Գրիգոր (Վարդերու վկայող) 59

Դանիէլեան Երուանդ (րումտիկինցի) 56, 57

Դանիէլեան Մկրտիչ (Վարդերու

վկայող, րումտիկինցի) 48, 49

Դաշնակցական Խեչօ (բուն անունով՝ Սաչատուր Ամիրեան, Ֆետայի) 70

Դերձակեան Կիրակոս (դաշնակցական, Եղեսիա) 92

Դշխուհի (գէյթունցի բնօրրանադարձ Ենոքի դուստրը) 110, 112

Դրօ (բուն անունով՝ Դրաստամատ Կանայեան, Ֆետայի, զօրահրամանատար, դաշնակցական գործիչ) 130

Եագուպ էֆենտի (տե՛ս Քիւնցլէր Եագուպ)

Եագուպեան Եսայի (տե՛ս Եաղուպեան Եսայի)

Եագըճեան Գէորգ (հրապարակագիր, խմբագիր, պատմաբան) 17, 19

Եաղուպեան Եսայի (Մուսա Լերան հերոսամարտի ղեկավարներէն) 90, 119

Եաղըճեան Գրիգոր (ատամնարոյժ, Սուրիա) 323

Եանիկեան Գուրգէն Մկրտիչ (հայ ծերունի ազգային վրիժառու, կարնեցի, Ա. Մ. Ն.) 125, 126, 128, 129, 130, 131, 132

Եանիկեան Լեւոն (ազգային վրիժառու Գուրգէն Եանիկեանի եղբայրը) 129, 130

Եանիկեան Յակոբ (ազգային վրիժառու Գուրգէն Եանիկեանի եղբայրը, նահատակ) 127, 129, 130

Եանիկեան Սաթենիկ (ազգային վրիժառու Գուրգէն Եանիկեանի քոյրը) 129

Եափուճեան Գէորգ (րումտիկինցի) 45, 46, 47, 48

Եափուճեան Հայկազուն Յ. (գիրքի հեղինակ) 42, 47

Եափուճեան Յովհաննէս (թուրք սրիկաներու թիրախ դարձած հայ երիտասարդ, Ատանա) 231

Եափուճեան Ռուբէն (ծածկանունը՝ Տաշտէմիր, րումտիկինցի փախստական) 55

Եգիտ Արշակ (վրիժառուական խումբի անդամ – տե՛ս նաեւ Արշակ, Պիթիւսցի Արշակ) 284

Եզնիկ Վրդ. (հաւանաբար՝ Ապահունի, Վանի թեմի Առաջնորդ) 70

Եէնիտիւնեայեան Յակոբ որդի Նազարէթ Զաւուշի (գէյթունցի) 31

Եէնիտիւնեայեան Նազարէթ Զաւուշ (Զէյթունի իշխաններէն, նահատակ) 31, 149

